Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1040

Սևքար
1499

2013

ПЕРЕПЛЕТНАЯ МАСТЕРСКАЯ
Ф. И. Моисеева
въ Астрахани.
№6231 Т.
Фирма по исполненіи заказовъ за всѣ недоразумѣнія отвѣчаетъ.

Սկրիպտ
1499

Գրաքննված է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ամբողջ մրցանակով 1888 թուին

ՀԱՅՈՑ ԳԻՐՔ

„Համամատութեան ոգին մեր դարուն մէջտ գիտեական ոգին է“:
ՄԱՔՍ ՄԻԼԼԷՐ

394

Աշխատասիրեց
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ,
Ուսուցիչ Հոգեբանութեան և տրամաբանութեան Ներսիսեան դպրանոցում:

ԹԻՓԼԻՍ
Տպարան Մ. Շարադզէի. || Тип. М. Шарадзе.
1892

Պսակուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ամբողջ
մրցանակով 1888 թուին

РД
70868

ՀԱՅՈՑ ԳԻՐՔ


,,Համեմատութեան ոգին մեր դարուն միջոց գիտնական ոգին է՛՛:
ՄԱՔՍ ՄԻԼԼԷՐ

Աշխատասիրեց
ՀՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ,
Ուսուցիչ Հոգեբանութեան և տրամաբանութեան
Ներսիսեան դպրանոցում:

Սահիանոս Պտոսեան
ՄԵՐՆԵՐԱՆՑ
Ա. ... Ա.

ԹԻՓԼԻՍ
Տպարան Մ. Ճարաճէ
1892

Дозв. ценз. 24-го Октября, Тифлисъ 1891 г.



(1040 41)

Типогр. М. Шаралзе, Ник. ул., 21.



1499-2013
№1492

ԾՈՒՑԱԿ

ԼՈՅՊՅԻԳԻ

ՀԱՅ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾԱՐԴՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Մանկավարժական Թանգարան
Սերիա Բրոշյուրների
Ա-ա-ա-ա

Ի որ և է գրքի յառաջաբանի մէջ, ըստ Հէսինգի՝ պէտք է գրուած լինի նոյն իսկ այդ գրքի պատմութիւնը. սոյն մտքի ճշտութիւնն ընդունելով՝ մի քանի խօսքով կամենում ենք նկարագրել մեր ընթերցողներին „Հայոց գիրը“ աշխատութեան գաղափարի ծագման հանգամանքները։

1884 թ. գերմանական Լայպցիգ և Հալէ քաղաքների համալսարաններում ուսանող մի բուռն հայ երիտասարդներս կազմեցինք մի „հայ ակադեմիական ընկերութիւն“— armenisch - akademischer Verein—Լայպցիգի համալսարանի վարչութեան թոյլտուութեամբ և նորա գերիշխանութեան ներքոյ։ Վարչութիւնից հաստատուած կանոնադրութեան համաձայն՝ մեր նպատակն էր գլխաւորապէս ուսումնասիրել մեր ազգի անցեալը. այս նպատակին ձգտելով՝ որոշեցինք նախապէս ուսումնասիրել մեր պատմահայր Մովսէս Խորենացու „Հայոց պատմութիւնը“ և այդ գիրքը բաժանելով՝ ամեն մէկս մի հատուած վերցրինք, որպէս զի ուսումնասիրենք և գրաւոր աշխատութիւններ ներկայացնենք ընկերութեան նստերին։ Դէպքի բերմամբ ինձ ընկաւ Խորենացու երրորդ գրքի վերջին մասը—Սահակ-Մեսրոպի գործունէութեան շրջանը. որոշեալ ժա-

մանակից յետոյ ընկերութեան նստերից մէկում կարդացի—մօտաւորապէս տասը սովորական թերթերից բաղկացած—մի դասախօսութիւն՝ ինձ վիճակուած նիւթի վերաբերութեամբ: Սակայն ընկերներիս խրախոյսը և Սբ. Մեսրոպի գործունէութեան ամենանշանաւոր մասի—տառերի գիւտի—քողարկուած և ոչ բոլորովին պարզ լինելը, չ'նայլ տուին ինձ դորանով բաւականանալ: Այդ օրից սկսած ուսանողական աղատ ժամերս նուիրեցի այդ խնդրի ուսումնասիրելուն՝ աղատ մուտք ունենալով Լայպցիգի և ապա Ենայի Հարուստ մատենադարաններում. սակայն որչափ որ Հարուստ նիւթ ունէի օտարազգի գրերի ծագումն ուսումնասիրելու համար, այնչափ և սահմանափակ էր բուն Հայկական աղբիւրների թիւը. ձեռքիս տակ ունէի միմիայն երկու Հատ ձեռագիր Խորենացի: Այնուամենայնիւ չ'վհատելով այս կամ այն տեղից բերել էի տալիս կարևորագոյն աղբիւրներն և արդէն 1887 թ. պատրաստի աշխատութիւնս ուղարկեցի Կոստանդնուպոլիս՝ երջանկայիշատակ Հանգուցեալ Խզմիրեանի կտակած մըրցանակաբաշխութեան յարգելի „Ճայուն Յանձնաժողով"-ին՝ ներկայելով, որ եթէ կարելի է, այդ երկի քննադատութիւնը յանձնուի Պետերբուրգի Համալսարանի Հայագիտութեան ուսուցչապետ Քերովբէ Պատկանեանին, իբրև ամենաձեռնհաս անձին այդ խնդրում: Հետևանքի մասին առաջ ենք բերում մրցանակաբաշխութեան „Ճայուն Յանձնաժողով"-ի պաշտօնական յայտարարութիւնից քաղուածքները, որովհետև ամբողջը շատ երկար կլինէր:

„Հ ա յ ո ց գ ի ր ն" երկասիրութեան քննութիւնն յանձնուեցաւ նախ ի Պետերբուրգ ընակեալ երջանկաչքէսր պ. Քերովբէ Պատկանեանի, ինչպէս կը բաղձար նաեւ նոյն ինքն հեղինակն, բայց պ. Պատկանեան իր անձնական տկարութեան պատճառաւ տակաւին երկու տարի այսպիսի քննական զբաղմանց չկրնար հետեւիլը առարկելով, հրաժարած ըլլալուն, Յանձնաժողովս պատշաճ տեսաւ յղել այդ գործն ի Ս. Էջմիածին, Տ. Մաղաքիա եպիսկոպոսի, որպէս զի Մայր Աթոռոյ ճեմարանին պատուաւոր ուսուցչական մարմնոյն հետ քննութեան ենթարկէ: Գեր. Օրմանեան Սրբազան այս մասին հետեւեալ Ցեղեկագիրն հաղորդած է Յանձնաժողովոյս. Վեհմանպատիւ Ատենապետ գործադիր մնայուն Յանձնաժողովոյ Յովսէփ-Ղազիրեանց կտակի. ի կ. Պօլիս.

„Ապրիլ 2 թուակիր պաշտօնագիրնիդ կը յանձնարարէր ինձ, պ. Հաճակ Յարութիւնեանցի „Հայոց գիրը" մակագրեալ ձեռագիր երկասիրութեան վրայ ստանալ Մայր Աթոռոյս Հոգեւոր ճեմարանի ուսուցչական մարմնոյն կարծիքն՝ Յովսէփ Ղազիրեանց կտակով հաստատուած Սահակ-Մեսրոպեան մրցանակին ոգւոյն եւ նպատակին համեմատ, եւ փութացնել առ այդ պէտք եղած յայտագիրը... Պատուաւոր ուսուցչական խումբը վերոյիշեալ երկասիրութեան վրայ մասնաւոր քննութիւններէ յետոյ ի միասին գումարուելով կարծեաց փոխանակութիւններ կատարեց, եւ այդ գումարմանց մասնակցեցան միաձայնագ ուսուցիչք. Ա. Նահապետեան, տեսուչ, Մ. Պալեան, Ս. Պալասանեան, Կ. Կոստանեան, Փ. Վարդանեան, Ս. Տէր-Գաբրիէլեան և սորագրեալս:

...Այս տեսութեանց վերայ հիմնուելով ճեմարանիս ուսուցչական մարմինն կը կարծէ թէ պ. Հ. Յարութիւնեանցի „Հայոց գիրը" մակագրեալ աշխատութիւնը, վերջին գլուխը դուրս առած, աշխատալի եւ օգտակար եւ գովելի գործ մըն է, որոյ ընթերցումը կարող է միաձայն հետաքրքրել հայ ընթերցողները... Այդչափ ինչ համառօտակի պատասխանելով ի կատարումն Ձեր յանձնարարութեան, յարգանաց հաւաստիքս Մեծ. ուսուցչաց եւ իմ եմ

Ձեր վեհմութեան եւ Յանձնաժողովոյդ Մեծապատիւ անդամոց Աղօթապարտ

Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան:

Ի Սբբ. Էջմիածին.
23 յունիսի 1888 ամի:

Ցանձնաժողովը տեսնելով. „որ բաւական խնամօք եւ երկար աշխատութեամբ պատրաստուած է սոյն երկին, եւ թէ առաջին անգամն է որ հայ լեզուին վերաբերեալ այսպիսի ճեռնարկ մը երեւան կուգայ մեր ազգին մէջ... սոյն 1888 տարուայ համար, արժանի համարեց պարոն Իսահակ Ցարուխիւնեանցի „Հայոց գիրը" անուն աշխատութիւնը, նուիրելով նմա 600 րուբլի՝ որ շուրջ 60 օսմ. ոսկի կընէ, յանուն քարեյիշատակ օրհնեալ Յովսէփ Իզմիրեանց գրասիրին եւ ազգասիրին...":

Ցայժմ ուշացնելով այս աշխատութեան հրատարակութիւնը՝ մեր նպատակն էր միջոց գտնել ուսուցնասիրելու նիւթիս վերաբերեալ ձեռագիր աղբիւրները սբ. Էջմիածնի մատենադարանում, սակայն անկարելի եղաւ մեր նպատակի իրագործումը, որովհետեւ ուսուցչական պաշտօնը չէ թոյլ տալիս մեզ Թիֆլիզից հեռանալու, իսկ ամարային արձակուրդին սբ. Էջմիածնի մատենադարանը փակուած է ճեռւմ:

„Հայոց գիրը" թէեւ մշակուած է ժամանակակից գիտնական մեթոդով, սակայն չէ մի զուտ գիտնական հետազօտութիւն, այլ սահմանուած է աւելի ընդարձակ շրջանի համար: Մեր նպատակն էր ի մի ամփոփել այն ամենն, որ վերաբերում է հայոց այբուբենի ծագման, նորա պատմական զարգացման և օտար տառերի հետ ունեցած յարաբերութեան: Լեզուն ևս անխզելի կերպով կապուած լինելով գրի հետ, աշխատեցինք դորա մասին ևս ամփոփ տեսութիւններ առաջ բերել:

Դեռ ևս իրական, կամ աւելի լաւ է ասել նիւթական, փաստեր չկան, որով կարելի լինէր հաստատապէս պնդել թէ սբ. Մեսրոպից առաջ մեր նախնիքը սեպհական ինքնուրոյն գիր ունէին, սակայն հիմնուելով մեր մատենագիրների վկայութիւնների և ակնարկութիւնների վրայ՝ ձգտեցինք ապացուցանել գրաւոր փաս-

տերի շարայարութեամբ, որ մեր կրօնապաշտ նախնիքը պէտք է սեպհական գիր ունենային և այդ գիրն առնուած էր ոչ թէ Յոյներից, այլ ասորա-բաբելացիների միջնորդութեամբ՝ Փիւնիկեցիներից:

Ի. Ց.

1891 Թ. Հոկտեմբերին
Թիֆլիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թէ մեր ղբաղուած խնդրով հետաքրքրուողներին մի հարուստ գրականութիւն մատուցանելու դիտաւորութեամբ և թէ մեր քննադատների գործը դիւրացնելու մտքով՝ առաջ ենք բերում այս աշխատութեան մէջ յիշուած հեղինակութեանց լիակատար անունները: Մենք միշտ դիմել ենք առաջնակարգ և անմիջական աղբիւրներին. միայն այն դէպքում, երբ անկարելի է եղել օգուտ քաղել ուղղակի սկզբնական աղբիւրից, դիմել ենք թարգմանութեանց:

---

1) *Սրբոյ հօրն մերոյ Խորենացւոյ պատմութիւն Հայոց. Տըփխիս 1881. Համեմատութեան համար մեր ձեռքի տակ ենք ունեցել հետևեալ ձեռագիրները ու թարգմանութիւնները:*

2) *Լայպցիգի քաղաքային մատենադարանում եղած ձեռագիրը. „Մովսիսի Խորենացւոյ մականունամբ քերթողի. . . պատմութիւն Հայոց ընդօրինակեալ ի Լէօպօլիս Ռուսաց յամի Տեառն* ՌՈՂԶ (1696).

3) *Ենայի համալսարանի գրադարանում եղած ձեռագիրը, որի վերնագիրն և տարեթիւը պակասում է:*

4) *Վ. Լանգլուայի թարգմանութիւնը, փրանսերէն, որ տըպուած է նորա հրատարակած „Collection“-ի մէջ:*

5) Moise de Khorène... ouvrage de die à S. M. Imp. Nicolas I. Empereur de toutes les Russies, par Le Vaillant de Florival. Paris 1845. *Հայերէն բնագրի հետ միասին:*

6) Mosis Chorenensis Historiae Armeniacae... Armeniacae

ediderunt, latine verterunt, natisque illustrarunt Gulielmus et Georgius Gul. Whistoni Fili. Londoni, MDCCXXXVI—1736. *լատիներէն-հայերէն բնագրի հետ:*

7) Исторія Арменіи Моисея Хоренскаго, перевелъ съ Армянскаго и объяснилъ Н. Эминъ, Москва 1858.

8) *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան. ի Վենետիկ 1873. ՌՅԻԲ.*

9) *Գ. Խալաթեան, Ղազար Փարպեցի և գործք նորին. Մոսկուա:*

10) *Ագաթանգեղեայ պատմութիւն. Վենետիկ 1862.*

11) *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ. Վենետիկ 1862.*

12) *Սեբէոսի Տարօնեցւոյ Առդկան պատմութիւն տիեզերական. Սա. Պետերբուրգ 1885.*

13) *ՀԱՅՐ ՄԻՔ. ՉԱՄՉԵԱՆ, Պատմութիւն Հայոց. Վենետիկ: 1784.*

14) *ՀԱՅՐ ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃԵԱՆ, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. Վենետիկ 1835.*

15) *Աստուածաշունչ դիրք. Ջանիւք և արդեամբք ռուսաց բիբլիական ժողովոյն—յամի Տեառն 1817. ի Սա. Պետերբուրգ.*

16) Prof. dr. Welte. „Goriun's Lebensbeschreibung des hl. Mesrop, aus der armenischen Urtexte zum ersten Male übersetzt und aus arm. Schriftstellern erläutert“. Tübingen. 1841.

17) Исторія Агванъ Мойсея Каганкатваци, писателя X вѣка, С. Петербургъ 1861. *Թարգմանութիւն պրօֆ. Պատկանեանի.*

18) *Հայկական Հին դպրութեան պատմութիւն (դ—ժգ դար) ք. տիպ. Վենետիկ 1886.*

19) V. Langlois, Collection des Historiens Anciens et Modernes de L'Arménie. Paris I. 1867. II. 1869.

20) Sain-Martin. Mémoires Historiques et géographiques sur L'Arménie. Paris I. 1818. II. 1819.

21) Brosset. Deux Historiens Arméniens—Kirakos de Gantzac, Ouktanès D'ourha. St, Pet. 1870.

22) Brosset. Collection d'Historiens Arméniens St. Petersbourg I—II 1874.

23) Histoire du Bas-Empire, par Lebeau. Nouvell édition revue entièrement, corrigée et augmentée d'après les Historiens Orientaux, par M. de Saint-Martin. Paris 1824.

24) F. Lenormant. Histoire Ancienne de l'Orient. neuvieme Edition Paris. I. 1881. II. 1882. III. 1883. IV. 1885.

25) Maspero. Geschichte der morgenländischen Völker im Altertum-übersetzt von Pietschman. Leipzig 1877.

26) Eduard Meyer. Geschichte des Altertums I. Band. Stuttgart 1884.

27) Tabari. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. Übersetzt von Nöldeke. Leyden 1879.

28) Frd. Iusti. Geschichte des alten Persiens, որ կազմած է Onken-ի հրատարակած „Allgemeine Geschichte in Einzeldarstellungen"-ի IV մասը. Berlin 1879.

29) Geschichte von Persien von den frühesten Zeiten bis zu den neuesten nach morgenländischen Quellen von Sir Iohn Malcolm, gouverneur von Bombay; bearbeitet von D-r Spazier. Stutgart und Tübingen. I. 1830, II. 1831.

30) Tyler: Forschungen zur Urgeschichte der Menschheit, aus dem englischen von Müller. Leipzig.

31) Richter: Historisch-kritischer Versuch über die Arsaciden und Sasaniden Dynastie. Leipzig 1804.

32) Iulius von Klaproth. Reise in den Kaukasus und nach Georgien unternomen in den Iahren 1807 nnd 1808. Halle und Berlin I. 1812. II. 1814.

33) Movers: Die Phönizier I. 1841. Bonn. II. 1, 2, 3, 1849—1856. Berlin.

34) S. Wahl: Allgemeine Geschichte der morgenländischen Sprachen und Litteratur. Leipzig 1784.

35) Արամեան լեզուի գանձ: hoc est: Ioh. Ioachimi Schröderi: Thesaurus linguae armenicae etc. Amstelodami MDCCXI.

36) Paul de Lagard. Armenische Studien. Göttingen 1877.

37) H. Hübschmann. Armenische Studien. I. Leipzig. 1883.

38) Paul de Lagard: Gesammelte Abhandlungen. Leipzig 1806.

39) W. von Humboldt: Über die Verschiedenheit des menschlichen Sprachbaues, որ կազմած է die Kawi-Sprache նշանաւոր գրչի ընդարձակ յառաջաբանը. I. Berlin 1836.

40) H. Steinthal: Gesammelte Sprachwissenschaftliche Abhandlungen. Berlin 1856.

41) Iacob Grimm: Über den Ursprung der Sprache Berlin 1862.

42) Wilhelm Wundt: Essays. Leipzig 1885.

43) M. Lazarus: Das Leben der Seele. I և II հրատարակ. 1883—1885. III. երկրորդ տիպ:

44) A. H. Sayce: Alte Denkmäler im Lichte neuer Forschungen. Leipzig.

45) F. Lenormant: Essai sur la Propagation de l'alphabet Phénicien I. Paris 1872.

46) K. Faulmann: Illustrirte Geschichte der Schrift. Wien.

47) Uhlrich Kopp: Bilder und Schriften der Vorzeit. Mannheim 1819.

48) H. Wutke: Geschichte der Schrift und des Schrifttums. I Leipzig 1872.

49) Lepsius: Paläographie als Mittel für die Sprachforschung. Leipzig 1842.

50) W. Wundt [1]): Die Sprache und das Denken.

Այն բազմաթիւ աշխատութիւններն, որ տպուած են զանազան պարբերական հրատարակութեանց մէջ և յիշուած այս աշխատութեան մէջ, անյարմար է կրկին մի առ մի թուել այստեղ. այդ պարբերական հրատարակութիւններից յառաջ ենք բերում մի

---

[1]) Կամաւ բաց թողնենք բոլոր հեղինակների տիտղոսներն, որովհետև դրանք աւագին տեղ կբռնէին. դրանք բոլորն էլ պրօֆէսօրներ և իրանց մասնագիտութեան մէջ նշանաւոր հեղինակութիւն ունեցող գիտնականներ են:

քանի ակադեմիական և գիտնական ընկերութեանց հրատարակութիւնների լիակատար անուններըը:

1) Sitzungsberichte der kaiserlichen Akademie der Wissenschaften. Philologisch-historische Classe. Wien.

2) Abhandlungen der königlichen Akademie der Wissenschaften zu Berlin.

3) Mémoires l'académie impériale des sciences de St. Pétersbourg.

4) Bulletin de l'académie imperial des Sience de St. Pétersbourg.

5) Abhandlungen der-philos-philol. Classe der königlichen bayerischen Akademie der Wissenschaften. München.

6) Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen.

7) Monatsberichte der königlichen preussischeu Akademie der Wissenschaften zu Berlin.

8) Berichte über die Verhandlungen der königlich-sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig. phil.—hist. Classe.

9) Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft. Leipzig.

10) Nouveau Journal Asiatique եւ Journal Asiatique. Paris.

11) A. Kuhn und A. Schleicher: Beiträge zur vergleichenden Sprachforschung. Berlin.

12) Mittheilungen des vereins fur Erdkunde zu Halle a/s etc. etc.

ՄԱՆ ԱՌԱՀԻՆ

1499-2013


ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐԻ ՁԵՐԴԱՑՄԱՆ

Գրի տեսակները. պատկերագիր. նշանագիր. տառ. գրի եւ լեզուի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը. գրի զօրութիւնը եւ ազդեցութիւնը վայրենիների վերայ. գրի նշանակութիւնը եւ նորա քաղաքակրթութեան մատուցած ծառայութիւնը:

394





Ամենաանսուր էակներին շնորհուած ընդունակութիւններից մէկն է՝ միտք արտայայտելու կարողութիւնը. այս կարողութիւնը շատ նշանաւոր տեղ է բռնում մարդկային քաղաքակրթութեան յառաջադիմութեան պատճառների շարքում: Առանց այս կարողութեան հազիւ թէ նա զանազանուէր այլ կենդանիներից և հասնէր իւր զարգացման ներկայ աստիճանին:

Իւր միտքն արտայայտելու համար մարդս ունի չորս միջոց, որոնք են. ա. նշանացի խօսակցութիւն, բ. պատկեր-

ներ, գ. բառեր և դ. գիր. սակայն սոցանից երկուսը միայն՝ նշանացի խօսելն ու պատկեր ձևակերպելը մարդկային ոգւոյ անմիջական արտադրութիւններն են. լեզուն և գիրը յառաջացել են հետզհետէ ժամանակի ընթացքում և կապակցուել հազարաւոր տարիներ առաջ գոյութիւն ունեցող նշանների հետ։

Յայտնի է, որ մի որ և է առարկայ անձայն նշանով ներկայացնելու համար, ամենաբնական ճանապարհն է նորա ձևի պատկերացումը. ինչպէս որ նշանացի խօսակցութեան ժամանակ առարկաների ձևը գծագրւում է օդի մէջ, նոյնպէս և պէտք է գծագրուի մի որ և է այլ նիւթի վերայ, որպէս զի նոյնը հասկացուի մի այլ տեղ կամ յետագայ սերունդների ժամանակ։ Այդ պատճառով և մարդկային սերունդն ամենից առաջ գործ է դրել այսպէս անուանեալ՝ *պատկերագիրը*. այս գրից իւրաքանչիւրը ներկայացնում է մի որ և է առարկայի կամ էակի պատկերը։ Սակայն երբ մարդկային լեզուն առաւել զարգացաւ և վերացական գաղափարների աստիճանին հասաւ, գիրն էս չէր կարող այդ աստիճանի վերայ մնալ, որովհետև այդպիսով չէր կարող արտայայտել վերացական գաղափարները, որ աներևոյթ լինելով՝ գծագրել անկարելի էր։ Ուստի և պատկերագիրը փոխուեցաւ *պայմանական նշանագրի*, որ սկզբում արտայայտում էր միայն ամբողջ բառեր, յետոյ փոքր առ փոքր լեզուի զարգացման հետևելով՝ արտայայտում է լեզուի (բառերի) վանկերն և ապա հնչիւնները. և ահա իւրաքանչիւր հնչիւնն արտայայտող այդ պայմանական նշաններին անուանում ենք *տառեր*, որոնք և կազմում են իւրաքանչիւր զարգացած լեզուի *այբուբենը*։

Թէև պատմաբանօրէն կարելի է ապացուցանել, որ իւրաքանչիւր տառ կրում է իւր սկզբնական ձևի, այսինքն պատկերագրի հետքերը, սակայն այսօրուայ տառերը կորցրել են մեզ համար այդ զգայական նշանակութիւնը, որովհետև գրի

պատեմատիքական գծագիրների փոխարկուիլը տեղի է ունեցել նպատակայարմար և կամաւոր պայմանագրութեամբ։

Մեր միտքն արտայայտելու համար ունեցած միջոցներից՝ *լեզուն* գերազանցում է միւսներին և այդ պատճառով մտքի արտայայտութիւն ասելով սովորաբար հասկացւում է, որ այդ տեղի է ունենում բառերի միջնորդութեամբ։

Լեզուն եւ գիրն իւրեանց նպատակի վերաբերութեամբ մի աչքի ընկնող նմանութիւն ունին. լեզուն յառաջանում է շարայարուած հնչիւնների արտասանութեամբ և իւր նպատակն է հասկանալի լինել, գիրը յառաջանում է նոյնպէս որոշ շարքերի կազմակերպութեամբ, նոյնանման նպատակով։ Թէև միջոցներով տարբերւում են միմեանցից, որովհետև մէկը ներգործում է լսողութեան, իսկ միւսը տեսողութեան վերայ, սակայն մտքերի կապակցութեան օրէնքն երկուսի մօտ էս միևնոյնն է։ Բացի սորանից իւրաքանչիւրը դոցանից ունի և իւր առաւելութիւնները. լեզուն իւր շուտափոյթ յատկութեամբ և դիւրութեամբ, գիրը տեւականութեամբ կամ յարատևութեամբ։

Լեզուն և գիրը յարաբերւում են միմեանց ուղիղ այնպէս, որպէս նկարչութիւնն ու երաժշտութիւնն են յարաբերւում միմեանց. նկարները մնում են երկար ժամանակի ընթացքում պահուած. այն ինչ ձայներն անյայտանում են իսկոյն։ Հնչիւնն անցողական է ինչպէս ծովի ալիքն, արտաշնչելուց յետոյ նա արդէն պատկանում է անցեալին, միայն նորա յիշողութիւնն է մնում հոգւոյ մէջ, այն էս տատանման և անապահով դրութեան մէջ, այնպէս որ մտքի հաստանքի մէջ դոքա կարող են անյայտանալ։ Այդ պատճառով և մարդը ցարգանալով՝ պէտք է աշխատէր այդ հնչիւնը ինչպէս պահել և խօսքը լսելուց շրջանից տեղափոխէր տեսանելուց շրջանը. այսպէս և յառաջացաւ գիրը և մի արաբացի մատենագիր ճշտութեամբ նկատում է, որ «գիրն է ձեռքի լեզուն»։

Գիրն ոչ այլ ինչ է, եթէ ոչ գծագրուած լեզու և այն-

պիսի հրաշալի ներգործութիւն ունի, որ վայրենի ժողովուրդները դորան գերբնական ոյժ են տալիս։ Հնդիկները, չկարողանալով ըմբռնել, թէ ինչպէս եւրոպացիք կարողանում են ստացուած նամակից տեղեկանալ հեռու տեղեր պատահած դէպքերի մասին, գրուած թուղթը դնում էին իւրեանց ականջին, որպէս զի տեսնեն թէ արդեօք իւրեանք ևս մի բան կը հասկանա՞ն [1]։

Շատ վայրենիները գրած թուղթը կոչում են «խօսող թուղթ»։ Թէ ինչ անսպասելի ազդեցութիւն ունի գիրն այն անձանց վերայ, որոնք բոլորովին գաղափար չունին դորա մասին, ամենապարզ կերպիւ կարելի է տեսնել անգղիացի Դր. Մարտինի նկարագրութիւնից, որ Տօնգա կղզին էր ընկել։ Այդ անձը 1806 թուին ցամաք ելած հայրենակիցներին մի նամակ է գրում՝ նոցա զանազան խորհուրդներ տալիս և իւր ազատութիւնը խնդրում, սակայն նամակն ընկնում է կղզու վայրենի իշխանի ձեռքը։

Դր. Մարտինը պատմում է հետևեալը. երբ նամակն իշխանի ձեռքն ընկաւ, նա սկսեց դիտել նորան ամենայն կողմից. բոլորովին անկարող լինելով այդ առարկայի էութիւնն ըմբռնելու, նամակը տալիս է իւր մօտ եղած մի անգղիացու և պահանջում է իմանալ թէ ինչ բան է այդ. սա թարգմանում է նամակի մի մասը, սակայն իշխանը զարմանալով՝ թէ ինչպէս կարող է մի թղթի կտոր այդպիսի մըտքեր հաղորդել, առնում է նամակը կրկին իւր ձեռքը և հետազօտում բաղձալի հայեացքով, սակայն գիրն ոչինչ չէ ասում նորան։ Նա լռութեամբ մտածում է մի քանի վայրկեան և կանչելով նամակի հեղինակին՝ հրամայում է մի քան գրել. դր. Մարտինի հարցման թէ ինչ պէտք է գրել՝ պատասխանում է իշխանը «ինձ գրիր»։ Դր. Մարտինը կատարում է այդ. իշխանը կանչել է տալիս մի այլ անգղիացի ու հրամայում կարդալ—այդ միջոցին դր. Մարտինին կանգնեցնում են կռնակը դէպի անգղիացին և հայեացքն այլ կողմն ուղղուած, որպէս զի չլինի թէ նա նշանով մի բան հասկացնէ կարդացողին։—Անգղիացին կարդում է իշխանի անունը, իսկ սա ապշած մնալով խլում է թղթի կտորը կարդացողի ձեռքից և ամեն կողմը շրջելով և ամեն գծերը մանրամասն քննելով՝ բացագանչում է վերջապէս. «սա ոչ ինձ է նմանում և ոչ մի այլ անձի, ո՞ւր են իմ աչքերը, ո՞ւր իմ գլուխը, ո՞ւր են ոտքերս, ինչպէս կարելի է իմանալ, որ այս ես եմ»։ Եւ անհամբերութեամբ հրամայում է դր. Մարտինին այլ իրերի մասին գրել և կարդացնել է տալիս մի-ւս անգղիացուն. այս գործողութիւնը տևում է 3—4 ժամ և զբաղեցնում իշխանին ու իւր շրջապատողներին։ Ապա իշխանն այդ դիտով սկսում է կատակներ անել. նա պատմում է դր. Մարտինին իւր պալատի տիկնանց փոքրիկ սիրային արկածները, որ գրում է թղթի վերայ և մի-ւս անգղիացին կարդալով այդ թուղթը նոյն կանանց մօտ, մեծ զարմանք ու ապշութիւն է պատճառում նոցա։ Մի այլ անգամ նա գրել է տալիս մի այլ իշխանի անուն, որ մի աչքով կոյր է լինում և կարդացող անգղիացուն անճանօթ. երբ սա կարդում է գրած անունը, իշխանը հարցնում է. «այդ մարդը կո՞յր է թէ ոչ» [2]։

[1]) *Մի պերուացի գերի մի անգամ տեղեկանալով, որ իւր տարած նամակը մատնել էր տիրոջը ճանապարհին կերած պտուղների քանակութիւնը—իրեն յանձնուած կողովի միջից—, միւս անգամ մի և նոյն յանձնարարութեան միջոցին, պտուղներն ուտելիս նամակը դնում է մի մեծ քարի տակ, հաստատ համոզուած լինելով, որ այժմ նամակը չտեսնելով իւր արարքը, այլ ևս չէր կարող մատնել իրեն։ Տես.* Frid. Kopp. „Bilder und Schriften der vorzeit“ *հատ.* I. *էջ* 54.

[2]) *Տես.* N. Wuttke: Geschichte der Schrift und des Schriftthums *հատ.* I. *էջ* 49.

Թէև այժմ գիրը սովորական իրերի կարգն անցնելով, մեզ համար այլ եւս մի արտաքոյ կարգի բան չէ, այնուամենայնիւ եթէ մի փոքր խորը մտածենք և ի նկատի առնենք դորա տուած անչափ օգուտները, կարող ենք երևակայել, թէ որպիսի ծառայութիւն են մատուցել մարդկութեան՝ գիրը գտնող ազգերը—որովհետև, ինչպէս իւր կարգին կասկածցանենք, անհատների ուժից վեր գործ է այդ:— Քաղաքակրթութեան և գրի զարգացումն այնպէս են կապակցուած միմեանց հետ, որ մէկն առանց միւսի գոյութիւն չէր կարող ունենալ. քաղաքակրթութեան հիմնաքարն է գիրը, իսկ առանց քաղաքակրթութեան չկայ գիր:

Եթէ հետազօտենք զանազան ազգերի, նա մանաւանդ եգիպտացիների և չինացիների,—որոնք միմեանց հետ պատմական կապակցութիւն չեն ունեցել—գրի զարգացման պատմութիւնը, մի զարմանալի նմանութիւն կը նշմարենք, որից կարելի է եզրակացնել, որ գրի կազմակերպութիւնը և զարգացումը յառաջ է ընթանում մարդկային հոգւոյ որոշ օրէնքների հիմանց վերայ: Գրի զարգացումը ցոյց է տալիս մարդկային հոգւոյ զարգացման աստիճանը [3]: Գիրն աչքի լեզուն է, նա խօսքը ներկայացնում է տեսանելի նշաններով. ուրիշի ասածը փոխանակ ականջով լսելու, ըմբռնում ենք աչքի միջնորդութեամբ: Գրի մէջ կարելի է միմեանցից զանազանել երեք գործիչներ-ֆակտորներ-որոնք են՝ ա. խօսքը կամ հաղորդելու իրը, բ. տեսանելի նշանը կամ գրի արտաքին ձևը, գ. գրի ներքին ձևը, կամ այն եղանակը, որով խօսքի արտաքին նշանակութիւնն է ըմբռնւում:

Գրի զարգացումն իրրև մի ընդհանուր պատմական և և հոգեբանական երևոյթ, հիմնւում է առաւելապէս լեզուի

[3]) „Առանց տառերի ամբողջ մարդկութիւնը կը ճար յաւիտենական մանկութեան մէջ". տես S. Wahl: Allgemeine Geschichte der morgenländischen Sprachen und Litteratur. էջ 593.

մի՛շտ կատարելագործուող ներքին ձևերի վերայ: Տարբեր ազգերի գրերը ներկայացնում են նոյն իսկ գրի զարգացման աստիճանները:

Գիրն և լեզուն տարբերւում են նորանով, որ մէկն ենթադրում է խօսողի ներկայութիւնը, իսկ միւսը ժամանակի և տարածութեան հեռաւորութիւն՝ գրողի և ընթերցողի մէջ: Այստեղից հետևում է, որ լեզուն խօսողից անբաժան լինելով պահանջում է խօսողի ներկայութիւնը, իսկ գիրն ընդհակառակը գրողից բոլորովին ազատ և տևող գոյութիւն ունի:

Գրելու արուեստն է, որ գերազանց քան ամեն բերանացի աւանդութիւն, կարելի է դարձնում անցեալ ժամանակների պատմութիւնն ուսումնասիրել. գիրն է, որ դիւրացնում է մարդկութեան իմացութեան յառաջադիմութիւնը, դորա միջնորդութեամբ միայն կարողանում են գիտնական անձինք իւրեանց նախորդների հետազօտութեան վերայ յենուելով՝ իւրեանց տեսութեան սահմանն առաւել ևս ընդլայնել. գրի միջնորդութեամբ են միմեանցից հեռու գտնուող ազգերի գաղափարները միմեանց հետ շփւում և օգտակար դիւտերը շուտափոյթ տարածւում: Առանց գրի մարդկային քաղաքակրթութեան գործը շատ դանդաղ կերպիւ կ'յառաջանար:

Գրի էութեան և նորա առ լեզուն ունեցած յարաբերութեան այս համառօտ տեսութիւնից յետոյ մի փոքր ընդարձակենք մեր առելիքը՝ մարդկային մտքի այլոց հաղորդելու միջոցների մասին: Ինչպէս տեսանք, այդ միջոցներն են ա. նշանացի խօսակցութիւն, բ. լեզու և գ. գիրն իւր տեսակներով:

ԳԼՈՒԽ Բ.

ՆՇԱՆԱԳԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Արտայայտիչ շարժողութիւն. Նշանագի խօսակցութիւնն իբրեւ միջոց հաղորդակցութեան. սկզբնական մարդոյ համար. Նշանագի խօսակցութիւնն իբրեւ արուեստ. Նշ. խօսակցութեան ծագումը. Նշ. խօսակ. վայրենի Հնդիկների մէջ. Անդերսօնի պատմած արկածը. Նշ. խօսակ. հոմերեանը. Նկարագրող եւ մատնանիշ Նշ. խօսակ. Նշ. խօսակ. իբրեւ ընդհանուր մարդկութեան սեպհականութիւն. Նշ. խօսակ. երաժշտական գործիքների միջնորդութեամբ. Նշ. խօսակ. հայ ժողովրդի մէջ:

Երկու տեսակէտից կարելի է Լեզուի ծագման խնդիրը դատողութեան ենթարկել՝ լեզուաբանական և հոգեբանական. վերջին տեսակէտը կլինի մեր հետազօտութեան ուղեցոյցը: Լեզուն էս ենթարկւում է հոգեբանական քննադատութեան, որովհետև նա անջատուած չէ կեանքից. ինչպէս կեանքն ամբողջապէս առած շարժողութիւն է, լեզուն նոյնպէս այդ շարժողութեան մի մասն է: Հոգեբանութեան տեսակէտից լեզուն մի շարժողութիւն է՝ ձայնակից հնչիւններով. այդ շարժողութիւնն ընդհանրապէս կոչւում է արտայայտութեանց շարժողութիւն, ուստի և կարելի է ասել. լեզուն արտայայտութեանց շարժողութիւն է: Այս արտայայտիչ շարժողութիւնն է, որ մեր հոգեկան մտապատկերները հաղորդում է արտաքին աշխարհին: Իսկ հոգեկան մտապատկերներն արտաքին աշխարհին հաղորդելու գործողութիւնն առանց ձայնի օգնութեան, կոչւում է նշանագի խօսակցութիւն:

Բազմաթիւ գիտնական հետազօտութիւններով համաձեա թէ ապացուցուած է, որ մարդկային այն ցեղերի մէջ, որոնք դեռ էս բնական դրութեան մէջ են, նշանագի խօսակցութիւնն աւելի ազդեցութիւն ունի, քան իսկական լեզուն, որովհետև երեւակայութիւնն այդտեղ աւելի ընդարձակ սահմանի մէջ է գործում: Նոյն իսկ քաղաքակրթուած մարդիկ, խօսելու ժամանակ, ակամայ զանազան շարժողութիւններ են անում—նա մանաւանդ գրգռուած միջոցին—թէև դրանք այլ էս պէտք չեն. այդ շարժողութիւնները մնացորդներ են արդէն վաղուց անցած ժամանակների սովորութեանց և մեքենայաբար կրկնւում են այսօր էս: Թէև քաղաքակրթութիւնը և դաստիարակութիւնն աշխատում են կասեցնել արտայայտութեան այդ ուժեղ շարժողութիւնները, սակայն այնուամենայնիւ դեռ էս անկարելի է դրանց բոլորովին մոռացութեան տալ:

Այդպիսի արտայայտութեանց նշաններ և շարժողութիւններ գործ են դնում նաև մանուկները, համր-խուլերը և միմեանց լեզու չ'հասկացող նոյն իսկ հասակաւոր անձինք:

Նշանագի խօսակցութիւնն էր այն միակ միջոցը, որով մարդկութիւնն իւր մանուկ հասակում կարող էր արտայայտել իւր գաղափարները, քանի որ դեռ էս մարդկային լեզուն արտասանութեան չէր վարժուել և նոյն իսկ լեզուն գտնւում էր մանկական հասակում [1]: Նշանագի խօսակցու-

---

[1]) Եթէ ի նկատի ունենանք այն մարդկանց սակաւիկ կարիքները, որոնք քաղաքակրթութեան ամենատարրին աստիճաններին

թիւնը, որ բնութեան մայրենի լեզուն է, միջոց է տալիս մարդուն՝ իւր միտքն արտայայտել անհրաժեշտ և կարևորագոյն իրերի և պահանջների վերաբերութեամբ։ Գիտնականներից ոմանք մինչև անգամ հաստատում են, որ մարդս իւր ձեռքի, մատների, մարմնի և դէմքի շարժողութեան նշանների միջնորդութեամբ կարող է արտայայտել այն բոլոր մտքերը, որ մենք լեզուով ենք յայտնում։ Ամերիկացի հընդիկների նշանացի խօսակցութիւնն ուսումնասիրողներն ևս հաստատում են այն հանգամանքը, որ դորանց լեզուն այնպէս աղքատ չէ վերացական գաղափարներով, ինչպէս որ սովորաբար կարծուում է [2]։

Մի ընդհանուր օրէնք է, որ ոչ մի իր կամ գործողութիւն չի կարելի *կատարեալապէս* ըմբռնել, առանց նորա ծագումը հասկանալու կամ դիտենալու, ուստի և *հանհրաժեշտ* ենք համարում նշանացի խօսակցութեան *ծագման* մասին փոքր ինչ երկարել մեր խօսքը։

Մանուկը լեզուն սովորելուց առաջ գործ է դնում հասկանալի շարժուձևեր. նա լեզուն հասկանում է այդ շարժուձևների և նշանների միջնորդութեամբ։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ մանուկն արդէն սովորել է փոքր ինչ խօսել, միշտ հետևում է ծնողների դէմքի արտայայտութիւններին, կարծես թէ ցանկանում է նրանց խօսքերն այդ արտայայտութիւնների միջնորդութեամբ ըմբռնել։ Այն անձինք, որ

վերայ են գտանւում, չենք կարող մերժել այն կարծիքը, որ լեզուն դրանց համար մի աւելորդ զարդ է. դրանք կարողանում են նոյնպէս աղաղակով և նշանացի շարժողութիւններով իրանց միտքն արտայայտել։ Նշանացի շարժողութիւնը բռնում է արտասանութեան տեղը։ Տես. Faulmann էջ 236.

[2]) Պէտք է ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ ամերիկացի հնդիկների նշանացի խօսակցութիւնը այսօր մի զարգացած արուեստ է, որ ունի իւր որոշ սկզբունքները։

լեզուի բաւականին պաշար չունին—նոյն իսկ քաղաքակրթուած երկրներում, ուր նշանացի խօսակցութիւնը վաղուց արդէն անյայտացել է—մի բառ պակասելու ժամանակ իսկոյն դիմում են մարմնի շարժուածքի օգնութեան։ Նոյնիսկ վարժուած ճառախօսները շատ անգամ դիմում են այդ միջոցին, որպէս զի իւրեանց խօսքերն աւելի ազդեն ունկնդիրների վերայ։ Պատահել են դէպքեր, որ զանազան անհատներ զրկուելով մարդկային յարաբերութիւնից, կորցրել են խօսելու ընդունակութիւնը և նշանացի խօսակցութեան միջնորդութեամբ կարողացել են կրկին՝ փոքր առ փոքր սովորել։ Այս բոլորից պարզ երևում է, որ նշանացի խօսակցութիւնն ընդհանուր մարդկութեան յատուկ ընդունակութիւններից մէկն ու սկզբնականն է։ Մարդս յառաջ քան խօսելու կարողութիւնը ձեռք բերելն, իւր գաղափարներն արտայայտել է շարժումով, նշաններով և բնութեան մէջ գտնուած առարկաներն օդի մէջ ձևակերպելով. սորանից և յառաջացել է նշանացի խօսակցութիւնը։ Սկզբնական մարդը մի որ և է գործողութիւն մի երկրորդ անձին հաղորդելու համար, պէտք է այդ գործողութիւնը կամ դորա ձևակերպութիւնը կրկներ նորա առաջ։

Նշանացի խօսակցութիւնն արտայայտում է մարդկային հոգւոյ նախկին դրութիւնը. այդ դրութեան հետքերը կարելի է գտնել նոյն իսկ քաղաքակրթուած ազգերի մօտ։ Դա թէ սովորական խօսակցութեան ժամանակ և թէ ճառելիս՝ ոյժ է տալիս խօսքի զօրութեանը, որ ասել է թէ՝ աւելի ազդու է քան խօսքը, ուստի և աւելի մօտիկ մարդկային հոգուն, քան խօսքը։

Յայտնի կարծուում էր, թէ նշանացի խօսակցութիւնը գործնական է միայն այն ցեղերի մէջ, որոնց լեզուն դեռ ևս զարգացման ամենաստորին աստիճանի վերայ է գտնուում. սակայն նոր հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ վայրենի հնդիկ ցեղերից շատերը, որոնք խօսում են նշանացի,

առաւել զարգացած լեզու ունեն, քան շատ այլ ցեղեր, որոնց մէջ նշանացի խօսակցութիւնը գործածական չէ։ Նշանացի խօսակցութեան այդ երկարատեւութիւնը բացատրւում է հաղորդակցութիւնը դիւրացնելու հանգամանքով։ Հնդիկները թէեւ բաժանուած են բազմաթիւ ցեղերի, սակայն դոցանից իւրաքանչիւրը բաղկացած է սակաւաթիւ ընտանիքներից և ունի իւր առանձին բարբառը, որ այլոց կամ բոլորովին անհասկանալի կամ թէ դժուար հասկանալի է. ահա այդ իսկ պատճառով նշանացի խօսակցութիւնը համարւում է հաղորդակցութեան դիւրին միջոցը։ Կան և այնպիսի վայրենի ցեղեր, որոնք իւրեանց հաղորդակցութեան համար ստեղծել են մի արուեստական լեզու՝ զանազան բարբառների խառնուրդից և մոռացել են իւրեանց սկզբնական հաղորդակցութեան ընդհանուր և բնական միջոցը—նշանացի խօսակցութիւնը։

Ինչպէս որ գրի սկզբնական ձեւն է առարկաների գծագրելը մի որ և է *նիւթի վերայ*, այնպէս էլ նշանացի խօսակցութեան նախնական ձեւն է՝ առարկաների գծագրելն *օդի մէջ*։ Եւ ինչպէս որ գիրը զարգանալով շեղւում է իւր սկզբնական ձեւից և պայմանական նշան դառնում, այնպէս էլ նշանացի խօսակցութիւնը հետզհետէ կրճատւում է առարկաները ձեւակերպելու եղանակը և նշանները կամ շարժողութիւնները պայմանական է դարձնում։ Այդ պատճառով և այսօր նշանացի խօսակցութիւնը մի արուեստ է դարձել ամերիկական հնդիկների մէջ։ Այդ արուեստի զարգացման նպաստել է նաև այն հանգամանքը, որ վայրենի ցեղերն իւրեանց կեանքի մեծ մասն անցնելով որսի և պատերազմի մէջ, պարտաւոր են զգոյշ լինել աղաղակ բարձրացնելուց, որովհետև այն լուռ անտառներում և ամայի վայրերում, ուր դորանք բնակւում են, մի փոքրիկ աղմուկն անգամ կարող է բաւականին տարածութեամբ հեռու գտանուող թշնամու կամ որսի կենդանու ուշադրութիւնը գրաւել։

Այժմ դառնանք նշանացի խօսակցութեան բուն էութեան։ Նշանացի խօսակցութիւնն, ինչպէս արդէն ասացինք, ներկայացնում է առարկաների կամ գաղափարների արտաքին նշանների կոպիտ գծագրութիւնն, ըստ կարելոյն նմանութեամբ, ուստի և գաղափարի և դորան արտայայտող նշանի մէջ միշտ գոյութիւն ունի մի տեսակ ազգակցութիւն։ Օրինակ եթէ մէկը նշանացի խօսակցութեամբ կամենում է հասկացնել մի երկրորդին, որ ինքը ցանկանում է քնել, գլուխը թեքում է աջ կամ ձախ ձեռքի ափի մէջ և աչերը փակում, այսինքն ներկայացնում է քնելու եղանակը։ Եթէ մի համր-խուլ իւր երկու մատը պատառաքաղի ձեւով մեկնած՝ դնում է սեղանի վերայ և յառաջ խաղացնում, դժուար չէ հասկանալ, որ նա կամենում է մանգալու գաղափարն արտայայտել՝ նմանեցնելով երկու մատը ոտքերի դրութեան և ընթացիկ շարժողութեան։ Ամերիկացի հնդիկներն և համր—խուլերը կարողանում են այդպիսի անձայն նշաններով այնպիսի երկար պատմութիւններ անել, որ զարմանք է պատճառում։

Սակայն նշանացի խօսակցութիւնն այն պակասութիւնն ունի, որ մի որ և է նշանից կարելի է մի քանի, միմեանցից տարբեր, բան հասկանալ։ Այս իրողութիւնը պարզապէս ցոյց տալու համար յառաջ ենք բերում մի զուարճալի պատմութիւն, որ 1853 թ. «Գլասգով»-ի համր-խուլերի դպրոցի տեսուչ Անդերսոնը պատմել էր Վաշինգտոնում՝ իբրև ճշմարիտ իրողութիւն։ Անգղիայի Յակոբ I արքան ցանկանալով մի «օյին խաղալ» Իսպանիայի դեսպանի հետ—որ մի գիտնական անձնաւորութիւն լինելով՝ նշանացի խօսակցութիւնն իւր համար մի զբաղմունք էր դարձրել—յայտնում է նորան, որ «Աբերդինի» համալսարանում գտնւում է մի երևելի պրօֆէսոր նշանացի խօսակցութեան։ Դեսպանն խնդրեց ուղեւորւում է այդ գիտնականին այցելելու, որ իսկապէս գոյութիւն չունէր. այլ այդ քաղաքում բնակւում էր մի մսավա-

ճառ, որ մի աչքով կույր, ծաղրածու և կատակասեր մարդ էր։ Ա.Հա այս մարդը պատուէր է ընդունում դիտնական պրօֆէսորի դերը կատարել և ոչ մի խօսք չ'արտասանել. նորան հագցնում են, ինչպէս, վայել է մի պրօֆէսորի և դիտնական դեսպանին ներկայացնելուց յետոյ թողնում են նոցա միայնակ։ Դեսպանը դուրս է գալիս տեսակցութեան սենեակից՝ բոլորովին գոհ իւր փորձից. նա պատմում է. «երբ ներս մտայ սենեակ, բարձրացրի ցուցամատս՝ նորան հասկացնելու համար, *որ կայ միայն մի Աստուած*. պրօֆէսորը պատասխանեց՝ բարձրացնելով իւր երկու մատը, ինձ հասկացնելու համար, որ այդ էակն իշխում է երկու, տեսանելի և անտեսանելի, աշխարհների վերայ. այն ժամանակ ես բարձրացրի երեք մատներս, որ նշանակում էր թէ Աստուածութիւնը բաղկացած է երեք անձից. նա իսկոյն վակեց իւր մատները՝ հասկացնելով որ այդ երեք անձինք մի միութիւն են կազմում..

Այս բացատրութիւնից յետոյ կանչում են բարկացած մատաճառին և հարցնում տեղի ունեցած տեսակցութեան հետեւանքի մասին. ահա նորա պատմածը. «Երբ այդ անխելք մարդը սենեակ մտաւ, իսկոյն բարձրացրեց մի մատը՝ ինձ հասկացնելու համար, որ *ես մի աչք ունեմ միայն*. այն ժամանակ ես բարձրացրի երկու մատներս՝ նորան հասկացնելու համար, որ ես իմ մի աչքով նոյնչափ լաւ եմ տեսնում, որչափ նա իւր երկու աչքով. յետոյ նա բարձրացրեց երեք մատը՝ ցոյց տալու համար, որ այնուամենայնիւ երկուսս միասին միայն երեք աչք ունենք. այդ ժամանակ ես բարձրացրի իմ բռունցքը և եթէ նա շտապով սենեակից դուրս չ'գնար, մի լաւ սէտք է թակէի» [3]։

---

[3]) G. Mallery: Forschungen und Anregungen über die Zeichensprache der Indianer Nord-Amerikas. „Ausl. Mittheilungen des Vereins für Erdkunde". 1882 էջ 49—50.

Թէև վերջին ժամանակներս նշանակուել են մասնաժողովներ՝ Ա.մերիկայի հնդիկների նշանացի խօսակցութիւնը տեղն ի տեղն ուսումնասիրելու համար, սակայն դրա հետազօտութիւնն առաւելապէս տեղի է ունեցել համր-խուլերի շրջանում։ Այժմեան մանկավարժական մեթոդը թէև ձգտում է համր-խուլերին ուսուցանել իսկական լեզուն, բայց այնուամենայնիւ նշանացի խօսակցութիւնը մնում է միշտ գլխաւոր միջոց արտայայտիչ միջոցը։ Նշանացի խօսակցութիւնը քերականութիւն չունի, բառերը չեն խոնարհւում և հոլովւում, չեն կապակցւում միմեանց հետ. միևնոյն նշանն արտայայտում է գնալ, գնացի, գնում էի, կ'գնամ, գնալով և այլն. մեր, մենք, մեզ, մեզնից և այլն։ Անունը, բայն, ածականն և այլն տարբերութիւն չունեն և միևնոյն նշանով են ցոյց տրւում. համր-խուլը մատով ցոյց է տալիս իւր աչքը, երբ կամենում է աչք բառը գործ դնել, նոյնն անում է նա, երբ ցանկանում է «տեսնել» արտայայտել։ Եթէ նշանացի խօսակցութեամբ կամենում ենք արտայայտել օրինակ հետեւեալ նախադասութիւնը. «Հայոց գրի զարգացման պատմութիւնը ցայժմ չէ մշակուած», պէտք է ասենք—և այդպէս էլ ասում են համր-խուլերը—«հայ, գիր, զարգացումն, պատմութիւն, այժմ, մշակել, ոչ»։ Բառերի դասաւորութեան մէջ առաջին տեղը բռնում է միշտ անունը բայն. փոխանակ ասելու. «սուրբն և հանճարեղն Մեսրոպ կատարելագործեց հայոց այբուբենը», նշանացի խօսողն ասում է. Մեսրոպ, սուրբ, հանճարեղ, այբուբեն, հայ, կատարելագործել։

Նշանացի խօսակցութիւնը կարելի է երկու տեսակի բաժանել. ա. *մատնանիշ* և բ. *նկարագրող*։

Մատնանիշ անող նշանացի խօսակցութիւնն առաւել ընդարձակ սահմանների մէջ է գործում քան նկարագրողը. գրանով ցոյց են տրւում բոլոր առարկաները և այդ միջոցն առելի ազահ է։ «Ականջ» կամ «լսել» արտայայտելու համար հնդիկը կամ համր-խուլը մատնանիշ է անում իւր

ականջը, «միս» ասելու ժամանակ նա բարձրացնում է իւր ձեռքի մորթը կամ մկանունքը, «սիրտ» ասելու տեղ ցոյց է տալիս իւր սիրտն և այլն։

Նկարագրող նշանացի խօսակցութիւնը տեղի է ունենում այն դէպքում, երբ կարելի չէ ուղղակի մատնացոյց անելով՝ միտք արտայայտել։ Նկարագրող նշանացի խօսակցութիւնը կարելի է երեք դասակարգի բաժանել. 1) *Ենթիջական*—օրինակ՝ մի տան մտապատկերն արտայայտելու համար ցոյց է տրւում մի հասարակ քառանկիւնի—2) *միջնորդական*—օրինակ՝ այլ մարդ արտայայտելու համար համբոյրը գլխարկ վերցնելու շարժողութիւն է անում, որովհետև միայն այլ մարդիկ են գլխարկ վերցնում բարևելու ժամանակ, իսկ կանայք ոչ։ Գերմանացի մանուկն «իւղ» արտայայտելու համար այնպիսի շարժողութիւն է անում, որ իբր թէ մի կտոր հացի վերայ իւղ է քսում, որովհետև նորա համար իւղ քսած հացը—բուտերբրօդ—մեր սովորական «հայ ու պանիր»ն է. դորա փոխարէն հայ մանուկն երկու ձեռքերը փոփոխաբար դէպի բերանն է տանում, որ արտայայտում է «հայ ու պանիր» ուտելու շարժողութիւնը։ 3) *Խորհրդաւոր*. օրինակ՝ անցեալի և ապագայի մտապատկերներն արտայայտում է յառաջ և յետ մատնանիշ անելով. ուր որ երկուութիւն պէտք է արտայայտել—օրինակ՝ երկուորեակ, ամուսիններ, քոյր-եղբայր և այլն—միշտ ցոյց է տրւում երկու մատը [4]։

---

[1]) Ըստ Վունդի՝ «քարի» և «չար» արտայայտելու համար ցոյց են տրւում բութ և ճկոյտ մատներն, այդպիսով մատի հաստութիւնն որոշում է բարոյական յատկութիւնը. համբոյրը իւր ցուցամատը բերանից ուղղակի յառաջ շարժելով՝ կամենում է արտայայտել «ճշմարիտ» գաղափարը, իսկ նոյն ցուցամատը բերանից ծուռ ուղղութեամբ յառաջ տանելը նշանակում է «սուտ»,

Բացի վայրենիներից և Համբ-խուլերից նշանացի խօսում են այն անձինք, որոնք միմեանց լեզուն չեն հասկանում և այդպիսով փոխադարձաբար համրի դեր են կատարում [5]։

Նշանացի խօսակցութիւնն այն միակ միտք արտայայտող միջոցն է, որ պատկանում է ընդհանուր մարդկութեան. թէպետ միևնոյնը մենք կրկնում ենք լեզուի վերաբերութեամբ, սակայն այդ բառացի ճիշտ չէ կարող լինել, որովհետև երկրիս վերայ գոյութիւն ունեն հարիւրաւոր լեզուներ, որոնք հասկանալի են մի որոշ ժողովրդի համար, իսկ այլոց համար—ոչ։ Իսկ եթէ մեկը ձեռքը դնում է ականջին և ապա բացասական շարժողութիւն անում, ամեն ոք և ամենայն տեղ—թէ զարգացած և թէ վայրենի, թէ Եւրոպայում, Ասիայում և թէ Աֆրիկայում, Ամերիկայում և այլն—կ'հասկանան, որ նա ուզում է արտայայտել, որ ինքը կամ մեկ ուրիշը խուլ է, չէ լսում։

Նշանացի խօսակցութեան դասին պատկանում է նաև *երաժշտական գործիքների* միջնորդութեամբ խօսելը, որ գործածական է Աֆրիկայի վայրենի ցեղերի մէջ։ Անձամբ դիտած և զարմացած ենք՝ տեսնելով այն ճարպիկութիւնը, որ Աֆրիկայի գերմանական գաղթականութեան, Կամերունի, բնիկները ցոյց էին տալիս թմբուկների միջնորդութեամբ հեռու

պարզ է, որ շարժողութիւնները կապ ունին «ուղիղ» և ոչ «ուղիղ» գաղափարների հետ։ Տես. W. Wundt: „Die Sprache und das Denken“ էջ 265.

[5]) Ուրիշ ժողովուրդն իւր արևմտեան սահմանակից ազգին—գերմանացիներին—տալիս է համր—Немецъ—անունը, որովհետև ռուսերէն խօսել չկարողանալու համար գուցէ սոքա ստիպուած էին նշանացի խօսակցութեամբ իւրեանց միտքն արտայայտել։ Տես. Tyler: Forschungen über die Urgeschichte der Menschheit“ գլ. III. էջ 43.

եղող անձանց իւրեանց միտքը հասկացնելու համար [6]։

Հայ ազգը ընդհանուր մարդկութեան մի փոքրիկ հատուածը լինելով, պէտք է որ նոյն միջոցներն ի գործ դնէը իւր գաղափարներն արտայայտելու և իւրեան հասկանալի անելու համար, ինչ միջոցներ որ գործ են դրել մարդկութիւնը կազմող այլ ազգերը։ Ինչպէս տեսանք, այդ միջոցներից մէկն և անմիջականն է նշանացի խօսակցութիւնը. հարկ չկայ ապացուցանելու, որ Հայերն ևս սկզբնական ժամանակներում պէտք է գործ դրած լինէին այդ միջոցը, քանի որ դոքա ևս մի անգամ գտնուում էին քաղաքակրթուելեան ամենաստոր աստիճանների վերայ։

Նշանացի խօսակցութեան բազմաթիւ հետքերը դեռ այսօր ևս—Հայ գրի զարգացման կատարեալ գործութիւնից մօտ 15 դար անցնելուց յետոյ—կարելի է գտնել Հայ ժողովրդի մէջ։ Այդպիսի հետքեր, որ համարեա թէ բոլորովին անյայտացել են եւրոպական ազգերի միջից, ուշագիր հետազօտողը մեր ժողովրդի մէջ հարիւրներով կարող է գտնել։ Յայտնի է թէ մեր ժողովուրդը—նա մանաւանդ վաճառական դասակարգը—միայն «աչքով-ունքով» անելով որչափ բան կարող է հասկացնել իւր դիմացը նստողին։ Փոխանակ այն ասելու, մենք շարժում ենք մեր գլուխը վերևից ներքև,

[6]) 1886 *Թուի ամառը Լայպցիգի կենդանաբանական այգին պահու ունեցաւ հիւրընկալելու Քամերուն երկրի իշխաններից մէկին, սևամորթ, սակայն գեղեցիկ և հսկայ կազմուածք ունեցող պրինց Վիդօ ֆօն Ուիդօվային, որի սև թիկնապահները ցոյց էին տալիս Լայպցիգի հետաքրքրուող հասարակութեան իւրեանց երկրի սովորութիւնները—ի թիւս այլոց և այդ թմբուկների միջոցով միաք արտայայտելը—իսկ ինքն, իշխանն իւր 3 կանանցով և մի փոքրիկ երեխայով մէջ տեղը բազմած՝ դիտում էր սպիտակ հասարակութիւնը և ժպտում իւր հաստ շրթունքներով։*

իսկ աջ և ձախ շարժելով՝ ուզում ենք ասել—ո՛չ [7]. մէկին սպառնում են՝ մեր ցուցամատը յառաջ ու յետ շարժելով [8]. փոխանակ դրամի անունը տալու, շփում ենք մեր ցուցամատն և բութ մատի ծայրերը միմեանց հետ. ուսերը բարձրացնելը նշանակում է «չգիտեմ» [9]. գլուխը մի փոքր թեքելը և ստորին շրթունքը կախելը նշան է կասկածի. բութ և ցուցամատով բդի մորթը քաշել՝ նշանակում է խնդրել. երկու բութ մատերի եղունգները միմեանց քսելը նշանակում է մէկին չգրացնել։ Երբ մէկն իւր մատն առնում է ատամների մէջ, կամենում է հասկացնել, որ մի բան յանկարծակի յիշեց կամ մոռացրեց. իսկ եթէ նոյն գործողութիւնն անելիս նա հաւաքում է և ճակատի կնճիռները, այդ նշանակում է, որ նա մոռացածը կամենում է մտաբերել։ Եթէ մէկը խօսելու ժամանակ բռունցք է շինում, նշանակում է որ նա սպառնում է. եթէ ոտքով տրոփում է, նշանակում է որ բարկացած է. գլուխը կամաց շարժելը նշան է զարմանքի. կնճիռներ հաւաքելը տհաճութեան և այլն։ Հայ կինն իւր երկու ձեռքը հակառակորդի դէմ վերևից-ներքև թափ տալով ցանկանում է ասել. «Հողեմ գլուխդ» կամ «թաղեմ քեզ», որ անէծքի նշանակութիւն ունի։

Ով եղել է բուն Հայ ընտանիքի և ժողովրդի մէջ, նա

[7]) Ուրացողը «այո՛» արտայայտելու համար թափահարում են իւրեանց գլուխը, իսկ «ո՛չ» ասելու համար գլուխը դէպի յետ են շարժում։

[8]) Հետաքրքրական է այն երևոյթը, որ գերմանացիք ևս սպառնալու ժամանակ շարժում են իւրեանց ցուցամատը, սակայն ո՛չ թէ վերևներքև, ինչպէս մենք, այլ աջ և ձախ՝ ձեռքի ներքին կողմը դէպի դէմքը դարձնելով։

[9]) Ուրացողը ուսերը փոփոխակի բարձրացնելով կասկած են ուզում արտայայտել։

այսպիսի և այլ հարիւրաւոր օրինակները կարող է յառաջ բերել, որովհետև նշանացի խօսակցութիւնը հայ ժողովրդի մէջ մի պատահական բան չէ, ինչպէս շատ եւրոպական ազգերի մէջ։ Մեր ժողովրդի մի ամբողջ դասակարգը ստիպուած է մի որոշ ըրջանի մէջ, երկար տարիների ընթացքում, նշանացի խօսակցութիւնն իբրև միակ միջոց գործ դնել։ Հայ ժողովրդագէտն իսկոյն կ'ըմբռնէ, որ մեր խօսքը վերաբերում է գիւղական հարսների դասակարգին, որոնք երկար և ձիգ տարիների ընթացքում—հնազանդութեան սովորութեան աստուածոհուն—, իրաւունք չունեն իրեանց սկեսուրի, սկեսրայրի, տագրների և ընտանիքի այլ մի շարք անդամների հետ իսկական լեզուով խօսելու. դրա ոչ թէ վերոյիշեալ անձանց հետ չեն կարող խօսել, այլ և դրացի ներկայութիւնն իսկ բաւական է, որ հարսները համրէ դեր կատարեն։ Եթէ ի նկատի ունենանք, որ այս սովորութիւնը շարունակուել է երկար դարերի ընթացքում, հասկանալի կլինի մեզ համար, թէ ինչու՞ նշանացի խօսակցութիւնը ցայժմ չէ անյայտացել հայ ժողովրդի մէջից [10]։

[10]) Ցանկալի կը լինէր, որ հայ ժողովրդագէտ բանասէրները աշխատէին ժողովել նշանացի խօսակցութեան այս բառամթեր հետքերը. այդ ժողովածուի հրատարակութիւնը ոչ թէ միայն հետաքրքրական կ'լինէր հայ բանասէրների համար, այլ և մեծ ծառայութիւն գիտութեան համար։

ԳԼՈՒԽ ԳՈ.

ԼԵԶՈՒ

„Մարդս միայն լեզուով է մարդ, սակայն լեզուն հնարելու համար՝ նա արդէն մարդ պէտք է լինէր“։

Վ. ՓՈՆ ՀՈՒՄԲՕԼԴ

Լեզուի եւ հոգու մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. հնչիւնի եւ մտքի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. բառերի ծագումը. մանկական լեզուն. լեզուի ծագումը յունաց փիլիսոփայութեան մէջ. լեզուի ծագման խնդիրը պատմական եւ հոգեբանական տեսակէտից. լեզուի ծագման չորս տեսութիւնները—թէօրիաները—ա) վերացական կամ հրաշքի տեսութիւն. բ) գիտուի. գ) դիպուածի եւ դ) աստիճանապատ զարգացման տեսութիւնները. նշանացի շարժողութեան, մանկական եւ իսկական լեզուի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. եզրակացութիւն։

Սացինք որ նշանացի խօսակցութիւնն իսկական լեզուի նախաստիճանն է և երկուսն էլ ոչ այլ ինչ են, եթէ ոչ արտայայտիչ շարժողութիւն. սակայն եթէ կամենալինք մի որոշ սահման գծել այդ երկուսի մէջ, շատ պէտք է դժուարանայ-

ինք: Ե՞րբ է մարդկութիւնը դադարել նշանացի խօսելուց, երբ է սկսւում իսկական լեզուն և այլն. սոքա այնպիսի խնդիրներ են, որոնց լուծումն ահագին հետազօտութիւններ է պահանջում, որովհետև մարդկային լեզուի յառաջադիմութիւնը սերտ կապ ունի հոգւոյ յառաջադիմութեան աստիճանների հետ, իսկ վերջինի յառաջադիմութիւնը կախումն ունի հազար ու մի հանգամանքներից: Ուստի և այդ սահմանի որոշելը մեր ծրագրից դուրս թողնելով՝ դիտողութեան առնենք նոյն իսկ լեզուն, ինչպէս որ դիտեցինք դորա նախաստիճանը—նշանացի խօսակցութիւնը:

Մի փոքր առաջ ակնարկեցինք մարդկային լեզուի և հոգեկան զարգացման մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. այժմ մի փոքր ընդարձակենք մեր խօսքն այդ մասին:

«Լեզուն, ասում է հռչակաւոր լեզուագէտ և լեզուաբան Վ. Հումբօլտ [1]), հոգւոյ այն յաւիտեան կրկնուող գործողութիւնն է, որ արտասանած հնչիւնին միտք արտայայտելու ընդունակութիւն է տալիս» [2]): Մտածմունքը միայն լեզուի միջոցով է զարգանում մարդկային հոգւոյ մէջ. իւրաքանչիւր լեզու տրամաբանական ճիշտ մտածման բովանդակութեան մի որոշ յարաբերական ձև է: Հայերէն «մարդ», գերմաներէն «մենշ», յունարէն «մենօս», բառերը ծագում են սանսկրիտից և բոլորի արմատն է «*ման*» որ նշանակում է *մտածել*» [3]): Եւ մարդս անուանւում է այդպէս ոչ միայն

[1]) Վ. Հ Ե Լ Մ և Ա ղ է ք ս ա ն դ ր Ֆ օ ն Հ ո ւ մ բ օ լ տ եղբայրները նշանաւոր տեղ են բռնում գերմանական գիտնականների շարքում. առաջինն իրրև լեզուաբան-պատմագէտ, իսկ երկրորդն իրրև բնագէտ և աշխարհագէտ: Այս երկու արդիւնաւոր, եղբայրների արձանները դրուած են Բէրլինի համալսարանի շէնքի առաջ:

[2]) տես. H. Steinthal: „Die Sprachwissenschaft W. von Humboldts und die Hegelische Philosophie“ էջ 91.

[3]) տես. Iacob Grimm: Über den Ursprung der Sprache“ էջ 31.

նորա համար, որ նա մտածում է, այլ և նա մարդ է, որովհետև մտածում է և խօսում է, վասն զի մտածում է: Մարդկային մտածողութեան և խօսելու կարողութեան այս սերտ կապն արդէն ցոյց է տալիս լեզուի հիմն ու ծագումը [4]):

Թէև մարդկային սեռի զանազան *ժողովուրդների* և *ցեղերի* բաժանուիլը և դրանց *լեզուների* և *բարբառների* տարբերութիւնը միմեանց հետ անմիջական կապ ունեն [5]), սակայն միևնոյն ժամանակ ենթարկւում ու կապակցւում են *մարդկային ոգեկան զօրութեան արտադրութեան* հետ: Այս վերջինի մէջ են գտնում դրանք իւրեանց բացատրութիւնը: Հազարաւոր տարիների ընթացքում և երկրիս ամենայն կողմերում տարբեր կերպիւ յերևան եկող այս *ոգեկան զօրութիւնն* է ամեն մտաւոր շարժողութեան բարձրագոյն նպատակը. այս զօրութիւնն է նոյնպէս այն վերջին գաղափարը, որ ընդհանուր մարդկային պատմութիւնը պէտք է պարզ կերպիւ ցոլացնէ իր մէջից, վասն զի մտաւոր գոյութեան այս բարգաւաճումն է միայն, որ իրաքանչիւր անհատ կարող է իրրև անխախտ սեպհականութիւն նկատել: Անհատները կապուած են և կախումն ունին ամբողջութիւնից. *անհատների կեանքն* ամենայն կողմից անհրաժեշտ կերպիւ կապակցուած է *ընկերական կեանքի* հետ:

Մարդուս նոյն իսկ միայն բուսական գոյութեան ժամանակ՝ *օգնութեան կարօտութիւնը* դրդում է անհատներին այլոց հետ կապակցուելու. իսկ ընկերական ձեռնարկութեանց

[4]) „Լեզուն մարդկային բնութեան յատկանիշը, նորա հոգւոյ առանձնայատուկ գործն է. չկայ մարդ առանց լեզուի և մարդուց դուրս իսկական լեզու չկայ“: տես. Lazarus: „Das Leben der Seele“ էջ 129.

[5]) „Ընդհանրապէս կարող ենք ասել, որ լեզուների պատմութիւնը նաև ցեղերի ու ազգերի պատմութիւնն է“:

Diefenbach տես. Beiträge von Kuhn und Schleicher հատ: II

կարելիութիւնը պահանջում է միմեանց հասկանալու մի միջոց և այդ միջոցը լեզուն է: Մի ազգի լեզուի կազմակերպութիւնը և ոգեկան առանձնայատկութիւնն այնպէս են ներքին կապով միացած, որ եթէ մէկը գոյութիւն ունենար, միւսը կատարելապէս դորանից պէտք է յառաջանար: Լեզուն ներկայանում է ազգերի ոգւոյ արտաքին երևոյթը. դոցա լեզուն իւրեանց ոգին է և ոգին իւրեանց լեզուն. երկու գաղափարներն էս համոնիշ են: Եթէ նոյն իսկ տեսականապէս լեզուն և ոգեկան զօրութիւնը միմեանցից բաժանենք, իրականութեան մէջ այդպիսի բաժանումը գոյութիւն չունի [6]: Լեզուն միտք կազմակերպող օրգանն է. մտաւոր գործողութիւնը, որ ամբողջովին մի ներքին, և կարելի է ասել, մի անցողական գործողութիւն է, շօշափելի է դառնում մեր արտաքին զգայարանների համար հնչիւնի միջնորդութեամբ. այդ պատճառով և մտաւոր գործողութիւնն ու լեզուն մի են և անբաժան միմեանցից:

Մտաւոր գործողութիւնն ինքն ըստ ինքեան հարկադրուած է լեզուի հետ կապակցուելու, որովհետև առանց այդ կապակցութեան մտածմունքը չի կարելի արտայայտել և բացատրել. մտապատկերը չի կարող գաղափար դառնալ [7]: Մտքի, ձայնի և ականջի անքակտելի կապակցութիւնը լեզուի հետ՝ մարդկային բնութեան սկզբնական և անբայատրելի կազմակերպութիւնն է: Աչքի ընկնող երևոյթ է նոյնպէս հնչիւնի եւ մտքի մէջ տեղի ունեցած համաձայնութիւնը [8]: Ինչպէս որ միտքն ամբողջ մտապատկերների ոյժը

[6]) Իրաւամբ Լայբնից փիլիսոփան լեզուին „ոգւոյ հայելի" է անուանում. լեզուի մէջ տեսնում ենք ոգւոյ էութեան պատկերը:

[7]) Նոյն իսկ այն ժամանակ, երբ չենք խօսում և լուռ ենք մտածում, այնուամենայնիւ մեր մտքերը մտածում ենք բառերով, ուստի երբ մտածում ենք, նշանակում է, որ նոյնպէս խօսում ենք. տես. Lazarus նոյն. էջ 3:

[8]) Հնչիւնը միայն արտաքին վարագոյր չէ մտքի համար, այլ

կենդրոնացնում է մի տեղ, այնպէս և հնչիւնը ներգործում է լսողի վերայ: Ինչպէս որ միտքը տիրում է սիրտը, այնպէս և հնչիւնը մի թափանցող, մարդուս ջղերը լարող զօրութիւն ունի [9]:

Ինչպէս որ միտքը մարդկային յարաբերութեան մէջ միշտ խաւարից դէպի լոյս, սահմանափակ շրջանից դէպի անսահմանն է ձգտում, նոյնպէս և հնչիւնը կրծքի խորքերից հոսում է դէպի դուրս և տարածւում հրաշալի կերպիւ իրեն համապատասխանող միջնորդ նիւթի, այն է օդի մէջ, որ տարերից ամենաքնքոյշը և շարժունն է և որի ըստ երևոյթին անմարմին լինելը գեղեցիկ կերպիւ համապատասխանում է ոգւոյ էութեան: Մտաւոր ձգտումը զբաղեցնում է ոչ միայն միտքը, այլ և դրդում է մարդուն ամբողջապէս դէպի գործունէութիւն. սորան նպաստում է առաւելապէս ձայնի հընչիւնը, որովհետև սա դուրս է ցատկում մարդուս կրծքից կապակցուած ուրախութեան և վշտի, ցանկութեան և զզուանքի հետ և ներշնչում է կեանք այն զգայարաններին, որոնք ընդունում են դորան: Լեզուի հնչիւնին յարմարւում է նոյնպէս մարդուս ուղղահայեաց կազմուածքը—որից զուրկ են կենդանիները—ուստի և խօսքն անմիջապէս դեպին չէ ընկնում, և խուլ կերպիւ անյայտանում, այլ ազատ-համար-

---

և նորա մի որոշ կազմակերպութեան պատճառն, որ առանց բառի հետ կապակցուելու տեղի չէր կարող ունենալ:

Մտածմունքն անձայն խօսակցութիւն է, իսկ խօսակցութիւնը հնչիւնաւոր մտածմունք: Բառը մարմնացած միտք է:

Մաքս Միւլլեր:

[9]) Միակ հնչիւնը, բառը, շատ անգամ այնպիսի ազդեցութիւն է անում լսողի վերայ, որ նորան կեանք կամ մահ է պատճառում. ոչ միայն բարոյական մտքով առած, այլ նաև փիւզիքական: Յայտնի են այնպիսի դէպքեր, որ երբ մէկին հաղորդել են յանկարծակի մի չափազանց ուրախ կամ տխուր լուր, իսկոյն կաթուածահար լինելով վախճանել է:

ձակ դուրս է գալիս շրջունքներից և դէպի նպատակ ուղղուում.. հնչիւնի հետ միանում է հայեացքի արտայայտութիւնը և ձեռքերի շարժողութիւնը [10]։

Մարդկային հոգւոյ մէջ տեղի ունեցած անցքերը յառաջանում են նոյն իսկ հոգւոյ գործունէութիւնից և հասկանալն ու խօսելը ոչ այլ ինչ են, եթէ ոչ նոյն լեզուի տարբեր ներգործութիւնները [11]։ Խօսակցութիւնն երբէք չի կարելի մի որևէ նիւթի վերադարձնելու հետ համեմատել, որովհետև դա թէ խօսողի և թէ հասկացողի մէջ զարգացնում է իւր սեպհական ներքին ոյժի զօրութեամբ. մարդուս համար բնական է հասկացածն իսկոյն արտասանել։

Ո՛չ լեզուն է ոգի ստեղծում և ո՛չ ոգին լեզու, այլ երկուսն էս միասին և միատեղ են յառաջանում, որովհետև երբ լեզուն զարգանում է, դա նոյն իսկ ոգւոյ զարգացումն է նշանակում [12]։ Լեզուի յառաջացումը և արտայայտու-

---

[10]) Բառերը բղխում են կրծքից առանց դժուարութեան. նոյն իսկ վայրենի ազգերի մէջ չ'կայ մէկը, որ իւր երգերը չուներ։ Մարդս մի երգող էակ է, սակայն ձայների հետ նա կապակցում է նաև մտքեր։ Տես. W. Humboldt նոյն էջ LXXVI.

[11]) Հասկանալ նշանակում է, որ այն ձայնի հետ, որ ես լսում եմ, կապակցում եմ միևնոյն միտքը, որ ես կապակցում եմ միևնոյն ձայնի հետ, երբ ես խօսում եմ։ Լեզուն մի կողմից նորանով է լեզու, որ հասկացւում է, այսինքն հնչիւնների արտադրութիւնը միայն այն ժամանակն է լեզու կոչւում, երբ լսողի համար մի նշանակութիւն ունի. ուրեմն ենթադրում է հասկացողութիւն։ Միւս կողմից հասկանալ կարելի է, երբ հասկացողը նոյն կերպիւ է խօսում, այսինքն միևնոյն մտքերի հետ նոյն ձայներն է կապակցում, այնպէս որ խօսելն և հասկացալն անհրաժեշտ հակադարձ պայմաններ են։ Տես. Lazarus նոյն էջ 23.

[12]) Լեզուն ոգւոյ ստեղծագործութիւնը չէ, այլ նորա ծնընդավայրը, մարդուս իսկական էութիւնը, որովհետև լեզուի հետ յառաջ է գալիս և կազմակերպւում մարդկային ոգին։ Ոգւոյ առաջին ստեղծագործութեան և գործունէութեան ձևակերպու-

թիւնը մարդկութեան համար մի ներքին պահանջ է և ոչ միայն արտաքին աշխարհի և ընկերական հաղորդակցութեան համար ստեղծուած զօրութիւն։

Յաճախ լեզուն անուանւում է նոյնպէս ոգւոյ մարմնացումն. այս ինքն ըստ ինքեան սխալ չէ, սակայն դիւրութեամբ կարող է թիւրիմացութեանց առիթ լինել. այդ ճշմարիտ չէ այն տեսակէտից, որ լեզուն չէ մի մարմին, որի մէջ ամփոփուած լինի ոգին։ Լացարուսը լեզուն համեմատում է զարդացնող արուեստի հետ. արձանը կամ նկարը մի մարմնացած միտք է, այսինքն քարի, քամանի և գոյների մէջ կայ մի ներքին ինչ, մի պատկեր։ Երբ ես զննում եմ մի արձան, աչքի միջնորդութեամբ ընդունում եմ մի զգայական պատկեր և այդ զգայական պատկերի հետ նոյն իսկ միտքը, այսինքն այն ներքին պատկերը, որ մտածել է արուեստագէտը և արտայայտել այդ քարի վերայ։ այդպէս չէ բառը. իմ լսած բառը մտքի պատկերացումը չէ, ոչինչ չէ պարունակում մտքից. երբ ես բառը, հնչիւնը, լսում եմ, պէտք է նոյն իսկ ինքս դորա հետ մի միտք կապակցեմ։ Այն միտքը, ներքին պատկերը, որ առաջուց արուեստագէտի հոգւոյ մէջ էր, իսկապէս արտայայտուած է մարմնի մէջ։ Եթէ այդ նկարը մի տուն, ծառ, արծիւ է, ամեն մարդ, որ ճանաչում է դոցա իսկականը, կ'ճանաչէ նաև դոցա պատկերը. սակայն ծառ, տուն, արծիւ բառերն այնչափ սակաւ են միտք կամ պատկեր արտայայտում, որ միայն նա կ'հասկանայ, ով որ գիտէ այդ լեզուն։

Լացարուսի այս համեմատութիւնը յաջող չէ թուում մեզ. եթէ մենք մի անծանօթ լեզուի բառից ոչինչ չենք հասկանում, ոչինչ չենք հասկանայ նոյնպէս մի անծանօթ առար-

---

թիւնն է լեզուն։ Տես. H. Steinthal: „Der Ursprung der Sprache, im Zusammenhang mit den letzten Fragen alles Wissens“ էջ 19.

ձայի պատկերից, ուստի և այդ պատկերն ոչինչ միտք չէ արտայայտում մեզ համար, ինչպէս նաև այն անճանօթ բառը: Եթէ մի գերմաներէն չիմացող մարդուն ասենք „Haus“ (տուն) բառը, հարկաւ նա ոչինչ չի հասկանայ, սակայն եթէ այդ մարդուն ներկայացնենք մի անճանօթ և բարդ մեքենայի գեղեցիկ նկարը, նա դարձեալ ոչինչ չի հասկանայ, բացի գուցէ այն ընդհանուր գաղափարից, որ դա մի մեքենայ պէտք է լինի, ինչպէս որ „Haus“ ասած ժամանակը նա կարող է ասել, որ դա մի բառ պէտք է լինի: Իսկ եթէ այդ մեքենայի պատկերը ներկայացնենք մեքենագէտին և „Haus“ բառը գերմանագէտին, նոքա իսկոյն կ'կապակցեն դոցա հետ իւրեանց մտքերը և պատրաստ կլինեն բացատրութիւն տալու:

Այսչափ լեզուի և հոգւոյ յարաբերութեան մասին. դառնանք բուն խնդրին:

Որչափ որ պարզ և հասկանալի է նշանացի խօսակցութեան առիթը և ծագումը, այնչափ ևս դժուար է իմանալ *բառերի ծագման* սկզբնառիթը, դոցա և արտայայտած գաղափարի մէջ եղած կապակցութիւնը և յարաբերութիւնը: Շատ սակաւ են այն բառերը, որոնց կապակցութիւնն իւրեանց արտայայտած գաղափարի հետ, գոնէ ըստ երևոյթին, հասկանալի և ըմբռնելի լինի—օրինակ բառաչել (բա), թըխթըխկացնել (թըխկ-թըխկ), կտցահար (կտցահարող), հոպոպ (հոպ-հոպ ձայնից) և այլն.—իսկ անթիւ այն բառերը, որոնք *այժմ* բոլորովին կապ չունեն իւրեանց արտայայտած գաղափարի հետ—օրինակ՝ հայց, ջուր, քար և այլն. ինչ կապ ունի ‹հայց› բառը ջրից և ալիւրից շաղախած ու թըխած զանգուածի հետ, ինչու՞ միայն հեղանիւթների համար կարելի է ‹խմել› բառը գործ դնել և այլն—: Որ ի սկզբանէ բառերը չեն յառաջացել միմիայն իւրեանց արտաքին հընչիւնը կապակցելով գաղափարի հետ, ակներև է և այն հանգամանքից, որ նոյն իսկ համր-խուլ ծնուածները, որ երբէք մի որևէ բառ կամ մի որևէ գործողութեան ձայն չեն լսել,

աշխատում են իւրեանց սեպհական ձգտմամբ և առանց ուսուցման՝ դասաւորուած հնչիւնները յառաջ կոչել և դոցա որոշ նշանակութիւն տալով՝ իբրև բառ գործ դնել [13]: Ակներև է, որ այս տեսակ բառերը ներգործում են ոչ թէ իւրեանց հնչիւնով, այլ արտասանելու յատուկ եղանակով, որ կապակցուած է ձայնի գործարանի որոշ դրութեանց հետ: Սակայն որ հնչիւնն ևս սկզբում կանչելու մի միջոց պէտք է լինէր, անվիճելի է. մենք ևս որտեղից որ մի ձայն ենք լսում, այն կողմն ենք դարձնում մեր հայեացքը, որովհետև որտեղ լսելու մի բան կայ, այնտեղ կայ և տեսնելու բան. իւրաքանչիւր ոք դառնում է դէպի խօսողը. մեզ գրաւում է ոչ միայն այն հանգամանքը, որ մէկը խօսում է, այլ նաև, թէ ինչի մասին է խօսում: Բառի, հնչիւնի և նշանակութեան մէջ եղած կապակցութեան ճիշտ ըմբռնումը կարելի է ձեռք բերել միայն նախընթաց մտապատկերների հետազօտութեամբ. պէտք է կամ ուսումնասիրել մի որոշ արմատ և հնչիւնի փոփոխութիւնները, կամ թէ տարբեր լեզուների մէջ եղած ազգակից հնչիւնները միատեղ հաւաքել և նոցա նշանակութիւնը գտնել. առաջին միջոցն աւելի ապահով է, պէտք է սկսել մի որոշ արմատից և զուգակցաբար հետևել հնչիւնների փոփոխութիւններին: Բառերի նշանակութիւնների պատմութիւնը, այսինքն իւրաքանչիւր բառի գտնազան նշանակութիւն ստանալու հետազօտութիւնը՝ լեզուի *պատմական հետազօտութեան* նպատակներից մէկն է,

---

[13]) Այս մասին Հայնիքէն առաջ է բերում մի քանի հետաքրքիր օրինակներ, որոնցից առնենք մէկը: „Ես ունէի մի 19 տարեկան համր-խուլ ծնուած աշակերտ, որ առաջուց գնացած դաղափարների համար գտել էր բառեր և միշտ գործ էր դնում. օրինակ նորա լեզուով ուտել (գերմաներէն էսսէն) նշանակում է „մումմ“, խմել (գ. արինքէն)—„շիպպ“, մանուկ (գ. կինդ.)—„տուտտէն“, ոսկի (գ. գոլդ) „պատտին“. և այլն: Տես Heinicke: Beobachtungen über Stumme etc. էջ 137.

ուստի և մեր նպատակից դուրս:

Լեզուի զարգացման խնդիրն ուսումնասիրելու համար, քայի նշանայի խօսակցութիւնից, որ իւրաքանչիւր հոգեբանի համար մի արդիւնաւոր աշխատանք է, մենք ունենք և մի այլ ասպարէզ, որ ոչ պակաս ուշադրութեան արժանի հետազօտութեան նիւթ է մատակարարում: Այս ասպարէզն է *մանկական լեզուն* [14]), թէև իսկապէս ասած՝ մանկանց լեզուն այնպէս չէ զարգանում, ինչպէս որ զարգացել է լեզուն իւր սկզբնական շրջաններում:

Մանուկն իսկական լեզուն սովորում է 2—4 տարեկան հասակից, սակայն նա արդէն առաջուց սկսում է հնչիւնները արտասանել—ինչպէս՝ պա, մա, դու, փու, և այլն—որոնք պարզ զգացումներ են. երբ արդէն այս հնչիւնները կան, այն ժամանակ միայն նա կարող է լեզու սովորել: Թէև հընչիւնները արտասանելու ձգտումը ժառանգական է, սակայն լեզուի մտապատկերները միշտ նոր պէտք է կազմակերպուին: Մանկանց լեզուն տարբերւում է հասակաւորների լեզուից. դորա յատկանիշներն են 1) հնչիւնների աղքատութիւն, 2) ձգտումն վանկակրկնութեանց և 3) ձգտումն ձայնի նմանողութեան—onomatopoie—

Մանկանց լեզուն ուսումնասիրելու համար պէտք է միշտ նոցա արտասանած բառերի ծագման մասին տեղեկութիւններ հաւաքել. մանուկն անձամբ չէ ստեղծում բառերը. նորա արտասանած բառերի ծագումը պէտք է որոնել նորա հետ խօսողների մօտ, ուստի և մանկանց իսկական լեզուն ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոցա շրջապատողների ստեղծագործութիւն: Մանկան արտասանած առաջին հնչիւնները ոչինչ նշանակութիւն չունեն նորա համար. բայց նորան շրջապատողները կամենալով յարմարուել մանկական դիտակցութեան՝ մի որևէ նշանակութիւն են տալիս այդ հնչիւններին և մանուկն ասես թէ սովորում է իւր արտասանած այդ հնչիւնների հետ որոշ մտապատկերներ կապակցել:

Մանկական լեզուի զարգացման դիտողութիւնն այստեղ ընդհատելով՝—յօդուածիս վերջին մասի մէջ կրկին կ'վերադառնանք այս խնդրին—տեսնենք թէ լեզուի ծագման և զարգացման խնդիրը, պատմութեան ընթացքում, ինչ տեսութիւններ է յառաջացրել փիլիսոփայութեան մէջ:

Պիթագորասից սկսած մինչև այժմ իւրաքանչիւր փիլիսոփայական ուղղութիւն փորձել է այդ խնդրի լուծումը տալ՝ իւր որոշ տեսակէտից. բայց որովհետև այդ փիլիսոփայական ուղղութիւնները միշտ տարբերուել են միմեանցից և այսօր էս տարբերւում են, հասկանալի է, որ լեզուի ծագման խնդիրն էս պէտք է տարբեր կերպիւ որոշուէր: Լեզուագիտութեան պատմութիւնը Յոյների մօտ սկսւում է երկու միմեանց հակառակ տեսութիւններով, որոնց նպատակն էր *լեզուի էութեան* որոշումը: Սոկրատէսի և Սոփեստականների ժամանակ Աթէնքում վիճում էին. թէ արդեօք անունները յառաջացել են այն առարկաների ներքին բնութեան կամ յատկութեան համաձայն, որոնց ցոյց էին տալիս, թէ համաձայն մարդկանց սովորութեան՝ միայն արտաքուստ որուել են առարկաներին: Առաջին տեսութեան պաշտպանները հիմնւում էին Եփեսացի Հերակլիտոս անունով փիլիսոփայի մտքերի վերայ, որ թէ և այդ կարծիքը բացարձակ չէր արտայայտել, սակայն գործ էր դրել առարկաների անունները՝ նոցա էութիւնը բացատրելու համար:—Մի գործողութիւն, որ բնականաբար թոյլատրելի է միայն այն ենթադրութեամբ, որ առարկաների անունները որոշում են նոցա էութիւնը ճշտօրէն, այսինքն համաձայն իւրեանց ներքին յատկութեան: Հակառակ տեսութեան կուսակիցները հիմնւում էին Աբդերացի փիլիսոփայ Դեմոկրիտոսի ասածների վերայ, որ այդ ժողովրդական դար-

[14]) Պէտք է ասել, որ մանկական լեզուի զարգացման հետազօտութիւնը դեռ էս նոր ժամանակների ձեռնարկութիւն է և վերին աստիճանի ուշադրութեան արժանի առարկայ է դարձել:

ձած և Հերակլիտոսի պաշտպանած կարծիքը մերժում էր այն փաստով, որ տարբեր առարկանները միևնոյն և միայն մի անուն են կրում, որ միևնոյն առարկան տարբեր անուններ ունի և վերջապես մի քանի առարկաներ ոչ մի անուն չեն ունի։ Դեմոկրիտոսը կարծում էր, որ առարկաների անունները յառաջացել են միայն այն պատճառով, որ մարդս սովորութիւն ունի իւր տեսած առարկաներին մի որևէ անուն տալ. այս տեսութեան եզրակացութիւնն այն էր, որ անունները յառաջացել են մարդոց կամաւոր համաձայնութեամբ։

Այս երկու տեսութիւնները հարկաւ խնդիրը չ'լուծեցին և անկարելի էս էր լուծել այն ժամանակ, քանի որ այժմ էս—երբ գիտնական հետազօտութիւնն այն աստիճանի զարգացման է հասել, որին յունական փիլիսոփայութիւնը մօտենալ անգամ չ'կարողացաւ—այդ խնդիրը վճռուած չէ և դուցէ դեռ էս երկար ժամանակ անվճիռ մնայ, որովհետև լեզուի կազմակերպութեան և ծագման ժամանակամիջոցը քննական և պատմական հետազօտութիւնից անձեռնմխելի է և դուցէ կմնայ յաւիտեան [15]։

[15]) Ես իրաւամբ կարող եմ, ասում է հռչակաւոր լեզուագէտ Յ. Գրիմը, լեզուի ծագման հետազօտութեան կարեւորութիւնն իրեւ պրօբլեմ ներկայացնել, որի յաջողութիւնը շատերին կարող է կասկածելի թուալ։ Խնդիրը լուծելու և մեր կասկածները փարատելու համար պէտք է առաւել սկզբնական ժամանակների պատմութիւնը և լեզուները հետազօտութեան մատչելի լինէին, որովհետև հաւանական է—աւելի ճիշտն ասել՝ հաստատ է,—որ սանսկրիտ կամ պէնդ լեզուի, ինչպէս և երբայական և այլ սկզբնական սնապուած լեզուների, ամենահին մնացորդները շատ հազար տարիներով յետ են լեզուի իսկական ծագման կամ մարդկային ցեղի ստեղծագործութեան ժամանակից։ Ի՞նչպէս կարելի է այսպիսի մի ահագին անդունդից այն կողմն անցնել և հետազօտել լեզուի ծագումը։ Տես. Iacob Grimm: Über den Ursprung der Sprache· էջ 10—11.

Լեզուաբանական հետազօտութեան ժամանակ մենք ամբողջովին պատմական միջավայրումն ենք գտնւում և մեզ յայտնի լեզուներից ոչ մէկին չէ կարելի սկզբնական անուանել։ Եւ որովհետև դոցանից իւրաքանչիւրը մեզ անյայտ սկզբնական ժամանակի սերունդներից ստացած մի քան ունի, ուստի և մտքերի արտայայտութիւնը յառաջ բերող ոգեկան զօրութիւնը միշտ կապակցուած է արդէն տուածի կամ եղածի հետ, որ մեզ անճանօթ է։

Այսպէս ուրեմն՝ լեզուի իսկական ծագման պատմութիւնն անմատչելի լինելով գիտնական հետազօտութեան, պէտք է որ լեզուի ծագման խնդիրն էս չ'ենթարկուեր քննական դատողութեան և այդ խնդրի մասին յայտնուած բոլոր տեսութիւններն էս ոչինչ արժէք չպէտք է ունենային և միայն վերացական ենթադրութիւններ լինէին, եթէ այլ ճանապարհ չ'գտնէինք այդ խնդիրը քննադատութեան ենթարկելու։

Սակայն արդէն տեսանք, թէ լեզուն ինչ յարաբերութեան մէջ է գտնւում մարդկային ոգու հետ. այդ տեսակէտից արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ քննելով և հետազօտելով մեր ներքին, ոգեկան կեանքը, դորա հետ ի միասին հետազօտած կլինենք նաև լեզուի գլխաւոր էութիւնը։ Այսպիսով լեզուի ծագման խնդիրը պատմական տապարիզից փոխադրւում է հոգեբանական շրջանը և հոգեբանական հետազօտութիւնը միայն կարող է առաւել պայծառ լոյս ձգել այդ խնդրի վերայ [16]։

[16]) Եթէ մի հայեացք ձգենք լեզուի ծագման խնդրի վերայ, կտեսնենք որ դորան լուսաբանելու համար պէտք չեն ոչ պատմական յիշատակարաններ և ոչ գտաւոր ենթադրութիւններ—հիպօտեզ—այլ միայն պէտք է մեր սեպհական էութիւնը հետազննենք, մեր հոգւոյ խորքերը թափանցենք՝ լեզուի ծագումն այդտեղ գտնելու համար, որովհետև լեզուն ինչպէս որ մեր մէջն է յառաջանում, նոյնպէս և յառաջացաւ այն վայրկեանին, երբ

Լեզուի ծագման խնդիրը վերաբերում է հոգեբանութեան հետազօտութեան շրջանին, սակայն այնուամենայնիւ պատմականը բոլորովին մերժել անկարելի է. որչափ որ հոգեբանական գիտութիւնը խորը թափանցէ մարդկային ներքին աշխարհը և հետազօտէ հոգեկան երևոյթները, այնչափ էս առաւել պայծառ կերպիւ կ'լուսաւորուի պատմականը, որ իւր կողմից դարձեալ կ'նպաստէ հոգեկանի հետազօտութեան: Հոգեբանութիւնը գործ ունի առաւելապէս անհատների հետ. երբ արդէն բազմաթիւ փորձեր կատարուել են անհատների վերայ և հոգեբանական օրէնքները որոշուել, այն ժամանակ միայն այդ օրէնքները մի տեսակ ընդհանուր բնաւորութիւն են ստանում. իսկ պատմական քննութեան ասպարէզը սկզբից արդէն անհատների հաւաքածուն, ընդհանուրն է: Ինչպէս որ հոգեբանական հետազօտութեան նպատակը մարդուս ներքին աշխարհի, հոգւոյ ուսումնասիրութիւնը պէտք է լինի, նոյնպէս և ճիշտ պատմական հետազօտութեան նպատակը պէտք է լինի, ո՛չ թէ անհատի, այլ ընդհանուրի ոգեկան զարգացումն ուսումնասիրել և նորա կազմակերպութեան աստիճանները պարզաբանել [17]:

Համառօտակի յառաջ բերենք լեզուի ծագման չորս գլխաւոր տեսութիւնները, որոնք են. ա) *վերացական կամ հրաշքի տեսութիւնը—թէօրիան—* բ) *զիւտի*, գ) *դիպուածի* և դ) *աստիճանաբար զարգացման կամ գենետական տեսութիւնները:*

ա) *Վերացական կամ հրաշքի տեսութիւնը:*

Աւանդական և իւր ծագումն առաւելապէս եկեղեցականներից առնող այս տեսութիւնը բացատրում է, որ լեզուն, ինչպէս այն ամենն, որ մարդուն անասուններից գերազանց դիրք է տալիս, անմիջապէս տրուած է շնորհիւն Աստուծոյ: Ի հարկէ այդ սկզբնական լեզուն համարւում է բոլորովին կատարելագործուած, ինչպէս որ կատարեալ էր մարդը նոյն իսկ ստեղծման ժամանակ: Այս տեսութեան յառաջանալու գլխաւոր առիթն եղել է լեզուի վսեմութիւնը և գործնական բարձր նշանակութիւնը: Եթէ ի նկատի ունենանք լեզուի գեղեցկութիւնը, ոյժը, զօրութիւնը, զանազանակերպութիւնը և երկրագնդի ամենայն կողմերում տարածուիլը, այն ժամանակ անհասկանալի չի լինի թէ ինչու այս տեսութիւնը դորան մարդկային կարողութիւնից վեր ստեղծագործութիւն է համարում և անմիջական Աստուածային ծագումն տալիս: Լեզուն էս, ինչպէս Աստուծոյ միւս ստեղծագործութիւնները—մարդ, անասուն, բոյս —, բաժանւում է զանազան ցեղերի, տեսակների և ընտանիքների: Յաջող հանգամանքների մէջ լեզուն ծաղկում և բարգաւաճում է ինչպէս ծառը պարարտ հողի մէջ և տարածում իւր ճիւղերն ու արմատները դէպ ամենայն կողմը. իսկ անյաջող հանգամանքներում անփոյթ մնալով և խառնուելով այլ տարրերի հետ, լեզուն կորցնում է իւր գեղեցիկ յատկութիւնները, ինչպէս որ մի անտէր թողնուած արտ՝ հեռուհեռու խառնուելով որոմի հետ աներևոյթանում և կորցնում է իւր նշանակութիւնն իբր արտ: Արդեօք ո՞վ և ինչն այնպիսի դիւթիչ զօրութիւն ունի, ինչպէս լեզուն. դորա մի-

---

մարդս իւր ոտքն երկրի վերայ կոխեց—լիներ դա մի ղոյդ, թէ շատ ղոյդեր, միաժամանակ և միևնոյն տեղը, թէ տարբեր տեղեր և զանազան ժամանակներում: Տես. H. Steinthal: Der Ursprung der Sprache etc. *էջ* 14.

17) *Նախապատմական ժամանակի հետազօտութիւնն ամբողջովին կախուած ունի անհատական և ընդհանուր լեզուի զարգացման ընթացքի բաւականացուցիչ բացատրութիւնից՝ ըստ պատմական հիմանց, որովհետև միայն պատմութեան մէջ կարող ենք ձեռք բերել առողջամիտ, այսինքն մտածուած և պաղատէտ գաղափարաձևեր* (kategorien): *Նախապատմական այրերի մէջ ամենայն ինչ մութը կմնայ, եթէ մենք պատմութեան լուսով չկարողանանք լուսաւորել դոցա: Տես.* Lazarus: Geist und Sprache. *էջ* 12. *Թանօթ. ա.*

միայն մի խօսքը բաւական է մարդուս ամենագառնացած և թշուառ սիրտն ու հոգին ամոքելու, սակայն մեւս կողմից նաև ամենախաղաղ և երջանիկ սիրտն ալեկոծելու և ոգին վրդովելու։

Կրկնում ենք, որ այս բոլորն աննշան պատճառները չեն, որ մարդոց առիթ տուեցին լեզուի ծագումը մարդկային շըրջանից դուրս հանել և գերմարդկային զօրութեան նուիրել։ Թէ ինչպէս կարողացաւ առաջին մարդը, որ լեզու չունէր, լեզուի միջնորդութեամբ իւրեան հաղորդակից լեզուն ըմբռնել և հասկանալ— ահա այդ է հրաշքը [18])։

բ) *Գիւտի եւ դ) դիպուածի տեսութիւնները* [19])։

Բոլորովին հակառակ առաջին տեսութեան հանդիսանում է փիլիսոփայական այն ուղղութիւնը, որ լեզուն համարում է մարդկային ստեղծագործութիւն և մերժում աստուածային օժանդակութիւնը։ Ըստ այս տեսութեան մարդս կարող էր իւր բնական ձիրքով, առանց աստուածային օժանդակութեան, գտնել լեզուն, ինչպէս որ գտաւ գիրը։

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ սուրբ

[18]) Լեզուի աստուածային ծագումը պաշտպանողներին դէմ ժուարութեան մէջ դնող խնդիրներից մէկը հետևեալն է. արդեօք Աստուած ինչ առարկաների, ինչ հոգեկան բովանդակութեան համար բաւեր սովորեցրեց մարդուն. արդեօք մարդս ստացա՞ւ նոյնպէս այն կենդանիների անունները, որոնք յետոյ յերևան եկան. արդեօք յետոյ գտնուած գործիքների և այլ բազմաթիւ իրողութեանների համար արդէն պատրաստի բաւեր կային. . . : Տես. Lazarus նոյն հատ. II. էջ 15.

[19]) Այս երկու տեսութիւնները, որոնք լեզուն համարում են մարդու ստեղծագործութիւն, տարբերւում են միմեանցից այն հանգամանքով, որ առաջինն ընդունում է լեզուն իբրև բնութեան և հարկի պահանջ—ինչպէս կենդանիների ձայները—երկրորդը լեզուն համարում է արդիւնք կամայականութեան և դիպուածի։

գիրքը վկայում է թէ լեզուն ո՛չ թէ Աստուծոյ, այլ մարդկային գործ է. Մովսէսի ա. գրքից յայտնի է, որ Աստուած ժողովում է իւր բոլոր ստեղծած կենդանիներին, թռչուններին, սողուններին և այլն առաջին մարդու մօտ, որպէս զի տեսնէ թէ նա ինչ անուններ կ'տայ դոցա։ Ադամ իւրաքանչիւրին մի անուն է տալիս և այդ անունները մնում են իբրև մշտական կոչումներ բոլորի համար [20])։

Լեզուի ծագումը բացատրել միայն ձայների կամ հընչիւնների նմանողութեամբ, նոյնպէս անյաջող փաստաբանութիւն է, որովհետև ամենասկզբնական դրութեան մէջ մարդս այդ էս անկարող էր անել. դա առաւել յետագայ ժամանակների արդիւնք է և միայն երկրորդական տեղ է բռնում լեզուի զարգացման ընթացքում։ Այս տեսութիւնն ինքն ըստ ինքեան ենթադրում է, որ մարդս մի ժամանակ կենդանիների նման զուրկ էր լեզուից և ապա դիպուածով

[20]) Եւ ստեղծ էս Տէր Աստուած զամենայն գազանս վայրի և զամենայն թռչունս երկնից և էած զնոսա առ Ադամ, տեսանել զինչ կոչեսցէ զնոսա։ և ամենայն շնչոց կենդանւոյ, զինչ եւ անուանեաց ադամ, այն անուն է նոցա։ Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց. և ամենայն թռչնոց երկնից. և ամենայն գազանաց վայրի։ Գիրք ծննդոց. գլխ. բ. 19, 20։

Գերմանացի Հ ե ր դ ե ր փիլիսոփան, որ առաջ լեզուի ծագման այս եկրորդ տեսութեան գլխաւոր ներկայացուցիչներից մէկն էր—վերջը փոխեց իւր կարծիքը և եղաւ հետևող ա. տեսութեան—բացագանչում է սուրբ գրքի այս տողերի վերաբերութեամբ. „Հարցնում եմ, թէ արդեօք այս ճշմարտութիւնն երբ և իցէ ըստ արևելեան ոճի առաւել աղնիւ և գեղեցիկ կերպիւ կարելի էր ասել քան թէ. Աստուած առաջնորդեց բոլոր կենդանիներին մարդու մօտ, որպէս զի տեսնէ թէ նա ինչ անուններ կտայ նոցա և որպէս զի միևնոյն անունով կոչուին ընդ միշտ։ Ի՞նչպէս կարելի էր, ըստ արևելեան, ըստ բանաստեղծական ոճի առաւել որոշ ասել թէ մարդս ինքն իւր համար լեզու գտաւ, կենդանի բնութեան հնչիւններից“։

կամ թէ հարկից ստիպուած ուշադրութիւն է դարձրել իւր կամ իւր նմանների արձակած ձայնի վերայ և հասկացողութեամբ գործ դրել իւր լեզուի գործարանները։ Սակայն այստեղ էս մութն է մնում այն խնդիրը՝ թէ արդեօք կարելի էր առանց լեզուի՝ հասկացողութեամբ և մտածելով գործել ու այլոց հետ հաղորդակցութիւն ունենալ։ Աւելի պարզ ասել. մարդս քանի որ լեզու չունէր, կարո՞ղ էր խելք ունենալ. թէև այս հարցման պատասխանը բացասական է. սակայն նոյնպէս անկարելի է դրական պատասխան տալ այն հարցման, որ ուղիղ դրա հակապատկերն է ներկայացնում, այսինքն, մարդս կարո՞ղ էր լեզու ունենալ, քանի որ խելք չունէր։ Առանց խելքի լեզուն չէ՛ իսկական լեզու, այլ միայն զգացումն արտայայտող հնչիւն. իսկ միմիայն զգացման հնչիւնները չեն կարող լեզուի ծագումը բացատրել. դրանք նման են կենդանիների լեզուին։ Սակայն մարդկային լեզուն անկարելի է մինչև իսկ համեմատել կենդանիների ձայների հետ։ Բնութիւնն իւրաքանչիւր կենդանու մէջ յառաջացրել է՝ իւր արտաքին կազմուածքին յատուկ ձայն և կենդանին արտայայտում է այդ ձայնն առանց սովորելու, իսկ լեզուն մարդուս համար սկզբնական չէ [21]։ Եթէ մի հայ մանուկ իւր ծննդից անմիջապէս յետոյ տանենք մի այլ օտարախօս

[21] Վերցրէք ձուից նոր դուրս եկած մի թռչնակ և կերակրեցէք նորան մի այլ տեղ, միայնակութեան մէջ, ուր նա անկախող լինի իւր տեսակների հետ յարաբերութիւն ունենալ. չնայելով դորան, նա կարտայայտէ այն բոլոր ձայները, որ յատուկ է իւր նմաններին, որոնց հետ նա երբէք չէ եղել և նոցա երգը չէ լսել։ Կենդանեաց իւրաքանչիւր ցեղի ձայնը միշտ միևնոյն կերպ և անփոփոխ. շունը հաչում է այսօր էս նոյն եղանակով, ինչպէս որ հաչում էր ստեղծագործութեան միջոցին և միևնոյն ձևվ լոցով է դէպի վեր սլանում այսօր արտոյտը, ինչպէս որ շատ հազար տարիներ առաջ։ Տես. Grimm: Über den Ursprung etc. էջ 15.

երկիր, կամ յանձնենք օտարախօս անձի խնամակալութեան, նա մի քանի ժամանակից յետոյ կսկսի խօսել, բայց ո՛չ հայերէն, այլ իւր խնամակալի լեզուով. իսկ եթէ նորան բոլորովին միայնակ թողնենք, նա չի կարող խօսել։ Իւրաքանչիւր լեզուի առանձնայատկութիւնը կախումն ունի այն տարածութիւնից և ժամանակից, որի մէջ մարդս ծնւում և դաստիարակւում է. տեղն ու ժամանակը առիթ են մարդկային լեզուի փոփոխութեանց. դորանով կարելի է բացատրել մի և նոյն ծագումն ունեցող լեզուների տարբերութիւնները [22]։

Մարդկային լեզուն ո՛չ պատրաստի կերպիւ է տրուել նորան և ոչ էս նորա գիւտն է [23], ուստի և կենդանեայ ձայնի հետ անհամեմատելի. միայն մի հանգամանք երկուսի համար էս ընդհանուր է, այդ է. մարմնի կամ առաւել էս *լեզուի գործարանների անհրաժեշտութիւնը*։

դ) Լեզուի աստիճանաբար զարգացման տեսութիւնը։

Սրդեօք լեզուն հարկից ստիպուած թէ կամայական կերպիւ է յառաջացել, արդեօք աստուածայի՞ն թէ մարդկային ստեղծագործութիւն է. մենք կարող ենք այս հարցումներին պատասխանել այսպէս. *լեզուն յառաջացել է ուղիղ այնպէս, ինչպէս որ ոգին, եւ մի եւ նոյն ծագումն ունի*։ Միտքը և լեզուն մեր սեպհականութիւնն է, սակայն այնուամենայնիւ մենք պէտք է նախ դոցա ուսանենք։ Լեզուն մարդուս գոր-

[22] Ա. յսօրուայ Շիրակեցին և Ղրիմի ու Նոր-Նախիջևանի հայը հաղիւ թէ միմեանց հասկանան, այն ինչ երկուսն էս ոչ շատ ժամանակ առաջ միևնոյն բարբառն էին յորջորջում։

[23] Եթէ լեզուն մի գիւտ լինէր, այն ժամանակ մարդկային խմաստութիւնն առաւել մեծ պէտք է լինէր այդ գիւտից առաջ քան այժմ. նոյնը կարող ենք ասել և գրի մասին։ Տես. Geiger: Über die Entstehung der Schrift. Zeitschrift d. d. morg. Gesel. հատոր 23 էջ 173.

ճարտնական և ոգեկան բնութեան երկը, հոգւոյ անհրաժեշտ և ազատ գործունէութեան հետևանքն է։

Ա.Հա այդ համառօտ նախադասութեանց մէջ է ամփոփուած լեզուի ծագման ու աստիճանաբար զարգացման տեսութիւնը, որ համապատասխանում է ներկայիս փիլիսոփայական գիտութիւնների ուղղութեան և ընթացքին։ Այս տեսութիւնը վերջապէս ոյժ ունեցաւ յետ մղելու լեզուի գերմարդկային կամ պատահական սկզբնաւորութեան տեսութիւնները, որ դեռ ևս անցեալ դարու վերջին կիսին տաք վիճաբանութեան առիթ էին տալիս փիլիսոփաներին, թէև այն երկու գիտութիւններն ևս, որոնցից կարելի էր այս խնդրի լուծումը սպասել, հազիւ թէ ըմբռնել էին աստիճանաբար զարգացման միտքը։ Ներկայումս անցեալ դարու հայեացքները լեզուի էութեան և ծագման մասին ընդունելի չեն կարող լինել, որովհետև նորանք անպայման ենթադրում էին, որ լեզուն նոյն իսկ սկզբից կատարելագործուած էր. վէճը միայն նորանումն էր՝ թէ արդեօք այդ պատրաստի գործն Աստուած տուեց մարդուն, թէ նոյն իսկ ինքը, մարդը գտաւ [24])։ Լեզուի փիլիսոփայութեան այս սխալ հայեացքն առաջին անգամ կատարելապէս ըմբռնեց Վիլհելմ ֆօն Հումբօլտը. նա բացատրեց, որ լեզուն մտքի սկզբնապատճառը և միևնոյն ժամանակ նորա ազդեցութիւնն է. նա չէ մի պատրաստի գործիք, որ ամեն ցանկացածի համար ծառայէ. այլ նա նոյն իսկ ոգեկան գործունէութեան մէջն

[24]) *Հ ե ր դ ե ր փիլիսոփան եղաւ այս երկու ուղղութեանց ներկայացուցիչը. նա իւր երիտասարդական աշխատութեան մէջ—* „Über den Ursprung der Sprache“ *ապացուցանել է ձգտում, որ լեզուն մարդկային գիւտ է, սակայն իւր վերջին աշխատութեանց մէջ—*„Ideen zur Philosophie der Geschichte“, „Die älteste Urkunde des Menschengeschlechts“ *և այլն գրուածներում—նա թողնց այդ տեսութիւնը և ընդունեց լեզուի աստուածային ծագումը։*

է և այդ գործունէութեամբ է միայն շարունակաբար ստեղծւում և կատարելագործւում։ Լեզուի իսկական սկզբնական ծագումը մեր անմիջական դիտողութեան չէ ենթարկւում, ուստի և իբրաքանչիւր լեզուի ծագման իսկական պատմութիւնը կարելի չէ վերականգնել։ Մենք կարող ենք միայն լեզուի զարգացման հոգեբանական օրէնքներն ուսումնասիրել, որովհետև լեզուն զարգանում է նոյն իսկ իբրաքանչիւր անհատի մէջ—հարկաւ այն շրջապատողների ազդեցութեան ներքոյ, որոնց լեզուն նա սեպհականում է։ Անհատների մէջ մտքերի հաղորդակցութեան ընդունակութիւնը զարգանում է անկախ այդպիսի ազդեցութիւնից՝ միայն այն ժամանակ, երբ դոքա խօսել չկարողանալու դժբաղդութիւնն են ունենում, որովհետև այդ ժամանակ դոցա լսելեայ զգայարանը փակուած է մնում արտաքին աշխարհի համար։ Մանկական լեզուի զարգացումը և համր-խուլերի նշանացի խօսակցութիւնը լեզուի զարգացման այն հանգամանքներն են, որոնք ընդ միշտ մատչելի են հոգեբանական դիտողութեանց։ Երբ այս դիտողութեանց միջնորդութեամբ արդէն ծանօթացել ենք այն ուժերի հետ, որոնք նպաստում են լեզուի զարգացման, այն ժամանակ կարող ենք պարզել այն խնդիրը՝ թէ ինչ յարաբերութեան մէջ են գտնւում խօսելու և մտածելու կարողութիւնները։

Անլեզու ծնուած մանուկն իւր կեանքի առաջին տարիներում արդէն ձեռք է բերում խօսելու և հասկանալու կարողութիւն։ Թէև չէ կարելի այս գործողութիւնը—պրօցեսը—հաւասարեցնել լեզուի սկզբնական ծագման գործողութեան, սակայն եթէ կարողանայինք այն բոլոր արտաքին ազդեցութիւնները հեռացնել, որոնք մանկական լեզուի զարգացման միջոցին ներգործում են, կարող էինք յուսալ՝ այսօր ևս գտնել այն սաղմը, որից երբեմն յառաջացել է լեզուն։ Սակայն արտաքին ազդեցութեանց հեռացնելը աշխատա-

փակուում է մի որոշ աստիճանով, որովհետև նոյն իսկ այն ժամանակ, երբ դեռ ևս մանուկը զուրկ է արտայայտելու միջոցից, այդ ազդեցութիւնները տեղի են ունենում և ձգտում, որ մանուկը մի և նոյնը կրկնէ. ուստի և դժուար է որոշել մանկան արտասանածից՝ թէ ո՞րն է իւր սեպհականը և որն արտաքուստ ընդունածը: Թէև մանուկն իւր առաջին հնչիւնները *ինքնուրոյն կերպիւ է արտասանում*, սակայն լեզուի գործարանի այս առաջին փորձերը լեզուի նշանակութիւն չունին. այդ ձայներն ըստ մեծի մասին արտայայտուում են առանց որ և է արտաքին պատճառի, յաճախ՝ երբ մանուկն առանձին է, կամ ուրախ տրամադրութեան մէջ՝ քնելուց առաջ կամ արթնանալուց յետոյ: Այս հնչիւններն, որ պատահմամբ նմանութիւն ունեն մի քանի հնդկա-եւրոպական արմատների հետ—օրինակ դա, դա, մա, և այլն—ցոյց են տալիս, որ մարդ արդէն իւր կեանքի սկզբներում ձգտում է չափաւոր ոյժ ունեցող զգացումներ արտայայտել ձայնի միջոցով: Թէև այս առաջին արտասանած ձայները լեզուի արտայայտութեան նշանակութիւն չունեն, սակայն ապագայում սկսուող լեզուի զարգացումը ծառայեցնում է այդ ձայներն իւր նպատակների համար: Սրդէն վաղուց նկատուել է, որ լեզուի զարգացումը սկսւում է այն ժամանակ, երբ մանկան մէջ յերևան է գալիս նմանողութեան կամ հետևողութեան ձգտումը. քանի որովհետև միշտ ուշադրութիւն է դարձնուում միայն մանկան արածի վերայ և ոչ այն անձի վարման, որի առաջնորդութեամբ մանուկը առանում է իւր ոգեկան զարգացման առաջին աստիճանները, այդ պատճառով և չէ նկատուում, որ նմանողութեան ձգտումը ոչ թէ միայն մանկան կողմից է յառաջանում, այլ նաև այդ առաջնորդի: Նմանողութիւնը տեղի է ունենում երկու կողմից ևս փոխադարձաբար:

Մանուկն իւր շարժումներն և որչափ կարող է, նաև լեզուի հնչիւնները նմանեցնում է իւր շրջապատողների շարժմանց և ձայներին. իսկ մանկան շրջապատողներն ևս իւրեանց ցանկացածը, մանկան հասկանալի անելու համար նմանում են նորա արտասանութեան եղանակին: Եւ «պա-պա», «մա-մա», «ա-վու», «դէ-դա» խօսքերը—փոխանակ «հայր» և «մայր»—անկասկած առաջացել են այդ փոխադարձ դաստուրութիւնից: Վոքա պատկանում են այն սկզբնական արտասանուած հնչիւններին, որոնց մանուկն արտայայտում է առանց մի որ և է որոշ նպատակի. այդ ձայներն ամենահասարակներն են և այդ պատճառով իսկ սովորաբար սկզբնականը: Եթէ աչքի առաջ ունենանք այն ձգտումը, որ ծնողները ցանկանում են մանկան արտասանած սկզբնական բառերի շարքում գտնել նաև իւրեանց անունները, այն ժամանակ հասկանալի կլինի թէ ինչու նոքա մանկան արտասանած «մա» և «պա» պարզ ձայների կրկնութեանը տուել են իւրեանց կոչման նշանակութիւնը: Այս պատճառով սխալ կլինէր, եթէ ասէինք, որ մանուկն այդ պարզ հնչիւններին ինքն է մի որ և է նշանակութիւն տուել: Նա յառաջ է բերել միայն հնչիւնները. իսկ այդ հնչիւնների զորձադրութիւնը լեզուի հաղորդակցութեան նպատակի համար, պատկանում է մանկան շրջապատողներին:

Մանկանց շրջանին պատկանող այլ շատ բառերի նշանակութիւնը, որ համարւում էր նոյնպէս մանկանց գիւտ, մեծ մասամբ նոցա շրջապատողների ստեղծագործութիւնն է: Այս կարծիքը պարզապէս հաստատում է այն իրողութիւնը, որ զանազան ազգերին պատկանող մանուկների սկզբնական հնչիւնները տարբեր նշանակութիւն ունեն. նոյն իսկ կենդանիների, նոցա ձայնի նմանողութեամբ առնուած, անուննները տարբերւում են միմեանցից. գերմանացի մանուկը շանը կանչում է «վաու-վաու», ձիուն «դա-դա», հաւին «տուկ-տուկ» կամ «հու-հու» և այլն. հայ մանուկը կանչում է դոցա «աւ-աւ», «հաչու» կամ «դահ-դահ», «ջուջու» և այլն—:

«Մամ», «համ», «համու» բառերն ինքն ըստ ինքեան

են յառաջանում, երբ մենք ուտելու շարժողութիւն անելիս ցանկանայինք մի ձայն էս արտայայտել. և որովհետև ուտել, բառը դժուար է մանկան արտասանութեան համար, հասկանալի է, որ մայրը կամ ծծմայրը այդ ձայնի շարժողութեանը տար ուտելու գաղափարը: Այսպիսով մի կողմից մանուկներն առնում են իւրեանց շրջապատողների շարժողութիւններն ու հնչիւնները, իսկ միւս կողմից մանկան շրջապատողներն առնում են նոցա դիպուածական ձայներն եւ մի որոշ նշանակութիւն տալիս նոցա.

Մանուկն ոչ թէ միայն աշխատում է իւր լսած ձայնի նմանութեամբ հնչիւններ արտայայտել, այլ և ուշադրութիւն է դարձնում արտաքին շարժողութեանց վերայ և մասամբ դէմքի գծագրութեամբ, մասամբ էս նշանացի անելով սովորում է դոցա նման շարժողութիւններ ինքն էս արտայայտել: Որ մանուկը նշանացի շարժողութիւնը կամ խօսակցութիւնն աւելի շուտ է հասկանում քան բառերը, մի յայտնի իրողութիւն է. ով որ դէպք է ունենում մանկան հետ խօսակցելու, նա կարծես ակամայ նշանացի շարժողութեան օգնութեան է դիմում, որպէս զի շուտով հասկացնի նորան իւր ասածը: Նշանացի շարժողութիւնը ծառայում է իբրև թարգման և մանուկը դորանից է ուսանում բառերի նշանակութիւնը: Նոյն եղանակով և մենք հասկանում ենք մանկանց. նոցա փոքրիկ ցանկութիւնները և կարծիքները մենք չենք գուշակում նոցա սկզբնական, նշանակութիւնից զուրկ, արտասանած ձայներից, այլ այն նշանացի շարժողութիւններից, որոնք միացած են այդ ձայների հետ:

Մանկան սկզբնական լեզուն է նշանացի շարժողութիւնը, որ շատ անգամ կապակցւում է դիպուածական հնչիւնների հետ. այդ շարժողութիւններից մի մասը մանուկն առնում է իւր շրջապատողներից, միւս մասն էս ստեղծում է ինքնուրոյն կերպիւ. սակայն այդ երկու մասերի միմեանցից տարբերելը շատ դժուար խնդիր է: Օրինակ՝ անկարելի է

ամենայն ճշտութեամբ որոշել՝ թէ արդեօք առարկաները մատով ցոյց տալու շարժողութիւնը մանուկն ինքն է գտնում թէ վերցնում է իւր շրջապատողներից, թէև հաստատ է, որ իւրաքանչիւր մանուկ, երբ մտնում է լեզուի զարգացման սկզբնաւորութեան շրջանը, հասկանում է այդ շարժողութիւնը: Մատնացոյց անելու շարժողութիւնը մեծ դեր է խաղում լեզուի զարգացման ընթացքում. եթէ մենք այն առարկան, որի անունը բառով արտասանում ենք, մատով ցոյց չտանք մանկան, նա երբէք այդ բառի նշանակութիւնը չի կարող ըմբռնել [25]: Իւրաքանչիւր կայտառ մանուկ շուտով մատնացոյց է անում այն առարկան, որ գրաւում է իւր ուշադրութիւնը:

Նշանացի շարժողութեան նշանակութիւնը յերևան է գալիս նաև այն դէպքում, որ մանկան սկզբնական մտքերը կամ նախադասութիւնները միշտ կցուած են լինում նշանացի շարժողութեանց հետ: Երբ բառի և մտապատկերի կապակցութիւնն աստիճանաբար առաւել ամրանդում է, յառաջանում է գիտակցութեան այն դրութիւնը, որի մէջ բառն և իւր նշանակութիւնն այնպէս են միմեանց ծածկում, որ մենք բառի մէջ տեսնում ենք նոյն իսկ առարկան:

Նշանացի խօսակցութիւնը նմանւում է մանկական լեզուին, սակայն աւելի հարուստ և զարգացած է, թէև իսկական լեզուից շատ յետ է մնում: Մինչդեռ ձայնով արտայայտուղ լեզուի վերայ մարդկային միտքն աշխատել է անդադար հազարաւոր տարիների ընթացքում, նշանացի խօսակցութիւնը վերածնւում է միշտ նորից, երբ մարդուս համար ձայների աշխարհը գոյութիւն չունի կամ թէ արտաքին այլ պատճառներ հարկադրում են նորան երևակայութեան

---

[25]) Հոգեբանական այս երևոյթն է առիթ տուել նաև մանկավարժներին՝ տարրական դպրոցներում մտցնելու „նկատողական ուսուցմն“ կոչուած առարկան:

համր նշաններին դիմելու։ Նշանացի խոսակցութիւնը մարդկային հոգւոյ երբէք չդադարող և լեզու արտայայտող զօրութեան ապացոյցն է։

Լեզուի՝ մի անգամ տեղի ունեցած, ձայնի և նշանակութեան յարաբերութիւնը վաղուց արդէն անյայտացել է, այնպէս որ բառերը դարձել են կամայական արժողութիւն ունեցող դրամներ, որ ընդունակ են փոփոխուելու. իսկ նշանացի խոսակցութիւնը, որ զգայարանական գործողութիւն է, հազիւ կարող է շեղուել իւր սկզբնական նշանակութիւնից։ Սակայն այն ոյժը, որով մի նշանացի շարժողութիւն յառաջ է կոչում մեր մէջ իւր համապատասխան մտապատկերը, տալիս է նորան մի այնպիսի կենդանութիւն, որ մենք կարող ենք երևակայել այն բնական ոյժը, որ լեզուի զարգացման սկզբնական աստիճաններում ունէր իւրաքանչիւր արտասանած խօսք։

Թէև մարդիկ շատ անգամ ստեղծում են արուեստական նշանացի շարժողութիւններ—օրինակ՝ համր-խուլերի դաստատութեան համար՝ վերացական գաղափարներն արտայայտելու—սակայն դրա նշանացի խոսակցութեան բնական մասերը չեն, չնայելով իւրեանց յարմարութեան։ Այդ արուեստական կերպիւ գրած նշանացի շարժողութիւններն այն ժամանակ միայն լաւ և ընդունելի կարող են լինել, երբ ըստ կարելոյն հետևեն այն սկզբունքին, որի վերայ հիմնուում է բնական նշանացի շարժողութիւնը։ Դրա նմանուում են արուեստական կերպիւ յառաջացած բառերին, որոնք ընդունելի կարող են լինել, երբ գոնէ համապատասխանեն լեզուի ներքին ոգւոյն։ Նշանացի խոսակցութիւնը վերին աստիճանի հետաքրքրական է, որովհետև դորա մէջ ենք գտնում լեզուի սկզբնական զարգացման տարրերը։ Լեզուի մէջ այն բառերի թիւը, որոնք իսկապէս ցոյց են տալիս իւրեանց ձայնի և նշանակութեան մէջ եղած սկզբնական յարաբերութիւնը, այնչափով է պակասել, որչափով որ լեզուն զարգացել

և դարձել է մտքի կատարեալ գործիքը. դրա կազմում են հատու կտոր յիշատակներն այն հեռու անցեալի, երբ իւրաքանչիւր բառի մէջ մարմնացած էր մի կենդանի մտապատկեր։

Նշանացի շարժողութեան մէջ այսօր և՛ իւր լիակատար նշանակութիւնն ունի, նա յառաջանում է միշտ նորից՝ ոգւոյ այն լեզու կազմակերպող զօրութիւնից, որ դեռ և՛ չէ անյայտացել։ Կարելի է ենթադրել, որ լեզուի սկզբնական ժամանակներում նշանացի շարժուածքը մեծապէս նպաստել է հնչիւնների նշանակութեանց ամրապնդուելուն։ Մարդու սկզբնական խոսակցութեան մէջ լեզուի հնչիւնը կարող էր արտայայտիչ շարժողութեանց շարքի միայն մի մասը լինել։ Նոյն գործողութեան դժգոյն պատկերը կրկնուում է մանկական լեզուի զարգացման ժամանակ. այստեղ նշանացի շարժուածքը հանդիսանում է իբր օժանդակիչ միջոց մանկան հասկանալու կամ թէ նորան հասկանալի լինելու համար։

Ձնայելով որ նշանացի խոսակցութիւնն ինքն ըստ ինքեան մի անկատար գործիք է, այնուամենայնիւ կասկածելի է՝ թէ արդեօք առանց մեր մարմնի օժանդակիչ շարժողութեանց երբ և իցէ կարող է մի լեզու յառաջանալ։ Այն հարցման՝ թէ արդեօք կարող էր առանց հնչիւնների մի լեզու զարգանալ, ընութիւնը տալիս է մեզ մի դրական պատասխան համր-խուլերի նշանացի խոսակցութեամբ։ Իսկ այն հարցման՝ թէ արդեօք առանց այդ արտայայտիչ շարժողութեանց կարող էր ձայներով կապակցուած լեզու զարգանալ, ընութիւնը չի կարող պատասխանել, որովհետև՝ իւր ներքինն արտաքին շարժողութեանց մէջ պատկերացնելու ընդունակութիւնը մարդուս սեպհականութիւնն է և աւելի ընդհանուր քան նոյն իսկ լեզուն։

Լեզուի զարգացման այդ անկատար սկզբնաւորութիւնից կարող ենք առ սակաւն այն եզրակացութեան գալ՝ որ այժմեան մարդու մէջ դեռ և՛ չէ անյայտացել լեզու արտա-

դրող զօրութիւնը. այլ վճռական եզրակացութիւնները անելը կարող էր չափազանցութիւն լինել: Սակայն նոյն իսկ այդ եզրակացութիւնը կատարելապէս բաւական է՝ բացատրելու մի խնդիր, որ լեզուի զարգացման հոգեբանական հետազօտութեան համար ծանրակշիռ նշանակութիւն ունի. այդ խնդիրն է՝ թէ արդեօք ինչ ընաւորութիւն ունեն այն ոգեկան ուժերն, որ գործում են լեզուի զարգացման միջոցին: Եթէ համր-խուլի նշանացի խօսակցութեան և նոյն իսկ մանկական լեզուի զարգացման միջոցին այսօր ևս իշխում են միևնոյն ձգտումներն, որոնցից մի անգամ յառաջացաւ մարդկային լեզուն, այն ժամանակ լեզուի ծագման խնդիրը վերաբերում է միայն հոգեբանական դիտողութեան և հետազօտութեան:

Հաստատ կարելի է ասել, որ լեզուն սովորական մտքով առած մի գիւտ չէ. անկարելի է երևակայել, որ մտածող մարդը դիտմամբ որոնել է իւր մտքերն արտայայտելու համար մի օժանդակիչ միջոց և գուցէ մի քանի անյաջող փորձերից յետոյ կանգ է առել լեզուի վերայ: Սակայն լեզուն չի կարող նմանապէս ընութեան մի արտադրութիւն լինել, որի ստեղծմանը մարդկային գիտակցութիւնը բոլորովին չէ մասնակցել. նա չի կարող մի անդրադարձ շարժողութիւն լինել, որից ինքը խօսողն ոչինչ չգիտէ: Լեզուի առաջին ձայները կամ հնչիւնները կարելի է անդրադարձ շարժողութեան հետ համեմատել, որովհետև մարդս միշտ պահանջ է զգում իւր ներքինը ձայների միջոցով արտայայտել, սակայն լեզուի սկզբնաւորութիւնն իբր իսկական անդրադարձ շարժողութիւն ընդունելն անկարելի է: Անդրադարձ շարժողութիւնները ջղային համակարգութեան շարժիչ և զգայական տարրերի որոշ կապակցութեանց մեքենայական հետևանքներն են: Այսպիսի անդրադարձումները կարող են մեր շարժողութեանց և լեզուի զարգացման գործակից լինել, սակայն ինչպէս որ մեր կամայական շարժողութիւնները, նոյնպէս և լեզուն չենք կարող ուղղակի անդրադարձ շարժողութիւն անուանել: Նորածին մանկան առաջին աղաղակը, որ յառաջ է գալիս ցրտի ազդեցութիւնից, գուցէ կարելի լինի անդրադարձումն անուանել, ինչպէս նաև դէմքի այն ծամածռութիւնները, որ յառաջ են գալիս դառը, թթու, կծու, և ճաշակելեաց այլ դրգիռների ազդեցութիւնից. սակայն այս բոլոր շարժողութիւնները ո՛չ նշանացի խօսակցութիւն են և ո՛չ էլ լեզու:


Լեզուի սկզբնական ծագումը պէտք է որոնել նշանացի շարժողութեան և ոչ թէ ձայնի նմանողութեան մէջ: Լեզուն չէ յառաջանում առանձին, այլ կցուած արտայայտիչ շարժողութեանց հետ. լեզուի ծագման սկզբներում արտայայտիչ շարժողութիւնը մեծ դեր է կատարում. նշանացի շարժողութիւնը յերևան է գալիս իբր օժանդակիչ միջոց հնչիւնի ըմբռնման համար: Ձայնի նմանողութիւնը—օնօմատօպօէի—երկրորդական դեր է կատարում. առաջնակարգ տեղը պատկանում է հնչիւնի արտայայտիչ շարժողութեան:

Լեզուի ծագումը տեղի է ունեցել աստիճանաբար զարգացմամբ եւ կատարելագործուել է հետզհետէ՝ ժամանակի ընթացքում:

ԳԼՈՒԽ ԳՐ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հայոց լեզուի ծագումը հնդկա-գերմանականից. ևիև ևս նոր կարծիքներ այդ մասին. „զուտ հայկական“ լեզու. դորա ծագումը. ազգային լեզու. լեզուն իբր ազգերի ստեղծագործութիւն. ինչպիսի նեղ յառաջացել հայոց լեզուի բառերը. հայր Ինձիճեանի բացատրութիւնը. բառերի համեմատութիւններ. հայոց լեզուի աստիճանաբար զարգացումը. օտար ազդեցութիւններ:



Հայոց լեզուն երկար ժամանակ համարւում էր սեմիտական ընտանիքի ճիւղերից մէկը, մինչև որ ականաւոր լեզուաբան գիտնականների —մեծ մասամբ գերմանացի, ինչպէս օրինակ Պետերման, Վինդիշման, դը Լագարդ, Միւլլէր, Հիւբշման և այլք—աշխատութիւններն ապացուցեցին, որ Հայոց [1] լեզուն պատկանում է ոչ թէ սեմիտական, այլ Հնդկա-գերմանական (կամ Հնդկա-եւրոպական) ընտանիքին:

[1] „Հայ“ բառը նշանաւոր արևելագէտ և Հայագէտ Փրիդրիխ Միւլլէր համարում է հին բակտրիական „պայոի“ բառից յառաջացած, որ նշանակում է „Ծէր“, „պետ“ և մեր նախնիք

Գերմանական գիտնականներից յայտնի Հայագէտ-լեզուաբան Պ ե տ ե ր մ ա ն ն էր, որ դարուս առաջին կիսում իբր հիմնաւոր աշխատութեան մէջ—«Հայոց լեզուի քերականութիւնը, լատիներէն գրուած [2])—ապացուցեց, որ Հայոց լեզուն պատկանում է Հնդկա-գերմանական մեծ ընտանիքին և մերժեց մինչև այն ժամանակ տիրող հանդիսացած կարծիքներն, որով մեր լեզուն համարւում էր՝ բոլորովին առանձին, այլ լեզուների հետ ոչինչ կապ չունեցող կամ թէ եբրայականին ազգակից լեզու: Պետերմանի կարծիքը հաստատեցին Վ ի ն դ ի շ մ ա ն, Գ ո շ ե և Շ պ ի գ ե լ, այնպէս որ աշխարհահռչակ հեղինակ լեզուաբան Բ օ պ ը (Bopp) իւր համեմատական քերականութեան նոր հրատարակութեան մէջ Հայոց լեզուն հաստատապէս ընդունեց իբրև Հնդկա-գերմանական և մեր լեզուի ձևերն էս համեմատութեամբ ազգակից լեզուների ձևերի հետ յառաջ բերեց:

Այսպիսով թէև պարզուեցաւ, որ Հայոց լեզուն պատկանում է Հնդկա-գերմանական ընտանիքին, սակայն դեռ էս որոշ կերպիւ չ'վճռուեցաւ թէ Հնդկա-գերմանական ո'ր ճիւղին պէտք է վերագրել: Գոշէ և դորանից առաջ Վինդիշման մասամբ դիցաբանական և այլ նմանութիւններով ապացուցին, որ Հայոց լեզուն պատկանում է Հնդկա-գերմանական *արիական* ճիւղին և պարսկականի, քրդականի և յառաջաւոր Ասիայի մի քանի լեզուների հետ կազմում է մի առան-

տուել են այդ անունն էրեանց՝ հպատակ ազգերից զանազանուելու համար: Դորա հակառակ „աստրուկ“ բառը յառաջացել է հին Հնդկական „աստրու“ բառից, որ նշանակում է թշնամի: Տես. Frd. Müller: Beiträge zur Lautlehre der armenischen Sprache. տպուած է Sitzungsberichte der kais. Akademie der Wissenschaften Wien. phil-hist. classe. Հատ. 41 (1863) էջ 9 տնթ. 2.

[2]) Petermann: „Grammatica linguae armeniacae“ տպուած է Բերլին 1837 թ.

ձին խումբ [3]։ Յառաջ ենք բերում նոյն իսկ Վինդիշմանի խօսքերը. «Հայոց լեզուի դիրքը Հնդկա-գերմանական լեզուների շարքում այլ ևս անկասկած է [4]։ Իր սկզբնական մասերով նա պատկանում է երկրիս այն ամենաազնիւ բարբառներին, որոնք իւրեանց զանազանակերպութեամբ տարածուել են Արևելք և Արևմուտք, որոնց մնացորդների վերայ շարունակւում են այսօր գերմանական-ռոմանական—սլաւոնական և քելտական լեզուներն և որոնք դեռ ևս նոր են իւրեանց հին փառահեղութեամբ ուսումնասիրութեան առարկայ դառնում։ Սակայն հայոց լեզուն անմիջապէս չէ պատկանում այդ բարբառների զարգացման առաջին դասակարգին, այլ ենթադրում է մի առաւել հին բարբառ, որ զենդի և բևեռագրերի հին պարսկականի հետ մեծ նմանութիւն պէտք է ունեցած լինի։ Այդ բարբառի հետ մնացել են և այլ տարրեր, ոչ միայն սեմիտական լեզուից—որի միացումը պէտք է վերագրել յետագայ ժամանակների յարաբերութեանց՝ ասորոց կամ պահլաւական ազդեցութեան—այլ և արմատներ, որոնք պատահում են քրդական և Կովկասեան լեզուների մէջ» [5]։

Ջնայելով այն աչքի ընկնող նմանութեանն, որ ունի հայոց լեզուն պահլաւականի և մասամբ ևս նոր պարսկականի [6] հետ, նա ներկայացնում է մի ինքնուրոյն և պարսկա-

[3]) Տես. „Zur charakteristik des armenischen“ տպուած է „Beiträge zur vergleichenden Sprachforschung“ von A. Kuhn und A. Schleicher. Հրատարակութեան III հատորի (1863) մէջ, էջ 83.

[4]) „Որ հայերէնը մի հնդկա-գերմանական լեզու է, ընդունում ենք իբր ապացուցուած ու ընդհանուրին յայտնի իրողութիւն“։ Տես. Zur charakteristik etc. նոյնը էջ 83։

[5]) Տես. Frd. Windischmann: Grundlage des armenischen im arischen Sprachstamme. տպուած է Abhandlungen der phil—hist. classe der königlichen Bayerischen Akademie der Wissenschaften. Հատ IV. մասն 2 (1847) էջ 48.

[6]) „Հայոց լեզուն իրանական խմբից է և կազմուել է զենդ

կանից առանձնացած լեզու։ Այս ապացուցանում են մի կողմից լեզուի ձևերն և ամբողջ քերականական կազմութիւնը, միւս կողմից այն բազմաթիւ հնչիւններն, որոնք լեզուին մի առանձին և լեռնական լեզուներին սեպհական յատկութիւն է տալիս [7]։

Հայագէտ պրօֆ. Հիւբշմանը թէև սկզբում նոյնպէս ընդունում էր Հայոց լեզուի՝ հնդկա-գերմանական իրանական կամ արիական ճիւղին պատկանելը, սակայն աւելի լաւ ուսումնասիրելով Հայոց լեզուն՝ այն եզրակացութեան եկաւ, որ Հայոց լեզուն պատկանում է ոչ թէ արիական այլ *հերոդական—յունա-լատինա-սլաւոնական*—ճիւղին։ Բայց Հիւբշմանի այս նոր կարծիքը ցայժմ ընդունելութիւն չէ գտել Հայագէտ գիտնականների շրջանում և առաջուայ կարծիքը դեռ ևս տիրող է հանդիսանում [8]։

և պարսիկ լեզուների հետ ի միասին“։ Տես. F. Lenormant: „Histoire Ancienne de l'Orient“ հատ. I. էջ 387։

[7]) „Հայոց լեզուն լեզուաբանների համար դեռ ևս մի մեծ ժուռար ասպարէզ է. սորա պատճառը լեզուի առանձնայատուկ *քնաւորութիւնը եւ զարգացումն է*։ Հայոց լեզուն թէև իր հիմնաւորութեամբ ճիշտ իրանական է, սակայն շատ օտար տարրեր է պարունակում իր մէջ, որոնք դեռ ևս բաւականացուցիչ կերպիւ զտուած և բացատրուած չեն“։ Տես. Frd. Müller Sitzungsberichte der k. Akad. etc. Beiträge etc. նոյնը հատ. 38 (1861) էջ 570։

[8]) Պրօֆ. Ֆրիդրիխ Միւլլերը հետևեալ կերպիւ է պատասխանում պրօֆ. Հիւբշմանի յայտնած կարծիքին. „Հիւբշմանի հաստատ համոզուած եմ, որ Հայոց լեզուն հնագոյն ևս դեռ ևս հաստատ համոզուած եմ, որ Հայոց լեզուն իրանական լեզու է, և ծագում է ոչ թէ ուղղակի հին բակտրիական և հին պարսկական լեզուներից, այլ զուգակցաբար հին բակտրիական և հին պարսկական լեզուների հետ ծագող մի հին իրանական ճիւղից, որ մեզ անյայտ է մնացել“։ Տես. Über die Stellung des Armenischen in Kreise der indogermanischen Sprachen տպուած է Sitzungsberichte etc. Wien: հատ. 84 (1877) էջ 212.

Պաուլ-դը-Լագարդն իւր Հայոց լեզուի բառաքննական մեծ և բեղմնաւոր աշխատութեան վերջը հետևեալ եզրակացութեանց է գալիս. ա. Հայոց լեզուն բաղկացած է երեք մասերից, որոնք են՝ հայկական, արշակունեան,—պահլաւական—և սասանական։ բ. Արշակունեան և սասանական մասերն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իրանական են, սակայն հայկական մասն ևս պատկանում է լեզուի այն ընտանեաց, որի ամենահին ներկայացուցիչն է զենդի լեզուն... գ. Հայկականը տարբերւում է բակտրիականից և հարաւարևմտեան պարսկականից... հայկականը բռնում է իրանականի և հելլենականի միջին տեղը [9]։

Մի այլ տեղ շարունակում է դը Լագարդ. արդէն հաստատ է, որ Հայոց կեանքի հիմերը դրուել են ամենահին ժամանակներում. այդ հիմերի վերայ հաստատուել է մի իրանական գաղթականութիւն, որ հեռու, անուղղակի ճանապարհներով և շատ կռիւներից յետոյ հասել է Արարատեան երկիրն և այդ պատճառով իրանական լեզուի սկզբնական կերպարանքն ինքնուրոյն կերպիւ է զարգացել և մինչև իսկ փոփոխութեան ենթարկուել։ Սակայն այդ երկու հին շերտերի վերայ աւելացաւ դարձեալ մի նոր իրանական շերտ. Պարթևները ողողում են Հայաստանը, հիմնում Արշակունեաց հարստութիւնը, ուրում ամենալաւ նահանգն ու հայոց լեզուի վերայ աւելացնում ահագին քանակութեամբ իրանական բառեր՝ իւրեանց լեզուից։ Ես կարծում եմ, ասում է դը Լագարդ, որ ով որ ընդհանրապէս լեզուն ըմբռնելու զգացումն (Sprachsinn) ունի, նա կարող է հայոց լեզուի այդ երեք տարբեր մասերն որոշել [10]։

[9]) տես. Paul de Lagard: „Armenische Studien“, որ բռնում է „Abhandlungen der könig. Gesellschaft d. Wissenschaften zu Göttingen“ հրատարակութեան ամբողջ 22-րդ մեծ հատորը (1877) էջ 208.

[10]) տես. Paul de Lagard. նոյնը էջ 291.

Ընդունելով պրօֆ. դը Լագարդի այս քաժանումն՝ ենթադրենք որ մեր նախնեաց սկզբնական լեզուն զուտ հայկական էր. այժմ խնդիրը է թէ ինչպէս յառաջացաւ այդ զուտ հայկականը։ Ի հարկէ հայոց պատմութիւնը չի կարող պատասխանել այդ հարցման, որովհետև այն ժամանակամիջոցն, երբ մեր նախնիք զուտ հայկական կեանք [11]) էին վարում, ծածկուած է պատմական անյայտութեան թանձր և անթափանց քողի տակ. իսկ մենք շատ դժուարութեամբ կարող ենք մտքով տեղափոխուել մեր այսօրուայ անհուն կերպիւ խառնաշփոթ ընկերական կեանքից՝ մեր նախնեաց այն հանգամանքների մէջ, որ իւր պատմութիւնն և օրէնքները բերանացի կերպիւ սերնդից-սերունդ է հաղորդել և իւր նահապետական պարզութեամբ և միամտութեամբ խօսքին այնպիսի հաւատ է ընծայել, ինչպէս որ այսօր մենք մի հին յիշատակագրի։ Ուրեմն մեզ մնում է միայն կրկին դիմել լեզուների զարգացման ընդհանուր օրէնքին։

Լեզուների գոյութիւնն ապացոյց է, որ կան այնպիսի ոգեկան ստեղծագործութիւններ, որոնք մի միայն մի անհատից չեն ծագում և մէսների վերայ տարածւում, այլ բոլորի միաժամանակեայ ինքնուրոյն գործունէութիւնից են յառաջանում։ Լեզուների անմիջական ստեղծողները կարող են լինել իսկապէս միայն *ազգերն*. իւրաքանչիւր լեզու միշտ ազգային որոշ կերպարանք ունի։ Իւրաքանչիւր լեզու ստանում է իւր որոշ առանձնայատկութիւնն ազգի միջնորդութեամբ և ապա իւր կողմից ազդում ազգի առանձնայատկութեանց զարգացման ընթացքի վերայ։ Մի ազգի մտածման եղանակը նոյն իսկ սկզբից ներգործում է լեզուի վերայ, որով և լեզուն գոյն և բնաւորութիւն է ստանում։ Դեռ

[11]) „Լեզուն և կեանքը անբաժան գաղափարներ են“ տես. W. Humboldt: Über die Verschiedenheit des menschlichen Sprachbaues էջ CXXVI.

քանի որ մի ազգի ոգին կենդանի առանձնայատկութիւններով ազդում է իւր լեզուի վերայ, լեզուն ևս հարստանում և ազնուանում է և իւր կողմից փոխադարձաբար կրկին ազդում ազգային ոգու վերայ: Սակայն այստեղ ևս ժամանակի ընթացքում կարող է այնպիսի դրութիւն յառաջ գալ, որ տեղ լեզուն գերազանցում է ոգուն և վերջինն այլ ևս ստեղծող ազդեցութիւն չէ ունենում. այս դրութիւնը հարկաւ կրկին ազդում է լեզուի վերայ և սա ևս թուլանում է: Բայց լեզուներն և ազգերը կարող են մեծ մարդկանց հանճարով կրկին արթնանալ և յառաջանալ: Լեզուի վերայ ազդում է ոչ միայն ազգային առանձնայատկութեան սկզբնական դրութիւնն, այլ և ժամանակի ընթացքում ընդունուած—ներքին փոփոխութիւններն, որ յառաջ է գալիս իւրաքանչիւր արտաքին ճանրակշիռ իրողութիւնից և բարձրացնում կամ իջեցնում է ազգի ոգեկան ուղղութիւնը: Լեզուն է ներքին էութեան գործարանը, նոյն իսկ այդ էութիւնն. այդ պատճառով իսկ լեզուն խոր արմատներ է ձգում ազգային ոգւոյ զօրութեան մէջ և որչափ որ դորա ազդեցութիւնը յարմար է լինում, այնչափ ևս կանոնաւոր և հարուստ է լինում նորա զարգացումը:

Լեզուի բնաւորութիւնը զարգանում է առաւելապէս *գրականութեան* և դորա նախապատրաստիչ ժամանակամիջոցներում: Եթէ մտաւոր ձգտման սկզբնական անտաշ և անզարգացած փորձերն ևս գրականութիւն [12]) անուանենք,

[12]) Բանաստեղծութիւնն և վիպասանութիւնը — արձակը, պրօզան—կարելի է լեզուի երեւոյթներ անուանել, որովհետև նոյն իսկ լեզուի սկզբնական ընդունակութիւնը այս կամ այն ուղղութիւնն է ընդունում. կամ թէ երկու ուղղութեան ևս հաւասարաչափ զարգացումն է տալիս: Իսկապէս դոքա խոհականութեան, մտքի հարթող ուղիներն են և պէտք է անհրաժեշտ կերպիւ դորանից ծագեն: Երկուսն ևս ձգտում են դէպի միևնոյն նպատակը, սակայն տարբեր ճանապարհներով: Երկուսն ևս ծա-

այն ժամանակ այդ երկուսը՝ լեզուն և գրականութիւնը կապակցուած են անբաժանելի կերպիւ: Ազգերի մտաւոր զարգացման պատմութիւնն և քաղաքակրթութիւնը գտանում են փոխադարձ յարաբերութեան մէջ իւրեանց լեզուների պատմութեան հետ:

Մարդս թէ իւր բնաւորութեամբ և թէ քաղաքակրթութեամբ մի *պատմական էակ* է. նա թէ իւր կարողութեամբ և թէ ձգտմամբ կապակցուած է իւր նախորդների և ժամանակակիցների պատմութեան հետ: Միայն այդ կապակցութեամբ է նա մի ճշմարիտ, առողջ և գործունեայ մարդ և այդ կապակցութեան է պարտական նոյն իսկ իւր գոյութիւնը: Մարդկութիւնն է այդ անհատների կապակցութեան միութիւնը. սակայն իւրաքանչիւրը կապակցուած չէ իւրաքանչիւրի հետ. այլ այդ միութիւնը կայանում է ցեղերի և ազգերի մէջ: Ազգի միութեան գլխաւոր, եթէ ոչ միակ, սակայն ամենաապահով յատկանիշն է լեզուն: Ինչպէս որ անհատի լեզուն՝ իւր անհատական ոգւոյ արտայայտութիւնն և չափն է, նոյնպէս և ազգի լեզուն, իբր ամենի ընդհանուր սեպհականութիւն, նոյն իսկ ազգի ոգւոյ չափն ու արտայայտութիւնն է:

Իւրաքանչիւր անհատ ընդունում է իւր լեզուն իւր

գում են իրականութիւնից և ձգտում մի ոչ իւրեանց պատկանող բանի: Բանաստեղծութիւնն ըմբռնում է իրականութիւնն իւր զգայական երեւոյթով. ապա զգայական երեւոյթը կապակցում է երեւակայութեան հետ և ձգտում մի արուեստական—իդէալական ամբողջութեան: Վիպասանութիւնը—պրօզան—իւր արմատները ձգում է նոյն իսկ իրականութեան մէջ և այդպիսով պահպանում իւր գոյութիւնը...: Բանաստեղծութիւնը կարող է միայն կեանքի մոմէնտները—ոգւոյ վայրկենական դրութիւնը—ներկայացնել, իսկ վիպասանութիւնն այդ մոմէնտների կապակցութիւնն և շարունակ գործունէութիւնը: Տես. W. Humboldt: նոյն. էջ CCXLI.

ազգից, ուրեմն անհատից առաջ արդէն գոյութիւն ունի լեզուն. սակայն ինչպէս: Եթէ նայենք իւրաքանչիւր անհատի վերայ առանձին, կտեսնենք որ լեզուն գոյութիւն ունի դրանից դուրս, սակայն եթէ նայենք լեզուի վերայ, կտեսնենք որ նա ապրում է իւրաքանչիւր առանձին անհատի մէջ: Լեզուն կարող է միայն ազգի միութեան հետ կապակցուած ապրել: Թէև կարելի է ամբողջ լեզուն երկու գրքի մէջ ամփոփուած երևակայել—*քառարանն ու քերականութիւնը* պարունակում են լեզուի բառերի և կապակցութեանց ամբողջ գանձը—, սակայն այդպիսի լեզուն թէև գոյութիւն ունի, բայց չէ ապրում. դա մի մեռած լեզու է:

Որտեղ որ ժողովրդական ոգին կենդանի է առանձին անհատների մէջ, այնտեղ և յառաջանում են ընդհանուր ոգւոյ գործեր. դոքա կամ ներգործում են փորձնական կեանքի վերայ կամ թէ կազմակերպում են գրականութիւնը: Լեզուի ձևերն և նիւթը պէտք է անդադար կենդանի գործով կատարելագործուեն: Մի ազգի լեզուն և հանճարը կարող է գոյութիւն ունենալ նոյն իսկ ազգի անյայտանալուց յետոյ, *սակայն ոչ մի ազգ չէ կարող իւր լեզուից երկար ապրել*—իւր ազգ: Լեզուն կորցնելով՝ ազգը կորցնում է իւր ոգեկան առանձնայատկութիւնն և այդպիսով դադարում այլ ևս առանձին ազգ լինելուց: Այդ պատճառով և ոգին կարող է—չնչին բացառութեամբ—*մայրենի լեզուով* մեծ և նշանաւոր գործ ստեղծել: Ինչ որ ֆիզիքական աշխարհում հայրենիքը, բարոյականում խիղճը, նոյնն է և մտաւոր աշխարհում մայրենի լեզուն: Մայրենի լեզուն սովորելով և գործ դնելով՝ մարդս մտնում է իւր ազգի մտաւոր համայնքի մէջ, որովհետև լեզուի մէջ է ամփոփուած ազգի ամբողջ աշխարհահայեցողութիւնը, զարգացումն և ամբողջ գաղափարների աշխարհը: Թէ որչափ մի անհատ կարող է իւր ազգի ոգին իւր մէջ ներփակել՝ կախուած է իւր ձգտմանից և ընդունակութեանց չափից: Բաւեբաղդ ենք համարում նոյա—ասում է Լացա-

րուս [13])—որոնց սեպհական անհատական մտածմունքն ազգի մտածմունքն է դառնում, որոնց խօսքը մի մենախօսութիւն է, որ արտայայտում է նոյն իսկ ազգի ոգին:

Այս ընդհանուր դիտողութիւնից արդէն դիւրին է ըմբռնել, որ *հայոց լեզուի* սկզբնական, այսինքն *զուտ հայկական* տարրը չէր կարող մի որ և է անհատի ստեղծագործութիւն լինել, այլ մարդկութեան այդ մի հատուածի, բուն հայ ժողովրդի, ընդհանուր ոգւոյ արտադրութիւնն, որ աստիճանաբար զարգացման շաւղով մի որոշ կատարելութեան հասաւ: Այդ կանոնաւոր զարգացման շաւիղը միայն այն ժամանակ խանգարուեցաւ, երբ հայ ժողովուրդը դուրս գալով իւր սահմանափակ շրջանից՝ յարաբերութեան մէջ մտաւ իւր շրջակայ ազգերի հետ և վերջը նոցա ազգեցութեան ենթարկուեցաւ: Ասացինք, որ իսկական լեզուն չի կարող անհատի ստեղծագործութիւն լինել, այլ մի ամբողջ ժողովրդի, սակայն ինչպէս: Մի որ և է մտապատկեր չի կարող առաջին անգամ մի ժողովրդի գիտակցութեան մէջ յառաջանալ. մտապատկերները կարող են միայն անհատների մէջ զարգանալ և ապա ընդհանուր ընդունելութիւն գտնել: Անհատական մտածմունքը սկիզբն է ամեն փիլիսոփայական մտածմանց, սակայն փիլիսոփայական խորին մտքերն անգամ չեն մնում անհատական շրջանի մէջ և դառնում են ընդհանրութեան սեպհականութիւն: Այդպէս ևս լեզուի բառերը սկզբում յառաջացել են անհատներից և ապա հասկացուել և ընդունուել են ընդհանուրից: Այն բառերն [14]), որոնք

---

[13]) տես. Lazarus նոյն. էջ 402:

[14]) „Բառ" անուանում ենք լեզուի այն մասերին, որոնք ցոյց են տալիս մի առանձնակի մտապատկեր և որոնց կարելի է միմեանցից բաժանել: Բառն ինքն ըստ ինքեան իսկզբանէ առանձնակի չէ, իսկզբանէ տուած է նախադասութիւնը. սակայն բառերն ևս իւրեանց կողմից պարզ չեն, այլ արմատների կապակցութիւններ. իսկ թէ լեզուի արմատներն երբեմն առանձնակի գոյութիւն են ունեցել, դա միևնոյն

անհատական ծագումն ունենալով՝ մնում են նոյն իսկ անհատական շրջանի մէջ և ընդունելութիւն չեն գտնում ընդհանրութիւնից, չեն կարող երկար տևողութիւն ունենալ։ Ընդհանուր ստեղծագործութիւնն էս ծագում է անհատներից, սակայն այնպիսի եղանակաւ, որ ոչ ոք կարող չէ ասել՝ թէ ո՛ւմնից կամ ո՛ր անհատից։ Նոյն եղանակաւ յառաջ է գալիս նաև ժողովրդական երգը կամ բանաստեղծութիւնը. երգի մէկ տունը հիւսում է մի անհատ, երկրորդը շարադրում է մի այլ անձն, երրորդը յառաջանում է մի այլ ժամանակ, դարձեալ մի այլ անհատից. այս պիսով կազմակերպւում է ամբողջ երգը, բանաստեղծութիւնն և որովհետև այլ էս անկարելի է ասել թէ ո՛վ է երգի հեղինակն և շարահիւսողը—կոչւում է *ժողովրդական*, այսինքն ընդհանրական երգ. թէև պարզ ու հասկանալի է, որ երգի շարահիւսողն ամբողջ ժողովուրդը չէ, այլ շատ ան-

---

դրութիւն է.—„... իրապէս խօսքը, նախադասութիւնը չէ կազմուել առաջուց գոյութիւն ունեցող բառերից, այլ ընդհակառակը բառերը յառաջ են եկել խօսքի ամբողջութիւնից“։—Տես. W. Humboldt. *Նոյն. էջ* XC։ *Սովորաբար բառի մի մասը միայն փոփոխութեանց է ենթարկուում՝ որոշ օրէնքով. իսկ միւս մասը մնում է բոլորովին անփոփոխ կամ թէ շատ դիւրին կերպիւ նկատելի փոփոխութիւն է կրում։ Բառերի այս անփոփոխ կամ հասատուն մասերը կոչւում են՝ լեզուի արմատներ։ Այս արմատներն իւրեանց պարզ կազմութեամբ նախադասութեան մէջ հազուագիւտ են. իսկ արմատական բառերն ամենից շատ գտանւում են չինական և անգղիական լեզուների մէջ։*

Յայտնի լեզուաբան Պ ո տ ը (Pott) *յայտնել է այն միտքն, որ հնդկա-եւրոպական լեզուների մէջ հազիւ կարելի է ապացուցանել հազար* (1000) *արմատի գոյութիւնը։ Իսկ նոր ժամանակներում փորձեր են լինում այդ ինքն ըստ ինքեան սակաւաթիւ արմատները սկզբնական տարրերի վերլուծելու և այդպիսով եղրակացնում, որ ամբողջ լեզուի հիմնական տարրերը հազիւ* 15—20 *լինին։ Այս կնշանակէ, որ մեր այսօրուայ անթիւ գաղափարները կարելի է մինչև* 20 *թիւն իջեցնել։*

հատներ։—Ընդհանուր ընդունելութիւն է գտել այն կարծիքն, որ Հոմերոսի «Եղիական»ն ու «Ոդիսական»ը նոյն իսկ այդ եղանակաւ են յառաջացել, ուստի և ներկայացնում են ամբողջ յոյն ժողովրդի ոգեկան արգասիքը։—

Մ՛եզ մնում է այժմ միայն պատասխանել այն հարցման՝ թէ քո՞նչպէս են յառաջացել հայոց լեզուի «զուտ հայկական» տարրը կազմող բառերը։

Այս խնդիրը գլուխգործել է արդէն դարուս սկզբում նշանաւոր Հանդիսացած և եւրոպական հռչակ ստացած պատմաբան-հնախոյզ հայր Ղուկաս Ինճիճեանին, ուստի և կարևոր ենք համարում այս յայտնի հեղինակի բացատրութիւնները յառաջ բերել այստեղ։

Հ. Ինճիճեանը իւր «*Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*» բեղմնաւոր աշխատութեան մէջ կամենում է ո՛չ թէ միայն հայոց լեզուի բոլոր բառերին զուտ հայկական ծագումն տալ. այլ և ճգնում է ապացուցանել, որ հայոց լեզուն «անխառն» և առաջին մարդու, Ադամի լեզուն է, հետևապէս և մերժում է հրէից լեզուի սկզբնական լինելը [15])։

Հայր Ինճիճեանի տրամաբանութեան հիմն ի հարկէ ոչ այլ ինչ կարող է լինել, եթէ ոչ Խորենացու յառաջ բերած ցեղաբանութեան անսխալականութիւնը. Հայկի մեծ պապն է Նոյ, իսկ Նոյի մեծ պապն՝ Ադամ, հետևապէս հասկանալի է որ Հայկի խոսած հայերէն լեզուն խոսել են նաև նորա պապերը՝ Նոյ և Ադամ։

---

[18]) «... Արդ յառաջիկայ կրկին յօդուածս տեսցես զՀաստատս հնութեան լեզուիս մերոյ, յառաջնումն՝ եթէ յաշտարակաշինութենէ անտի անխառն առ մեզ իցէ հասեալ. յերկրորդումն՝ եթէ նոյն լեզու էր և յառաջ քան զբնեղէնն որով խօսէր Նոյ. նմին իրի և նոյն լեզու առաջին մարդոյն Ադամայ...» տես. Ի ն ճ ի ճ ե ա ն. Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. հատ III. էջ 1։

Այսպէս Հայր Ինճիճեանն ընդունելով, որ Աստուած Ադամի հետ Հայերէն է խօսել, ճգնում է նաև բացատրել թէ ինչպէս են յառաջացել այդ լեզուի բառերն և բնականապէս դիմում է մի դիւրին միջոցի, այն է կենդանեաց անուանների բացատրութեան։ Նա ցոյց է տալիս թէ ինչու Ադամ իւրաքանչիւր կենդանու մի յատուկ անուն է տալիս։ —Ադամի ժամանակ հարկաւ կենդանեաց իւրաքանչիւր ցեղ մի ներկայացուցիչ կարող էր ունենալ, ուստի և գործն այնչափ դժուար չէր լինի. . .—

Ըստ Հայր Ինճիճեանի Ադամ իւր այս աշխատութիւնը հիմնում է երկու սկզբունքի վերայ. ա. նա ուսումնասիրում է իւրեան շրջապատող կենդանեաց *բնաւորութիւնը* և ապա այդ եզրակացութեանց հիման վերայ անուններ է տալիս նոցա։ բ. նա ուսումնասիրում է նոցա *ձայները* և նման հնչիւններով անուններ տալիս նոցա։ Այս պատճառաւ և նա անուանց բացատրութիւնն երկու մասի է բաժանում.

I «Անուանք կենդանեաց ի *բնութենէն* առեալ» և

II «Անուանք կենդանեաց ի *ձայնէն* առեալ»[16]։

Յառաջ ենք բերում բազմարդիւն հեղինակի ամբողջ բառերի ցանկը և սոցա, բաւական մեծ սրամտութեամբ կազմուած, բացատրութիւնները, որպէս զի շօշափելի կերպիւ կարելի լինի տեսնել, որ այդ բացատրութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ երևակայական և մեծ մասամբ մտացածին շարադրութիւններ՝ զուրկ մի որ և է հիմնաւոր փաստից։

I.

«ԱՆՈՒԱՆՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ Ի ԲՆՈՒԹԻՆԷՆ ԱՌԵԱԼ»

1) *Առիւծ*
2) *Արծիւ*

| իբր առօղ և ծուռղ, յափշտակիչ և գիշատիչ։

Բայց մտադիր ընթերցողն տեսանէ թէ արուեստիւ և խոհե-

[16]) Տես. Ինճիճեան նոյնն. հատ. III էջ 21.

դով կազմեալ են կրկին անուանքն, որպէս վայել էր կազմել Ադամայ։ Երկոքին. և սա կենդանիք թագաւոր ծանուցեալք՝ մին չորքոտանեաց և միւսն թռչնոց. և ահա երկոքին սա նոյնատառ անուամբ յորջորջեալ, միայն յետևառաջութեամբ վանկից տարբերեալ։

3) *Ընկնակ*—յերի իւրում վարող՝ ի վերայ իւր կրող։

4) *Նապաստակ*—Ապաստանօղ, որոյ չիք այլ ինչ զէն, բայց եթէ ապաստանեալ ի դժուարս և յամուր տեղիս։

5) *Կապիկ*—իբրև լինքն կապօղ. ունելով բնութիւն, որ նմանել կամի ամենայնի զոր տեսանէ։

6) *Շուն*—ի շնթող բնութենէ իւրմէ առեալ։

7) *Աղուէս* – որ աղու կամ քաղցր ձևանայ։

8) *Ուղտ*—ոխոտ, որոյ ոխ առաւելեալ է քան զամենայն կենդանիս։

9) *Նղջերու*—եղջիւրաւոր։

10) *Սիրամարգ*—սիրող զմարգ։

11) *Աղաւնի*—աղու ունի։

12) *Կաքաւ*—քանզի ի գնացս իւր ի գետնի ոստոստելով ընթանայ իբր կաքաւելով։

13) *Արտուտ*—ի բնութենէն առեալ, զի յարտորայս բնակի։

14) *Լօրամարգի*—ի բնակութենէն առեալ, այսինքն է ի լօռս կամ ի գիճին տեղիս բնակօղ։

15) *Բազէ*—վազէ։

16) *Աքաղաղ*—այգուն աղաղակող։

II.

«ԱՆՈՒԱՆՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ Ի ՁԱՅՆԷՆ ԱՌԵԱԼ»

17) *Ճպուռն*
18) *Ճնճղուկ*
19) *Ճանճ*
20) *Ճճի*
21) *Ճիղճ*

| առեալ ի տառէս Ճ և չ, որ տիրէ ի հնչմունս, նաև ի թռիչս և ի գնացս նոցա.

22) *Զի*
23) *Կինճ*
24) *Ցին*
25) *Ցիո*

ի ձայնաւոր տառէս ի առեալ, որ տիրէ ի հնչմունս նոցա։

26) *Ծիծեռն*
27) *Ծիտ*

ի հնչմանէս ծի։

28) *Բաղ*
29) *Սագ*
30) *Հաւ*
31) *Ճայ*
32) *Ճագար*
33) *Արջ*
34) *Գայլ*
35) *Վագր*

ի ձայնաւոր տառէս ա, որ տիրէ ի հընչմունս ձայնից նոցա։

36) *Կով*
37) *Լոր*
38) *Փոր*

ի ձայնաւոր տառէս ո, որ կայ ի հընչմունս ձայնից նոցա։

39) *Բու*
40) *Պասկուճ*
41) *Ուրուր*
42) *Ցուլ*

ի ձայնաւորէս ու։

43) *Կռունկն*
44) *Ագռաւ*

ի ձայնէս կր։

45) *Ձոզ*—*ի տառէս ձ, որ տիրէ միշտ յամենայն հընչմունս նորա։*

46) *Վիշապ*—*ի ձայնէ շ տառի։*

47) *Կաչաղակ*—*ի ձայնէս կաչ, զոր ստէպ Հանէ։*

48) *Թռչուն*—*ի ձայնէս թռ, զոր Հանէ ի թռչիլն։*

49) *Սրորիկ*—*ի ձայնէս սր, զոր Հանէ ի թռչիլն։*

50) *Ճգէզ*—*ի ձայնէ ճ տառիս, զոր Հանէ։*

51) *Ձեռուն*—*ի ձայնէս զոր Հանեն բազմութիւն նոցա ի շարժիլն ի գետնի մի զմիով։*

52) *Սողուն*—*ի ձայնէս սր, զոր Հանեն ի սողալն։*

53) *Ժժմակ*
54) *Մժեխ*
55) *Իժ*

ի ձայնէ ժ տառիս զոր Հանին։

56) *Կայտառ*—*ի կայտռալոյն առեալ։*

Ի յառաջ բերեալ անուանեղ մարթէ և այն մտադրել, զի ոչ սակաւք գտանին ի նոսա նմանավերջք, զոր օրինակ են.

ա. *Արջառ, ոչխար, երիվար։*

բ. *Հաւ, կաքաւ, ագռաւ։*

գ. *Վարազ, յովազ, նոխազ։*

դ. *Թռչուն, զեռուն, սողուն, անասուն։*

Որպէս թէ յայտ առնելով՝ դիտմամբ այսպէս անուանեալ յումեմնէ, որպիսի ոք էր Ադամ. և ոչ ի շփոթ լեզուէ յառաջ եկեալ, որպէս էր լեզու ժամանակի աշտարակաշինութեան. գոյ և այլ ինչ ի դիտել, զի ի լեզուի մերում պակասին անուանք ձկանց, զի ըստ սուրբ գրոյ նաև Ադամ ոչ եդ նոցա անուանս, քանզի ոչ էած Աստուած առ Ադամ զձկունս, որպէս գրեն մեկնիչք... և այլն [17]։

Մեր յառաջ բերած հատուածը շարադրելիս՝ դիտնական հեղինակի համար պակաս դեր չէ կատարել *ազգասիրութիւնը։* Հին ազգերից իւրաքանչիւրը մրցում էր հրէից ազգի հետ և իւր լեզուն Աստուածախօս անուանում, ուրեմն ինչու՞ հայ ազգն ևս իւր լեզուն Աստուածախօս չհամարէ. թէև նոյն իսկ եգիպտացւոց ժամանակ այդ պատիւը վերագրել են *Փռիւգացիներին։*—

—Յունաց երևելի պատմաբան Հերոդոտը պատմում է, որ եգիպտացւոց թագաւոր Պսամետիխը կամենալով իմանալ թէ ո՞ր ազգը կամ ո՞ր լեզուն է առաջին անգամ ստեղծուել, յանձնում է մի հովուի երկու նորածին *մանուկ* հրամայելով որ նորանց մեծացնէ մի անմարդաբնակ տեղ, ոչինչ խօսք չարտասանէ նոցա մօտ և ուշադրութիւն դարձնէ թէ

[17]) Տես. Հայր Ինճիճեան, նոյնն Հատ. III էջ. 21—22։

առաջին անգամ ինչ կասեն մանուկները։ Երկար ժամանակից յետոյ, երբ Հովիւը մօտենում է մանուկներին, նոքա ձեռքերը տարածած դիմում են նորան «բէքոս» աղաղակելով և ապա նոյն խօսքը յաճախ արտասանում են թագաւորի մօտ։ Ծողովուած տեղեկութիւններից յերևան է գալիս, որ *փռիւգացիք հացին կոչում են «բէքոս»։* Այս իրողութիւնից եզրակացնում են, որ փռիւգացիք առաջին ազգն են երկրիս վերայ...։

Եթէ եգիպտացւոց արքայի այս փորձը «գլուխ գալու բան» լինէր, այն ժամանակ այդ միայնութեան մէջ մեծացած մանուկները թէև չէին կարող խօսել մի որ և է գոյութիւն ունեցող լեզուով, սակայն այնուամենայնիւ նոքա կսովորէին իւրեանց զգացմունքը մի որ և է կերպիւ միմեանց հաղորդել—լինէր այդ միայն նշաններով կամ թէ նշանացի խօսակցութեամբ՝ այսինքն շարժումներով՝ կապակցուած զանազան ձայների հետ։ Նոյն իսկ նորագոյն ժամանակներում շատերն ափսոսել են, որ մարդասիրութեան զգացմունքը թոյլ չէ տալիս իրագործել լեզուագիտութեան և հոգեբանութեան համար այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող մի փորձ, որ ըստ աւանդութեան արել է եգիպտացւոց արքան. սակայն իզուր է այդ ափսոսանքը, վասն զի այդ փորձի իրագործելը կարևոր չէ։ Նոյն իսկ բնութիւնն անում է այդ փորձը, պէտք է միայն դիտել։ Մեր աչքի առաջ մեծանում ու զարգանում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք լիովին համապատասխանում են այդ փորձի պահանջած հանգամանքներին—լռութիւն և միայնութիւն—։

Այդ դժբաղդ անձնաւորութիւնները են *համր-խուլերը։*

Նոքա համր են, որովհետև նոցա համար ամբողջ աշխարհը համր է, որովհետև չունին լսելեաց զգայարան։ Նոքա զուրկ են *հնչիւնաւոր լեզուից,* սակայն *ոչ ընդհանրապէս լեզուից.* և նոքա զարգացնում են այդ լեզուն միակ կարելի ճանապարհով՝ նշանացի խօսակցութեամբ։ Այդպիսով համր-խու-

լերը հանդիսանում են լռակեաց, սակայն կենդանի վկաներ այն ճշմարտութեան, որ նոյն իսկ այսօր մարդկութիւնը դեռևս չէ կորցրել լեզու ստեղծելու ընդունակութիւնը։

Լեզուաբանութիւնն այս վերջին չիսուն տարուայ ընթացքում այնպիսի յառաջադիմութիւն է արել, որ անիրաւացի կլինէր այսօրուայ լեզուաբանական տեսակէտից քննադատելով հայր Ինճիճեանի կարծիքը՝ ծիծաղելի կացուցանել [18]։

Հայր Ինճիճեանի բացատրութիւնն, որ կենդանիների արձակած ձայնից կազմակերպուել է նոցա անուններն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ «օնօմատօպօյէի» տեսութիւնն, որ դարուս առաջին մասում տիրող էր հանդիսացած լեզուի ծագման փիլիսոփայութեան մէջ [19]։

---

[18]) *Հայր Ինճիճեանից շատ առաջ հայագէտ գերմանացի «Շրեօդէր» իւր լատիներէն շարադրած հայերէն քերականութեան մէջ խօսելով հայոց լեզուի մասին —«*de antiquitate linguae armenicae*»—հետևեալ եզրակացութեան է գալիս. «Հայոց լեզուն չէ մայր երբայականի և ոչ էլ նորա դուստրը»։ Տես. «Արամեան լեզուին գանձ». Ioh. Ioachimi Schröderi: Thesaurus linguae armenicae etc. Amstelodami. MDCCXI. գ. I. էջ 2—4.*

[19]) *Այս տեսութեան մասին արդէն խօսեցինք, յարակցենք նաև Հումբօլտի կարծիքը։ Ըստ Հումբօլտի՝ որովհետև բառերը միշտ իւրեանց դիմացն ունին գաղափարներ, բնական է, որ ազգակից գաղափարներն արտասանութեան ազգակից հնչիւններով. գաղափարների ծագումը համապատասխանում է հնչիւնների ծագման։ Որ հնչիւնի և իւր նշանակութեան մէջ գոյութիւն ունի մի կապակցութիւն, անկասկած է, սակայն այդ կապակցութեան յատկութիւնն անկարելի է միշտ ճանաչել։ Եթէ ի նկատի ունենանք միայն պարզ բառերը, կարելի է ենթադրել երեք պատճառներ, որոնք առիթ են եղել որոշ հնչիւնների, որոշ գաղափարների հետ կապակցելուն։ Ըստ այսմ կարող ենք գաղափարների երեք նշանակութիւնները միմեանցից զանազանել.*

ա. Անմիջապէս նմանութիւն. որտեղ մի որ և է ձայնա-

Այսօր նոյն իսկ լեզուաբանութեան անհմուտ անձինք ևս գիտեն, որ մի որ և է բառ բացատրելու համար պէտք է որոնել այդ բառի արմատն և ոչ թէ ածանցները վերցնելով՝ կամայական նշանակութիւններ տալ դորա [21]։

եոր իրի յառաջ բերած ձայնն ընդունում է բառի մէջ, բայց որովհետև արտասանութիւնն այստեղ շատ անգամ անարտասանելի հնչիւնների է պատահում, այդ պատճառաւ և դրա փոխարէմ և անճանաչելի են դառնում։ Այս կերպ յառաջացած բառերը զուրկ չեն անհարթութիւններից և հետզհետէ անյայտանում են զարգացող լեզուի միջից։

բ. Հնչիւնների եւ առարկայի յատկութեանց նմանութիւն, որ կարելի է «սիմբօլական» անուանել. դա իրերի համար ընտրում է այնպիսի հնչիւններ, որոնք մասամբ ինքն ըստ ինքեան, մասամբ այլոց հետ համեմատելով՝ ականջի վերայ այնպիսի ազդեցութիւն են անում, ինչ ազդեցութիւն որ անում են նոյն իրերը հոգւոյ վերայ. . .։

գ. Նման գաղափարներն արտայայտում են նման հնչիւններով. այն բառերն, որոնց նշանակութիւնները միմեանց նման են, ընդունում են նոյնպէս նման հնչիւններ։ Այս եղանակից ամենից պարզ կերպիւ է ներկայացնում հնչիւնի և բառի նշանակութեանց միջև եղած կապակցութիւնը։ Միւս կողմից, երբ մի որ և է նշան դիտողի համար ուշադրութեան արժանի է երեւում, առիթ է լինում նոր անուան ստեղծման. այսպէս օրինակի համար արեւին տուել են հետեւեալ անունները. փայլող, ջերմ, ոսկեայ, պահպանող, աւերող, գոյլ առիւծ, երկնքի աչք, լուսոյ Հայր և այլն։ Այստեղից են յառաջացել հին բառերի մէջ հոմանիշ — synonym — անունները և բառերի կեանքի ու մահուան կռիւն, որ պատճառ է եղել թոյլ, անյարմար բառերի ոչնչացման և նոր բառերի յառաջացման. այսպէս օրինակի համար ուղտ գաղափարի համար Hammer֊ը համարել է 5744 անուն. Արաբացիք «առիւծի» համար ունեն 500, «սրի» համար 1000 անուն. իսկ իսլանդական լեզուն 120 բառ ունի «կղզի» գաղափարի համար (Max Müller) [20]։

[21]) Սակայն մեզանում կան դեռ ևս այնպիսի հայկարաններ,

---

[20]) տես. Lazarus. նոյնն էջ 142. ծթ. բ.

Որպէս զի ցոյց տանք՝ թէ որչափ կամայական են Հայր Ինճիճեանի բացատրութիւնները, յառաջ ենք բերում նորա ցանկից մի քանի տասնեակ բառեր, որոնք բոլորովին «զուտ Հայկական» ծագում չունին և առնուած են օտար լեզուներից կամ կազմուած են օտար արմատներից, հետևապէս և բոլորովին այլ նշանակութիւն ունեն։

1) *ա ր հ ա ծ* բառը ծագում է հին *բակտրիականից* — տես. Frd. Müller, Sitzungsberichte etc. Wien, Հատ 48 (1865) էջ 430. նոյնը Հատ. 84 (1877) էջ 227 — *երրայականից* — տես. Schröder Thesaurus etc. էջ 45. նոյնպէս և Էվալդ. Ewald, Sprachwissenschaftliche Abhandlungen տպուած է Abhandlungen d. k. g. zu Göttingen Հատ. X (1862) էջ 66 ծթ. բ.—

2) *ա ր ծ ի ւ* ծագում է *սանսկրիտից* — տես. Hübschmann. Arm. Studien. էջ 21.

3) *ե ր կ ա թ* ծագում է հին *բակտրիականից* — տես. Frd. Müller. Sitzungsberichte etc. Wien. Հատ. 84 (1877) էջ 225. *սանսկրիտից* — տես. Paul Boetcher: Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanskrit. տես. Zeitschrift d. d. m. Gesellschaft. Հատ. 4. (1850) էջ 354—

4) *կ ա պ ի կ* ծագում է *սանսկրիտից* — տես. վ. *Քինդիշման*. zeitschrift d. d. m. G. Հատ. 4. էջ 356. նոյնպէս Sitzungsberichte etc. Wien Հատ. 38 (1866) էջ 572. *սեմիտականից* — տես. Paul de Lagard, armenische Studien էջ 175.

5) *շ ո ւ ն ի* ծագում է *սանսկրիտից* — տես. վ. *Քինդիշման* zeitschrift etc. էջ 359 նոյնպէս և Hübschmann. Arm. Studien էջ 46. *հին բակտրիականից* — տես. Paul de Lagard Arm. Stud. էջ 181. նոյնպէս և Frd. Müller: Sitzungsberichte etc. Հատ. 84 էջ 229 եւ Հատ. 88 էջ 11.

6) *ա ղ ո ւ ս* — ծագում է *սանսկրիտից* կամ *յունարէնից* — տես.

որ հետևելով Հայր Ինճիճեանի նպատակ — ապացուցանել և աքաղաղ — այգուն աղաղակող բացատրութեան՝ ասում են որ «կաքաղաղ — այգուն աղաղակող բացատրութեան՝ ասում են որ «կատու բառը ծագել է «կայի տուն» բառերից... (կատու բառը ծագում է սեմիտականից. տես. Paul de Lagard. Arm. Studien. էջ 175. նոյնպէս հին բակտրիականից. տես. Frd. Müller, Sitzungsberichte etc. Հատ. 84 էջ 228:

Hübschmann: Arm. Stud. էջ 17. Windischmann նույն էջ 17 եւ Frd. Müller: Sitzungsberichte etc. հատ. 64 էջ 450 եւ հատ. 84 էջ 226.

7) *ոդոտ—ծագումն է սանսկրիտից—տես.* zeitschrift etc. հատ. 4 էջ 359 նոյնպէս եւ Frd. Müller: Sitzungsberichte հատ. 38 էջ 574. *հին պարսկերէնից—տես.* Paul de Lagard, Arm. Stud. էջ 181.

8) *սիրամարգ—ծագումն է հին պարսկերէնից—տես.* Paul de Lagard, Arm. Stud. էջ 184. Frd. Müller *ենթադրում է, որ այս բառի արմատը սիր պէտք է լինի—սիրուն թռչուն. տես.* Sitzungsberichte etc. հատ. 64. էջ 454.

9) *լօրամարգի—ծագումն է հին պարսկերէնից—տես.* Paul de Lagard, arm. studien էջ 173:

10) *ձի—ծագումն է սանսկրիտից—տես.* Windischmann եւ Paul Boetcher. zeitschrift etc. հատ. 4 էջ 357 նոյնպէս եւ Hübschmann, armenische studien էջ 40:

11) *գիհ ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher, zeitschrift etc. էջ 363. *հին բակտրիականից—տես.* Frd. Müller, Sitzungsberichte etc. հատ. 84 էջ 229

12) *բազ—ծագումն է սեմիտականից—տես.* Paul de Lagard, armenische studien էջ 168:

13) *հաւ—ծագումն է սանսկրիտից—տես.* Hübschmann. armenische studien էջ 38.

14) *արջ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher, zeitschrift etc. նույնը էջ 351. նոյնպէս եւ Hübschmann, armenische studien էջ 27. Frd. Müller *համեմատում է օսերէնի եւ յունարէնի հետ:*

15) *գայլ—ծագումն է հին բակտրիականից—տես.* Frd. Müller Sitzungsberichte etc. հատ. 38. էջ 576. հատ. 84. էջ 217 եւ 227 նոյնպէս եւ Kuhn-Schleicher: Beiträge etc. հ. II էջ 499.

16) *վագր—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul de Lagard arm. studien էջ 185. նոյնպէս Hübschmann. arm. stud. էջ 14. Frd. Müller, Sitzungsberichte etc. հ. 38 էջ 576:

17) *իոլ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher նույն էջ 356, նոյնպէս եւ Hübschmann, arm. stud. էջ 2, եւ Windischmann.

18) *բոհ—ծագումն է պարսկերէնից տես.* Paul de Lagard, arm. studien էջ 169.

19) *կոռնիկ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher նույն էջ 357. եւ Hübschmann arm. stud. էջ 36.

20) *ագռաւ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher նույն էջ 350

21) *վիշապ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher նույն էջ 362, նոյնպէս եւ Windischmann նույն էջ 18

22) *իժ—ծագումն է սանսկրիտից կամ հին պարսկերէնից—տես.* Hübschmann arm. stud. էջ 31 եւ Paul de Lagard, arm. stud. էջ 173:

23) *վարազ—ծագումն է սանսկրիտից—տես.* Paul Boetcher նույն էջ 362. Windischmann նույն էջ 21. նոյնպէս եւ Frd. Müller Sitzungsberichte հ. 38 էջ 580. նաեւ Kuhn-Schleicher: Beiträge etc. հ. II. էջ 498 եւ հ. III. էջ 84

24) *յովազ—ծագումն է պարսկերէնից—տես.* Frd. Müller. Sitzungsberichte etc. հ. 78 էջ 430

25) *ձոխազ—ծագումն է սանսկրիտից—տես.* Kuhn-Schleicher: Beiträge etc. հ. III էջ 84.

26) *աղաւնի*—Frd. Müller *համեմատում է օսերէնի հետ —տես* Sitzungsberichte etc. հ. 84. էջ 226.

27) *սագ—ծագումն է հին բակտրիականից—տես.* Frd. Müller. Sitzungsberichte etc. հ. 84. էջ 229.—

Հայը Ինճիճեանի աշխատութեան այս մասի վերաբերութեամբ գալիս ենք այն եզրակացութեան, որ սխալը կայանում է ոչ միայն բառերի ընտրութեան, որով հանգուցեալ գիտնականը կամեցել է բացատրել իւր տեսութիւնը, այլ և նոյն իսկ սկզբունքի մէջ, որ է «օնօմատոպօէյ»-ի տեսութեան սկզբունքը: Թէև կան և այնպիսի բառեր—առաւել զործողութիւն ցոյց տուող—որոնց ծագումը կարելի է բացատրել այդ տեսութեամբ, սակայն ոչ ամբողջ լեզուի բառերը: Սկզբնական մարդը բառեր կազմելիս առաւել ուշադրութիւն է դարձրել գործողութեան, քան թէ ձայնի վերայ, ու այդ հասկանալի է, քանի որ նորա համար գլխաւոր բանը գործողութիւնն էր և ոչ թէ դորա պատճառած հնչիւնի տեսակն, ուստի և մի բառ կազմելիս նա պէտք է առաւել այդ գործողութեան գաղափարը կապակցէր բառի հետ:

Եթէ Հայը Ինճիճեան կենդանիներից չսկսէր, այլ դոր-ծողութիւն ցոյց տուող բայերից, գուցէ այնչափ անյաջողութիւն չունենար, վասն զի բայերն են, որ քիչ թէ շատ կարող են փաստաբանել այդ տեսութիւնը: Թէև այն բառերի թիւն, որոնց գաղափարը բառի հնչիւնի հետ ըմբռնելի նմանութիւն ունի, շատ սակաւ է, բայց այնուամենայնիւ իբր օրինակ կարելի էր բերել հետևեալները. տրոփել, գոռալ, կարկաչել, մռնչել, ծվծվալ, մրմնջել, ճռճռալ, կռկռալ, կկլկլալ, խռխռալ, խշխշալ, վշշալ, ճարճատել, և այլն: Որպէս զի չնկատուի թէ այս բառերից շատերը նոր են, յառաջ ենք բերում 13-րդ դարում գրուած Հայերէն «սակիփորիկ» կոչուած ձեռագրից հետևեալ բառերը. «բարաչել, մընչել, կոռչել, գոչել, մռնչել, մռնչել, ըբչել, մռմռալ, ճչել, կանչել, գոգոհալ, վրընջել, գոռոչել, հաջել, հնչել, կառաչել, խրխընջալ, կաղկանձել, վակել, ոռնալ, կարկաջել»: Ստեփանոս երաժիշտ բաժանեաց—ձայներն—իզ (26) (վերոյիշեալները) և շինեաց գործիք իզ. երգէին նոքօք» [22]):

Ս.րդէն ասացինք, որ Հայոց լեզուի «զուտ Հայկական» մասի հետազօտութիւնն անկարելի է, որովհետև այդ ժամանակաշրջանի պատմութիւնն անյայտ է մեզ, սակայն ինչ վերաբերում է հայ «սկզբնական» լեզուի ծագման և զարգացման, հասկանալի է, որ այդ տեղի պէտք է ունենար նոյն օրէնքներով, ինչ օրէնքով որ զարգացել են մեւս բոլոր լեզուները՝ ըստ մեր հիմնական տեսութեան՝ *աստիճանաբար զարգացման* օրէնքով: Նախնի Հայ ցեղը կազմելով ընդհանուր մարդկութեան մի փոքրիկ հատուածն, ապրում էր մի որոշ երկրում, ունէր իւր որոշ կեանքը, բարքն ու վարքը. իսկ իւրաքանչիւր ցեղ ներմուծում է իւր լեզուի ընտանեական առանձնայատկութիւնները: Կլիման, օդը, ջուրը, կերակուրն և ըմպելին ազդում են լեզուի գործարանների և այդպիսով բնականաբար նաև լեզուի վերայ: Լեզուի բնաւորութիւնը միշտ նման է լինում իւր ծննդավայրի բնութեան հետ. ուստի և Հայաստանի դիրքն ու կլիման պակաս ներգործութիւն չեն ունեցել Հայոց լեզուի կազմակերպութեան վերայ, որ պարունակում է իւր մէջ լեռնոտ երկրի բոլոր ազդեցութիւնը [23]):

Չանի որ Հայկական ցեղը դեռ ևս չէր ենթարկուել օտար ազդեցութեանց և առանձնակի կեանք էր վարում, լեզուն ևս զարգանում էր աստիճանաբար. իսկ երբ Հայը դուրս եկաւ իւր սահմանափակ շրջանից և շփուեցաւ իւր դրացի և իւրեանից զօրեղ ցեղերի հետ, նորա լեզուն ևս ենթարկուեցաւ այդ զօրեղ ցեղերի ազդեցութեանը:

Լեզուն իւր իսկական էութեամբ վերցրած՝ հաստատուն և միևնոյն ժամանակ իւրաքանչիւր վարկեան անցողական է. նորա պահպանումը նոյն իսկ գրի միջնորդութեամբ անկատար է. նա կարօտ է միշտ կենդանի խօսքի ազդեցութեան: Այսպէս ևս թէև Հայոց լեզուն մինչ այսօր հաստատուն է մնացել, բայց իւր զարգացման շրջանում ունեցել է այնպիսի վարկեաններ, ուր նորա զարգացումն ընդհատուել և մինչ իսկ յետադիմել է: Ի՞նչ ասել կուզէ, որ այս մոմէնտները միշտ կապակցուած են եղել Հայոց կեանքի քաղաքական կամ ազգի լաւ է ասել *պատմական* զարգացման ընթացքի հետ. երբ Հայկական ցեղն ենթարկուում է դրացի զօրեղ ցեղերի

[22]) Այս ձեռագրի մի հատուածը տպուած է „N. Journal Asiatique"ի մէջ. տես. tome IX (1867) էջ 196.

„Ընկերութեան վարքն ու բարքը և սովորութեան զօրեղ աստուածուհին ներմուծում են լեզուի մէջ տարբերութիւններ և պղպիսով յառաջ բերում բարբառները—դիալէկտ" տես. Steinthal.—Der Ursprung der Sprache im zusammenhang mit den letzten Fragen alles Wissens. էջ 72.

„Der Charakter der Sprache athmet schwüle Luft in Gebirgen, ist Ernst und Härte". տես. Wahl: Allgemeine geschichte der morgenländischen Sprachen und Litteratur էջ 74.

ազգեցութեան, լեզուն ևս դադարում է ինքնուրոյն և բնական ճանապարհով զարգանալուց. լեզուի ձևերը խանգարւում և խառնւում են օտար լեզուների հետ. օտար ուժերը խանգարում են նորա ինքնուրոյն յառաջադիմութիւնը [24]):

Հայ ազգն իւր քաղաքակրթութիւնը գլխաւորապէս միշտ օտարից ստանալով՝ հասկանալի է, որ դորա հետ ի միասին և պէտք է ընդունէր այդ քաղաքակրթութեան գաղափարներն արտայայտող բառեր: Օտար քաղաքակրթութիւնը բերում է իւր հետ իւրաքանչիւր ազգի համար անճանօթ գաղափարներ և այդ գաղափարներն արտայայտելու համար ընդունող ազգը ստիպուած է լինում կամ այդ գաղափարների հետ կցուած բառերը նոյնութեամբ ընդունել կամ թէ դորա տեղ նոր բառեր ստեղծել [25]): Բառից առաջ պէտք է ընթանայ միշտ գաղափարի պահանջն, որովհետև բառը գաղափարի կատարեալ պարզութեան արտայայտութիւնն է. այստեղից է յառաջանում և այն հանգամանքն, որ լեզուի մի որոշ շրջանը չունի այն բոլոր բառերն, որոնք կարողանային արտայայտել այդ լեզուի տէր ազգի ունեցած նոյնաժամանակեայ բոլոր գաղափարները: Եւ ճիշտ չէր լինի, եթէ այդ ազգի այդ ժամանակաշրջանում ունեցած գաղափարների սա-

[24]) Paul de Lagard իւր Armenische Studien աշխատութեան մէջ համեմատում է 2413 հայերէն (դրաբառ) բառ օտար բառերի հետ, իսկ մի այլ յօդուածում 283 բառ սանսկրիտի հետ:

[25]) Համարեա իւրաքանչիւր լեզուի մէջ գտանւում են այնպիսի խօսքեր, որոնց բոլորովին անկարելի է բացատրել նոյն լեզուի բառագիտութեամբ. թէև օտար ևս չեն երևում դրանք: Այսպիսի խօսքերը մեծ մասամբ են՝ անօթների, զէնքերի, բոյսերի, կենդանիների և այլն անունները: Սակայն այս բառերը մեծ մասամբ իւրաքանչիւր անգամուայ լեզուի ոգուն համեմատ են կազմուած և այնպէս յարմարեցրած, որ չի կարելի իբր օտար բառ ճանաչել: տես. Frd. Müller: Kuhn-Schleicher, Beiträge etc. հատ. II. էջ 490:

շարը համահաւասար համարէինք նորա այդ ժամանակամիջոցի բառերի հետ:

Սակայն ով չգիտէ, որ նոյն իսկ առանց օտարի ազդեցութեան, լեզուի բառերն և ձևերը դարերի ընթացքում փոփոխութեան են ենթարկւում. այս մասին գեղեցիկ կերպիւ նկատում է Լագարդ. «եթէ կեանքն այն զօրութիւնն է, որ մշտական նիւթափոխութեան միջոցին միևնոյնն է մնում, ով կարող է կեանքի-կեանքը, լեզուն—այդպիսի փոփոխութիւնից ազատել: Ո՞վ կարող է պնդել, որ անունները չեն փոփոխւում ժողովրդի բերանում մինչ այն աստիճան, որ նոյն իսկ ինքը, դորա ստեղծող ժողովուրդը չէ ճանաչում այլ ևս, ո՞ւր մնաց թէ օտարները» [26]):

[26]) տես. Paul de Lagard: Gesammelte Abhandlungen էջ 253:

ԳԼՈՒԽ Ե.

Գ Ի Ր

«...Կամ յարևելս և խօսիմ յարևմուտս. ի հիւսիսոյ և ի հարաւոյ բարբառիմ, յանշուշնչս ձայն ածեմ և ի մեռեալս բարբառիմ: Անուն իմ բազկանայ երեք տառիւք. երրեակ ի միակէն, միակն ի հնգեակէն և հնգեակն ի հինգ հազարացն: Ծննունդ իմ ի ջրոյ է և մահ իմ ի նմանէ: Ի հրոյ զարհուրիմ, և ի վէմս նստեալ՝ արհամարհեմ զնոսա:

Եթէ կարես՝ ճաշակեա, եթէ չկարես ի զատ կացո:

Դաւթի փիլիսոփայի խմաստութիւն

Գրի տեսակները. բերանացի առանդրութիւն. պատկերագիր. դորա ծագումը. եգիպտական ,,հիերօգլիֆներ'', ,,քրմական'' եւ ,,ժողովրդական'' գիր. գաղափարագրի եւ ձկարի մէջ եղած տարբերութիւնը. պատկերագրի հոգեբանական կողմը. ձշանագիր. պատկերագրի եւ ձշանագրի զորձադրութիւնը հայոց մէջ. պրօֆ. Իմիճի կարծիքը. ցուցակ հայոց ձշանագրերի:



Յարմար դասաւորութեան համար գիրը կարելի է երկու տեսակի բաժանել. դոցանից մէկն արտայայտում է *գաղափարները* և կոչւում ,,*գաղափարագիր*'', իսկ միւսը միայն *հնչիւններ* և կոչւում ,,*հնչիւնագիր*'': Այդ երկու տեսակներից իւրաքանչիւրն ունի դարձեալ երկու բաժանումն. գաղափարները կարելի է արտայայտել *պատկերներով* և *նշաններով*, իսկ հնչիւնները վանկերով և տառերով. այսպիսով կունենանք գրի հետևեալ բաժանումները.

I *Գաղափարագիր* [1]. ա. պատկերագիր [2] բ. նշանագիր [3]:

II. *Հնչիւնագիր* [4]. ա. վանկագիր [5], բ. տառագիր [6]՝ կամ տառ:

I. Գաղափարագիր

Գրի էութեան գլխաւոր յատկանիշն է գաղափարների կապակցութիւնը. այդ պատճառաւ և իւրաքանչիւր գիր այնպիսի յատկութիւն պէտք է ունենայ, որ ցանկացած մտապատկերներն արթնացնէ մեր հոգւոյ մէջ. այլ խօսքով իւրաքանչիւր գրի *արտաքին* տեսքը պէտք է մի որոշ գաղափար յառաջ կոչէ մեր մտքի մէջ: Արդ, ինչը կարող է մեր մտքի մէջ մի որևէ է առարկայի ճիշտ մտապատկերն առաւել դիւրութեամբ պատկերացնել քան նոյն իսկ այդ առարկայի նկարը. ուստի և հասկանալի ու պարզ է՝ թէ ինչու մարդս իւր գաղափարները գրով այլոց յայտնելու համար ընտրել է բնականաբար այդ միջոցը: Նկարների միջոցաւ մի որևէ է գաղափար կամ դէպք այլոց հաղորդելու արուեստը կոչւում է *պատկերագիր*: Պատկերագիրը ներկայացնում է այն *սկզբնական* միջոցն, որով ազգերն իւրեանց մէջ պատահած իրողութիւններն արտայայտել են *զրաւոր կերպիւ*: Նշանաւոր և զարմանալի

---

[1]) Begriffsschrift (*գերմաներէն*), Idéographisme (*ֆրանսերէն*):

[2]) Bilderschrift *գերմ.* Hiéroglyphe *ֆրանս.*

[3]) Zeichenschrift *գերմ.* Symbolisme *ֆրանս.*

[4]) Lautschrift *գերմ.* Phonétisme *ֆրանս.*

[5]) Silbenschrift *գերմ.* Syllabisme *ֆրանս.*


[6]) Buchstabenschrift *գերմ.* Alphabétisme *ֆրանս.*

իրողութեանց յետագաներին հաղորդելու ձգտումը նոյնչափ հին է, որչափ մարդկային ցեղի սկզբնական զարգացումը։ Սկզբնական ժամանակներում, քանի որ գրի տեսակները դեռ ևս գոյութիւն չէին կարող ունենալ, մարդկութիւնը միմիայն մի միջոց ունէր իւր այդ ձգտմանը բաւականութիւն տալու. այդ միջոցն էր *բերանացի աւանդութիւնը*։ Այն ժամանակուայ մարդիկ շատ երկար ապրելով, որդիքը, թոռները և թոռան-թոռները կարող էին իւրեանց մեծ պապի շուրջը ժողովուել և նորա պատմածները լսելով՝ իւրեանց թոռներին աւանդել։ Այսպիսով բերանացի աւանդութիւնը կատարելապէս բաւականութիւն էր տալիս սկզբնական մարդկանց վերոյիշեալ ձգտմանը. նահապետական կամ հովուական կեանքը միջոց էր տալիս նոցա ազատ երգելու և այդ երգերը ‹բերնէ-բերան› անցնելով դառնում են ժողովրդական երգեր, որոնց մէջ և պարունակուած է այն ժամանակի ամբողջ պատմութիւնը։

Մի որև է իրողութիւն յետագաներին հաղորդելու ձգտման զարգացման երկրորդ աստիճանն է *պատկերագիրը*. վայրենի ցեղերն այսօր ևս գործ են դնում պատկերագիր, համաբեա երկրիս ամենայն մասերում և ամենայն տեղ միևնոյն սկզբունքով, այսինքն որչափ կարելի է առարկաների նմանութեամբ նկարներ գծագրել կարծր և կակուղ մարմինների վերայ։—Ամերիկայի Հնդիկները պատկերագիրը գծագրում են սովորաբար բարձր ժայռերի վերայ. յայտնի գիտնական Հումբօլտը պատմում է, որ երբ ինքը մի անգամ Օրինոքոյի Հնդիկներին զարմացմամբ Հարցնում էր, թէ ինչպէս կարողացել են նոքա գետեզրի այնչափ բարձր ժայռի վերայ պատկերներ գծագրել՝ ժպտալով պատասխանել են պարզապէս, որ իւրեանց նախահայրերը ջրի վարար ժամանակը նաւակներով են հասել մինչ այն տեղ։—

Պատկերագրի ընթերցումը դժուար է և ամենայն ոք չի կարող հասկանալ դորա նշանակութիւնը, վասն զի նշանագիր խօսակցութեան նման քերականութիւն չունի ու վերացական

(I)



ՎԱՅՐԵՆԻ ՆԴԿԱՑՈՒՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳԻՐ

անուննների ու գործողութեանց նկարագրութիւնն իսկապէս պայմանական է [7]։

Պատկերագրի մայր և պատմական երկիրն է Եգիպտոսը։ Ո՛չ մի երկիր այնչափ հարուստ չէ արձանագրութիւններով, որչափ Եգիպտոսն. այդ երկրի պատկերագիր արձանագրութիւնները կազմում են մի ընդարձակ և անզուգական գրականութիւն։ Եգիպտական պատկերագիր արձանագրութիւնները կոչւում են ‹հիէրօգլիֆ› — յունարէն բառ, որ նշանակում է ‹սրբազան փորագրութիւն› — և զարդարում Եգիպտական բուրգերի պատերը, յիշատակարաններն և մումիաներ պարունակող դամբարաններն ու դագաղները։ [8] ‹Հիէրօգլիֆ›-ները բաղկացած են կենդանի և անշունչ առարկաների, մարդկանց և

[7] Յառաջ ենք բերում վայրենի ցեղերի պատկերագիր արձանագրութեան մի օրինակն, որ ներկայացնում է հնդիկների մի նշանաւոր առաջնորդի ծովային ճանապարհորդութիւնն և գտնւում է „Օլեր“ կամ „վերին“ լճի — հիւսիսային Ամերիկայում, Քանադեան հինգ լճերից ամենամեծը — ափին գտնուող ժայռի վերայ։ Նկարուած են հինգ նաւակներ, որոնք ցոյց են տալիս, որ նաւակների թիւն այդչափ էր. նաւակների մէջ եղած ուղղահայեաց գծերը ցոյց են տալիս իւրաքանչիւրի մէջ գտնուած մարդկանց թիւն. առաջին նաւակի մէջ է առաջնորդի գլխաւոր դաշնակիցն, որ կոչւում է „Կիշկէմոնաքի“ և որովհետև „Կիշկէմոնաքի“ մի թռչնի անուն է, այդ պատճառաւ և նկարուած թռչունը պէտք է աղտայայտէ այդ անունը։ Նկարուած երեք կիսաշրջանները երեք գունաերով ցոյց են տալիս, որ երեք արևներ երկնքի տակ էին արդէն, այսինքն ճանապարհորդութիւնը տևեց երեք օր։ Կրիան ցոյց է տալիս ցամաք գտնս գալն, իսկ առաջնորդի պատկերը ձիու հետ ի միասին ցոյց է տալիս, որ այդ ճանապարհորդութիւնը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արդէն Քանադայում ձիեր էին ներմուծուած տես Tyler։ „Forschungen über die Urgeschicte der Menschheit“ գլխ. V. էջ. 107։

[8] Բէրլինի ազգային թանգարանը շատ հարուստ ժողովածու ունի եգիպտական մումիաների և դամբարանների, որոնցից շատերը քառանկիւնի ու շատերն էլ դագաղի ձև ունեն և առհին կողմից շրջապատուած են զանազան գոյնի պատկերագրերով.

կենդանեաց և դոցա մասերի, բոյսերի, երկնային մարմիններ-
րի, զենքերի, գործիքների և այլն պատկերներից։ Այս պատ-
կերները շարայարուած են ուղղահայեաց սիւնակներով կամ
հօրիզոնական դիրքով ու կարգացուում են կարգով։

Երկար դարերի ընթացքում Եգիպտական պատկերագիր արձանագրութիւնները գիտնական աշխարհի համար «Որդեան հանգոյցներ» էին ու մինչև 19-րդ դարու սկիզբն եւրոպական գիտնականների բոլոր աշխատանքն այդ արձանագրութիւնները կարդալու համար համարեա թէ իզուր էին անցնում։ Նա-տերն այն համոզման էին գալիս, որ Եգիպտոսը մի մշտական գաղտնիք պէտք է մնայ, երբ 1799 թ. ֆրանսիացի սպայ Boussard-ը գտաւ մի արձանագրութիւն «Ռոզետէ»-ի մօտերն, որ գրուած էր երեք տեսակ գրով. այսինքն. ա. Եգիպտական պատկերագրով. բ. Եգիպտական «ժողովրդական» կոչուած գրով և յունաց *այբուբենով*։ Յունարէն գրուած բնագիրը ցոյց էր տալիս, որ դորա բովանդակութիւնն եգիպտական եկեղեցականների մի հրովարտակ էր ի պատիւ Պտղոմէոս V-ի [9])։ Ահա այս արձանագրութիւնն եղաւ առաջին բանալին, որ բացեց Եգիպտական այն բազմատարած և անթիւ գրականական և պատմական գանձերի փակուած դռները։ Այնուհետև կարճ ժամանակամիջոցում եգիպտական արձանագրութեանց կարդալու արուեստը կատարելագործուեցաւ և այսօր այդ «դրդեան հանգոյցը» լուծուած կարելի է համարել։ Այդ արձանագրութեանց բովանդակութիւնը լոյս ձգեց պատմական այնպիսի ժամանակաշրջանների վերայ, որոնք *նախապատմական* էին համարուած [10])։

այնպէս որ եթէ առաջուց չը գիտենայինք դոցա էութիւնը, կարող էինք դիւրութեամբ այդ նկարներն իբրև զարդարանք նկատել

[9]) *Տես.* Maspero: Geschichte der morgenländischen Völker im Altertum. *էջ* 577.

[10]) *Գիցնէի Բունդերն, որ շինուած են 6000 տարի Քրիստոսից առաջ, եգիպտական չորրորդ իշխանութեան ժամանակ,*

Եգիպտական հիերօգլիֆ արձանագրութիւնները իսկապէս միմիայն պատկերագրերից չեն բաղկացած, այլ պարունակում են երեք տեսակ գիր որոնք են. *ա.* իսկական պատկերագիր— այսինքն իւրաքանչիւր պատկեր արտայայտում է իւր առարկայի գաղափարն. օրի. համար նկարուած թռչունը կընշանակէ թռչուն. մարդը—մարդ և ձին—ձի։ *բ. Նշանագիր*—այսինքն նկարուած պատկերներն արտայայտում են բառեր, որոնք արտաքուստ նկարի հետ նմանութիւն չունին. օրինակի համար նկարած մարդկային պատկերը, բացի նորանից, որ արտայայտում է մարդ գաղափարն, ունի և հետևեալ բառերի նշանակութիւնը. «սէ»—անձն, «բօտ»—մարդ, «ա»—ես, իմ և այլն [11])—վերացական գաղափարներ արտայայտելու համար ընտրուած *նշանագիր* պատկերները շատ անգամ խորին միտք են պարունակում իւրեանց մէջ, օրինակի համար «մայր» գաղափարն արտայայտելու համար եգիպտացիք նկարել են մի «անգղ», որովհետև նոքա կարծում էին, որ թռչունների այս ցեղն արդիւնաբերում է առանց արուների հետ միութիւն ունենալու։ [12]) Մի առարկայի պատկերն, որ պարունակում է իւր մէջ առաւելապէս մի որոշ յատկութիւն, գործ է դրուում նոյն իսկ այդ յատկութիւնն արտայայտելու համար. երբ մենք բանաստեղծական կերպիւ ենք կամենում մեր միտքն արտայայտել՝ վերացական գաղափարների տեղ գործ ենք դնում զգայական նշանակութիւն ունեցող բառեր. ինչպէս օրինակի համար «փառք» արտայայտելու համար, «դափնի», արքայական իշխանութեան համար «գահ» կամ «գայիսոն» և այլն. այդպէս և վարում է այսօր Հնդիկը կամ վարուել

իրենց մէջ պարունակում են բազմաթիւ արձանագրած յիշատակարաններ։

[11]) *Տես.* Eduard Mayer: Geschichte des Alterthums. *Հատ.* I *էջ* 29։

[12]) *Տես.* Lenormant: Essai sur la Propagation de l'alphabet Phénicien. *Հատ.* I *էջ* 16։

է հին Եգիպտացին՝—երբ արեգակ նկարելով՝ կարդում է ,,լոյս՛՛, նկարած ականջը նշանակում է լսել, աչքը տեսնել և այլն։—

9. Վանկ և տառ արտայայտող հնչիւնագիր, այսինքն նկարած պատկերները, որոնք բոլորովին անկախ իւրեանց արտաքին տեսքից արտայայտում են մի վանկ կամ տառ. օրինակի համար նկարուած ,,բերանը՛՛ բացի բերան նշանակելուց կարդացւում է նաև իբր ,,բ՛՛ կամ ,,բօ՛՛—որ նոյնպէս բերան է նշանակում. առաջին դիպուածում յաճախ նկարը պարունակում է մի գիծ, որպէս զի զանազանուի ,,բ՛՛ կամ ,,բօ՛՛-ից։ [13])

Այսպիսով եգիպտական արձանագրութիւնները պարունակում են իւրեանց մէջ գրի բոլոր տեսակները. որոնք նոյնպէս ապացուցանում են եգիպտական գրի ծագման հնութիւնն և աստիճանաբար զարգացումը։ Հիերօգլիֆները ցոյց են տալիս այն ամբողջ ճանապարհն, որով մարդկային միտքը ձգտել է հետզհետէ իւր արտաոանաճ անցողական հնչիւններին ու բառերին՝ մնայուն յատկութիւն տալու։ Եւ եգիպտացւոց պահպանողական բնաւորութեան պէտք է վերագրել, որ գրի զարգացման իւրաքանչիւր աստիճանն անբաժան է մնացել պատկերից. նոյն իսկ այն ժամանակ, երբ արդէն կազմուած էր այբուբենական գիրը։ Նոյն իսկ մի բառի գրութեան եղանակի փոփոխութիւնը պարունակում է իւր մէջ գրի զարգացման պատմութիւնը. սկզբում եգիպտացիք ,,ճշմարտութիւն՛՛, ,,արդարութիւն՛՛ արտայայտելու համար նկարում են մի ձեռք, որև բաւականացուցիչ է համարւում այդ գաղափարի համար. սակայն յետոյ կամենալով նոյն իսկ այդ գաղափարն արտայայտող ,,մա՛՛ բառը նկարուած տեսնել՝ աւելացրել են մի ,,մանգաղ՛՛ իբր վանկագիր ,,մա՛՛-ի համար. ժամանակի ընթացքում դորանով էս չ'բաւականանալով՝ եգիպտացիք աւե-

[13]) Տե՛ս Tyler: Forschungen zur Urgeschichte der Menschheit. էջ 124։

լացնում են մի ձեռք՝ իբր ,,ա՛՛ ձայնաւոր, որով և ,,մանգաղ՛՛-ը միայն ,,մ՛՛-ի նշանակութիւն է ստանում։ [14]) Այս աստիճանաբար զարգացումն ուսուցանում է մեզ գրի պատմութիւնն, ինչպէս որ երկրի զարգացման պատմութիւնը պարզվում է երկրի տարբեր շերտերի և դրութեանց մէջ պարունակուող նիւթերից։—Չինական գիրը թէ և այդպէս կատարելագործուած չէ, սակայն ցոյց է տալիս նոյն զարգացման ուղին։—

Եգիպտական գիրը նոյն իսկ անուններով բաժանուած է երեք դասակարգի, որոնք ցոյց են տալիս նոյնպէս դորա աստիճանաբար զարգացման ընթացքը. ա. *հիերօգլիֆ*, բ. ,,*հիերօտական*՛՛—որ նշանակում է ,,քրմական՛՛ գ. ,,*դեմօտական*՛՛—որ նշանակում է ժողովրդական. այս տեսակը կոչւում է նաև ,,*նամակագրական*՛՛—,epistolographisch՛՛։ Ինչպէս արդէն տեսանք, առաջինը գործ էր դրւում բուրգերի պատերի ու լիշատակարանների ու դամբարանների վերայ. երկրորդը ծառայում է քահանայական կամ քրմական դասի դրծածութեան համար։ Երկրորդը յարաբերում է առաջինին այնպէս, ինչպէս մեր սովորական ձեռագիրը յարաբերում է տպագրին. ինչպէս որ իւրաքանչիւր գիրք կարդացող չի կարող ամեն ձեռագիր կարդալ, այնպէս էս իւրաքանչիւր եգիպտացի, որ ծանօթ էր հիերօգլիֆի հետ, չէր կարող քրմական գիրը կարդալ։ Եգիպտական գրի այս երկու տեսակները գրտանում են նոյն իսկ Փիրեհի բուրգերի մէջ, որ շինուած են 6000 տարի Քրիստոսից առաջ, և գոյութիւն ունէին նոյնպէս եգիպտական կրօնի անկման ժամանակ, որ տեղի ունեցաւ քրիստոնէութեան առաջին դարերում։ Գրի այդ երկու տեսակները տարբերւում են միմիանցից նաև նորանով, որ առաջինը փորագրւում կամ նկարւում է արուեստական մեծ հո-

[14]) Տե՛ս Steinthal: Gesammelte Sprachwissenschaftliche Abhandlungen էջ 109.

գացողութեամբ. իսկ երկրորդն աւելի սարդ և հասարակ է։

Քրմական գրից աստիճանաբար յառաջացել է ժողովրդական գիրն, որ մօտենում է տառագրին. այս գիրը յերևան է գալիս արդէն ութերորդ դարում Քրիստոսից առաջ։

Գաղափարագիրն իւր արտաքին տեսքով այնչափ նման է նկարչութեան, որ դիւրութեամբ կարելի է սխալուել և սատկերագիրն իբր սոսկ նկար ընդունել, ուստի և կարևոր է դոցա ներքին տարբերութիւնը համառօտակի բացատրել։

Նկարչութիւնը կարող է միայն մի որ և է առարկայ ներկայացնել, իսկ գաղափարագիրը հաղորդում է մի որ և է միտք։ Սրուեստն այնպիսի գաղափարներ է ներկայացնում, որոնց հասկացողութիւնն իբր ընդհանուրին մատչելի է ի նկատի առնում և նկարիչը կամենում է, որ այդ գաղափարներն, որ արդէն յայտնի են, իւր նկարի մէջ կրկին ճանաչուին. նա չէ ցանկանում նոր բան ուսուցանել, օրինակի համար թէ՝ «այս տեսքն էր ներկայացնում Արարատը ջրհեղեղից յետոյ» [15]). գիրն ընդհակառակը հաղորդում է մի որ և է անծանօթ դէպք կամ նորութիւն։ Սակայն տարբերութիւնը միայն նպատակի և ներգործութեան մէջ չէ, այլ և իրագործման եղանակի մէջ, որովհետև տարբեր նպատակները պահանջում են նաև տարբեր միջոցներ։ Նկարիչը նկարում է իւր առարկան անմիջապէս և դիտողի հաւանութեան ներկայացնում. նկարն անմիջական կապակցութիւն ունի թէ մեր և թէ նկարչի հայեացքի հետ։ Երբ նկարիչը վրձինի միջնորդութեամբ մարմնացնում է իւր հայեացքը, մենք աչքի միջնորդութեամբ ընդունում ենք այդ հայեացքը մեր գիտակցութեան մէջ. այսպիսով հայեացքը փոխում է իւր տեղը կամ իւր գոյութեան եղանակն. դա իւր սկիզբն առնելով առեղծող երևակայութեան մէջ և մարմնանալով մի որ և է

[15]) Հայազգի նկարիչ Ց. Այվազովսկու «Ջրհեղեղից յետոյ», գեղեցիկ պատկերը դրուած էր Բէրլինի պատկերահանդիսում։

նիւթի մէջ՝ տեղափոխում է դէպի դիտողի երևակայութիւնը։ Գաղափարագիրը ոչ թէ դիտում, այլ կարդացում է, այսինքն լեզուի միջնորդութեամբ դառնում է մտքի սեպհականութիւն և որովհետև հաղորդում է, այդ պատճառաւ և միայն մի միջոց է. այն ինչ պատկերն անկախ է և իւր արժանաւորութիւնն իւր մէջ է պարունակում։ Եւ վերջապէս, որովհետև այդ երկուսից իւրաքանչիւրն այլ է, այլ կերպ է ներգործում, ուստի և երկուսի բովանդակութիւնն էս այլ պէտք է լինի։ Նկարը ներկայացնում է մի իդէալական իր՝ նկարչի գաղափարն, այդ պատճառաւ և պատկանում է դեղեցկի շրջանին. իսկ պատկերագիրը ներկայացնում է իսկական իր կամ անցք և կամենում է ցոյց տալ, որ այս նկարուածն իսկապէս տեղի է ունեցել։ Իսկական պատկերագիրը շատ անգամ ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն յիշողութեան համար օժանդակիչ միջոց. դորան կարելի է գրի նախաշաւիղն անուանել։ Կարելի է արդեօք գիր անուանել երբ օրինակի համար Հիւսիսային ամերիկացին Սողոմոնի առակաց գրքի 30 գլխի վերջին տողերն արտայայտելու համար նկարում է նոյնչափ կենդանեաց պատկերներ, որչափ որ դոքա գտանւում են այդ տողերի մէջ—մրջիւն, ճագար, առիւծ, աքաղաղ և այլն և վերջը մի մարդ, որ իւր ձեռքերը դէպ երկինք է տարածել [16])։

Պատկերագրի և լեզուի մէջ չկայ ոչինչ յարաբերութիւն.

[16]) Ահա առակաց գրքի այդ հատուածը. «Մրջիւն՝ որոց ոչ գոյ զօրութիւն և պատրաստ է յամարայնոյ զկերակուր իւր։ Եւ ճագար ազգ անհզօր, որք արարին ի վէմս զդադարս իւրեանց։ Առանց թագաւորի է մարախ, և զօրաժողով լինի իբրև ի միջէ հրամանէ օրինոք։ Եւ սարդ՝ կռուեալ ձեռօք ի յորմս, որ դիւրին է առ որսալ. բնակի ի յարկս թագաւորաց։ Երեք են՝ որք պարծ շրջին և չորրորդն գեղեցիկ սիմ է։ Կորիւն առիւծու հզօր է քան զանասունս...»։ Տես Աստուածաշունչ. գիրք առակաց. գլ. ե. տուն 25—31. էջ 616 Պետերբուրգի Հրատարակութեան (1817 թ.)։

դոյն իսկ մտքի ձևն անկարելի է արտայայտել դորա միջնորդութեամբ. պատկերագիրն աւանդում է միայն նիւթը, շատ անգամ անորոշ թողնելով թէ արդեօք այն նիւթը ներկայացնում է անցեալում կամ ներկայում տեղի ունեցող մի դէպք, թէ միայն մի ցանկութիւն է և վերաբերում է ապագային [17]:

Գաղափարագրի մասին վերջացնում ենք մեր դիտողութիւնները հոգեբանական քանի մի ակնարկութիւններով:

Պատկերագիրը յառաջ բերելով իւրաքանչիւր առանձին առարկայի միմիայն զգայական նկատողութիւնը, ներկայացնում է գիտակցութեան անասնական աստիճանը: Առանձին զգայական իրը կազմում է այդ նկատողութեան բովանդակութիւնն. այդչափ է տալիս միայն պատկերագիրը: Պատկերագիրը նոյն տեղն է բռնում գրի տեսակների մէջ, ինչ-տեղ որ բռնում է համր-խուլերի լեզուն իսկական լեզուների մէջ: Սակայն նշանացի խօսակցութեան կենդանութիւնն և դիւրութիւնն առաւելութիւն է տալիս դորան. այդ պատճառով և դա գերազանցում է դժուար իրագործելի պատկերագրին: Երկուսի մէջ էլ իրն և իւր յատկութիւնը բաժանուած չեն. սակայն ուր որ այդ չեռ էլ տեղի չէ ունեցել, այնտեղ անկարելի է մտքի ձևի ըմբռնումն և արտայայտու-

[17]) Ցառաջ ենք բերում եգիպտական պատկերագիր արձանագրութեան մի օրինակ (№ II), Կիլիկիայի „Ադանա" քաղաքում 1881 թ. մի տուն շինելու ժամանակն է գտնուել այս եգիպտական արձանագրութիւն կրող արձանը որ ներկայացնում է ծնկների վերայ ընկած մի եգիպտացի կին. արձանի գրկի մէջ երեք ուղղահայեաց տողերով գրուած է հետևեալը. „Մի ղոհ, որ տալիս է արքան, ղոհ հանգուցելոց, որ պարունակում է՝ հաց, իւղ, սագ, շոր և այլ լաւ բաներ Ամմէ Սատ-Սաֆրուի կա ի համար, արժանեաց տիրուհուն": Արձանագրութիւնից երևում է, որ արձանը մի եգիպտական մահարձան է. թէ երբ և ինչ հանգամանքներում այս արձանը Կիլիկիայ է բերուել յայտնի չէ: Տես. Dr. A. Erman: Eine ägyptische Statuette տպուած է Zeitschrift d. d. morg. Gesellschaft. հատ. 38. էջ 440:

(II.)



ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

թիւնն, ուրեմն և այդտեղ գոյութիւն չունի իսկական ձևակերպուած մտապատկեր, այլ միայն զգայական նկատողութիւն։ Դա գոյութիւն ունի գիտակցութեան մէջ իբր մի զանգուած շատ անբաժան տարրերի. նա չէ պարունակում մինչև անգամ մի առանձին իր, այլ ամբողջ դէպքեր անձանց և իրերի, ինչպէս որ սոքա իւրեանց արտաքինով արտայայտում են։ Կարելի է նոյն իսկ ասել, ասում է «Շտայնթալ», որ օրինակի համար. որսորդ, արջ, ձկներ պարունակող մի նկարի տեսքը վայրենու մէջ չէ արթնացնում այդ երեք իրերի առանձին մտապատկերներն, այլ միայն երկու գործողութեանց դէպքեր, այսինքն մի արջի սպանելն որսորդի ձեռքով և ձկնորսութիւն։ Վայրենու տեսակէտից կենդանիները գոյութիւն ունին ոչ թէ իւրեանց, այլ միայն իւր որսի-համար, ուստի և միայն այդ յարաբերութեամբ է մտածում նոցա մասին։ Այդ պատճառաւ և նկարած առարկաների յարաբերութեանց բազմատեսակ լինելը—որ մեզ արգելում է ճիշտ որոշել՝ թէ որն է իսկապէս գրողի դիտաւորութիւնը—բոլորովին գոյութիւն չունի վայրենիների համար։ Մեր գիտակցութեան մէջ այդ նկարած առարկաներից իւրաքանչիւրն առանձին է և ընդունակ այլոց հետ կապակցուելու, այդ պատճառաւ և շատ անգամ այլ կերպ ենք կապակցում պատկերագրի նկարներն, որտեղից և յառաջանում է պատկերագրի սխալ ընթերցումն։ Իսկական և պարզ պատկերագիրը կարող է միայն մի վայրենի ժողովրդի գիրը լինել, որի հոգեկանն և նոյն իսկ կրօնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ զգայական զգացումն. «դոքա միայն այն չափով են մարդ, որչափ կարևոր է անասուն չլինելու համար» [18]։

---

[18]) Տես. Steinthal. նոյն էջ 66.

Թէև տառերի ներկան գալուց յետոյ ամենայն ուրեք անհայտանում է պատկերագիրը, սակայն այնուամենայնիւ այստեղ և այնտեղ միշտ կարելի է գտնել դորա հետքերը։ Նոյն իսկ մեր գործածած „հռովմէական" կոչուած թուերն ոչ այլ ինչ են, եթէ

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մարդկութիւնը հետզհետէ կատարելագործման ձգտելով մի որոշ ժամանակից յետոյ այլ եւս չէր կարող բաւականանալ պատկերագրով. միւս կողմը թողնելով այլ արգելքները, բաւական է յիշել միայն՝ թէ մի նախադասութիւն կամ մի որ և է դէպք արձանագրելու համար որչափ ժամանակ էր հարկաւոր—և եթէ այն եւս ինկատի ունենանք, որ այդ արձանագրութիւնները մասամբ եւս կարծր մարմինների վերայ էին փորագրուած—կարող ենք երևակայել թէ որչափ դժուար էր այդ։ Ա.հա այս դժուարութիւններից հարկադրուած ազգերը սկսում են նկարները կրճատել, այսինքն միայն բոլորագրերը գծել և հետզհետէ այդ եւս կրճատուելով մնում են միայն գլխաւոր գծերը։ Այս եղանակաւ պատկերագրի տեղ յառաջ է գալիս բ. *նշանագիրը:*

Սկզբում նշանագիրն արտայայտում է այն առարկաների գաղափարները, որոնց գծագրից յառաջացել է ինքը, սակայն սակաւ առ սակաւ մոռացուում է, որ այդ նշանագիրը ծագել է որոշ պատկերագրից և դառնում է պայմանական նշան. դոքա հետզհետէ առաւել ընդարձակ նշանակութիւն են ստանում՝ ընդունելով տարբեր գծեր։ Այսպիսով իւրաքանչիւր բառ ստանում է իւր նշանագիրն և այդ նշանագրից հետզհետէ կազմակերպւում է *հնչիւնագիրը:*

Յառաջ քան հնչիւնագրի մասին խօսելը մի ակնարկ ձգենք այն խնդրի վերայ, *թէ արդեօք Հայերն եւս ունեցել են պատկերագիր եւ նշանագիր գործածելու սովորութիւնը:*

ոչ պատկերագրի հետքեր։ I. II. III. և այլն ուղղակի տեսանելի միութիւններ են. իսկ V և X-ի յառաջանալը բացատրւում է այսպէս. մատներով կամ ձողերով թուելով մինչև 10 թիւը, յարմար են դատել այստեղ մի նշան դնել և նորից սկսել այդ նշանն այն է եղել, որ մի մատը կամ ձողը թեք կերպիւ միւսի վերայ են դրել. դորանից և յառաջացել է „X“ որի ուղիղ կէսը ներկայացնում է „V“։ տես Tyler. *նոյն էջ* 133.

Հայոց մէջ մարդկային գաղափարները յետագաներին հաղորդելու ձևի առաջին աստիճանի—պատկերագրի—գոյութեան մասին մեր պատմագիրներն ոչինչ չեն հաղորդել մեզ և մինչև այժմ յերևան եկած հնութիւնները եւս չեն ապացուցել, որ *պատկերագրի* գործածութիւնը յայտնի լինէր մեր նախնեաց գոնէ պատմական ժամանակներում։

Բազմաշխատ պրօֆ. *Մ. Էմին* իւր Հայոց գրի մասին գրուած յօդուածի [19]) մէջ ոչ թէ միայն ենթադրում է, որ մեր նախնիք գործ են դրել պատկերագիր, այլ և ձգտում է հաստատել, որ կռապաշտական ժամանակ ունեցել ենք մեր սեպհական ստեղծած պատկերագիրն, որ ոչինչ կապ չունէր մեր դրացի ժողովրդների հետ, քանի որ դոքա այդպիսի գիր չունէին։

Իւր տեսութիւնը հաստատելու համար յարգելի ուսուցչապետը հետևեալ փաստերն է առաջ բերում.

ա. Հայերէն գրուած շատ հին ձեռագրների մէջ գտնում ենք պատկերագրի հետքերն։

բ. Շատ բառեր մինչև այսօր եւս գրում ենք նշանագրով՝ թէ տպուած գրքերի և թէ ձեռագրների մէջ։

գ. Իբր ապացոյց այդ տեսութեան պրօֆ. Էմին հրատարակել է մի ցուցակ, որ ներկայացնում է ութսուն և չորս նշաններ։

Պրօֆ. Էմինի յառաջ բերած այս փաստերից պարզ երևում է, որ նա պատկերագիրն և նշանագիրը միմեանցից չէ զանազանում. եթէ «иероглифическіе знаки» ասելով պէտք է հասկանալ «պատկերագիր»—Hierogliph—, այն ժամանակ այդ նշաններից շատերը պատկերագիր չեն. իսկ եթէ «նշանագիր» պէտք է հասկանալ, այն ժամանակ չի կարելի ասել թէ մեր դրա-

---

[19]) Объ армянскомъ алфавитѣ, *որ հրատարակուած է իբրև չորրորդ յաւելուած Խորենացու պատմութեան ռուսերէն թարգմանութեան հետ։*

ցիք չունէին այդ, քանի որ բացորոշ կերպիւ յայտնի է, որ կային թէ աստրական և թէ պարսկական բառեր և վանկեր արտայայտող նշանները։ Հաւանական է, որ պրօֆ. Էմինն նոյն իսկ իւր գործ դրած բառին հաւատարիմ մնալով՝ պատկերագիրն աչքի առաջ ունի, վասն զի նորան քաջ յայտնի է աստրական և մեր դրացի այլ երկրների մէջ եղած նշանագրերի գոյութիւնը։ Այդ նորա յառաջ բերած վիճաբանութիւնները այնչափ հիմնաւոր են, որ կարելի լինէր հայոց սեպհական և սիստեմատիկական պատկերագրի գոյութիւնն ապացուցուած համարել և հետևեալ եզրակացութեան գալ ... Այս մի քանի մնացորդները ստիպում են մեզ մտածել, որ Հայաստանում երբեմն իսկապէս գոյութիւն ունէր պատկերագիրը, որ վերին աստիճանի զարգացած էր և տարածուած ամենայն տեղ...» [20]։

Ո՛չ։ Պրօֆ. Էմինի յառաջ բերած ցանկի մէջ ուրիշ նշաններից հազիւ 7—8 պատկերագիր կարելի է համարել. թէև պ. Էմին պատկերագրի շարքն է դասել նաև 2-րդ, 15-րդ, 8-րդ և այլն նշանները, սակայն անհասկանալի է թէ 2-րդն ինչ կապ ունի «անդաստան»ի, 15-րդը «մարգարէ»ի հետ. 8-րդի մասին պ. Էմին ասում է. «այս նշանը կարելի է համարել երաժշտական ձայնանիշ» [21]։—Մի քիթ մեր կռապաշտ նախնիք երաժշտութեան մէջ այդչափ յառաջադիմութիւն էին արել, որ ձայնանիշ գիր—նոտա—ևս ունէին. ընդհակառակն երաժշտութիւնը զարգացման ամենաստորին աստիճանի վերայ էր գտանում Հին Հայաստանում, նոյն իսկ աւելի ուշ ժամանակներում։ Գերմանացի հեղինակներից մէկը, կարծում ենք, չէ սխալուել, ասելով որ երաժշտութիւնը—մուզիկան—երբէք Ասորոց և Հայերին չէ զբաղեցրել [22]։—Արդեօք կարելի՞ է միմիայն 7—8 հատ պատկերագրի նշանակութիւնն ունեցող նշաններից եզրակացնել, որ «պատկերագիրը գործածական էր Հայաստանում», «վերին աստիճանի զարգացած» և «տարածուած ամենայն տեղ»։ Ի՞նչ ապացոյց ունենք, որ այդ ցուցակի մէջ պարունակուած սակաւաթիւ պատկերագրերը մեր կռապաշտ նախնեաց սեպհականութիւնն են և ոչ թէ ծննդ. յետագայ ժամանակների։

Պրօֆ. Էմինի տեսութիւնն ոչ մի հաստատուն հիմք չունի և ոչինչ ապացոյց չունենք, որով կարելի լինէր ընդունել պատկերագրի գործածութիւնը հին Հայաստանում իբրև սիստեմատիկական գիր։ Այդչափ պատկերագրի մասին։

Գալով նշանագրին, պէտք է ասել, որ անկարելի է դրա գոյութիւնը մերժել, որովհետև մեր հին ձեռագրների մէջ գտանում են բազմաթիւ նշանագրեր—Այր Ջամչեան դոցա թիւը երկու հարիւրից աւելի է համարում [23]։—

Լազարեան ճեմարանի մատենադարանում կայ մի բոլորագիր ձեռագիր (ընդ համարաւ 141), որ սկիզբ չունի և պարունակում է տասը (10) տարբեր բովանդակութեամբ

---

[20]) տես. Эминъ: Исторія Арменіи Моисея Хоренскаго էջ 378

Հայագէտ գիտնական Բրօսէն խօսելով պրօֆ. Էմինի այդ յօդուածի մասին՝ անուանում է այդ յափշտակութիւն „enthousiasme“ տես. Brosset: Analyse critique de la всеобщая Исторія de Wardan etc, տպուած է Memoires l'académie impériale des sciences de St. Petersbourg. VII-e serie, t. IV. № 9. էջ 15.

[21]) տես. Эминъ: նոյնը էջ 380.


[22]) տես. Wahl: Allg. Geschichte der morg. Sprachen und Litteratur էջ 75.


Պատմութիւնից մեզ յայտնի են միայն Գողթան վիպասանների „բամբիռ“ները։


[23]) „... Ի վերայ այսր ամենայնի մարթ է ասել՝ թէ այն գիրք գուցէ չէին յատուկ տառք, այլ նշանագիրք ինչ, որք հնարեալ էին վոխանակ ամբողջ բառից, զի կան և այժմ ի հին ձեռագիրս այդպիսիք աւելի քան զերկու հարիւր, որոնց ոմանք գարդ իսկ գործածեն“։ տես. Զամչեան. պատմութիւն Հայոց. Հատ. I. գիրք բ. էջ 761։

Հատուածները. Ձեռագրի յիշատակարանից երևում է, որ դա գրուած է Հայոց 1039 թ. (1620-ին) Կ. Պօլսոյ Մելքիսեդեկ պատրիարքի օրով Յակոբ գրագրի ձեռքով։ Ա.Հա այս ձեռագրի մէջ կայ Հայոց *նշանագրերի* և *համառօտագրերի* մի ժողովածու (էջ 60—63 և 134), որ անձամբ օրինակելով յառաջ ենք բերում այստեղ ամբողջապէս (№ III)։ Նշանագիրը և համառօտագիրը խառն են դասաւորուած, միայն պահպանուած է այբուբենական շարայարութիւնը. էջ 60—63 կարգով գրբուած են երեք-հարիւր հինգ (305) բառերի նշանները և համառօտութիւնները. իսկ ձեռագրի վերջը 134-րդ երեսի 2-րդ էջի վերայ օտար գրչով գրուած են տասնուվեց (16) նշանագրեր առանց յիշատակարանի. իսկ 60—63 թերթերի լուսանցքներում կան տասնումէկ (11) նշանագրեր. ընդամէնն ուրեմն 305—|—16—|—11=երեքհարիւր երեսուն և երկու (332) հատ։ Եթէ այս 332 նշանները գտենք, դոցանից հազիւ հարիւրը (100) ունին իսկական նշանագրի նշանակութիւն։ Այս ժողովածուից է ընտրել սրօֆ. Էմինը մեր յառաջ բերած նշանագրերի և պատկերագրերի ցանկը, որով նա կամենում է ապացուցել *պատկերագրի* գոյութիւնը կռապաշտ Հայոց մէջ։

Արդեօք դոնէ *նշանագրերի* համար կարող ենք ասել, որ դոքա նախաքրիստոնէական ժամանակներից են մնացել. կամ թէ եղել են դոքա մի որ և է ժամանակաշրջանի մէջ Հայոց *միակ գործածական գիրը*։ Նոյն իսկ մեր առաջը դրբուած այդ ժողովածուի գոյութիւնը չի կարող համոզել մեզ, այդ հարցերին դրական պատասխան տալ. սակայն քննչպէս բացատրել դոցա գոյութիւնը։ Շատ պարզ կերպիւ. դոքա յառաջացել են սակաւ առ սակաւ ժամանակի ընթացքում՝ ձեռագրների արտագրողներին մի փոքր դիւրութիւն մատուցանելու համար։ Այդ նշանների մեծ մասն ոչ այլ ինչ է, եթէ ոչ արհեստական համառօտագրութիւն. իսկ մնացած նշանագրերն էս յառաջացել են Սբ. Մեսրոպից յետոյ կամ


1 = 2 = 3 = 4 = 5 = 6 = 7 = 8 = 9 = 10 = 11 = 12 = 13 = 14 = 15 = 16 = 17 = 18 = 19 = 20 = 21 = 22 = 23 = 24 = 25 = 26 = 27 = 28 = 29 = 30 = 31 = 32 = 33 = 34 = 35 = 36 = 37 = 38 = 39 = 40 = 41 = 42 = 43 = 44 = 45 = 46 = 47 = 48 = 49 = 50 = 51 = 52 = 53 = 54 = 55 = 56 = 57 = 58 = 59 = 60 = 61 = 62 = 63 = 64 = 65 = 66 = 67 = 68 = 69 = 70 = 71 = 72 = 73 = 74 = 75 = 76 = 77 = 78 = 79 = 80 = 81 = 82 = 83 = 84 = 85 = 86 = 87 = 88 = 89 = 90 = 91 = 92 = 93 = 94 = 95 = 96 = 97 = 98 = 99 = 100 = 101 = 102 = 103 = 104 =


105 = 106 = 107 = 108 = 109 = 110 = 111 = 112 = 113 = 114 = 115 = 116 = 117 = 118 = 119 = 120 = 121 = 122 = 123 = 124 = 125 = 126 = 127 = 128 = 129 = 130 = 131 = 132 = 133 = 134 = 135 = 136 = 137 = 138 = 139 = 140 = 141 = 142 = 143 = 144 = 145 = 146 = 147 = 148 = 149 = 150 = 151 = 152 = 153 = 154 = 155 = 156 = 157 = 158 = 159 = 160 = 161 = 162 = 163 = 164 = 165 = 166 = 167 = 168 = 169 = 170 = 171 = 172 = 173 = 174 = 175 = 176 = 177 = 178 = 179 = 180 = 181 = 182 = 183 = 184 = 185 = 186 = 187 = 188 = 189 = 190 = 191 = 192 = 193 = 194 = 195 = 196 = 197 = 198 = 199 = 200 = 201 = 202 = 203 = 204 = 205 = 206 = 207 = 208 =


209 = 210 = 211 = 212 = 213 = 214 = 215 = 216 = 217 = 218 = 219 = 220 = 221 = 222 = 223 = 224 = 225 = 226 = 227 = 228 = 229 = 230 = 231 = 232 = 233 = 234 = 235 = 236 = 237 = 238 = 239 = 240 = 241 = 242 = 243 = 244 = 245 = 246 = 247 = 248 = 249 = 250 = 251 = 252 = 253 = 254 = 255 = 256 = 257 = 258 = 259 = 260 = 261 = 262 = 263 = 264 = 265 = 266 = 267 = 268 = 269 = 270 = 271 = 272 = 273 = 274 = 275 = 276 = 277 = 278 = 279 = 280 = 281 = 282 = 283 = 284 = 285 = 286 = 287 = 288 = 289 = 290 = 291 = 292 = 293 = 294 = 295 = 296 = 297 = 298 = 299 = 300 = 301 = 302 = 303 = 304 = 305 =

թէ աւելի լաւ է ասել՝ այն ժամանակաշրջաններում, երբ Հայերի մէջ գործածական էր *տառագրութիւնը*. բաւական է մի հայեացք ձգել մեր յառաջ բերած ժողովածուի վերայ, որ համոզուենք վերջին կարծիքի ճշտութեան վերաբերութեամբ, որովհետև ա. նշաններից մեծ մասը բառերի համառօտութիւններ են *տառերով* գրուած. (ինչպէս օրինակ 3, 4, 6, 10, 11, 20, 46, 62, 88, 122, 152, 186, 219, 244, 277, 303 և այլն և այլն)։

բ. Նշանագրերից շատերը ուղղակի մեսրոպեան այբուբենի *տառերն* են (ինչպէս օրինակ. 2, 8, 17, 23, 82, 83, 113, 132, 147, 148, 224, 251 263 և այլն և այլն) [24])։

գ. Այդ նշանագրերից շատերն արտայայտում են *քրիստոնէական* գաղափարները (օրինակի համար աւետարան (26), եկեղեցի (104), սար|աւագ (266) և այլն)։

դ. Այդ նշանագրերից շատերն էս վերցրած են մեր դրացի ազգերից (օրինակի համար 188, 191, 245, 266-րդ և այլն)։

Այս փաստերից յետոյ պէտք է ընդունել, որ *նշանագիրն* ոչ մի ժամանակ Հայոց *միակ գործածական գիրը* չէ եղել։ Մեր հին մատենագրներից նոյնպէս ոչ ոք չէ յիշում նշանագրի գոյութիւնը Հայաստանում, ուստի և այդ մասին ասելիք չունենք [25])։

---

[24]) Այս փաստից կարելի է նաև այն եզրակացութիւնը հանել, որ Հայոց տառերը յառաջացել են այդ նշանագրերից. այդ եզրակացութիւնը մենք ճիշտ կհամարէինք—վասն զի այդ է գրի զարգացման բնական ճանապարհը—եթէ կարողանայինք փաստերով ապացուցանել Հայոց սիստեմատիկական նշանագրի գոյութիւնը. բայց քանի որ այդ չենք կարող, պէտք է ընդունենք, որ այդ Հատուկտոր նշանագրերը յառաջացել են տառերի գոյութիւնից յետոյ։

[25]) Ձենք մոռացել „Ագաթանգեղոսի“ վկայութիւնը, սակայն այդ մասին փոքր ինչ յետոյ։

№ 141. ՁԵՌԱԳԻՐ ՄԱՍՆԱՒՈՐԻ ԼԵԶՐԻՆԸՆ ՃԵՄԱՐԻՆՈՒՄ

Է.Ջ. 60—63

ՆՁՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՌԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

1 Աբրահամ
2 Աբիսողոմ
3 Ահարոն
4 Ամբակում
5 ամբարիշտ
6 Ազէքսանդր
7 ազբիւր
8 ազբատ
9 ազանգ
10 ազաւթք
11 ազաւնի
12 Անդրէ
13 Անդոն
14 Անտիոք
15 անձն
16 անդունդք
17 անասուն
18 անդաստան
19 Անգգամ
20 անդամք
21 անօթ
22 աշակերտ
23 աշտարակ
24 աշտանակ
25 աշխարհ
26 աւետարան
27 աւգնական
28 աւրհնութիւն
29 աւրինակ
30 այնուհետեւ
31 այսչափ
32 այնչափ
33 այսօր
34 այսօրիկ
35 այնօրիկ
36 առաջնորդ
37 առիւծ
38 առաջք
39 առաւօտ
40 առագաստ
41 արեգակն
42 արտեւան
43 արուեստ
44 արհամարհեալ
45 աստղ
46 Աստուածածին
47 աստիճան
48 ասպարէզ
49 ազգ
50 ազինք
51 ամաւթ
52 Բենիամին
53 բերան
54 Բաբելովն
55 Բարթողոմէոս
56 Բարսեղ
57 բամբասել
58 բազում
59 բարձր
60 բարերար
61 բազուկ
62 բարեբանեալ
63 բարբառ
64 բարի
65 բարեխնամ
66 բարբառել
67 Բիւզանդիոն
68 բորբոքել
69 Գալուստ
70 Գաբրիէլ
71 գարուն
72 գայթագղել
73 գեղեցիկ
74 Գէորգ
75 Գրիգոր
76 գիշեր
77 Գողգոթա
78 գործք
79 Դաւիթ
80 դատաւոր
81 Դանիէլ
82 դաստիարակ
83 դատաստան
84 դարձեալ
85 դահեկան
86 դրախտ
87 դրունք
88 դրամ
89 դուռն
90 դժոխք
91 դմա
92 եպիսկոպոս
93 Եփրեմ
94 Եղիազար
95 եղբայր
96 եղջիւր
97 եղիցի
98 երկինք
99 երկիր
100 երաժիշտ
101 Երեմիա
102 Եզեկիա
103 Եգիպտոս
104 եկեղեցի
105 Զաքարիա
106 Զաւրաբաբէլ
107 զաւրութեամբ
108 զաւրաւոր
109 զինուոր
110 զուարակ
111 զուարճ
112 զոր-աւրինակ
113 Իսայի
114 Իմանուէլ
115 է զարմանք
116 ընծերցուած
117 ընտիր
118 ըստ
119 թագաւոր
120 Թէոդոս
121 թեւ
122 թեւաւոր
123 թշնամի
124 թռչուն
125 ժամանակ
126 ժառանգաւոր
127 ժառանգ
128 ժողովուրդ
129 ժուժկալ
130 իշխան
131 իբրև
132 իսկզբանէ
133 իմաստութիւն
134 իւրեանց
135 իսկ
136 լեառն
137 լուսին
138 լուսաւոր
139 լեզու
140 լանջ
141 լուաւ
142 խորհուրդ
143 խոստովան
144 խոր
145 խորան
146 խնամ
147 ծաղիկ
148 ծառայ
149 ծնունդ
150 կաթուղիկոս
151 կաթուղիկէ
152 կարգ
153 Կոստանդիանոս
154 կոյս
155 կենդանի
156 կամ
157 հաւատար
158 հանդերձ
159 հանճար
160 հայր
161 հակառակ
162 հանդուրժել
163 համարձակ
164 հանգիստ
165 համբեր
166 հաստատ
167 համբարձ
168 հայհոյել
169 հեթանոս
170 հերձուած
171 հրեշտակ
172 համեմատ
173 հոգի
174 հմուտ
175 հիւանդ
176 հնազանդ
177 ձայն
178 ձեւ
179 ձեռն
180 ձեր
181 ղամբար
182 Ղուկա
183 Ղուկաս
184 ղեակ
185 ճանապարհ
186 ճառագայթ
187 ճնճղուկ
188 ճշմարիտ
189 ճգնաւոր
190 մարգարէ
191 մարդ
192 Մանասէ
193 Մատթէոս
194 մանաւանդ
195 մարմին
196 մահապարտ
197 Մարտիրոս
198 Մարիամ
199 Մովսէս
200 Մխիթար
201 Մելքիսեդեկ
202 Մեսրովբ
203 մեծամեծ
204 մեղաւոր
205 միջնորդ
206 մինչև
207 Յակովբ
208 յաւժար
209 յափշտակէ
210 յառաջագոյն

211 յաւիտեան
212 յանդիման
213 յաղագս
214 Յուդա
215 Յովսէփ
216 Յովհաննէս
217 Յովնան
218 Յուստիանոս
219 Յորդանան
220 լիշատակ
221 Նահապետ
222 Նաթան
223 նախանձ
224 Նաբուգոդոնոսոր
225 նահատակ
226 նոցա
227 նորա
228 նշխար
229 շաբաթ
230 շնորհ
231 որսէս
232 որովայն
233 որդի
234 որոգայթ
235 որդոց
236 ողորմեա
237 ողջակէզ
238 ողջոյն
239 ուրախ
240 ուխտաւոր
241 ուրեանց (?)
242 չարաչար
243 չարախաւս
244 չափաւոր
245 Պաւղոս
246 պատարագ
247 պատմուճան
248 պայծառ
249 պատճառ
250 պատշաճ
251 պարգեւ
252 պանդուխտ
253 պարկեշտ
254 պատերազմ
255 Պետրոս
256 ջրհեղեղ
257 ջնջել
258 Իրըտակէս
259 սահման
260 Սահմուէլ
261 Սաւուղ
262 Սարգիս
263 սանդուխք
264 սատանայ
265 սանդարամետ
266 սարկաւագ
267 Սաղմոս
268 Ստեփանոս
269 ստեղծ
270 սեղան
271 Սերովբէ
272 վարդապետ
273 Վարդան
274 վախճան
275 վասն որոյ
276 վասն զի
277 վասն այսորիկ
278 վիշակ (?)
279 վերուստ
280 Վրթանէս
281 տագնապ
282 տարապարտ
283 տատրակ
284 տաճար
285 Տրդատ
286 տրտում
287 տրտմեաց
288 տրտունջ
289 ցասումն
290 ցանգ
291 ցնծալ
292 Փարաւոն
293 փառք
294 փայտ
295 Փէնէհէս
296 Փիլիպոս
297 փոխանակ
298 փոխ
299 քահանայ
300 քաջալերեաց
301 քաղաք
302 քարոզ
303 քանզի
304 քարկոծ
305 քաղցր

Նոյն ձեռագրի վերջը 134-րդ թերթի երկրորդ էջի վերայ օտար գրչով գրուած են միւս 16 նշանագրերի բացատրութիւնները, իսկ 60—63 թերթերի լուսանցքներում եղած 11 նշանագրերը բացատրութիւն չունին։

ԳԼՈՒԽ Զ.

ՀՆՉԻՒՆԱԳԻՐ

Մեպագիր. դորա գիւտն եւ ընթերցուածը. Ֆրդ. Գրոտեֆենդ. պարսկական եւ ասորա-բաբելական սեպագիր. հայկական սեպագիր. դր. Մօրդտմանի ընթերցուածն. այդ ընթերցուածի արժէքը. թէ ինչո՞ւ մենք այս սեպագիրը հայոց գրի շարքն ենք դասում. հայոց սեպագիր արձանագրութիւնից բովանդակութիւնը. „Նայիրի“ երկրի իշխանները. հատուածներ Մասպէրօից եւ Լենորմանից. արձանագրութեան օրինակներ. սեպագրի հոմանիշը. սեպագրի ծագումը։



Ա

րդէն ասացինք, որ հնչիւնագիրը լինում է երկու տեսակ. ա. վանկագիր և բ. տառագիր։ Վանկագրի կարգին է պատկանում նաև սեպագիրը կամ *բեւեռագիրը* [1]։ Թէև ամենայն ճշտութեամբ չի կարելի ասել, թէ *ո՞րտեղից* է յառաջ եկել սեպագիրը, սակայն այս հարցով զբաղուող գիտնականների մեծ մասն այն եզրա-

[1]) „Keilschrift“ գերմաներէն և „cunéiforme“ ֆրանսերէն. այս անունը ստացել է այն պատճառաւ, որ բաւականին նմանութիւն ունի բեւեռի կամ սեպի հետ։

կացութեան է գալիս, որ դա «*Միջագետք*»ում [2]) բնակուող ազգերի արդիւնք պէտք է լինի։

Սեպաձև գրի ընթերցումը պատկանում է 19-րդ դարու նշանաւոր գիւտերի կարգին։ Սեպագիր արձանագրութիւնները առաջին անգամ յերևան բերին այն ճանապարհորդները, որոնք *Պերսեպօլսի* և հին պարսկաստանի այլ քաղաքների աւերակները այցելեցին։ Եւ որովհետև յայտնի էր, որ այդ աւերակ շինութիւնները մասամբ *Աքիմենեան* արքաների—այսինքն Դարեհ Վշտասպեանի և իւր յաջորդների—ձեռակերտներն էին, ուստի և իրաւամբ ենթադրուեցաւ, որ այդ արձանագրութիւնները ևս պատկանում են այդ արքաներին։ Մի սեպագիր արձանագրութեան տողերի դասաւորութեան ձևը գուշակել տուեց, որ դա պէտք է երեք լեզուներով գրուած լինի, բայց որովհետև պարսից արքաների հպատակները պատկանում էին տարբեր ազգութեանց, ուղղակի չէր կարելի ասել թէ ինչ լեզուներով էին խմբագրուած այդ արձանագրութեանց բովանդակութիւնը։ Այդ արձանագրութեանց գրի էութեան մասին նոյնպէս կարելի էր մի որ և է եզրակացութեան գալ, որովհետև շատ բառեր իւրեանց մէջ ահագին քանակութեամբ նշաններ էին պարունակում, ուստի և ակնյայտնի էր, որ այդ նշաններից իւրաքանչիւրը միմիայն վանկ չէ արտայայտում, այլ նաև տառ։ Որ այդ արձանագրութեանց գիրը սկսւում էր ձախից դէպի աջ—ինչպէս մեր գիրը—ապացուցանում էր այն հանգամանքն, որ տողերը ձախ կողմից հաւասարապէս միմեանց տակից էին սկսւում, այն ինչ աջ ծայրերը հաւասար վերջաւորութիւն չունէին և քարի մի մասը մնում էր անգիր։

[2]) Եփրատ և Տիգրիս գետերի մէջ գտանուած այս երկրի համար եւրոպացիք գործ են դնում „*Մեսոպոտամեայ*“ յունարէն բառն, իսկ սեմիտական լեզուով կոչւում է „*Արամնահարիմ*“։ Տես. Wuttke: Geschichte der Schrift und des Schriftthums. Հատ. I. էջ 608.

Այս արձանագրութեանց ընթերցման բանալին գտաւ գերմանացի «Ֆրիդրիխ Գրօտեֆէնդ»ի (Friedrich Grotefend) սրամտութիւնը։ Նա նկատեց, որ արձանագրութիւնները սկսւում են սովորաբար 3 կամ 4 բառով, որոնցից մէկը միշտ փոխւում էր, իսկ մնացածները նոյնն էին մնում։ Այդտեղից Գրօտեֆէնդ այն եզրակացութեան եկաւ, որ այդ փոփոխուող բառը պէտք է արքայի անունը լինի, իսկ միւս անփոփոխ բառերն՝ արքայի տիտղոսներն, որ ամեն արքայ ևս կրում է։ Այդ արքայ նշանակող բառերից մէկն աւելի յաճախ էր կրկնւում արձանագրութեանց մէջ, քան նոյնպիսի այլ բառեր. և որովհետև այդ բառի մէջ պարունակուած նշանները բաւականաչափ չէին «Արտաքսերքսէս» անունն արտայայտելու համար, իսկ միւս կողմից աւելի շատ, քան կարևոր էր «Կիւրոս» ասելու համար, ուստի մնում էր ընդունել, որ այդ բառը «Դարեհ» կամ «Քսերքսէս» պէտք է նշանակէր։ Եւ որովհետև այդ անունը կրող արձանագրութիւնները գտանւում էին այնպիսի յիշատակարանների վերայ, որոնց շինութիւնը հին մատենագիրները վերագրում էին Դարեհ արքային, ուստի և Գրօտեֆէնդ այդ բառի մէջ պարունակուած նշաններին այն տառերի նշանակութիւնը տուեց, որոնք գտնւում են Դարեհ (Դարիւս) անուան պարսկական ամենահին ձևի մէջ։ Այդպիսով արձանագրութեանց այդ բառի վեց նշաններն—իւրաքանչիւր սեպագիր բաղկացած է մի քանի սեպաձև գծերից—ստացան վեց տառի նշանակութիւն։ Նոյն եղանակաւ Գրօտեֆէնդ գտաւ «Քսերքսէս», «Արտաքսերքսէս» անուններն և դորա միջնորդութեամբ կազմեց մի փոքրիկ այբուբեն, որ և եղաւ այդ զարմանալի արձանագրութեանց ընթերցման բանալին [3])։

[3]) Այս տեղի ունեցաւ 1802 թուին. տես. Maspero: Geschichte der morgenländischen Völker im Altertum. էջ 567.

Գրոտեֆէնդից յետոյ սեպագիր արձանագրութեանց ընթերցման ասպարիզում նշանաւոր Հանդիսացան Bournouf, Lassen, Ravlinson և այլք, որ բոլորովին կատարելագործեցին այդ արուեստը։

Պարեհ Վշտասպեանի դամբարանի և Բեհիստանի ժայռերի վերայ գտանուող արձանագրութեանց գիւտը—որ Ռաուլինզոն ընդօրինակեց իւր Պարսկաստան եղած ժամանակ—պատճառ եղաւ վերոյիշեալ վերջին երկու գիտնականաց միևնոյն ժամանակ, սակայն միմեանցից բոլորովին անկախ, հին պարսկական այբուբենն ամբողջովին կազմակերպելու. երկուսի կազմած այբուբենները միմիայն մէկ սեպագրով էին տարբերւում միմեանցից [4]։

Ինչպէս արդէն յիշեցինք, արձանագրութեանց հին պարսկական բնագրի մօտ գտանւում էին նոյնպէս երկու տարբեր լեզուներով գրուած արձանագրութիւններ և ահա դոցա թարգմանութեանց ընթերցումը նոյնպէս յաջողուեցաւ և երևեցաւ, որ դոքա գրուած են սեմիտական լեզուով։ Եւ երբ Ասորեստան և Բաբելոն երկրների մէջ գտանուած յիշատակարանների արձանագրութիւնները քննուեցան, բանից երեւաց, որ դոցա լեզուն համապատասխանում է պարսից յիշատակարանների երկրորդ կարգի արձանագրութեանց լեզուին. այս գիւտի պարզ եզրակացութիւնն եղաւ այն, որ վերջինները պէտք է ասորա-բաբելական լեզուով գրուած լինէին։ Այդպիսով հին պարսից արձանագրութեանց թարգմանութեան բնագիրն եղաւ բանալի այն բոլոր ասորա-բաբելական յիշատակարանների արձանագրութեանց ընթերցման, որոնք հետզհետէ գտանուեցան այդ երկրներում։ Նինուէի գիւտն [5] և

[4]) Տե՛ս. T. H. Sayce: Alte Denkmäler im Lichte neuer Forschungen. էջ 1—8։

[5]) Որ տեղն ունեցաւ 1846 թ. Մ. սուլի ֆրանսիական դեսպան „Բօտտա"ի հետազօտութեամբ։

Լայարդի հետազօտութիւնները—1849—1851—յերևան բերին ահագին քանակութեամբ յիշատակարաններ և գրականական մնացորդներ այն հին ժողովրդների, որոնց գոյութիւնն արդէն մոռացութեան էր տրուել։

Սեպագիրը արձանագրութեանց ընթերցման շնորհիւ յայրութիւն առաւ գերեզմանից ամբողջ երեսուն դարու պատմութիւնը։ Նինուէի աւերակաց [6]) հետազօտութեան նշանաւոր հետևանքներից մէկն էր այդ հին մայրաքաղաքի արքայական մատենադարանի մնացորդների գիւտը։ Այս մատենադարանի կաւից շինուած և կոտրտուած տախտակները գիտնականներին ոչ թէ միայն նոր նիւթ մատակարարեցին ասորա-բաբելական գրականութեան ուսումնասիրութեան համար, այլ և ուղղակի օժանդակիչ միջոց եղան ասորական լեզուի և գրի հետազօտութեան համար։ Ի միջի այլոց գտնուեցան և այնպիսի այբուբեններ, որոնք բացատրում էին սեպագրի նշանակութիւնն և իւրաքանչիւրին համապատասխանող բառն ու տառը։

Յառաջ ենք բերում Պարեհ Վշտասպեանի սեպագիր արձանագրութեան մի հատուած թարգմանութեան հետ իւ միասին։

«Ու	դա	-	բի	-	ես	-	փա	-	ու	-	իշ	գա	իր	-	գա	-	իր	-	բա
Ես			Դարեհ									արքայ					մեծ		
«գա	իր	-	գա	-	իր	ու	ի	-	նա	-	գա	-	ան	սին	-	իկ	-	կա	
արքայ			արքայից			ես			արքայ					պարսից					
«գա			դա	-	ա	-	ես	-	ու	-	իշ	-	նա	նա		ու			
արքայ							գաւառների							ես					
«փ	-	իս	-	դա	-	աշ			բա	-	գա	-	ակ	-	բի	իր	-	գա	-	մա
Վշտասպի									որդի							Արքամայ			

[6]) Որի տեղն այժմ գտանւում է „Կոյունջիկ" գիւղը. տես. Sayce նոյնը. էջ 8.

«րու - ա - հու սա - բի - ակ - բի հա - կա - մա - նու - սի - եա».
Թոռն Ա.քիմենեան [7]։

Սեպագրի ընթերցման այս [համառօտ պատմութեամբ բաւականանալով՝ անցնենք «Հայոց» կամ «վանայ» կոչուած սեպագիր արձանագրութեանց։

Թէև սեպագրի գործածութեան մասին մեր մատենագիրները ոչինչ չեն հաղորդում, սակայն այն բազմաթիւ արձանագրութիւններն, որոնք գրուած են սեպաձև գրով և գտանւում են Հայաստանի զանազան կողմերում, ակնյայտնի վկայում են, որ դա մի անգամ գործածական գիր է եղել Հայաստանում։ Այդ արձանագրութիւններից առաջին տեղը բռնում են Վանայ սեպագիր արձանագրութիւնները։

Մովսէս Խորենացին զարմանալի կերպիւ ճիշտ և կենդանի նկարագրելով Վանայ դիրքն և ամրոցի շինութիւնը Նամիրամին վերագրելով՝ լիշում է նաև, որ նա քարերի վերայ գրել տուեց և մի և նոյն գրով յիշատակարաններ և արձաններ կանգնեցրեց և սահմաններ որոշեց. «...իսկ ընդդէմ արեգական կողմն անձաւին, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց։ *Իսկ զամենայն երեսս քարին իբր զրչաւ զմոմ հարթել, բազում գիրս ի նմա գրեաց, որոց հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ։ Եւ ոչ միայն այս, այլ և բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել.* և բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր» [8]։

Հաւանականաբար Խորենացու այս կենդանի նկարագրու-

[7]) Տես. Faulmann: „Geschichte der Schrift“ էջ 343.

[8]) Տես. Մ. Խորենացի. պատմութիւն Հայոց։ գիրք Ա. գլխ. ժգ. էջ 58.

թիւնը պէտք է առիթ տար Հայագէտ գիտնական «Սէն-Մարտէն»-ին—Saint-Martin—հասարակութեան ուշադրութիւնը դարձնել Վանայ հնութեանց վերայ, որ արձագանգ գտնելով ֆրանսիական կառավարչական շրջաններում, ուսուցչապետ Շուլց—Schulz—ուղարկուեցաւ Հայաստան՝ այդ հնութիւնները հետազօտելու։ Պրօֆ. Շուլց 1828 թ. գալով Վան՝ ընդօրինակեց քաղաքում և նորա շրջականերում գտանուող քառասուն և երկու (42) սեպագիր արձանագրութիւններ և ուղարկեց Պարիզ [9]. սակայն դժբաղդաբար ինքը զոհ գնաց Քրդերի աւազակաբարոյ վարմանց։

Այս քառասուն և երկու արձանագրութիւններից երեքը պատկանում են Ա.քիմենեան «Քսերքսէս» արքային, իսկ մնացած 39 արձանագրութիւնները մի տեսակ հանելուկ էին ներկայացնում գիտնական աշխարհին, որովհետև յայտնի չէր թէ դոքա ո՞ր լեզուով են գրուած, թէև սեպագրերից շատերը ակնյայտնի նմանութիւն ունէին ասորա-բաբելական սեպագրերի հետ։ Դժուարութիւններից մէկն էս այն էր, որ դոցանից ոչ մէկը չունէր իւր արձանագրած թարգմանութիւնն, ինչպէս բազմաթիւ ասորա-բաբելական արձանագրութիւններն ունին։

1848 թ. անգղիացի գիտնական Եդ. Հինկս—Hincks—հետազօտելով այդ արձանագրութիւնները՝ այն եզրակացութեան եկաւ, որ դոցա լեզուն արիական ծագումից է և *Հայերէն*։

Այս ենթադրութիւնն առիթ է տալիս արևելագէտ դր. Ա. Մօրդմանին Կ. Պօլիս եղած ժամանակ ուսումնասիրելու Հայոց լեզուն։ Բացի դորանից նորան յաջողւում է եղբարք Ալիշեաններէ և այլոց մէջնորդութեամբ ուղթը հատ այլ նոր սեպագիր արձանագրութեանց օրինակներ ձեռք բե-

[9]) Այդ արձանագրութիւնները հրատարակուեցան 1840 թ. „Journal Asiatique“-ի մէջ։ Տես. № 52.

րել և 1872 թ. հրատարակել իւր Հետազօտութեանց արդիւնքը «Վանայ և շրջակայից Հայերէն սեպագիր արձանագրութեանց ընթերցումն և բացատրութիւնը» ընդարձակ յօդուածով [10]: Այս յօդուածի մէջ Մօրդման բացատրում է, որ իրեն յաջողուել է կարդալ այդ արձանագրութիւնները ասորա-բաբելական սեպագրի և Հայոց լեզուի օժանդակութեամբ. և յառաջ է բերում բոլոր արձանագրութեանց բովանդակութիւնը: Նորա ասելով այդ արձանագրութիւնները պատկանում են հինգ (5) արքաներին և այդ պատճառաւ դոցա հինգ մասի է բաժանում.

1) Արձանագրութիւնները «Բագրիդուր» [11]) I-ի
2) » «Իսբուինիա» արքայի
3) » «Մինուաս» »
4) » «Արգիստիս» »
5) » «Բագրիդուր» II,

որոնցից առաջինին նա համեմատում է Խորենացու [12]) «Պարոյր»ի [13]), երկրորդին «Հրաչեայ»ի [14]) և երրորդին «Փառնուաս»ի հետ: Արգիստիս Մինուասի որդին է, իսկ Բագրիդուր II Արգիստիսի:

Թէև մենք գնահատում ենք դր. Մօրդմանի քրտնաջան աշխատութիւնը, սակայն այնուամենայնիւ այդ չէ արգելում մեզ ասել, որ նա ոչ թէ իսկապէս կարդում, այլ մեծ մասամբ ենթադրութիւնները է յառաջ բերում [15]). որպէս զի մեր ասածն անհիմն չը թուայ, յառաջ բերենք մի քանի օրինակներ:

Վանայ արձանագրութիւններից համարեա իւրաքանչիւրի մէջ գտնւում է սեպագրի մի որոշ խումբ, որի առաջին մասը աստուածութեան նշանացոյցն է, երկրորդն ասորական սեպագրի մէջ նշանակում է «քալ». երրորդը «դի», ուրեմն աստուածութեան անունը պէտք է լինի «Քալդի» —և այդպէս էլ կարդում են Օպէրտ (Oppert) և Ռաւլինզօն (Rawlinson) արևելագէտները: Սակայն Մօրդման չէ կամենում այդպէս կարդալ, որովհետև, ասում է նա, եթէ Հայոց նշանաւոր աստուածութիւնն այդ անունը կրէր, անպատճառ յայտնի կը լինէր այդ յունաց և պարսից գրականութեան մէջ և Հայոց մէջ էլ մի լիշատակութիւն թողած կը լինէր. վասն զի անկարելի է, որ ժողովրդի պաշտամանի գլխաւոր առարկան անյայտութեան մէջ մնար: Մի էլ կողմից Մօրդմանին յայտնի է, որ Հայոց գլխաւոր չաստուածը կոչւում էր Անահիտ ուստի և դժուար չէ այդ անունն արձանագրութեանց մէջ էլ մտցնել և ահա նա «Քալդին» կարդում է «Անաիդի» կամ Անաիդ—Անահիտ. և այդպիսով նա համարեա իւրաքանչիւր արձանագրութեան սկիզբը թարգմանում է. «Ողորմութեամբն Անահտա»—Անաիդի—: Մեր

[10]) Dr. A. D. Mordtmann: Entzifferung und Erklärung der armenischen Keilschriften von Van und der Umgegend. տես. Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft. Հրատարակութեան 26-րդ Հատորը. էջ 465.

[11]) Վերջին և նորագոյն ընթերցուածներն այս անունը կարդում են «Մարիդուրիա». տես. F. Lenormant: Histoire ancienne de l'Orient. Հատ. IV. էջ 245.

[12]) Տես. Մ. Խորենացի. պատմ. Հայոց. գիրք Ա. գլխ. իբ. էջ. 71.

[13]) Տես. Mordtmann նոյնը. էջ 486.

[14]) Տես. Mordtmann: նոյն էջ 521.

Որովհետև „Հրաչեայ" անունը գոնէ մօտաւորապէս չէ համապատասխանում „իսբուինիա"ին, Մօրդման այն սրամիտ բացատրութիւնն է տալիս, որ Խորենացուն անյայտ է եղել իսկապէս Պարոյրի որդու անունն, ուստի և միայն „Հրաչեայ" է կոչում նորան՝ կարմիր աչքեր ունենալու համար (!!).

[15]) Հին արձանագրութիւնները բացատրելու համար՝ բաւական չէ գրի արուեստի գիտութիւնն, այլ պահանջւում է նաև արձանագրութեան լեզուի հմտութիւն, որոշ աստիճանի ճշտութիւն, առողջ դատողութիւն և լայնածաւալ հայեացք. միայն այս կամ այն բառի կամ խօսքի պոչից բռնելով՝ անկարելի է յաջողութիւն ունենալ:

նպատակից դուրս կը լիներ այստեղ ընդօրինակել այդ արձանագրութեանց ամբողջ բովանդակութիւնը. սակայն իբր օրինակ յառաջ ենք բերում մի քանի հատուածներ.

I. «Թող Անահիտն ողորմած լինի Մինուասին, Իսբուինիսի որդուն. հզօր արքային, ողորմած արքային. Բիանայի և լուսապայծառ Տօսպ քաղաքի արքային».

II. Բագրիդուր, Լուտիպրիսի որդին, մեծ արքան, հզօր արքան, զօրախմբի արքան, մեդացոց արքան ասում է. ես կանգնեցի (այս շինութիւնը).

III. «Արգիստիս Մինուասի որդին ասում է. (կամ խօսում է) Անահիտը թոյլ տուեց, Անահիտի օգնութիւնը թոյլ տուեց. ողորմութեամբն Անահտայ դուրս եկայ ես զօրքով Բուսպարուից և պաշարմամբ տիրեցի Ասկայա, Սատիրաուն, Բարցուն և Ուգիւտի երկրներն և ապա զէնքի ուժով Ալանաց, Ուզիացոց և Բակացոց երկրներն.... Ես տիրեցի քաղաքների ամրութիւններն ու բոլոր արանց և կանանց: 1863 գինուորներ մասամբ սպանել տուի, մասամբ գերեցի... 20 ձի, 130 բեռնակիր ձիեր, 500...» [16]:

Որպէս զի կարողանանք ըմբռնել թէ ինչպէս է Մօրդման կարգացած բառերի նշանակութիւնը հասկանում, անհրաժեշտ է մի քանի օրինակներ յառաջ բերել նորա բացատրութիւններից:

1) ,,առաէ'' խօսքը նա թարգմանում է „er spricht" —նա ասում է կամ խօսում է, և դուրս է բերում հայերէն ,,ասէ''ից (էջ 469):

2) ,,հուկան'' բառը նորա ասելով պէտք է նշանակէ ոք, քան:

3) ,,քուր''—նշանակում է ,,հուր'' (էջ 518):

---

[16]) Տես. Mordtmaun նոյն էջ 587.

4) ,,տիտունի'' բառը պէտք է հայերէն ,,դնել'' բառից լինի:

5) ,,վաղինի'' համեմատում է ,,Աւետիք'' բառի հետ. (էջ 118):

6) ,,արմանիդատ'' — նշանակում է ,,հրաման տալ'' (էջ 522):

7) ,,իեցի''—նշանակում է ,,ես'' (էջ 525):

8) ,,սահնուկան''—նշանակում է ,,սենեակ'' (էջ 528):

9) ,,բարսուղիբիդունի'' բառը նա այսպէս է բացատրում. ,,սա մի բաղադրեալ բառ է, վերջին մասը ,,դունի'' ծագում է ,,դուն'' բառից. իսկ առաջինն է ,,բարիսբ'', ,,բարիսբադել'' ,,բարսբադուն'' (!!). բայց որովհետև այդ արձանագրութեան շրջակայքում այդպիսի բան չկայ, ենթադրում է, որ ,,Բարսուղիբի դունի'' առաւել մօտ պէտք է լինի ,,բաճուճաբադան'' (!!) բառին, որ նշանակում է մի տեսակ հասարակ շինութիւն՝ արձաններն իւր մէջ պարունակելու համար [17]) (էջ 535):

10) ,,արկեցի'' նշանակում է արքայ (էջ 537):

11) ,,մասինի'' համապատասխանում է ,,մեծ''ին (էջ 540):

12) ,,ակար''—նշանակում է ,,ազարակ'' (էջ 541):

13) ,,սիղա''—նշանակում է ,,շատ'' (էջ 541):

14) ,,արուբի''—նշանակում է ,,առնուլ'' (էջ 551):

15) ,,հուցի'' բառը համանիշ է համարում հայերէն ,,խոյ'', ,,ոչխար'' և ,,ղուզի'' [18]) բառերի հետ (էջ 563):

---

[17]) Այս հատուածից պարզ երևում է, որ դր. Մօրդման փոխանակ մեր հին, կլասիկական, լեզուն սովորելու, սովորել է տաճկահայոց բարբառը. այդ է պատճառը, որ նա ,,դուն'', ,,բարիսբ'', ,,բաճուճաբատան'' է ասում՝ փոխանակ ,,տ''ուն, ,,պ''արիս,,պ'', ,,պ''աճուճա,,պ''ատան և այլն:

[18]) Զարմանալի է, որ Մօրդման այս օտար բառը ,,հայ-ժողովրդական''—„vulgär—armenisch" բառ է անուանում:

Աղճիւ բառը. . . սակայն բաւական է այսչափ։ Այսպիսի համայական բացատրութիւնները իւրաքանչիւր ոք կարող է տալ—սակայն դոքա գիտնական արժէք չեն կարող ունենալ։

Դր. Մօրգման չէ բաւականանում բառերի նշանակութեան այդ ենթադրութիւններով, այլ և յայտնում է այն կարծիքն, որ այդ սեպագիր արձանագրութեանց լեզուն պէտք է հայոց ամենահին գրչաճաճական լեզուն լինէր. նա Հայերէնը բաժանում է երեք շրջանի. I սեպագիր արձանագրութեանց լեզուն—այսինքն իւր հնարածը—II դրաբարը և III այժմեան աշխարհաբարը [19]։ Սակայն իւր յառաջ բերած օրինակներից և բացատրութիւններից կարելի է նաև եզրակացնել, որ գրաբար լեզուն գոյութիւն չի ունեցել, այլ տաճկահայոց բարբառը ծագել է այդ արձանագրութեանց լեզուից կամ ընդհակառակը։

Թէ ինչ գիտնական արժէք ունի Մօրգմանի թարգմանութիւնն և բացատրութիւնը—ճշտութեան կողմից—կարելի է եզրակացնել նաև հետևեալ փաստից։ Նա իւր առաջին աշխատութեան—որի մասին ցայժմ խօսում էինք—լոյս տեսնելուց հինգ տարի յետոյ՝ հրատարակեց դարձեալ մի աշխատութիւն. «Հայոց սեպագիր արձանագրութեանց մասին» [20] և պաշտպանելով իւր առաջուայ բացատրութիւններն, ուղղում է մի քանի (?!) սխալները։ Յառաջ բերենք այդ «փոքր» (?) սխալներից միայն մէկը.

Առաջին յօդուածի մէջ Մօրգման համարեա իւրաքանչիւր արձանագրութեան սկիզբը կարդում էր—«ողորմութեամբն Անահտայ», այժմ, երկրորդ յօդուածի մէջ ասում է, որ այդ սխալ է և պէտք է կարդալ «ոսկէ Անահտայ համար», որով-

[19]) Տես. Mordtmann նոյն էջ 687.

[20]) Mordtmann: „Ueber die Keilinschriften von Armenien". տես. Zeitschrift d. d. morgenl. Gesellschaft. Հատ. 31. էջ 406.

հետև արձանագրութեանց մէջ եղած «ուսգինի» բառը նա փոխել էր «ուսվասինի», այժմ ասում է, որ պէտք է «ուսգինի» թողնել. և այդ բառն «ոսկի» գոյականի ածականն է։ Սակայն որտեղից յառաջացաւ այդպիսի մի բոլորովին միմեանց հետ առնչութիւն չունեցող բառերի փոխոխութիւն—«ողորմութեամբ» և «ոսկէ»—դժուար չէ բացատրել։ Մօրգմանին յայտնում են [21]), որ մեր հին գրականութեան մէջ Անահիտը կոչւում է «ոսկեծին», «ոսկեմայր», «ոսկեհատ». իսկ արձանագրութեան մէջ եղած «ուսգինին» նմանութիւն ունի «ոսկի» բառի հետ, ուրեմն պէտք է կարդալ փոխանակ ողորմութեամբն Անահտայ, «ոսկէ Անահտայ համար» [22])։

Դր. Մօրգմանի յառաջ բերած այս փաստերը գոհացուցիչ չը լինելով՝ հարկաւ նորա տեսութիւնն էս չ'ընդունեցաւ գիտնական աշխարհում. [23]) և ոմանք ո՛չ թէ միայն մերժեցին այդ արձանագրութեանց լեզուն հայերէնին մօտեցնելու թէօրիան, այլ և կասկած յայտնեցին՝ թէ արդեօք

[21]) Մօրգման իւր յօդուածի մէջ շնորհակալութիւն յայտնելով Խորէն Նաբէհեայ սրբազանին, յայտնում է, որ նորա հետ միասին կարդացել բոլոր արձանագրութիւնները։

[22]) Ասացինք, որ դր. Մօրգման „Անահիտ" բառը հանել է „քալդի"—„քաղդի" բառից, ուստի և եթէ մէկը նորան ասէր, որ մեր գրականութեան մէջ յաճախ հիշւում են „քաղդէացիք", գուցէ նա թողնելով „Անահիտ"ը „քաղդէացի" կարդար և „ուսգինին" էս „Ոսկան". այդպիսով փոխանակ „ողորմութեամբն Անահտայ" կամ „ոսկէ Անահտայ համար" ասելու, կարող էր թարգմանել „քաղդէացի Ոսկանի համար"։

[23]) Հայր Գաբրիէլ Զարբհանալեան իւր „Հայկական հին դպրութեան պատմութիւն" աշխատութեան մէջ խօսելով Մօրգմանի մասին՝ ասում է. „իր կարծիք եւ զրոյթիւն բաւական հոչակ եւ ընդունելութիւն գտաւ" (?). սակայն ինքն էս զգալով այդ տողերի չափազանցութիւնը՝ մեղմացնում է իւր ասածն աւելացնելով. „զկնի առջի բերան". տես. Հատ. I. էջ 16։ (Երկրորդ տպագրութիւն)։

արձանագրութեանց լեզուն պատկանում է Հնդկա-գերմանական ճիւղին։ Վերջին ժամանակներում այս խնդրով զբաղուող հետազօտողներից մէկը—Sayce—այն եզրակացութեան եկաւ, որ Վանայ և շրջակայից արձանագրութեանց լեզուն չէ պատկանում Հնդկա-գերմանական ճիւղին և առաւել ազգակից է *վրաց* լեզուին. սակայն այս ևս ենթադրութիւն է, որովհետև հիմնական փաստերը պակասում են։—Ֆր. Լենորմանն առաջինն եղաւ, որ ցոյց տուեց Վանայ սեպագիր արձանագրութեանց լեզուի ազգակցութիւնը վրաց լեզուի հետ՝ համեմատելով այդ երկու լեզուների հոլովումները. նա ասում է նոյնպէս, որ այդ արձանագրութեանց «իդէօմները»—նշանագոյցները—ամենևին նմանութիւն չունեն այժմեան հայերէնի հետ։

Թէև դեռ ևս վճռական կերպիւ չէ որոշուել Վանայ կամ հայոց սեպագիր արձանագրութեանց լեզուն, սակայն այնու ամենայնիւ այդ սեպագիրը մենք դասեցինք հայոց գրի զարգացման ընթացքի մէջ, վասն զի

ա. Այդ արձանագրութիւնները գտանւում են Հայաստանի զանազան կողմերում, ուրեմն բաւականին տարածուած են։—Յայտնի է, որ բացի Վանայ սեպագիր արձանագրութիւններից Հայաստանի այլ կողմերում ևս գտանուել են այդպիսիք. 1840 թ. պրուսական Հարիւրապետ Ֆօն Մ ի ւ լ բ ա խ ը—Mühlbach—«Իզօգլու» դիւղի—Եփրատի վրայ—մօտ, ոչ հեռու Մալաթիայից, գտաւ մի ընդարձակ սեպագիր արձանագրութիւն՝ նման Վանայ արձանագրութեանց, որ հրատարակուած է Monatsberichten... für Erdkunde zu Berlin ամսաթերթի մէջ (առաջին տարի, 1840)։ Իսկ Մեսրոպ եպիսկոպոս Ս մ բ ա տ ե ա ն ի Արմաւիր և Յօլակերտում գտած սեպագիր արձանագրութիւնները հրատարակուած են «Արարատ» ամսագրի մէջ [24])։

[24]) Տես. „Արարատ" 1869 թ. Հոկտեմբեր և Նոյեմբեր. 1870 թ. փետրուար №. №. այս արձանագրութիւնները հրատարակեց նաև Ֆ ր դ. Մ ի ւ լ լ ե ր. տես. Sitzungsberichte etc. Wien. Հատ. 65. էջ 595.

բ. Առաջին փաստից ակնյայտնի երևում է, որ սեպագիրը Հայաստանում բնակուող ժողովրդի սեպհական գիրն էր։

գ. Թէև նման, բայց այնու-ամենայնիւ տարբերութիւն ունի ասորա-բաբելական և պարսկական սեպագրերից։

դ. Ո՛չ միայն սեպագրով զբաղուողներն, այլ և եւրոպական բոլոր արևելագէտ *պատմաբանները* այդ արձանագրութեանց *պարունակութիւնն* ընդունում են իբրև *հայոց պատմութիւն*։

Է դ ո ւ ա ր դ Մ ա յ ե ր իւր «Հնագարեան պատմութեան» (geschichte des Alterthums) առաջին հատորի մէջ յառաջ բերած Վանայ արքաների պատմութիւնները [25]) շարահիւսել է՝ հիմնուելով Sayce-ի եզրակացութեանց վերայ։

Վանայ բոլոր սեպագիր արձանագրութիւնները, բացի չորսից—որոնք Ուրցանայի և Մուսասիրի կնիքն են կրում—պատկանում են մի և նոյն շրջանին և յառաջ են բերում այն հինգ (5) արքաների անուններն, որ թագաւորում են Վանում [26])։ Սոցա պաշտօնական տիտղոսը նոյնն է, ինչ որ «Բիաինա»-ի արքաներինը—«*Բիաինա*» անուան մէջ դիւրութեամբ կարելի է գտնել «Մաննա» կամ Վան։—Սոքա թագաւորում են ժառանգաբար (90) իննսուն տարի—835-ից 745 թ. Քրիստոսից առաջ։ Այս հինգ արքաների անուննեբը հետևեալներն են. 1) Սարիդուրիս I. [27])

[25]) Այդ մասը մենք ամբողջապէս հրատարակել ենք „Արձագանք" շաբաթաթերթի 1884 թ. 37 №։

[26]) „Նայիրի" դաշնակցութեան մէջ ամենանշանաւորը Հանդիսանում է „Մաննա" կամ „Վաննա"—„Վանայ"—թագաւորութիւնը. այս անունը սր. գրքի մէջ յիշւում է „Մինի", իսկ յունաց մի քանի հեղինակներն անուանում են „Մինուա"։ Տես. Lenormant: Histoire Anc. de l'Orient հատ. IV. էջ 245։

[27]) „Սարիդուրի", „Սիրդուրի" կամ „Սարդուրի" պատերազմում է 833 թ. „Սալմանասար" II-ի հետ. սա համաբուում է Վան

2) Խսլուինխա
3) Մինուա
4) Արգիստիս [28])
5) Սարիդուրիս II.

Սմենից հետաքրքիր իրողութիւնն այն է, որ այս արձանագրութիւններից *միայն երկուսն*, որ պատկանում են առաջին արքայ «Սարիդուրիս» I-ին՝ *խմբագրուած են ասորական լեզուով*. այս երկու արձանագրութեանց մէջ ինքը, իշխանը կոչւում է «*արքայ Նայիրի աշխարհի*»: Այստեղից կարելի է եզրակացնել, ասում է իրաւամբ Համբաւարձն Լընօրմանը, որ «Սարիդուրիս» մեծ ցանկութիւն ունենալով իւր ժողովրդեան ճանօթացնելու՝ զրի և ասորա-քաղդէական քաղաքակրթութեան հետ, կանչել տուեց ասորական գրողներ այդ արձանագրութիւնները կազմելու համար և անշուշտ այս արքան է, որ իւր ազգի լեզուն գործ դրեց սեպագիր արձանագրութեան համար, որովհետև իւր որդի «Խսլուինխի» արձանագրութիւնները և սորա յաջորդներինը *առանց բացառութեան* կազմուած են տեղական լեզուով:

«Սարիդուրիս» II-ին յաջորդող իշխանների պատմութիւ-

քաղաքի հիմնադիրը: Տես. Mayer: Geschichte des Alterthums. Հատ. I. էջ 412:

[28]) Լայարդ կարդացել է Վանայ մօտ գտանուած սբ. Սահակ եկեղեցու մէջ գտանուած այս արքայի երկու արձանագրութիւնները—սոցա ընդօրինակութիւնը գտանուում է Լօնդօնում—որոնցից մէկը պարունակում է 40, իսկ միւսը 26 տողը, որոնք և պատկանում են Արգիստիսի թագաւորութեան ժամանակին. այդ արձանագրութիւններից մէկը թւում է արքայի պատերազմներն, ուր նա 453 քաղաքներ է տիրապետել. 105 տաճարներ և պալատներ այրել, 25,170 գերի տարել. նոյնպէս 2,734 սպա, չափազանց բազմաթիւ կանայք և երեխայք գերել. 73,700 ոչխար և բազմաթիւ եզն և այլ կենդանիներ քշել: Տես. Lenormant, նոյնն, հատ. IV. էջ 292:

նը շատ մութն է. դոցա մասին համարեա ոչինչ չգիտենք, բացի դոցա անուններից, որոնք գրուած են մի *բրօնզեա վահանի վերայ*, որ Rassam 1876 թ. գտաւ Վանում: Այդ անունները հետևեալներն են.

1) Ուբաա
2) Արգիստիս II.
3) Էրիմենոս
4 Ռուզա
5) Սարիդուրիս III.
6) Ասբելի
7) Ուալլիս:

Դոցանից առաջինն ապրում էր «Սարգօն»ի ժամանակ, իսկ վերջինը ժամանակակից էր «Ասուրբանիպալ»ի: Երբ Տրգլաթպալասար II-ի ձեռքով ասորական հզօր իշխանութիւնը կրկին վերականգնեցաւ, Բիւինայի արքաներն ընկճուեցան և նոցա իշխանութիւնը վերջացաւ:

Ինչպէս արդէն լիշեցինք, հայոց սեպագիր արձանագրութեանց պատմական բովանդակութիւնը բաւական ընդարձակ կերպիւ յառաջ է բերել Mayerը իւր պատմութեան մէջ և որովհետև այդ հատուածն ամբողջապէս հրատարակուած է (տես. ծթ. 25) հայերէն, աւելորդ չենք համարում այստեղ յառաջ բերել նաև Մասպերօ—Maspero—Ֆրանսիացի հըրչակաւոր արևելագէտի աշխատութիւնից մի հատուած [29]):

‹ . . . Երբ Եգիպտոսն ընկճուեցաւ, կարգը հասաւ ‹Ուբարտի›ին: Այն ժամանակ այն լեռնոտ երկրում, ուր Տիգրիս ու Եփրատ գետերն են բղխում, բնակւում էր ոչ այժմեան հայկական ցեղն, այլ վրաց և կովկասեան մի քանի այլ ազգերի հետ ազգակցութիւն ունեցող մի ցեղ: ‹Ուբարտին› բաժանւում էր բազմաթիւ փոքրիկ պետութիւնների, որոնց անունները թէև յայտնի են, սակայն քարտէզի վերայ դոցա


---

[29]) Մեր ձեռքն է այդ աշխատութեան գերմաներէն համառօտ թարգմանութիւնը. „Maspero: Geschichte der morgenländischen Völker im Alterthum“ übersetzt von R. Pietschmann.

մի որոշ տեղ տալը դիւրին չէ. այդ պետութիւններն են· «Նայիրի»՝ ուր գտանուում են Տիգրիսի և Եփրատի ակունքները. «Մաննա»—Վան—Վանայ ծովից դէպի հարաւ-արևելք և «Մուսասիր»—Սրմխա—դէպի հիւսիս. «Միլդիսքերզի»ի—այժմեան Սրզրումի նահանգը—և «Միլիդ»ի—Մելիտինէ—իշխանութիւնները և վերջապէս «Ուրարտի» կամ «Արարտի»—Արարատեան—որին յաջողուել էր դրացի ցեղերից մի դաշնագրութիւն կազմել։

Տուկլատ-Հաբալ-ասար I յարձակուեցաւ «Նայիրի» երկրի վերայ. իւր յաջորդները մեծ մասամբ տիրեցին այդ երկրին, այնպէս որ իններորդ դարում—Քրիստոսից առաջ—համարեա վերին Տիգրիսի ամբողջ երկիրը հպատակում էր կամ հարկատու էր Ասորեստանցիներին։ Ասուր-նազիր-հաբալ ընկճեց «Մաննա»ն. Սալմանասար III յարձակուեցաւ «Ուրարտի»ի վերայ։ Նա յաղթեց 841 թ. «Արամէ» արքային. 832 թ. նորա յաջորդ «Սադուրի»ին և 830 թ. «Մաննա»ի թագաւորի զօրքերին. մի տարուց յետոյ «Ուրարտի»ի զօրքերին. սակայն այս ամենն առանց հետևանքի էր մնում, վասնզի թշնամիները ընկճուելուց անմիջապէս յետոյ՝ կրկին ապստամբում էին։ Բին-Նիրարի III 813—804 թ. երկու պատերազմական արշաւանք արեց «Մաննա»ի դէմ և Սալմանասար IV չեռնաբկեց չորս պատերազմական արշաւանք—787—784, ընդդէմ «Ուրարտի»ի և դորանից յետոյ կրկին երկու—782—780։ *Ուրարտին* Ասորեստանցոց հետ յարաբերութեան մէջ մտնելով քաղաքակրթուեցաւ և ընդօրինակեց իւր թշնամիների արուեստները և մինչև անգամ գիրը—գրելու արուեստը։ Այդ երկրի արքաներից մէկը «Իլիդդուրիս» I «Լուտիբրի»ի որդին, Նինուէից բերել տուեց գրողներ, որոնք իւրեանց լեզուով նորա համար պաշտօնական արձանագրութիւնները գրեցին և ասորական թագաւորների տիտղոսները շուայլաբար նորան նուիրեցին. Նինուէական *իդէոմը*, նշանագոյցը, տարբինների ընթացքում «Ուրարտի»ի գիտնականների լեզուն էր,

(III.)



ՀԱՅՈՑ ՍԿԶԱՆԱԳՐԱՐՈՒԹԻՒՆ

որ յետոյ՝ «Բիլիդդուբիա»ի որդի «Իսբուինիա» I-ի իշխանութեան ժամանակ այդ գիրը մի քանի փոփոխութիւններով գործադրուեցաւ տեղական լեզուով գրելու համար» [30]։

Սակայն աւելի հետաքրքիր է Լ ե ն օ ր մ ա ն ի հայոց սեպագիր արձանագրութեանց ուսումնասիրութեան եզրակացութիւնն, որ ամփոփուած է հետեւեալ հատուածի մէջ. «Հայկական սեպագիր արձանագրութեանց ընթերցման ամենաչքի ընկնող հետեւանքն այն է, որ «Նայիրի»ի ժողովուրդները կամ ազգերը—les peuples—ունեցել են միեւնոյն կրօնն, ինչպէս որ բոլորն էլ մի ցեղ են կազմում։ Պաշտուած աստուածներն ամենայն տեղ միեւնոյնն են, ինչպէս որ ցոյց են տալիս Սրզրումի, Վանայ և Պալուի շրջականերում գտնուած յիշատակարանները։ Թէպէտ Հայաստանը բաժանուած էր բազմաթիւ քաղաքական իշխանութեանց, սակայն երկրի տեղագրական, լեզուի եւ կրօնի միութիւնը կապակցում էր այդ ժողովրդների զանազան մասերը միմեանց հետ։ Դոցա կրօնի մէջ իշխում է գլխաւորապէս մի գերագոյն երրորդութիւն. առաջին աստուածը կոչւում է «Հալդիա»—Քաղդի—մէս երկու կից աստուածներն են՝ «Տայսբաս», օդի աստուածը և «Արդինիա», արեւի աստուածը։ Երկրորդական աստուածներն, որ կրում են «Հալիսի որդիք» մականունը թուով 46 են. դոցանից շատերն ընդունուած էին դրացի երկրներում...» [31]։

Բաւականանալով հայոց սեպագիր արձանագրութեանց այս համառօտ պատմութեամբ, յառաջ ենք բերում երկու այդպիսի արձանագրութեանց օրինակներ.

I. Արձանագրութեան (տես. № III) բնագիրը գտանում է Վանայ մօտ եղած նի եկեղեցւոյ մէջ և բաղկացած է երեք տողից՝ փորագրուած մի սիւնի շուրջը։ Արձանագրու-

---

[30]) Տես. Maspero: Նոյն էջ 394—395.

[31]) Տես. Lenormant. Նոյնը Հատ. IV էջ 246։

թեան երկարութիւնն երկու մետր է, իսկ սիւնի գրուած տաբածութեան բարձրութիւնն է 13—14 հարիւրամետր (սանտիմետր). այդ երեք տողն ևս միևնոյնն է, այսինքն բովանդակութիւնը կրկնուած է երեք անգամ: Բովանդակութիւնը հետևեալն է. «Մի-նու-ա-զի. Իս-բու-ու-ի-նի-գան-զի-ա-զի· Հու-ու-սի-(ե-զա)-դու-ու-նի», որ ըստ Մօրդմանի ընթերցման նշանակում է. «Մինուաս, Իսբուինիսի որդին, կառուցեց այս տաճարը» [32]:

II. Արձանագրութիւնը փորագրուած է եղել մի մարմարեայ տախտակի վերայ, որ գտանուել է Վան քաղաքից ոչ հեռու: Այս արձանագրութիւնը սկիզբն և վերջ չունի. բովանդակութիւնն է. «Ես տիրեցի... պալատի մէջ... ոսկի 2651... արծաթ 2... որ ես գարձրի...» [33]:

Անցնենք սեպագրի *էութեան* և *ծագման* խնդրին:

Երբ բևեռագրի ընթերցումը յաջողուեցաւ, յայտնի երեւայ որ դորա գործածութիւնը յայտնի է եղել Բաբելացիներին, Նինուէացիներին, Պարսիկներին և Հայերին. բայց թէ որ ժողովուրդն էր այդ գրի իսկական սկզբնաւորութեան պատճառն և ստեղծողը՝ դժուար էր որոշել, մինչև որ վերջին ժամանակների գիւտերը ապացուցեցին, որ վերոյիշեալ ազգերից և ոչ մեկը չէ եղել դորա սկզբնապատճառն, այլ դոքա փոխ են առել մի ուրիշ ազգից, որի գոյութիւնը վաղուց արդէն անյայտացել էր պատմութեան միջից: Այդ իրողութիւնն ապացուցեցին գլխաւորապէս Նինուէի գրադարանի աւերակների մէջ գտանուած գրականական մնացորդներն, որոնք ցոյց տուին, որ բևեռագիրը *սեմիտների*, ասորա-բաբելացիների գիւտը չէ, այլ այն ժողովրդի, որ դոցանից առաջ բնակուում էր Միջագետքի դաշտավայրում, և որի լեզուն սեմիտական ընտանիքին չէր պատկանում: Այս ժողովրդին կոչում են *Ակկադները*, Ակկադացիները, կամ *Սումերները*, Սումերացիները: Ակկադները թողնում են իւրեանց հարուստ *գրականութիւնը* սեմիտական ասորա-բաբելացիներին, որոնք նոյնպէս մեծ նշանակութիւն են տալիս դորան: Նինուէի գրադարանի աւերակների մէջ գտանուած ահագին քանակութեամբ կաւէ տախտակները գրուած են *Ակկադների* լեզուով. իսկ այդ բնագրի իւրաքանչիւր տողի տակը գրուած է ասորական թարգմանութիւնը [34]:

Ինչպէս որ իւրաքանչիւր գրի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, նոյնպէս և սեպագրի ծագումը պէտք է իւր զարգացման աստիճաններն ունենար, ուստի և ինքն ըստ ինքեան յառաջ է գալիս այն հարցմունքը՝ թէ ինչպէս են կազմակերպուել դոքա: Գիտնականներից ոմանք ենթադրում էին, որ դոքա պէտք է եգիպտական պատկերագրից յառաջացած լինեն, իսկ մյլք՝ թէ դոքա իւրեանց առանձին ծագումն և զարգացումն ունեն և բոլորովին կապ չունեն եգիպտական գրի հետ: Վերջին ժամանակներում գտանուած «համատական» [35] պատկերագիր արձանագրութիւնները հաստատեցին վերջին կարծիքը: Եւ որովհետև այդ պատկերագրի գիւտն ևս համարուում է *Ակկադների* գործ [36], բնական է եզրակացնել, որ սեպագիրն իւր ծագումը պարտական է այդ «համատական» կոչուած պատկերագրին: Ակկադների

[32]) *Տես.* Mordtmann: „Ueber die Keilinschriften von Armenien". Zeitschrift d. d. morg. Gesellschaft. *Հատ.* 31. *էջ* 432:

[33]) *Տես.* Mordtmann, *նոյն էջ* 438.

[34]) *Տես.* Sayce: „Alte Denkmäler etc." *էջ* 9:

[35]) *Այդ արձանագրութիւնները «համատական» են կոչուում, որովհետև ամենից առաջ այդ քաղաքում յայտնագործուեցան:* „Hamath" im Orontesthale, an der Furt des Euphrat etc. *տես.* Maspero *նոյն. էջ* 232.

[36]) «Ակկադացիներն են այն պատկերագրի սկզբնապատճառն, որից կազմակերպուեցաւ սեպագիրն: Այդ Ակկադացիները հիմնեցին Քաղդէայի մեծամեծ քաղաքներն և հասան քաղաքակրթութեան մի նշանաւոր աստիճանի»: *Տես.* Sayce, *նոյն էջ* 17:

գիրը սկզբումը նման էր եգիպտականին. իւրաքանչիւր նշանը նոյն իսկ առարկայի պատկերն էր ներկայացնում, կամ այնպիսի առարկաների պատկերներ, որոնք արտայայտելու վերացական գաղափարի հետ մի որ և է կապակցութիւն ունէին —օրինակի համար թագաւոր արտայայտելու համար նկարել են «մեղու»—: Պատկերագիրը հետզհետէ—թէ գրողի կամ փորագրողի անհոգութեան պատճառաւ և թէ այն հանգամանքից, որ գրելու համար իբր ամենալաւ միջոց ընդունուեցաւ կաւը—փոխուեցաւ զծագրի և վերջն այդ գծերից յառաջացած բառերը կորցրին իւրեանց առաջուայ պատկերը: Իսկ գծագիրը հետզհետէ պարզ ձև ընդունելով՝ կազմակերպուեցաւ այսօրուայ սեպագիրը [37]:

Սեպագրի ամբողջ այբուբենը բաղկացած է մի սեպաձև նշանի հորիզոնական, ուղղահայեաց կամ ծռուած դիրքերի բարդութիւններից: Գրի սիստեման նման է եգիպտական գրին. մի քանիսն իսկական *գաղափարներ* են արտայայտում, իսկ հասարակ նշաններն ըստ մեծի մասին միակ *հնչիւնների* կամ ձայնաւոր ու բաղաձայն տառերից կազմուած *վանկեր*:

Ինչպէս եգիպտական գիրը, սեպագիրն էլ պատկառելի հնութիւն ունի. գտանուած ասորա-բաբելական սեպագիր արձանագրութիւնները յոյց են տալիս, որ այդ գիրը գործածական էր դեռ էլ 1500—2000 տարի Քրիստոսից առաջ: Պարսից բևեռագիր արձանագրութիւնները սկսւում են Դարեհ I-ի (522—485 թ.) ժամանակից. իսկ յայժմ գտանուած ամենահին ժամանակի սեպագիր արձանագրութիւնը կրում է պարթևաց *Պակորոս* անունն, որ իշխեց 77—111 թ. Քրիստոսից յետոյ:

[37]) Լ. Ն ո ր մ ա ն խօսելով մի ասորական արձանագրութեան մասին, որ գրուած է սեպագրով և պատկերագրով և գտանուում է բրիտանական թանգարանում, ասում է. „Caracteres cunéiformes avec les traces hiéroglyphiques dont ils derivent". տես. Lenormant, նոյնը հատ. I. մասն 2. էջ 420.

Սեպագիր արձանագրութիւնները գտանուում են ժայռերի և աղիւսների վերայ. հին ժամանակներից սկսած արդէն արևելեան թագաւորները փափագում էին իւրեանց փառքը յաջորդ սերունդներին յայտնի կացուցանել՝ դոցա յաջորդող իշխանները նոյնպէս պէտք է տեղեկութիւն ունենային դոցա արած քաջագործութիւններից: Ասորեստանցի արքաները իւրեանց այս ցանկութիւնն ի կատար ածելու համար նկարագրել էին տալիս իւրեանց քաջագործութիւնները, արշաւանքները և իւրեանց պատկերի հետ ի միասին փորագրում մարմարեայ տախտակների, աղիւսների, քարեայ սիւների և առաւել սիրով այնպիսի բարձրաբերձ ժայռերի վերայ, որ տեսանելի էին բազմաթիւ անցորդներին: Նոյն իսկ Հայաստանում գտանուած վանայ սեպագիր արձանագրութիւնները, որ փորագրուած են քաղաքի մակերևոյթից 50—60 [38]) ոտք բարձրութիւն ունեցող ժայռերի վերայ, ապացուցանում են այդ իրողութիւնը:

[38]) տես. Wuttke, „Geschichte der Schrift und des Schriftthums" հատ. I. էջ 644.

ԳԼՈՒԽ Է.

ՏԱՒՏԳԻՐ

„ „Entwicklung“ heist von jetzt an
„das Zauberwort, durch das wir alle uns
„umgebenden Bäthsel lösen oder wenigstens
„auf den weg ihrer Lösung gelangen kön-
„nen“.

Prof. Häckel

« *Աստիճանաբար զարգացումն* է կոչուում այժմեանից այն կախարդական խօսքը, որի միջոցով կարող ենք լուծել մեզ շրջապատող բոլոր հանելուկները կամ թէ առնական կարող ենք գոցա լուծելու ճանապարհը գտնել »։

Պրօֆ. Հէքքէլ։

Խպտական գիր. անմիտական այբուբեն. փիւնիկեան այբուբեն. տառագրի ծագումը. տարբեր տեսութիւններ. Քառրմանի տեսութիւնը. սրղագրութիւն. հայոց այբուբեն։

Երբ արդէն վանկագիր նշանները յայտնի էին, մնում էր գարձեալ մի աստիճանի կատարելագործութիւն ևս և պատրաստ պէտք է լինէր գրի ամենայարմար և մարդկային յառաջադիմութեան նպատակներին մեծապէս ծառայող տեսակը — *տառը*։ Տառագրի շնորհիւ միայն մարդս կարողանում է իւր ձայնի գործարանի ամենայն տեսակ կանոնաւոր հնչիւններն արտայայտել գրով և գրերի կապակցութեամբ դիւրին կերպիւ իւր գաղափարներն այլոց հասկանալի կացուցանել։

Առաջին հատուածի մէջ հետևելով եգիպտական գրի զարգացման ընթացքին, տեսանք թէ ինչպէս են յառաջանում այնտեղ տառագիր նշանները. նոյն իսկ այդ եգիպտական գիրն է, որ պարզապէս ապացուցանում է գրի աստիճանաբար զարգացումը։

Այժմեան քրիստոնեայ խպտիներն, որ հին եգիպտացւոց սերունդներն են, դեռ ևս իւրեանց եկեղեցւոյ մէջ պահպանել են իւրեանց՝ ուղղակի հին եգիպտականից ծագող լեզուն։

—Արդէն *եօթը* (7) դար Քրիստոսից առաջ—*Պսամետիխի* թագաւորութեան ժամանակ—Եգիպտոսը սկսեց յարաբերութիւն ունենալ Յունաստանի հետ և յունական լեզուն ու սովորութիւնները Եգիպտոս մտան։ Պտղոմէից իշխանութեան ժամանակ—ու տևեց Քրիստոսից առաջ վերջին երեք դարու ընթացքում—յունական լեզուն գարձաւ Եգիպտոսի պալատական—արքունի—լեզուն և *Ալէքսանդրեան* յունական իմաստութեան—փիլիսոփայութեան—գլխաւոր կենդրոնը։ Այդ ժամանակից մնացել և գտանուել են արձանագրութիւններ, որոնք գրուած են երկու լեզուով յունարէն և եգիպտական ժողովրդական կոչուած գրով։ Հռովմէական կայսրները նոյնպէս պաշտպանեցին եգիպտական կրօնն և դոցա անուններն ևս գտանուում են եգիպտական գրով գրուած։ Սակայն երբ Կոստանդին մեծը քրիստոնէութիւնն իբր կայսրութեան մէջ պաշտօնապէս ճանաչուած և տիրող կրօն հրատարակեց և արևելեան կայսրները տիրեցին եգիպտոսը, քրիստոնէութիւնը հալածեց եգիպտական կրօնն և իւր հետ ի միասին մերժեց երկրի մէջ յունական լեզուն և գիրն, որ այնուհետև տիրող հանդիսացաւ Եգիպտոսում։ Երրորդ դարում սբ. գիրքը թարգմանուեցաւ եգիպտական — որ այնուհետև կոչուեցաւ «*խպտական*» — լեզուով, որի համար և նոր *այբուբեն* կազմուեցաւ, որ բաղկացած էր յունական և վեց՝ եգիպտական գրից առնուած տառերից։ Խպտական եկեղեցւոյ բաժանումը յունականից, որ տեղի ունեցաւ վեցերորդ դարում, եղաւ գլը-

խաւոր պատճառն, որ խպտական այբուբենը ցայժմ կարողացաւ պահել իւր առանձնայատկութիւնը։ Եօթերորդ դարում արաբացիք տիրելով Եգիպտոսը, տարածեցին իւրեանց լեզուն և գիրն երկրի մէջ։ Խպտական լեզուն և գիրը կարողացան պահել միայն ցայժմ քրիստոնեայ մնացած խպտիներն՝ իւրեանց եկեղեցական գրուածների մէջ։

Եգիպտական գրից յետոյ՝ թէ իւրեանց պատկառելի հնութեամբ և թէ նշանակութեամբ տառագրի մէջ առաջին տեղն են բռնում սեմիտական այբուբենները։—Սեմիտական այբուբենով ծաղկեցան յունաց և Հռովմայեցւոց գրականութիւնները, այդ այբուբենի տառերով գրուեցան՝ սբ. գիրքը, զէնդավեստան և զուրանն. այդ այբուբենի հետ է կապուած մարդկային քաղաքակրթութեան յառաջադիմութիւնն և յարատևութիւնը։ Սեմիտական այբուբենի դասակարգին են պատկանում՝ փիւնիկեան, եբրայական, ասորա-բաբելական, յունական, հռովմէական, գոթական, արաբական և այլ այբուբենները։ Ասորական այբուբենի ընտանիքին են պատկանում՝ զէնդի, պարսկական, հնդկական, աղուանական և այլ այբուբենները. իսկ այժմեան եւրոպական բոլոր ազգերի այբուբենները պատկանում են յունական ընտանիքին—հռովմէականի մի ճիւղնորդութեամբ։

Այն բնական հարցմունքը՝ թէ արդեօք այս այբուբեններն ինչ յարաբերութեան մէջ են գտանում միմեանց հետ կամ թէ որն է դոցանից ոկզբնականն, երկար ժամանակ գիտերի պատմութեանց մի խառնուրդ — քաօս — էր ներկայացնում. իւրաքանչիւր ազգ ներկայանում էր իբր *ստեղծող* իւր այբուբենի. իսկ միւս կողմից կային մարդիկ, որոնք դեռ ևս դարուս սկզբում պնդում էին՝ թէ *Աղամ* նոյն իսկ իւր ստեղծուած օրն ընդունեց խօսելու և *գրելու* կարողութիւնն—այն ևս տառերով գրելու—։ Սակայն հետզհետէ յերևան եկող հնութիւնները և արձանագրութիւնները նորանոր նիւթեր մատակարարելով գրի զարգաց-

(IV.)



ՊԱՏԿԵՐԱԳՐԻՑ ՅԱՌԱԳԻՄ ԿԱԶՄՈՒԵԼԸ

ման պատմութեան համար, խնդիրը լուսաբանել ձգտողների կարծիքներն ևս փոխուեցան և եզրակացութիւնն եղաւ այն, որ փիւնիկեան գիրն ընդհանրապէս ընդունուեցաւ իբր առաջին տառագիր այբուբեն։

Սակայն մի այլ «գորդեան հանգոյց» էր կազմում այն խնդիրը՝ թէ արդեօք ինչպէս է յառաջացել փիւնիկեան այբուբենը։ Այս հանգոյցը լուծեց եգիպտական գրի ուսումնասիրութիւնը։ Երբ եգիպտական պատկերագրի ընթերցումը յաջողուեցաւ հնագէտներին, տիրող հանդիսացաւ այն կարծիքն, որ մարդս առաջին անգամ կոպիտ պատկերներ նկարելով դոցա օգնութեամբ ստեղծում է բառագիրն. այդ տեղից ծագում է վանկագիրն, որից և յառաջանում է վերջապէս տառը։

Փիւնիկեան այբուբենն, որից անմիջապէս ծագում են՝ եբրայական, ասորական և յունական տառերը, *յառաջացել է եգիպտական գրից*. ինչպէս արդէն ասացինք, և ինչպէս որ ցոյց են տալիս արձանագրութիւնները, եգիպտական պատկերագիրն արտայայտում է ոչ միայն ամբողջ գաղափարներ՝ բառեր և վանկեր, այլ նաև տառեր։ Նոյն իսկ եգիպտական II հարստութեան ժամանակ յայտնի էր նոցա այբուբենը. քանի որ նոքա լեզուի քսան և մէկ պարզ հնչիւնների համար առանձին պատկերագրեր ունէին։ Այս պատկերագիրը գործ էր դրւում հասարակական շինութեանց և արձանների վերայ, իսկ նամակագրութեան, գրքերի և առևտրականութեան մէջ գործ էր դրւում մի աւելի պարզ ձևակերպութիւն ունեցող նշաններից բաղկացած այբուբեն, որ կոչւում է քրմական։ Եւ ահա այդ քրմական այբուբենից է իբր ծագումն առնում փիւնիկեան գիրը։ Մեր յառաջ բերած փոք իկ ցանկը ցոյց է տալիս՝ թէ ինչպէս են յառաջացել քրմական այբուբենի տառերը պատկերագրերից (տես. № IV)։

Նեղոս գետի դելտայի ափերն այնչափ խիտ Փիւնիկեան—գաղթական—բնակութիւն ունէին, որ կոչուեցան «մեծ Փիւ-

Նիկեայ։ այս գաղթական Փիւնիկեցիներն առաջին անգամ գործ էին դնում Եգիպտական պատկերագիրը, որ անհրաժեշտ պէտք է լինէր նոցա համար՝ իւրեանց դրացի ժողովրդի հետ յարաբերութիւն սկսելու առթիւ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Փիւնիկեցւոց նման մի գործնական ժողովուրդ, որ իւր առևտրական ընդունակութեան պատճառաւ տարածուել էր ամբողջ հին աշխարհում, պէտք է աշխատէր յարաբերութեան միջոցները դիւրացնել. այդ նպատակին մեծապէս նպաստում էր գիրն, ուստի և նոքա Եգիպտական գիրը հետզհետէ պարզելով և պատկերները հեռացնելով՝ կազմեցին այն հասարակ ձևերից, լեզուի հնչիւններն արտայայտող այբուբենն, որ յետոյ կոչուեցաւ *Փիւնիկեան*։ Այդ նոր այբուբենը Նեղոսի ափերից տեղափոխուելով Փիւնիկեցւոց մայր երկիրն, այնտեղ նորից կազմակերպուեցաւ և իւրաքանչիւր տառ ստացաւ իւր անունը մի որևէ նման առարկայից, կամ որի անունը ըստ կըսւում էր այն ձայնով, ինչ ձայն որ ներկայացնում էր տառը։

Փիւնիկեան տառերն իւրեանց անուններով անմիջապէս յունաց անցնելով՝ նոցանից էլ անցնում են հռովմայեցւոց և սոցանից եւրոպական ազգերին. դորա ապացոյցը կարելի է համարել «այբուբեն» բառն, որ համարեա ամենայն տեղ «Ալֆաբետ» է կոչւում և յունաց այբուբենի առաջին երկու տառերի անուանց միութիւն է կազմում—«ալֆա» և «բետա», ինչպէս որ հայերէն «այբուբեն» անունը մեր այբուբենի առաջին երկու տառերի՝ «այբ», «բեն» միութիւն է—իսկ «ալֆա» և «բետա» տառերը Փիւնիկեան «*ալէփ*» և «*բեթ*» անուններն են։

Այդպէս յառաջացաւ *տառագիր* այբուբենը և շուտով յաղթական կերպիւ մուտք գործեց այն բոլոր երկրներում, ուր քաղաքակրթութիւնն արդէն առաջուց ոտք էր դրել։ Տառագիր այբուբենը տարածեցին նոյն իսկ փիւնիկեցիք՝ ուղղակի թէ անուղղակի կերպիւ. այդ գիրն ամենից առաջ տարածուեցաւ բնականաբար արևելքում՝ Փիւնիկեան և ասորիքի ծովեզ-

բեայ երկրներում և ապա արամայեցիների միջնորդութեամբ մուտք գործեց Եփրատի ու Տիգրիսի հովիտն և երկար պատերազմելով յաղթող Հանդիսացաւ արդէն գարերով գոյութիւն ունեցող սեպագրի դէմ։

Թէև գրի զարգացման վերաբերութեամբ մեր ընտրած ճանապարհը ցայժմ ամենահաւանականն է ճանաչուած գիտնական աշխարհում, սակայն այնուամենայնիւ կան և հեղինակներ, որ բոլորովին մերժում են գրի զարգացման վերոյիշեալ ընթացքը. սակայն դոցա փաստաբանածն ևս այնչափ պարզ չէ, որ ընդհանուր ընդունելութիւն գտնէր։ Դոցա կարծիքով գրի զարգացումն այնպէս սիստեմատիկական կերպարանքով—պատկերագրեց մինչև տառը—չէր կարող յառաջ ընթանալ, ինչպէս որ մենք ներկայացրինք, այլ առաւել բարդ կազմակերպութիւն ունի և դեռ ևս քողարկուած է մնում։ «Իսկապէս, ասում է օրինակի համար *Քաուլման*, երբէք վանկագրից տառագիր չէ յառաջացել և եգիպտական պատկերագրի առաւել ճիշտ ճանաչողութիւնն ուսուցանում է մեզ, որ հնչիւն արտայայտող նշանները կամ տառերը նոյնչափ հին են, որչափ նոյն իսկ պատկերագիրը։ Նոյն իսկ *Մեքսիկացիների*—որոնք իսկապէս նկարում էին անցքերն և ոչ թէ գրում—նկարների մէջ գտնում ենք հնչիւն արտայայտող նշաններ անուանց համար»։ [1]) Այն հարցմանը՝ թէ ինչպէ՞ս են այսօրուայ ընդհանուր եւրոպական տառերը—լատինական—յառաջացել, նոյն Քաուլմանը պատասխանում է հետևեալ կերպիւ. «Այս խնդիրը ցայժմ բոլորովին լուծած չէ. ապահով է միայն, որ լատինական տառերը փոխ են առել հռովմայեցիներից, իսկ ինչ վերաբերում է հռովմէական գրի յունարէնից ծագելուն, յունարէն այբուբենի Փիւնիկեան գրից յառաջանալուն ու նոյն իսկ Փիւնիկեան այբուբենի կազմակերպութեան, ցայժմ ունինք միայն աւանդութիւններ, որոնց մթութիւնը շատ խըն-

[1]) *Տես*. Faulmann։ „Geschichte der chrift“ էջ 2—3։

դիրներ անլուծանելի է թողնում։ Միթէ հաւանական է, որ յոյները գիր չ'ունենային մինչև Փիւնիկեցւոց հետ յարաբերութիւն ունենալը, քանի որ վայրենի «Ֆիններըն» (Finnen), սիբիրիայի թափառականները, Հիւսիսային Ամերիկայի հնդիկ ցեղերը գիր ունէին»։[2])

Սակայն այս առարկութիւնները ծանռակշիռ հիմք չունին մեր յառաջ բերած համակարգութեան—սիստեմայի դէմ. միթէ տարօրինակ մի երևոյթ է, որ հռովմայեցին իւր տառերը յունական այբուբենից փոխ առնելով՝ մի քանի տառերի անունները կամ ձևերը փոխէ. և եթէ նոյնն անում է յոյնը Փիւնիկեան տառերը վերցնելիս և վրացին՝ հայոց տառերն օրինակելիս, զարցեալ զարմանալի չէ և մեր կարծիքով նոյն իսկ բնական է։ Իւրաքանչիւր ազգ նոյն իսկ տասնեակ դարեր առաջ ունեցել է և ունի ինքնահանաչութիւն և մինչև իսկ եսականութեան զգացումն, որ յաճախ յերևան է գալիս այս և այն դէպքում, ուստի և հասկանալի է, որ հռովմայեցին յունաց տառերը վերցնելով՝ իւր արժանապատուութեան զգացումը բաւականացնելու համար՝ մի քանի փոփոխութիւններ է մտցնում նորա մէջ։ Յայտնի է, որ ռուսաց այժմեան այբուբենն այլ ևս «Կիրիլեան» գիրը չէ—Կիրիլ 855 թ. կազմակերպեց սլաւոնական այբուբենը քսանու չորս (24) յունական տառերի վրայ աւելացնելով տասնուչորս (14) հին սլաւոնական տառեր—և Մեծն Պետրոսի ժամանակից մոտեցրած է լատինականին, բայց միթէ մի քանի տառերի գոյութիւնն—որոնք ո՛չ յունականին և ոչ ևս լատինականին են նման—իրաւունք կը տար մեզ ասել՝ թէ ռուսաց այբուբենը յունականից չէ վերցրած կամ թէ լատինականին չէ նմանեցրած։ Այսպիսի օրինակներ շատ կարելի է յառաջ բերել, սակայն խնդիրը պարզ է։

Ֆաուլմանի երկրորդ առարկութիւնը թէ՝ անկարելի է,

[2]) Տես. Faulmann նոյն էջ 7։

որ յոյները գիր չ'ունենային, ամենևին չէ ոչնչացնում այն իրողութիւնը, որ յոյներն իւրեանց այբուբենը փիւնիկեցիներից են վերցրել. կարող էր պատահել որ յոյներն արդէն գիր ունէին, բայց դրքա այնչափ յարմար չէին, որչափ իւրեանց ծանօթ փիւնիկեանն, ուստի նոյնը փոխ առան զանազան փոփոխութիւններով և յաւելուածներով։ Սակայն ցայժմ ո՛չ մի արձանագրութիւն չէ գտանուել յունարէն լեզուով, որ գրուած լինէր այլ տառերով, քան փիւնիկեան։

Հետաքրքիր է և ուսումնասիրութեան արժանի նոյնպէս այն խնդիրը՝ թէ արդեօք տառի *հնչիւնը, ձևը* և *անունն ի՞նչ յարաբերութեան մէջ են միմեանց հետ*։ Ֆաուլման գրի զարգացման սիստեմը հիմնում է այդ յարաբերութեանց վերայ. սակայն այդ ուղղութիւնը դեռ ևս մշակուած չէ և շատ դժուարութիւններ է յառաջացնում, նա՛ մանաւանդ որ տառերի անունները բառարանների և լեզուի մէջից անյայտացել են։ [3])

Ցայժմ տիրող ու մեր հետևած համակարգութիւնը—սիստեման—հիմնուում է տառերի *ձևերի նմանութեանց* վերայ. այս սիստեմայով առաջ կերթանք նաև *հայոց այբուբենի* մասին խօսելիս։

Փիւնիկեցիք գտան տառերով գրելու եղանակը թէ այլք, ծագեցին դրքա պատկերագրից թէ ինքնուրոյն յառաջացան. միևնոյն է. *տառը* մի աշխարհական զօրութիւն և այժ ստացաւ և գրաւեց մտաւոր աշխարհը։ Փառաւոր և պատկերազարդ տաճարներն, որ մի անգամ խօսում էին մարդոց հետ, անհասկանալի հանելուկներ դարձան երկար ժամանակ. այն հպարտ և բարձրաբերձ լեռանց վերայ գտանուող արձանա-

[3]) Եբրայական լեզուն թէև ունի «ալափ», «էլէփ», «ալուփ» գաղափարները, սակայն «ալէփ» գաղափարն անյայտացել է կենդանի լեզուից և ձեացել իբր «Ա» տառի անուն։ Տես. Faulmann նոյն էջ 124.

գրութիւնները հմայութեանց տեղ էին ընդունւում. այն ինչ այբուբենի միջնորդութեամբ պահպանուեցաւ այն ամենն, ինչ որ մարդկային հանճարը՝ բարձր, վեհ և պահպանելու արժանի գաղափարներ էր յղացել։ Սմբողջ Արևմուտքի զարգացած մարդկութեան համար տառը դարցել է մտքի մի ձևը, մի զօրութիւն, այո՛ ամենամեծ զօրութիւնն աշխարհում։

Եւրոպայում զանազան փորձեր են եղել և լինում են, բացի այդ պատմական տառերից՝ նոր տեսակ տառեր ստեղծել, մեքենայական գործիքներին յարմարեցնելու համար— ինչպէս օրինակի համար հեռագրական նշանները—և կամ թէ գրչին այնպիսի յատկութիւն տալու համար, որ շտապով արտասանուած խօսքերն արագութեամբ գրէ և ետ չը մնայ խօսողից. այս վերջին ձևը կոչւում է *աղագրութիւն*— „Stenographie“, և բաւականին տարածուած է այժմ Եւրոպայում։ Թէև իւրաքանչիւր լեզու ունի իւր առանձին աղագրութիւնն, ինչպէս որ իւր առանձին տառերը, սակայն մի ևնոյն լեզուի աղագրութիւնն ունի շատ և միմեանցից տարբեր սիստեմաներ, այնպէս որ մէկ սիստեմայի հետևողը չի կարող կարդալ – կամ թէ մեծ դժուարութեամբ կը կարդայ—մի այլ սիստեմայով գրուած աղագրութիւն։ Եւ աղագրութեան սիստեմաներն այնչափ շատ են, որ համարեա թէ գերազանցում են պատմական այբուբենների տեսակների թուին—աւելի քան 260—։ Թէև այդ սիստեմաները մեծ մասամբ միմեանց հետևողութեամբ են յառաջացել, սակայն դոցա տարբերութիւնն ոգեկան աշխատանքի արդիւնք է և յառաջանում է գրի էութեան այլ տեսակէտով ըմբռնելուց։

Գրի լեզուն հետզհետէ մօտենում է մի *միջազգային ընդհանրութեան գրի իդէալին*. որովհետև նա այլ և այլ մարքուր հնչիւնագիր չէ։ Մենք կարող ենք՝ թուանշաններն և առհասարակ ալգեբրայական, մաթեմատիկական և քիմիական նշանները, երաժշտական ձայնագիրներն և այլն իբր ապագայ ընդհանրական գրի մասերը նկատել. սոքա մասամբ արդէն վերացական բնաւորութիւն ունին և համարեա թէ *միջազգային* են։

Մարդկային մտաւոր ու հոգեկան աշխատանքն այլ և այլ չէ շղթայւում տառերի հնացած ձևերով. *դիւրութեամբ*՝— ինչպէս էլեքտրական կայծը հեռագրական գծերի միջով, *արագութեամբ*—ինչպէս երկաթուղին մարդկային ձեռքի արդիւնքը հեռու երկիրներ է տեղափոխում—*ահա է գրուի մեր մտածման արդիւնքը թղթի վերայ եւ մարդկային զարգացման յառաջադիմութիւնը հսկայական քայլերով յառաջ վարէ։*

Թէ երբ դադարեց *Հայաստանում* սեպագրի գործածութիւնն և երբ սկսեցին հայերը գրելու ժամանակ փոխանակ բևեռագրի տառագիր գործ դնել—նոյնպէս անյայտ է մեր հին մատենագրներից. սակայն այնուամենայնիւ մեր պատմաբանների մութ ակնարկութիւններից և վկայութիւններից պարզ երևում է, որ քրիստոնէութիւնից շատ առաջ մեր նախնիք արդէն գիտէին տառերով գրելու արուեստը։ Եւ այս իրողութիւնը շատ բնական է թւում մեզ, որովհետև մեր գրացի ազգերը վաղուց արդէն գիտէին տառերով գրելու եղանակը։ Այժմ խնդիրն այն է, թէ արդեօք հայերն իւրեանց *սեպհական այբուբենն* ունէին, թէ գործ էին դրնում այլոց գիրը. այս հարցման պատասխանը թողնելով յաջորդ հատուածներին, ասենք այժմ, որ քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ մեր նախնիք այլ և այլ սեպհական գիր չունէին կամ թէ աւելի լաւ է ասել՝ *իւրեանց սեպհական գրով չէին գրում*։ Սակայն քանի որ հայ ազգն՝ ընդունելով քրիստոնէութիւնը՝ մեծ գարկ էր ստացել նոր ուղղութեամբ յառաջ դիմելու և մտաւորապէս զարգանալու, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ օտար տառերի գործածութիւնը չէր կարող տեւողական լինել, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք և այն հանգամանքն, որ այդ տառերով կարդալու և գրելու արուեստը շատ քչերին էր մատչելի։

Զորրորդ դարու վերջին մասի Հայ սերունդն արդէն գգում է սեպհական *ազգային գրի* կարևորութիւնը՝ թէ կրօնական և թէ քաղաքական տեսակէտից։

Այս իրողութիւնն այնչափ մեծ նշանակութիւն ունեցաւ Հայ ազգի ապագայի համար, որ անհրաժեշտ է մանրամասն նկարագրել։

ԱՌԱՆ ԵՐԿՐՈՐԴ-

ԳԼՈՒԽ Ը.

ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ

Գրի ծագումը. զանազան ազգերի առաձնահատկութիւններն այդ մասին եւ դոցա ընդհանրութիւնը. հայոց գիրը. սորոց եւ յունաց գիրը Հայաստանում. Մր. Մահակ եւ Մեսրոպ. Մր. Մեսրոպ իբրեւ քարոզիչ քրիստոնէական գաղափարի, Մ. Մեսրոպի դեսպանութեան յաջողութիւնը. հայոց լեզուի եւ գրականութեան ծաղկելը. համեմատութիւն Ե-րդ դարու հայոց ոսկեմեսրոպեան եւ եւրոպական դասական ոդդոսեան. Մր. գիրքն իբրեւ գլխաւոր շարժառիթ հայոց լեզուի եւ գրականութեան զարգացման:



արդկային գաղափարների արտայայտելը ձայների միջնորդութեամբ՝ հոգեկան բարձրագոյն ընդունակութիւններից մէկն է. սակայն մարդկութիւնն իւր զարգացման աստիճանների վերայ չբաւականանալով այդ ընդունակութեամբ, աշխատել է իւր գաղափարների արտայայտութիւնը շօշափելի կացուցանել նաև իւր տեսանելեաց զգայարանին, աչքին: Ահա այդ ձգտումից և յառաջացել են հետզհետէ գրի զանազան տեսակները՝ ըստ յառաջադիմութեան ազգերի զարգացման:

Սակայն դոցա սկզբնաւորութիւնը կապակցուելով ազգերի զարգացման ստորին աստիճանների հետ, մեծ մասամբ անյայտ է մնացել ժամանակիս մանրակրկիտ հետազօտութիւնից և դժուար է մինչև անգամ որոշ ասել՝ թէ դոցա սկզբնաւորութեան պատճառն անհատներ, թէ ամբողջ սերունդներ են եղել։

Ազգերի պատմութեան մէջ գրի սկզբնաւորութիւնը սովորաբար վերագրում են աստուածներին կամ մարմնացած անձնաւորութեանց, որոնք յարաբերութիւն ունէին աստուածների հետ, որովհետև ըստ հնաւանդ հայեցողութեան՝ մի այդպիսի զարմանահրաշ ստեղծագործութիւն միմիայն աստուածներից կարելի էր սպասել։ Այսպէս օրինակ. *եգիպտական աւանդութիւնը* գրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Տաութ»-ին [1]), որ միևնոյն ժամանակ լեզուի և խօսքի աստուածն էր, զարգացրեց աստեղագիտութեան, երաժշտութեան արուեստները և գտաւ ձիթենին։ *Բաբելական աւանդութիւնը* գրի ստեղծագործութիւնն ընծայում է «Օաննէս»-ին, որ մի էակ էր՝ կէսը մարդ, կէսը ձուկ։ Ըստ *չինական աւանդութեան*՝ նոցա գիրը գտաւ «Փոհի»-ն. *Մեքսիկացիները* իւրեանց գրի գիւտը նուիրում են «Կետղալկօատլ» աստուածուն։ *Իրանական աւանդութիւնը* գրի սկզբնաւորութիւնը վերագրում է «Տահմուրաթ» [2]) արքային, որ թէև գրի ստեղծողը չէ, սակայն այն անձնաւորութիւնն է ներկայացնում, որին յաջողուեցաւ գիրը դևերի ձեռքից կորզել, որովհետև ըստ աւանդութեան՝ թէև բարի ոգիներն արդէն վաղուց գտել էին գիրը, սակայն դևերի ձեռքն ընկնելով՝ գաղտնի էր մնացել մինչև «Տահմուրաթ»-ի ժամանակը։ Ցունաց գրի

[1]) Tööt, կամ Töt, Toyt. յոյները գրում են Թօթ և Տաաուտ։ Տես. W. Wuttke: Geschichte der Schrift etc. Հատ. I էջ 484։

[2]) «Տահմուրաթ» նշանակում է «մեծ աղուէս» տես. Faulmann: Geschichte der Schrift. էջ 28։

գտնողը Հանդիսանում է «Կադմ կամ «Կադմոս» անունով մի անձն, որ Փիւնիկեայից է գալիս։ *Գոթական* գրի գիւտը գերմանական աւանդութիւնը վերագրում է «Ուլֆիլաս»-ին [3]), թէև յայտնի է, որ Ուլֆիլաս ոչ թէ նոր գտաւ գոթական տառերը, այլ հին գերմանական «Րունէ» [4]) կոչուած նշաններն կատարելագործեց՝ պակասը լրացնելով և յունական այբուբենին մօտեցնելով։

Եթէ նոյն իսկ այս աւանդութիւններն ուշի ուշով դիտենք, կ'տեսնենք որ գրի ստեղծագործութիւնն անկարելի է մի որ և է անձնաւորութեան վերագրել. իսկ միւս կողմից՝ գրի անմիջապէս կատարելագործուած տեսքով յերևան գալն անկարելի է մինչև իսկ ենթադրել։ Մարդկութիւնը պէտք է անցնէր իւր զարգացման աստիճանների մի ամբողջ շարք, մինչև որ նորան յաջողուէր մի հասարակ միջոց գըտնել՝ իւր գաղափարները հետևեալ սերունդներին հաղորդելու։ Եւ անդադար դէպի յառաջադիմութիւն ձգտող մարդկութիւնը շատ փորձերից յետոյ միայն կարողացաւ ձեռք բերել այն, ինչ որ այսօր մեզ համար սովորական և գործնական է։ Մենք ճանաչում ենք գիրն իբր արդէն կատա-

[3]) Ուլֆիլասը ծնուեց 318 թ. 348-ին նա արդէն քրիստոնէական եկեղեցւոյ բարձր պաշտօնեայ էր։ Արիոսի հետևողներից լինելով՝ մասնակցեց 388 թ. Բիւզանդիոնի մեծ ժողովին և վախճանուեցաւ նոյն իսկ տարին։ Նորա կենաց նպատակն էս սը. Մեսրոպի նման քրիստոնէական վարդապետութեան քարոզնէր. նորա գլխաւոր գործն եղաւ սը. գրքի թարգմանութիւնը գոթական լեզուով։ Ցայժմ որոշ յայտնի չէ, թէ նա արդեօք ամբողջ սը. գիրքը, թէ միմիայն մի մասը թարգմանեց, որովհետև այդ թարգմանութիւնից մի քանի հատուածներ են մնացել միայն։

[4]) Հին գերմանական նշանագրերը կոչւում էին «Runen» «րունա» նշանակում է գաղտնիք. այս գիրը յայտնի էր միայն եկեղեցական դասին և գործ էր դրւում առաւելապէս գուշակութիւնների համար, ուստի և հատանականաբար ծագել է այդ անունը—գաղտնիք։

բեալ արուեստ, մեծ մասամբ անտեղեակ լինելով դորա զարգացման աստիճաններին։

Գրի սկզբնաւորութեան մասին մեր յառաջ բերած աւանդութիւնները թէև արտաքուստ միայն առասպել են ներկայացնում, սակայն եթէ մի փոքր խորը թափանցենք, կտեսնենք որ այդ առասպելը ճշմարտութեան կ՚վերածուի։ Վերցնենք օրինակ եգիպտացւոց և յունաց աւանդութիւնները։ Թէև մեզ առասպել է թւում, որ ըստ եգիպտական աւանդութեան՝ Տաւթ անունով մէկը գտնում է եգիպտական գիրը, լեզուն, աստեղագիտութիւնը, երաժշտութիւնը, մշակում է ձիթենին և այլն, սակայն այդ առասպելը կարող է պատահած իրողութեան ձևակերպուիլ, եթէ ընդունենք, որ «Տաւթ» անուան տակ ծածկուած է եգիպտական քրմական դասը։ Անկասկած է նոյնպէս, որ փիւնիկեցւոց գիրը Յունաստան փոխադրող «Կադմոսը»—որ նշանակում է «մարդ արևելքից», նոյնպէս և «Փիւնիկեցի»—ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նոր կրօն, որ Փիւնիկեայից Յունաստան տարածուեց, իւր հետ ի միասին տարածելով նոյնպէս փիւնիկեցւոց գիրը [5]։

Մասնաւորելով մեր խօսքը հայոց գրի մասին, պէտք է ասենք, որ միևնոյն երևոյթը կրկնւում է և այստեղ։ Մեր պատմութեան մէջ անթափանցելի քողով է ծածկուած հայոց գրի զարգացման ընթացքը. մեզ անյայտ է թէ՝ ե՞րբ սկսեցին հայերը սեպհական գիր գոլծածել և ե՞րբ դադարեցին նոյնը գործ դնելուց։ Միայն այնչափ յայտնի է մեզ, որ ունեցել ենք սեպհական ազգային նշանագիր և տառագիր, սակայն սոքա արդէն չորրորդ դարու վերջերին գործածութեան մէջ չ՚լինելով՝ բոլորովին մոռացուել էին։ Քրիստոնէութիւնը մուտ գոր-

[5]) Յունական Արշիպելագոսի կղզիների հետազօտութիւններից վերջին ժամանակներս ապացուցուած է, որ ամենահին ժամանակներում յունաց և փիւնիկեցւոց մէջ յաճախակի յարաբերութիւն է տեղի ունեցել։ Կադմոսի մասին տես. Francois Lenormant: „Les premières Civilisation etc. Paris. 1874. Հատ. II. Մասն IV. „La Légende de Cadmus“ էջ 313—437.

ծելով Հայաստան իւր հետ ի միասին ներմուծեց նաև յունական և ասորական գիրը և հալածեց հայոց ազգային գիրը, որ ամուր կապերով շղթայուած էր կռապաշտութեան հետ։ Այլ կերպ և ս չէր կարող լինել, որովհետև համարեա մի պատմական օրէնք է դարձել, որ իւրաքանչիւր նոր կրօնի հետ ազգերն ընդունում են նաև նոր գիր. Փիւնիկեցւոց այբուբենը տարածուեց Յունաստանում Փիւնիկեայից բերուած մի կրօնի հետ, իսլամութիւնը տարածեց իւր հետ ամենայն տեղ արաբական «Նեսխի» կոչուած գիրը, հռովմէական գիրը տարածուեց արևմտեան Եւրոպայում սբ. գրքի հետ ի միասին, ինչպէս նաև «գևանագարի» [6]) և «պալի» կոչուած գրերը Հնդկաստանում։

Սակայն յունաց և ասորոց գրերի տիրապետութիւնն երկար չէր կարող տևել Հայաստանում, որովհետև քրիստոնեայ եկեղեցւոյ եռանդուն պաշտօնեաները չ՚բաւականանալով ազգային գրի ոչնչացմամբ, ձգտում էին նաև ազգային լեզուն խախտել՝ եկեղեցւոյ պաշտամունքը յունարէն և ասորերէն լեզուով կատարելով։ [7]) Սրգն ըմբռնեց այդ դրութեան վտանգաւոր լինելը և դորա առաջն առնելն իւր կենսական խնդիրը դարձնելով՝ ամեն ջանք թափեց վերականգնել իւր գի-

[6]) «Գևանագարի» նշանակում է «աստուածների գիր» տես. F. Lenormant: Histoire Ancienne de l'Orient». Հատ. I. Մասն բ. էջ 384.

[7]) «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ Հանդիպէր, զանխտել ի ժողովրդոյն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ». տես. Մ. Խ ո ր ե ն ա ց ի. գիրք III գլխ. խէ. էջ 356։

«Քանզի պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց աստրի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, յանկրութենէ լեզուին ասորոց» տես. Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. էջ 36։

ըը, լեզուն և գրականութիւնը։ Այս գաղափարով տոգորուած հայ սերնդի մեծ ներկայացուցիչներն էին մեծ Պարթև Սահակը և հանճարեղ ու տաղանդաւոր Մեսրոպը։

Մի ժողովրդի կամ ազգի անհատների մէջ գտանուում են յաճախ այնպիսի իդէալական անձինք, որոնք իւրեանց անձնաւորութեամբ ներկայացնում են ամբողջ ազգը։ Եւ այսպիսի անհատներն իւրեանց ազգի յատկանիշ բնաւորութիւնը ներկայացնելով՝ մի որոշ ժամանակի յառաջադիմութեան և մտաւոր զարգացման իրականացնողներն են հանդիսանում։ Մի՛ւս կողմից և առանձին անհատների զարգացումը կախուած է այն ժողովրդի կամ ազգի զարգացման աստիճանից, որի մէջ նոքա ապրում են. այդ պատճառով իսկ սբ. Սահակի և Մեսրոպի մասին խօսելիս, երբէք չ՚պէտք է մոռանալ ժամանակակից սերունդը։

Կարծես Նախախնամութեան կարգադրութեամբ է լինում, որ չորրորդ դարու վերջին մասն ունենում է ոչ թէ մէկ, այլ երկու մեծ հայ ներկայացուցիչներ, որոնք իւրեանց բարձր հանճարով և միահամուռ ուժով ի կատար ածեցին այն մեծ գործն, որ ժամանակակից սերնդի իդէալն էր։ Այդ հանճարները վերականգնելով և վերանորոգելով հայոց մոռացուած գիրն և դորա միջնորդութեամբ տարածելով ամբողջ հայ աշխարհում ազգային եկեղեցւոյ և դպրութեան հաւատարիմ մշակներ, այնպիսի ծառայութիւն մատուցին հայ ազգին այդ տագնապալից շրջանում, որ անզուգական է մեր պատմութեան մէջ։ Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ քրիստոնէական ուսման տարածման և ժողովրդականացման գաղափարը հայոց գրի վերանորոգման ամենամեծ շարժառիթներից մէկն էր։ Սբ. Մեսրոպը թողնելով արքունի պալատը [8]), շրջում է Հայաստանի

[8]) Խորենացու՝ Մեծն Տրդատին նուիրած հետևեալ գեղեցիկ խօսքերն ամենայն իրաւամբ կարող ենք ասել նաև սբ. Մեսրոպի վերաբերութեամբ. «Ընկեցեալ զերկրաւոր պատկս զետ ընդ

բոլոր անկիւնները և քառասուն ու հինգ տարի շարունակ քարոզում և աւանդում է քրիստոնէութեան հետ ի միասին նաև ազգային գաղափարը. ազգային եկեղեցւոյ հետ հաստատում է ազգային ներքին կապը, բանում է ամեն տեղ դպրոցներ, կարճ ժամանակամիջոցում պատրաստում է աշակերտներ և նոցա յանձնում իւր սկսած մեծ գործի շարունակութիւնը։

Թէև հայ աշխարհը դեռ ևս չորս դար առաջ էր տեսել իւր անդրանիկ քրիստոնեայ Առաքեալներին և մի դար առաջ ընդունել իսկապէս քրիստոնէական վարդապետութիւնը, սակայն սբ. Մեսրոպը հանդիսանում է ոչ թէ միայն իբրև մի նոր Առաքեալ քրիստոնէական եկեղեցւոյ, այլ նաև իբրև *հարազատ զաւակ Հայաստանի*։ Նորան յաջողուեց վերականգնել ազգայնութեան գաղափարը, որ ճնշուել էր քրիստոնէական վարդապետութեան ազդեցութիւնից. Նա կարողացաւ քրիստոնէական գաղափարը կապակցել մայրենի գրի և լեզուի հետ, խրախուսուելով իւր մայրենի երկրի՝ թէ աշխարհական և թէ եկեղեցական պետերից—կաթուղիկոսից և թագաւորից։ Մայրենի գրի և լեզուի ամբողջ Հայաստանում տարածուելուն մեծապէս նպաստեց սբ. Մեսրոպի և Վարդանի դեսպանութեան յաջողութիւնը Բիւզանդիոնում։ Այդ յաջողութիւնը պէտք է նկատուի իբրև մեր պատմութեան ամենանշանաւոր դէպքերից մէկը. Եթէ սբ. Մեսրոպին արգիլուէր յունաց բաժնի Հայաստանում ևս տարածելու հայկական դպրութիւնը, հասկանալի է թէ այդպիսով առաջացած մեծ պառակտումը որչափ վնասակար պէտք է լինէր նոր սկսուած գործի համար։ Այդ դէպքում շատ կասկածելի կլինէր ազգային եկեղեցւոյ և դպրութեան միութեան վերականգնելը։ Սակայն սբ. Մեսրոպ իւր բարձր հանճարով ոչ թէ միայն յաջողեց իւր դեսպանութեան նպատակին հասնել, այլև բիւզանդիոնի կայսեր ներկայանա-

Թանայր երկնաւորին». տես. Մ. Խորենացի գիրք II. գլխ. ղբ. էջ 272.

լով, իբր սպասածից էլ աւելի ստացաւ։ [9])

Հայ ազգը սկզբում ընդունելով Քրիստոնէութիւնը, ոչ թէ կորցրեց միայն իր հին կրօնը, այլ նաև նորա ազգայնութեան զարգացման ուղին խանգարուեց. ազգային բանաստեղծութիւնն և առհասարակ գրականութիւնը սերտ կերպով շղթայուած էին կրօնի հետ և ահա այդ իսկ պատճառով նոր եկեղեցւոյ պաշտօնեաներն ամեն ճիգ թափեցին դոցա հետքը ջնջելու, սատանայական ներկայացնելու և տարածուելն արգելելու։ Եւ որպէս զի այդ խիստ զգալի չլինի ժողովրդի համար, նոքա հների տեղ նոր և քրիստոնէական դաղափարներ պարունակող երգեր տարածեցին ժողովրդի մէջ։ Այս շատ շուտ յաջողուեց և հինը, ազգայինը անյայտացաւ, որովհետև մեր եկեղեցական նոր պաշտօնեաները մեծ մասամբ օտարներ լինելով՝ ոչինչ զգացումն չէին կարող ունենալ հայոց ազգայնութեան դաղափարի համար, ուստի և անխնայ ոչնչացրին այն ամեն ազգային հարստութիւնն, որ կապուած էր հայոց հին կրօնի հետ։ Այդ օտար պաշտօնեաները վանքեր և դպրոցներ հիմնելով Հայաստանում, թէև ազգի յառաջադիմութեան նպաստեցին, սակայն այդ ևս եղաւ ի վնաս ազգայնութեան դաղափարի, որովհետև այդ հիմնարկութիւնները օտար լինելով՝ դոցա տուած դաստիարակութիւնն ևս օտար էր և տիրող լեզուն ևս ոչ թէ ժողովրդի մայրենի լեզուն էր, այլ յունարէն և ասորերէն։ [10])

Ահա այդ միջոցին սբ. Մեսրոպի վերանորոգած և կա-

[9]) «Ցանդիման եղեալ մեծի Թագաւորին, առին (սբ. Մեսրոպ և Վարդան) զոր յուսայինն եւ զոր ոչն յուսային» տես. Մ. Խորենացի. գիրք III. գլխ. ծէ. էջ 381.

[10]) Միևնոյն երևոյթը կրկնւում է նաև օտար ազգերի մօտ. այսպէս օրինակ գերմանական ցեղերն ընդունելով քրիստոնէութիւնը նոյնպէս օտար պաշտօնեաներից՝ կորցրին այն բոլորը, ինչ որ իւրեանց ազգայնութեան յատկանիշն էր։ Դոցա վանքերում և դպրոցներում ևս փոխանակ ազգային մայրենի լեզուի երկար դարեր շարունակ տիրում էր լատինականը։

տարելագործած հայոց գիրը պատճառ է լինում, որ հայոց մտաւոր զարգացումն ու յառաջադիմութիւնը կրկին ուղիղ շաւղով ընթանայ և այդ շաւիղը շուտով առաջ է բերում հայ գրականութեան *ոսկէ դարը*։ Այն ազգը, որ մոռացութեան տալով իր սեպհական հին գիրը՝ մուրացկանութեամբ սովորում և գործ էր դնում յունաց, պարսից և ասորոց տառերը, կարճ ժամանակից յետոյ տէր եղաւ մարդկային մտքի ամենանշանաւոր արտադրութեան, սբ. գրքի գեղեցիկ և նշանաւոր թարգմանութեան, որ շատ Եւրոպացի գիտնականների[11]) ասելով ամենաճիշտն է։ Թէ որչափ ընդունելութիւն գտաւ սբ. Մեսրոպի գործը հայ ժողովրդի մէջ, կարելի է պարզ տեսնել գործին մօտիկ ծանօթ հայ պատմագիրների խօսքերից։ «Ամենայն անձն, ասում է Ղազար Փարպեցին, յորդորեալ փափաքեր յուսումն *հայերէն* գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն զերծեալք ի լոյս խնդային»։ [12]) Ամբողջ ազգը ոգևորուած էր և երջանիկ էր զգում իւրեան՝ լսելով եկեղեցւոյ բեմից և դասից իր մայրենի բարբառի հնչիւնները. «Յայնմ ժամանակի, ասում է Կորիւն Սքանչելին *երանելի և ցանկալի աշխարհս* Հայոց անսպառման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պօղոս բովանդակ առաքելական գլնդոյն, Հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ *հայաբարբառ հայերէնախօսք* գտան։ Անդ էր այնուհետև սբրոտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն»։ [13])

[11]) Լակրօզ, Վիստոնեան եղբայրները, Կլաւդիոս Բուկանան և այլք։ Լակրօզ սբ. գրքի հայերէն թարգմանութիւնն անուանում է «*թագուհի թարգմանութեանց*» և ասում, որ այս թարգմանութեամբ կարելի է շատ տեղերում վերականգնել *եօթանասնից* բնագիրը։

[12]) Տես. Ղ. Փարպեցի. էջ 42—43.

[13]) Տես. Կորիւն Սքանչելի. էջ 12—13.

Հայոց լեզուի և դպրութեան հաստատման ժամանակին նուիրուած մեր «Աքանչելի» Կորիւնի այս գեղեցիկ խօսքերը ճշտիւ համապատասխանում են «Հուտտէն»ի [14]—գերմանական կրօնական մեծ յեղափոխութեան ժամանակակցի և գործակցի—բացագանչութեան հետ. «Ո՛վ դար, ուսմունքը ծաղկում են, ոգիքն արթնանում, ապրելը զուարճութիւն է» [15]:

Ղ. Փարպեցին հրճուելով նկարագրում է. «. . . Կարգեցան վաղվաղակի յայնմհետէ դպրոցք հօտին ուսմանց, բազմացան դասք գրչաց ելևէջս առնելով զմխիթարս. զարդարեցան պաշտամունք սբ. եկեղեցւոյ... պայծառացան եկեղեցիք, շուք աւրէն վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ի նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք. հանապազաբուխ հոսէին վտակք յասողացն մեկնութեանց... լցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ տեառն... իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս» [16]:

Այն ազգը, որ Աստուծոյ տաճարում եկեղեցւոյ պաշտօնեաներից պէտք է լսէր յունարէն կամ ասորի լեզուով արտասանած «Հայր-մերը», այժմ իւր ձեռքն ունէր յունական ամենաերևելի փիլիսոփաների հեղինակութեանց թարգմանութիւնը. ամեն ոք աշխատում էր մայրենի լեզուն ուսանել և ապա յունական իմաստութեան արդիւնքը հայերէնի վերածել. բազմաթիւ երիտասարդներ դիմում էին Յունաստան, Եգիպտոս և գիտութեան այլ կենդրոններ՝ իւրեանց ուսման ծարաւը յագեցնելու և հայրենեաց յառաջադիմութեան նպաստամատոյց լինելու:

[14]) Ուլրիխ ֆօն Հուտտէն ծնուեց 1488 թ. և մեռաւ 1523-ին: Այս շնորհալի գերմանական բանաստեղծը 1517 թ. Աուգսբուրգ քաղաքում դաւինեայ պսակ ընդունեց Մաքսիմիլեան կայսեր ձեռքից:

[15]) Տես. Leopold V. Ranke: „deutsche Geschichte in Zeitalter der reformation". Հատ. I. էջ 284.

[16]) Տես. Ղ. Փարպեցի. էջ 47—48:

Չինգերորդ դարու հայ սերնդի ձգտումը՝ կատարելապէս ուսանել յունաց և ասորոց լեզուներն ու գրականութիւնը, որպէս զի դոցա օգնութեամբ ծալկեցնեն մայրենի լեզուն ու գրականութիւնը, կարելի է համեմատել այն շարժողութեան հետ, որ տեղի ունեցաւ *Իտալիայում* XIV-րդ և *Գերմանիայում* XV-րդ դարերում: XIV-րդ դարում Իտալիայում ուսուցման գլխաւոր նպատակը համարւում էր դասական զարգացումը. յունական և լատինական դասական գրուածները միակ ուսումնասիրութեան աղբիւրներն էին: Միջին դարերում գերմանական և ռոմանական ազգերը, չնայելով իւրաքանչիւրին յատուկ առանձնայատկութեանց, ունէին մի ընդհանուր եւրոպական քնաւորութիւն. դոքա բոլորը միատեղ կազմում էին մի աշխարհա-եկեղեցական (պապական) պետութիւն: Եկեղեցւոյ կապը միացրել էր բոլորին, ուստի և Թէ պապը և Թէ կայսրն ու այլ արքաները *լատինական* լեզուն համարում էին իբրև մի ընդհանուր-եւրոպական, պետական և եկեղեցական լեզու: Ամեն տեղ հոգևորականները խօսում և գրում էին այդ լեզուով. ամեն տեղ եկեղեցական պաշտամունքը կատարւում էր լատինական լեզուով: Տասնևչորսերորդ դարուց սկսւում է *յունաց* դասական գրուածների ուսումնասիրութիւնը և դորա հետ ի միասին մայրենի լեզուով գրելու ձգտումը: Ինչպէս արդէն յիշեցինք, առաջին փորձերը լինում են Իտալիայում, ուր ուսումնասիրելով դասական գրուածներն աշխատում են ամենայն կերպ նոցա նմանուիլ: *Դանտէ* [17]), *Բօկաչիօ* [18]), *Պետրարկայ* [19]), Հարթեցին այդ շաւիղը. սոցա մէջ արթնացաւ առաջին անգամ

[17]) Դանտէ 1265—1321. որի «Աստուածային կատակերդութեան» մէջ ամփոփուած է միջին դարերի ամբողջ գիտութեանց պաշարը:

[18]) Բօկաչիօ 1313—1375.

[19]) Պետրարկայ 1304—1374:

ոգևորուած սէր դէպի հնութիւնը և դասական գեղեցկութիւնը. այդ երեք հանճարները զարգացրին մի գեղեցիկ բանաստեղծական ու վիպական նոր մայրենի լեզու և գրականութիւն: Իտալիայի բռնած այս դասական ուղղութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ 15 և 16-րդ դարու Գերմանիայի զարգացման յառաջադիմութեան վերայ. սակայն դասականի ուսումնասիրութիւնը Գերմանիայում յառաջ ընթացաւ բոլորովին այլ հոգւով ներշնչուած, նա՛ մանաւանդ 16-րդ դարում: Իտալիայի գեղարուեստ խնկարկող սերունդը սքանչանում էր դասական մատենագիրների գեղեցկութեամբ և դոյա հետևել ճգնում. յունական դիւցաբանութիւնն աւելի էր հիացնում նորանց, քան քրիստոնէական վարդապետութիւնը: Գերմանիան հետևելով դասական ուղղութեան, ուսումնասիրում է յունարէնն և առաւել հետևում քրիստոնէական վարդապետութեան: Սբ. գրոց գերմաներէն թարգմանութիւնն այդ ուղղութեան նշանաւոր արգասիքներից մէկն է: Սբ. գրոց թարգմանութիւնն է, որ առիթ է լինում գերմանացւոց մայրենի լեզուի հետզհետէ մշակման և գրականութեան ծաղկման:

Հինգերորդ դարու հայ սերնդի բռնած ուղղութիւնը ճշտիւ համապատասխանում է Գերմանիայի դասական ուղղութեան. հայերէն դպրութիւնն ուսանում էին սբ. գիրքն և եկեղեցական պաշտամունքը հասկանալու համար. յունարէն դպրութիւնն ուսանում էին հայերէն ճիշտ թարգմանութեանց համար: Հայերէն դպրութիւնն այն հսկայաքայլ յառաջադիմութիւնը չէր անի հինգերորդ դարում, եթէ անմիջապէս սբ. գիրքը չը թարգմանուէր և դպրութեան նպատակը գլխաւորապէս եկեղեցական հեղինակութեանց ծանօթութիւնը չ'լինէր: Խօսք չկայ, որ այդ նպատակին հասնելուց յետոյ՝ հայ դպրութիւնը կանգ չառաւ և սահմաններն առաւել ընդարձակելով իւր մէջ առաւ նաև պատմական, փիլիսոփայական և գիտութեանց այլ ճիւղերը:

Սբ. Մեսրոպի վերանորոգած այբուբենի շնորհիւ կարճ ժամանակամիջոցում ծաղկեց մի գրականական լեզու, որ իւր արուեստական կատարելագործութեամբ, հնչմամբ, ուժով և առաձգականութեամբ գերազանցում է օտար բազմաթիւ մրշակուած լեզուներին: Յաջողութեան մեծ մասը հիմնւում է այն հանգամանքի վերայ, որ մեր թարգմանիչները ձեռնարկեցին մշակել ո՛չ թէ մի որևէ հասարակ գաւառական բարբառ, այլ արարատեան ընդարձակ երկրի բարբառը, որ վաղուց արդէն ընդունուել էր իբրև պալատական և իշխանական շրջանների մէջ գործադրուող լեզու: Այս պատճառով անկասկած այդ արքունի կամ ոստանիկ լեզուն ժողովրդականութիւն ու յարգանք պէտք է ունենար: Բացի այդ նպաստաւոր հանգամանքից, ոստանիկ լեզուն պէտք է եղած լինէր և հայոց *կռապաշտական ժամանակի* գրական լեզուն. և այս շատ բնական է, որովհետև դժուար է ենթադրել, որ արքունիքն և հոգևորականութիւնը, որ այնպիսի սերտ կապերով շղթայուած էին միմեանց հետ, տարբեր լեզու գործադրէին իրենց բանաւոր և *գրաւոր* յարաբերութեանց մէջ:

Քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան՝ իւր գոյութեան կռուի մէջ ոչնչացրեց մեր կռապաշտական գիրն ու գրականութիւնը և մոռցրեց ասորէն ու յունարէն լեզուն: Այստեղից առաջացաւ այն անբնական դրութիւնը, որի դէմ մաքառեց չորրորդ դարու վերջին և հինգերորդ դարու առաջին մասի հայ սերունդը և յաջողութիւն ունեցաւ: Անկարելի է մինչ իսկ ենթադրել, որ մի այնպիսի կարճ ժամանակամիջոցում մի՛ *ըոլորովին* նոր գրականական լեզու ստեղծուէր և կատարելութեան այդ աստիճանին հասնէր. ո՛չ մի օտար ազգի գրականութեան մէջ և սի կայ այդպիսի օրինակ:

Հինգերորդ դարու հայոց ազգային-կրօնական և գրականական այս մեծ յեղափոխութիւնը զարմանալի զուգադիպութեամբ համապատասխանում է գերմանական-կրօնական մեծ յեղափոխութեան ժամանակի դէպքերին: Ինչպէս որ մեր վե-

բանորոգիչներն ազգային նոր գրականութեան յառաջացման համար ընտրում են արքունի լեզուն, այդ լեզուով թարգմանում սբ. գիրքը և այդ լեզուն աւանդում նոր դպրոցներում, այնպէս և գերմանական մեծ յեղափոխիչ դոկտոր Մարտինը սբ. գրքի թարգմանութեան համար ընտրում է սաքսոնական արքունի լեզուն, որ ընդունուած էր գերմանական բոլոր իշխանական պալատներում, և դպրոցներում այդ լեզուով էին ուսուցանում: Մարտին Լուտէրի գործակից *Մելանխտոնը* կոչւում է «*Ուսուցանող գերմանիայի*»—„Praeceptor germaniae" և սբ. Մեսրոպը նոյնպէս իւր ժամանակակիցներից կոչւում է «*Ուսուցանող Հայաստանի*»:

Հայոց այբուբենի վերանորոգման հետևանքներն այսպէս համառօտ նկարագրելուց յետոյ, անցնենք նոյն իսկ այդ այբուբենի ծագման և կատարելագործման խնդրին: Սոյն խնդիրն ուսումնասիրելու համար մենք ունինք երեք նշանաւոր աղբիւր նոյն իսկ հինգերորդ դարուց. ա. *Կորիւն Սքանչելու* գրած սբ. Մեսրոպի վարքագրութիւնը. բ. *Խորենացու* Հայոց պատմութիւնը և գ. *Ղազար Փարպեցու* Հայոց պատմութիւնը: Կորիւն Սքանչելին սբ. Մեսրոպի աշակերտն ու գործակիցն էր և նկարագրում է իւր աչքով տեսածը և ականջով լսածը: [20]) Հայկական Հերոդոտ'ը, [21]) Խորենացին, նոյնպէս ժա-

---

[20]) «. . Ոչ եթէ ի հին համբաւուց (ղբուցաց) տեղեկացեալ և ժառենագրեալ ղայս (զսա) կարգեցաք, այլ որոց մեր (մեզէն) իսկ ականատես եղեալ կերպարանացն և առընթերակաց հոգևորական գործոց (սրբոցն) և լսող(ը) շնորհապատում վարդապետութեանն, և նոցին (սրբոց վարդապետաց) արբանեակ ըստ (նոցին) աւետարանական հրամանացն: Տես. Կորիւն էջ 28.

[21]) Այս անունը տուել է Խորենացուն Վ. Լանգլուան. տես. V. Langlois: Collection des Historient. etc. հատ. I էջ XV.

մանակակից է սբ. Մեսրոպի գործողութեանց և իւրեան նորա աշակերտն է անուանում, սակայն արտասահմանից վերադառնալով այլ ևս կենդանի չէ գտնում նորան: Մի փոքր յետոյ է դրում Ղ. Փարպեցին իւր «պատմութիւնը», սակայն նա ևս սբ. Մեսրոպի անմիջական աշակերտ Աղանի մօտ էր ուսել և դասւում է Մեսրոպի կրտսեր աշակերտների շարքը:

Այս ժամանակագրական կարգով ևս յառաջ ենք բերում այդ երեք մատենագիրների վկայութիւնները:

ԳԼՈՒԽ Թ.

ԿՈՐԻՒՆ [1]) ՍԱՐԸՆՁԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ «ԴՐԻ ԳԻՒՂ»-Ի ՄԱՍԻՆ



Տարօն գաւառի Հացեկաց գիւղից էր Մաշտոցը՝ Վարդան անունով մի մարդու որդին. մանկութեան հասակում սովորելով յունարէն լեզուն, գալիս է Սրշակունեաց պալատը և յանձն է առնում մի պաշտօն արքունի դիւանում. այդ ժամանակ Հայոց աշխարհի հազարապետն էր Առաւանը։ Մաշտոցը տեղեկանալով և հմտանալով աշխարհական կար-

[1]) Կորիւն Վարդապետը, որ վերջը ձեռնադրուեց եպիսկոպոս և վերջ առաջնորդն էր, գրեց իր «պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ» աշխատութիւնը Ցովսէփ կաթողիկոսի և իր այլ ընկերակիցների առաջարկութեամբ՝ ինչպէս որ գրում է ինքն իւր յառաջաբանի մէջ «Եւ մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացն, վասն յուշ արկանելոյ միաձնագործ հոգացոյ. եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի Ցովսէփ կոչեցեալոյ աշակերտի առն այնորիկ (Մեսրոպի). և ընդ նմին այլոց ևս քաջալերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան։ Ուստի և իմ մանաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ թէպէտ և էի կրասերագոյն և առաւելքան զկար մեր. գրաւեալ գերին, իւր գինուորական արուեստով սիրելի է դառնում զօրավարներին. սակայն միևնոյն ժամանակ նա զբաղւում է կրօնական գրքերի ընթերցանութեամբ և շուտով բոլորովին նուիրուելով Աստուծոյ խօսքին, թողնում է արքունի ծառայութիւնը [2]։

անաչառ հրամանին հասելոց, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եդեալն ժամենագրել։ Տես Կորիւն էջ 1—2։

Ցաւալի է, որ Կորիւնի այս նշանաւոր աշխատութիւնը ցայժմ չէ հրատարակուած համեմատական մեթոդով. Վենետիկցոց 2 հրատարակութիւնները տարբեր են միմեանցից. առաջինը հրատարակուած է 1833 թ. Մամբրէի և Դաւիթ Անյաղթի հետ ի միասին. այս հրատարակութիւնը տեղի է ունեցել երկու նօրգիր և անթուական ձեռագիրներից։ Երկրորդը հրատարակուած է «Սիփերք Հայկականք»ի շարքում 1854 թուին։ Վերջին հրատարակութիւնը շատ համառօտ պատմութիւն է, համեմատելով առաջինի հետ։ Մեզ անյայտ լինելով այդ ձեռագիրների հնութիւնը և որակութիւնը, չենք կարող ասել՝ թէ ո՞րն է դոցանից վաւերականը և իսկականը, սակայն առաւելութիւնը բնականաբար ընդարձակին ենք տալիս, համառօտածը եղծուած համարելով՝ թէև համառօտի լեզուն և ոճը աւելի ընտիր է, քան ընդարձակինը։ Կորիւնի այս աշխատութիւնը հայերէնից—գերմաներէն թարգմանել է և ծանօթութիւններով հրատարակել աստուածաբանութեան պրոֆ. դր. Վելտէ 1841 թուին. „Goriun's Lebensbeschreibung des hl. Mesrop, aus dem armenischen etc. übersetzt . . . von dr. Welte. իսկ պրոֆ. Էմինի ֆրանսերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ Լանգլուայի „Collection“-ի մէջ. Հատ. II.

Կորիւնը իւր ընտիր ոճի և թարգմանութեանց համար արդէն մեր հին ժամենագիրներից կոչուել է «Սքանչելի», իսկ նոր Եւրոպացի մատենագիրներից մէկը—Նեյմանը—Կորիւնին անուանում է հայկական գրականութեան Փ ե ն ե ֆ ո ն. տես. Neumann: Memoire sur la vie et les ouvragee de David etc. տպուած է N. Journal Asiatique t. III, (1829) p. 55.

[2]) «Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն ի տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վար-

Այնուհետև նա միայնակեաց կեանք է վարում և իր մարմինը ենթարկում զանազան տեսակ չարչարանքի [3]). յետոյ վերցնելով իր աշակերտներին գնում է Գողթան և քարոզում սբ. աւետարանի խօսքը՝ երկրի իշխանի օժանդակութեամբ [4]): Սակայն այս յաջողութիւնը բաւականութիւն չէ

դան կոչեցեալ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն արշակունեաց Թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական առուեստիւն իւրոց զօրականացն, և անդէն ուշ եդեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն»: Տես. Մատենագրութիւնք նախնեաց. Կորիւն, Մամբրէ, Դաւիթ. Վենետիկ 1833 թ. էջ 6—7:

[3]) «Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութեան Աստուծոյ մարդասիրին գարձեալ մերկանայր այնուհետև զիշխանակիր ցանկութիւնն. և առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, և անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր. բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրեր ամենայն իրաց: Ամենայն կըրթութեամբ հոգևորացն զանձն տուեալ միաւորութեամբ, լուռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնագեստ և գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհնչտական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր տքնութեան ի թօթափել ական վճարէր: Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, և գտեալ ևս զժամնս յինքն յարեցուցանէր աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան. և այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական քաջութեամբ տարեալ և պայծառացեալ, ծանօթական և հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան»: Տես. Կորիւն, էջ 7:

[4]) «Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս (զաշա-

տալիս նորան, նա տխուր հոգուով միշտ մտածմանց մէջ է լինում, որովհետև հայերէն գրի պակասութեան պատճառով, շատ անգամ դժուարանում է Աստուծոյ խօսքն աւանդել իր աշակերտներին. վերջապէս նա գնում է սբ. Սահակ կաթողիկոսի մօտ և յայտնում նորան իւրեան զբաղեցնող խընդիրը [5]): Ս. Սահակը յայտնում է, որ ինքն էլ մտածում է

կերտեալն) իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան (Շամբին) այր երկիւղած և աստուածասէր, ըստ աշակերտաց հաւատոյն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն (զվարդապետական շնորհն) ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն (ուսուցանէր զընակիչս քաղաքին և գաւառին) հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոյ, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր: (Զի էր ինչ ի նոսա ի հեթանոսական սովորութեանցն, զորս գարձուցանէր ի գիտութիւն ճշմարտութեան, և զամենեսեան լուսաւորէր շնորհաց բանիւն»: Տես. Կորիւն էջ 7:

[5]) «Եւ այնպէս տրտմական հոգուվք պաշարեալ և թակարթապատեալ և անկեալ ի ծուխս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք ելս իրացն գտանիցէ: Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութով հաւանեալ: Տես. Կորիւն էջ 8:

Ընդարձակ Կորիւնի այս հատուածը պարզ ցոյց է տալիս, որ բնագրից դուրս է թողուած այս տողերի նախընթաց կտորը. որովհետև հասկանալի չէ «եթէ որպիսի՛ արդեօք ելս իրացն գտանիցէ». Համառօտ Կորիւնի այդ հատուածն աւելի որոշ է. «բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ աշակերտեալսն. իսկ երանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս, որով նուաղութիւն յառաւելութիւն գայցէ գրով: Եւ յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբն Սահակ Հայրապետն Հայոց՝ յաղագս գրոց նշանագրաց. եգիտ զնա առաւել ևս փափագող այնմ»:

այդ խնդրի մասին և նոքա երկուսն ևս այնուհետև մտածում են հայոց գիրը գտնելու միջոցների մասին [6]։

Երբ սոքա Վռամշապուհ թագաւորին ևս իմաց են տալիս, որ զբաղուած են հայոց այբուբենի խնդրով, արքան պատմում է, որ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ գտնուել է հայոց լեզուի այբուբենի տառերը. սբ. Սահակ և Մեսրոպ լսելով այդ՝ խնդրում են թագաւորին անմիջապէս մարդ ուղարկել Դանիէլի մօտ և բերել տալ այդ այբուբենը։ Թագաւորն ուղարկում է Վահրիճ անունով մէկին —հրովարտակով— Հաբէլ քահանայի մօտ, որ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մերձաւորն էր [7]։ Հաբէլը շտապում է

[6]) «Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ ամենայն ազօթիւք մեծաւք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց Քրիստոսասաբը փրկութեան հասանելոյ. զայն առնէին աւուրս բազումս։ Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և զգիրս նշանագրոյ Հայաստան ազգին, հասանել բազում հարց փորձի. և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ»։ Կորիւն էջ 8.

[7]) «Ցայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի աշնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրուճն նշանագիրս աղիւաբետաց Հայերէն լեզուի։ Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ։ Եւ նա առաքեր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի»։ Տես. Կորիւն էջ 8։

Համառօտ Կորիւնի մէջ այս հատուածը բոլորովին այլ աւսակ է պատմուած, ուր Վռամշապուհը չէ տեղեկութիւն տալիս Դանիէլի մասին, այլ Մեսրոպը ինքն է պատահում նորան. «Եւ յետ այնորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն Վռամշապհոյ, որ և նա այսմ նախանձայոյզ եղեալ, առաքէն զՄեսրովբ աշակերտսն հանդերձ ի Միջագետս Ասորւոց։ Եւ երթեալ նորա խուզէր ուր

Դանիէլի մօտ՝ նախ ինքն է սովորում նորանից նոր այբուբենը և ապա ուղարկում է հայոց թագաւորին, Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին։ Թագաւորը սբ. Սահակի և Մեսրոպի հետ ի միասին ստանալով Հաբէլից այբուբենը ուրախանում են. այնուհետև սբ. Սահակը և Մեսրոպը խնդրում են արքային, որ մանուկները տայ իրանց՝ նոր այբուբենով ուսուցանելու և երբ շատերը սովորում են, Վռամշապուհը հրամայում է, որ ամեն տեղ այդ այբուբենով ուսուցանեն։ Սբ. Մեսրոպը երկու տարի շարունակ սովորեցնում է այդ նորագիւտ այբուբենով և ստանում է վարդապետի կոչումն [8])

Բայց տեսնում են, որ այդ տառերը բաւական չեն հայոց լեզուի վանկերն ու կապերն արտայայտելու համար, նա՛ մանաւանդ որ դոքա ուրիշ գրերից թագուած և նորից գտնուած էին [9]։

ուրեք իմաստասիրաց համբաւեր գիտութիւն։ Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոց առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որոյմ ցանկայրն։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ ճեացեալ. զի ոչ բերէր զբաւս և զբանս ալիւաբետացն ըստ հայերէն լեզուիս»։

[8]) «Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլ՛ն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքեր առ արքայն յերկիրն Հայոց. ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր։ Իսկ արքային հանդերձ միաբան սրբովն Սահակաւ և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին։ Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն, խնդրէին հայցէին ևս յարքայէ մանկունս ժառաղս, որով զնշանագիրսն յարթնացնէին։ Եւ յոյժ բազումք ի նոցանէ տեղեկանային. ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գնել եցիկ երանելին հասանէր. և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր. և նովին նշանագրովք տանէր»։ Տես. Կորիւն. էջ 9։

[9]) «Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանա-

Այնուհետև նոքա կրկին հոգացողութեամբ աշխատում են մի ելք գտնել և վճռում են, որ նորից որոնեն. սբ. Մեսրոպը մի խումբ աշակերտների հետ գնում է Ասորոց Եդեսիայ և Ամիդ քաղաքները, Վռամշապուհի հինգերորդ [10] տարին։ Սբ. Մեսրոպին սիրով ընդունում են Բաբիլաս և Ակակիոս եպիսկոպոսները քաղաքի կղերի և իշխանների հետ ի միասին [11]։

գիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս և զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան *)»։ Տես. Կորիւն. էջ 9.

[10]) Այս «հինգերորդ» տարին ակնյայտնի հակասում է Կորիւնի մի փոքր առաջ պատմածի բովանդակութեանը. նա յիշում է որ Դանիէլի այցելութիւնը Հայաստան լերին Վռամշապուհի թագաւորութեան «հինգերորդ» տարին, այնուհետև նոյն այցելութիւնով «երկու» տարի սովորեցրին և ապա թէ գնան, որ անյարմար է և Մեսրոպ ճանապարհ ընկաւ դէպի Եդեսիայ, Վռամշապուհի թագաւորութեան «հինգերորդ» տարին. պատմածի բովանդակութեան նայելով վերջին հինգերորդը պէտք է լինէր «եօթներորդ»։ Սակայն ցայժմ ամենքն էլ վերջին «ի հինգերորդ» ամին ուղղել են «ի տասն եւ հինգերորդ», առարկելով որ բառի առաջին մասը թողուած է արտագրողների չնորհիւ։ Այս բացատրութիւնը գուցէ անհաւանական չ'լինէր, եթէ Կորիւնի յաջորդ էջի վերայ՝ Մեսրոպի ձեռքով տաւի գիւտի ժամանակը նշանակուած չ'լինէր «ի վեցերորդ» ամի Վռամշապհոյ։ Պատահական սխալ չենք կարող ընդունել նոյնպէս «ի վեցերորդը»։ Մեզ աւելի հաւանական է թւում արտագրողների արած մի այլ սխալ, որ եթէ ուղղուի՝ այդ տարիները ճիշտ դուրս կգան. փոխանակ կարդալու «և իբրև ամս երկու», պէտք է կարդալ «իբրև ամիս երկու»։

[11]) «Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս

---

*) „Մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան" խօսքերը պրօֆ. Վ. Լուկ սխալ կերպով թարգմանել է այսպէս. „zumal da auch Buchstaben aus fremden frühern und spätern Schriften hinzugenommen waren"—մանաւանդ որ աւելացել էին հին և նոր օտար գրեատառեր՝։

Այդտեղ սբ. Մեսրոպը հետը տարած հայ աշակերտներին երկու մասի է բաժանում. մէկ մասին պատուիրում է ուսանել ասորոց լեզուն և գպրութիւնը, միւս մասին յունաց լեզուն և գպրութիւնը [12]), Յետոյ ինքը գնում է Սամոսատ քաղաքը և նուիրուելով իր սովորական աղօթքին ու ճգնութեան, երկար ժամանակ և համբերութեամբ աշխատում է իր նպատակին հասնելու, այսինքն հայոց համար այբուբեն գտնելու և Աստուած պարգևում է նորան այդ. *նա՝ իւր սուրբ աչով մի նոր եւ սքանչելի ծնունդ է առաջ բերում*՝ և այդ ծնունդն էր հայոց լեզուի այբուբենը։ Սբ. Մեսրոպը տեղն ու տեղը ձևակերպում է տառերը, նրանց անուանները և դասաւորութիւնն ու վանկեր է կազմում [13])։

պառնային, և նմին եղև խնդրէին ժամանակս ինչ։ Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի գաս մի մանկտուց հրամանաւ արքային, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեան՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն։ Ընդդէմ լինէր սբ. եպիսկոպոսացն. որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կըղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի» Տես. Կորիւն. էջ 9.

[12]) «Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի գպրութեանն կարգեր, և զոմանս յունական գպրութիւնն»։ Տես Կորիւն. էջ 9.

[13]) „Անտի ի սամոսատական քաղաքն գուժարեր, և նորա իւրովք հաւասարօք զսովորականն առանջն եդեալ զաղօթս և զքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ „Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցէս"։ Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ։ Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափու ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի

Յետոյ հրաժարական տալով սբ. եպիսկոպոսներին, իւր օգնականների հետ գնում է Սամոսատացիների քաղաքը ուր և մեծ պատուով ընդունւում է տեղական եպիսկոպոսից։ Այդտեղ սբ. Մեսրոպը գտնում է Հռոփանոս անունով մէկ մարդ, որ շատ լաւ գրում էր յունարէն և յանձնում է դրան իւր նոր այբուբենը, որպէս զի տառերին վայելուչ ձև տայ, որոշէ նոցա երկարութիւնն ու հաստութիւնը։ Այնուհետև սուրբ Մեսրոպը իւր Յովհան և Յովսէփ աշակերտների հետ ձեռնարկում է Սողոմոնի առակաց գրքի թարգմանութեան. այս առաջին թարգմանութիւնը նոր տառերով գրում է նոյն ինքը Հռոփանոսը և միևնոյն ժամանակ այդ նոր գրութեան արուեստը ուսուցանում է սբ. Մեսրոպի աշակերտներին [14]։ Ապա վերադառնալով Ասորիք՝ իւր աշակերտների մօտ, սբ. Մեսրոպը մեծ ընդունելութիւն է գտնում ասորոց եպիսկոպոսներից և ուղևորուելով դէպի Հայաստան՝ գալիս է Արարատեան գաւառի Նոր քաղաքը՝ Վռամ-

սբ. աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ յօրիներ սիղոբայիք և կապօք"։ Տես. Կորիւն. էջ 9—10։

[14]) „Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւրովք իջաներ ի քաղաքն սամոսատացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր։ Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն ղնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցւոյ գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի պաղանական տանէն։ Եւ եղեալ սկիզբն նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեան ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ „ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ"։ Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան"։ Տես. Կորիւն. էջ 10.

շապուհի թագաւորութեան վեցերորդ տարին։ Սբ. Սահակը և թագաւորը յընծութեամբ դիմաւորում են նորան Ոհմ գետի մօտ և մեծ պատուով ընդունելով՝ ժօնախմբութիւնները են կազմում այդ առիթով [15]։

Այնուհետև սբ. Մեսրոպը նորից սկսում է իւր նախկին պաշտօնը, այսինքն գաւառից-գաւառ գնալով՝ քարոզում է Աստուծոյ կենդանի խօսքը. նախ գնում է Մարաց կողմերը և յետոյ Գողթան. այդտեղից Սիւնեաց աշխարհը։ Նա քարոզում է և միևնոյն ժամանակ մանուկներ ժողովելով՝ ուսուցանում է նոր գրով։

Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ սբ. Մեսրոպը մտածում է նաև վրաց բարբարոս ժողովրդի մասին. յօրինում է նոցա համար և սի նոր այբուբեն և ընտիր աշակերտներից մի քանիսի հետ գնում է վրաց աշխարհը, ներկայանում է նոցա Բակուր թագաւորին և պատուով ընդունւում։ Յետոյ Զաղայ անունով մէկ թարգմանի հետ քարոզում է, դպրոցներ է հիմնարկում և իրեն փոխանորդ նշանակելով՝ վերադառնում է Հայաստան, սբ. Սահակի մօտ [16]։

[15]) « . . . եկեալ հասանէր (սբ. Մեսրոպ) ի Հայաստան աշխարհն, ի կողմանս այրարատեան գաւառին, առ սահմանօք նոր քաղաքին ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց...։ Եւ արդ եկեալ յիշեին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին։ Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ոհմ գետոյն։ Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ. ուստի և բարբառօք ցընծութեամբ և երգօք հոգևորօք, և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն գառնային և գաւուրս ժօնական ուրախութեամբ անցուցանէին»։ Տես. Կորիւն էջ 11։

[16]) «Պարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, Հոգի ի մահ արկանէր սիրելին Քրիստոսի՝ և վասն բարբարոսական կոչմանն. և առնոյր կարգեալ նշանագիրս վճռացուրէն լեզուին, ըստ ընտրհեցելոյ նմա ի ստուածէ։ Գրէր կարգեր և օրինօք յարգարէր.

Նորից բաժանուելով սբ. Սահակից՝ այցելութեան է գնում այն գաւառները, ուր արդէն քարոզել էր, որպէս զի «զուարթացնէ», «նորոգէ» և «հաստատէ»: Այսպիսով նոր գիրն ու դպրութիւնը տարածելով Հայաստանի պարսից բաժնում, սբ. Մեսրոպը նոյնը ձեռնարկում է նաև յունաց բաժնի Հայաստանում, ուր արդէն առաջուց լսած լինելով նորա համբաւը պատուով ընդունում են նորան: Երկրի գլխաւորը սբ. Մեսրոպի գործունէութեան մասին տեղեկութիւն է տալիս Թէոդոս կայսեր, որ և հրամայում է սբ. Մեսրոպին *ակումիտ* տիտղոսը տալ [17]: Այնուհետև սբ. Մեսրոպն իւր աշակերտներին տանում է Մելիտինէ քաղաքը, յանձնում է նոցա Ակակիոս եպիսկոպոսին, իսկ ինքը գնում է Կոստանդնուպոլիս, ներկայանում է տիեզերական պատրիարքին և կայսրին. սոքա պատուով ընդունում են նորան և Զատկի տօնից յետոյ սբ. Մեսրոպը վերադառնում է Հայաստան կայսեր հրովարտակներով: Կայսրը թոյլ էր տալիս սբ. Մեսրոպին՝ յունաց բաժ-

---

և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յաւուրցեալ գնալոյ իջանել ի կողմանս վրաց. և երթեալ յանդիման լինէր թագաւորին՝ որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն:

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում՝ և յանձն առեալ ամենեցուն զվնդրելին կատարել: Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջազոյ, այր գրագէտ և ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետև արքայն վրաց՝ ի կողմանց կողմանց, և ի խառնիճաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկունս՝ տալ ի ձեռն վարդապետին»: Տես Կորիւն էջ 15.

17) «... Խորհուրդ առնոյր (սբ. Մեսրոպ) այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմոց: Եւ փութացեալ գնալոյր հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց. և վասն առաւելագոյն բարե-

նի Հայաստանում էս ուսուցանել հայոց նորագիւտ դպրութիւնը և կառուցել Բարբարիանոս աղանդի դէմ [18]:

Այն միջոցին, երբ սբ. Մեսրոպը զբաղուած էր յունաց բաժնի Հայաստանում, հանդիպում է նորան մի աղուան եպիսկոպոս, որի անունով, որից սուրբը սովորում է աղուա-

---

գործ համբաւուց՝ յառաջագոյն ընդունել անդ ի հիւսիսական կողմանց հռչակելոց, առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին, և յիշխանաց և ի գաւառականացն պատուեալ. մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անաստասիս ի մուտ ճանապարհին. որ զիւրս առաջի եդեալ գրով ցուցանէր կայսերն, որում՝ անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր, վայելուչ մեծարանօք զսուրբն Ակումիտ անուն կոչելոյ»: Տես. Կորիւն էջ 16:

18) «... Եւ մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր Աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ Կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատիկոս կոչէին. յորոց և գտեալ շնորհս՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել զարմանօք կարգելովք, սեկեղեցւոյն և յարքունեաց և պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյից ընդհանուրս, և առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւն, առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժանտագործ ազգին բարբարոսաց, և սեկեղեցւոյ հաստատութեան, և մեծամեծ պարգեւօք պատուել: Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն, անընկալ թողեալ. և երկրպագեալ ծիրանափառ օգոստականացն, և սրբոյ կաթուղիկոսին, և ընկալեալ ողջոյն սեկեղեցւոյն և յերեւելի իշխանացն քաղաքին, և ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս ի կառս արքունատուրս: Եւ մեծաւ շքով և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս, և ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երեւէին. և մեծամեծ պարգեւս գտեալ, գային հասանէին ի ժամադիր կողմանս. և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք,*

նից լեզուն և ստեղծում է աղուանից լեզուի համար մի այբուբեն [19]։

Յետոյ սբ. Մեսրոպը վերադառնում է Մեծ Հայաստան, ներկայանում է սբ. Սահակ Պարթևին ու Արտաշէս արքային և նորից ուղևորւում է դէպի Աղուանից աշխարհը, համոզում է նոցա եպիսկոպոս Երեմիային և Արսվաղ թագաւորին դպրոցներ բանալ և նոր դպրութիւն ուսուցանել նոր սերընդին։ Այնուհետև սբ. Մեսրոպը երկար ճանապարհորդութիւն անելով՝ կրկին վերադառնում է սբ. Սահակի մօտ և երկուսը միատեղ աշխատում են, որ նոր դպրութիւնը աղգին սիրելի և յարգելի դարձնեն. Սահակ կաթողիկոսը, ըստ իւր սովորութեան, շարունակում է թարգմանել և գրել։ Նոյն նպատակի համար իւրեանց աշակերտներից երկուսին՝ Յովսէփին և Եզնիկին ուղարկում են Եդեսիայ, որպէս զի սբ. Հայոց գրուածները ասորերէնից թարգմանեն Հայերէն [20]։ Սոքա այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ ուղևորւում են Բիւզանդիոն, այնտեղ սոցա հետ միանում են նաև Ղևոնդն ու Կորիւնը և չորսը միատեղ ուսումնա-

փութայր վաղվաղակի զՀրամանն կատարել. և հրեշտակս արձակեալ այնուհետև ի գաւառս կէս աղգին Հայոց՝ յիշխանութեան կայսեր, բազմութիւն մանկտւոյ ժողովել, և նոցին ուռճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յոր և երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր»։ Տես Կորիւն էջ 17։

[19]) «Յայնմ ժամանակի եկեալ դիպեր նմա այր մի երէց աղուան ազգով, Բէնիամէն անուն և նորա Հարցեալ և քննեալ զաարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերնապարգև կորովի սովորութեան իւրում. և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն, կարգեալ և հաստատեալ կըշռէր»։ Տես. Կորիւն էջ 18.

[20]) «Ձեզ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց աղգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել Մեծն Խաղակ՝

սիրելով յունաց լեզուն, պարապում են թարգմանութեամբ. ապա վերադառնալով Հայաստան, նոյնը շարունակում են սբ. Սահակի հետ ի միասին [21]։

Այնուհետև Կորիւնը համառօտ կերպիւ պատմում է սբ. Սահակ Պարթև կաթողիկոսի մահը, որ տեղի ունեցաւ «յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորէ կացելոյ ի պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի՝ ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին. յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, Հանդերձ Աստուածահաճոյ ա-

ըստ յառաջագոյն սովորութեան։ Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յայրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին Հարցն սրբոց զաւանդութիւնս, Հայերէն գրեալ դարձուսցեն»։ Տես. Կորիւն էջ 20.

[21]) «Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին Հալքն՝ զտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին...»։

«Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, վրաց և Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց, զաւուրն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվհեր և առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանագիշեր՝ անվհեր և առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց, և ամենայն հնեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենաւիրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին։ Եւ զամենայն ոգի Քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բաղում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզեալ զնոսա աշաւոր զօրութեամբն Քրիստոսի։ Եւ բաղում մուրհակս անիրաւութեան պատառեաց, և բազում սգաւորաց և կարճամտելոց՝ մխիթարական վարդապետութեամբն զակնկալ յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի նօթձեաց. և զամենայն միանգամայն յաստուածպաշտութեան պայման անդ փոխեաց...»։ Տես. Կորիւն էջ 21—22։

զօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ» [22]: Սբ. Սահակի ճիւնը տարւում է Տարօն և ամփոփւում Աշտիշատ գիւղում:

Սբ. Մեսրոպը իւր մեծ զուգակցի մահից յետոյ վարում է կաթողիկոսի տեղապահի պաշտօնը և վեց ամիս անցնելուց յետոյ նոյնպէս փոխւում է դէպի յաւիտենականը.

«Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգեւոր եառնդն ածէը, և բազում թուղթս խրատագիրս և զգաստուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէը, անդէն ի նմին ամի՝ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, լինէը Հանդերձ սրբով վարդապետով բանակն Հայոց յայրարատեան ի Նոր քաղաք, և նովին Հոգեկրօն վարուք հասանէը սրբոյն Քրիստոսակոչ կատարումն, հետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն մեհեկանի: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ և սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ. վասն նոցա օգնականութիւն հայցէր: . . . . Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձև երևէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորա սրբոցն զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր, և զհաճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս Հանգեաւ: Զոր առեալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, Հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ, և

[22]) Տես. Կորիւն էջ 25:

Հոգևոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք, և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն, յՕշականն ելանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէը, և նոքա իւրաքանչիւր դառնային: Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողեցան Վահանայ ամատունւոյ, Քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք քանդակելով, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն Հանգիստն յօրինեալ, որոյ սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկով և արծաթով և ականբք պատուականօք՝ ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի պատրաստեաց, և ամենայն սրբովք ի միասին գումարելովք խաչակրօն վկայիցն քրիստոսի, Հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, ի Հանգիստ խորանին փոխէ»: Տես. Կորիւն էջ 26—27:

ԳԼՈՒԽ Ժ.

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ[1]) ՊԱՏՄԱԾԸ ԳՐԻ „ԳԻՏՑ“-Ի ՄԱՍԻՆ



ուրը Մեսրոպը Տարօնի „Հացեկաց“ գիւղէցի էր և Մեծին Ներսէսի մօտ սնուած ու կըրթուած. նորա մահից յետոյ կարգուեցաւ արքունի քարտուղար, սակայն թողնելով այդ պաշտօնը միայնակեաց կեանք վարեց՝ առանձնանալով Գողթան գաւառը։ Նոյն գաւառում դեռ ևս Հեթանոսական պաշտամունքը ամբողջատացած չէր և Մեսրոպ երկրի իշխան „Շամբիթ“-ի օժանդակութեամբ կարողացաւ վերջ դնել այդ բա-

---

[1]) «Հայ Հերոդոտն—այս անունը տալիս է մեր պատմաբանին Հայագէտ Լանգլուան—և ըստ Մովսէս Թէ իւր պատմութեան առաջին գրքում—տես. գլուխ. Ա. էջ 1.—և Թէ մեր այլ պատմագրներից կոչւում է Խորենացի, Թէև նորա ծննդեան տեղն ոչ ոք չէ յիշում. ուստի և ճիշտ յայտնի չէ Թէ «Խորենացի» բառն ինչ ձևից է յառաջացել։ Եթէ ի նկատի ունենանք, որ մի այլ Մովսէս կոչւում է «Խործենացի»—տես. Մ. Խորենացի պատմութիւն Հայոց. գիրք III. գլուխ. ծգ. էջ 372—որի ծննդավայրն է «Խործէն», պէտք է եղրակացնել, որ Խորենացու ծննդավայրը պէտք է կոչուէր «Խորէն». այդպէս ևս բացատրում է Սէն-Մարտէն[1]). սակայն այդ ձևը մեր պատմաբաններից և աշխարհագիրներից ոչ ոք չէ յիշում և այժմ ևս չկայ[2]): Եթէ ի նկատի ունենանք «Ամթենացի» ձևն, որ իւր ծագումն առնում է, «Ամթէնք»-ից, այն ժամանակ «Խորենացի» բառի սկզբնական ձևը պէտք է լինէր «Խորէնք». սակայն այս ձևն ևս անհայտ է։ Հայր Ալիշանեանն իւր Մեծ Հայաստանի տեղագրութեան մէջ յիշում է, որ Մուշի մօտակայքում գտանուում են երկու վայրեր, որոնցից մէկը կոչւում է «Խորնի» իսկ միւսը «Խորօնք»։ Այս վերջին տեղը համարւում է քրիստոսահօր ծննդատեղին։ Ըստ Ներսէս Սարգսեանի մեծ և փոքր Հայաստանի նկարագրութեան՝ «Խորօնք»-ից ոչ հեռու գտանուող վանքի մէջ ցոյց է տրւում Մովսէս Խորենացու և իւր եղբօր Մամբրէի գերեզմանաքարերը։ Այստեղից յառաջանում է և այն հանգամանքն, որ *Մխիթարեանները* տեղ-տեղ Մովսէսին կոչում են «Խորօնեցի»

---

[1]) Տես. Saint-Martin „Memoires Historiques et Géographiques sur l'Arménie“ հատ. I. էջ 102։

[2]) Պրոֆ. Կոխ իւր արևելեան ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ յիշում է Մ. Խորենացու ծննդավայրն՝ ասելով որ ինքն այցելել է այդ վայրն, որ կոչւում էր «Խորուն» (?) կամ «Խորօնք» (?) —Chorun oder Chorunkh—և որ գտանուում է Մուրադ գետի մէս կողմը մի քանի ժամ Զիարեթից հեռու։ 1843—1844 Թ. այդ գիւղն ունեցել է միայն մի Հայ ընտանիք. Կոխը հետևեալ կերպիւ է նկարագրում. «Մենք ձիով անցանք «Արխօն» գիւղի միջով և վերջապէս հասանք խորուն, հին Խորենի (Խորենէ)։ Այդ գիւղը գտանուում է «Կոսմոս-դաղ»-ի սարոնում և մի քանի ժամանակից արդէն Թողնուած է իւր բնակիչներից։ Միմիայն մի Հայ ընտանիք գտանք այստեղ, այն ինչ միս տները մասամբ բանել էին քրդերը իւրեանց ձմեռուայ բնակութեան համար։ Հինգերորդ գարում Խորնին ունէր 1900 (?) տուն, 700 պրուտի և 1800 (?) մարդ զինուոր (այս Թուերը ստոյգ չեն)։ Տես. Prof. Dr. Koch։ Wanderungen im Oriente 1843—1844“ (վայմար. 1846) հատ. II. էջ 396.

նին՝ քարոզելով քրիստոնէական վարդապետութիւնը։ Նոյնն անում է նա *Սիւնեաց* աշխարհում „Վաղինակ“ իշխանի օգնութեամբ։

Այս շրջագայութեանց ժամանակ նա տեսնում է, որ ժողովուրդն ոչինչ չէ հասկանում եկեղեցւոյ պաշտօնեաներէ կարգացածից և ինքը ստիպուած է լինում կարդացածը թարգ-

կամ «Խորոնեցի»: Եթէ ընդունենք որ այժմեան «Խորօնք»ն է Մովսէսի ծննդավայրն, այն ժամանակ պէտք է ենթադրել, որ այդ տեղը հինգերորդ դարում կոչւում էր «Խորէնք» կամ «Խորէն»: Այժմեան «Խորնիին» չի կարելի «Խորենացի» բառի սկզբնաձևն ընդունել, վասն զի «Խորնի»ից պէտք է կազմուէր «Խորնեցի»,—ինչպէս որ «Անի»ից—«Անեցի»—և ոչ «Խորենացի» [3]:

Լանգլուան Խորենացու ծննդեան տեղը կոչում է „le bourg de Khorni ou Khoréne"—տես. նոյն I. էջ 385—մի այլ տեղ. „bourg asser considerable" de canton Daron"—տես. նոյնը հատ. II. էջ 47—որովհետև ըստ Ձենոբ Գլակ մատենագրի՝ երբ սբ. Գրիգոր Լուսաւորիչը զէնքի ուժով յաղթում է երկու յայտնի քրմապետներին, աւերած քրմատան տեղ եկեղեցի է կառուցանում ու վերակացու կարգելով Եպիփանին, տալիս է նորան 43 արեղաններ և տասներկու գիւղեր՝ եկեղեցու պիտոյքը հոգալու համար: Այդ 12 գիւղերի թւումն է ըստ Ձենոբ Գլակի նաև «Խորնի»ն, որ ունէր 1306 տուն բնակիչ. 700 այրուձի և 1007 հետևակ զօրք [4]:

Հայր Զարբհանալեանը նոյնպէս ասում է «Տարօնոյ «Խորնի» կամ «Խորօնք» գեղը ծնած է Մովսէս» [5]: Բրօսէն ասում է. „Movsès... né... au village de „Khoren" district de Taron..." [6]:

Ճիշտ յայտնի չէ նոյնպէս՝ թէ երբ ծնուեցաւ Խորենացին. ենթադրւում են, որ նա պէտք է 370 թ. ծնուած լինի—տես. Brosset նոյն էջ 3. նոյնպէս „Mémoires l'académie impériale des sciences de st. Petersbourg" VII-e série, tome XIII. № 5. էջ 67—նորա մանկութեան մասին ոչինչ յայտնի չէ մեզ.

[3]) տես. Baumgartner: „Über das Buch „die Chrie". էջ 1.:

[4]) տես. Ձենոբ Գլակի ֆրանսերէն թարգմանութիւնը—Langlois նոյնը. հատ. I. էջ 350:

[5]) տես. Զարբհանալեան. «Հայկական հին դպրութեան պատմութիւն» հատ. I. էջ 329:

[6]) տես. Brosset: „Deux Historiens Arméniens—Kirakos de Gantzac..., Ouktanès D'ourha etc.. էջ 3.

մանել. իսկ առհասարակ եկեղեցւոյ պաշտօնեաները թարգմանել չկարողանալով աւետարանի խօսքն իսկապէս գաղտնիք էր մնում ժողովրդին և ահա այս դժուարութեանց վերջ

իւր Հայոց պատմութիւնից տեղեկանում ենք իւր մասին, երբ արդէն հասակ առած երիտասարդ էր և իւր վերայ էր դարձրել սբ. Սահակի և Մեսրոպի ուշադրութիւնն, որ և շուտով ուղարկւում է արտասահման՝ լեզուաբանութիւն և աստուածաբանութիւն ուսանելու: Պառնում է Հայաստան 440 թուից յետոյ և այլևս իւր հոգևոր հայրերին տեսնելու բաղդը չունենալով՝ ողբում է. «Աւա՜ղ զօրանացս, աւա՜ղ թշուառական պատմութեանս. ո՞րպէս զախտս հանդուրժեցից բերել զիա՞րդ զմոռս իմ և զլեզուս պնդեցից, և հատուցից զբանս հարցն՝ փոխանակ ծննդեանն եւ սննդեանն: Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն եւ սնուցին, առ այլս առաքելով աճեցուցանել: Եւ մինչ նոքա զմերն յուսային դարձ, և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիս եւ կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել՝ անվեհեր երագութեամբ կրթեալք և առագաստի ասել երգս, արդ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր եւ ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կամ փուցմանց եւ լսել զվերջին քարբառն եւ զօրհնութիւն» [7]:

Խորենացին Սահակ Բագրատունու յանձնարարութեամբ գրեց Հայոց պատմութիւնը. յետոյ եղնիկ Կողբացու տեղ նշանակուեցաւ եպիսկոպոս և առաջնորդ Բագրեւանդի և Արշարունեաց երկրի և մեռաւ հալածուած տգէտ եկեղեցականների ձեռքից, որոնք այդ մեծ մարդու ոսկրներին անգամ հանգստութիւն չը տուին:

Թէ ո՞ր թուին վախճանուեցաւ մեր հայրենասէր քերթողահայրը, նոյնպէս անյայտ է. ոմանք ենթադրում են, որ նա վախճանուեցաւ 491 թ. 120 տարեկան հասակում [8]: Լանգլուան

[7]) տես. Մ. Խորենացի պատմութիւն Հայոց գիրք III. գլխ. կը. էջ 412.

[8]) տես. Brosset. նոյնն էջ 3. և Memoires etc. VII. s. XIII. t., 5. էջ 67.

դնելու համար Մեսրոպի մէջ ծագում է հայոց տառեր գըտնելու միտքն և երկար զբաղւում է զանազան փորձերով [2]։

Երբ Սահակ Պարթևը կաթուղիկոս ընտրուեցաւ, Մեսրոպը շտապեց գալ նոր կաթուղիկոսի մօտ և յայտնեց նորան իւր մտադրութիւնը տառերի վերաբերմամբ։ Սբ. Սահակը յայտնեց նորան, որ ինքն էս վաղուց փափագում է

[2]) «Վասն որոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս և արկեալ զանձն ի ջանս պէս պէս փորձիւք տաժանէր»։ Տես. Մ. Խորենացի պատմութիւն Հայոց. գիրք III. գլխ. խէ. էջ 355—356։

[9]) Տես. Langlois: „Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moise de Khoren", տպուած է Bulletin de l'académie imperiale des Sciences de St. Petersbourg. Հատ. III. էջ 537.

[10]) Տես. Richter: Historisch—kritischer versuch über die Arsaciden—und Sassaniden—Dynastie etc." էջ 208

[11]) Գուցէ պէտք է լինի չորսհարիւր եօթանասուն (470)

այդ և այդ օրից սկսեցին երկուսն էս միատեղ աշխատել, սակայն ոչինչ չ'կարողանալով՝ բաժանուեցան միմեանցից՝ ապաւինելով Աստուծոյ օգնութեան։ [3])

Այդ միջոցին հայոց «Վռամշապուհ» թագաւորը պարսից «Վռամ» արքայի հրամանով գնաց միջագետք յունաց և պարսից զօրքերի մէջ ծագած խռովութիւնը խաղաղացնելու։ Այս միջնորդութեան ժամանակ, որովհետև արքունի քարտուղար Մեսրոպը հեռացել էր, Վռամշապուհը մեծ նեղութիւններ է կրում մի կատարեալ թարգմանի պակասութեան պատճառով վասն զի հայոց արքունիքի պաշտօնական գրագրութիւնը տեղի էր ունենում պարսից գրով։ Այս գժուարութեանց առիթով «Հաբէլ» անունով մէկ քահանայ յայտնում է թագաւորին, որ իւր ազգական «Դանիէլ» եպիսկոպոսն ունի հայոց լեզուին յարմարեցրած տառեր [4]). սակայն Վռամշապուհը մի ա-

[3]) Տես. Մ. Խորենացի. նոյնը գիրք III. գլխ. խթ. էջ 361.

[4]) «... Վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի որումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիրս, յարմարեալ ի Դանիէլէ եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձաւորէ»։ Տես. Մ. Խորենացի. նոյնը. գիրք. III. գլխ. ծբ. էջ 368։

Մեր ձեռքի տպագրուած Խորենացու պատմութեան (Տփխիս 1881) մէջ ասուած է. «վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի որումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ. իսկ Ճնայի Հայոց մատենադարանի գրադարանում գտնուող մի ձեռագիր Խորենացու մէջ չկայ «քահանայ» բառը. «վասնորոյ մատուցեալ ոմն առ արքայն Հաբէլ անուն կոչեցեալ...»։ Տես. այդ ձեռագրի 163-րդ թերթ. երկրորդ էջ. երկրորդ սիւն. տող 19—20։

Այս ձեռագիր Խորենացին բաղկացած է 180 քառածալ թերթերից. չունի յիշատակարան. նոյն իսկ առաջին (?) երեսից սկսւում է բովանդակութեան ցանկը. վերջից պակասում է III գրքի «կը» գլուխը—ողբը—ամբողջովին և «կէ» գլխի վերջին հատուածը—վերջին երեսի վերջին տողն է. «... զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական»։ Ձեռագիրը գրուած

ռանձին ուշադրութիւն չդարձնելով այդ բանի վերայ, վերադառնում է Հայաստան: Իսկ այդ ժամանակ սուրբ Սահակ և Մեսրոպ կրկին միանալով ժողովել էին հայոց բոլոր եպիսկոպոսներին և խորհրդակցում էին հայոց այբուբենի «գիւտ»-ի մասին. այս բանը լսելով՝ թագաւորը պատմում է Միջագետքում պատահած դէպքն և ժողովը խնդրում է Վռամշապուհին մէկին ուղարկել Միջագետք այդ քահանայի մօտ՝ հաստատ տեղեկութիւն ստանալու համար: Վռամշապուհը լսելով դոցա խնդիրը՝ Միջագետք է ուղարկում իւր հաւատարիմ «Վահրիճ»-ին—որ էր «յոյժ փափագող նորին գործոյ»—Հաբէլի մօտ: Այդ երկուսը միասին գնում են Դանիէլ եպիսկոպոսի մօտ և «քաջ հմտացեալ ի Դանիէլ—է, կարգեալ ըստ ծեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից, եկեալ ետուն ցմեծն Սահակ եւ Մեսրոպ»: [5]) Սուրբ

է բոլորագիր տառերով և սև թանաքով հաստ մագաղաթի վերայ. գլուխներն ու սկզբի տառերը գրուած են կարմիր թանաքով: Ձեռագիրը լաւ է պահպանուած—բացի առաջի 2—3 թերթերից, որոնք կեղտոտ են, սակայն կարդացուում են. ունի տախտակից շինած կաշեպատ կարմիր կազմ: Ձեռագիրը յիշատակարան չունենալով՝ յայտնի չէ թէ ո՞վ և ե՞րբ է օրինակել. սակայն բազմաթիւ տառասխալները ցոյց են տալիս, որ անհմուտ ձեռքի գործ է: Ձեռագիրը Ենայի համալսարանին նուիրել է պրօֆ. Կոխ, որ ինչպէս երևում է ձեռք է բերել Հայաստանում ճանապարհորդելիս:—Լայպցիգի քաղաքային գրադարանի մէջ պահուած Խորենացու պատմութեան ձեռագիրն աւելի գեղեցիկ և հոգացողութեամբ է գրուած, սակայն աւելի նոր է քան այս ձեռագիրը:

[5]) Տես. Մ. Խորենացի. գիրք III. գլխ. ծբ. էջ 369. Ա յս հատուածը պրօֆ. Էմին հետևեալ կերպիւ է թարգմանել. „Вахричъ въ сопровожденіи послѣдняго—Հաբէլի—отправился къ Даніилу, у котораго познакомился онъ въ подробности съ писменами, изобрѣтенными въ древнѣйшія времена: расположилъ ихъ по порядку греческаго алфавита и по возвращеніи

Սահակ և Մեսրոպ ընդունելով այդ տառերը մի քանի տարի—«զամս սակաւս»—փորձում են սովորեցնել աշակերտներին, սակայն. «տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհնգեանայ բառից հայկականաց հազներգաբար՝ մուրացածոյիւն [6]) այնուհետև զծագրութեամբն»:

Այս անյաջողութիւնը տեսնելով՝ Մեսրոպը անձամբ մի քանի աշակերտների հետ գնում է Միջագետք Դանիէլի մօտ, սակայն նոր բան չգտնելով՝ գնում է Եդեսիայ Հեթանոս ճարտասան Պղատոնից խորհուրդ հարցնելու: Պղատոն [7]) ուրախութեամբ ընդունում է նորան, սակայն ինքն ևս չկարողանալով օգնել՝ խորհուրդ է տալիս Մեսրոպին գտնել «Եպի-

---

представилъ ихъ Сааку...“ Տես. Исторія Арменіи, Моисея Хоренскаго. Эминъ.

Մեր ստորագծած տողերը չեն համապատասխանում բնագրին. պրօֆ. Էմին պնդում է ըմբռնել, որ իբր թէ Վահրիճն է Դանիէլի մօտ գտանուած տառերն ըստ յունաց այբուբենի դասաւորել. այն ինչ՝ ըստ մեր հասկացողութեան Խորենացին այդ բանը վերագրում է Դանիէլին. վերջինս առաւել համապատասխանում է հանգամանքներին: Երկրորդ. Խորենացին ասում է «եկեալ ետուն», այսինքն Վահրիճ և Հաբէլ. Էմինի թարգմանութիւնից այդ պարզ չէ երևում: Այդ հատուածը սխալ է թարգմանուած նոյնպէս Խորենացու պատմութեան գերմաներէն թարգմանութեան (գիրք երրորդ) մէջ, որ արել է Լաուէր:

[6]) Այս հատուածը նոյնպէս սխալ է թարգմանել Լաուէրը. տես. Lauer էջ 213:

«Մուրացածոյիւն» բառը պրօֆ. Էմին թարգմանել է. „скуднаго и бѣднаго алфавита“, որ նոյնպէս ճիշտ չէ թուում մեզ: Խորենացին «Դանիէլեան նշանագիրն» օտար համարելով անուանում է նորան «մուրացածոյ»—այսինքն՝ մուրացած, օտարից առնուած:

[7]) Պղատոնի անունը յիշում է միայն Խորենացին և նորա հետևողները. օտար գրականութեան մէջ անյայտ է այս անձը:

փանոս»[8]) անունով մեկին, որ առաջ իւր ուսուցիչն էր եղել, ասելով որ նա կարող է օգնել—«զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափաքդ քո»,—Մեսրոպ «Բաբելոս»[9]) եպիսկոպոսի օգնութեամբ գնում է Փիւնիկէ և այն տեղից «Սամոս» որովհետև «Եպիփանոս» արդէն վախճանուել էր՝ թողնելով, «աշակերտ մի անուանեալ «Հռոփանոս» հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ, որ ի Սամոս էր միայնացեալ»: Սակայն սա ևս ոչնչով չէ կարողանում օգնել Մեսրոպին, որև ճարահատեալ «... յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին զործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ծեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի զի որպէս ի ձեռն վերջք գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթից, Նստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռոփանոսիւ

[8]) Հայր Ճամչեանը ենթադրում է, որ այդ Եպիփանոսը պէտք է լինի «սուրբն Եպիփան եպիսկոպոս Սալամինայ»: Տես. Ճ ա մ չ ե ա ն. նոյնը Հատ. I. էջ 492.

[9]) «... Ցայնժամ առեալ սրբոյն Մեսրոպայ թուղթ յանձնարարական ի նմանէ, և յիրաքոսէ կամ ի բաբելոսէ եպիսկոպոսի տեղոյն». տես. Ճամչեան նոյնը. Հատ. I. գիրք բ. գլխ. ծգ. էջ 492:

Սէն-Մարտէնը պատմելով Խորենացու ասածը՝ ծանօթութեան մէջ գրում է «Բաբելոսի» մասին. «Հայոց մատենագիրներն այս եպիսկոպոսին «Բաբելոս» անունն են տալիս. սակայն ասորոց մատենագիրներն, որ ճանաչում են այդ ժամանակամիջոցի եկեղեցիի բոլոր առաջնորդներին, չեն յիշում մի այդպիսի անուն: Հաւանական է, որ այդ անձը լինի «Ռաբուլան», որ եպիսկոպոս եղաւ Սելևկեան 723 թ. որ է 412 թ. Քրիստոսի: Տես. Saint-Martin, նոյնը Հատ. V. էջ 322. ծթ. 2: Սակայն այս անձնաւորութիւնը չի կարող Խորենացու յիշած «Բաբելոս»ը լինել, ուրովհետև «գրի գիւտը» տեղի ունեցաւ 412 թուից ուղիղ տարի առաջ—404 թ.:

կերպաձեւեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ. փոխատրելով զհայերէն աթուրեայն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հելլենացւոց»: Սպա Մեսրոպ իսկոյն ձեռնարկում է Ասորական գրքի և նոր կտակարանի[10]) թարգմանութեան՝ և իւր աշակերտների օգնութեամբ միևնոյն ժամանակ «զարուեստ գրչութեան տալով իւրոց մանկտոյն աշակերտացն»:[11])

Սուրբ Մեսրոպ վերադառնալով Հայաստան՝ թագաւորի և կաթողիկոսի հրամանով գաւառներում դպրոցներ է բանում և ուսուցանում հայոց լեզուով ու գրով. այս տեղի է ունենում միայն պարսից բաժնի Հայաստանում. իսկ յունաց բաժնում դեռ ևս սովորում էին յունարէն գրով:[12]) Այնուհետև Մեսրոպ գնալով Վրաստան՝ «Ջաղա» թարգմանի աջակցութեամբ

[10]) «Արդ՝ ի կատարել փափաքանաց երանելոյն Մեսրոպայ, թէպէտ և կամէր նա դառնալ իսկոյն առ սուրբն Սահակ, բայց առ խնդրութեան սրտին անդէն վաղվաղակի ձեռն էարկ ի թարգմանութիւն. մանաւանդ զի եւ ժամանակն ծմեռն էր եւ անյաջող ի ճանապարհորդել»: Տես. Ճ ա մ չ ե ա ն. նոյնը. Հատ. I. էջ 493: Մեզ անյայտ մնաց այն հանգամանքը, թէ Ճամչեանն ինչ հիման վրայ է ենթադրում, որ այդ ժամանակ ձմեռն էր. ոչ Խորենացին, ոչ Կորիւն և ոչ ևս Փարպեցին այդպիսի ակնարկութիւն իսկ չունեն:

[11]) Տես. Խ ո ր ե ն ա ց ի. նոյնը. գիրք III. գլխ. ծգ. էջ 369—371:

[12]) «... և ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն պարսից՝ բայց ի Յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեան տուգանեցան՝ վիճակել յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորուով»: Այս հատուածը պրօֆ. Էմին թարգմանել է հետևեալ կերպիւ. „... где подчиненные кесарийскому престолу обязаны были употреблять греческія и сирійскія письмена“, որ նոյնպէս սխալ է. յունաց բաժնի Հայերը պարտաւորուած չէին ասորոց գիրը գործ դնել այլ միայն յունաց. ասորոց գիրը և լեզուն երդուում և կարդացուում էր պարսից բաժնի Հայաստանում, ուր մինչև անգամ յունարէնն արգելուած էր պարսից պետութիւնից:

և օժանդակութեամբ յօրինում է նաև վրացերէն տառեր. Մեսրոպի այս ձեռնարկութեան աջակցում են վրաց թագաւորը „Բակուր"ն և Մովսէս եպիսկոպոսը: Ասպա աշակերտները ժողովելով բաժանում է նոցա երկու դասակարգի և ուսուցիչ կարգում իւր աշակերտներից երկուսին „Ցէր խորհենացուն" և „Մուշէ Տարօնեցուն": Այնուհետև Մեսրոպ գնում է „Աղուանք" [13]) և նոցա թագաւոր „Արսավղէն"ի և „եպիսկոպոսապետ Երեմիայի" օժանդակութեամբ ժողովում է աշակերտներ և ուսուցանում: Այստեղ Մեսրոպին յաջողւում է „Բենիամին" հմուտ թարգմանի ձեռնտուութեամբ աղուանից կոկորդախոս, կոշտ, բարբարոսական և կոտրտուած լեզուի համար („որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ գարգարացուց լեզուին") ևս տառեր ձևակերպել և իւր Յովնաթան աշակերտին թողնելով այնտեղ՝ ինքը դառնում է Հայաստան սկսած գործը շարունակելու համար: Եւ „գտաննէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յատորոյն՝ յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ուսա-

[13]) «... և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք, զի աղու ծայնէին զնա»: Տես. Խորենացի. Նոյնը. գիրք II. գլխ. ը. էջ 113: Նոյնը կրկնում է Մովսէս Կաղանկատուացին. տես. „История Агванъ" М. Каганкатваци. պրօֆ. Պատկանեանի թարգմանութիւնը. գլխ. 4. էջ 5: Պրօֆ. Պատկանեան ծանօթութեան մէջ գրում է. «Կարապետ Շահնազարեանց իւր՝ կաղանկատուացու պատմութեան հրատարակութեան յառաջաբանում այն եզրակացութեան է գալիս, որ այդ Աղուանք անունը յառաջ է գալիս այն պատճառաւ, որ այդ ժողովուրդը «գոշ» աչքեր և մազեր ունէր կամ թէ լեռնոտ երկրում կենդանաբուծութեամբ էր պարապում: Լատիներէն „albus", քելտերէն „alb", գերմաներէն „Alp" նշանակում են լեռնոտ. տես. Ист. Агванъ. Նոյնը. յաւելուած I մասի ծթ, էջ 285:

նել դպրութիւն ումեք լիւրեանց մասինն, այլ միայն ասորի": [14])

Երբ Սահակ Պարթև կաթուղիկոսը թողնելով պարսից քաժինը գնում է յունաց քաժնի Հայաստան ու արժանավայել ընդունելութիւն չէ գտնում այնտեղ, ուղարկում է Սուրբ Մեսրոպին և իւր թոռը Վարդանին Բիւզանդիոն երեք նամակով: Այդ նամակներից մէկն ուղղուած էր Թէոդոս կայսեր [15]), որի մէջ կաթուղիկոսը գանգատւում է. „... ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ, մինչեւ զնշանագիրս անգամ ոչ ընկալան, զորս երեր նոյն այր՝ զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ դորա յԱսորւոց աշխարհին", և ապա խնդրում է. „... հրամայել ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր":

Երկրորդ նամակն ուղղուած էր Բիւզանդիոնի եպիսկոպոս „Ատտիկոսին" [16]), որի մէջ սուրբ Սահակը Մեսրոպին տալիս է հետևեալ նշանաւոր և նորա մեծ նշանակութիւնը ճանաչող տիտղոսը. „...առաքեցի զուսուցող մերոյ աշխարհիս Մեսրոպ":

Երրորդ նամակն ուղղուած էր „Անատոլիոս" [17]) զօրա-

[14]) Տես. Մ. Խորենացի. նոյնը գիրք III. գլխ. ծդ. էջ 371.

[15]) Պ. Կոստանեանց խօսելով այս դեսպանութեան մասին ասում է. «Ինչպէս գիտենք Վարդանը 404—406 թուականին սուրբ Մեսրոպի հետ դեսպան գնաց Բիւզանդիոն»: Տես. Կոստանեանց «Հիւսուածք» հատ. III. էջ 100.

404—406 թ. սխալ լինելը կարևոր չէ այլ ապացոյցների, վասն զի Թէոդոս բ. կայսրն, որին Սահակ պարթև նամակ է ուղարկում, թագաւորեց 408 թուին:

[16]) «որ էր ընիկ ի հայոց ազգէ և ի քաղաքէն Սեբաստիոյ —ըստ Սոկրատայ և ըստ այլոց»: Տես. Զամչեան. նոյնը. հատ. I, էջ 503.

[17]) «... Անատոլիոս զօրավարը, ըստ Լանգլուայի, մեծ յար-

վարին, որի մէջ և սուրբ Մեսրոպ կոչւում է „մեր ուսուցանող“.

Անաստոլիոսը պատուով ընդունում է Մեսրոպին, որովհետև „զլուր առաքինութեան Մեսրոպայ լիշեալ, որ յառաջագոյն հնչեցեալ էր զնմանէ“. և ուղարկում է Բիւզանդիոն։ Դեսպանութիւնը կայսեր կողմից պատուով ընդունում է— „յանդիման եղեալ մեծի թագաւորին, առին զոր յուսայինն և զոր ոչն յուսային“— և դառնում Հայաստան կայսեր և Անատիկոս եպիսկոպոսի նամակներով։

Թէոդոս II. կայսրը Սահակ Պարթևին գրած պատասխանի մէջ յանդիմանում է կաթուղիկոսին. „զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ։ Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, յԱստուածոց ոմանց խնդրէիր զիմաստից զիւոս։ Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ծառայիդ արհամարհել զայդպիսի ուսմամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստիդ ի շնորհայ վերնոյն եղև, դրեցաք՝ զի ամենայն փութով ուսցին և զքեզ պատուով

գանք էր վայելում Թէոդոս փոքրի թագաւորութեան ժամանակ. տես. Langlois: Collection etc. հատ. II. էջ 165 ծթ. 1.

«Անատոլեայ զօրավարի ընկալեալ զՀրաման արքունի, և կեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր, հաճի ի գաւառին Կարնոյ իբրև ի միջոցի շինել զքաղաքն արգաւանդահող... և անուանեաց Թէոդուպօլիս, զի յիշատակ քաղաքին անմահ լիցի անունն»—Տես. Մ. Խորենացի գիրք III. գլխ. ծթ. էջ 385—387.

Վարդան պատմագիրն իր „աշխարհացոյց ամենայն տիեզերաց՝ աշխատութեան մէջ ասում է. „Կարնոյ քաղաքն՝ Արզրում է, որ կոչի Թէոդուպօլիս, զոր պարսպեաց թագաւորն փոքր Թէոդոս. և էին վերակացուք գործոյն Ս՛ուլէս քերթողն եւ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն“։ Տես. „Ռակեփորիկ“. գլխ.

ընկալցին...։ Եւ հրամայեցաք քաղաք [18]) շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց։ Եւ վասն քո արարաք ստրատելատ [19]) զՎարդան զորդի որդեացելոյ քո, և յառաջին վարդապետան գրեցաք զՄեսրոպ»։

Անատիկոս եպիսկոպոսն էս իւր կողմից յանդիմանում է Սահակին, որ նա տառերի «գիւտ»ի համար փոխանակ Բիւզանդիոն դիմելու և «Յովհաննէս Ոսկեբերանից» խորհուրդ հարցնելու, կամենում է. «ի սահմանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել»—ակնարկում է ասորական գիտութիւնը—սակայն նոյնպէս ուրախութիւն է յայտնում, որ «ամենակալին տեսեալ զնոսոցի աշխատութիւնն, ընդեաց ի ծեզ զշնորհս Հոգւոյն...» և վերջը յայտնում է, որ «Հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. և աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ

լթ. տպուած է „Բազմավէպ“ի ամ. Հատորի մէջ (1887) էջ 138։ Տես. նոյնպէս Saint-Martin. „Memoires sur l'Arménie“ II. հատ. էջ 426. նոյնպէս. Dulaurier: Extrait de la chronique de Michel le Syrien“ տպուած է Journal Asiatique հատ. XIII. էջ 349. Կարին քաղաքի շինութիւնը զանազան պատմագիրներ- զանազան թուականներին են վերագրում. Մխիթար Այրիվանեցին ընդունում է 452 թ. Սամուէլ Անեցին 444 թ. Բիւզանդական պատմագիրներից շատերը 416 թ. իսկ Սէն-Մարտէնը 415 թ.— Տես. Bulletin de l'acad. etc. հատ. VIII. էջ 407։

[18]) Կարնոյ նահանգը հնուց կոչւում էր նոյնպէս „Կարանատիս“—տես. S.-Martin: Hist. du Bas-Emp. etc. հատ. 5. էջ 446. նոյնպէս և Mémoires etc. հատ. I. էջ 44.—Կարինն էս պատմական անուն դառնալով՝ այդ քաղաքն այսօր կոչւում է պաշտօնապէս „Արզրում“, որ ըստ Սէն-Մարտէնի ծագում է „Արծն“ անունից „. . . Arzenerroum, ou par contraction Arzroum, c'est-à-dire Arzen des Romains“։ տես. S.-Martin Hist. etc. հատ. V էջ 448. նոյնպէս Mémoires etc. հատ. I. էջ 68։ Լանգլուան այդ բացատրութիւնը համանական է գտնում տես. Langlois: Collection etc. II. էջ 167.

[19]) Սարատելատոս կոչւում էին բիւզանդական զօրքի զօրավարները։

հաւանել, և կամ հալածել ի քումմէ վիճակէդ։ Եւ զառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկղեսիաղիկոս» [20]։

Սբ. Մեսրոպը վերադառնալով Յունա-Հայաստան՝ անմիջապէս սկսում է Հայոց դպրութեան ուսուցումն. «զոր անյապաղաբար սկսեալ ուսուցանել երագապէս վարդապետեցին զկողմն արևմտեան, որպէս զարևելից»։—Այսպիսով *ամբողջ Հայաստանում* տարածւում է հայերէն տառերի հետ նաև հայկական դպրութեան և բուն ազգային ոգին։—Սուրբ Սահակը քաղաքական պատճառներով անցնելով Պարսկա-Հայաստան, Մեսրոպին թողնում է յունաց բաժնում շարունակելու իւր գործն և «բորբորիտոն» [21] ազանդաւորների դէմ մարտընչելու։

Մեսրոպ «Շաղգոմքն» անուանած տեղում վերջացնելով հայ դպրութեան ուսուցման ընթացքն իւր առաջին աշակերտների հետ «*քանզի ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իբրեւ զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր*», կարգում է նոցա տեսուչներ. «գԼևոնդ և զԵնովք ի *Սպեր, իսկ ի Դերջան՝ զնոցին եպիսկոպոսն զՆիւթ և յեկեղեաց՝* [22] զԻանան»,

[20]) Մեր նպատակից դուրս է քննել Խորենացու յառաջ բերած այս նամակների ճշտութիւնը. միայն այնչափ կասենք, որ սոցա բովանդակութիւնն և ձևը չի կարող համապատասխանել բնագիր նամակներին, եթէ դոքա գոյութիւն ունէին, որ անհաւանական չէ։

[21]) Բորբորիտոնները գնոստիկական հերետիկոսների ամենաատելի աղանդաւորներն էին։

[22]) „Սպեր", „Դերջան" և „Եկեղեաց" գաւառները գտանւում են „Բարձր Հայք"ում։

„ჰჭლეცთ" անունը յիշուած է վրաց Վախտանգ V-րդ արքայի „Վրաց պատմութեան" մէջ. Փարնաւազը պատերազմելով Ազնի հետ, յաղթում է նորան և յունաց երկրի սահմանները, „Անձիանձորի" —„ნმჟნმრრნ" և „ჯ-քլէցիէ" —„ჰჭლეცთ" երկիրները կողոպտում. տես. Iul. Klaproth: Reise in den Kaukasus und nach Georgien Հատ. II. էջ 97։

և ինքն «եկեալ յԱյրարատ, անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն գողթն», վասն զի հեթանոսութեան սերմերը մնալով այնտեղ, վերջին ժամանակներն, երբ Հայաստանը քաղաքականապէս ընկել էր, մեծ յառաջադիմութիւն էր անում։ Մեսրոպին յաջողւում է գաւառի իշխանի օժանդակութեամբ վերականգնել քրիստոնէական վարդապետութիւնն և իւր յաջորդ նշանակելով «Մուշէն եպիսկոպոսին, ինքն դառնայ զԳարդմանայ ձորովն», որտեղ բուն էին դրել աղանդաւորները. այստեղ ևս յաջողւում է նորան գարդմանաց իշխան «Խուրա»ին և իւր ժողովրդին քրիստոնէութեան ուղիղ շաւիղի վերայ դնել։ Սորանից յետոյ Մեսրոպ գուգարաց իշխան «Աշուշայ»ի [23] հրաւէրով գնում է «Տաշրաց» գաւառը քրիստոնէութիւնը վարդապետելու և հայ դպրութիւնն ուսուցանելու։

Միւս կողմից յառաջ էր գնում թարգմանութեան գործը. Յովսէփ և Եզնիկ Կողբացի աշակերտներն ուղարկւում են Միջագետքի Եդեսիայ քաղաքն, որպէս զի սուրբ Հարց գրուածքները թարգմանեն հայերէն և բերեն. սակայն սոքա նամակները ստանալով, որ իբրև թէ Սահակ և Մեսրոպ այլոց պէտք է Բիւզանդիոն ուղարկեն նոյն նպատակի համար, անմիջապէս թողնում են Եգեսիան և ուղևորւում Կ. Պոլիս «նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց. եւ քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ, ձեռնարկեցին ի թարգմանել եւ ի գրել»։ Մեսրոպի աշակերտներից «Ղևոնդ» և «Կորիւն» բարի նա-

[23]) Ա-յս ինքնակալը յայտնի է Պարիզի կայսերական հքադրամների կաբինետում պահուած մի խիստ հետաքրքրական յիշատակարանի շնորհիւ։ Նորա պրօֆիլ կիսարձանը փորագրուած է անիքս քարի վերայ, շուրջը կարդացւում է այս աւանդութիւնը *Օվասա պիտիաքսես իբ(?)երօն կարկեդօն*—Օվասա բառը ոչ այլ ինչ է, բայց եթէ Աշուշայ անունը, որ անճանաչելի է դարձել փորագրողի շնորհիւ։ Տես. Langlois: Collection etc. Հատ. II. էջ 167. ծթ. 2։

խանձով լցուած դէպի իւրեանց ընկերներն, իրանք ևս շտապում են գնալ Բիւզանդիոն նոցա մօտ. նոյնն անում են և «Յովհան» և «Արձան» աշակերտներն, որոնք վաղուց ուղարկուած, սակայն ճանապարհին ուշացել էին՝ Կեսարիայ մնալով: Սահակի և Մեսրոպի աշակերտներն սիրով ընդունում են Բիւզանդիոնում Մաքսիմիանոս [24]) եպիսկոպոսից:

Ներսեսի ժողովից յետոյ, երբ մեր թարգմանիչները վերադառնում են Բիւզանդիոնից [25]), իւրեանց ուսուցիչներին՝ Սահակին և Մեսրոպին գտնում են Տարօնի Աշտիշատում և դոցա ներկայացնում այդ ժողովի կանոնները և սուրբ գրոց ստոյգ օրինակները. «զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ: Բայց քանզի անգիտաք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմիզ առաքեցին յԱղեքսանդրիայ՝

[24]) Տես. Մ. Խ ո ր ե ն ա ց ի, նոյնը գիրք III. գլխ. կ. էջ 387—389. „Որոց ընդունելութիւն արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացւոց": Այստեղ նկատում է Լանգլուան. „Սիսիանոս, Ատիկոսի յաջորդը 426 թուին և Նեստորիոսի և Մաքսիմիանի նախորդը, սիրալիր ընդունելութիւն արաւ Սահակի և Մեսրոպի ուղարկուածներին. բայց Մովսէսը խօսում է միայն Մաքսիմիանի մասին առանց բացատրելու Սիսինիոսի վերաբերութեամբ լռելու պատճառը. Մաքսիմիանը յաջորդել է Նեստորիոսին 431". տես. Langlois նոյնը հատ. II. էջ 168 ծթ. 1:

[25]) „Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի (Եփեսոսի ժողովն ընդդէմ Նեստորի, որ տեղի ունեցաւ 431 թ. տես. Langlois հատ. II. էջ 168. նոյնպէս Brosset: „Collection d'Historiens Arméniens" հատ. II. էջ 380. ծթ. 6) Մեծն Սահակ և Մեսրոպ, գրեն առ նոսա „Կիւրեղ" աղեքսանդրացի և „Պրոկղոս" Կոստանդնուպոլսի և „Ականկ" Մելիտինոյ եպիսկոպոսք: Պրոկղոսի նամակները յունարէն լեզուով գտանւում են Նանոի ժողովի հաւաքածուի մէջ. հատ. V. էջ 422.

ի լեզու պանլծաի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան» [26]):

Ապա Խորենացին գեղեցիկ բանաստեղծական ոճով նկարագրում է համառօտ կերպիւ իւր ճանապարհորդութիւնը դէպ Եդեսիայ [27]), Պաղեստինայ, Եգիպտոս, Աղեքսանդրիայ, այդտեղից կամենալով Յունաստան դառնալ՝ հոգմի բռնութեամբ ընկնում է Իտալիայ և այցելում Հռոմ. ապա թէ՝ գնալով Յունաստան՝ այցելում է Ատտիկէ, մի փոքր ժամանակ մնում Աթէնք [28]) և նաւում Բիւզանդիայ [29]):

[26]) Տես Մ. Խ ո ր ե ն ա ց ի գիրք III. գլխ. կա. էջ 391.

Հին կտակարանի հայերէն թարգմանութեան քնագիրն եղել է „եօթանասնից՝ կոչուածը: Եօթանասնից թարգմանութիւնը տեղի ունեցաւ Ալեքսանդրիայում՝ եբրայերէնից-յունարէն. այս թարգմանութեան տարբեր գրքերը թարգմանել են տարբեր անձինք՝ զանազան ժամանակներում: Թարգմանութիւնը վերջացել է հաւանականապէս երկրորդ դարու երկրորդ կիսում:

[27]) Եդեսիոյ դպրոցն արևելեան ուսումնասիրութեան կենդրոնն էր յունաց և պարսից հպատակների համար. պարսից հպատակ քրիստոնեայ երիտասարդները այցելում էին այդ դպրոցը: Եւ երբ այդ դպրոցն եկեղեցական երկպառակութեանց ընորհիւ կործանուեցաւ, պարսից հպատակ քրիստոնեաները չէին կամենում զրկուել դորանից—Եդեսիոյ դպրոցը փակուեցաւ 489 թ. Զինօ կայսեր հրամանաւ—ուստի Մծբին քաղաքում, ուր առաջուց գոյութիւն ունէր դորա նման մի դպրոց, վերականգնեցին Եդեսիոյ դպրոցը:

„Այս դպրոցին են պարտական, ասում է Ռանքէն, Սասանեան պետութեան քրիստոնեայ հպատակները իւրեանց քաղաքակրթութիւնը: Այս դպրոցը հանդիսանում է պաշտպան քրիստոնէական գաղափարների՝ ընդդէմ յառաջ մղուող կռապաշտութեան": Տես. Ranke: Weltgeschichte հատ. V. մասն. 1. էջ 14:

[28]) Աթէնքի դպրոցը, որ ծաղկեց չորրորդ դարում Յուլիանոսի, Պրոկլոսի—հռետոր Պարոյր Հայկազն—Հիմերիոսի և այլոց ժամանակ, չորրորդ դարու վերջերն արդէն իւր անկման վերայ էր. մինչ Աղեքսանդրիայի դպրոցը մի փոքր առաւել երկարատև եղաւ:

[29]) Տես. Խ ո ր ե ն ա ց ի գիրք III. գլխ. կբ. էջ 392—394:

Սակայն երբ Խորենացին վերադառնալով Հայաստան՝ «յուսայաք Հարսանեաց պարել՝ անվեհեր երագութեամբ կըրթեալք, և առագաստի ասել երգս, արդ փոխանակ խրախճանութեանն՝ ի վերայ զերեզմանի ողբս ասելով ողորմելի հառաչեմ. ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցմանց, և լսել զվերջին բարբառն և զօրհնութիւն»:

Թէոդոս II *կայսրն, որ միշտ պաշտպան էր Հանգիսանումի գիտութեանց և արուեստի, հիմնեց Կ. Պօլսի ճեմարանը 425 թ. որ ունէր 20 ամբիոն քերականութեան համար. 10 յունաց և նոյնչափ լատինական լեզուի համար, 8 հռետորութեան, 1 փիլիսոփայութեան և 2 իրաւաբանութեան համար։—Խորենացին իր ճանապարհորդութիւնը նկարագրելիս չէ յիշում իսկապէս՝ թէ ո՛րը է եղել այն ինչ տեղն և ո՛րչափ ժամանակ մնացել՝ ամեն անգամ ասելով. „ոչ բաղում կացեալ“, „սակաւ ինչ մնացեալ“, „թեթևակի ընդ խորս գիւանին նաւեալ“, „մնալ վայրկեան“ և այլն. որ կարող է մի երկու շաբաթ և միևնոյն ժամանակ մի երկու տարի նշանակել։ Ս է ն-Մ ա ր տ է ն ի հաշուով Խորենացին եօթը տարի պէտք է ուսած լինի Աղեքսանդրիայում. „Il habita sept ans en Egypte“ տես. S.-M. Hist. etc. Հատ. VI. էջ 45։*

Այս թիւը կամայական է և ոչինչ հաստատ հիմք չկայ այդ ընդունելու համար։ Բ ա ու մ գ ա ր տ ն ե ր ը համաձայնելով „Ֆ է տ է ր“ի հետ, ենթադրում է, որ ամբողջ ճանապարհորդութիւնը պէտք է տևած լինի տասը տարի։ Տես. Baumgartner: Über das Buch „die Chrie“ *էջ 497.—Թէև այս թիւն ևս հաստատ հիմք չունի, բայց աւելի հաւանական ենթադրութիւն է. սահմաններն են Աշտիշատի ժողովն և սուրբ Սահակայ և Մեսրոպայ մահը։ Թէև կայ մի այլ լիակատար նկարագրութիւն Խորենացու և Դաւիթ Անյաղթի ճանապարհորդութեան, սակայն այդ աղբիւրի ճշտութիւնը շատ կասկածելի է, ուստի և չենք հետևում դորան. այդ աղբիւրը հրատարակել է գեր. Սրուանձտեան եպիսկոպոսն իր „Հնոց-Նորոց“ աշխատութեան մէջ, որի պակասը լրացնում է Պարիզում գտանուած մի այլ ձեռագիր։ Սրուանձտեանի հրատարակութիւնը կրում է „Հարցմունք Քաղկեդոնականաց եւ պատասխանք ի Մովսիսէ եւ Դաւթայ“։*

Մեծն Սահակը *յիսուն եւ մէկ* տարի կաթուղիկոսական ծանր պաշտօնը վարելուց յետոյ վախճանւում է «յելս ամսոյն Նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն»։ «Որ մահկանացու ծնեալ, անմահ գիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն. և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութիւն իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առընդունել»։ Այս մեծ մարդու մարմինը թաղւում է Տարօնի Աշտիշատ գիւղում, որ իւր սեպհական կալուածն էր։

Հայաստանի այդ լուսաւորիչ աստղի ընկնելուց յետոյ անցնում է միայն *վեց ամիս*, և ահա փոխւում է երկրորդ պայծառ լուսատուն՝ «*հայ աշխարհի ուսուցանող*» սուրբ Մեսրոպը՝ Վաղարշապատում. «գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք։ Ինդի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր։ Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարսափիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»։ Այս սուրբ մարդու մահը հետևեալ կերպիւ է նկարագրում Խորենացին. «Որպէս լուայ ի բազմաց և ի հաւատարիմ արանց, երեք եկաց լոյս շողապէս ընդ աղօտ նշան խաչի ի վերայ տանն, ուր երանելին զհոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ՝ էանց ճառագայթումն, կամ սակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեանն, մինչ յոլովից մկրտել յանհաւատից։ Յայնժամ լեալ աղմուկ շփոթի յամբոխութեանն, բաժանեալ յերից գունդս, վասն հանգուցանելոյ զպարկեշտն զայն մարմին և նախ քան զմահն կրթեալ ի մեռելութիւն։ Կէսքն ասէին տանել ի բնահն գաւառն իւր ի Տարօն, և ոմանք ի նախ աշակերտեալն

Գողթն, և այլքն անդէն ի Վաղարշապատ քալաքի ի սըբ-
բոցն դիրս։ Բայց յաղթեալ քաջն Վահան Ամատունի, զի էր
զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի
ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ պարսից զհա-
զարապետութիւն Հայոց աշխարհիս. որոյ բարձեալ՝ տարաւ
զնա արժանի յուղարկմամբ յիւր գիւղն Օշական. և նոյն տե-
սիլ լուսեղէն խաչին ի վերայ երթեալ դագաղացն՝ յանդիման
ամենայն ժողովրդեանն, մինչև ի հանգիստ զնա փոխեցին
Վահան և Թաթիկ նորին արբանեակք. և ապա նշանն անե-
բևոյթ լինէր։ Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղա-
պահութեամբ յաջորդեաց Հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝
նորին աշակերտ Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խողոցիմ
գեղջէ»[30]։

Թէ ինչ հետևանք ունեցաւ այս երկու մեծ մարդկանց
մահն, ոչ ոք այնպէս գեղեցիկ և սրտառուչ կերպիւ չի կա-
րող նկարագրել, ինչպէս Մ. Խորենացին իւր ողբի մէջ. «Ող-

---

[31]) Տես։ Խ ո ր ե ն ա ց ի գիրք III. գլխ. կէ. էջ 406—409։
Օշական գիւղը, ուր ամփոփուեցաւ սուրբ Մեսրոպի մար-
մինը, գտանուում է սուրբ Էջմիածնից դէպի հիւսիս, մօտ երկու
ժամ հեռաւորութեամբ Վաղարշապատից. այժմ այդ գիւղը Մայր-
Աթոռի սեպհական հինգ կալուածական գիւղերից մէկն է և մօտ
300 տուն բնակիչ ունի։ Սուրբ Մեսրոպի գերեզմանի վերայ ար-
դէն Վահան Ամատունին մի հոյակապ եկեղեցի էր կառուցել, որ
1639 թ. նորոգեց Փիլիպպոս կաթուղիկոսը։ Իսկ այժմեան փա-
ռահեղ սրբատաշ քարից շինած տաճարը կառուցեց երջանկայի-
շատակ Դէորգ Դ. կաթուղիկոսը. տաճարի դրան վերայ գը-
րուած է. „Ողորմածութեամբ Աստուծոյ սրբազնակատար հայ-
րապետ ամենայն հայոց տ. տ. Դէորգ Դ. կաթողիկոս վե-
րակաւոյց ի հիմանց զայս եկեղեցի Օշական գեղջս, եւ
զդամբարան սրբոյն Մեսրոպայ թարգմանչի մերոյ որ ի
սմա, տրօք հայոց Ռուսաստանի. յամի 1879 եւ հայոց ՌՃՀԸ»։
Եկեղեցւոյ սեղանի վէմ քարի տակ գտանուող այրի մէջ ամփո-
փուած է սուրբ Մեսրոպի գերեզմանը։

բամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսա-
կանաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խոր-
հրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմա-
տացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայ-
կայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։ Ողորմիմ քեզ,
եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ
բեմբին, ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակէ։ Ոչ ևս տե-
սանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարոջ և առ ջուրս
հանգստեան տածեալս, և ոչ ի փարախ հաւաքեալ՝ զգուշա-
նալով ի գալոց, այլ ցրուեալս անապատաց և գահավիժու-
թեանց։ Երանի առաջնոյ եւ երկրորդի փոփոխմանն. զի էր
ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւիրին, և հարսնդ
համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով,
որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց...։

Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակիլ, և յաբրահամեանն
հանգչել գոգս, և զհրեշտակացն տեսանել պարաւորութիւ-
նըս։ Բայց անհոգող դու այրութեամբդ, և եղկելիք մեք՝ որ
զրկեցաք ի հայրենի վերակացութենէն։ Զի ոչ որպէս ի հը-
նումն ժողովուրդն այն, այլ առաւել մեր է թշուառութիւն...։ Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտա-
քուստ. արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածո-
ղաց, և խորհրդականն չէ ի միջի՝ որ խրատեր և յորմա-
րեր ի պատերազմ։ Աւաղ զրկանացս, աւաղ թշուառական
պատմութեանս. ո՞րպէս զախտս հանդուրժեցից բերել, զիա՞րդ
զմիտս իմ՝ եւ զլեզուս պնդեցից... Այսպիսեաւ անձկաւ հեղ-
ձամղձուկ եղեալ՝ վտանգիմ կարօտութեամբ մերոյ հօրն։ Ո՛ւր
է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորու-
թիւն առ թիւրս, ո՛ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բա-
րի աշակերտացն հանդիպումն, ո՛ւր խնդամիտ սիրտն ընդու-
նող արբանեկաց, ո՛ւր երկայն ճանապարհաց յոյս հեշտացու-
ցիչ, աշխատութեանցն հանգուցող։ Կորեաւ ժողովողն, թա-
գեաւ նաւահանգիստն, եղիք օգնականն, լռեաց ձայնն յոր-

դողեցուցիչ: Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՛վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՛վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդւոյս: Ո՛վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն . . . Զմտաւ զայսոսիկ ածելով, յառաչումն յիս ի ներքս ընթանայ եւ արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան տրխրական և սգաւոր: Եւ ոչ գիտեմ, եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս, կամ զո՛վ արտասուեցից: Զհէքն իմ մանուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար՝ սգգաւ ի բաց ընկեցին, և նախ քան զմահ մեռելութիւն անփառութեամբ՝ յաթոռոցն ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն, զի վերացաւ ի գլխոյս փարթամացուցիչ պսակն գեղեցիկ և կենցաղօգուտ: Զհայրն իմ եւ զբահանայապետ, զմխոն վսեմացեալս՝ որ երթայր տանէր կատարեալ բան, որով վարէրն և յարմարէր, և զերասանակս ի բուռն առեալ՝ ուղղէր զդէմսն, և սանձահարէր զլեզուս օտարաձայնս, եթէ զիս թափուր ի Հոգւոյն մնացեալս խանդից և ցասանեալ: Զծնողն իմ աղբիւր վարդապետական, զարդարութիւնն առողող, և հեղեղաւ զամբարշտութիւն արտասահմանելով, եթէ զիս եբաշտացեալ և թարշամեալ պասքութեամբ արբուցմանց խրատու: Զաշխարհիս եկեալ աղէտս, եթէ զապագայիսն ակնկալութիւն» [32]):

Ահա այսչափ է մեր մեծ պատմաբանի տուած տեղեկութիւնները «տառերի գիւտ»ի հանգամանքների և հետևանքների մասին:

[32]) Տես. Մ. Խ ո ր ե ն ա ց ի, գիրք III. գլխ. կը. և վերջին. էջ 409—414:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ *) ՊԱՏՄԱԾՔ «ԴՐԻ ԴԻՒՑ»-Ի ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղ. Փարպեցին պատմելով Վռամշապուհի հայոց թագաւոր կալգուխլը, յարակցում է, որ ահա այդ թագաւորի

*) *Ղազար Փարպեցին իւր մանկութեան տարիներն անցնում է Վրաստանում, Վահան Մամիկոնեանի և եղբարց հետ՝ Աշուշայ Բդեշխի տանը. «Դարձեալ — գրում է Փարպեցին իւր՝ Վահան Մամիկոնեանին ուղղուած Թղթի մէջ — երանելի մայրն քո յորժամ առ բդեշխին ած զձեզ, յորում դրան և զմեզ ուսուցանէին, սակայն թէպէտ և ըստ տիոց աւագագոյնք քան զձեզ էաք, այլ մննդակիցք էաք ձեզ և խաղակիցք, կրելով ի խաղս զարկանելիս ձեր զկնի ձեր, մնուցանէ մայրն ձեր օրհնեալ և Անուշ — Վռամ ըստ իւրեանց հոգևսիրութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպէս զձեզ: Այլ ըստ այնմ ամենայնի քեզ Տեառն անկ էի: Իսկ ըստ առաւելեալ շնորհիս, զոր ետ ինձ Քրիստոս, եթէ արժանաւորի կամ անարժանի, զայն տուիչն քաջ գիտաց: Ապա արգարև քեզ իսկ և արժանի»:—Տես. Ղ. Փարպեցի էջ 572:*

Մեր պատմագիրներից և բանասէրներից ոմանք Ղ. Փարպեցուն համարում են աշակերտ սուրբ Սահակի և Մեսրոպի. օրինակ Չամչեանն ասում է. «Ղ. Փարպեցի պատմագիր և ճարտասան կոչեցեալ, ի մանկութեան աշակերտեալ սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ, և ապա երանելոյն Աղանայ Արծրունւոյ»: Տես. Չամչեան, պատմութիւն Հայոց. հատ. I. էջ 14. դարձեալ թէ. «Ղ.

ժամանակ հոգացողութեան շնորհը տրուեցաւ ամենախնամ Աստրծուց՝ Մաշթոց անունով մի ճշմարիտ մարդուն, որ Տարօն գաւառի Հացեկաց գիւղից էր և Վարդան անունով մի

Փարպեցի թէպէտ և չէր յատուկ աշակերտ սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, բայց տեսեալ էր զնոսա, և ի տղայութեան ուսեալ էր ինչ ինչ ի դպրատան նոցա. և յետ մահու նոցին աշակերտեալ եղև երանելոյն Աղանայ։ Տես. Զամչեան, նոյնը. հատ. I. գիրք բ. գլխ. Կը. էջ 540։

Այս ենթադրութիւնը յառաջացել է երևի այն հանգամանքից, որ նոյն իսկ ինքը, Փարպեցին, ասում է իւր Թղթի մէջ. «Զկեալ զնմ ի տղայութեանն՝ զոյն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ։ Տարեալ զիս ըստ Վարդապետաց իմոց հրամանի ի Հոռոմն, ժամանակեցի անդ. և եկեալ անտի կեցի առ կամսարականսդ՝ յամենայն ամբոխն, մինչև յամս նուաճման ձերոյ»։ Տես. Փարպեցի. էջ 570.

Սակայն ժամանակագրութիւնն ի նկատի առնելով, անկարելի է, որ Փարպեցու յիշած «վարդապետները» լինեն Սուրբ Սահակ և Մեսրոպ, որովհետև Փարպեցու երիտասարդութեան ժամանակ (երբ նա Յունաստան է գնում ուսման մէջ կատարելագործուելու) այդ երկու հանճարներն արդէն վաղուց վախճանուած էին։ Պատմական փաստերը ցոյց են տալիս, որ Ղ. Փարպեցին պէտք է ծնուած լինի 440—443 թ. (տես. Գ. Խալաթեան. Ղ. Փարպեցի և գործք նորին. էջ 7). իսկ սուրբ Սահակ և Մեսրոպ ի Տէր հանգեան 440—441 թ.։ Պարզ է ուրեմն, որ Փարպեցին չէր կարող Սահակ-Մեսրոպի աշակերտ լինել և նոցա հրամանով Յունաստան գնալ. այդպիսով և Փարպեցու յիշած «վարդապետներն» ուրիշները պէտք է լինին։ Հայր Զարբհանալեանն իւր «Հայկական հին դպրութեան պատմութիւն» աշխատութեան մէջ խօսելով Փարպեցու մասին, ծանօթութեան մէջ յառաջ է բերում Գ. Խալաթեանի վերոյիշեալ վկայութիւնը՝ հեղինակին կոչելով «ազգային հնմուտ բանասէր» և ոչինչ չէ ընդիմաբանում (տես. Զարբհանալեան, նոյնը երկ. տիպ. էջ 371), սակայն յաջորդ էջի վերայ կրկին շարունակում է. «Աղանայ քով աշակերտեցաւ Ղազար, և երկար ատեն ուսմանց պարապելէն ետքը, իւր վարդապետացը՝ Սահակայ եւ Մեսրովպայ հրամանաւը Յունաստան գնաց»։ էջ 372.

մարդու որդին. մանկական հասակում նա սովորելով յունաց դպրութիւնը՝ հայոց Խոսրով արքայի պալատում զինուորական պաշտօն է վարում և ապա կարգւում է արքունի մա-

---

Յունաստանից վերադառնալով՝ Փարպեցին գնում է Կամսարականների մօտ, երբ Հայաստանը քաղաքական խառնաշփոթ դրութեան մէջ էր. այս հանգամանքից ստիպուած նա գնում է Սիւնեաց երկիրը և ձգնաւորի կեանք վարում՝ ձմեռը մի քարայրի մէջ, հոչակուած կրօնաւոր Մովսէսի մօտ, իսկ ամառը Մուշէ կաթողիկոսի հետ—«Եւ զհետ այսորիկ որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ պարապիլ աղօթից և հանգչել։ Եւ երթեալ ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս. ձմեռն ի քարայրի առաւն միում հոչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, և տեղին՝ անձուկ. և զամառն յաղագս տօթոյ տեղւոյն՝ քահանայապետ աշխարհին՝ տէր Մուշէ, տանէր զիս առ ինքն, ուր և լինէր ի հովու». տես, նոյնը էջ 570—571.

Ահա այդ ժամանակները Վահան Մամիկոնեանը Սիւնիք գալով՝ վերցնում է իւր մօտ Փարպեցուն, որ արդէն «պարեգօտաւոր» էր.—«Արդ՝ զառաջինն կեզոյն իմոյ զվարս՝ տէր ներսեհ և Հրահատ կամսարական՝ գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին։ Եւ դու յայց եղեալ խնդրել զնս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն. ոչ իբրև զաղքատ զոք ի կաղամածէն և ի մանկուտից, և ոչ իբրև օտար զոք ի քէն և կամ զծառայ ուրուք. քանզի պարեգօտաւորք աղատեալ են ի Քրիստոս։ Իսկ որ զատոյցն զնս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ՝ Տէր Աղան՝ քո Տեառն քեռի էր։ Ըստ այդմ մասին ի Հայս քեզ Տեառն անկ էի»։ Տես. նոյնը. էջ 571—572։

Փարպեցին իւր ժամանակի ամենանշանաւոր եկեղեցականներից մէկն էր և յետագայում աւելի հոչակուեցաւ իւր շարադրած պատմութեամբը. ահա թէ ինչ է ասում ինքն իրեն համար. «Եւ եմ ես այն Ղազար՝ ըստ առ ի քէն (Վահան Մամիկոնեանի) և այլոց բազմաց ասացածի, որում ոչ ոք զոյ փոխանակ։ Իսկ այժմ առնախանձու աղեւտի՝ բաղումք նկրտէին լինել իմ փոխանակ. բայց եթէ իցեն»։ նոյնը. էջ 573։

Ղազարը Փարպեցի է կոչւում իւր ծննդավայր „Փարպի"

տենագիր դպիրների շարքում [1]), որովհետև այն ժամանակ Հայոց Թագաւորի գործերը՝ վճիռները և հրովարտակները ասորի և յոյն լեզուով էին գրւում։ Մի քանի տարի շարունակ այդ պաշտօնը անբիծ վարելով, թողնում է աշխարհիկ կեանքը և վանական դառնում. իբրև կրօնաւոր նա խիստ և զրկանքներով լի կեանք է վարում մինչև Խոսրովի եղբայր Վռամշապուհի Թագաւորութեան հինգերորդ տարին։ Այսչափը պատմելով՝ Փարպեցին շարունակում է. եթէ մէկը հաւատի կերպով և ճիշտ կամենում է Մաշթոցի և նորա գիւտի մասին տեղեկանալ՝ թող կարդայ *Կորիւնի* պատմութիւնը, որ ճշմարիտ պատմութիւն է և ինքը շատ անգամ կարդացել և հաւաստի տեղեկացել է [2])։

Այնուհետև Փարպեցին պատմում է, որ երանելի Մեսրոպը միշտ տրտմում էր, տեսնելով որ հայ երիտասարդները մեծ աշխատանքով և ահագին նիւթական կորուստներով իւրեանց կեանքը մաշում էին հայրենիքից դուրս՝ ասորոց դպրոցներում, որովհետև հայոց եկեղեցւոյ ծիսակատարութիւնը տեղի էր ունենում ասորոց լեզուով, որ ժողովրդին

գիւղի անունով. այս գիւղն այժմ ևս գոյութիւն ունի և գտանւում է Աշտարակի մօտ։ Փարպի գիւղի մօտ է „Աղբէվանք" (երևի Ղազարայ վանք) կոչուած աւերակը։

[1]) *„... Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զյոյն, զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն". տես. Ղ. Փ ա ր պ ե ց ւ ո յ պատմութիւն Հայոց. էջ 33—34։*

[2]) *„... Եւ զայս թէ կամիցի ոք գիտել Հաւաստեաւ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան՝ աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա. և զիւր հայերէն նշանագրացն, թէ երբ կամ ուր, և կամ յոյր ուրուք ձեռն գտանէ, Թագաւորին Հայոց Վռամշապուհոյ ջերմեռանդն խնդրելով զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջագրեալ այրն Հոգևոր Կորիւն. ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեաւ"։ Ղ. Փարպեցի էջ 35.*

քոլորովին անհասկանալի էր [3])։ Սուրբ Մեսրոպն երկար ժամանակ մտածելով այդ մասին, փղձկում էր, մանաւանդ որ կային հայերէն նշանագրեր, որոնցով կարելի էր սեպհական գրով և լեզուով ժողովրդի սիրտը շահել։ Նա զօրանալով սուրբ Հոգու շնորհիւ, գնում է Սահակ Պարթև կաթուղիկոսի մօտ և յայտնում է նորան իր բազմաժամանակեայ մտատանջութեան խնդիրը. սուրբ Սահակը քաջալերում է նորան և ասում. վերցրու քեզ հետ և ուրիշ օգնական քահանաներ, որոց ես կ'նշանակեմ, և միասին աշխատեցէք. ուր որ դժուարանաք վանկերը կարգելիս, բերէք ինձ մօտ և ես կուղղեմ, որովհետև շատ հեշտ է քո ցանկացածը գտնել։ Սակայն մենք առաջ պէտք է Թագաւորին իմաց տանք այսպիսի մեծ և կարևոր գործի պէտքը. ոչ շատ ժամանակ առաջ՝ եկեղեցում այդ խնդրի կարևորութեան մասին խօսելիս մէկն ասել է Թագաւորին, թէ մի գիւղում մի եպիսկոպոսի մօտ տեսել եմ հայերէն նշանագրեր. Թագաւորն լիշում էր այդ խօսքերը և պատմեց ինձ [4])։

---

[3]) *„... Քանզի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Մաշթոց՝ տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բազում Թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան։ Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, յանկրօնութենէ լեզուին ասորոյ"։ Տես. Ղ. Փ ա ր պ ե ց ի էջ 35—36.*

[4]) *„Զայս ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշթոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք Հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն, զօրացեալ ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ, և եկեալ առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածու-*

Այդ խօսակցութիւնից յետոյ սուրբ Սահակը և Մեսրոպը մտնում են թագաւորի մօտ. Վռամշապուհը յիշելով այն վանականի ասածները, նորից պատմում է դոցա: Սուրբ Սահակը և Մեսրոպը լսելով այդ պատմութիւնը՝ շտապեցնում են նորան զբաղուել այդ խնդրով, ասելով որ Հայոց աշխարհի համար այդ գիւտը մեծ նշանակութիւն ունի և իրեն արքային աւելի մեծ պատիւ կբերէ ապագայում, քան թէ նորա աշխարհային իշխանութիւնը. այս խօսքերը թագաւորին մեծ բաւականութիւն է պատճառում և նա փառաբանում է Աստծուն, որ իւր թագաւորութեան ժամանակ այդպիսի մի մեծ իրողութիւն պէտք է տեղի ունենայ [5]: Առանց յապաղելու Վռամշապուհը Վահրիճ անունով մէկին հրովարտակով ուղարկում է Հաբէլ քահանայի մօտ, որ առաջ յայտնել էր Հայոց այբուբենի գոյութիւնը Դանիէլ բարեպաշտ եպիսկոպոսի մօտ: Հաբէլ քահանան ստանալով արքայական հրովարտակը՝ շտապում է Դանիէլի մօտ և անձամբ նորանից սո-

---

թեան ղևնդիրն, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս՝ թէ՝ զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես: Բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարևոր խընդրոյ. վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս՝ առեալ բանք յեկեղեցւոջ յաշագս կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում. և թագաւորն յիշեր զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց: Տես. Ղ. Փարպեցի էջ 36—37.

[5]) ,,Եւ մտեալ սրբոյ կաթուղիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ առ թագաւորն Վռամշապուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն թագաւորն զխոստեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորա պատմեալ ուրախացոյց: Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն,

վորելով այդ այբուբենը, վերցնում տանում է սուրբ Սահակի, Մեսրոպի և Վռամշապուհի մօտ [6]):

Այնուհետև Փարպեցին տառերի «գիւտ»ի դէպքը պատմում է ոչ միայն նման Խորենացու պատմածին, այլ կրկնում է միևնոյնը բառ առ բառ, ամբողջ յիսուն և մէկ տող [7]): Խորենացու այս անփոփոխ հատուածից յետոյ Փարպեցին շարունակում է, որ տառերի գիւտի իրողութիւնից յետոյ սուրբ Մեսրոպը սկսում է աշխատել այդ տառերը կարգի բերելու և վանկերն ուղիղ արտասանութեան յարմարեցնելու. այս գործում նորան առաջնորդում է սուրբ Սահակը՝ տալով նո-

---

փութացուցանէին զնա ասելով, թէ ճշգիւ յաղագս մեծ և օգտաբերը աշխարհիս Հայոց գիւտից այսորիկ՝ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայն բերէ քեզ շահ յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց: Եւ թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ, որ ի ժամանակս թագաւորութեան նորա զայսպիսի հոգևոր կենաց փափաք ժառանգեաց յաշխարհիս Հայոց»: Տես. Փարպեցի, էջ 37—38:

[6]) «Վաղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ անն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց՝ հանդերձ հրովարտակաւ, առ պայր մի երէց Հաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն Հայերէն կային. և երանելոյն Հաբէլի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ և լուեալ զերսն՝ փութանակի հասանէր առ սքանչելի եպիսկոպոսն Դանիէլ: Եւ նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն, և առեալ ինամանէ առ թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասանէր: Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ և երանելեաւն Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէ՝ ուրախ լինէին: Տես. Ղ. Փարպեցի. էջ 38—39:

[7]) «Բայց տեղեկացեալ գիտացին..... մինչև «ըստ անսպառ թաքուածոյ սիղոբային ի հելլենացուցն»: Տես. Փարպեցի. էջ 39—41, Խորենաց. էջ 369—371.

բան բանիմաց և յունարէն իմացող օգնական քահանաներ, որոնց անուններըը հետևեալներն են. Յովհան, Եկեղեաց գաւառից, Յովսէփ, Պաղանական տանից, Ցէր, Խորձէնից, Մուշէ, Տարօնից [8]։

Այդ չորս յունագէտ քահանաների օգնութեամբ սուրբ Մեսրոպն աշխատում է հայոց նորագիւտ այբուբենը դաստուորել յունարէն այբուբենի կարգով՝ գժուար դէպքերում դիմելով սուրբ Սահակի աջակցութեանը, որովհետև Մեծն Պարթևը քաջ հմուտ էր յունաց լեզուին և փիլիսոփայական արուեստին [9]։ Այդպէս կարգի բերելով հայոց այբուբենը՝ ցանկանում էին դպրոցներ բանալ և ուսուցանել բազմաթիւ աշակերտներին, որովհետև ամեն մարդ ցանկանում էր հայոց լեզուն սովորել և ասորոց լեզուն սովորելու տանջանքից ա-

[8]) «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով զնա սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս և այլ արս բանիբուունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա որպէս երանելին Մաշթոց մերձաւորեալք ի յունարէն հեգենայն. որոմ առաջնոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին Յովսէփ՝ ի Պաղանական տանէն, և երրորդին Ցէր՝ ի Խորձենոյ, և չորրորդին Մուշէ՝ ի Տարօնոյ»։ Տես. Փարպեցի էջ 41.

[9]) «Որոց օգնելով զօրէր երանելին Մաշթոց, հանդիպեցուցանէր զՀայերէն աթուոթայն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց, սահեպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթուղիկոսէն Իսահակայ զաթուոթայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին։ Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի՝ առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ Հայրապետին Սահակայ, որ յոյժ աւրհնեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց. եղեալ կատարելապէս հմուտ երգոցական տաւիղն և հռետորական յորդասաց յայտնաբանութեան. և առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր»։ Տես. Փարպեցի. էջ 41—42.

զատուել. բայց դեռ և դժուարութիւն էին կրում, որովհետև սուրբ գրքի մասերը թարգմանուած չէին Հայերէնի։ Սուրբ Մեսրոպն իւր օգնական քահանաներով չէին վստահանում Աստուածաշունչ գիրքը յունարէնից թարգմանել Հայերէնի, որովհետև այնչափ հմուտ չէին յունարէն լեզուին [10]։

Այս գժուար դրութիւնից դուրս գալու համար՝ ժողովում են հայոց աշխարհի բոլոր աւագ քահանաները, նախարարները, տանուտէրների և սուրբ Մեսրոպի առաջնորդութեամբ գնում են Վաղարշապատ թագաւորի մօտ և այդտեղ բոլորն ի միասին աղաչում սուրբ Սահակ կաթուղիկոսին, որ նա յանձն առնէ Աստուածաշունչ գրքի յունարէնից— Հայերէն թարգմանելու ծանր աշխատանքը։ Աւագ քահանաներն ասում են սուրբ Հայրապետին. սուրբ Մեսրոպը կարգի է բերել արդէն վաղուց գրուած Հայերէն տառերը, որի գործադրութեան համար ոչ ոք չէր հոգացել և իզուր և անօգուտ աշխատանք էին թափել ասորոց լեզուն սովորելու. ժողովրդի մեծամասնութիւնը եկեղեցուց դուրս էր գալիս առանց բան հասկանալու, իսկ ուսուցիչները յոգւոց հանելով և հառաչելով զղջում էին իւրեանց զուր աշխատանքի մասին, որովհետև տեսնում էին, որ ժողովրդից ոչ

[10]) «Կարգեալ այնուհետև Փրկչին առաջնորդութեամբ զգիր գրենոյն Հայերէնի, և հելլենացին ուղղեալ յօրինուածս, ցանկային կարգել պարոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ. քանզի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն Հայերէն դիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն զերծեալք ի լոյս՝ խնդային։ Բայց տարակուսեալք կասէին յանչքութենէ գրոց սրբոց. քանզի ոչ գոյին դեռ ևս Հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ։ Եւ երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուն ի հայ բարբառ. վասն զի ոչ լինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման»։ Տես. Փարպեցի էջ 42—43։

ոք օգուտ չէր քաղում իւրեանց հոգևոր խրատներից. այսպէս տևեց մինչև որ գտնուեց գիրը։ Ա՛րդ, ինչպէս որ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը մեր երկիրը լուսաւորեց քրիստոնէական լուսով, քեզ է վերապահուած, իբրև նորա շառաւիղին, լրացնել քո նախնւոյ թողած պակասը, Աստուծոյ խօսքը հասկանալի դարձնելով ժողովրդեան համար. դու պէտք է թարգմանես սուրբ գիրքը հայոց լեզուով, որովհետև այդ բանը, բացի քեզանից ոչ ոք չի կարող անել Հայաստանում [11]։

Սուրբ Սահակը լսելով թագաւորի, սուրբ Մեսրոպի, հոգևորական և աշխարհական մեծամեծների խնդիրը, հոգւով ուրախանում է և խոստանում կատարել այդ գործը. այնուհետև նա գիշեր ու ցերեկ զբաղուելով թարգմանում է հին և նոր կտակարանները ու մարգարէից գրքերը։

Այս մեծ գործը գլուխ բերելով, կարգադրութիւն է ա-

[11]) «Ապա ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ երանելեաւ Մաշթոցիւ և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք՝ առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ՝ արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր, և թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս։ Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս յայս՝ կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր. այլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով՝ ղղջանային զնոսոտ ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտակաս ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստանախնդիր անձանց. մինչև գտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին ղօրանայ։ Համայն և զայս վաստակոս կարգումն, և քոյին առաքինութեանդ գիտութեամբ եղիցի, և կատարեա։

նում բազմացնել դպրոցների թիւը և հայոց լեզուով աւանդել և ուսուցանել Աստուծոյ կենդանի խօսքը։ Ժողովուրդն սկսում է մեծ բազմութեամբ եկեղեցի յաճախել՝ հայերէն լսելու սուրբ պաշտամունքը և գիտակցաբար ըմբռնելու սուրբ արարողութիւնները։ Եկեղեցիքը պայծառանում են, սրբերի վկայարանները լցւում են աղօթողներով. շատանում է քարոզիչների թիւը, որոնք մեկնաբանում են սուրբ գրքի մութ երևացող կէտերը և հոգևոր մխիթարութիւն տալիս ժողովրդին [12]։

Ա՛րդ՝ որպէս և սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահել ի խոշտանկանն անվնաս աջով հզօրին ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ, պահել շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի՝ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամանս այսորիկ. սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ, և լինել նմանօղ սուրբ նախնւոյն քում, որ յանգիտութենէ ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց։ Ա՛րդ և դու յանօգուտ մուրոդաբանութենէն ի ստոյգ հոգեշահ և եկեղեցաշարժ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, լնուլ զպակասութիւնս զայս ճշգրտել ի սուրբ նախնեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած, զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ։ Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան ի վերին օգնականութենէն, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր ի քեզ զվարս երանելոյ հօր քո Ներսէսի»։ Տես. Փարպեցի էջ 43—46։

[12]) «Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթուղիկոսն Հայոց սուրբն Սահակ՝ ի թագաւորէն Հայոց Վռամշապհոյ և յեպանելոյն Մաշթոցէ և յամենայն ուխտէ քահանայիցն, ևս առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց, զուարճացաւ յոգի իւր փառաւորելով զփրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս։ Եւ կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ՝ պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա

Այս բոլոր դէպքերը կատարուում են Վռամշապուհ թագաւորի ժամանակ, որ դարձեալ թագաւորում է քսան և մէկ տարի և վախճանում խորին ծերութեան հասակում [13]: Այնուհետև Փարպեցին իւր պատմութիւնը շարունակելով՝ հա-

---

զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան. և անվհտեր ջանալով զցայգ և զցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն զևօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի սուրբ Հոգւոյն. և հաստատեալ կինքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն ղլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով: Եւ տարեալ ի գլուխ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ Հոգևոր վաստակին, կարգեցան վաղվաղակի յայնմհետէ դպրոցք հօտին ուսմանց, բազմացան դասք գրչաց եկեալս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս փրկչին և ի ժողովս մարտիրոսաց: Որ շահեալք լի հոգևոր օգտիւ, ընթանային խնդալից ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր ի տունս մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս ի հրապարակս և ի փողոցս, և առանին: Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ի նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք. հանապազաբուղխ հոսէին վտակք յաստղացն մեկնութեանց, որք զծածուկս մարգարէից բերելով ի յայտնութիւն՝ սեղանս ամենալից հոգևոր խորտկօք դնէին առաջի ամենայն ժողովրդեան. յորոց ճաշակեալ իմաստախնդիր մարդոց՝ քաղցրանայ ի քիմն նոցա ըստ բանի սաղմոսերգին բանք վարդապետութեան քան զխորիսխ մեղրոյ: Եւ զի միանգամայն իսկ ասացից ըստ բանի սուրբ մարգարէին Եսայեայ, թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց՝ գիտութեամբ տեառն ի հոգևոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ, իբրև զջուրս բազումս \որ ծածկեն զծով»: Տես. Փ ա ր պ ե ց ի. էջ 46—48:

[13]) «Եւ շնորհիւ ամենակնամ փրկչին Քրիստոսի կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վռամշապհոյ, ըստ յառաջագոյն գրեցելոց, և լուսաւորեալ զաշխարհս Հայոց: Եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս քսան և մի, և հասեալ

մառօտ կերպիւ նկարագրում է նաև սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպի մահը [14]:

ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանդիսիւ յաշխարհիս Հայոց»: Տես. Փ ա ր պ ե ց ի. էջ 48—49:

[14]) «... Եւ յայնմհետէ ամփոփեալ զինքն առաքինւոյն յամենայն աշխարհածուփ զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան. վասն զի բազում յեպիսկոպոսաց և յայլոց ի պատուական քահանայից ոչ երբէք ժուժէին տեւել և մեկուսանալ ի մշտաբուղխ աղբերէ վարդապետութեան սրբոյն, ուր ուրեք և դիպէր, ի յոստանի և կամ ի հովս: Եւ կացեալ ամս բազումս, և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ խաղաղական հանդստիւ ի գաւառին Բագրեւանդայ, ի գիւղն որ անուանեալ կոչի բլուր, ի սկզբան ամին երկրորդի Յաղկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, յամսեանն նաւասարդի, որ օր երեսուն էր ամսոյն, յերրորդ ժամու աւուրն. որ և զօր ծննդեան սրբոյն ի ստոյգ գիտողաց և ի պատմութենէ երանելոյ առն Կորեան՝ հաստատեալ գրեցաք լինել և նոյն օր ծննդեան սրբոյն, ի նմին ամսեան»: Տես. Փարպեցի. էջ 102—103:

«Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշթոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր-քաղաք անուանեն, յերեքտասաներորդի աւուր ամսոյն մեհեկանի. զոր առեալ իշխանին Ամատունեաց Վահանայ՝ զմարմին առաքինւոյն՝ տարաւ յիւր ի գեօղն, որ անուանեալ կոչի Օշական: Եւ յոյժ մեծարանօք զգիր երանելւոյն կազմեալ, տօն յիշատակի առնեն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոցն Այրարատայ»: Տես. Փ ա ր պ ե ց ի. էջ 105—106:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԿՈՐԻՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՒՈՅ ԵՒ ՓԱՐՊԵՑՒՈՅ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Խորենացոյ հեղինակութիւնը. Թէ ինչո՞ւ փարպեցին տարբեր կերպիւ ի պատմոտմ բան Խորենացին եւ Կորիւն. Գ. Խալաթեանցի աշխատութիւնը. Փարպեցոյ վկայութեանց նշանակութիւնը. Մր. Մահակի եւ Մեսրոպի գործունեութեան տարբերութիւնը. Թէ ինչո՞ւ Խորենացին տարբեր ի պատմոտմ քան Կորիւն:



Այս երեք պատմագիրներից թէպէտ երկուսը—Կորիւնը եւ Խորենացին—Սբ. Սահակի եւ Մեսրոպի անմիջական աշակերտներն էին, սակայն միայն Կորիւն Սքանչելին եղաւ նոյնպէս եւ դոցա *գործակիցը:* Խորենացին կրտսեր աշակերտներից էր եւ երբ արտասահմանից վերադարձաւ, Սահակն ու Մեսրոպն արդէն վախճանուել էին. իսկ Փարպեցին Աղան Արծրունու մօտ էր աշակերտել եւ մօտ մէկ դար գրի գիւտից յետոյ գրեց իւր պատմութիւնը [1]:

[1]) ‹ . . . Ուստի պարտ է ընդունել, թէ զպատմութիւն իւր

Սբ. Մեսրոպի գործակից եւ վարքագիր Կորիւնի պատմածները—Սբ. Մեսրոպի գործունէութեան եւ Հայոց այբուբենի վերանորոգման մասին—առաջին տեղը պէտք է բռնէին Հայկական մատենագրութեան մէջ. սակայն այդպէս չէ: Մովսէս Խորենացու հռչակուած հեղինակութիւնը ստուերի մէջ է ձգել սբ. Մեսրոպի գործակից Կորիւնին. բացի Փարպեցուց, որ հետեւում է Կորիւնին եւ նորա պատմածներն իբրեւ ճշմարիտ իրողութիւն ընդունում, մեր բոլոր յետագայ պատմագիրներն, հինգերորդ դարուց սկսած մինչեւ նորագոյն ժամանակներս, Հայոց այբուբենի մասին խօսելիս կրկնում են Մ. Խորենացու ասածները: Նոյն իսկ այսօր Հայոց պատմութեան կամ գրականութեան ինչ ձեռնարկ ևս որ վերցնենք, Հայոց այբուբենի մասին կը կարդանք Խորենացու ասածները: Նոյն իսկ Փարպեցու համար ցայժմ աշխատել են ապացուցել, որ նա ևս օգուտ է քաղում Խորենացուց, թէեւ նորա անունը չէ յիշում եւ ‹ուղղակի› ասում է, որ Կորիւնից է վերցնում—այս ընդհանուր կարծիքի *սխալ լինելը,* գոնէ Հայոց այբուբենի խնդրի վերաբերութեամբ, ստորեւ կ'ապացուցանենք—:

Խորենացու այսպիսի մեծ հնղինակութեան հետեւանքն այն է եղել, որ այն, ինչ որ պատմում են այլ պատմագիրները եւ չկայ Խորենացու պատմութեան մէջ, մերժուել է իբր անճիշտ տեղեկութիւն. այսպէս ևս գրերի վերանորոգութեան խնդրում աշխատել են մերժել Փարպեցու պատմած

Շարագրեաց Ղազար (Փարպեցի) զկնի Հոգաբարձութեան իւրոյ—պսակն է միջի ամաց 490 եւ 509. մինչ ցամն 509 դնեմք եւ ոչ անագան, վասն զի ի յաջորդ իսկ ամին վախճանեցաւ Վահան, որ ի գրելն պատմութեան տակաւին կենդանի էր անտարակոյս: Հաւանութեան թուի, թէ Ղազար ‹չորրորդ պատմութիւն Հայոց› գրեաց սակաւ ինչ ամաք զկնի վերադարձին իւրոյ յԱմթայ՝ ի վերջին ամն ե. դարու եւ հազիւ թէ անագան քան զայս: Տես. Գ. Խալաթեան. Ղ. Փարպեցի եւ գործք նորին. էջ 113:

այն հատուածներն, որ տարբերւում են Խորենացու պատմածներից։

Ի վնաս Փարպեցու հեղինակութեան ծառայել է նաև այն հանգամանքը, որ չնայելով որ նա յիշում է Կորիւնին և ասում, որ նորանից է օգուտ քաղում, նորա պատմութեան մէջ գտնում ենք գրի դիւտի մասին մի խոշոր հատուած՝ Խորենացուց առնուած. այս կէտից ևս մենք ուզում ենք վերականգնել Փարպեցու հեղինակութիւնը։

Մենք չենք ուզում մերժել Խորենացու հեղինակութիւնը, սակայն մի և նոյն ժամանակ հայոց այբուբենի վերանորոգութեան խնդրի վերաբերութեամբ առաջնութիւնը խլում ենք Խորենացուց. *Կորիւն Սքանչելին համարում ենք Հշտագոյն աղբիւր*։

Ղ. Փարպեցու պատմութեան մէջ, առանց յիշելու Խորենացու անունը, յառաջ է բերուած մի ամբողջ հատուած Խորենացուց, ոչ թէ միայն միևնոյն բովանդակութեամբ, այլ նաև մի և նոյն նախադասութիւններով և միևնոյն բառերով [2]։ Սրդ յայտնի է, որ Փարպեցին ժամանակագրական կարգով Խորենացուց յետոյ է գալիս և այդ պատճառով իսկ մի մեծ զարմանք չէ, որ նա օգուտ քաղէ Խորենացուց, իբրև ժամանակակից պատմագրից. սակայն թէ ինչու նորա անունը չէ յիշում և բառացի կերպիւ է վերցնում, այդ է խընդիրը։ Զարմանալի է, որ պ. Գ. Խալաթեանցը Փարպեցու մասին գրած և մեր արդէն յիշած աշխատութեան մէջ—որպէս զի ցոյց տայ, որ Փարպեցին աչքի առաջ է ունեցել Խորենացու պատմութիւնը—յառաջ է բերում փոքրիկ հատուածներ Խորենացուց և Փարպեցուց, որոնք նախադասութեամբ կամ բառերով նման են միմեանց, սակայն աչքից թողնում է մեր յառաջ բերած օրինակն, որ Փարպեցու մէջ երկու էջ

[2]) Տես. Մ. Խորենացի էջ 369—370 և Ղ. Փարպեցի էջ 39—41։

է բռնում—51 տող—։ Սրդեօք ինչ պատճառով պ. Խալաթեանցն անուշադիր է թողնում այդ հատուածը. գուցէ նորա համար, որ թէ Խորենացին և թէ Փարպեցին աչքի առաջ են ունեցել Կորիւնի գրուածը.—թէև Խորենացին չէ յիշում Կորիւնի աշխատութիւնը—սակայն այս ենթադրութիւնը ճիշտ չէը լինի, վասն զի այդ հատուածը բոլորովին տարբերւում է Կորիւնի պատմածից—Կորիւն ոչ Եպիփանոսին է յիշում և ոչ Պլատոնին, իսկ Հռուփանոսին յիշում է տառերի «դիւտից» յետոյ։ Իսկ եթէ ասէինք, որ պ. Խալաթեանը հիմնուելով պատմական մի վկայութեան վերայ՝ ենթադրում է, որ այդ հատուածն երկուսն ևս—Խորենացին և Փարպեցին—կարող էին դիւանական արձանագրութիւններից հանել [3]), այն ժամանակ յարգելի հեղինակի ամբողջ շինութեան հիմնաքարը հանած կլինեինք, որով և շենքը կ'խախտուէր, որովհետև եթէ այդ դիւանական արձանագրութեանց գոյութիւնն ընդունեինք—ինչպէս որ անում է հայր Զար-

[3]) „Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և ժառանգրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն՝ և առընթերակաց հոգևորական գործոց, և լսող շնորհապատում վարդապետութեան, և նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն։ Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից զՀօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, և ի նշանադիմակացն քակելով զհամատուրսն կարգեցաք, որք ոչ միայն մնգ, այլեւ որ զատեանն ընթեռնուն յայտնի է։ Քանզի չէաք իսկ հանդուրժօղք՝ զամենայն արարեալսն կտակաւ զևրաքանչիւրսն. այլ ի դիւրագոյն և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատպարեցաք. որոյ անցեալ զբազմախուռն արգասիօք սրբոցն, առ ի մանրակիտ առնելոյ զկարևորագոյնս պատմելոյ՝ զհանգամանս՝ ասացաք։ Ոչ ի պատիւ ինչ սրբոցն աստուածոյ, որք ամենապարծ և կենդանատուր խաչին ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգևոր ծննդոց իւրեանց, և որք նոքօք աշակերտելոց իցեն յաղգս աղգաց"։ Տես. Կորիւն. էջ 28.

բանալեանը [4])—, այն ժամանակ ոչ մի կերպ չէր կարելի ցպացուցանել, որ Փարպեցին ծանօթ էր Խորենացու և Եղիշէի պատմութեանց հետ։ Եթէ դիւանական արձանագրութիւնները գոյութիւն ունենային և պահուէին, հարկաւ դոքա չէին վերաբերի միայն «նշանագրերի գիւտին», այլ և քաղաքական-պատմական դէպքերին, որով և ինքն ըստ ինքեան լուծուած կլինէր այն խնդիրը, թէ ինչո՞ւ որոշ հատուածներ՝ մի և նոյն բովանդակութեամբ և բառերով գտնում ենք Խորենացու, Կորիւնի, Փարպեցու և Եղիշէի պատմութեանց մէջ։ Այս հատուածի մասին մեր ասելիքը կ'շարունակենք մի փոքր յետոյ. այժմ տեսնենք թէ ինչ դիրք ունին բռնած միմեանց դէմ Փարպեցին և Կորիւն։

Ինչպէս արդէն յիշեցինք, Փարպեցին հայոց «գրի գիւտ»ի մասին պատմելիս ընթերցողին ուղարկում է Կորիւնի մօտ՝ ասելով որ ինքը շատ անգամ կարդացել է այդ գիրքը և հաւաստի տեղեկացել. սակայն չ'նայելով այդ հանգամանքին, Փարպեցու մէջ գտնում ենք այնպիսի տողեր, ուր իրողութիւնները բոլորովին տարբեր և հակառակ կերպիւ են պատմուում և այդ հատուածներն ըստ Գ. Խալաթեանի.— նոյնը. գլխ. բ. էջ 68.—նպատակ ունին նսեմացնել *հայ երկրի ուսուցանողի* և Աստուածային շնորհիւ օժանդակուած «Հայ նշանագրեր գտնողի» վսեմ նշանակութիւնն ու վաստքը՝ յօգուտ Սահակ Մեծն կաթուղիկոսի, որի անձնաւորութիւնն, առանց Մեսրոպին նսեմացնելն էս, հայ պատմութեան մէջ իւր արժանաւոր տեղն ունի բռնած։ Խնդիրն աւելի պարզելու նպատակով համառօտակի յիշենք այստեղ յարգելի Խալաթեանի ակնարկած տարբերութիւնները.

ա. Յայտնի է թէ Մեսրոպ ինչ մեծ ջանքով և դժուարութեամբ կարողացաւ գլուխ բերել նոր այբուբենի վերանորոգութիւնը. չնայելով որ Փարպեցուն յայտնի էր այդ, այնուամենայնիւ նա գրում է հետևեալ տողերը. երբ Մեսրոպը դիմելով Սահակին յայտնում է նորան իւր միտքը, նա քաջալերելով ասում է. *զօրացիր, առ քեզ հետ նաև այլ օգնական քահանաներ, որոնց ես կ'պատուիրեմ և որտեղ որ դժուարանաք կամ չկարողանաք վանկերը կարգի դնել, բերէք ինձ մօտ և ես կուղղեմ, որովհետև շատ դիւրին է քո ցանկացածը գտնել* [5])։

Ա՛րդ, եթէ այդպէս դիւրին էր Մեսրոպի ցանկացածը գտնել և Սահակը կարող էր այդ անել, այլ ևս ինչ հարկ կար որ «*հայ երկրի ուսուցանողն*» [6]) այնչափ տառապանք կրէր և օտար երկիրներ և օտար անձանց օգնութեան դիմէր։

բ. Թէև Փարպեցին մի տեղ յիշում է որ Մեսրոպ «*ետեղծ զնշանագիրս մեր... փոխատրելով զհայերէն աթուրեայն ըստ անսայթաքութեան սիղոքայիցն ի հելլենացւոյն*» [7]), սակայն իսկոյն շարունակում է. «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, *յերիւրելով զնա սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ, ղիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգաղրութեան գրենից եւ հեգենային ուղղածայնութեան*». և թէ. «*ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ, ուղղակի առանց Սահակայ*» և այլն [8])։

գ. Ինչպէս տեսանք՝ Խորենացին և Կորիւն ասում են, որ Մեսրոպը տառերի գիւտից յետոյ անմիջապէս սկսեց թարգ-

---

[4]) Տես. Հայկական հին դպրութեան պատմութիւն. էջ 22։

[5]) „ . . . Զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգենայն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր Հայցես"։ Տես. Փ ա ր պ ե ց ի. նոյնը. էջ 36—37։

[6]) Այս տիտղոսը, որ Խորենացին Սահակի բերանով տալիս է սբ. Մեսրոպին, սիրելի է մեզ գործ դնել։

[7]) Տես Փ ա ր պ ե ց ի. էջ 41։

[8]) Տես. Փ ա ր պ ե ց ի. էջ 42։

մանել. իսկ Փարպեցին ասում է. Եւ երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին՝ *ոչ զօրէին հաւանարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուէն ի Հայ բարբառ. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման*, [9]):

Այսչափը բաւական է հարցնելու՝ թէ արդեօք *որտեղից* է քաղում Փարպեցին այս տեղեկութիւնները, քանի որ իւր ձեռքին ունեցած Կորիւնի մէջ չկան: Միւս կողմից կարելի է հարցնել՝ թէ Փարպեցին *ինչու* պէտք է նսեմացնէր Մեսրոպի աշխատանքը և *ինչո՞ւ* նա այդպիսի տարբեր իրեր պատմելով ասում է, որ *ինքն օգուտ է քաղել* Կորիւնի աշխատութիւնից, այդ գրուածքը համարելով ճշմարիտ աղբիւր: Այս հարցումներին պ. Խալաթեանը պատասխանում է թէ՝ այդ տարբեր հատուածները Փարպեցու գրչին չեն պատկանում և յետագայ ժամանակների յաւելուածներ են. մասամբ ևս եղծուած և աղճատուած են Փարպեցու թշնամիներից [10]): Թէև պ. Խալաթեանը Փարպեցու պատմութեան *այլ մասերում* աղճատումներ և օտար ձեռքի ներմուծումներ է յառաջ բերում, սակայն այնուամենայնիւ վերոյիշեալ կէտերի վերաբերութեամբ մենք այլ տեսակէտ ունենք:

Այդէն ասացինք, որ Փարպեցին ականատես չեղաւ սբ. Մեսրոպի գործունէութեան և գրերի *ւերանորոգութիւնից* համարեա մէկ դար յետոյ գրեց իւր պատմութիւնը. այդ պատճառով և Կորիւնի ու Խորենացու վկայութեանցն առաջին տեղը տուինք: Սակայն միւս կողմից պէտք է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Կորիւնի և Խորենացու *տուրք անձանց աշակերտելը եւ դոցա ղէպ իւրեանց մեծ վարդապետներն ունեցած երախտագիտական զգացումները* բնական *առիթ են լինում* զանազան *չափազանցութեանց:*

[9]) Տես. Փ ա ր պ ե ց ի. էջ 43.

[10]) Տես. Գ· Խ ա լ ա թ ե ա ն ց. նոյնը. էջ 71:

Բնական առիթ ենք ասում, վասն զի ճշմարիտ որ այդ մեծ վարդապետների և ուսուցանողների գործունէութիւնն այնչափ արդիւնաւոր և օրհնաբեր եղաւ Հայ ազգի համար, որ դոցա անմիջական աշակերտները բնականաբար պէտք է ոգևորուէին և գովաբանական ճառերով էջեր լցնէին, փոխանակ դոցա գործունէութեան մանրամասն նկարագիրն անելու: Իսկ այն գործը, որ սառն գատողութեամբ և քննադատական հայեացքով չէ գրուում, այլ ոգևորուած եռանդի և երախտագիտական զգացմանց ազդեցութեամբ է առաջնորդուում, միշտ *զերծ չի լինի* չափազանցութիւններից: Ահա այս տեսակէտից մենք մեծ նշանակութիւն ենք տալիս Փարպեցու վկայութիւններին:

Փարպեցին ազատ լինելով սբ. Սահակի և Մեսրոպի գործունէութեան անմիջական ազդեցութիւնից, գրելու ժամանակ առաւել սառն պէտք է դատէր և իւր լսածն ևս համեմատէր Կորիւնի պատմածի հետ և առաւել քննադատական հայեացքով գրէր, քան իւր նախորդը: Փարպեցին ընդհանրապէս այդպէս է վարուում. և ահա այն հատուածներն, որտեղ յերևան է գալիս Փարպեցու քննական հայեացքը, *քնականաբար* տարբերուում են իւր նախորդ պատմագիրների ասածներից: Պ. Խալաթեանի կարծիքով այդ տարբեր հատուածները Փարպեցուն չեն պատկանում և *օտար ներմուծումներ են:* Սակայն ինչ վաստ ունենք այդպէս ենթադրելու. պ. Խալանթեանցը պատասխանում է. վասն զի այդ հատուածները կամ *չկան Կորիւնի եւ Խորենացու մէջ*, կամ թէ *հակասում են դոցա տուած տեղեկութիւններին և ճշմարիտ իրողութիւններ չլինելով՝ շատ անգամ հակասում են միմեանց:*

Առաջին փաստը բոլորովին հիմն չունի. մի թէ պատմաբանը *պարտաւոր է* իւր նախորդների բոլոր ասածները կրկնել և նոցա տուած բոլոր տեղեկութիւնները ճիշտ համարել, քանի որ նոյն իսկ ինքը միջոց ունի դոցա հաղոր-

դաճները քննելու և համեմատելու։ Փարպեցին թէև այդ անցքերին ականատես չեղաւ, սակայն իւր երիտասարդ հասակում պէտք է շփուէր այնպիսի անձանց հետ, որոնք ականատես էին և աշակերտ սբ. Մեսրոպի։ Այդպիսի մի մեծ իրողութիւն, որպիսին էր Հայոց քրիստոնեայ եկեղեցւոյ ազգային հաստատութիւն դառնալը և ազգային գրի վերանորոգութիւնը, դիւրութեամբ չէր մոռացուիլ ժամանակակիցներից և նոցա անմիջական սերնդից։ Իսկ եթէ Փարպեցին պէտք է ամբողջովին իւր նախորդների ասածները բառացի յառաջ բերէր իւր պատմութեան մէջ, այլ ևս ինչ հարկ կար գրելու աղբիւրը մատնացոյց կանէր և այդչափ բաւական կլինէր։

Անցնենք պ. Խալաթեանցի երկրորդ առարկութեան՝ թէ Փարպեցու պատմութեան մէջ այն հատուածներն, որոնք տարբերւում են իւր նախորդների ասածներից, ճշմարտապատում չեն, ուստի և անկարելի է, որ Ղազարի գրչի արդիւնք լինին, վասն զի. «Սակաւ ինչ կանուխ քան զգիւտ նշանագրաց և զթարգմանութեան սրբազան տառից՝ Ղազար յիշատակէ մի ըստ միոջէ *զամենայն նշանս թերութեանց եւ կատարելութեանց պատմագրին առ Հասարակ. «... չառնել մարդահաճութեան բանից յաւելուածս* [11])....., *չյաւելուլ զանեղեալն՝ յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալն եւ կարճակտուր պատմել՝ բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն*» [12])։ Այսպիսի իմն «երկիւղագին պատրաստութեամբ» բուռն հարկանէ Ղազար զպատմութենէ՝ ընդ սմին ինքնին աղօթս առնելով և զայլոցն հայցելով խնդրուածս առ Աստուած «որովք արդարապատում Շգզրտաբանեալ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապատումն

[11]) Տես. Փարպեցի. էջ 9։

[12]) Տես. Փարպեցի. էջ 17։

ծաւալացս նաւեալ *մտաւոր ստուգաբանութեամբ*, հասից բարեխօսութեամբ սրբոց՝ յանալէկոծ և յապահով նաւահանգիստն» [13])։

Նոյն իսկ մեր ընդգծած տողերը ցոյց են տալիս Փարպեցու քննադատական ոգին և կարծում ենք որ չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, թէ *այդ տողերը լռելեայն վերաբերում են Փարպեցու նախորդ հայ պատմաբաններին*։ Այդ, քննենք Փարպեցու այն հատուածներից մի քանիսը, որոնց «արդարադատումն ճշգրտաբանեալ» չէ համարում պ. Խալաթեանցը։

ա. Երբ Մեսրոպը դիմում է Սահակ կաթուղիկոսին և Հայկական այբուբենի վերանորոգման մասին իւր մէջ յղացած միտքը յայտնում նորան, վերջինս պատասխանում է. «ուր տկարանայք ի կարգել զհեղհեղայն, բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես»։ Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ ըստ Փարպեցու՝ Սահակ կաթողիկոսն արդէն տեղեկութիւն ունէր «Դանիէլեան նշանագրերի» մասին, երբ Մեսրոպը դիմեց իրեն, այն ժամանակ այս նախադասութեան վերայ բոլորովին զարմանալու տեղիք չկայ. Մեսրոպը Սահակից խորհուրդ և օժանդակութիւն է հայցում՝ հայոց սեպհական գիր ունենալու համար, Սահակը նոյնն է ցանկանում և արդէն լսել է, որ մի այլ անձնաւորութեան մօտ արդէն գտանւում են հայերէն տառեր, ուստի *ինչ մի արտասովոր բան կը լինէր*, որ նա ասէր թէ. «յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես». Հօ չպէտք է ենթադրել, որ նա կարող էր մարգարէանալ՝ թէ այդ «դանիէլեան նշանագրերը» չպէտք է այլ ևս յարմարուէին հայոց լեզուին և կարիք պիտի լինէր վերանորոգման։

բ. Այն ինչ Կորիւնի և Խորենացու պատմելով սբ. Մեսրոպը տառերի գիւտից անմիջապէս յետոյ նոյն իսկ օտար

[13]) Տես. Փարպեցի. էջ 18.

քաղաքում, Հայաստանից դուրս, թարգմանում է առակաց գիրքը և կտակարաններից մեկը [14]), Փարպեցին ասում է. «իսկ երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին, ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ եւ կարեւոր գործ, վասն զի ոչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման»: Պ. Խալաթեանցը Փարպեցու այս խօսքերին յարակցում է. «բայց անհիմն թուին բանքդ» [15]). սակայն ինչո՞ւ. վասն զի Կորիւն և Խորենացին այլ տեսակ են պատմում. բայց մի՛թէ այդ բաւականացուցիչ փաստ է Ղազարի խօսքերը ստելու. ամենևին: Ընդհակառակը Փարպեցու ասածը աւելի ճիշտ և բնական է թւում, քան Խորենացու հաղորդածը. մի՛թէ կարելի էր, որ սուրբ. Մեսրոպը մի բոլորովին նոր այբուբեն ստեղծելուց յետոյ—ըստ Խորենացու—անմիջապէս, այն և իսկ օտար երկրում, ուղղակի մի այնպիսի ծանրակշիռ գործի ձեռնարկէր, ինչպիսին որ սբ. գրքի թարգմանութիւնն էր. և մի՛թէ բնական չէ Փարպեցու ասածը. «թէ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ». արդեօք մի այդպիսի մեծ քայլ անելու համար անհրաժեշտ չէր եկեղեցւոյ պետի, կաթուղիկոսի հրամանն ու աջակցութիւնը: Եւ մի՛թէ զարմանալու և Փարպեցին ստելու տեղիք կայ, երբ նա շարունակում է. «վասն զի ոչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման», քանի որ բաւականին ժամանակ անցնելուց յետոյ—երբ արդէն մի խումբ երիտասարդներ ուղարկուել էին Բիւզանդիոն՝ յատկապէս յունարէն ուսանելու և թարգմանու-

[14]) Կորիւն ասում է „Հին կտակարան" իսկ Խորենացին „Նոր կտակ". Հակառակ պ. Խալաթեանի կարծեաց,—որ ասում է „Ջ'լինդրի ասա՝ Ղհին, եթէ Նոր կտակարան իցէ թարգմանեալ". նոյն. էջ 71—, կարծում ենք, որ այս տարբերութիւնն իսկ կասկածելի է կացուցանում իրողութիւնը:

[15]) Տես. Գ. Խալաթեանց. նոյնը. էջ 70:

թեամբ պարապելու—սբ. գրքի կրկին թարգմանութեան վերաբերմամբ՝ կարդում ենք Խորենացու հետևեալ խօսքերը. «զոր առեալ Մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ: Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղէքսանդրիայ՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան» [16]):

Զ. Փարպեցին պատմելով թէ՝ Մեսրոպ «եստեղծ զնշանագիր մեր Հանդերձ Հռուփանոսիւ, կերպաձևեալ զգիրն»... շարունակում է. «և այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով զնա սբ. Հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհս ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենալին ուղղաձայնութեան» [17]): Պ. Խալաթեանցն այս տողերը համարում է «աղաւաղումն», «բռնի եղծումն» և «հակառակ տրամաբանութեան» [18]). սակայն ինչո՞ւ:

Սոյն տողերը մեզ բոլորովին տրամաբանութեան հակառակ չեն երևում. եթէ նոյն իսկ ենթադրենք, որ «եստեղծ նշանագիրս մեր Հանդերձ Հռուփանոսիւ և այլն» խօսքերը պատկանում են Փարպեցուն, այն ժամանակ կարելի է ասել, որ «եստեղծ»ը վերաբերում է աւելի տառերի նոր ձևերին, ինչպէս պարզ ցոյց են տալիս «կերպաձևեալ զգիրն» յայտո-

[16]) Տես. Մ. Խորենացի. նոյնը. գլխ. կա. էջ 391:

[17]) Տես. Փարպեցի. նոյնն. էջ 41:

[18]) „Պարտ է դիտել, զի այն մասն Ղազարայ պատմութեան, յորում զնշանագրացն պատմի գիւտ և ըստ ոճոյն կրէ նշմարանս ինչ աղաւաղման կամ բռնի եղծման: Կարէր արդեօք Ղազար զայնպիսիս առնել սխալանս, որ հակառակ ելանեն պարզ ի՞ն տրամաբանութեան": Տես. Գ. Խալաթեանց. նոյնը. էջ 73:

դող խօսքերը. իսկ «*յերիւրելով զնա. Սահակայ, դիւրահնար Շանապարհս ցուցանելով*» վերաբերում է այբուբենի շարադրութեան և տառերի հնչման, ինչպես որ ապացուցանում են «*ցուցանելով կարգաղրութեան զրենոյս եւ հեզենային ուղղածայնութեան*» յաջորդող խօսքերը։ Սակայն եթէ նոյն իսկ ընդունենք, որ այդ երկու հատուածներն էս միևնոյն միտքն են պարունակում, դարձեալ տրամաբանութեան հակառակ չէ կարող լինել. արդեօք մի անգամ սբ. Մեսրոպի ձեռքով «*ստեղծածը փոփոխութեան չէր կարող ենթարկուել*՝ խորհրդակցութեամբ կաթուղիկոսի և այլ հասկացող քահանաների, ինչպես ասում է Փարպեցին. «*տալով նմա օգնականս և այլ արս քանիբունս եւ մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա որպէս երանելին Մաշթոց մերձաւորեալք ի յունարէն հեզենայան*»։ Փարպեցու այն բոլոր հատուածներն, որոնք տարբերւում են Խորենացու և Կորիւնի հաղորդածներից, պ. Խալաթեանցն անուանում է «ընդի եղծումն», գլխաւորապէս այն պատճառով, որ իբրև թէ այդ հատուածների նպատակն է սբ. Մեսրոպի անձը նուաստացնել, իսկ Ղազարից անսպասելի է այդ [19]։

Եթէ այդ հատուածները սբ. Սահակի գործակցութիւնը —Մեսրոպեան այբուբենի կազմակերպութեան գործում— առաւել պարզ և որոշ են ներկայացնում, քան մեր միւս երկու աղբիւրներն, այդ չէ նշանակում, որ դոցա նպատակն է սբ. Մեսրոպի անձը նուաստացնել. ընդհակառակը մեզ թւում է, որ այդ հատուածներն առաւել մօտ են ճշմարտութեան։ Սովորական երևոյթ է, որ մի որ և է նշանաւոր

[19]) «*Թուի մեզ... Հաղիւ թէ կարէր Ղազար այնքան տարբեր իմն կացուցանել յանդիման զանձնաւորութիւն Մեծին Մեսրոպայ, զորոյ զվաստակոցն արգասիս նա ինքն առաւել քան զայլ ոք ի ժամանակակցացն պարտ էր ճանաչել արժանապէս*»։ Տես. Խ ա լ ա թ ե ա ն ց. Նոյնը. էջ 72։

իրողութիւն տեղի ունենալիս՝ սկզբնապատճառն և յաջող կամ դժբաղդ ելքի բոլոր առիթները ժամանակակիցները վերագրում են և կենդրոնացնում մի անձնաւորութեան վերայ. այն ինչ գործի ժամանակ այդ անձնաւորութիւնը միշտ ունենում է իւր գործակիցներն ու խորհրդակիցները։ Այսպէս և մեր ազգային դպրութեան հաստատման նշանաւոր իրողութիւնը մեր երկու պատմագիրները կենդրոնացնում են գլխաւորապէս սբ. Մեսրոպի անձնաւորութեան վերայ։ Ընդունում ենք, որ սբ. Մեսրոպը հանճարեղ, քանքարաւոր, բարձր գաղափարների ձգտող և ձիրք ունեցող անձն էր, սակայն մի և նոյն ժամանակ չենք կարող չխոստովանել, որ կատարուած պատմական նշանաւոր իրողութիւնը մի անձի ուժից վեր գործ էր։

Ինչմ պ. Խալաթեանցը մերժում է Փարպեցու հաղորդած տեղեկութիւնները սբ. Սահակի մասին. մի թէ զարմանալի է, որ սբ. Մեսրոպը Փարպեցու ասելով՝ միշտ դիմում է սբ. Սահակի օժանդակութեան. ո՛չ, և ահա թէ ինչու.

Սուրբ Սահակը կաթուղիկոս էր և հայ եկեղեցւոյ պետը. իսկ սբ. Մեսրոպը պարզ, սակայն արժանաւոր եկեղեցական, որ բարձր աստիճան չունենալով հանդերձ՝ ստորադրեալն էր եկեղեցւոյ պետի և առանց նորա հրամանի չէր կարող գործել։

Սբ. Սահակը կարող էր գործակից լինել Մեսրոպին հայ տառերի և դպրութեան վերականգման գործում և դուցէ նոյն իսկ «*առաջնորդ*», «*ուսուցանող*» նորա, որովհետև սբ. Սահակն անկարող և անուս կաթուղիկոս չէր և առաւել գերազանց կրթութիւն էր ստացել քան սբ. Մեսրոպը։ Սբ. Մեսրոպն ուսել էր Հայաստանում —ի բաց առեալ իւր ճանապարհորդութիւնները— Ներսէս Մեծին աշակերտելով. իսկ սբ. Սահակն իւր կրթութիւնը ստացել էր Բիւզանդիոնում, այն ժամանակուայ գիտութեանց գլխաւոր կենդրոններից մեկում, և ինչպէս Փարպեցին ասում է. «. . . յոյժ առլցեալ

անցուցանէր վարժիւք զբաղում գիտնովք Յունաց. եղեալ կատարելապէս Հմուտ երգողական տաւիղին և հռետորական յորդասաց յայտնաբանութեան. ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր»։ Ուստի և սբ. Մեսրոպի նուաստացումը չէ Փարպեցու միտքը—որովհետև այդ հատուածները մենք «բռնի եղծում» չենք համարում, այլ Փարպեցու հարազատ խօսքերը—, երբ ասում է. «առանց Սահակայ բաւական չէին ի վճարել անսխալ ուղղակի... յերիւրելով զնա... Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյն» և այլն [20])։

Եթէ ուշադրութեամբ և քննադատական հայեացքով կարդանք մեր վերոյիշեալ երեք պատմաբանների տուած տեղեկութիւնները սբ. Սահակի և Մեսրոպի մասին, կ'տեսնենք որ թէև այդ երկու մեծ անձինք միասին են գործում և միմեանց աջակցում, այնուամենայնիւ սբ. Սահակի գործողութիւնը հանդիսանում է առաւելապէս գրականութեան և թարգմանութեան պարապմանց մէջ—հարկաւ բացի քաղաքական հոգսերից—իսկ սբ. Մեսրոպը հանդիսանում է իբր *«ուսուցիչ հայոց աշխարհի»*, մեծ քարոզիչ քրիստոնէական հաւատի և ազգային գաղափարի։ Սբ. Մեսրոպը հանդիսանում է իբրև մի մեծ *գործնական* անձնաւորութիւն. նա երկար ժամանակ չէ մնում մի տեղ, այլ շրջում է իւր ամբողջ կենաց ընթացքում Հայաստանի և սահմանակից դրացի երկրների նահանգները, քարոզում և տարածում է քրիստոնէական լուսոյ ճառագայթները դեռ ևս խաւար մնացած

[20]) Պէտք է ասած, որ նոյն իսկ պ. Խալաթեանցը խոստովանում է, որ իւր յառաջ բերած փաստերը բաւականացուցիչ ապացոյցները չեն, վասն զի իւր քննադատութեանն անմիջապէս կցում է հետևեալ խօսքերը. „Մեք ինքներս ճանաչեմք, եթէ չեն այնպէս ակներև մերս ցուցմունք, մինչև գլխովին լուծանել կամ գոնեա պարզաբանել ջննճիռս կարևոր խնդրոց"։ Տես. Խալաթեանց. նոյն. էջ 73։

անկիւններում. մի և նոյն ժամանակ ուսուցանելով կարդալ գրելու արուեստը՝ ոչ միայն հասարակ ժողովրդին և ազնուականներին, այլ և թագաւորներին և եպիսկոպոսական գահի վերայ բազմող եկեղեցականներին։

Ո՛չ միայն Փարպեցին, այլ և Խորենացին ու Կորիւնն թարգմանութեանց վերաբերմամբ ճառելիս միշտ Սահակին են առաւելութիւն տալիս. Սքանչելին պատմելով սբ. Մեսրոպի վերադարձը Վրաստանից և սբ. Սահակին ընկերանալը՝ շարունակում է. «Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել, *ծերն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի գրել Մեծին Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեան*»։ Մի փոքր յետոյ. «սակայն սբ. Սահակը թարգմանեց յունարէնից—հայերէն բազմաթիւ եկեղեցական գրուածքներ, որ... յետոյ ձեռնարկեց Եզնիկի հետ առաջուց շտապով թարգմանուածներն ուղղել՝ նոր բերուած ճիշտ օրինակներից և թարգմանեց դարձեալ սբ. գրոց բազմաթիւ բացատրութիւններ։ Խորենացին պատմելով Վրաց և Աղուանից «նշանագրերի գիւտը», շարունակում է։ Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանն արքունի, *ինքն դառնայ ի Հայս և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յաստոյն՝ յոչ լինելոյ յունի*»։

Վերոյիշեալ փաստերի հիման վերայ մենք այն եզրակացութեան ենք գալիս, որ Փարպեցին առաւել քննադատական հայեացքով է պատմում հայոց հին այբուբենի վերանորոգումը, քան իւր նախորդները։

Որ Փարպեցու պատմութիւնը կարող է տեղ-տեղ եղծուած լինել, չենք մերժում, սակայն այնպիսի «աղաւաղումն» որպէս պ. Խալաթեանցն է ենթադրում, տեղի ունեցած չենք համարում. իսկ Խորենացու այն երկար հատուածը, որ զետեղուած է Փարպեցու պատմութեան մէջ բառ առ բառ և բաղկացած է ամբողջ յիսուն և մէկ տողից, *Փարպեցուն չէ*

պատկանում՝ և ներմուծուած է Փարպեցու ձեռագիրն արտագրողներից [21]։

ա. Փարպեցին մի այդպիսի երկար հատուած չէր արտագրի Խորենացուց, առանց նորա անունը յիշելու, իսկ եթէ այդպէս վարուէր՝ բառ առ բառ չէր արտագրի։

բ. Պ. Խալաթեանի յառաջ բերած միւս բոլոր հատուածներից իւրաքանչիւրը—որ Փարպեցին առել է Խորենացուց—հազիւ թէ այն հատուածի մի տասերորդի չափ լինի և որ գլխաւորն է, բոլորովին բառացի չէ [22]։

---

[21]) Դժբաղդաբար Փարպեցու ձեռագիր օրինակներից միայն երկու հատ են յայտնուել ցայժմ. այս հանգամանքը ղեկում է մեզ համեմատութեան մեթոդի օգուտներից։ Փարպեցու պատմութեան ձեռագիրների սակաւութիւնն ևս պ. Խալաթեանցը բացատրում է յօգուտ իւր տեսութեան, այսինքն՝ Փարպեցու թշնամիները չ'բաւականանալով նորա պատմութիւնը եղծելով, ձգտել են նաև բոլորովին ոչնչացնել այդ։—Տես. Խալաթեանց. նոյնը. էջ 53.—։ Պ. Խալաթեանի այս ենթադրութեան դէմ ոչինչ չունինք ասելու, սակայն եթէ այդ տեսութեան հետևենք, այն ժամանակ Մ. Խորենացու պատմութիւնից մի հատուած անգամ մեր ձեռքը չ'պէտք է հասնէր. որովհետև սա էր, որ իւր ողբի մէջ անխնայ կերպիւ հարուածեց իւր ժամանակակից հասարակութեան համարեա թէ բոլոր դասակարգերը—„վարդապետք տըխմարք..., կրօնաւորք կեղծաւորք..., վիճակաւորք հպարտք..., աշակերտք հեղգ..., ժողովրդականք վէսք..., զօրականք անիրաւք..., իշխանք ապստամբք..., գատաւորք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք" և այլն—և սորա սբ. ոսկրներն էին, որ գերեզմանի մէջ անգամ հանգստութիւն չունեցան։

[22]) Պ. Խալաթեանցի յառաջ բերած համեմատութիւնները հետևեալներն են. ա. Խորենացին ասում է. „եւ ոչ անօրինաց մատնել ի ծաղր եւ յայպանումն... (և տասը տողից յետոյ շարունակում՝) քանզի դրօշմանալ է (Արտաշիր) աւազանաւն, թէպէտ եւ անառակ է"—տես. Խորենացի, նոյնը. գիրք III. գլխ. կգ. էջ 395—396—։ Փարպեցին ասում է. „եւ ոչ անօրինաց մատնելով ի ծաղր եւ յայպանումն տալ զսուրբ

զ. Եթէ այդ հատուածն ամբողջապէս հանենք Փարպեցու գործից՝ պատմութեան ընթացքն ու կապը չի խանգարուի.—սոյն հատուածի նախընթաց նախադասութիւնն է. «իսկ արքային Հայոց սբ. կաթուղիկոսաւն Սահակաւ և երանելեաւն Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէ՝ ուրախ լինէին»։ Ապա Խորենացու վերոյիշեալ հատուածից անմիջապէս յետոյ շարունակում է. «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով զնա սբ. Հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով»... և այլն։

դ. Փարպեցին իւր պատմութեան մէջ սբ. Մեսրոպին սկզբից մինչև վերջը անուանում է *Մաշթոց*—այս անունը կրկնուած է տասնևեօթն անգամ—իսկ այն հատուածի մէջ, որ արտագրողները Խորենացուց վերցրել և մտցրել են Փարպեցու պատմութեան մէջ, մնացել է և *Մեսրովբ* անունը—որ կրկնուած է չորս անգամ—. միմիայն այս իրողութիւնը բաւական է, որպէս զի համոզուենք՝ թէ Փարպեցին ինքը չէր կարող լինել այդ հատուածի արտագրողը։

խորհուրդ հաւատոյս մերոյ... (և երեսունուրինը տողից յետոյ շարունակում է) *զի թէպէտ եւ մեղաւոր է, այլ դրոշմնալ է սբ. աւազանին ծննդեամբ*'—տես. Ղ. Փարպեցի, նոյնն. էջ 58—59—։ Այս օրինակն պ. Խալաթեանցի յառաջ բերած համեմատութիւններից ամենամեծ նմանութիւն ունեցողն է. ահա և մի այլ օրինակ. Խորենացին ասում է. „վասն զի ոչ համակամեցար մեզ՝ զմաւգաւորել նմա, արդ եւ մեք կամեցուք եւ քեզ չքահանայանալ մեզ"—տես. Խորենացի նոյնը, գիրք III. գլխ. կգ. էջ 396—։ Փարպեցին ասում է. „... թէ փոխանակ զի ոչ լուար քանից մերոց, եւ ի միաբանութենէ մերմէ զանձն քո ի բաց մերժեցեր, գիտասջիր զի որպէս եղեալ է ի մուի զմաւգաւորել սմա եւ այլ եւս ի վերայ խոստանամք՝ չքահանայանալ եւ ոչ քեզ առ յերկարս ի վերայ աշխարհիս մերում"։ տես. Փարպեցի. նոյնն, էջ 62։

ե. Այդ հատուածը վերցնելուց յետոյ [23]) կաներևոյթանան այն ամեն ըստ երևոյթին հակասութիւններն, որ պ. Խալաթեանցը համարում է «բռնի եղծմունք», «սխալանք, որ հակառակ ելանեն պարզ իմն տրամաբանութեան» և այլն։ Եթէ ի բաց թողնելով այդ հատուածը, կարդանք Փարպեցու տուած տեղեկութիւնները Հայոց Հին այբուբենի վերականգման և կատարելագործութեան մասին—որ ընդամենը տասնևերեք փոքրիկ էջ կլինի—, կտեսնենք որ ճշմարիտ Փարպեցին հաւատարիմ է մնացել իւր յայտնած սկզբունքներին. «չ'առնել մարդահաճութեան բանից յաւելուածս, չ'յաւելուլ զանեղեալսն, չնուազեցուցանել զեղեալսն... այլ բնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն»։

Այսպիսով թէև Փարպեցին մեզ յայտնած չի լինի մի քանի երկրորդական տեղեկութիւնները—ինչպէս օրինակ սբ. Մեսրոպի Եգեսիայ և Սամոսատ գնալը—, սակայն եղելութեան բուն էութիւնը պարզ և համառօտ պատմած. այսինքն թէ սբ. Մեսրոպը Հայոց Հին այբուբենը ստանալուց յետոյ սբ. Սահակի և գիտուն ու հասկացող քահանաների օժանդակութեամբ վերանորոգում և կատարելագործում է

[23]) *Մեր Հին ձեռագիրներն ուսումնասիրողների համար մի նոր երևոյթ չէ, որ շատ գրչագիրների մէջ մտցրած են ղանազան հատուածներ արտագրողների կողմից. այն արտագրողներն, որոնք հասկացող լինելով՝ ըմբռնել են իւրեանց արածի նշանակութիւնը, իւրեանց կողմից աւելացրած հատուածներին յիշատակարանի ձև են տուել և այդպիսով մի օգտակար գործ կատարել. իսկ այն արտագրողները, որոնք լուրջ ուշադրութիւն չեն դարձրել իւրեանց գործի վերայ, մտցրել են գրչագիրների մէջ—ո՛չ թէ զեղծելու, այլ լրացնելու նպատակով—այլ և այլ հատուածներ և այդպիսով պատմութեան ընթացքը շատ անգամ խանգարել։ Այսօր մենք մասամբ այդ իմաստակ արտագրողներին ենք պարտական, որ մեր ամենաընտիր մատենագիրները չեն դիմանում եւրոպական խիստ քննադատութեան և այդ պատճառով սխալմամբ կեղծ համարուում։*

հայոց նոր այբուբենը։ Այս տեսակէտից ահա Փարպեցու պատմութիւնը ճշտագոյն աղբիւրը պէտք է լինի մեր այբուբենի վերականգման պատմութիւնն ուսումնասիրողների համար։ Փարպեցին ամենայն կերպ հաւատարիմ մնալով իւր սկզբունքին, ամենապարզ կերպիւ ներկայացնում է մեզ մեր նոր այբուբենի կազմակերպութեան եղելութիւնը՝ բոլորովին կարօտութիւն չզգալով հրաշքների դիմելու։

Իսկ ինչ վերաբերում է Մ. Խորենացու և Կորիւնի մէջ եղած յարաբերութեանց, պէտք է ասել, որ դոքա իրար հակասող իրողութիւններ չեն պատմում, սակայն կան այնպիսի դէպքեր, որ Խորենացին յիշում է, իսկ Կորիւնի մօտ չենք գտնում. մի այլ հատուած, որ պատմում է Կորիւնը, չկայ Խորենացու մէջ։ Այս տարբերութիւնը յառաջ է գալիս այն հանգամանքից, որ երկուսի հեղինակութեանց նպատակը տարբեր է. Խորենացին գրում է հայոց ընդհանուր պատմութիւն, ուստի նորան անհրաժեշտ է ժամանակակից քաղաքական պատմութիւնն էս յարակցել «նշանագրերի գիւտի» հետ, իսկ միւս կողմից՝ այլ տեսակէտից նայելով սբ. Մեսրոպի անձնաւորութեան վերայ, իւր պատմածներն էս տեղ տեղ աւելի ընդարձակ են, քան նոյն իսկ սբ. Մեսրոպի *վարքագրի* գրածը։

Իսկ Կորիւնի աշխատութիւնն աւելի, այսպէս ասած, սրբազան բնաւորութիւն ունի և առաւել մանրամասն նկարագրում է մեծ ուսուցանողի սրբակեաց վարքը. նորա անապատական և միայնակեցական կեանքն է գովաբանում՝ միշտ օրինակներ բերելով սբ. գրքից և մարգարէութիւններից։ Թէ ինչպէս է ըմբռնում Կորիւն Աքանչելին իւր յանձն առած աշխատութեան—որ գրեց Յովսէփ կաթուղիկոսի և և իւր ընկերների խնդրանօք—նպատակն և ուղղութիւնը, ակնյայտնի երևում է նորա հետևեալ խօսքերից. «Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցէ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց. ոչ ի մէնջ արուես-

տախօսեալ մերոյն կարծեօք վիճաբանելով, այլ յօրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել։ Քանզի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց...»։ Տես Կորիւն. էջ 2.

«Քանզի չէաք իսկ հանդուրժօղք՝ զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն. այլ ի դիւրագոյն և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք. որոյ անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն, առ ի մանրակտիտ առնելոյ զկարևորագոյնս պատմելոյ՝ զհանգամանս՝ ասացաք...»։ Տես. Կորիւն. էջ 28։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՒ «ՓՇՆԻԼԼԵՆ» ԿՈՉՈՒԱԾ ԳԻՐՔ

Թէ քացի Կորիւն և Խորենացի ժամանակակիցներից ուրիշ ոչ ոք մեր յետագայ մատենագիրներից ոչինչ չհաղորդեր մեզ՝ Հայոց ազգային կեանքի համար այդ անսահման նշանաւոր իրողութեան մասին, մենք մի պարզ գաղափար չէինք կարող ունենալ Հայոց այբուբենի կազմակերպութեան վերաբերութեամբ։ Այդ վերոյիշեալ երկու պատմագիրներն երախտագէտ սրտով դովաբանելով իւրեանց մեծ ուսուցանողին և ճառերով էջերը լցնելով՝ բաւականանում են «նշանագրերի գիւտն» երկու խօսքով պատմել՝ վերագրելով այդ Աստուածային շնորհաց և ընթերցողին թողնում են մտատանջութեան մէջ՝ այն բազմաթիւ հարցերի առաջ, որոնք ծագում են դոցա մութն ակնարկութիւններից։ Այսպէս օրինակի համար մեզանից իւրաքանչիւրն, որ կարդում է այդ պատմագիրների ասածները՝ կարող է իրաւամբ հարցնել.

ա. Ի՞նչպէս է պատահում, որ սբ. Մեսրոպն երկար ու ձիգ տարիներ քրտնաջան աշխատելով, երևելի ճարտասան ու լեզուագէտ անձանց դիմելով՝ չէ կարողանում իւր նպատակին հասնել, այսինքն Հայոց լեզուի համար սեպհական այբ-

ուբեն գտնել, իսկ միւս կողմից յերևան է գալիս մի քահանայ—յայտնի չէ իսկապէս Հայ թէ Ասորի—և ասում թէ ինքը գիտէ, որ կան «Հայ նշանագրեր» «արարեալ ի Դանիէլէ»: Արդ ո՞վ էր այս Դանիէլը—մի ասորի եպիսկոպոս, որի հայերէնագիտութեան աստիճանն անյայտ է. Հայաստանից, հայ բնիկ ժողովրդից հեռու, Միջագետքում նստած նա հայերէն նշանագրեր է պատրաստում, որի անյարմարութիւնը մեր սբ. Սահակ և Մեսրոպը դեռ ևս երկու տարի քրտնաջան աշխատելուց և դոցա ի գործ դնելուց յետոյ են տեսնում: Եւ այդ Դանիէլի մասին ահա մեր պատմագիրները մի խօսք անգամ չեն ծախսում, բացի այն՝ թէ նա ասորի եպիսկոպոս էր և Վահրիճին ու Հաբէլին սովորեցրեց տառերի հնչիւնն և Մեսրոպին ևս աւելի չկարողացաւ տալ. մի՞թէ այս ձևով պատմուած Դանիէլը կարող է «դանիէլեան նշանագրեր» կոչուած հայոց գրի իսկական հեղինակը լինել:

բ. Այդ երկու պատմագիրներն ևս «Դանիէլեան նշանագրերն՝ իբր անպէտք համարելով և դէն ձգելով՝ ասում են, որ սբ. Մեսրոպը «գտաւ նոր նշանագրեր» առանց յայտնելու դոցա էութիւնն ու տեսակը:

Այսպիսի հարցումներ և գորդեան հանգոյցներ շատ կարելի էր յառաջ բերել մեր վերոյիշեալ երկու պատմագիրներից, սակայն բաւականանանք այսչափով, վասն զի բարեբաղդաբար մեր յետագայ և աւելի ուշ ժամանակի պատմիչներն առաւել պարզ են ներկայացրել գործն և իրականութեան մօտիկ, քան Հանճարեղ Խորենացին և սքանչելին Կորիւն:

Արդէն խօսեցինք Փարպեցու վկայութեանց արժանաւորութեան մասին, այժմ յառաջ ենք բերում այդ վկայութիւններից մի երկու կէտեր, որոնք անմիջական յարաբերութիւն ունին Խորենացու և Կորիւնի անլոյծ թողած հարցերի հետ:

Փարպեցին պարզ, հասկանալի և ճշմարիտ կերպիւ նկատագրելով այն հանգամանքներն, որոնք սբ. Մեսրոպին առիթ տուեցին հայոց այբուբենի վերականգման մասին աշխատել՝

շարունակում է. «*Մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզույս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով շահել...*» և այլն: Այս խօսքերից ակնյայտնի երևում է, որ մի ժամանակ գոյութիւն էր ունեցել հայոց մի այբուբեն, սակայն այլ ևս չգործադրուելով՝ անյայտացել էր և որի գտնելը համարեա թէ անկարելի դարձել: Որ սբ. Մեսրոպի առաջին ջանքն էր՝ գտնել այդ կորած այբուբենը, պարզ ակնարկում է Փարպեցին ասելով. «*ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս առ ումեմն եպիսկոպոսի*»... «տեսի նշանագիրս» խօսքերը վկայում են, որ խօսքը մի որոշ նշանագրերի մասին է, ուստի և պատմագիրն ոչ մի ածական չէ աւելացնում. իսկ այդ որոշ այբուբենն ո՞րը կարող է լինել, բացի հայոց՝ կորած և Մեսրոպի որոնած այբուբենը: Որ այդ «նշանագիրը» հայոց հին այբուբենն էր, ասում է պարզապէս նոյն իսկ Փարպեցին՝ երբ խօսում է Դանիէլի մասին. «... *Դանիէլի եպիսկոպոսի, առ որում՝ նշանագիրքն հայերէն կային*»: Եւ ահա այս մոռացուած և նորից գտած այբուբենը կատարելագործում է սբ. Մեսրոպը—վասն զի մի քանի պակասութիւններն անհրաժեշտ էին կացուցանում այդ —«*յերիւրելով*», «*դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգաւորութեան գրենոյս եւ հեգենային ուղղաձայնութեան*». և այլն: Այսպիսով Փարպեցին շատ հասկանալի կերպով է պատմում հայոց այբուբենի վերականգման գործն և երբէք չէ ասում «Դանիէլի այբուբեն» կամ թէ «Դանիէլի շինած այբուբեն»:

Փարպեցու պատմածն առաւել ընդարձակում և պարզում է մի աւելի ուշ ժամանակի հայ պատմաբան՝ Վ.արդան [1]),

---

[1]) *Վարդան վարդապետ՝ պատմագիր 13-րդ դարու և ժամանակակից Կիլիկիոյ Հեթում Թագաւորի և Կոստանդին Կաթուղիկոսի. բացի իւր ընդհանուր պատմութիւնից ունի նաև մի՛ր գրուածներ:*

որ Մեսրոպեան այբուբենի մասին խօսում է Հետևեալ կերպիւ. «Ի հինգերորդ ամին սորայ—այսինքն Վռամշապհոյ—եւ յառաջին ամին Արտաշրի որդւոյ Նապհոյ՝ սբ. Մեսրոպ յօրինէ գպրութիւն Հայերէն քան եւ երկու—22—զիր առ Դանիէլի ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս՝ անհոգացեալ եղեւ յառաջնոցն. յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս ի հայ բարբառ։ Վասն որոյ աղօթիցն տուեալ զանձն՝ գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զիմաստութեամբ լցեալն չորեքտասան—14—զիրս՝ աջով իւրով գրօշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսիսի ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի գրօշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիւք» [2]։ Վարդանի այս խօսքերն այլ ևս բացատրութեան կարօտ չեն. այս վկայութիւնը համաձայն Փարպեցու պատմութեան, ճշտում է, որ Դանիէլեան կոչուած այբուբենը Հայոց Հին գործածական գիրն էր, սակայն տեղի տալով յունաց, ասորւոց և պարսից գրերին՝ մոռացութեան էր տրուել մինչև որ նորից գտնուեցաւ և սբ. Մեսրոպի և Սահակայ ջանիւք կատարելագործուելով՝ կրկին գործածական դարձաւ ամբողջ ազգի համար։

Երբ այժմ այս պարզ հայեացքով կրկին կարդանք մեր երկու ժամանակակից պատմագիրների մութ մնացած և ակնարկած տողերը, կտեսնենք, որ նոքա հակառակ իւրեանց ցանկութեան՝ մի և նոյնն են վկայում։

Այսպէս օրինակի համար Կորիւնի ասելով, Սահակ և Մեսրոպը համոզուեցան, որ Դանիէլի մօտ գտնուած գրերը չեն կարող կատարելապէս արտայայտել հայոց լեզուի

[2]) Տես. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի». էջ 50։

կապերն և վանկերը՝ «մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ՝ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան»։ Վերջին խօսքերով Կորիւնը ակնարկում է այն հանգամանքն, որ Հայոց Հին այբուբենը մոռացուել էր՝ տեղի տալով այլոց դպրութեանց, այսինքն այլոց գրերին և ապա կրկին յայտնուել [3]։

Մի այլ տեղ ասում է Կորիւն. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որ յանկարծ ուրեմն նշանագիրս ալփաբետաց հայերէն լեզուին»։ Եւ ապա թէ. «առեալ երանելի Հոգաբարձուացն զանկարծագիւտն՝ խնդրէին» և այլն։

Խորենացին խօսելով Դանիէլեան տառերի մասին՝ ասում է. «զվաղնջուց գտեալ նշանագիրք տարից [4])»։

---

[3]) Կորիւնի խօսքերը. «Մանաւանդ զի և նշանագիրքն իսկ՝ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան» պրօֆ. Էմինը թարգմանում է այսպէս. «къ тому же надобно прибавить, что эти письмена были забыты и найдены случайно»—տես. Н. Эминъ: Ист. Арм. М. Хоренскаго յաւելուած 4. էջ 366։

Իսկ Կորիւնի թարգմանիչ պրօֆ. Վէլտէն այդ նախադասութիւնը թարգմանում է հետևեալ կերպիւ. «... Zumal—da auch Buchstaben aus fremden frühern und spätern Schriften-hinzugekommen Waren»։ Պրօֆ. Էմինը հաւատարմութեամբ չէ թարգմանել Կորիւնի խօսքերն, այլ միայն միտքն. իսկ պրօֆ. Վէլտէն բոլորովին սխալ է հասկացել այդ տողերի միտքը և սխալ ևս թարգմանել։

[4]) Հայր Ինճիճեանը խօսելով Ղ. Փարպեցու հետևեալ վկայութեան մասին. «Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ մեք որ կամքս առաջի քո հանդերձ երանելւոյն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածայինն շնոր ի ցանկութիւնս յայս՝ կարգել զվաղնջուց գրեալ շարագիրս տարիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր...» —տես. Փարպեցի էջ 44.—շարունակում է. «Ահա յայս միտ պարտ է առնուլ և զոր ասէ Խորենացին. «Ալ ասիցէ ոք արդեօք վասն ոչ լինելոյ գիր եւ դպրութիւն ի ժամանակին»—

Այս բոլոր վկայութիւններից մենք այն եզրակացութեան ենք գալիս, որ մեր նախնիքը դեռ ևս իւրեանց կռապաշտութեան ժամանակ ունեցել են սեպհական գիր: Այս իրողութիւնը յայտնի էր Խորենացուն և Կորիւնին—ինչպէս որ վերոյիշեալ մատենագիրները արտայայտում են—սակայն դոքա գտանուելով սբ. Մեսրոպի քաջազարդ գործողութեանց արդիւնաւոր ազդեցութեան տակ և տեսնելով, որ հայոց մտաւոր աշխարհն թէև հսկայական յառաջադիմութիւն արաւ շնորհիւ այդ մեծ ուսուցանողի, իսկ միւս կողմից եռանդուն քրիստոնեայ հոգևորականները լինելով՝ ցանկանում են այդ բոլորի պատճառը կենդրոնացնել իւրեանց մեծ վարդապետի և աստուածային շնորհաց մէջ: Միւս կողմից աչքի առաջ ունենալով, որ հայոց հին այբուբենը կռապաշտական ժամանակի արդիւնք էր, ըստ ինքեան հասկանալի է թէ ինչու մեր պատմագիրները չեն յիշում դորա գոյութիւնը—թէև գուցէ անգիտակցաբար, բոլորովին ծածկել չեն կարողանում:

Հայ ժողովրդին կռապաշտական յիշատակներից հեռու պահելու համար մեր եկեղեցականների եռանդն այնչափ մեծ է եղել, որ մինչև անգամ Խորենացին չէ ուզում անուամբ յիշել այն ոչ քրիստոնէից գրած հեղինակութիւնները, որոնցից օգուտ է քաղում, այլ ասում է, որ աչքի առաջ է ունեցել նոցա յունարէն թարգմանութիւնը, թէև ըստ Ֆօն-

տես. Խորենացի. նոյնը. գիրք Ա. գլխ. գ. էջ 7.—«չգիտեցան յիշատակարանք պատմութեանց: Այսինքն է՝ վասն ոչ ուրուք հոգալոյ ի կիր արկանել զայն գիրս, այնպէս ի բաց թողեալ կայր՝ որպէս թէ չգոյր». տես. Ինճիճեան, նոյնը. Հատ. III. էջ 75:

Հայր Ինճիճեանի այս բացատրութիւնը ընդի է, վասն զի Խորենացին անմիջապէս շարունակում է. «Այլ ոչ արգարև այսքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և զիր Պարսից եւ Յունաց, որովք այժմ.... առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք...» տես. նոյն էջը:

Գուտշմիդի [5]), այդ հատուածներից պարզ երևում է, որ Խորենացին նոյն իսկ բնագիրներն է իւր ձեռքի տակ ունեցել:

Այդ, ընդունելով որ մեր կռապաշտ նախնիքը սեպհական ազգային գիր ունէին, տեսնենք թէ արդեօք դորա համար այլ, և ուղղակի վկայութիւն ունի՞նք:

Մեր ամենահաւաստի պատմագիրն—ըստ ժամանակագրութեան—Ագաթանգեղոս երկու անգամ վկայում է իւր պատմութեան մէջ, որ սբ. Տրդատի թագաւորութեան ժամանակ տառերով գրելու արուեստն արդէն տարածուած էր Հայաստանում: Յառաջ բերենք Ագաթանգեղոսի այդ երկու վկայութիւնները.

«Եւ մինչդեռ կայրն կախեալ այնպէս,—սբ. Գրիգոր Լուսաւորիչ—խօսեցաւ զայս ամենայն և *զրեցին ատենակալ դրպիրքն նշանագրացն. զի առ ոչինչ համարեալ զկախաղանն, և ոչ զբրածեծ գանին կրեաց ինչ զվիշտս. զի չարդեալ էր զամենայն մարմինն յոզորածեծն առնել:* Եւ այլ ևս բազում քան զայս խօսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ. և *զրեցին եւ մատուցին զայն առաջի թագաւորի. քանզի էր կախեալ զեօթն օր* [6])». մի այլ տեղ խօսելով Հռիփսիմէ կուսի մասին՝ շարունակում է նոյն պատմագիրն. «Արդ իբրև այս չիրիմ ամբոխի եղև ի նոցանէն ի մէջ կոտորելոյ մարդկան բազմութեան, ամանք ի մեծամեծ ամբոխէ սպասաւորացն արքունի՝ անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. *քանզի դիպեցան անդ նշանագիրք՝ որ զրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջի թագաւորին*» [7]):

Արդ խնդիր է, թէ արդեօք «նշանագիր» ասելով Ագաթանգեղոսը խօսում է իսկական նշանագրե՞րի—թէ տառերի

[5]) տես. A. von Gutschmid: „Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren" էջ 40.

[6]) տես. *Ագաթանգեղեայ պատմութիւն.* էջ 89—90,

[7]) տես. նոյնն. էջ 140:

մասին: Պրօֆ. Էմինն Ա.գաթանգեղոսի այս վկայութիւնը չէ վերագրում տառերին, այլ ընդունում է, որ իսկական նշանագրեր պէտք է հասկանալ. հանգ. պրօֆ. իւր ենթադրութիւնը հիմնում է այն պատճառաբանութեան վերայ, որ իբրև թէ այն դէպքերում, որտեղ Ա.գաթանգեղոսը յառաջ է բերում իւր վկայութիւններն, անհրաժեշտ էր արագ գրելու կարևորութիւնն և մանաւանդ վերջին դէպքում անկարելի էր սովորական տառերով գրել խօսողի արտասանած իւրաքանչիւր բառն. ուստի պէտք է ենթադրել, որ դպիրները գրում էին մի տեսակ պայմանական նշաններով [8]:

Պրօֆ. Էմինի պատճառաբանութիւնը մեզ հիմնաւոր չէ թւում և Ա.գաթանգեղոսի վկայութիւնը բացատրում ենք յօգուտ տառերի գոյութեան՝ հիմնուելով հետևեալ պատճառաբանութեանց վերայ.

ա. Ի՞նչ հիման վերայ պ. Էմին ենթադրում է, որ դպիրները պէտք է *բառ առ բառ* գրէին կոյսերի ասածներն և երկնքից լսուած ձայնի խօսքերն. արդեօք յարգելի գիտնականն ենթադրո՞ւմ է, որ Ա.գաթանգեղոսի յառաջ բերած՝ կուսանաց արտասանած ճառերը բառ առ բառ վերցրած են այդ նշանագրերից—չենք կարծում: Աւելի հաւանական և բնական է, որ դպիրները միայն եղած իրողութիւնն արձանագրէին և կարդային թագաւորի առաջ:—Այս կէտի վերայ առանձին ուշադրութիւն դարձրինք նաև այն պատճառաւ, որ Հայագէտ գիտնական Լանգլուան ևս հաւատ է ընծայել բառացի գրելու կարևորութեան. սակայն նա չ'ընդունելով պ. Էմինի կարծիքն, որ այդ գրերը նշանագիր կամ ըստակերագիր եղած լինին, աւելի հեռու է գնում և ենթադրում, որ այդ նշանագրերը պէտք է մի տեսակ «համառոտագրութիւն» եղած լինին [9]: Լանգլուայի այս կարծեաց

[8]) տես. Н. Эминъ, նոյնն. էջ 364.

[9]) տես. V. Langlois: Collection etc. հատ. II, էջ 4:

ջատագով է հանդիսանում նոյնպէս հայր Գ. Զարբհանալեանն իւր «Հայկական հին դպրութեան» մէջ՝—հատ. I. էջ 19—ա-ւելացնելով իւր կողմից ‹... որոց ձևն, ինչպէս նաև կիրառութիւնն ի Հռոմայեցոց մեզի անցած կերևի›—նոյնը. էջ 17. հտ. I. :

բ. Ա.գաթանգեղոսի ձեռագիր օրինակներից երկուսը պարունակում են իւրեանց մէջ մի քանի էջերից բաղկացած մի յառաջաբան, որի մէջ գտնում ենք նաև հետևեալ հատուածը. ‹Արդ հրաման հասեալ առ իս ոմն Ա.գաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռոմայ և վարժեալ հայրենի արուեստիւ, Հռոմարէն և յունարէն ուսեալ դպրութեան և *ոչինչ կարի անտեղեակ լեալ ծեռնարկութեան նշանագրաց*, և ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արշակունւոյ.... ոչ զիւր քաջութիւն սուտ ինչ հրամայեաց մեզ վիպասանել և ոչ չքմաղարդ (սքողման զարդ) բանից ինչ առասպելս աւելի քան զարժանն ընթանալ, այլ իրք որ եղեալ վասն յեղանակաց ... Արդ հասեալ առ իս հրամանի ի մեծ արքային Տրդատայ կարգել ինձ *ի ծեռնարկութեան նշանագիւտ ժամանակագրացն*, պատմել նախ զհայրենեացն գործս քաջութեան, քաջին Խոսրովու և այլն› [10]:

Նոյմանի ասելով—որից առնում ենք այս հատուածը—դժբաղդաբար այս յառաջաբանն անթուական է. սակայն հաւանական է, որ Ա.գաթանգեղոսի, այսինքն պատմութիւն գրողի գրչի ծնունդ է. արդ, ինչպէս պէտք է բացատրել ‹*ոչինչ կարի անտեղեակ լեալ ծեռնարկութեան նշանագրաց*› պարբերութիւնը. Ա.գաթանգեղոսը—ինչպէս ինքը գրում է—մի Հռոմայեցի է, ստացել է հռոմէական դաստիարակութիւն և ծանօթ է նոյնպէս յունական դպրութեան. եթէ ‹նշանա-

[10]) Այս հատուածը հանել է Neumann Փարիզի արքայական գրադարանի ձեռագիր օրինակից. manuscrit n° 51 pag 8—տես. Nouveau Journal Asiatique. tome III. (1829) էջ 53.

գիր» բառն ըստ պ. Էմինի իսկական նշանագիր կամ թէ ըստ Լանգլուայի համառօտագիր նշանակէր [11]), ինչ կարիք ունէր մի պատմաբան իւր յառաջաբանի մէջ յիշելու, որ նա տեղեակ է նոյնպէս այդ բանին, քանի որ այդ ժամանակ, վաղուց արդէն զարգացած էր հռոմէական և յունական այբուբենը, պատկերագրի կամ նշանագրի գործածութիւնը բոլորովին մոռացութեան էր տրուել, իսկ համառօտագրութիւնն այնպիսի մի երկրորդական բան էր և միայն արտաքոյ կարգի դէպքերի համար, որ դորա յիշելն իբրև մի առանձին ուսուցելութիւն կամ գիտութիւն՝ բոլորովին միտք չունէր։ Ս. Ւեղի հաւանական ենք համարում, որ նշանագիր ասելով Ս. Գաղթանգեղոսն ուզում է ընդհանրապէս «գիր» գաղափարն արտայայտել, ուստի և այդ պարբերութիւնը մենք այնպէս ենք ըմբռնում, որ Ս.գաղթանգեղոսը ցանկանում է ասել, որ ինքը նոյնպէս հմուտ է գրելու կամ շարադրելու արուեստին [12])—մի անհրաժեշտ յատկութիւն՝ պատմաբանի համար։ Իսկ եթէ «նշանագիրք» բառի տակ պէտք է անպատճառ գրի մի որոշ տեսակը հասկանալ, այն ժամանակ մենք կասենք, որ դա տառ կը նշանակէ և այդ պարբերութեան վերջից մի բառ է պակասում, և այդ բառն է «Հայոց». ուստի և կլինի ... և ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց հայոց»...։ Այս ձևով միայն հասկանալի կըլինի մեզ համար Ս.գաղթանգեղոսի պարծանքը. հպարտ կերպիւ յիշում է նա, որ ինքը «մեծ Հռոմից» է և դաստիարակուել է հայրենի կրթութեամբ. պակաս նշանակութիւն չէ

[11]) A. von Gutschmid էլ այլ կերպ է ասում. „Kündig der Schnellschreibkunst" այսինքն ծանօթ արագագրութեան արուեստին. տես. Agathangelos, տպուած է Zeitschrift d. d. m. Gesellsch. Հատ. 31. էջ 9։

[12]) Neumann այս պարբերութիւնը թարգմանում է այսպէս. „... et rien de ce qui est relatifaux lettres ne lui était étranger" տես. Neumann, նոյնն. էջ 53։

տալիս նաև այն հանգամանքին, որ ուսել է նոյնպէս «յունաց դպրութիւնն». այժմ հրաւիրուելով Հայաստան և նպատակուելով Հայոց գահակալ արքայի քարտուղար, մի՞թէ մի առանձին նշանակութիւն չը պէտք է տար նաև այն հանգամանքին, որ ինքը ծանօթ էր նոյնպէս Հայոց գրին. և ահա իւր այդ առաւելութիւնն ևս աշխարհին յայտնելու համար նա պէտք է գրէր. «և ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց Հայոց»։

Դժբաղդաբար Ս.գաղթանգեղոսի յունարէն թարգմանութեան մէջ պակասում է այս առաջաբանն [13]), ուստի և համեմատութիւնն անկարելի դարձնում։

գ. Եթէ յառաջաբանի մէջ «նշանագիրք» բառը գիր կամ տառ է նշանակում, նոյնը պէտք է նշանակէ և պատմութեան մէջ։

դ. Մեր բոլոր հին պատմագիրները «նշանագիր» ասելով «տառ» կամ «գիր» են հասկանում. ապացոյցներ.

1) «... Եւ յարուցեալ յաղօթից, եստեղծ զնշանագիրս մեր...» [14])

2) «զվաղնջուց գտեալ նշանագիր տառից..» [15])

3) «յաղագս Դանիէլեան նշանագրութեանն» [16])

4) «առ որում նշանագիրքն հայերէն կային.. [17])

5) «տեղեկանայր զկարգ նշանագրացն» [18])

6) «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն..» [19])

7) «... յորում Մաշտոց երանելի... դանիէլեան նշանա-

[13]) տես. A von Gutschmid: Agathangelos, նոյն. էջ 9։

[14]) տես. Մ. Խորենացի. նոյն, գիրք III. գլխ. ծգ. էջ 371։

[15]) տես. նոյնն. գիրք III. գլխ. ծբ. էջ 369։

[16]) տես. նոյնն. „ „ էջ 367։

[17]) տես. Փարպեցի, նոյնն. էջ 39։

[18]) տես. Փարպեցի, նոյն. էջ 39։

[19]) տես. Փարպեցի, նոյնն, էջ 41։

գրօք զդպրութիւն ըստ հայումս յօրինէր› [20])

8) «.. վերստին աստուածատուր նշանագրօք զնոյնս յեղանակեալ յօրինէր›.. [21])

9) «.. Մաշթոց զԴանիէլի նշանագիրս յօրինէ... և [22])

10) «յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն եղանակէ›.. [23])

11) «Եւ ծանուցին զհորհուրդն Վռամշապհոյ թագաւորին և նա ասաց ...թէ ոմն եպիսկոպոս ասորի՝ Դանիէլ անուն ասաց. թէ *ունիմ՛ ես նշանագիր հայերէն լեզուի*»... [24])

12) «ընդ այն ժամանակս ապա եկեալ Մեսրոպայ և բերեալ *նշանագիր մերոյ լեզուիս*, զոր գոգցես նմա պարգեւեալ ի տեսողութենէն շնորհացն Աստուծոյ» [25]):

13) «Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր—Մեսրոպ—առ սբն. Սահակ հայրապետն Հայոց՝ *յաղագս գրոց նշանագրաց*»... [26])

14) «Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոյ առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել *զնշանագիրս՝ որում ցանկայրն*» [27]):

15) «... Իսկ թագաւորն Հայոց ծանոյց նոցա վասն քա-

---

[20]) Տես. Ստեփանոս Ասողիկ, էջ 74:

[21]) Տես. Ստեփանոս Ասողիկ, էջ 74:

[22]) Սամուէլ Անեցի—տես.Н. Эминъ Ист. А. М. X. և այլն նոյն. էջ 367: Այս հատուածը Բրոսէն թարգմանել է այսպէս. „Le vénérable Machtots... organisent l'alphabet de Daniel...“ տես. Brosset: „Collection d'Historiens Armeniens“ հատ. II. էջ 381:

[23]) Սամուէլ Անեցի, նոյնն. էջ 367:

[24]) Կիրակոս Գանձակեցի, տես. М. Эминъ. նոյնն, էջ 367:

[25]) Տես. Ցովհան կաթուղիկոս կամ պատմաբան գլխ. ժգ. էջ 71:

[26]) *Ճառընտիր.* տես Գ. Զարբհանալեան. նոյն. էջ 23. հ. I.

[27]) *Ճառընտիր.* տես. նոյն. էջ 23:

հանալի միոյ ասորոյ Դանիէլ անուն թէ խոստանայր ունել *նշանագիր Հայոց*» [28]):

16) «. Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և *զիրս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել*... [29]):

17) «... վասն որոյ եդ ի մտի—Մեսրոպ—հնարել, գտանել *նշանագիրս հայոց լեզուիս*» [30]):

18) «... յայտ է առ ամենեսին, թէ *զնշանագիրս հայոց*, զոր վարեմք, եգիտ սբ. Մեսրոպ» [31]):

19) «Այսչափ է երեք պատմչաց, մեզի աւանդածը՝ *հայկական նշանագրաց* Մեսրոպայ ձեռքով եղած նորոգութենէն յառաջ ունեցած վիճակին.. վերայ» [32]).

20) «. Եւ այսպէս ըստ մերոյ նախայիշեալ պատմագրաց *հին հայկական նշանագիրք* էին, որք գտան առ Դանիէլի, և *դանիէլեան նշանագիրք* էին զորս լրացոյց Մեսրոպ» [33]):

Ահա այդ փաստերի վերայ հիմնուելով, մենք չենք ընդունում Ագաթանգեղոսի վկայութեանց վերայ ցայժմ յայտնուած կարծիքներն և այդ վկայութիւնները բացատրում ենք յօգուտ տառերի գոյութեան [34]):

---

[28]) *Ճայսմաւուրք.* տես. նոյն· հատ I· էջ 46:

[29]) Տես. Կորիւն Աբանչելի. նոյնը. էջ 8.

[30]) Տես. Կորիւն Աբանչելի. նոյնը. էջ

[31]) Տես. Միք. Չամչեան, պատմութիւն հատ. I· էջ 755.

[32]) Տես. Գ. Զարբհանալեան, նոյն, I· 33.

[33]) Տես. Հայր Ղ. Ինճիճեան. նոյնն, հատ. III· էջ 76.

[34]) Ագաթանգեղոսի վկայութեան մասին այսչափ երկար խօսելով, ի հարկէ ի նկատի չունեցանք այն հանգամանքն, որ վերջերս եւրոպական գիտնականներից ոմանք բոլորովին մերժում են Ագաթանգեղոսի պատմութեան արժանահաւատութիւնն, այսինքն պնդում են, որ Ագաթանգեղոսի մեզ յայտնի այժմեան պատմութիւնը չի կարող Տրդատ արքայի քարտուղար Ագաթանգեղոսի

Ագաթանգեղոսի վերոյիշեալ վկայութեանց դէմ եթէ կարելի լինէր մի որևէ կասկած յարուցանել, այդ կարող է միայն այն լինել, թէ արդեօք նորա յիշած «նշանագիրներն»

աշխատութիւնը լինել: Հանգուցեալ պրօֆ. Ա. ֆոն Գուտշմիդ, որ նոյնպէս մերժում է Մ. Խորենացու պատմութեան արժանահաւատութիւնն, Ագաթանգեղոսի մասին ի միջի այլոց ասում է և հետևեալն. Ագաթանգեղոսը յետագայ ժամանակների գործ է, որ պարունակում է հարուստ տեղեկութիւններ հայոց կռապաշտութեան մասին, սակայն չնչին պատմական հիմք ունի և իսկապէս սրբոց պատմութիւն է, որև անկարելի է, որ մի ժամանակակիցի աշխատութիւն լինի... սակայն ներքին պատճառներից պարզապէս երևում է, որ այս գրութիւնն ոչ ուշ քան հինգերորդ դարու միջին մասում պէտք է յառաջացած լինի: «Ագաթանգեղոս» հաւանականաբար մի կեղծ անուն—պսեւդոնիմ—է և նշանակում է Հայաստանի մէջ Քրիստոնէութեան տարածման «աւետաբեր»: Տես. Al. von Gutschmid: „Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren". էջ 1:

Բացի այս աշխատութիւնից Գուտշմիդն ունի նաև մի առանձին քննադատական յօդուած Ագաթանգեղոսի մասին—„Agathangelos" որ տպուած է Zeitschrift d. d. m. Gesellsch. Հատ. 31. էջ 1—60:—որից առնում ենք հետևեալ մի քանի հատուածները. „Հեղինակն—Ագաթանգեղոս—հռոմայեցի չէր, այլ Հայ" տես. նոյնը. էջ 10. „Նա արբունի քարտուղար չէր, այլ հոգևորական"—նոյնը. էջ. „Հեղինակն ժամանակակից չէր—այսինքն անցքերին"—նոյնը. էջ 11. „Շատ հաւանական է եղրակացնել, որ սբ. Գրիգոր Լուսաւորչի յայտնագործութեան – Apokalypse—հեղինակն է և Ագաթանգեղոսի պատմութեան վերջին ձևն տուողը". նոյնն էջ 24: Համեմատելով Կորիւնի պատմութեան հետ՝ Գուտշմիդն այն եզրակացութեան է գալիս, որ Ագաթանգեղոսն այդ հատուածները առել է Կորիւնից. տես. նոյնը. էջ 27: Իւր յօդուածի վերջը Գուտշմիդն գալիս է հետևեալ եզրակացութեան. „Սբ. Գրիգորի կեանքի" առաջին մասն, որ պարունակում է Խոսրով և Տրդատ արքաների և սբ. Գրիգորի գործողութիւնները, մինչ հայոց դարձը, թէև զերծ չէ առասպելական խառնուրդից, այնուամենայնիւ պատմական նշանակութիւն ունի... սակայն միւս մասն, որ պարունակում է հայոց դարձն ի Քրիստոնէութիւն և դարձից յետոյ պատահած դէպքերը Հայաստանում, բառի բուն նշանակութեամբ առած՝ պատմական է և կարելի է իբր անպայման ճիշտ աղբիւր ներկայացնել: „Վկայաբանութիւն սբ. Գրիգորի և Հռիփսիմեանց" պատմութեան համար անպէտք են. և միայն անուղղակի կերպիւ կարող են ծառայել պատմական քննութեան, որովհետև դրքա ներկայացնում են այն ժամանակի տեսութիւններն և ձգտումները, երբ ապրում էր հեղինակը: Նոյնը կարելի է ասել „սբ. Գրիգորի տեսիլք"ի և պատմութեան վերջին ձևը տուողի այլ յաւելուածների մասին":

Տես. Gutschmid, նոյնն. էջ 60,

Մեր աշխատութեան շրջանից դուրս է քննադատութեան ենթարկել պրօֆ. Գուտշմիդի այս տեսութիւնները, միայն ակնարկենք սոյն պատմաբանի այն պակասութիւնն, որ հմուտ չլինելով հայոց լեզուին, քննադատում է ոչ թէ հայերէն բնագիրն, այլ դորա թարգմանութիւնն—իտալերէն:

—տառերն—հայերէն էին թէ օտար: Ահա սոյն հարցի լուծումը կ'դժուարացնէր մեզ, եթէ օգնութեան չ'հասնէին այլ մատենագրաց վկայութիւնները:

Վարդան պատմագիրը տառերի գիւտի մասին խօսելով ասում է հետևեալն. «Եւ զի լեալ էր հայերէն զիր ի հնոյն՝ վկայեցաւ ի ժամանակս Լևոնի արքայի. զի գտաւ դրամ հայերէն գրով ղրոշմեալ զանազան կռապաշտ թագաւորացն հայկազանց, զորոյ զթերութիւն ելից նորա մեր Եզրաս աստուածախառն շնորհօք լցեալ...»—տես. Վարդան, նոյնը. էջ 50.—:

Այս վկայութիւնն արդէն բաւական կլինէր ընդունելու, որ Տրդատի ժամանակ գործ դրուած և Ագաթանգեղոսի յիշած տառերը հայերէն պէտք է լինէին. սակայն մենք ունինք նաև մի օտար պատմագրի վկայութիւնը՝ հայոց տառերի գոյութեան մասին նախ քան զՏրդատ: Փիլոստրատոսը, որ Կա-

---

պէլական խառնուրդից, այնուամենայնիւ պատմական նշանակութիւն ունի... սակայն միւս մասն, որ պարունակում է հայոց դարձն ի Քրիստոնէութիւն և դարձից յետոյ պատահած դէպքերը Հայաստանում, բառի բուն նշանակութեամբ առած՝ պատմական է և կարելի է իբր անպայման ճիշտ աղբիւր ներկայացնել: „Վկայաբանութիւն սբ. Գրիգորի և Հռիփսիմեանց" պատմութեան համար անպէտք են. և միայն անուղղակի կերպիւ կարող են ծառայել պատմական քննութեան, որովհետև դրքա ներկայացնում են այն ժամանակի տեսութիւններն և ձգտումները, երբ ապրում էր հեղինակը: Նոյնը կարելի է ասել „սբ. Գրիգորի տեսիլք"ի և պատմութեան վերջին ձևը տուողի այլ յաւելուածների մասին":

Տես. Gutschmid, նոյնն. էջ 60,

Մեր աշխատութեան շրջանից դուրս է քննադատութեան ենթարկել պրօֆ. Գուտշմիդի այս տեսութիւնները, միայն ակնարկենք սոյն պատմաբանի այն պակասութիւնն, որ հմուտ չլինելով հայոց լեզուին, քննադատում է ոչ թէ հայերէն բնագիրն, այլ դորա թարգմանութիւնն—իտալերէն:

ըակալլայ կայսեր ժամանակակից է, իւր «վարք Ապողոնեայ—Թիանայ» գրուածքի մէջ յիշում է, որ Պամփիւլիայում բըռնուած մի յովազ պարանոցին ունէր մի ոսկեայ մանեակ, որի վերայ հայկական գրերով գրուած էին. «Արշակ Թագաւոր աստուծոյն Նիւսեայ» [35]:

Հայը ինճիճեանը պատմում է, որ ինքը 1788 թ. Կ. Պօլսի անգլիական դեսպան Ա.ինգլէի հին դրամների նշանաւոր հաւաքածուի մէջ տեսել է հարիւրաւոր արծաթեայ դրամներ հայերէն տառերով. այդ դրամներն այսպէս է նկարագրում մեր Հնախօսն. «ի մի կողմն դրոշմեալ ունելով առրուշան, ի մէջ երկուց մոգուց. իսկ ի միւս կողմն դէմք թագաւորի ըստ արևելեան օրինակի սաղաւարտեալ, ունելով շուրջանակի հայկական տառս որոշ մնացեալս, հ. տ. ա. կ. ճ եւ այլն, զոմանս ուղղագիրս, իսկ զոմանս խոտորնագիրս, բայց ոչ գտանելով ի նոսա տառ ինչ ձայնաւոր՝ չեղև ինձ մարթ անուն ինչ ընթեռնուլ» [36]:

Վերոյիշեալ բոլոր վկայութիւններն ի մի տեղ առնելով՝ մենք կրկին գալիս ենք այն եզրակացութեան, որ Մեսրոպեան այբուբենից զեռ եւս շատ առաջ հայերն արդէն ունեցել են սեպհական այբուբեն, որ գործածութեան մէջ է եղել:

Թէ երբ և որտեղից կարող էր ծագել հայոց հին այբուբենն, այդ մասին յաջորդ հատուածի մէջ կ'խօսենք. առ այժմ տեսնենք թէ մինչ երբ տևեց այդ այբուբենի գործածութիւնն և ինչ պատճառներով անյայտացաւ:

Իւրաքանչիւր կրօն այնպէս սերտ կապով միացած է գրի մի որ և է տեսակի հետ, որ շատ անգամ մէկի անկումը պատճառ է լինում միւսի անհետանալուն [37]: Մենք արդէն ակնարկեցինք, որ հայոց հին այբուբենը կռապաշտական հայոց գիրն էր, այստեղ աւելացնում ենք, որ այդ այբուբենը հայոց կռապաշտական կրօնի և քաղաքակրթութեան գիրը լինելով՝ պէտք է ապրէր և մեռնէր այդ կրօնի և քաղաքակրթութեան հետ ի միասին:

---

[35]) Փիլոստրատոսը խօսելով Տաւրոս լերան մասին՝ շարունակում է. „Ինչ որ մեր Տաւրոսի մասին ասում են—և որ երկար ժամանակ ոչ ոք չէր հաւատում—թէ նա Հայաստանի սահմաններից էլ անցնում է, հաստատում են այն յովազները, որ ինչպէս գիտեմ, բռնւում են համեմունքով առատ Պամփիւլիայում. որովհետև այս կենդանիները սիրում են անուշ բուրմունք՝ ուստի դուրս են գալիս Հայաստանից և դիմում դէպի այն կողմերը, որտեղից քամին բերում է այդ անուշ հոտը: Պատմում են նոյնպէս, որ մի անգամ Պանֆիւլիայում բռնուել է մի յովազ, որի ոսկեայ մանեակի վերայ գրուած էր հայերէն տառերով հետևեալը. Արշակ Թագաւոր՝ Նիւսեայ աստուծուն—այսինքն Նիւսիայ աստուծուն նուէր Արշակ Թագաւորից—Այս Արշակն այն ժամանակ հայոց Թագաւորն էր և իւր բռնած յովազը, այդ կենդանու մեծութեան պատճառով, նուիրել էր Դիոնիսոսին: Դիոնիսոսը հնդկական Նիւսայի պատճառով՝ հնդկացիներից և արևելեան ժողովրդներից կոչւում էր Նիւսոս: Այս կենդանին մի առ ժամանակ իրեն բոլորովին ընտանի եղաւ և թոյլ էր տալիս իրեն ձեռքով շոշափել և փաղաքշել, սակայն երբ գարունն եկաւ, երբ յովազները նոյնպէս յաղթահարւում են սիրուց, արուի պահանջ զգալով՝ փախաւ դէպի լեռները և իւր հետ տարաւ նաև իւր զարդը. ապա գրաւուելով համեմունքի բուրմունքից՝ բռնուեցաւ ստորին Տաւրոսի վերայ: Տես. Philostrati de vita Apollonis Tianei. գերմաներէն թարգմանութիւն Frd. Iakobs'. Stuttgart. 1829. Հատ. II. էջ 229:

[36]) Տես. Ղ. Ինճիճեան. նոյնը. Հատ. III. էջ 75. էջ 1:

[37]) Ահա այս յարաբերութիւնը մի փոքր չափազանցելով՝ մի հեղինակ ասում է հետևեալն. „այն ազգերն, որ գիր չունեն, չունեն նաև կրօն, վասն զի կրօնը տարածւում է գրի միջնորդութեամբ". Տես. „Magazin für die neue Historie und Geographie" von Bäsching. մասն XVI. էջ 309: Թէ գիրն ինչ կապ ունի կրօնի և քաղաքակրթութեան հետ՝ պարզ և հետևեալ կերպիւ է բացատրում նոյնանը. „Կրօնական պաշտաման հաստատութիւնից և քահանայական դասի հիմնուելուց յետոյ գրի գիւտը մարդկային քաղաքակրթութեան պատմութեան մէջ ամենանշանաւոր ի-

Չորրորդ դարու սկզբում սբ. Գրիգոր Լուսաւորչի և Տըրդատ արքայի ձեռքով տապալուելով Հայոց կռապաշտական և ազգային կրօնն, անշուշտ պէտք է ասպարէզից իջներ նաև Հայոց ազգային կռապաշտական կրօնի գիրն, ուստի և իբրև փաստ ընդունելով Ագաթանգեղոսի վկայութիւնն, այն եզրակացութեան ենք գալիս, որ այդ գիրը գործածական էր մինչև սբ. Լուսաւորչայ ժամանակներն—այսինքն մինչև Քրիստոնէութեան տարածուելը Հայաստանում: Քրիստոնէութիւնն—և նորա եռանդուն ¹ապաշտօնեաներն—որ ամեն ջանք թափում էր կռապաշտութիւնն արմատախիլ անելու համար, բնական էր, որ Հայերէն տառերի գործադրութիւնն արգելելով՝ վոխարէնը յունաց և ասորոց գիրը մըտցնէր, որոց հետ և կապակցուած էին սբ. գրքի և քրիստոնէական վարդապետութիւնը քարոզող գրուածների ընդհերցումն. այն ինչ Հայերէն տառերը Հայ ժողովրդեան միշտ պէտք է յիշեցնէին կռապաշտական գրուածներն և պաշտամունքը: Մեր եզրակացութիւնն առաւել ևս հաւանական կ'երևի, եթէ յիշենք նաև այն հանգամանքն, որ Հայ ժողովուրդը Քրիստոնէութեան հետ միատեղ ընդունեց նաև բազմաթիւ օտար՝ յոյն և ասորի եկեղեցական ստորին և բարձրաստիճանի պաշտօնեաները, որոնք իբրեանց գիրը տարածելով՝ բնական է, որ Հայերին պէտք է քարոզէին՝ մոռանալ իբրեանց սեպհական ազգային տառերի գործադրութիւնն իբ-

---

րողութիւնն է: Այն ժողովուրդը, որ չունի գրի մի որևէ տեսակը, բարբարոսների մի ժողովածու է միայն. առանց գրի անկարելի է մտածել, որ երկար ժամանակ կարող է գոյութիւն ունենալ կրօնական պաշտամունքը և մի կարգին պետութիւն: Այդ պատճառով և, որչափ պատմութեանը կարողանում են հետևել, կրօնը, գիրը և քաղաքակրթութիւնը ներքին, սերտ կապով են միացած: Տես. Neumann: Asiatische Studien. *հատ.* I. *էջ* 121:

ըև կռապաշտական սովորութիւն: Եւ այս մի արտաքոյ կարգի երևոյթ չէ և ունի իւր նմաններն. այսպէս օրինակի համար, Իսլանացիք նուաճելով Մեքսիկան՝ արգելում են տեղացիներին իւրեանց սովորական գրի գործադրութիւնը՝ քրիստոնէութեան շուտափոյթ տարածման համար վնասակար համարելով այդ:

Հարիւր տարի անցնելուց յետոյ, երբ Կարոլոս V-ի ժամանակ—1553 թ.—Մեքսիկան հետազօտել սկսեցին, երկուսեր անձինք հազիւ գտնուեցան այնտեղ, որոնք կարող լինէին իւրեանց առաջուայ գիրը կարդալ [38]:

Ուրեմն մի զարմանալի երևոյթ չէ, որ Հայաստանում ևս նոյնպէս 100 տարուայ միջոցում այդ այբուբենի հետքը բոլորովին անհետանում է և Միջագետքում օտարի մօտ գտնուում:

Նոյն իսկ Խորենացին պատմում է, որ յունաց ազդեցութիւնը Հայաստանից վերացնելու համար, պարսից քաղաքականութիւնն—Մեհրուժանի ձեռքով—մի և նոյն միջոցին է դիմում, այսինքն արգելում է յունաց գրի և գրականութեան տարածումը Պարսկահայաստանում և եղածն խստաձեռնչացնում [39]: *Արդէն մեր յառաջաբանութեան մէջ ակնարկեցինք, որ համարեա իւրաքանչիւր կրօն իւր հետ տարածում է նաև մի նոր գիր. եբրայական գիրը տարածում է Պենթաթէոլխի—այսպէս է կոչւում Մովսէսի Հնգամատեանը—հետ. յունականը՝ Հոմերական երգերի, գիւանգարին՝ բրահ-*

---

[38]) *Տես.* „Das Buch der Erfindungen, Gewerbe nnd Industrie“ *հատ* I. *էջ* 441:

[39]) „. . . *Քանզի նախ ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ոմեք յիւրեանց մասին, այլ միայն ասորի*“: *Տես. Խորենացի. գիրք* III. *գլխ. ծգ. էջ* 373:

մայականութեան, «պալի»ն՝ բուդդայականութեան, ասորական «Էստրանգելօ»ն՝—կնշանակէ գիր Համբաւոյ—աւետարանի, արաբական «նեսխի»ն՝ դուբանի, սլաւական-կիրիլեան գիրը՝ սբ. գրքի սլաւական թարգմանութեան հետ և Ս՝եսրոպեան այբուբենը նոյնպէս՝ սբ. գրքի հայերէն թարգմանութեան հետ ի միասին։

Որ Հայաստանում Քրիստոնէութեան հետ՝ փոխանակ մի տեսակ գրի, երկու տեսակ գրեր են տարածուում, յառաջ է գալիս այն Հանգամանքից, որ այդ գործում մասնակցեցին երկու ազգեր՝ յոյներն և ասորիք—չ՝պէտք է մոռանալ նաև այն Հանգամանքը, որ պարսից քաղաքականութիւնը հեռացնելով յունարէն գիրն և լեզուն մեր Եկեղեցուց, թոյլ տուեց փոխարէնն ասորոց լեզուն և գիրն։—Ուստի և այդ երկու ազգութեանց պատկանող եկեղեցական պաշտօնեաները պէտք է մխիթարեան հետ մրցէին՝ իւրաքանչիւրն յօգուտ իւր—ինչպէս որ այսօր Հայաստանում տարածուած Գերմանացի և Ամերիկացի բողոքական քարոզիչներն աշխատում են՝ բողոքականութեան հետ տարածել նաև իւրեաց մայրենի լեզուն ժողովրդի մէջ՝ իւրեանց բացած դպրոցների միջնորդութեամբ։—

Իսկ ազգաւ Հայ եկեղեցական պաշտօնեաներն ևս իրրև ջերմեռանդ քրիստոնեաներ պէտք է ամենայն ճիգն թափէին՝ տապալելու այն ամենն, ինչ որ կապուած էր Հայ ժողովրդի հին և կռապաշտական կրօնի հետ։ Չէ որ յաջողուեցաւ նոցա՝ հին ազգային-ժողովրդական տօների տեղ—նորքրիստոնէական տօներ նշանակել և կատարել։ Եթէ քրիստոնեայ եկեղեցական պաշտօնեաներն ուղղակի ժողովրդի, ամբոխի հետ շփուելով՝ այդ յաջողեցրին և դարերով ժողովրդականացրած սովորութիւնները մասամբ արմատախիլ արեցին և մասամբ փոփոխեցին, որչափ առաւել դիւրութեամբ կարող էին Հայոց ազգային հին գիրը մի կողմը ձգելով՝ հետզհետէ անյայտութեան մէջ թաղել, քանի որ այն ժամանակ գիրը, տառն, ոչ թէ ժողովրդի սեպհականութիւն, այլ քահանայական կամ քրմական դասի, կարելի է ասել, մենաշնորհն էր. ուրեմն և մի առանձին արգելք չկար այդ փոփոխութեան համար։ Եթէ նոյն իսկ քրիստոնեայ եկեղեցական պաշտօնեաները Հայոց գրի դէմ Հալածանք չՀանէին, այլ միայն իւրեանք սկսէին յունարէն և ասորերէն տառերով գրել և կռապաշտական գրքերն ոչնչացնել, այդ ևս բաւական կ՝լինէր Հայոց տառերի մոռացման Համար, վասն զի երբ քրմերըն և քրմապետներն—որոնց ձեռքն էր միայն գիրն և գրականութիւնը—մէջտեղից վերացան, այլ ևս ո՛վ պէտք է Հոգար ազգային գրի մասին—ո՛չ ոք։

Իւրաքանչիւր կրօն ունի նաև իւր առանձին քաղաքակրթութիւնն. այլ է կռապաշտական կրօնի քաղաքակրթութիւնն և այլ քրիստոնէականը։ Կռապաշտական Հայերն ունէին իւրեանց յատուկ քաղաքակրթութեան աստիճանը, որ ընկաւ, երբ քրիստոնէութիւնը մուտք գործեց Հայաստան. այդ քաղաքակրթութեան անկման Հետ՝ ընկաւ նաև Հայոց ազգային առանձնայատկութեանց մի մասն և դորա Հետ նաև ազգային գիրը։

Իսկ այն Հանգամանքն, որ մի ազգ իւր սեպհական քաղաքակրթութիւնը կորցնելով՝ մոռանում է նաև իւր գիրը, յաճախ տեղի է ունեցել պատմութեան մէջ։

Հարաւային Ամերիկայի խոնաւ և ջերմ անտառներում դեռ ևս այսօր ապրում է «Պանօա» կոչուած ցեղը՝ մերկանգամ, բանանով և ձկնորսութեամբ կերակրուող, որ գաղափար անգամ չունի գրի մասին և ոչ ևս պահանջ այդ ի գործ դնելու. սակայն մի և նոյն ցեղը մի քանի դար առաջ—երբ իսպանացիք Ամերիկայ գնացին—ունէր իւր գրքերը՝ գեղեցիկ գունաւոր նկարներով, որոնցից մանուկներն ուսանում էին իւրեանց ցեղի անցեալը [40]։

[40]) տե՛ս. Faulmann: Geschichte der Schrift· էջ 15. Նոյնպէս Al. Humboldt: „Vues de Cordillères“ հատ. I· էջ 211։

Ինչո՞, ենք ի զուր Ամերիկայ գնում, քանի որ կենդանի օրինակն ամեն օր մեր աչքի առաջն է. այսօր մեր երկրում բնակուող, մեր լեռներում թափառող, մեծաւ մասամբ մեր ժողովրդի քրտնաջան աշխատութեան արդիւնքը յափշտակող և աւազակաբարոյ քուրդը միթէ մտածում է երբէք գրի կամ տառի մասին—ամենևին։ Սակայն այսօրուայ այդ աւազակաբարոյ քուրդը համարւում է սերունդ հին քաղդիացւոց—այն քաղդիացւոց, որոնց ձեռքն էր մի անգամ ամբողջ գիտութիւնն և որոնց իմաստութիւնն աշխարհ էր զարմացնում և որոնց հնարած ժամանակի բաժանմունքը դեռ և շարունակում ենք գործ դնել [41]։

Արդէն մեր յառաջաբանութեան մէջ և ակնարկեցինք, որ Եգիպտոսում քանի որ յոյներն և հռոմայեցիք չէին շրջափել եգիպտականը կրօնը, տեղական գրի գործադրութիւնն և շարունակւում էր. հէնց որ քրիստոնէական կրօնը մուտ գործելով Եգիպտոս՝ կործանեց եգիպտական աստուածների գահը, մէջ տեղից վերացաւ նաև եգիպտական գիրն և ասպարէզը թողեց յունարէն այբուբենին։

Հայ ազգի բաղդն էր, որ յունաց և ասորոց գրերի գործածութեան հետ շուտով միացաւ և մի երրորդը—պարսից գիրն—և այդպիսով ո՛չ մէկը միրող չ'հանդիսացաւ։ Երեք այբուբեններն և ճանաչւում և ընդունւում էին իբր օտար իմն ինչ և ոչ ազգային. այդ երբէք տեղի չէր ունենալ, եթէ այդ երեքից միայն մէկը գործածական լինէր և տարածուէր ամբողջ Հայաստանում։ Ասում ենք, հայ ազգի բաղդն էր, վասն զի այդ դէպքում—այսինքն երբ յունաց կամ ասորոց այբուբենն ընդունուէր իբրև հայոց գիր—դժուար թէ տեղի ունենար սբ. Մեսրոպի յառաջ բերած յեղափոխութիւնն, որի նշանակութեան մասին արդէն խօսեցինք։

Մարդս միշտ յարակցում է արդէն եղածի հետ. իւրաքանչիւր գաղափարի—իդէայի—հետ, որի զարգացումը կամ իրագործումը մարդկային ձգտման մի նոր զարկ է տալիս, կարելի է ջանասէր հետազօտութեամբ ապացուցել՝ թէ ինչպէս այդ գաղափարը վաղուց արդէն եղել է մարդոց մտածմանց շրջանում և հետզհետէ զարգացել։

Ամենայն հոգեկան յառաջադիմութիւն կարող է միայն ներքին զօրութիւնից յառաջանալ և ունի ժամանակակիցները համար միշտ գաղտնի, և որովհետև ինքնուրոյն է, անբացատրելի հիմն։ Երբ այս ներքին ոյժն յանկարծակի իւրեանից մի այնպիսի մեծ զօրութիւն է ստեղծում, որ սովորական ընթացքով անսպասելի էր, ամեն բացատրութիւնները դադարում են և գործը կարծես մի գերբնական երևոյթ է ստանում։ Սբ. Մեսրոպի և Սահակի յառաջ բերած յեղափոխութեան հետևանքներն այնպիսի մի ցնցում յառաջ բերին Հայաստանում և այնպիսի ներգործութիւն ունեցան ազգի վերայ, որ դուցէ անսպասելի էր ժամանակակիցների համար, ուստի և նոքա այդ յեղափոխութեան սկզբնապատճառը՝ Հայոց գրի վերականգնումն և կատարելագործումը՝ ներկայացնում են իբրև մի գերբնական իրողութիւն և ո՛չ Մեսրոպի հանճարի արդիւնք։ Միւս կողմից նոցա յայտնի է, որ Համարեա իւրաքանչիւր ազգ իւր գրի գիւտը վերագրում է մի այնպիսի ժամանակի, երբ դեռ և մարդկութիւնն աստուածների հետ յարաբերութեան մէջ է գտանւում—վասն զի այդպիսի մի ստեղծագործութիւն մարդկային ուժից վեր է համարւում—։ Այսպիսով մեր «գիւտ»ի ժամանակակից պատմագիրները կամենում են Աստուածային շնորհն և զօրութիւնը միացնել սբ. Մեսրոպի հանճարի հետ. սակայն ինչպէս—ժամանակն և քրիստոնէական վարդապետութիւնը չեն

---

41) *Հնախոյզ Լայարդի և այլոց հետազօտութիւններն և գիւտերն մեծ լոյս սփռեցին այդ ազգի ունեցած քաղաքակրթութեան բարձր աստիճանի վերայ։ Որ այժմեան քրդերն քաղդէացւոց սերունդն են, միայն ենթադրութիւն է և ոչ ապացուցուած իրողութիւն։*

թոյլ տալիս նոցա Մեսրոպին ուղղակի Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ դնել, ուստի և նոքա պատմում են սրամիտ և հանճարեղ կերպիւ թէ. «տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ Հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի»: Տես. Խորենացի. գիրք III. գլխ. ժգ. էջ 370:

Մեսրոպեան այբուբենը կազմուեցաւ Հայոց հին և անիրաւացի կերպիւ դանիէլեան կոչուած այբուբենից. ուստի մեր այբուբենի զարգացման ընթացքը գլխաւորապէս երկու մասի է բաժանւում. առաջինը ներկայացուցիչ էր Հայոց կռապաշտական քաղաքակրթութեան, իսկ երկրորդը քրիստոնէական քաղաքակրթութեան [42]):

[42]) Միմիայն իւրեանց սեպհական զարգացմամբ՝ ժամանակի ընթացքում, կարող էին լեզուների համար կազմակերպուել կատարեալ այբուբեններ և ոչ թէ մի բազդաւոր գիւտով, ինչպէս որ մի լեզուի կատարեալ բնականութիւնը կազմակերպւում է ինքնուրոյն զարգացմամբ՝ ժամանակի ընթացքում: Տես. Lepsius: „Paläographie als Mittel für die Sprachforschung“ էջ 15:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԹԷ ԻՆՉ ՏԱՌԵՐԻՑ ԻՐ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Հայոց հին այբուբենի կատարելագործութիւնը. մի քանի ձայնաւորների պակասութիւնը. մեր հին պատմագրաց վկայութիւնն այդ մասին. ևօթը ձայնաւոր տառերի ներմուծումն արտագրողներից. քանի տառից էր բաղկացած հայոց հին այբուբենը. մեր հին պատմագրաց վկայութիւնը. „Ասկեփորիկ“. Որոնք հին այդ այբուբենի տառերը. ինձիձեանի, պրօֆ. Իմհոֆի, պրօֆ. Պատկանեանի, Հիւբշմանի կարծիքները. մեր տեսութիւնը:



Առաջ բերած փաստերից այն եզրակացութեան եկանք, որ մեր նախնիքն արդէն իւրեանց կռապաշտութեան ժամանակ ունեցել են առանձին այբուբեն. սակայն քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան, նորա եռանդուռ պաշտօնեաները կռապաշտական զանազան սովորութեանց հետ ի միասին ոչնչացնում են նաև եղած քրմական գրականութիւնն և արգելում հին այբուբենի գործածութիւնն. իսկ դորա տեղը դնում են յունական և ասո-

բական այբուբեններն, որպէս զի ժողովուրդը միշտ առիթ չունենայ անցեալի վերայ մտածելու և նոր ուսման հետ հաստատ կերպիւ միանալու։ Ս.Հա՛ այս հին այբուբենն է, որ համարեա մէկ դար անցնելուց յետոյ յերևան է գալիս մի ասորի եպիսկոպոսի մօտ, որի անունը Դանիէլ է լինում, ուստի և մեր մատենագիրներն այդ այբուբենը կոչում են *դանիէլեան*։

Սոյն այբուբենն, որ մէկ դար առաջ վտանգաւոր համարուելով քրիստոնէութեան համար՝ հալածուել էր Հայաստանից, այժմ կրկին ուրախութեամբ ընդունուում է կաթոլիկ հայոց երրորդ կամ չորրորդ քրիստոնեայ սերնդից [1]), որ իւր ազգայնութիւնը կորցնելու վտանգը տեսնելով՝ շտապում է վերականգնել հինը, սակայն բոլորովին նոր լուսով։

Հին այբուբենը մի առ ժամանակ գործ դնելով՝ հայ ուսանողները տեսնում են նորա մէջ պակասութիւններ. և որպէս զի այդ պակասութիւնները առիթ չտան սխալ գործ անյաջողութեան, ուսուցանողների մէջ յղանում է դորա կատարելագործելու միտքն և ահա՛ այդ նշանաւոր աշխատանքն իւր վերայ է առնում սբ. Մեսրոպը, որ քաջ ծանօթ էր հայոց և մեր դրացի ազգերի—յունաց, ասորոց և պարսից—լեզուների հետ։ Հայոց հին այբուբենն, որ հաւանականորէն երկար ժամանակ գործածութեան մէջ էր և մի դար ևս անյայտ մնացել՝ այժմ մասամբ ևս չէր համապատասխանում հայոց լեզուին, որ շարունակ զարգացել և առաւել կանոնաւորուել էր։

Հին այբուբենի գլխաւոր պակասութիւններից մէկն ևս այն էր, որ չէր պարունակում իւր մէջ լեզուի բոլոր ձայնաւոր հնչիւնների համար առանձին տառեր. այս իրողութիւնը պարզապէս վկայում են մեր պատմաբաններից շատերն, որ իբրև փաստ յառաջ ենք բերում այստեղ։

1) Խ ո ր ե ն ա ց ի ն խօսելով «Դանիէլեան» նշանագրերի մասին՝ ասում է «... տեղեկացեալ գիտացին՝ *ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհնգեանայ բառից հայկականաց հազներգաբար...*»։ [2])

2) Կ ո ր ի ւ ն Ս ք ա ն չ ե լ ի. «... Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ *չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղոքայս եւ զկապս հայերէն լեզուին...*»։

3) Ս. ս ո ղ ի կ պ ա տ մ ա բ ա ն. «Յաւուրս Սահակայ եղև դպրութիւն հայոց լեզուիս, *քանզի եւ ինն ի Դանիէլէ Փիլիսոփայէ Ասորւոյ կարգեցաւ, իսկ զեօթն զորոյն պակասութիւն Մեսրոպ երանելի տարօնեցի խնդրուածովք Աստուծոյ առնու*»։ [3]) պարզէ, որ ակնարկում է եօթը ձայնաւորներն։

4) Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. «... *ասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝ Դանիէլ անուն, թէ ունիմ ես նշանագիր հայերէն լեզուի... բայց հայեցեալ տեսին, զի ոչ էր բաւական զամենայն սիղոքայս ողջ ածել և զշաղկապս և զբառս*»[4])։

5) *Յայտարերի* մէջ. «...Իսկ Թադաւորն Հայոց ծանոյց նոցա վասն քահանայի(?) միոյ ասորոյ Դանիէլ անուն թէ խոստանայր ունել նշանագիր Հայոց. զոր առաքեալ՝ բերին. և վարժեալ նովաւ մանկունս՝ տեսանէին զի *ոչ բերէր*

---

[1]) *Առհասարակ ընդունուում է այժմ պատմութեան գիտութեան մէջ, որ մի դարու ընթացքում միջին թուով միմեանց յաջորդում են երեք մարդկային սերունդներ։ Այս իրողութիւնը բազմաթիւ փաստերով ապացուցանում էր իւր դասախօսութեանց մէջ Ենայի Համալսարանի պատմութեան ուսուցչապետ Լօրենցը, որ և համառօտ կերպով ամփոփել է իւր հետևեալ գիտական աշխատութեան մէջ.*

Prof. Ot. Lorenz: Die Geschichtswissenschaft in Hauptrichtungen und Aufgaben.—Berlin. *գլուխ* VI. *էջ* 280։

[2]) *Տես.* Խորենացի. *նոյնը. գիրք* III. *գլխ. ծբ. էջ* 369։

[3]) *Տես.* Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան „Պատմութիւն տիեզերական“ *էջ* 139։

[4]) *Տես.* Эминъ *և այլն. նոյնն. էջ* 367։

ուղղակի զնեզս Հայոց բարբառոյն. քանզի յոյն գիրն միայն յարմարեալ էր»(?).[5])

6) *Դանճարանի միջ.*

«Աստ հոգին շարժեալ
Առ նոսա ազգեալ
Հայ գիր աւրինեալ.
վառամշապուհ աւգնեալ,
վահրիճ գործակցեալ,
Դանիէլ շնորհեալ,
Քսան եւ ինն գտեալ,
Նախնեացն արարեալ.
Ամն երկուս հներքեալ
Բազումս աշխատեալ
Եւ ոչինչ օգտեալ։
«Ձեռն յԱստուծոյ ձգեալ.
Ի Բալու տրքնեալ
Մեսրոպ ապաւինեալ.
Աստուած գթացեալ.
Հրեշտակ տեառն իջեալ
Մատամբ փորագրեալ
Ի վիմին դրոշմեալ։
Այ ձեռն երևեալ
Իբր ի ձեռն գրրեալ
Նէթ գիր յորինեալ.
Այն հոգի ջահեալ
Զայն գիրսն յարուցեալ.
Սիղոբայք հերքեալ։[6])
Նոյնը մի այլ տեղ.
«...Մինչ ի Սահակ մեծն ի պարթևէն.
Մեծն Մեսրոպ ցանկալին բազմաց
Աւրժանի եղև սուրբ Հոգւոյն շնորհաց.
Զոր ի նմանէ սուրբ Սահակ խընդրեաց
Գիր յաւրինել մեզ Հայոց մեծաց։
Յոլոր տեղիս վասն այն որ գնաց
Ոչ գտանէ հնար յայնմ իրաց։
Քսան եւ ինն գիր էր գըտած
«Այլ անաւգուտ էր ընթերցողաց,
Զի եւ ոչ կապէր հեզ բառից անուանց,
Այլ անհոգն ժարմնոյ նրմանած։
Մինչև բազում տարիք աղօթեաց
Հառաչանաւք սրբոյն արտասուաց.
Աջն Աստուծոյ անեղին փառաց
Ըզեւթն գիրն ի քարին գըրեաց,
Որպէս երբեմն հին աւրինաց
Քարեայ տախտակըն Մովսէսի գրեաց.

[5]) Տես. Զարբհանալեան. նոյնն I. էջ 46
[6]) Տես. Զարբհանալեան, նոյնն էջ 47.

Աւրհնեալ Փրկիչն որ զՀայք Եւ ո եւ ւ ի կարգին
մեծարեաց Զոր և առեալ մեծի Մեսրաւպին
զամենայն ազգս գերակաց։ Խառնեալ ի յայլ գրերն առաջին.
Երեւեցաւ Մեսրաւպ ցանկալին
Համանըման մեծին Մովսիսին Սուրբ Հոգի ջահեցաւ նոցին
Տըպաւորեալ ի սիրտս նորին վեցեակ վեցից համարով գրին։ Այն որ գրեցաւ աջով երկնային.
Ա, ե և է կարգեալ ընդ ըին

Թէև Խորենացու պատմութեան ձեռագիրներից մէկը թէ երկուսը պարունակում են իւրեանց մէջ եօթը ծայնաւոր տառեր, սակայն հաւանական է, որ այդ տառերը ներմուծուած լինին յետագայ ժամանակներում արտագրողների կողմից՝ որոնք աչքի առաջ են ունեցել Ասողիկ պատմաբանի վկայութիւնը[8]), վասն զի այդ եօթը տառերի տեղաւորելը բոլորովին չէ համապատասխանում Խորենացու «գրերի գիւտի» պատմութեան ընթացքին։ [9])

[7]) Տես. Զարբհանալեան. նոյն. էջ 47.

[8]) Մեր այս ենթադրութիւնը միայն այն ժամանակ անհիմն կ'լինի, երբ գտանուի Խորենացու պատմութեան մի ձեռագիր, որ գրուած լինէր 10-րդ դարուց առաջ և պարունակէր իւր մէջ 7 ձայնաւոր տառերը։

[9]) Մեր ձեռքի տակ ունեցած Խորենացու պատմութեան օրինակներից մի քանիսը պարունակում են իւրեանց մէջ այդ 7 տառերն իսկ մի քանիսն ոչ. այսպէս օրինակի համար Ենայի Համազասպեան մատենադարանի Խորենացու պատ. ձեռագիրը չէ պարունակում այդ տառերը—տես. ձեռագրի 164-րդ թերթ, երկրորդ էջ, բ. սիւնեակ—գժբաղդաբար մոռացել ենք նշանակել՝ թէ արդեօք Լայպցիգի քաղաքային գրադարանի ձեռագիրը պարունակում է այդ տառերը թէ ոչ—։ Խորենացու Տփխիսի հրատարակութիւնն,—էջ 370—պրօֆ. Էմինի ռուսերէն թարգմանութիւնն—էջ 210—Le Vaillant de Florivalի ֆրանսերէն թարգ. և բնագիրն—հատ. II. էջ 136—նոյնպէս պարունակում են 7

Սրդ ընդունելով որ Հայոց Հին այբուբենը զուրկ էր մի քանի ձայնաւորներից, ինքն ըստ ինքեան յառաջ է գալիս այն հարցը. Թէ արդեօք այդ այբուբենն որչափ տառ էր պարունակում իւր մէջ և Թէ բաղաձայններ ևս պակասում էին Թէ ոչ։

Եթէ ուշադրութեամբ կարդանք մեր պատմագիրների արդէն քանիցս յիշած վկայութիւնները, կը տեսնենք, որ նոքա բացի այն, որ ասում են Թէ՝ Հին գիրը չէին կարող գործածել, որովհետև մեր լեզուի յատուկ կապերն—այսինքն ձայնաւորները չունէր, շարունակում են, որ դոյանով չէր կարելի արտայայտել ժամանակակից Հայոց լեզուի մէջ եղած բոլոր հնչիւնները, այստեղից պարզ երևում է, որ խօսքը նաև բաղաձայնների մասին է։

Իսկ Հայոց Հին այբուբենի պարունակած *տառերի քանակութեան* մասին մեր պատմական վկայութիւնները տարբերւում են միմեանցից. ինչպէս տեսանք Ասողիկ պատմաբանն և «դանձարանի» տողերը վկայում են, որ Հայոց Հին այբուբենը բաղկացած էր *քսան եւ ինն*—տառերից։ Վարդան պատմիչն ասում է, որ այդ այբուբենը *քսան եւ երկու* տառ էր պարունակում՝ իսկ «կայսերաց» կոչուած յունարէնից թարգմանած մի Հին ձեռագրի մէջ ասուած է հետևեալն. «ի սոցա—Սրկագեայ և Ոնորիոսի—տասներորդ ամի եղև սկիզբն Հայերէն *քսան եւ հինգ*—գրոց... ի սորա յաւուրսն էր սուրբն Սահակ Հայրապետն, յորոյ աւուրս գտաւ *քսան եւ ինն*—գիրն Հայերէն լեզուի ի Դանիելէ Փիլիսոփայէ ասորւոյ, զոր ետ բերել Վռամշապուհ թագաւորն. իսկ *զհինն* գրոցն պակասութիւն Ս՝եսրոպ երանելի տարաւնեցի ի Հայեկայ գեղջէ յազատ տանէ, ամսօրեայ պահովք և աղօթիւք... այս լինէր

տառերն. իսկ V. Langlois*ի ֆրանսերէն և վիստոնեան եղբարց լատիներէն Թարգ.—չեն պարունակում Ա, և, է, ը, ի, ո, ւ, տառերը։*

յասորւոյ աշխարհին՝ յորժամ վասն նորին խնդրոյ ճանապարհորդեաց նա»։ [10])

Դաւիթ անյաղթին վերագրած մի ոտանաւորի մէջ, որ այլաբանօրէն խօսում է գրի մասին, գտնում ենք հետևեալ տողերը.

«Ձեռք ամենակալին ստեղծին զիս և բարձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս։

«Զափ հասակի իմոյ երկիցս երկոտասան—24—այժմ իմ երիցս երկոտասան—36—[11])

Մի այլ հետաքրքիր տեղեկութիւն ևս գտնում ենք «Ոսկեփորիկ» կոչուած ձեռագրի մէջ, որ առաւել յայտնի է «Վարդանագիրք» անունով։ Այս ձեռագրի մէջ մենք գտնում ենք Հայոց այբուբենի մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ, քան նոյն հեղինակի տիեզերական պատմութեան մէջ։ Այս աշխատութիւնը գրել է մեծն Վարդանը՝ Հեթում I արքայի խնդրանօք—որ Լևոն II-ի փեսան էր։—

Յառաջ ենք բերում այս ուշադրութեան արժանի հատուածն ամբողջովին. [12])

«Պարտ է գիտել զի հնգետասան ազգ են՝ որ գպրութիւն գիտեն. վասն զի ի Նոյէ հինգ ազգ բաժանեցան՝ յերեք որդւոցն՝ Սեմայ, Քամայ և Յաբեթի։

---

[10]) Տես. Զարբհանալեան, նոյն, հատ. I. էջ 43, այս վկայութիւնն ինքն իրեն հակասելով՝ մեզ համար ևս անհասկանալի է. եթէ «հինգ» բառն սխալմամբ փոխանակ «ինն»ի չէ գրուած։

[11]) Տես. Эминъ, նոյն. էջ 369։

[12]) Ա՛յս հատուածը տպուած է Nouveau Journal Asiatique հրատարակութեան մէջ 1867 թ. tome IX. էջ 199։ Իսկ Վ. Լանգլուան յառաջ է բերել իւր «Հաւաքածուի» մէջ Թարգմանօրէն. տես. V. Langlois: Collection des Historiens Anciens et Modernes de L'Arménie. հատ. II. էջ 7. և վերջապէս նոյնը հրատարակուեցաւ «Բազմավէպ» հանդիսարանի 1887 թ. գ. պրակի մէջ—հատոր ևե. էջ 197։

Որդիք Յաբեթի՝ որ գպրութիւն գիտեն՝ այս են. Հայք, Երերացիք, Լատինացիք, Սպանիացիք, Յոյնք, Մարք, վեց ազգք։

Որդիք Սեմայ՝ որ գիտեն գպրութիւն. Հրեայք, Պարսք, Քաղդէացիք, Հնդիկք, Ասորեստանեայք, հինգ ազգք։

Որդիք Քամայ՝ որ գիտեն գպրութիւն. Փիւնիկեցիք, Եգիպտացիք, Պամփիւլացիք, Փռիւգացիք. ազգք չորք։—Ընդամէնն Հնգետասան ազգ. Բայց յոլովեաց և առ այլ ազգս, որպէս Աղուանք և Վիրք և Խաչատայիք և Բուլղարք, և այլք ևս։ Բայց յԱստուծոյ և ի շնորհայ նորա՝ երկու ազգ առին գիր. Հրեայք և Հայք։ *Եւ մի՛ են գլուխն զոր պարգեւեաց Աստուած*—պատասխանի. *այս են վեց գիր ձայնաւոր եւ երեքտասան անձայն*։ Եւ ձայնաւորքն են այս. ա. ե. ո. ի. ը. է. [13]) և անձայնքն են այս. բ. գ. ժ. ծ. ձ. չ. ջ. վ. ց. շ. ճ. յ. փ. *ընդ ամէնն ինն եւ տասն*։ Եւ այս են ճըշմարտապէս ստուգիւ գտեալ. զի Աստրիք ընդ մեր թագաւորօքն էին, և նոցայն է քսան և երկու գիր է, *ի նոցանէ չանացան առնել մեր գիր։ Եւ լեալ էր հայերէն նշանագիր ի հին ժամանակ՝ սակաւ. եւ զի չկարէին բանել նոքօք թողին եւ մոռացաւ*։ Եւ երբ դարձեալ ի խնդիր եղեն, գտաւ առ Դանիէլ անուն աստրի եպիսկոպոս մի. և Սահակ և Մեսրոպ առաքեցին զՔրէլ անուն երէց աստրի, և եբեր։ Եւ զի չբերէր լիով զհարստութիւն լեզուիս, գնաց դարձեալ Մեսրոպ առ նոյն եպիսկոպոս Դանիէլ. և սակաւ ինչ աշխատ եղեն, և չկարացին ինչ աւելի շահիլ զի զառաջինն ի նոցանէ էր առեալ *եօթն եւ տասն գիր, զի զհինգ գիրն թողեալ էր և չէր թարգմանեալ. երբ չանալին թէ թարգմանեմք ըստ մեր լեզուիս, չգայր ի բան այն հինգ գիրն*։ Ապա յաղօթս ապաւինեալ՝ տեսանէր մարգարէական աչօք՝ թաթի ձեռին աջոյ, որ գրէր ի վերայ վիմի և ամենայն հան-

[13]) Ա*յս հատուածի ,,Բազմավէպ"ի հրատարակութեան մէջ սխալմամբ ստել է նաև է տառը*։

*գամանքն և որպիսութիւնն տպաւորեցաւ ի սիրտն և վաղվաղակի ստեղծանէր *ինն եւ տասն գիր*։ Եւ այն՝ որ եօթն ասեն, *վասն նոցա պատուականութեանն ասեն՝ որ ձայնաւորք են, և որպէս Հոգի են այլոցն։

Եւ ընդէ՞ր ասեն եօթն, զի վեց են ձայնաւորք։—Պատասխանի. *զի ,,է" գիրն կայր յԱստուծոյն. և նա գայն էառ ի Դանիէլէ՝ վարդապետն Մեսրոպ, վասն այնորիկ գայն այլ նմա ասեն. բայց ի մարդոյ օգտեցաւ զէ գիրն, և զիննև տասն յԱստուծոյ*։

Եւ վասն եօթն գրոյն առաւել պիտանութեան, զեօթն գիրն մէն ասեն և գովեն, և զերկոտասանն ոչ յիշեն. այլ հաստատ տես։

Եւ ասեն թէ *այլոյդ կայ՝ էր չառնուին*։—Ասեմք թէ Աստուծոյն *աւ է, որ է ո. և այրն՝ այս է ա չկայ* [14])։ Եւ այլքդ զի ունին, բայց այլ կերպիւ. մերն յԱստուծոյ ձեւացաւ օրինակն։ Այս առանց կարծեաց է»։

Ուրեմն ըստ *Ոսկեփորիկ* կամ *Վարդանագիրք* կոչուած ձեռագրի վկայութեան՝ Հայոց հին այբուբենը պարունակում էր միայն 17 *տառ*. և սբ. Մեսրոպն աւելացրեց իւր կողմից 19 *տառ*։

Հին պատմաբաններից շատերն ևս ուղղակի խորենացուն հետևելով ասում են, որ սբ. Մեսրոպը գտաւ ամբողջ այբուբենն՝ այսինք 36 *տառ*։ Օրինակի համար Ներսէս շնորհալին ասում է.

«Ըստ Մովսէսի արժանացեալ
Զաստուածագիծ տառս ընկալեալ

[14]) Ա*յս կտորը ,,Բազմավէպ"ի հրատարակութեան մէջ անհասկանալի է դարձրած. ,,Ասեմք թէ Աստուծոյն աւեր (?) է, ո և ա այս է, ա չկայ"։ Այս նախադասութեան մէջ միտք չկայ. ուղղել է մեր յառաջ բերածն, որով ,,Ոսկեփորիկ"ը մեր ո տառը համեմատում է աստրուց աւ—վաւի հետ։*

Երիւք տասամբք վեցիւք յանգեալ
Արեգական ելիւք չափեալ՝ [15]):

Այս բոլոր մխմեանցից տարբեր վկայութիւնները մեր հին այբուբենի պարունակած տառերի թուի մասին:—29, 22, 24, 25, 17—յառաջ է գալիս այն հանգամանքից, որ ժամանակակից պատմաբաններն ոչինչ չեն հաղորդել այդ մասին և յետագաներն ևս իւրեանց ենթադրութիւններն են յառաջ բերել:

Այդ բոլոր ենթադրութիւններից մեզ ամենահաւանականն է թւում Վարդան պատմագրի վկայութիւնը. մենք ևս կարծում ենք, որ հայոց հին այբուբենը պէտք է 22 տառ պարունակէր իւր մէջ, վասն զի հին սեմիտական այբուբենները նոյնպէս բաղկացած էին 22 տառից [16]: Թէ ինչ կապ ունի հայոց հին այբուբենը սեմիտականի հետ, կը բացատրենք մի փոքր յետոյ, այժմ տեսնենք՝ թէ մեր այժմեան այբուբենի 38 տառերից որոնք էին հին այբուբենը կազմում և որոնք աւելացան սբ. Մեսրոպի շնորհիւ և յետոյ:

Դիմենք դարձեալ մեր սովորական պատմական ընթացքին:

ա) Ինչպէս արդէն տեսանք, Ասողիկ պատմաբանն և դորան հետևող մի քանի այլ մատենագիրներ՝ վկայում են, որ հայոց հին այբուբենը բաղկացած էր *քսան եւ ինն* տառերից. և որովհետև նոքա շարունակում են, որ սբ. Մեսրոպ աւելացրեց *միայն ա. ե. է. ը. ի. ո. ւ.*—7 տառերը հասկանալի է, որ հին այբուբենի տառերը պէտք է լինէին *բ. գ. դ. զ. թ. ժ. լ. խ. ծ. կ. հ. ճ. ղ. մ. յ. ն. շ. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. փ. ք.*—29:

բ) «Ոսկեփորիկ» ձեռագիրը վկայում է, որ սբ Մեսրոպը հին այբուբենի վերայ աւելացրեց հետևեալ տասնևինն—19—տառերն. *ա. ե. ի. ը. ո. ւ. ը. գ. ժ. ծ. ճ. չ. ջ. ց. շ. վ. ճ. յ. փ.*—19. Հետևապէս հին այբուբենի տասնևեօթը տառերը պէտք է լինէին. *է. դ. զ. թ. լ. խ. կ. հ. ղ. մ. ն. պ. ռ. ս. տ. ր. ք.*—17:

գ) Հայր Ինճիճեանը տառերի մասին խօսելիս ասում է հետևեալն. «... Բայց ի ծայնաւորաց, զորս դիւրին էր Մեսրոպայ և ի յունաց առնուլ, պէտք եղեն և քանի մի բաղաձայնից՝ սեպհական եղելոց ազգիս. որպէս և զանազանիչ տառիցս *կ. զ. ք. խ* և *ս. ծ. ց* և *զ. ծ* և *ր. ո.* և այլն, [17]):

դ) Պրօֆ. Էմինն ընդունելով որ 7 ձայնաւոր տառերը սբ. Մեսրոպի գիւտն էր և հին այբուբենը բաղկացած էր 22 տառերից, եզրակացնում է, որ սբ. Մեսրոպի աւելացրած բաղաձայների թիւը պէտք է նոյնպէս եօթը լինէր և իսկապէս հետևեալները. *թ. ծ. ղ. ջ. ր. փ. ք.*—7. ուրեմն հին այբուբենը պէտք է պարունակէր մնացած 22 տառերն, որք են. *բ. գ. դ. զ. ժ. լ. խ. ծ. կ. հ. ճ. մ. յ. ն. շ. չ. պ. ռ. ս. վ. տ. ց*—22 [18]):

---

[15]) Տես. Զարբհանալեան, նոյն I. էջ 54:

[16]) Նոյն եզրակացութեան են եկել նաև պրօֆ. Էմին և Լանգլուա:

„ . . . Мы доходымъ до того результата, что древне-армянская азбука дѣйствительно состояла изъ 22 буквъ". տես. Эминъ, նոյնն, էջ 372:

„ . . . Le Chieffre des Vingt-deux lettres dont se composait l'ancien alphabet n'est pas douteux". տես. Langlois, նոյնն, հատ. II. էջ 7:

[17]) Տես. Ինճիճեան, նոյնը. հատ. III. էջ 74:

[18]) „Առանց վարդան պատմագրի վկայութեան դժուար կլինէր որոշել թէ իսկապէս ո՞ր տառերն էին պակասում հայոց հին այբուբենի մէջ. մեր խօսքը հարկաւ վերաբերում է բաղաձայն տառերին, որովհետև Մովսէս Խորենացին խօսելով սբ. Մեսրոպի կատարելագործած այբուբենի մասին, ակնարկում է, թէև անգիտակցաբար, հայոց այբուբենի ձայնաւոր տառերը: Վարդան պատմագիրը սահմանափակելով հայոց հին այբուբենի տառերը 22 թուով միջոց է տալիս մեզ որոշել թէ իսկապէս որոնք էին այդ

ե) Պրօֆ. Պատկանեանը խօսելով Դանիէլեան այբուբենի մասին՝ շարունակում է. «Ըստ Դրիգոր Մագիստրոսի դանիէլեան այբուբենը բաղկացած էր 24 տառերից. իսկ նոր այբուբենի տառերի թիւն էր 36, ուրեմն պէտք է եզրակացնել որ Մեսրոպն աւելացրեց 12 տառ։ Սակայն ո՞րոնք են այս տառերը. պրօֆ. Էմինն այս հարցը վճռում է a priori, Մեսրոպին վերագրելով 14 տառերի գիւտը. 7 ձայնաւոր և 7 բաղաձայն. Պրօֆ. Էմինի կարծիքն այս կէտի մասին անկարելի է ընդունել, վասն զի նա մինչև անգամ չէ ընդունում Հայոց հին այբուբենի մէջ ա տառի գոյութիւնն, առանց որի մի քայլ անգամ չի կարելի անել Հայոց լեզուի մէջ, որտեղ այս ձայնաւորը մասնաւորապէս չափազանց յաճախ է յառաջ գալիս, գլխաւորապէս բառերի սկզբում»։ Ապա պրօֆ. Էմինի յառաջ բերած ենթադրութիւնները և բացատրութիւնները՝ 7 բաղաձայների ծագման մասին, համոզեցուցիչ չհամարելով Պատկանեանը յառաջ է բերում միայն տասն—10— տառեր, որոնք նորա կարծիքով յետագայ ժամանակների ծագումն ունեն որք են. ‹р. է. լ. վ. ռ. փ. թ. ջ. ձ. չ› [19]։

տառերը։ Եթէ ուշադրութեամբ քննենք այժմեան Հայոց այբուբենը, նորա մէջ գտնում ենք իսկապէս այնպիսի տառեր, որ արտայայտում են Հայոց լեզուին յատուկ հնչիւնները։ Այդ տառերը մեր կարծիքով հետևեալներն են. թ, ձ, ղ, ջ, ր, փ, բ, այդ բաղաձայն տառերը եօթն են. եթէ դոցա աւելացնենք և եօթը ձայնաւոր տառերը՝ ա, ե, է, ը, ի, ո, ւ, կստանանք տասն և չորս լրիւ թիւը։ Այժմեան գործածական և Մեսրոպեան կոչուած այբուբենի 36 տառից եթէ հանենք այդ տասն և չորս տառը, կստանանք հետևեալ 22 տառերը, որոնք և պէտք է կազմէին Հայոց հին այբուբենը. բ, գ, դ, ղ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ռ, ս, վ. տ, ց,—22. տես. „Объ армянскомъ алфавитѣ“ Эминъ, նոյնն. էջ 371—372։

[19]) տես. „Recherches sur la formation de la langue Arménienne“ par Patkanoff. տպուած է Journal Asiatique-ի մէջ VI. série, tom XVI (1870) էջ 150.

Այստեղից պէտք է եզրակացնել ուրեմն, որ դանիէլեան այբուբենը բաղկացած էր մնացած 26 տառերից. ա, բ, գ, դ, ե, զ, ժ, ի, խ, ծ, կ, հ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, պ, ս, տ, ր, ց, ւ, ք,

զ) Պրօֆ. Հիւբշմանն իւր առաջադրած հարցին՝ թէ որոնք են 22 հին և 14 նոր տառերը, հետևեալ կերպիւ է պատասխանում. «այն պատասխանն, որ այս հարցին տալիս է պրօֆ. Էմինը, մերժում է պրօֆ. Պատկանեանն և իրաւամբ. սակայն այն եղանակն, որով Պատկանեանն կամենում է որոշել այդ տառերը, նոյնպէս սխալ է։ Այդ երկուսից և տարբերւում է Լանգլուայի կարծիքն, որ հետևելով «Վարդանագրքի» մի տեղեկութեանը, ընդունում է, որ հին այբուբենը 17 տառերից էր բաղկացած և Մեսրոպն աւելացրեց 19 տառ։ Սակայն այս կարծիքն ինձ բոլորովին անհիմն է թւում...։ Ապա պրօֆ. Հիւբշմանը հայոց այբուբենի շաբայարութիւնը համեմատելով յունաց այբուբենի շարայարութեան հետ, այն եզրակացութեան է գալիս, որ «դանիէլեան» կոչուած մեր հին այբուբենն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ պարզապէս յունաց այբուբենն, ուստի և դորա պարունակած տառերը համեմատ յունական 22 տառերի պէտք է լինէին հետևեալները. ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ի, կ, ղ, մ, ն, շ, ո, պ, ռ, ս, տ, ւ, փ, ք, [20])—22։

Ինչպէս մեր յառաջ բերած օրինակները ցոյց են տալիս, այդ բացատրութիւններից ոչ մէկը միւսին չէ համապատասխանում և ամեն մէկը միւսի յայտնած կարծիքը մերժելով

---

[20]) «Յունաց և Հայոց այբուբենների մէջ եղած իրար համապատասխանող տառերի թիւը 22 է. իսկ Հայոց լեզուին յատուկ տառերի թիւն է 14. ուրեմն Հայոց հին և դանիէլեան կոչուած այբուբենը պէտք է կազմակերպուած լինի յունաց այբուբենից։ տես. H. Hübschmann: „Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen“ տպուած է Zeitschrift d. d. m. Gesellschaft-ի 30-րդ հատորի մէջ (1876). էջ. 63։

իւր ենթադրութիւնն է յառաջ բերում։ Այս բոլոր տարբեր տեսութիւնները յառաջ են գալիս այն հանգամանքից, որ շատ դժուար է որոշել թէ լեզուի այս կամ այն հնչիւնը վաղ թէ ուշ է յառաջացել, վասն զի այդ հնչիւնի յառաջանալուց է կախուած նաև դորան արտայայտող տառի յառաջանալը։ Միայն գրաւոր լիշատակարանների միջոցով կարելի է հաստատ որոշել, որ մի որև է հնչիւն լեզուի մի որոշ շրջանում գոյութիւն չի ունեցել և յետոյ յառաջ գալով՝ ստացել է նաև իւրեան յատուկ նշանը—տառը. ահա այդ հին գրաւոր լիշատակարանների պակասութիւնը—հայոց լեզուով.—անկարելի է կացուցանում հաստատ որոշել մեր լեզուի այս կամ այն հնչիւնի ծագման ժամանակը. ուստի և այս խնդրով զբաղուող գիտնականներից իւրաքանչիւրն իր կարծիքն է յայտնել՝ առանց հաստատուն փաստ ունենալու իր ձեռքում։

Թէ պրօֆ. Էմինն և թէ մեր բոլոր մատենագիրներն—բացի պրօֆ. Պատկանեանից—և թէ օտար ազգի գիտնականները[21]) միաձայն ընդունում են, որ հայոց հին այբուբենի մէջ ձայնաւորները չկային՝ հիմնուելով մեր արդէն լիշած հետևեալ փաստերի վերայ.

ա. Մեր պատմագիրներն ասում են, որ հին այբուբենը չէր կարող գործածուիլ, որովհետև մեր լեզուին յատուկ բոլոր կապերը չուներ։

բ. Խորենացին «տառերի գիւտը» պատմելով՝ յառաջ է բերում միայն ձայնաւոր տառերը։

գ. Ասողիկը և դորան հետևող այլ պատմագիրներն ասում են, որ սբ. Մեսրոպը գտաւ միայն 7 տառ, այսինքն 7 ձայնաւորները։

---

31) Մենք չենք խօսում այստեղ պրօֆ. Հիւբշմանի կարծիքի մասին, որովհետև նա չէ ընդունում հայոց հին այբուբենի գոյութիւնն և դանիէլեան կոչուած այբուբենը համարում է յունաց այբուբենից ծագած. այս մասին մի փոքր յետոյ կը խօսենք։

Արդեօք այս փաստերը բաւականացուցիչ են ապացուցանելու համար թէ հայոց հին այբուբենը բոլորովին զուրկ էր ձայնաւոր տառերից—մեր կարծիքով ոչ։ Եթէ մեր պատմագիրներն ասում են, որ «Դանիէլեան նշանագրերն» անյարմար գտանուեցան, վասն զի մեր լեզուի բոլոր կապերը չուներին, այդ բոլորովին չէ ապացուցանում որ ոչ մէկ ձայնաւոր չկար հին այբուբենի մէջ, ինչպէս որ նոյն պատմագրաց վկայութիւնը թէ. «այդ տառերով չէր կարելի արտայայտել հայոց լեզուի մէջ եղած բոլոր հնչիւնները», չէ ապացուցանում, որ այդ այբուբենը բոլորովին զուրկ էր բաղաձայններից։ Աւաւել ճիշտ կլինէր այդ վկայութիւններից եզրակացնել, որ հայոց հին այբուբենի մէջ ինչպէս որ պակասում էին մի քանի բաղաձայն տառեր, նոյնպէս և չկային ձայնաւորներից մի քանիսը։

Մենք արդէն կասկած յայտնեցինք՝ թէ արդեօք Խորենացու պատմութեան մի կամ երկու ձեռագիրների մէջ յառաջ բերած 7 ձայնաւոր տառերն իսկապէս Խորենացին է յառաջ է բերել՝ թէ ներմուծուած են յետագայ ժամանակներում՝ արտագրողների կողմից. եթէ նոյն իսկ ընդունէինք, որ այդ 7 ձայնաւորները Խորենացին է յառաջ բերում, դարձեալ ապացուցուած չէր լինի բոլոր ձայնաւորների պակասութիւնը հին այբուբենի մէջ, վասն զի Խորենացին բոլոր 36 տառերի գիւտը վերագրում է սբ. Մեսրոպին։ Սակայն եթէ Խորենացին յառաջ բերէր նոյն իսկ ամբողջ մեսրոպեան այբուբենը, մենք այսօր դարձեալ չէինք կարող մերժել հայոց հին այբուբենի գոյութիւնը. ուրեմն ինչ իրաւամբ մերժում ենք բոլոր ձայնաւորների գոյութիւնը։ Այսպիսով ոչ մի հիմնաւոր փաստ չունինք, որով կարողանայինք ապացուցանել, որ հայոց հին այբուբենը բոլորովին զուրկ էր ձայնաւոր տառերից։

Իսկ այն պատմաբանների համար, որոնք միայն 7 ձայնաւոր տառերի գիւտն են վերագրում սբ. Մեսրոպին, գեղեցիկ կերպիւ լարմարւում է «Ոսկեփորիկի»-ի խօսքերն. «Ու

այն որ է (7 գիր) ասեն, վասն նոցա պատուականութեան ասեն. որ ծայնաւորք են, եւ որպէս հոգի են այոց»։

Թէև ընդունուած է, որ հին սեմիտական այբուբենները չէին պարունակում իւրեանց մէջ ձայնաւոր տառեր, սակայն այդ չէ նշանակում՝ թէ դոցանից ծագած այլ այբուբեններն ևս պէտք է անպատճառ ձայնաւորները չունենային. յունաց այբուբենն, որ սեմիտականի անմիջական ծնունդն է, ունի ձայնաւորները, որոնք յառաջ են գալիս նոյն իսկ ամենահին արձանագրութեանց մէջ։ Ջենդի գրերը նոյնպէս պարունակում են ձայնաւորներ և «որչափ որ հին են ասորական արձանագրութիւնները, այնչափ ևս շատ ձայնաւորներ են պարունակում իւրեանց մէջ» ասում է երևելի Կոպպը[22]). որ արաբացւոց էլիֆ, վաու և այլն տառերն առաջ ձայնաւորներ են եղել՝ ըստ Կոպպի չեն կասկածում նաև ամենամեծ լեզուագէտները։

Գիրը պէտք է պատկերացնէ լեզուն· ուստի մի՛թէ զարմանալի չէը լինի, որ հայոց լեզուի այբուբենը գոնէ մի քանի ձայնաւորներ չունենար, մի՛թէ իրաւունք չունի պրօֆ. Պատկանեանն՝ ասելով որ անկարելի է ընդունել հայոց լեզուի մի այբուբեն, առանց ա-այբ-տառի։

Մեր աշխատութեան միջոցին մենք այն համոզման եկանք, որ մեր հին այբուբենը պէտք է գոնէ մի քանի ձայնաւոր տառեր պարունակէը իւր մէջ։ Պատմական ոչ մի ապացոյց չ'ունենալով, հարկաւ հաստատապէս չենք կարող ասել՝ թէ մեր 7 ձայնաւորներից որոնք էին հին այբուբենին պատ-

[22]) Անմտութիւն է կարծել, թէ կարող է գտանուել մի այբուբեն, որ բաղկացած լինէր միմիայն բաղաձայններից. գիրը պէտք է լեզուի արտայայտութիւնը լինի։ Ասորական յիշատակարանները որչափ աւելի հին են, այնչափ աւելի ևս ձայնաւոր տառեր ենք գտնում դոցա վերայ։ Տես. Kopp։ „Bilder und Schriften der Vorzeit". Հատ. II. էջ 115։

կանողները, սակայն ուսումնասիրելով սեմիտական այբուբենների համեմատական ցանկը, կարող ենք ենթադրել, որ դոքա հաւանականաբար [23]) պէտք է լինէին ա. և. ո տառերը։

Արդ՝ մի կողմից ընդունելով, որ սբ. Մեսրոպը միայն չորս ձայնաւոր տառեր աւելացրեց հին այբուբենի վերայ, և միւս կողմից ճիշտ համարելով Վարդան պատմագրի վկայութիւնն, որ սբ. Մեսրոպն ամբողջապէս 14 հատ նոր տառեր աւելացրեց, պէտք է եզրակացնել որ այդ աւելացրած տառերից *տասը* բաղաձայններ էին։

Ո՞րոնք էին այդ տասը բաղաձայն տառերը։ Ինչպէս տեսանք՝ գիտնականների կարծիքն այդ մասին բոլորովին միմեանցից տարբերւում են. պրօֆ. Էմինն ենթադրում է որ այդ բաղաձայններն թուով 7 էին փ, ք, թ, ծ, ղ, չ, ր. [24]) իսկ ըստ պրօֆ. Պատկանեանի ութը. լ, վ, ռ, փ, թ, ջ, ձ, չ։ Մենք արդէն տեսանք թէ պրօֆ. Պատկեանն ինչ փաստեր է յառաջ բերում իւր ենթադրութեան հաւանականութեան համար, այժմ տեսնենք թէ պրօֆ. Էմինն ինչպէս է պաշտպանում իւր դատը։

«Չննելով այժմեան հայերէն այբուբենն — ասում է նա, տեսնում ենք տառերի յայտնի խմբեր, որոնք անկասկած սկզբում այնչափ կատարելագործուած չէին կարող լինել ինչպէս այժմ են։ Այս խմբերն են.

1) բ, պ, փ.
2) գ, կ, ք.
3) դ, տ, թ.
4) ծ, ց, ձ։
5) խ, ղ.

[23]) Ասում ենք հաւանականաբար, վասն զի քանի որ յիրևան չեն գալիս հայոց լեզուով գրուած արձանագրութիւններ կամ այլ գրաւոր յիշատակարաններ մեր նախնեաց կռապաշտական ժամանակներից, մեր հին այբուբենի վերաբերմամբ բոլոր բացատրութիւնները կը մնան միմիայն հաւանական ենթադրութիւններ։

[24]) Տես, Эминъ, նոյնը, էջ 370։

6) չ, ջ, ճ.

7) ռ, ր.

Այս խմբերից իւրաքանչիւրի մէջ գտնում ենք մի այնպիսի տառ, որ իսկապես պէտք է պատկանի մի աւելի ուշ և լուսաւորեալ ժամանակին, այսինքն հինգերորդ դարուն, երբ ապրում էին մեր ազգի լուսաւորութեան մեծ ներկայացուցիչները, վասն զի միայն այդպիսի շըրջանում կարելի էր զբաղուել մարդկային ձայնի անալիզով—այսինքն հնչիւնների այդպիսի քնքոյշ արտայայտութիւնները տարբերելով։

1. Խմբից՝ «փ» տառը պատկանում է Մեսրոպին, իսկ առաջին երկուսը Հաւանական է, որ առաջուց գոյութիւն ունենային, վասն զի բ և պ հասարակ հնչիւններ են, այն ինչ փ (պհ-p'h) բաղադրեալ հնչիւն է, և արտայայտում է ձայնի յայտնի մթնացնումն կամ փափկացումն, որ կարող է որոշել միայն լուսաւորեալ դարաշրջանին պատկանող մարդը» [25]։

Միևնոյն բառացի փաստաբանութեամբ ընդունում է պրօֆ. Էմինը, որ 2 խմբից «ք» կհ—k'h—է Մեսրոպի գտածն. 3-ից «թ»—տհ—t'h—4-ից «ձ»—ցհ—d'zh, 5-ից «ղ», 6-ից «չ» և վերջապէս 7-ից «ր»։ [26]

Տառերի այս ընտրութիւնը մեզ հաւանական չէ թւում. վասն զի եթէ հայոց հին և «դանիէլեան» կոչուած այբուբենից ճշմարիտ այդ տառերը պակասէին, այն ժամանակ սբ.

[25]) Տես, Эминъ, նոյնը, էջ 371.

[26]) „Երկրորդ խմբի մէջ, որ բաղկացած է նոյնպէս 3 տառից, առաջին երկուսը գ և կ լինելով հասարակ հնչիւնների արտայայտիչ, պէտք է գոյութիւն ունենային հին այբուբենի մէջ. այն ինչ ք (կհ—kh) բարդ տառը, որ արտայայտում է մի որոշ մըթնացումն, հաւանականաբար յառաջացել է հինգերորդ դարում։

Երրորդ խմբի մէջ նոյնպէս 3 տառ կայ, որոնցից ղ և տ գոյութիւն ունէին հին այբուբենում, նոյն պատճառներով իսկ թ (տհ—th) անկասկած գտել է սբ. Մեսրոպը և այլն։ Տես, Эминъ, նոյնն, էջ 371—372։

Մեսրոպը և նորա գործակիցներն այնպիսի մեծ դժուարութեանց չէին հանդիպի, որպիսին որ նկարագրում են մեր պատմագիրներն. այդ տառերի պակասութիւնը բոլորովին անկարելի չէ կացուցանում նոյն այբուբենով գրել-կարդալը։ Մեր միտքը պարզելու համար յառաջ բերենք մի քանի օրինակներ. պրօֆ. Էմինն ասում է, որ «փ» տառը սբ. Մեսրոպի աւելացրածը պէտք է լինի, վասն զի այդ տառը բարդ հընչիւն է փ—պհ—և կարող էր կազմակերպուել միայն զարգացեալ սերնդից։ Նոյնն ասում է «ք» և «թ» տառերի մասին։

Եթէ նոյն իսկ ենթադրենք, որ յարգելի պրօֆ. բացատրութիւնը ճշմարիտ է, դարձեալ կարող ենք հարցնել՝ թէ արդեօք այդ տառերի պակասութիւնը մի արգելք կարո՞ղ էր լինել հայոց այբուբենի գործադրման համար—երբէ՛ք. ի՞նչ դժուարութիւն կայ փոխանակ «փ» գրելու, «պհ» գրել. արդեօք զգո՞ւմ ենք մի որևէ անյարմարութիւն կամ հանդիպում ենք մի որևէ արգելքի, երբ մենք այսօր ևս գրում ենք «սեպհական», «սեպհականութիւն». արդեօք մեր հին այբուբենն անգործադրելի կմնար, եթէ չունենար «ք» և «թ» տառերն և փոխանակ դոցա գրուէր «կհ» և «տհ» կամ «գ» չէ՞ որ այսօր ևս գրում ենք առանց դժուարութեան «մարդ», «կարդալ», «կարգադրել», «կարգիչ» և այլն և արտասանում «կարքադրել», «կարքել», «կարթալ», «մարթ»։

Մ՛թէ գերմանական այբուբենն անգործադրելի է այսօր որ չունի ք և թ տառերն և փոխանակ դոցա գրում է «կհ»—ch կամ kh և տհ—th։ Մ՛թէ թ տառի պակասութիւնը գերմանական այբուբենի մէջ և հ տառի պակասութիւնը ռուսաց այբուբենի մէջ կնշանակեն որ այդ լեզուները զուրկ են թ և հ հնչիւնից—ամենևին։ Զերկարելու համար այսչափիը բաւական ենք համարում պրօֆ. Էմինի և մասամբ նոյնպէս պրօֆ. Պատկանեանի յառաջ բերած հիմանց ընդունելի չլինելը պարզելու համար։ Յարգելի գիտնականների այդ բացատրութիւնը մեր կարծիքով բոլորովին հակառակ է գրի զար-

գացման ընթացքին. վասն զի դոքա բարդ հնչիւնները յառաջ են բերում պարզ հնչիւններից — ասելով որ կ և ր-ից, որ առաջուց գոյութիւն ունէին՝ յառաջացաւ ք, պ և ր-ից փ, տ և ր-ից, թ և այլն — ընդհակառակը պարզ հնչիւնները միշտ յառաջացել են ժամանակի ընթացքում բարդերից [27]) և ինչպէս արդէն սոյն աշխատութեան առաջի գլուխների մէջ տեսանք, գիրն իւր բարդութիւններից ժամանակի ընթացքում վերլուծուելով՝ միայն իւր կատարելագործման վերջին աստիճանում կարողացաւ արտայայտել իւրաքանչիւր պարզ հնչիւն։ Մեզ համար հասկանալի կլինէր՝ եթէ պրօֆ. Էմինն և Պատկանեանն ասէին, որ ք տառից յառաջացել են կ և հ տառերը [28]) կամ աւելի լաւ է ասել, որ ք հնչիւնից ժամանակի ընթացքում յառաջացել են կ և հ հնչիւնները. բայց երբ դոքա ուղղակի դորա հակառակն են ասում՝ անհասկանալի և անընդունելի է։

Ինչպէս արդէն մեր վերն յառաջ բերած տարբեր կարծիքներից տեսնուեցաւ, հայոց այբուբենի հին և նոր տառերը միմեանցից զանազանելու համար՝ լեզուագիտութեան օժանդակութիւնն և վաղ թէ ուշ յառաջացած հնչիւնների տեսութիւնները՝ բացի խնդիրն աւելի խճճելուց՝ ոչինչ չեն պարզում. ուստի և հրաժարուելով այդ տեսակէտից մեր ենթադրութիւններն անելու, թողնում ենք այդ ճանապարհն և մեր այբուբենի հին և նոր տառերն որոշելու համար դիմում ենք միայն «պալէօգրաֆի»յի—Paläographie, հին գրագիտութեան արուեստ—օգնութեան։

---

[27]) „Հնչիւնը գոյութիւն ունի տառից առաջ՝ ինչպէս լեզուի, նոյնպէս և գրի մէջ։ Տես. Lepsius: Paläographie als Mittel für die Sprachforschung. էջ 90.

[28]) „Այսպէս օրինակի համար, Լեպսիուսը պնդում է, որ սեմիտական այն տառից են յառաջացել եւրոպական o և ւ տառերն, իսկ հէ-ից յառաջացել են ե և ի. տես. Lepsius: Zwei Sprachvergleichende Abhandlungen. էջ 14 և 18։

Այս համեմատութեանը կդիմենք յաջորդ յօդուածում, այժմ ասենք համառօտ կերպիւ, որ հայոց հին այբուբենը—դանիէլեան—դժուար էր գործադրել հինգերորդ դարու ընկզմում, վասն զի պարունակելով իւր մէջ միայն սեմիտականին յատուկ հնչիւնների տառերը, հայոց լեզուի առանձնայատկութիւնները չէր կարող ճշտիւ արտայայտել. այն հնչիւններն, որոնք միայն հայոց լեզուին էին յատուկ, չկային այդ այբուբենի մէջ։ Այդ հնչիւններն էին մեր կարծիքով—փաստերն յառաջ կբերենք յաջորդ յօդուածի մէջ—ժ. ծ. հ. ձ. ղ. ճ. չ. ջ. ռ. փ։ Այդ այս հանգամանքն և մի քանի ձայնաւոր տառերի պակասութիւնը—ը. է. ի. ւ.—անգործադրելի էր կացուցանում հինգերորդ դարում հայոց հին և սեմիտական ծագումն ունեցող և մեր պատմագիրներից «դանիէլեան» կոչուած այբուբենը։

Այս հետևանքից պէտք է եզրակացնել ուրեմն, որ հայոց հին այբուբենը բաղկացած էր հետևեալ 22 տառերից. ա. բ. գ. դ. ե. զ. թ. լ. խ. կ. մ. յ. ն. շ. ո. պ. ս. վ. տ. ր. ց. ք.

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՀՅՈՑ ԴՐԻ ՄԱՍԻՆ

Զամչեանի, Ինճիճեանի, Լոմբի, Պատկանեանի, Պետերմանի, Վիճդիշմանի, Լանգլուայի, Մկռ-Մարտենի, Բրօսէի, Ֆրդ. Միւլլերի, Հիւրշւանի, Գարդհաուզենի, Ջալի, Լընորմանի եւ այլ 30 գիտնականների կարծիքները։

Հայոց հին այբուբենի գոյութիւնն ընդունելով, բնականաբար ծագում է այն խնդիրը՝ թէ արդեօք ո՞րտեղից է յառաջացել այդ այբուբենը, կամ թէ ո՞վ է եղել դրա սկզբնատատճառն և ստեղծողը։

Նախորդ գլուխներից մէկի մէջ արդէն յայտնեցինք այն կարծիքը, որ մի ազգի համար մի *բոլորովին նոր այբուբենի ստեղծելը* վեր է մի որ և է անհատի կարողութիւնից, սւստի ինքը ըստ ինքեան հասկանալի է, որ հայոց հին այբուբենն էս չէր կարող ուղղակի մի որ և է անձնաւորութիւնից իւր սկիզբն առնել, այլ պէտք է գոյանար հետզհետէ ժամանակի ընթացքում, կամ թէ մի կամ մի քանի անձնաւորութեանց միջնորդութեամբ՝ արդէն եղած և այլոց սեպհական տառերից պէտք է կազմակերպուէր և ազգից ընդունուէր։

Վերջին եղանակաւ գոյութիւն ստացան—մեր պատմագրաց ասելով—վրաց և աղուանից տառերը սբ. Մեսրոպի միջնորդութեամբ, որ հայոց այբուբենը կարևոր փոփոխութիւններով մտցրեց նոցա մէջ։ Արդեօք այդ եղանակաւ են կազմակերպուել նոյնպէս հայոց հին տառերը, թէ առաւել կանոնաւոր և ինքնուրոյն ճանապարհով՝ համաձայն տառերի կազմակերպութեան ընդհանուր օրինաց։ Գրի կազմակերպութեան ընդհանուր օրէնքն և բնական ճանապարհն, ինչպէս արդէն տեսանք, այն է՝ որ պատկերագրից յառաջանում է նշանագիրը, իսկ նշանագրից ծագում է տառը։ Մենք ընդունեցինք, որ մեր նախնիքը թէև պատկերագիր չեն ունեցել, սակայն նշանագրի գործածութիւնն ընդհանրացած է եղել Հայաստանում. այժմ խնդիր է՝ թէ արդեօք հայոց հին տառերն ենթարկուելով ընդհանուր օրինաց՝ կազմակերպուեցան այդ նշանագրից, թէ օտար ծագումից յառաջացան։ Մեզ ցանկալի կլինէր առաջինն ապացուցանել, սակայն մեր հետազօտութեան արդիւնքը ցոյց տուեց, որ հայոց հին այբուբենն օտար ծագումից է յառաջացել. յառաջ քան մեր այս ասածը փաստերով բացատրելու, յառաջ ենք բերում այստեղ Եւրոպական գիտնականների յայտնած կարծիքները՝ մեր այբուբենի ծագման և կազմակերպութեան մասին։

1) *Հայր Միք. Զամչեանը* հետևելով մեր պատմագրաց՝ ընդունում է որ սբ. Մեսրոպը բոլորովին նոր այբուբեն կազմակերպեց. «Յայտ է առ ամենեսին, թէ զնշանագիրս հայոց՝ զոր վարեմք, եգիտ սբն. Մեսրոպ ընդ ամենայն՝ երեսուն և վեց տառ՝ յայլեն մինչև ի քէ, ի բաց առեալ զօն և զֆֆէն, որք ի յետին ժամանակս առեալ եղեն յայլոց ազգաց» [1]։

---

[1]) Տես. Հայր Միք. Զամչեան, պատմութիւն Հայոց. Հատ. I. էջ 755։

Իբր ապացոյց իւր ասածի, Հայր Զամչեանն ասում է միայն Հետևեալը. «... Եւ թէ յիրաւի չէր հնարեալ զայնս Մեսրոպայ, զիւրդ մարթ էր սոցա—Խորենացի, Կորիւն և Փարպեցի—զայս այսպէս վկայել, և գրով աւանդել առ աշակերտակից իւրեանց, և ընծայել առ մեծամեծս աշխարհին, որպէս Կորիւն առ Յովսէփ կաթողիկոս առ երեց աշակերտակից իւր. և Խորենացին առ Սահակ ասպետ մեծ և Փարպեցին առ Վահան սպարապետ և մարզպան Հայոց: Թո՛ղ զայն, զի այս մատենագիրք երևելիք ոմանք էին ի ժամանակս իւրեանց...» [2]:

2) *Հայր Ղուկաս Ինճիճեանն է*—եթէ չենք սխալւում—առաջին անգամ պատմական փաստերով հաստատում, որ «դանիէլեան» կոչուած այբուբենն ո՛չ թէ Դանիէլի գտածն էր, այլ Հայոց հին գործածական գիրն էր որ գտանուեցաւ նորա մօտ. «Եւ այսպէս ըստ մերոց նախալիշեալ պատմագրաց հին հայկական նշանագիրք էին, որք գտան առ Դանիէլի, և դանիէլեան նշանագիրք էին զորս լրացոյց Մեսրոպ. բայց ի կարգի դնելն գնոսա եղև ի Միջագետս...» [3]: Մի այլ տեղ ասում է. «...Զորս ոչ եթէ Դանիէլի էր յօրինեալ, այլ առ նմին Դանիէլի պահեալք հին հայկական նշանագիրք... [4]:

3) *Ուսուցչապետ Իմինն* աւելի ընդարձակ պատմական փաստերով հաստատելով Հայր Ինճիճեանի տեսութիւնը Դանիէլեան այբուբենի մասին՝ [5] բոլորովին մերժում է այն

[2]) Տես. Զամչ. նոյնը. հատ. I. ծանօթ. բ. գրոց. էջ 761:

[3]) Տես. Հայր Ղ. Ինճիճեան. «Հնախօսութիւն աշխարհաբարական Հայաստանեայց աշխարհի» հատ. III. էջ 76:

[4]) Տես. նոյնը, հատ. III. էջ 73.

[5]) Տես. „Объ Армянскомъ алфавитѣ" տպուած է Խորենացու ռուսերէն հրատարակութեան հետ իբր IV յաւելուած. սոյն աշխատութիւնը թարգմանուած է ֆրանսերէն լեզուով և տպագրուած „Revue d'Orient" հրատարակութեան 1865 թ. հատորի մէջ:

կարծիքն, որ իբրև թէ Հայերէն տառերը ծագել են զենդի կամ թէ յունաց տառերից [6]. Հիմնուելով հետևեալ երեք փաստերի վերայ. ա) Հայոց տառերի ձևերը բոլորովին չեն համապատասխանում զենդի և յունաց տառերի ձևերին, բ) Հայոց տառերի թիւը չէ համապատասխանում յունաց և զենդի տառերի թուին և գ) զենդի և յունաց այբուբենի մէջ կան բազմաթիւ ձայնաւորները, այն ինչ Հայոց հին այբուբենն ոչ մի ձայնաւոր չունէր: Սակայն՝ թէ ինչ ծագումն ունէր Հայոց հին այբուբենը կամ թէ ինչպէս էր յառաջացել, այդ մասին պրօֆ. Իմինը—նոյնպէս և Զամչեանն ու Ինճիճեանը—ոչ մի խօսք չէ ասում:

4) *Ուսուցչապետ Պատկանեանը* հաստատելով պրօֆ. Իմինի կարծիքն, որ սբ. Մեսրոպից առաջ մեր նախնիքն ունեցել են սեպհական այբուբեն՝ աւելացնում է, որ այդ այբուբենն անկասկած *արամայական ծագումից* էր յառաջացել և զանազան պատճառներով գործածութիւնից դուրս էր եկել Յարդելի ուսուցչապետն ոչինչ փաստ չէ յառաջ բերում, որ-

[6]) „... Քանի որ դեռ ևս Հայոց այբուբենի հնութիւնն ապացուցուած չէր պատմական փաստերով, կարելի էր ենթադրել թէ Հայոց այբուբենի տառերը կազմակերպուել են զենդի տառերի օրինակով. սակայն մեր այս յօդուածում յառաջ բերած ապացոյցներից յետոյ դժուար է ենթադրել, գոնէ մեզ համար, մի այդպիսի կարծիք: Առաջին. Հայոց այբուբենի տառերի ձևերը նմանութիւն չունին զենդի տառերի ձևերի հետ: Երկրորդ. զենդի այբուբենը իւր տառերի քանակութեամբ մեծապէս տարբերւում է Հայոց այբուբենից: Երրորդ. զենդի այբուբենը հարուստ էր ձայնաւոր տառերով, այն ինչ հին Հայկական այբուբենը ոչ մի ձայնաւոր չունէր: Այս բոլոր հանգամանքներն ի նկատ առնելով դժուար է ենթադրել որ զենդի այբուբենը ազդեցութիւն ունեցած լինի Հայոց այբուբենի վերայ: Իսկ ինչ վերաբերում է յունաց այբուբենի կատարած դերին՝ Հայոց այբուբենի կազմակերպութեան խնդրում, պէտք է ասենք նոյնը, ինչ որ ասացինք զենդի այբուբենի մասին: Տես. Эминъ, նոյնը, էջ 375:

պէս զի ապացուցանէ իւր յայտնած կարծիքը հին այբուբենի ծագման մասին [7]։

Սոյն յօդուածի շարունակութեան մէջ ասում է հեղինակն. ընդունելով որ հայոց հին այբուբենն ընդօրինակուած էր իրանական այբուբեններից մէկից, դիւրին է ըմբռնել՝ թէ ինչո՞ւ այդ այբուբենը չէր կարող արտայայտել հայոց լեզուի բոլոր հնչիւնները... [8]։

Յառաջ բերելով մեր այս չորս հայրենակիցների—որոնք Եւրոպական գիտնականների հռչակ ունեն—դատողութիւններն, անցնենք բուն Եւրոպացիների յայտնած կարծիքներին։

5) *Փրդ. Կոպալը՝* իւր «Նախնական ժամանակների պատկերներ և գրեր» յայտնի աշխատութեան մէջ թէև հայերէն այբուբենի ծագման մասին մի որոշ տեսութիւն չէ յայտնում, սակայն ի նկատի ունենալով նորա դատողութեան եղանակի ճշտութիւնն, յառաջ ենք բերում այդ համառօտ հատուածի կարճ բովանդակութիւնը։—Գիտնականները միաձայն ընդունում են, ասում է Կոպալը, հայերէն այբուբենի նոր լինելը՝ հիմնուելով մասամբ պատմութեան և մասամբ էս դորա յունաց այբուբենի դասակարգութեան հետ ունեցած նմանութեան վերայ։ Թէ որչափ անհիմն է վերջին կարծիքը, ցոյց են տալիս նոյն իսկ սեմիտական այբուբենները,

[7]) Տես. Recherches sur la formation de la langue arménienne՚՚ նոյնը, էջ 148—149։

[8]) Տես. Նոյնը, էջ 151.

Մի այլ տեղ ասում է պրօֆ. Պատկանեանը „... Առհասարակ սբ. Մեսրոպը համարւում է հայոց այբուբենի դտնողը. աւելի ճիշտ է այն կարծիքը, որի համեմատ Մեսրոպը ոչ թէ գտաւ հայոց այբուբենը, այլ արդէն եղած, բայց ընդհանուրից չգործածուած, դանիէլեան—հայկական այբուբենը կատարելագործեց. այս կարծիքը գեղեցիկ բացատրւում է Էմինը՚՚. տես. Исторія Агванъ М. Каганкатваци թարգմանութեան յաւելուածի II. մասն. էջ 326։

մի կողմը թողնելով այն հանգամանքն, որ հայերէն այբուբենը թէ դասակարգութեամբ, թէ հնչմամբ և թէ տառերի թուով տարբերւում է յունարէնից։

Նոր այբուբենի գիւտը վերագրում են հինգերորդ դարու առաջին կիսում յայտնի եղած Մեսրոպին. սակայն Փիլոստրատոսի վկայութիւնը կասկածելի է կացուցանում այդ. մի և նոյն վկայութիւնը ջրում է և այն կարծիքն, որ հայերէն տառերի գիւտը վերագրում է Խրիսոսթոմոսին [9]։ Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Վատիկանում գրուած Ոսկէբերանի սիւնարձանի վերայ եղած գրութիւնն այդ գիւտը նորան է ընծայում, շատ չպէտք է զարմանալ՝ ի նկատի ունենալով, որ այդ բոլոր արձանագրութեանց առասպելականութիւնն այն աստիճանի է հասնում, որ դորա մէջ Ադամն էս փայլում է իբրև մի այբուբենի ստեղծող։

Սակայն նոյն իսկ ենթադրելով, որ Մեսրոպը կամ Ոսկէբերանը գտան հայոց այբուբենը դարձեալ խնդիրը նորանումն է, թէ արդեօք ինչ մասերից կազմուեցաւ այդ։ Բոլորովին մերժելի է այն կարծիքն, որ իբրև թէ այդ այբուբենը կազմուել է յունականի և լատինականի հիմանց վերայ. առաւել ընդունելի կարելի է համարել դորա հին պարսկականից ծագելու ենթադրութիւնը [10]։

Եւ ապա առանց մի որ և է վճիռ արձակելու Կոպալը

[9]) Chrisosthomus կնշանակէ Ոսկէբերան. Հեղինակն ակնարկում է Ցովհան պատրիարք „Ոսկէբերան՚՚ին։

„Ի Վատիկանեան մատենադարանի որ ի Հռոմ՝ հոյակապ սրահի մը մէջ ուր ամենայն ազգաց այբուբենից ծանօթ հնարուղաց դէմքերն պատկերագրուած են, մեր այբուբենքն իրենց հին երկաթագիր ձևերովն տրուած են ի ձեռս սրբոյ Ոսկէբերանի, զինքն համարելով և կոչելով անոնց հեղինակ՚՚ տես. Զարբհանալեան, նոյնը. Հատ. I. էջ 22։

[10]) Տես. Frd. Kopp: Bilder und Schriften der Vorzeit, Հատ. II. էջ 361—367։

յառաջ է բերում Հայերէն մի քանի տառերի համեմատութիւնը՝ խալտական, եթովպական և պարսից տառերի հետ։ —Տես № V.—

6) *Ս. Վալը* պատմելով Հայոց այբուբենի գիւտն ըստ Խորենացու, շարունակում է. «Սրդէն Մեսրոպից առաջ Սքէլ անունով մէկը գտել էր Հայոց գիրն, որ կազմուած էր յունաց այբուբենից. սակայն այնպէս անկատար, որ Մեսրոպն իւր դիտաւորութիւնը չէր ողեց... Տառերի ձևերը մասամբ ինքնուրոյն են. թէև Մեսրոպն առնում է օտար տառեր, սակայն այնպէս է կազմակերպում, որ հին ձևերը համարեա թէ անյայտանում են։ Ձախից աջ գրելու եղանակն Սքէլն առել է յոյներից, իսկ Մեսրոպը հաւանականաբար Սքէլից։—Վալն Սքէլի անունն երևի շփոթում է Դանիէլի հետ—յունական տառերի ձևերը Հայոց այբուբենի մէջ բացի էից, ըից, փից, օից չի կարելի ճանաչել, և նոյն իսկ այս տառերի յունական ծագումն—ի բաց առեալ օն—դեռ ևս շատ կասկածելի է։ Սակայն անհաւանական չէ, որ Հայոց այբուբենի մէջ աստրոց և պարսից տառերի ձևեր գտանուին. պարսից և աստրոց գիրը սովորական էր Հայաստանում Մեսրոպից առաջ և ով որ յեղափոխում է՝ խոհեմութեամբ պահում է հնից այնչափ, որչափ կարելի է [11])։

7) *Նոյմանը* հետևելով Խորենացուն՝ ընդունում է, որ Հայերը Մեսրոպից առաջ գիր չունէին [12])։

8) *Գատերերը* [13]) և

9) *Շրեօդերը* [14]) գիտնականները Հայոց այբուբենը յու-

---

[11]) տես. S. Wahl: Allgemeine Geschichte der morgenländischen Sprachen und Litteratur. էջ 613:

[12]) տես. Neumann: Mémoire sur la vie et les ouvrages de David. etc. տպուած է N. Journ. Asiatique t. III. (1829) էջ 54.

[13]) տես. Ioh. Ch. Gatterer: Abriss der Diplomatik էջ 46.

[14]) տես. Ioh. Ch. Schröderi. Thesaurus liuguae armenicae etc. մասն. I. էջ 33:

ՀԱՅԿԱԿԱՆ	ԽՊՏԱԿԱՆ	
𐎴 = 𐎲 =		դաի
𐎱 = 𐎳 =		բայ
𐎲 = 𐎵 =		հօրի
𐎶 = 𐎷 =		ժանժա
𐎺 = 𐎸 =		մի
ՀԱՅԿԱԿԱՆ	ԵԹՈՎՊԱԿԱՆ	
𐎹 = 𐎻 =		նահաս
𐎼 = 𐎽 =		յապայ

ՀԱՅԿԱԿԱՆ:	ՀԻՆ ՊԱՐՍԿԱԿԱՆ:
Ա =	𐏁
Բ =	𐏂
Գ =	𐏃
Դ =	𐏄
Ե =	𐏅
Զ =	𐏆
Է =	𐏇
Ը =	𐏈
Թ =	𐏉
Ժ =	𐏊
Ի =	𐏋
Լ =	𐏌
Խ =	𐏍
Ծ =	𐏎
Կ =	𐏏
Հ =	𐏐
Ձ =	𐏑
Ղ =	𐏒

ԿՈՊՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՅԱՆԿԸ

նարէնից ծագած են համարում։

10) *Փրիդ. Վինդիշմանը* խօսելով հայոց գրի մասին՝ ասում է հետևեալը. «Յայտնի է, որ հայոց այբուբենը մի գիւտ է, որ տեղի է ունեցել հինգերորդ դարում Մեսրոպի ձեռքով։ Որչափ որ հայ ազգն իրեն պարտաւորուած է ըզգում նորանից շնորհակալ լինելու, այնուամենայնիւ յայտնում ենք այն կասկածը, արդեօք այդ ժամանակամիջոցում մի կատարեալ տառագիր այբուբենի կազմուածքը կարելի էր։

Լեզուների պատմութեան մէջ կայ մի ժամանակաշրջան, ուր ամենայն ինչ կեանք, ստեղծող ոյժ և թարմութիւն է, ուր անմիջական գիտակցութիւն է տիրում նորա ներքին էութեան մէջ. դորա մէջ հնչիւնները դեռ ևս բաժանուած են և պահպանում են իւրեանց կատարեալ անհատականութիւնն։ Այն նշաններն, որոնք այս ժամանակաշրջանում տրւում են այս հնչիւններին, կատարելապէս յարմարւում են նոցա բնաւորութեան։ Սակայն շուտով մոռացւում է սկզբնականը. նմանութեամբ կազմակերպութիւնների և հնչիւնների փոփոխութիւնները հետզհետէ աւելի յաճախ են տեղի ունենում. լեզուի ներքին բնազդումը, տառերի դէպի միմեանց ունեցած յարաբերութեան կենդանի զգացումը հետզհետէ բթանում է։ Եւ մի այսպիսի ժամանակ էր ապրում Մեսրոպը, նորա ժամանակակից լեզուն արդէն փչացած (?) և քայքայման դրութեան մէջ էր. այդ պատճառաւ և չենք կարող նորա այբուբենից հնչիւնների խիստ տարբերութիւն սպասել (?). Նա մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքն, որ նորա հիմն օտար տարրեր էին՝ այսինքն *յունական եւ ասորական գիրը:*

Վերն յիշած տառերի [15]) արտասանութիւնն այժմեան

[15]) *այպ, պիէն, կիմ, տահ... դիէն, ղիւն, պիւր և այլն. պէտք է նկատել, որ հեղինակը սխալմամբ կարծում է, թէ տաճկահայոց արտասանութիւնն այժմեան բոլոր հայերի արտասանութիւնն է։*

գործածականն է Հայերի մէջ. սակայն՝ մի կողմից յունաց այբուբենի հետ համեմատութիւնը, միւս կողմից այն եղանակն, ինչպէս որ նոյն իսկ իրենք Հայերն յունական անուններն կոչում են, պարզապէս ցոյց են տալիս, որ այժմեան արտասանութիւնը բաւականաչափ տարբերւում է սկզբնականից...› Սպա հեղինակը լեզուաբանական օրինակներով ապացուցանում է, որ մեր այբուբենի երրորդ տառը պէտք է գ և ոչ լ արտասանել. իսկ 15-րդ տառը լ և ոչ գ. 4-րդն պէտք է լինի դ և ոչ տ, 31-րդն տ և ոչ դ. 2-րդն բ և ոչ պ, 26-րդն պ և ոչ բ և այլն [16]: Մի այլ տեղ ասում է նոյն հեղինակը. «Հայոց այբուբենի գտնողը թէև կարիք ունէր Հայնաւորների համար շատ նշաններ հնարելու, սակայն լեզուի այն ժամանակուայ դրութիւնն ի նկատի ունենալով՝ անկարելի էր հնչիւնները միմեանցից նուրբ կերպիւ զանազանել: Այդպիսով կորել է սկզբնական դիալէկտների գեղեցիկ զարդը կազմող քանակութիւնն (Quantität), որ մեծ ազդեցութիւն ունի բառակազմութեան խանգարման վերայ [17]:

11) Ֆլօբիվալն իւր Խորենացու ֆրանսերէն թարգմանութեան մէջ Հայոց այբուբենի գիւտը վերագրում է սբ. Մեսրոպին [18]:

12) Բիւտներն իւր համեմատական ցանկի մէջ ի միջի այլոց ասում է և հետևեալն. ‹Արաքսի միւս կողմը բնակւում են Հայերն և վրացիք. այս երկու ժողովրդից իւրաքանչիւրն ունի իւր առանձին և այլոց հետ ազգակցութիւն չունեցող լեզուն և գիրը› [19]: Սպա երկար պատմելով

[16]) Տես. Frd. Windischmann: Die Grundlage des Armenischen in arischen Sprachstämme. տպուած է Bay. Abhand. IV. 2. էջ 5—16.

[17]) Տես. Frd. Windischmann, նոյնն, էջ 24.

[18]) Տես. Moise de Khorène... traduite par P. E. Le Vaillant de Florival. էջ VI.

[19]) Տես. Ch. W. Büttner: Vergleichungs—Tafeln der Schriftarten verschiedener Völker. մասն I. էջ 8.

Խորենացու ասածները և չիշելով որ Հայերը գործ էին դնում յունաց, ասորոց և պարսից գրերը՝ շարունակում է. ‹Թէոդոս երկրորդ կայսեր ժամանակ Մեսրոպ անունով մի միայնակեաց, որ արքունի քարտուղար էր եղել, գտաւ մի այբուբեն Հայոց համար: Այդ այբուբենի տառերի մեծամասնութեան հիմնագծերի մէջ կարելի է ճանաչել դորա հին *պարսկական ծագումը*:... Տառերի դասաւորութիւնը թէ Հայոց և թէ վրաց այբուբենի մէջ՝ յունական է. մէջ տեղերը տեղաւորուած են իւրեանց առանձնայատուկ տառերը...› [20]:

13) Ռոմմելը խօսելով Աստուածաշնչի Հայերէն թարգմանութեան մասին՝ շարունակում է. ‹... Որովհետև մինչ այն ժամանակ Հայերն օտար գիր էին գործ դնում, այս առիթով — Աստուածաշնչի թարգմանութեան — գտանուեցաւ կամ կազմուեցաւ Հայոց այբուբենն ըստ *յունական օրինակի*...› [21]:

14) Այբուբենների մի համեմատական ցանկի մէջ, որ հրատարակել են երկու Բենեդիկտեան կրօնաւորներ, Հայոց այբուբենը դասաւորուած է յունաց այբուբենից ծագած գրերի շարքի մէջ [22]:

15) Ե. Բօրէ խօսելով Հայոց այբուբենի մասին՝ ասում է. «մենք չենք կարծում որ Հայոց այբուբենի տառերը վերցրած լինին միայն միայն յունարէնից, ինչպէս որ կարծում են մի քանի գիտնականներ: Այն ինչ զենդի և ասորական այբուբենների համեմատութիւնը Հայոց այբուբենի հետ մեծ նմանութիւն է ցոյց տալիս՝ թէ տառերի հնչիւնով և թէ նշանակութեամբ, ուստի և կարծում ենք, որ Մեսրոպն այդ

[20]) Տես. Büttner, նոյնը. մասն II. էջ 25—26:

[21]) Տես. Allgemeine Encyclopädie der Wissenschaften und Künste, von Ersch und Gruber Լայպցիգ 1820. Հատ. 5. էջ 360.

[22]) Տես. Nouveau Traité de Dirbomatique par deux Beligieux Bénédictins de la congrégation de S. Maur. Paris. M. DCCL. մասն. I. էջ 709.

այբուբենը կազմակերպեց վերոյիշեալ երկու այբուբեններէ ուսումնասիրութիւնից յետոյ։ Հայաստանը միշտ եղել է աստրոց և պարսից ազդեցութեանց տակ...» [23])։

16) „Biographie Universelle“ հրատարակութեան մէջ «Մեսրոպ» հատուածը խօսելով հայոց այբուբենի մասին, ասում է. «այս այբուբենն, որ բաղկացած է 36 տառերից, կազմուեցաւ երկրի մէջ սովորական հին գրի շատ նշաններից և յատուկ նոր գտած տառերից» [24])։

17) Նշանաւոր արևելագէտ և հնախոյզ Լ ը ն օ ր մ ա ն ը հայոց գիրը զենդից յառաջացած է համարում և հետևեալ տեղը տալիս նորան ընդհանուր գրերի շարքի մէջ.

ՍԵՄԻՏԱԿԱՆ ՏՈՀՄ

I

Ընդայա-սամարական ընտանիք.

հին Փիւնիկեան.
հին եբրայական.
սամարական.
սամարական նոտր գիր։

II

Արամայական ընտանիք.

միջին Փիւնիկեան.
առաջին արամայական.
երկրորդ արամայական.
արամայական՝ պալիրուսի վերայ.

---

[23]) տես. E. Boré: De l'action directe et puissante du christianisme sur la société arménienne etc. տպուած է Jour. Asiat. tom I. (1836) էջ 214. ծանօթ 1.

[24]) տես. Biographie Universelle, ancienne et moderne. Paris et Leipzig հատ. 28. էջ 101.

միւս ճիւղերը թողնելով նախկին պահլաւական.
պերսեպոլեան պահլաւական.
սասանեան պահլաւական.
ձեռագրաց պահլաւական.
զենդի
հայոց և վրաց [25])։

18) Ֆ ա ռ լ մ ա ն ը հայոց այբուբենի գիւտն ըստ մեր մատենագրութեան պատմելուց յետոյ, ի միջի այլոց ասում է նաև հետևեալն. «... Որովհետև պատմում են—մեր մատենագիրները—որ Մեսրոպն առաջ հայոց այբուբենը կազմակերպեց և յետոյ վրացոցն, որ կասկածի ենթարկելու ոչ մի պատճառ չունենք, այն ժամանակ աւելի հաւանական է, որ Մեսրոպն ոչ հայոց և ոչ էլ վրաց նշանները գտաւ. այլ այդ նշաններն ինչպէս «րունէ» կոչուած գրերն, իբրև ժամանակի և հմայութեան նշաններ՝ այդ ժողովրդոց ժառանգական սեպհականութիւնն էին։ Եւ այն աստուածային յայտնութիւնն, որի մասին խօսում է Խորենացին, կայանում էր նորանում, որ Մեսրոպը մտածեց այս նշաններն իբրև տառեր գործ դնել. իսկ վրացիք հետևելով նորա խորհրդին՝ իւրեանց սեպհական նշանները նոյնպէս տառերի փոխադրեցին։ Ա.յսպիսով բացատրւում է՝ թէ ինչպէս երկու բոլորովին տարբեր այբուբեններ—մերն և վրացոյը—մի և նոյն սկզբնատառը կարող էին ունենալ։ Ես կը ցանկանայի նոյնպէս ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վերայ, որ հայոց տառերի անուններն այբ, բեն, գիմ, մատնացոյց են անում այն պատճառը, թէ ինչու յունաց տառերն անյարմար էին հայոց լեզուի համար։ Հայոց բ կամ բի կամ պի (?) հաւանականաբար բոլորովին այլ հնչիւն ունէր քան յունաց B։

Մեսրոպն երկնչում էր, որ արտասանութիւնն յունաց

---

[25]) տես. Fr. Lenormant: Essai sur la Propagation de l'alphabet Phénicien. հատ. I. գուցակ I. էջ 192.

նշանների միջնորդութեամբ կ'փչանայ, այդ պատճառաւ և գերադասեց յունաց այբուբենից բոլորովին տարբերուող մի այլ գիր։ Երբ պատմագիրներն ասում են՝ թէ Մեսրոպը հայոց նշաններն ըստ յունական օրինակի ձևակերպեց, այդտեղից պէտք է հասկանալ որ նա յունաց գրի ուղղութիւնը՝ ձախից—աջ, ինչպէս նաև բառերի բաժանումն և յունական այբուբենի ամբողջ արտաքին ձևն ընդունեց» [26]։

19) Հայագէտ Եդ. Դիւլօրիէն հայոց հին այբուբենը համարում է արամայականից ծագած [27]։

20) Սէն-Մարտէնը խօսելով դանիէլեան տառերի մասին՝ ասում է, որ դոքա յունաց տառերի ձևն ունէին [28]։ իսկ պատմելով Մեսրոպեան այբուբենի մասին՝ այն կարծիքն է յայտնում, որ իբրև թէ Մեսրոպը վերցնում է պարսից հին տառերից շատերը և հայոց այբուբենի կարգն անցնում. այս հայագէտ գիտնականի կարծիքով «Հէնց առաջին հայեացքով դիւրին է ճանաչել որ հայոց տառերից շատերը մեծ նմանութիւն ունին զենդի և պահլաւական տառերի հետ, նոյնպէս սասանեան ժամանակի պարսկական և ասորական արձանագրութեանց տառերի հետ» [29]։

21) Հայագէտ Լանգլուան մի պարզ գաղափար չէ կարողացել կազմել հայոց այբուբենի մասին. մի տեղ ասում է նա, որ մենք հինգերորդ դարից առաջ մեր սեպհականը գիրը չենք ունեցել [30]. իսկ միւս տեղ ասում է, որ Դանիէլի մօտ գտանուած գիրը հայոց հին այբուբենն էր [31]. և հետևելով «Ոսկեփորիկ»ի տուած տեղեկութեան՝ ընդունում է, որ այդ այբուբենի տառերն առնուած պէտք է լինեն ասորականից [32]։ Մի այլ տեղ կարծես կասկածելով հայոց հին այբուբենի գոյութեան մասին՝ ասում է որ գուցէ Հայաստանի մի քանի նահանգներում միայն գործածական էր ազգային այբուբենը [33]։

22) Պրօֆ. Ֆրդ. Միւլլերը զբաղուելով հայոց այբուբենի խնդրով և հետևելով Մ. Խորենացու և Կորիւնի Սքանչելու տուած վկայութեանց՝ հայերէն տառերի գիւտը թէև վերագրում է սբ Մեսրոպին, սակայն այն եզրակացութեան է գալիս, որ այդ տառերը ծագում են ոչ թէ յունաց, այլ սեմիտական այբուբենից։ Յարգելի գիտնականն ըստ Խորենացու և Կորիւնի՝ երկար պատմելով հայոց տառերի գիւտի պատմութիւնը և համեմատելով վրաց այբուբենի հետ՝ ի մի՛ջի այլոց ասում է և հետևեալը. «Հայոց և վրաց այբուբենները ներկայացնում են յունական և սեմիտական տառերի շարայարութեանց մի խառնուրդ. վրաց այբուբենի մէջ այդ իրողութիւնը կատարուած է ճշտօրէն. այն ինչ հայոց այբուբենի մէջ այդ շարայարութիւնը խանգարուել է վերջն աւելացած տառերով. այստեղից կարելի է եզրակացնել, որ այս երկու այբուբենների կազմակերպութեան ժամանակ տեղի է ունեցել ոչ միայն յունականի, այլ և սեմիտական այբուբենի ազդեցութիւնը։ Վերջին ազդեցութիւնն աւելի աչքի է ընկնում, երբ մենք հայոց և վրաց այբուբենի իւրաքանչիւր տառն ուսումնասիրելու համար՝ համեմատում ենք յունական և սեմիտական—այստեղ մանաւորապէս արամայական—տառերի հետ։ Համեմատութեան ժամանակ պէտք է

---

[26]) տես. K. Faulmann: Illustrirte Geschichte der Schrift էջ 499—500

[27]) տես. Journal Asiatique. t. 16. (1870). էջ 149. ծանօթ. 1.

[28]) տես. Saint-Martin: Histoire du Bas-Empire par Lebeau etc. հատ. 5. էջ 322.

[29]) տես. S.-Martin, նոյնը. հատ. 5. էջ 323.

[30]) տես. V. Langlois: Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moise de Khoren. տպուած է Bulletin de l'acad. de S.-Petersburg. հատ. III. (1861) էջ 532.

[31]) տես. V. Langlois: Collection des Historiens etc. հատ. I. Discurs Péliminaire էջ 15.

[32]) տես. Langlois. նոյնը հատ. I. էջ 7.

[33]) տես. նոյնը. հատ. I. էջ 15.

վերցնել Հայոց երկաթագիրն և վրաց «խուցուրի»ն»։ Այսպա Հայոց այբուբենի տառերի համեմատութիւնն յառաջ բերելով՝ շարունակում է. «Այս բոլորից երևում է, որ Հայոց և վրաց այբուբենների իսկական աղբիւրը պէտք է որոնել մի սեմիտական և յատկապէս արամայական այբուբենի մէջ և գուցէ նոյն իսկ այն այբուբենի, որ այն ժամանակուայ պարսիկները գործ էին դնում և որից ծագում է նաև սասանական պահլաւական գիրը։ Մեսրոպի աշխատանքը կայանում է նորանում, որ նա կարողացաւ արամայական միայն բաղաձայններից կազմուած գրից մի այբուբեն կազմակերպել ըստ յունական օրինակի, որի մէջ թէ բաղաձայն եւ թէ ձայնաւոր հաւասարապէս նշանագրուեցան» [34]։

23) Ս. կ ա դ ե մ ի կ ո ս Բ ր օ ս է ն Կիրակոս Գանձակեցու թարգմանութեան մի ձանօթութեան մէջ՝ Հայոց գրի մասին տեղեկութիւն ցանկացողին ուղարկելով Խորենացու, Ղ. Փարպեցու, Վարդանի և այլ պատմագիրների մօտ, աւելացնում է որ Հայոց հին այբուբենը բաղկացած էր 22 տառերից, որի վերայ Մեսրոպն աւելացրեց 14 տառ. այդպիսով կազմուեցաւ նոր այբուբենն ըստ յունական շարայարութեան։ [35])

24) Պրօֆ. Հիւբշմանը խօսելով Հայոց այբուբենի մասին՝ ասում է հետևեալը «Հայոց այբուբենն՝ ըստ վկայութեանց հայկական մատենագիրների, գտել է սբ. Մեսրոպը հինգերորդ դարու սկզբում. սակայն նոյն մատենագիրները պարզապէս ակնարկում են, որ այս գիւտը միայն Մեսրոպի գործը չէր։ Ըստ այդ տեղեկութեանց Մեսրոպը գտնում է մի հին այբուբեն ասորի Դանիէլի մօտ և երկար ժամանակ

[34]) տես. Prof. Fried. Müller: Über den Ursprung der armenischen Schrift. տպուած է Sitzungsberichte der phil. hist. cl. d. kais. Akademie d. Wissenschaften. Հատ. 48. տետր 1 և 2. էջ 438.

[35]) տես. Brosset: Deux Historiens Arméniens—Kirakos de Gantzac. etc. St. Petersburg 1870—էջ 13. ծան. 4.

անփոփոխ գործ դնելուց յետոյ, տեսնելով դորա պակասութիւնները՝ երկար ժամանակ զանազան դիտնականների հետ խորհրդակցելով և հոգալով՝ վերջապէս կարողացաւ Հռուփանոսի հետ միասին կազմակերպել Հայոց նոր կատարեալ այբուբենը։ Այսպիսով Մեսրոպի ծառայութիւնն այն եղաւ, որ նա կատարելագործեց հին «դանիէլեան» այբուբենն և ազգային գիրը տարածեց Հայաստանում՝ յետ մղելով մինչ այն ժամանակ գործածական պարսից, յունաց և ասորոց գիրը։ Հայագէտները, մանաւորապէս Էմինը և Լանգլուան, փորձել են նաև որոշելու թէ որոնք էին դանիէլեան այբուբենի տառերն և որոնք մեսրոպեան։ Դորա համար նշանակութիւն ունեցաւ Վարդան պատմագրի վկայութիւնն, որով հին այբուբենը բաղկացած էր 22 տառերից և Մեսրոպն աւելացրեց 14 տառ...» Այսպա համեմատելով Հայոց ու յունաց այբուբենների շարայարութիւնն, այն եզրակացութեան է գալիս որ Դանիէլեան այբուբենը կազմուել է յունական այբուբենից։ Այս եզրակացութիւնից յետոյ շարունակում է պրօֆ. Հիւբշմանը. «Որ պարսից (պահլաւական) այբուբենը չէ կազմում Դանիէլեան այբուբենի հիմքը, կարելի է ընդունել հէնց նորա համար, որ այդ այբուբենը 22 տառ չունէր։ Արամայական այբուբեններից, ասորականը՝ 22 տառ ունի, որ աւելի մեծ նշանակութիւն է ստանում, որովհետև այդ Դանիէլն ասորի է կոչւում։ սակայն համեմատելով Հայոց և յունաց այբուբենն ասորականի հետ... հակառակ պրոֆ. Միւլլերի գալիս ենք այն եզրակացութեան, որ Հայոց այբուբենը կազմուել է ըստ յունական օրինակի. նոյն իսկ ձայնաւոր տառերն առնուած են յունաց այբեբենից—բացի «ը»—Մեսրոպից առաջ»։ [36])

[36]) տես. H. Hübschmann: Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen. տպուած է Zeitschrift d. d. morg. Gesellschaft, Հատ. 30 (1876) էջ 62—64.

Մի այլ գերմանացի հեղինակ խօսելով Հայոց գրի մասին՝ ասում է հետևեալը. „Դանիէլեան կոչուած այբուբենը կազմուած

25) Գ ա բ դ հ ա ո ւ զ է ն ը «Հայոց գրի յունական ծագման մասին» վերնագրով մի յօդուածով կամենում է ապացուցանել, որ մեր այբուբենը ծագում է անմիջապէս յունաց այբուբենից։ Նա ասում է. «Մովսէս Խորենացին պատմում է՝ թէ ինչ դժուարութիւններով սբ. Մեսրոպն (400 թ. (?) Քրիստոսից յետոյ) իւր հայրենակիցների համար մի այբուբեն գտաւ և վերջը հրամանաւն Ստուճոյ «Հայոց տառերը ձևակերպեց ըստ օրինակի յունաց տառերի» [37]. այս այբուբենը սովորացրեց նա յետոյ վրաց և Աղուանից ժողովրդին։ Արտաքին հանգամանքները մեծ հաւանականութիւն են տալիս՝ Հայոց այբուբենի յունաց գրից ծագելուն։ Հայաստանն, որ ի վաղուց հետէ իւր արևելեան և արևմտեան դրացիների կռուածաղիկն էր, քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ բացառապէս յենուած էր յունա-հռովմէական քաղաքակրթութեան վերայ և չորրորդ դարու վերջը փորձեց Հռովմի դաշնակիցը մնալու, չնայելով հռովմայեցւոց կայսրների անպիտան վարմանց և անհաւատարմութեան։ Ուրեմն երբ այս ժամանակ մի քրիստոնեայ աբեղայ կամենում էր իւր ժողովրդին մի այբուբեն տալ, պէտք է ամենից առաջ իւր եկեղեցւոյ գիրն աչքի առաջ ունենար

էր ասորականի ձևով, սակայն ասորական 22 տառից 5 բաց թողնելով՝ առել էր միայն 17, վասն զի այդ 5 տառերը գոյութիւն չունէին հայոց լեզուի մէջ. այսպիսով հին այբուբենը բաղկացած էր միայն 17 տառերից և Մեսրոպն աւելացնելով 19 տառ՝ ընդամենն եղաւ 36՚՚. այս հատուածի ազբիւրը չենք արձանագրել որովհետև այս կարծիքը նոր բան չէ, այլ առնուած է մեր արդէն յիշած ,,ոսկեփորիկ՚՚ կոչուած գրուածքից։

[37]) ,,Die armenischen charaktere nach dem Muster der griechischen Schriftbezeichnung formte՚՚. Ա յս չակերտներով անջատուած նախադասութիւնը Գարդհաուզէնը յառաջ է բերում իբրև թարգմանութիւն Խորենացու հետևեալ նախադասութեան. ,,փոխադրելով զՀայերէն աթուրեայն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հելլենացւոց՚՚ — տես. Մ. Խ. գիրք III. գլխ. ծգ. էջ 371.— որ սխալ է։

և այդ գիրն յունականն էր։ [38])։(?) Սակայն այսօր հակառակ կարծիքն է տիրող հանգիսացած»։ [39]) Ա յս պ ա Գ ա ր դ հ ա ո ւ զ է ն ը յառաջ է բերում Հայոց այբուբենի այն 22 տառերի համեմատութիւնը յունաց տառերի հետ, որոնց պրօֆ. Հիւբշմանը Դանիէլեան այբուբենին էր յատկացրել։

26) «Ընդհանուր գերմանական ռէալ-Էնցիկլօպեդիայի» մէջ Հայոց գրի մասին գտնում ենք հետևեալն. «ընդհանրապէս Հայոց գրի գտնողը համարւում է Մեսրոպը, որ Սահակ Մեծի հետ Հայոց գրականութեան հիմնադիրն է հանդիսանում։ Սակայն աւելի ճիշտ հետազօտութիւններն ապացուցանում են, որ Հայերն արդէն վաղ ժամանակներում մի այբուբեն ունէին, որ առնուած էր սեմիտականից և 22 տառից էր բաղկացած, սակայն, որովհետև այլևս չէր բաւականացնում Հայոց լեզուի պահանջը, հետզհետէ մոռացուեցաւ։ Մեսրոպն այս այբուբենը գտաւ ասորի եպիսկոպոս Դանիէլի մօտ, կատարելագործեց համաձայն Հայկական հնչմանց պահանջին. գուցէ և գեղեցկացրեց Հռուփանոս գեղեցկագրի—Kalligraph—օժանդակութեամբ և շարայարեց ըստ յունական այբուբենի։ Սահակը նոյնպէս գործակից էր և երկուսը տարածեցին այդ նոր այբուբենն՝ երկրի բոլոր մասերում ուսումնարանները հիմնարկելով։ Հայոց գրի այս գիւտը, կամ աւելի լաւ է ասել կատարելագործումը տեղի ունեցաւ ոչ թէ 406 թ., ինչպէս ստացել է ընդհանուր կարծիք, այլ 406—410 թ. (!)»։ [40])

27) Պ ր օ ֆ. Կ. Կ ո խ ն — իւր «Ձանապարհորդութեան մէջ

[38]) Որպէս զի մեր հարցական նշանը սխալ չհասկացուի, ասենք՝ որ այն ժամանակ մեր եկեղեցու գիրը միայն յունարէնը չէր, այլ մեծաւ մասամբ ասորոց գիրը։

[39]) տես. V. Gardthausen: Ueber den griechischen Ursprung der armenischen Schrift. տպուած է Zeitschrift d. d. m. Gesellschaft. հատ. 30 (1876). էջ 74.

[40]) տես. Allgemeine deutsche Real-Fncyklopädie etc. Conversations—Lexikon. Լայպցիգ 1864. 11-րդ հրատ. հ. II. էջ 127.

խօսելով «Հացիկ» գիւղի մասին՝ ասում է հետևեալը. «Այս գիւղում ծնուեցաւ Հայոց և վրաց այբուբենի գտնող Մեսրոպն—առաջինի գիւտը պէտք է տեղի ունեցած լինի 406 թ.—։ Մինչ այն ժամանակ հայերը գործ էին դրել ասորոց և յունաց գիրը։ Բայց որովհետև այդ երկուսն էլ չէին բաւականանում Հայոց հնչիւնների համար և պարսից տիրապետութեան ժամանակ յունաց հետ յարաբերութիւն ունենալն արգելուած էր հայերին, Մեսրոպը Հայոց լեզուի համար գտաւ 36 տառեր, որի վերայ յետոյ—խաչակրաց արշաւանքի ժամանակ—երկուսն էլ աւելացան և այժմեան այբուբենը բաղկացած է 38 տառերից։ Սակայն աւելի հաւանական է ըստ պրօֆ. Պետերմանի կարծեաց, որ հայերն արդէն իւրեանց սեպհական գիրն ունէին և Մեսրոպը միայն ընդարձակեց այդ գիրը»։ [41])

28) Հ. Պ ե տ ե ր մ ա ն ը խօսելով Հայոց գրականութեան մասին՝ շարունակում է. «Հայոց տառերի գիւտը վերագրում են Մեսրոպին, սակայն նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ նա ոչ թէ ամբողջ այբուբենն է գտել կամ կազմել, այլ մի հին, վաղուց մոռացուած այբուբենը վերականգնել, կատարելագործել և ամբողջ երկրի մէջ տարածել...» [42]) Մի այլ տեղ խօսելով Մեսրոպի մասին՝ ասում է հետևեալը. «Մեսրոպի ներմուծած այբուբենը բաղկացած է 36 տառերից և լիովին յարմարուում է Հայոց լեզուին, շարայարուած է ըստ յունաց այբուբենական կարգի և Հայոց լեզուին յատուկ հնչիւնները տեղաւորուած են դոցա մէջտեղերն. գրելու ուղղութիւնն այլ է քան միւս արևելեան այբուբեններինը—ձախից աջ. իւրաքանչիւր տառի ձևն և անունն առնուած է

[41]) Տես. Professor Dr. K. Koch: Wanderungen im Oriente etc. Հատ. II. էջ 405—406.

[42]) Տես. H. Petermann'ի յօդուածը Real-Encyklopädie für protestantische Theologie und Kirche von Herzog und Plitt'ի մէջ. 2 Auflage. Լայպցիգ 1877. Հատ. I. էջ 666.

յունական օրինակից. այբ—Ալֆա. բեն—Բեթա. գիմ—գամա և այլն»։ [43])

29) Պ ա ո ւ լ դ ը Լ ա գ ա ր դ Հայագէտ պրօֆ. նոյնպէս ընդունելով, որ Հայոց այբուբենի հիմքը յունականն է կազմում, [44]) շարունակում է. «Հայոց այբուբենի գտնողներն (!) ուսել են Ալէքսանդրիայում(!!), ուստի այդ այբուբենի չորս տառերի ձևերն առնուած են խըզպտական այբուբենից—Հ. ձ. ճ. վ—կարելի էր նոյնպէս խ և չ տառերը խըզպտականից ծագած համարել»։ [45])

30) Գիտնական Հայր Բ ա ր ս ե ղ Ս ա ր գ ս ե ա ն ի կարծիքով սբ. Մեսրոպը «առեալ ի միասին զպարսկերէն, զյունարէն և զասորերէն այբուբենս, նորակերտել է մի այլ այբուբեն»։ [46])

[43]) Նոյնը. Հատոր IX. էջ 617.

[44]) Տես. Paul de Lagard. Gesammelte Abhandlungen—Լայպցիգ 1866. յառաջաբան էջ IX.

[45]) Տես. P. de Lagard: Նոյնն, էջ X.

[46]) Տես. „Բազմավէպ" 1889 թ. № 1. „տեսութիւն տառադարձութեան խնդրոյն և Հայերէն նշանագրոց վրայ"

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՀԱՅՈՑ ԳՐԻ ԾԱԳՈՒՄԸ,

ԿԱՄ ԹԷ

ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՅԱՌԱՋԱՑԵԼ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՏԱՌԵՐԸ։

Եւրոպական գիտնականների այդ մասին յայտնած տարբեր կարծիքների պատճառները. հայոց գիրը պատկանում է սեմիտական ընտանիքին. գիրն ենթարկուում է փոփոխութեանց. հայոց սահմանակից ազգերի գիրը. սեմիտական ո՛ր գրից է ծագում հայոց այբուբենը. համեմատութիւն հայոց այբուբենի՝ փհլևիկեան, հին երբայական, արամայական եւ պալմիրական տառերի հետ. Մեսրոպեան 14 տառերի ծագումը. հայոց յարաբերութիւնը փհլևիկեցիների եւ ասորա-քաղդէացիների հետ. կրօնը, լեզուն, վաճառականութիւնը եւ քաղաքական դրութիւնն իրրեւ միջոց այդ հաղորդակցութեան. հայոց հին այբուբենի տառերը վերցուած են փհլևիկեան այբուբենից։



Տասական գիտնականների այս բոլոր միմեանցից տարբեր կարծիքներն իւրեանց պատճառներն ունին. սոցանից մի քանիսը միայն Խորենացու հետ ծանօթ լինելով՝ նորա ասածներն են յառաջ բերում և իւրեանց կարծիքները յայտնում. միւսները բոլորովին ծանօթ չեն հայոց գրականութեան հետ և ենթադրութիւններ են անում. երրորդ խումբը ծանօթ է

մեր գրականութեան հետ, սակայն մանրամասն չէ ուսումնասիրել խնդիրը. իսկ ընդհանրապէս առած համարեա բոլորըն էլ—բացի մի քանիսից—միայն կարծիքներ են յայտնում, առանց իւրեանց ասածը փաստերով ապացուցանելու։ Անհրաժեշտ աշխատանք կը լինէր, առանց փաստերի յառաջ բերած այս տարբեր կարծիքները մի առ մի հերքել—Ցրդ. Միւլլերի և Դարդհաուզէնի յառաջ բերած ապացոյցներն ի նկատի կ՚առնենք տառերի համեմատութեան ժամանակ—ուստի և յառաջ ենք բերում այդ կարծիքների հաւաքածուն, որ կարելի է հինգ մասի բաժանել։

ա) Մերժում են այն իրողութիւնն, որ Հայերը Մեսրոպից առաջ սեպհական գիր ունէին—Զամչեան, Նոյման, Վինդիշման, Ֆլօրիվալ, Բիւտներ և այլն։

բ) Չեն ասում թէ ո՞րտեղից է ծագել հայոց գիրը — Իխճիճեան, Էմին, Վալ և այլն։

գ) Կարծում են որ հայոց այբուբենը ծագել է արամայականից—Պատկանեան, Դիւլօրիէ, Ցրդ. Միւլլէր և այլն։

դ) Զենդից—Կոպպ, Բիւտներ, Բօրէ, Լընօրման, Սէն-Մարտէն և այլն։

ե) Յունաց այբուբենից—Գատերեր, Շրեօդեր, Ռոմմել, Հիւբշման, Դարդհաուզէն և այլն։

Որ Հայերը Մեսրոպից առաջ գիր են ունեցել, բաւականին ընդարձակ փաստերով ցոյց տուինք նախընթաց հատուածների մէջ, ուստի այդ մասին այլ ևս կարևոր չէ խօսել։ Հայերէն տառերի և հին պարսկականի—զենդի—մէջ եղած նմանութիւնը բոլորովին ժխտել անկարելի է, վասն զի այդ երկու այբուբենների մէջ ևս կան տառեր, որոնք թէ իւրեանց ձևով և թէ անուամբ մի փոքր նմանութիւն ունին միմեանց հետ [1]։

---

[1] Համեմատութեան ժամանակ պէտք է տառերը շրջել, վասն զի պարսիկները գրում էին—և գրում են—աջից՝ ձախ, իսկ մենք գրում ենք ձախից՝ աջ։

Համարեա նոյն յարաբերութեան մէջ է գտանւում հայոց այբուբենը յունաց տառերի հետ—այստեղ հարկ չկայ ի հարկէ տառերը շրջելու—: Սակայն ընդունել, որ հայոց տառերն ուղղակի ծագում են պարսկականից կամ յունականից, դեռահաս վճիռ կլինէր: Այն գիտնականները, որոնք ընդունում են, որ հայոց այբուբենը ծագել է յունականից, միշտ խառնում են հայոց հին այբուբենը Մեսրոպեան այբուբենի հետ. դոքա իբր ապացոյց իւրեանց փաստաբանութեան յառաջ են բերում այն իրողութիւնն, որ հայոց այբուբենի շարահիւսութիւնը, ձայնաւոր հնչիւններից մի քանիսը և մի քանի տառերի ձևերն առնուած են յունաց այբուբենից. դոքա չգիտեն, կամ թէ չեն ուզում գիտենալ, որ հայոց հին այբուբենն էր, որ սբ. Մեսրոպը կատարելագործեց և որչափ կարելի էր նմանեցրեց յունականին. այդ չէ նշանակում, որ հայոց հին այբուբենը նոյնն էր, ինչ որ յունականն—ինչպէս որ կարծում են Հիւբշմանը և Գարդհաուզէնը—: Մեսրոպեան այբուբենը խառնուրդ է հայոց հին այբուբենի տառերի և Մեսրոպից աւելացրած նշանների, ուստի առաջ պէտք է որոշել թէ որ տառերն աւելացրեց սբ. Մեսրոպը և որոնք էին հին այբուբենի տառերը. սորա համար առաջ պէտք է զբաղուել այն խնդրով թէ հին տառերն որտեղից կարող էին ծագել. և ոչ թէ ուղղակի յունաց այբուբենը վերցնելով ասել՝ թէ այն տառերն, որոնք չկան սորա մէջ, գտաւ սբ. Մեսրոպը, իսկ մնացեալն էր հայոց հին այբուբենը [2]: Հայոց այբուբենի շարահիւսութիւնն ինչ յարաբերութիւն որ ունի յունաց այբուբենի հետ, համարեա և միևնոյն յարաբերութեան մէջ է գտանւում—բացի մի երկու տառից—և լատինական այբուբենի հետ. մթէ այստեղից կարելի է եզրակացնել, որ հայոց այբուբենը ծագում է լատինականից:

---

[2]) Այդպէս են վարւում պրօֆ. Հիւբշմանը և Գարդհաուզէնը մեր արդէն յիշած աշխատութեանց մէջ:

Այլերէն հին տառերը պատկանում են սեմիտական մեծ ընտանիքին և ունին իւրեանց բոլոր ազգակիցների հետ մի որ և է նմանութիւն, թէ ձևի, թէ հնչման և թէ շարահիւսութեան կողմից. իսկ սեմիտական ընտանիքին պատկանող բոլոր այբուբեններն [3]) իւրեանց սկզբնական ծագումն առնում են Փիւնիկեան տառերից, սակայն ով կարող է պահանջել, որ այսօր Հռովմէական տառերն անպատճառ նման լինին Փիւնիկեան այբուբենին:

Ինչպէս որ Կոպլը գեղեցիկ կերպիւ նկատում է. «գրերը մի տեսակ նմանութիւն ունին բոյսերի հետ, վասն զի կլիման և երկիրը փոխադրութեան ժամանակ՝ դոցա վերայ ևս ազդում են» [4]):

Սովորութիւնները, ազգային գաղափարները, լեզուն և մինչև անգամ սահմանակից ազգերի ազդեցութիւնն օժանդակում են այդ փոփոխութեան:

Եթէ գրերը նոյն իսկ իւրեանց հայրենիքում ժամանակի հետ փոփոխութեան են ենթարկւում, որչափ առաւել ևս պէտք է տարբերուին միմեանցից դոցա սերունդները, որ արդէն հեռացել են իւրեանց հայրենի տնից և իւրաքանչիւրն այլ ճանապարհով է յառաջ ընթանում: Մի ընտանեաց պատկանող գրերի միմեանց հետ համեմատութիւնը դժուարացնում է նաև այբուբենների դասակարգութիւնը կամ շարահիւսութիւնն, որ միշտ փոփոխութեան է ենթարկւում՝ որոշ տառերի աւելանալով կամ պակասելով. սակայն այդ հանգամանքն ևս թոյլ չէ տալիս մի որ և է այբուբենի սկզբնական ծագումը բոլորովին ժխտելու: Քրիստոնեայ ասորական գիրը,

---

[3]) Եբրայական, արամայական—ասորա-բաբելական, յունական, հռովմէական, գոթական, պարսկական, արաբական, հնդկական, եթովպական և բոլոր եւրոպական ազգերի և այլն:

[4]) Տես. Kopp: Bilder und Schriften der vorzlit. Հատ II. էջ 105:

չնայելով յունական ձայնաւորների աւելացման, չէ դադարում դեռ և սեմիտական լինելուց [5]։

Մի որ և է ազգի գրի հետազօտութիւնն աւելի կատարեալ կլինի, երբ աչքի առաջ ունենանք այդ ազգի դրացի և սահմանակից ժողովրդեան գործածած գրի տեսակները։ Հետևելով այս սկզբունքին՝ մի համառօտ ակնարկ ձգենք՝ հայ ժողովրդեան հետ յարաբերութիւն ունեցող և Հայաստանի սահմանակից ազգերի գրերի վերայ։ Այդ ազգերի թլուզում առաջին տեղը բռնում են՝ արամայեցիք—ասորա-բաբելացիք—յոյները և պարսիկները. յայտնի է նոյնպէս, որ մեր նախնիքն ամենահին ժամանակներից վաճառականական յարաբերութեան մէջ են եղել Փիւնիկեցւոց հետ։

Սեմիտական գրի ամենահին յիշատակները են Փիւնիկեան տառերն, որոնք արդէն 900 տարի Քրիստոսից առաջ գործադրութեան մէջ էին [6]։ Գտանուած արձանագրութիւնները ցոյց են տալիս նոյնպէս, որ Փիւնիկեան տառերի գործադրութիւնը տևել է մինչև 150 թ. Քրիստոսից յետոյ։ Փիւնիկեան գրից յառաջանում են արամայական և պալմիրական տառերն, որոնց գոյութիւնը մինչև երկրորդ դարն ապացուցուած է գտանուած արձանագրութեանց շնորհիւ։

Պարսից գիրն, որ նոյնպէս ծագում է Փիւնիկեանից, բաժանւում է չորս տեսակի.

1) Զենդի, 2) պահլաւական, 3) ասորա-պարսկական կամ սասանական—և 4) արաբա-պարսկական։

---

[5]) Ութերորդ դարում Քրիստոսից յետոյ Թէոփիլոս Եդեսացին Հոմերի գրուածները թարգմանելով ասորերէն, յունաց ձայնաւորները մացնում է ասորոց գրի մէջ։ Տես Wahl: Allg. Gesch. etc. էջ 640. Նոյնպէս V. Langlois: Collection etc. յառաջարան էջ XV.

[6]) Նախկին Մովսէսացւոց երկրում գտանուած Մեշա արքայի արձանագրութիւնները—գրուած 9-րդ դարում Քրիստոսից առաջ—ամենահինները են, որ գրուած են Փիւնիկեան տառերով։

Թէև զենդի և պահլաւական տառերն իւրեանց ծագումն առնում են հին սեմիտականից, սակայն սասանականն առաւել մօտ է նոր-պալմիրականին, ասում է Կոպպը [7]) վկայ բերելով նաև Եպիփանոսի խօսքերը. Թէ պարսիկներից շատերը բացի պարսկականից գործ էին դնում նաև ասորականն, այնպէս, ինչպէս որ շատ ազգեր—թէև դոյանից իւրաքանչիւրն իւր յատուկ գիրն ունէր—գործ էին դնում յունաց տառերը. պարսիկներից շատերն էս գործ էին դնում նա մանաւանդ պալմիրական տառերը։ Այս գործածութեան ժամանակ, աւելացնում է Կոպպը, կարող էին պալմիրականի մէջ պարսկական տառեր սպրդել և այդպիսով ահա յառաջացել է սասանական այբուբենը։ Հին արաբական գիրը պէտք է ծագած լինի մասամբ ասորականից և մասամբ պարսկականից և այս զարմանալի չէ, քանի որ նոյն իսկ պարսիկները բացի իւրեանց գրից, գործ էին դնում նոյնպէս ասորոց տառերը։ Այդ հին արաբականից հետզհետէ յառաջացել է այժմեան արաբականն, որ «Նեսխի» է կոչւում. ասում ենք հետզհետէ, վասն զի անհիմն է այն ընդհանրացած կարծիքն, որ իբրև թէ այդ տառերը գտել է մի անձն «Էմին Մօկլա» անուամբ։ Նոր տառերի հներից յառաջանալը կարելի է պարզ կերպիւ նկատել արձանների և յիշատակարանների վերայ։

Յունաց տառերը նոյնպէս ծագում են հին սեմիտականից. յունաց աւանդութիւնն այդ գիրը բերում է Փիւնիկեայից և այբուբենն էս հաստատում է այդ աւանդութեան ճշմարտութիւնը։ Հնդկա-Եւրոպական յոյների համար ի հարկէ դիւրին չէր լինի գործ դնել այդ բազաձայների այբուբենն, որ միայն սեմիտական լեզուների համար էր յարմարեցրած. ուստի և փիւնիկեան այբուբենի կիսաձայների տեղ, յոյները մտցնում են իւրեանց այբուբենի մէջ իւրեանց լեզուին

---

[7]) Տես. Kopp: Նոյնը. Հատ. II. էջ 286.

յատուկ ձայնաւորները։ Տառերի թիւն և շարահիւսութիւնը սկզբում մնում է նոյնը։ [8])

Յոյները սկզբում պահել են նաև սեմիտական գրի ուղղութիւնը, այսինքն աջից-ձախ. մի փոքր ժամանակից յետոյ ոմանք սկսում են ձախից աջ գրել և այդպիսով երկու ուղղութիւնները ևս միմեանց հետ խառնուելով յառաջ է գալիս այն օձապտոյտ ձևն—այսինքն առաջին տողն աջից-ձախ, երկրորդ տողը ձախից աջ և այդպէս շարունակ—որ գործածական էր Սօլօնի ժամանակ Ա֊թէնում և 6֊րդ դարում Քրիստոսից առաջ ամենատարածուած ձևն էր Յունաստանում։ Սակայն այդ ուղղութիւնն երկար չէ տևում և արդէն հինգերորդ դարում սովորական է դառնում ձախից աջ գրելը։ Ա֊հա այդ սկզբնական 22 տառերից բաղկացած այբուբենն երկար դարերի ընթացքում զանազան փոփոխութեանց ենթարկուելով՝ յառաջացել է այսօրուայ յունաց այբուբենն, որ յարաբերում է իւր սկզբնականին այնպէս, ինչպէս որ մեր այժմեան գործածական այբուբենը յարաբերում է Մեսրոպից առաջ գոյութիւն ունեցող հայոց հին այբուբենին։

Ա՛րդ, եթէ այս մեծ ազգերն, որ իւրեանց ժամանակի ամենաքաղաքակրթեալ ներկայացուցիչներն էին և մարդկութեան պատմութեան մէջ առաջին տեղն էին բռնում, իւրեանց տառերը փոխ են առել մի ուրիշից, քիչ հարկ կալ պնդելու, որ հայերն ևս,—որ դոյա հետ համեմատելով մի չնչին ազգ էին—դոյա հետ շփուելով դոյանից պէտք է ուսանէին տառերի գործածութեան արուեստն և դոյա գիրն իբր օրինակ ի նկատի ունենալով՝ կազմակերպէին սեպհական ազգային այբուբենը։

Դժբաղդաբար ցայժմ չէ գտանուել միտքէ արձանագրութիւն հայոց հին տառերով, որով կարելի լինէր մի գաղա-

[8]) տես. A. Kirchhoff: Studien zur Geschichte des griechischen Alphabets. էջ 157.

(VI.)

ԱՂՒՒԱԿ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԴՐԵՐԻ֊ԴԱՆԻԷԼԵԱՆ֊ԿՈՉՈՒԱԾ և ՍԵՄԻՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ԾԱԳԱԾ։

	Փիւնիկ։	Պալմիր։	Եբրայական	Պարսկ։	Հայկակ։
1	≠	𐡀	𐤀	𐎠	Ա
	Բաբէլկ։	Փիւնիկ։	Հին Եբրայական	Արամայկ	"
2	𐤁	𐡁	𐎢	𐎡	Բ
	Փիւնիկական		Հին Հրէակ։	Հին Պարսկ։	"
3	𐤂	𐡂	𐎣		Գ
	Բաբէլկ։	Փիւնիկ։	Հին Եբրայական	Պարսկ։	"
4	𐤃	𐡃	𐎤	𐎥	Դ
	Փիւնիկական		Հին Եբրայական	Պարսկ։	"
5	𐤄	𐡄	𐎦	𐎧	Ե
	Բաբէլկ։	Փիւնիկ։	Արամայ։	Պարսկ։	"
6	𐤆	𐡆	𐎩	𐎪	Զ
	Փիւնիկ։	Արամայ	Պարսկ։	Մասան։	"
7	𐤇	𐡇	𐎫	𐎬	Է
	Բաբէլկ։	Փիւնիկ։	Պալմիր։	Պարսկ։	"
8	𐤊	𐡊	𐎭	𐎮	Ը
	Փիւնիկ։	Պալմիր։	Պարսկ։	Եբրայկ։	"
9	𐤋	𐡋	𐎯	𐎰	Թ

	Փիւնիկ։	Հին Եբրայկ։	Պալմիր։	Պարսկ։	Հայկակ։
10	𐤉	𐡉	𐎱	𐎲	Ժ
	Փիւնիկ։	Արամայ։	Պալմիր։	Մասան։	"
11	𐤊	𐡊	𐎳	𐎴	Կ
	Բաբէլկ։	Փիւնիկ։	Հին Եբրայկ։	Արամակ	"
12	𐤋	𐡋	𐎵	𐎶	Լ
	Փիւնիկ։	Արամակ	Պալմիր։	Պարսկ։	"
13	𐤌	𐡌	𐎷	𐎸	Մ
	Բաբէլկ։	Փիւնիկական		Արամա։	"
14	𐤍	𐡍	𐎹	𐎺	Ն
	Փիւնիկ։	Արամակ	Պալմիր։	Պարսկ։	"
15	𐤎	𐡎	𐎻	𐎼	Ս
	Փիւնիկ	Պալմիր։	Պարսկ։	Արամայկ։	"
16	𐤏	𐡏	𐎽	𐎾	Ո
	Փիւնիկական		Պալմիրական		"
17	𐤐	𐡐	𐎿	𐏀	Պ
	Փիւնիկ։	Արամայ։	Պալմիր։	Եթովպկ։	"
18	𐤑	𐡑	𐏁	𐏂	Ջ

	Փիւնիկական	Արամայ։	Հին Եբրայական	Հայկակ
19	𐤒	𐡒	𐏃	Ր
	Հին Եբրայական	Փիւնիկական	Հին Պարսկակ	"
20	𐤓	𐡓	𐏄	Ռ
	Փիւնիկ։	Արամակ։	Պալմիր։	Մասան	"
21	𐤔	𐡔	𐏅	22	Շ
	Փիւնիկ։	Արամակ	Պարսկ։	Պալմիր։	"
22	𐤕	𐡕	𐏆	𐏇	Տ

վար կազմել թէ մօտաւորապէս ո՞ր ժամանակն են սկսել մեր նախնիքը սեմիտական տառագիրը գործ դնել· այդ ժամանակի յայտնուիլը կարող էր միայն պարզել ճշտութեամբ այն խընդիրը՝ թէ արդեօք հայերը սեմիտական ծագումն ունեցող ո՞ր գրի անմիջական ազդեցութեան ներքոյ կազմակերպեցին իւրեանց այբուբենն. արդեօք անմիջապէս Փիւնիկեցիներից առած—ինչպէս յոյներն, ասորա-բաբելացիք և այլն—թէ առաւել ուշ՝ ասորա-բաբելացիներից կամ յոյներից ընդունեցին: Մեզ մնում է միայն մեկ միջոց խնդիրը լուծելու համար. և այդ միջոցն է՝ տառերի ձևերի և անուանց համեմատութիւնը: [9])

Հայոց հին այբուբենի այս համեմատութեամբ մենք եկանք այն եզրակացութեան, որ

1) մեր այբուբենի տառերը ծագում են *անմիջապէս սեմիտական տառերից և ոչ յունաց այբուբենից* [10]).

2) սեմիտական ձևերի մէջ հայոց տառերն առաւել նըմանուում են փիւնիկեան տառերի ձևերին: Յառաջ քան այս երկրորդ եզրակացութեան մասին խօսելը, մի երկու խօսք

---

[9]) Հայոց հին այբուբենի 22 տառերի ձևերի մանրամասն համեմատութիւնը՝ փիւնիկեան, հին եբրայական, արամայական և պալմիրական տառերի հետ, տարաբախտաբար տպագրած ենք այս գրքի ծաւալից դուրս թողնել՝ Թիֆլիզի տպագրական արուեստի անկատարելութեան պատճառով: Գուցէ մեզ յաջողուի մեր աշխատութեան այդ հատուածն առանձին տպագրել տալ արտասահմանում: Առ այժմ տալիս ենք այդ համեմատութեան ընդհանուր ցանկը: Տես № VI.

[10]) Մեր առաջը դրուած են յունաց այբուբենի վաթսուն հին տեսակները—զանազան ժամանակներից և միմեանցից սակաւ տարբերութեամբ—սակայն դոքա համարեա թէ ոչինչ նմանութիւն չունին հայոց այբուբենի տառերի հետ: Այդ 60 տեսակները կարելի է տեսնել Kirchhoff Studien zur Geschichte des Griech. Alphabets. աշխատութեան յաւելուածների մէջ:

և ասենք ընդդէմ այն կասկածանաց, որ կարող էին յառաջանալ հետևեալ հարցումներից. ա. Ի՞նչպէս է պատահում, որ հայերը գրում են ձախից-աջ, այն ինչ յայտնի է, որ սեմիտական տառեր գործածող հին ազգերն ընդհակառակն աջից-ձախ են գրում։ Ինչից արդէն ասացինք, որ հայոց հին տառերով գրուած մի որ և է արձանագրութիւն կամ մագաղաթ չէ հասել մեր ձեռքն, ուստի ակնյայտնի է, որ մենք չենք կարող գիտենալ՝ թէ արդեօք մեր նախնիքն աջից-ձախ էին գրում, թէ ձախից-աջ։ Եթէ նոյն իսկ հին ժամանակը հայերը ձախից-աջ գրէին, այդ և ապացոյց չի կարող լինել, որ մեր տառերը սեմիտական ծագումն չունին, վասն զի արդէն յայտնի է յունաց տառերի սեմիտական լինելը, թէև նոքա և ձախից աջ են գրում։ Ուրովհետև մեզ յայտնի չէ, թէ արդեօք մեր նախնիքը հետևելով սեմիտական գրի ուղղութեան, աջից-ձախ էին գրում մինչև սբ. Մեսրոպի ժամանակը, թէ արդէն առաջուց սովորել էին ձախից-աջ գրել, ուստի և կարելի չէ որոշ ասել՝ թէ սեմիտական այն տառերն, որոնք մեր այբուբենի մէջ շրջած են հանդիսանում՝ սկզբից արդէն այդ ձևերն էին ընդունել, թէ սբ. Մեսրոպի միջնորդութեամբ այդ ձևակերպութիւնը ստացան։ Այս խնդրի որոշումը մնում է ապագային, երբ յերևան կգան նախաքրիստոնէական ժամանակի հայկական գրաւոր յիշատակարաններ։ Մեզ հաւանական է թւում, որ *մեր նախնիքը պահած լինէին սեմիտական գրի ուղիղ ձևերն եւ գրելու ուղղութիւնը մինչեւ սբ. Մեսրոպ։*

ը. Ինչո՞ւ մեր այբուբենը տարբեր կերպիւ է շարահիւսուած կամ դասաւորուած քան սեմիտականը։ Այդ մասին արդէն խօսել ենք. միայն հայոց այբուբենը չէ, որ տարբեր շարահիւսութիւն ունի. սակայն մենք այդ և այնպէս չգիտենք, թէ արդեօք հայոց հին այբուբենն ինչպէս էր դասաւորուած. մեր ձեռքն է միայն սբ. Մեսրոպի կատարելագործած և աւելացրած այբուբենը. այս այբուբենով չի կարելի դատել

հինը—ինչպէս որ սխալմամբ անում են Հիւբշմանն և Գարդհաուզենը—։ Սբ. Մեսրոպը հին այբուբենը կատարելագործելով՝ փոխեց նաև դրա շարահիւսութիւնը և մօտեցրեց յունաց այբուբենի դասաւորութեան. ահա այս կէտն է գլխաւորապէս ուշադրութեանց, որոնք կարծում են թէ հայոց այբուբենը ծագել է անմիջապէս յունաց այբուբենից։

գ. Եթէ նոյն իսկ հայոց տառերի ձևերն ուղղակի ճըշտօրէն չհամապատասխանէին սեմիտական ձևերին, այնուամենայնիւ չէր կարելի մերժել, առանց այլևայլութեան, դոյա նոյն ծագումն ունենալը, վասն զի բազմաթիւ օրինակներից յայտնի է, որ երբ մի ազգ իւր այբուբենն առնում է մի այլ ազգից, անպայման չէ ընդունում այդ այբուբենի տառերի թիւը, շարահիւսութիւնը և ձևերն, այլ ենթարկում է փոփոխութեան՝ յարմարեցնելով իւր լեզուին և ճաշակին, թէև հին տառերի գլխաւոր յատկութիւններն ու տիպերը մնում են միշտ [11]։

---

[11]) Նոյն իսկ այն կարելիութիւնն, որ մի ազգ կարող է գրի արուեստն ընդունել մի այլ ազգից՝ առանց դրա այբուբենի տառերի ձևերն ընդունելու, այսօր մի ապացուցուած իրողութիւն է։ Նոյն իսկ այս դարուս երկրորդ կիսին արևմտեան Աֆրիկայի մի նեգր դասաւորեց մի այբուբեն, որի գործադրութիւնը տեսնելով եւրոպացիք հարցնում են՝ թէ ի՞նչպէս գտաւ այս տառերը. նեգրը պատասխանում է, որ երազի մէջ մի պատուաբժան սպիտակ և երկար ղգեստով մարդ իրեն տուեց մի գիրք և սովորեցրեց՝ թէ ինչպէս պէտք է գրել։ Պարզ է, որ մի եւրոպացի միսիոներ պէտք է լինէր այդ երազի մէջ տեսած մարդն և նորան ուսուցած լատիներէն տառերն։ Այդ նեգրն աչքի առաջ ունենալով լատինական տառերն՝ ինքնահնար կերպիւ դասաւորել էր 162 ձևերից բաղկացած մի այբուբեն, որոնցից օաաերը ներկայացնում էին ոչ թէ մի հնչիւն, այլ մի վանկ. շրինակի համար Ի-մբէ, N-պօ և այլն։ Տես. Tyler: Forschungen über die Urgeschichte· գլխ 5. էջ 132

Նոյն ձևով պէտք է յառաջացած լինի Հայոց հին այբուբենը փիւնիկեան այբուբենից՝ կամ անմիջապէս կամ արամայեցիների միջնորդութեամբ։ Գրութեան արուեստի ուսանդումն չէ նշանակում մանրամասն ու առանձին-առանձին նշանների փոխառութիւն. ոչ թէ միայն Հայոց այբուբենն, այլ նաև բոլոր սեմիտական ծագումն ունեցող այբուբենները քիչ թէ շատ տարբերւում են փիւնիկեանից։

Հայոց հին այբուբենը տարբերւում է փիւնիկեանից նաև նորանով, որ պարունակում է իւր մէջ երեք ձայնաւորներ. այն ինչ սեմիտական այբուբենն ունի միայն կիսաձայնները. ա՛րդ, ո՛րտեղից է յառաջանում այդ տարբերութիւնը. սեմիտական լեզուների մէջ ձայնաւորն երկրորդական նշանակութիւն ունի. ոչ մի բառ չէ սկսւում ձայնաւորով [12]. ուստի և պարզ է, որ հարկ չկար ձայնաւորների համար առանձին տառեր հնարել [13], իսկ հնդկա-եւրոպական լեզուների մէջ, ուստի և Հայոց լեզուի մէջ, ձայնաւորները մեծ դեր են խաղում և բազմաթիւ բառեր ևս ձայնաւորներով են սկսւում։

Հայերը փիւնիկեցիներից վերցնելով իւրեանց այբուբենը, հարկաւ առանց ձայնաւորի չէին կարող գործ դնել. այդ

[12]) Տես. Ferd. Hitzig, նոյնն. էջ 10։

[13]) Հասարակ վանկի բաժանումը մի բաղաձայնի և ձայնաւորի վերայ միայն արհեստական է, երբ երկուսն ևս ինքնուրոյն պէտք է նկատուին։ Ինովթեան մէջ բաղաձայնն և ձայնաւորն այնպէս են միմեանց որոշում, որ ականջի համար մի բոլորովին անբաժանելի միութիւն են կազմում։ Եթէ գիրն ևս այս բնական յատկութիւնը պէտք է արտայայտէ, այն ժամանակ առաւել ճիշտ է, ինչպէս որ շատ ասիական այբուբեններն են անում, ձայնաւորներն ո՛չ թէ իբր առանձին տառեր, այլ իբրև բաղաձայնների որոշումներ կամ փոփոխութիւններ գործ դնել։ Իսկապէս առած՝ ձայնաւորներն ևս միայն չեն կարող արտասանուիլ. դոցա կազմակերպող օդի հոսանքը պէտք է յարակցուած լինի դորան լսելի անող հարուածով կամ արտաշնչմամբ։ Տես. W. Humboldt: Kavi Sprache etc. էջ LXXXV.

պատճառաւ և փիւնիկեան «ալէփ», «նէ» և «այն» կիսաձայններին տալիս են ձայնաւորների նշանակութիւն. կարող է պատահել, որ այս փոփոխութիւնն իսկոյն չեղաւ, այլ տեղի ունեցաւ ժամանակի ընթացքում և հետզհետէ։ Եւ այդ փիւնիկեան և մասամբ փոփոխուած այբուբենը դարձաւ Հայոց ազգային այբուբենը մինչև քրիստոնէութեան մուտ գործելը Հայաստան. ապա քրիստոնէութեան տարածման համար վնասակար համարուելով դուրս եկաւ գործածութիւնից և մի դարու ընթացքում մոռացութեան տրուեցաւ, մինչև որ չորրորդ դարու վերջին հայ սերունդը զգալով ազգային այբուբենի կարևորութիւնը և անհրաժեշտութիւնը՝ սկսեց որոնել և գտնելով ազգային հին սեպհականութիւնն, իւր մեծ ներկայացուցիչների միջնորդութեամբ և օտար գիտնականաց օժանդակութեամբ վերականգնեց և կատարելագործեց, վասն զի ժամանակի ընթացքում Հայոց լեզուն ևս կատարելագործուել էր և հին գիրը չէր համապատասխանում լեզուի բոլոր հնչիւններին։ Սբ. Մեսրոպը հին այբուբենի վերայ աւելացրեց 14 նոր տառ, փոփոխեց հին այբուբենի շարահիւսութիւնն և մօտեցրեց յունաց այբուբենին ըստ արտաքին ձևերի։ Տասն և չորս նոր աւելացրած տառերի ձևերը սբ. Մեսրոպն առաւ, մեծաւ մասամբ, արդէն եղած 22 ձևերից՝ զանազան աննշան փոփոխութիւններ անելով՝ հարկաւ նաև աչքի առաջ ունենալով դրացի ազգերի տառերի ձևերը։ Այդ 14 տառերից չորսը ձայնաւորներ էին և տասը բաղաձայն։

Այդ 14 տառերի ձևերից միայն երկուսն առնուած են երևում ուղղակի յունական ձևերից, իսկ մնացեալ 12ի ձևերն առնուած են Հայոց հին այբուբենի տառերի ձևերից։

Մեսրոպեան տառերի մէջ միայն և  [14]) տառերի

[14]) «Ճ» տառը Կոպպն իրաւամբ համեմատում է խալտական „“—ժանժախ հետ. տես. Kopp: նոյնն. էջ 365. II.

ձևերն օտար են հայոց հին սեմիտական այբուբենի համար, ուստի և պէտք է առնուած լինեն յունական Φ և X տառերի ձևերից։ Միւս 12 տառերի ձևերն արդէն պարունակւում էին հին այբուբենի մէջ և դոցա կազմակերպութիւնը պէտք է հետևեալ կերպիւ յառաջացած լինի. հայոց հին այբուբենի մէջ ամենապարզ ձևերից մէկն է Լ որից և օգուտ է քաղել սբ. Մեսրոպը։ Այդ տառից են յառաջացել մեսրոպեան

1 2 3 4 5

հինգ ձևերն. Ը Ղ Ի Ւ Է. առաջին և երկրորդ ձևերը պահպանելով ներքևի գիծը, միև նոյն տեսակի մի գիծ միացրել են իւրեանց վերևի ծայրերին՝ մէկը դէպի աջ, միւսը դէպի ձախ. երրորդ և չորրորդ ձևերը յառաջացել են «Լիւնի» ներքևի գիծը բարձրացնելով մինչև մէջ տեղը. հինգերորդ ձևը պահպանելով ներքևի գիծը՝ ստացել է մի նման գիծ իւր վերևի ծայրից մի փոքր ցած։

Հին այբուբենի «Չ» տառից յառաջացել են «Հ» և «Յ» տառերն. առաջին դէպքում վերևի շրջագիծը փոքրացնելով, իսկ երկրորդ դէպքում բոլորովին վերցնելով։ Միևնոյն «Չ»ից կամ «Շ» կազմուել են «Չ», «Ձ», «Ճ» և «Ծ» երկրորդական գծերի փոփոխութեամբ և շրջանաձև գծի տեղափոխութեամբ։ Եւ վերջապէս Մեսրոպեան «Ո» ձևը նոյնն է, ինչ որ հին այբուբենի «Ո» տառը. միայն երկրորդ գծի կողքին աւելացրած է «լիւն» հիմնական ձևի ներքևի գիծը։

Մեսրոպեան այբուբենի վերայ աւելացան 12-րդ դարում «օ» և «ֆ» տառերը։

Համեմատելով մեր հին այբուբենը սեմիտական հին այբուբենների հետ, տեսանք որ հայոց այբուբենի տառերն ամենից առաւել նման են փիւնիկեան և ասպա արամայական՝ այսինքն ասորա-բաբելական այբուբենի տառերին։ Այս հանգամանքը պարզ ապացոյց է, որ մեր նախնիքն իւրեանց այբուբենն առել են անմիջապէս փիւնիկեցիներից կամ արա-

մայեցիների միջնորդութեամբ։ Այս իրողութիւնը շատ բնական է թուում մեզ, ի նկատի ունենալով այն յարաբերութիւնն, որ հայերն ունեցել են նախկին դարերում փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ։ Այս յարաբերութեան պատճառը կամ միջնորդն եղել է՝ կրօնը, վաճառականութիւնն և քաղաքական դրութիւնը։ Թէ ինչ մեծ կապ ունեն միմեանց հետ մի ազգի կրօնն և գիրն, արդէն տեսանք նախորդ հատուածների մէջ. եթէ մեզ ճիշտ և մանրամասն յայտնի լինէր մեր կռապաշտ նախնեաց կրօնի էութիւնն և պաշտած աստուածների անունները՝ դիւրութեամբ կարող էինք գտնել մեր հին գրի սկզբնաւորութիւնը դրանց մէջ։

Սակայն նոյն իսկ մեր գիտեցած հատ և կտոր տեղեկութիւններից յայտնի է, որ մեր կռապաշտ նախնեաց աստուածներից շատերը պատկանում էին փիւնիկեցւոց և արամայեցւոց դիւցաբանութեան։ Նախորդ հատուածներից մէկի մէջ խօսեցինք, որ երբ մի ազգ ենթարկուելով օտար քաղաքակրթութեան ազդեցութեան, նոր գաղափարներ է ընդունում, այդ գաղափարների հետ ընդունում է նաև դրանց նշանակութիւնն արտայայտող բառերն. որ մեր նախնիքն իւրեանց կրօնական գաղափարներից շատերը վերցրել են արամայեցիներից, ապացուցանում է նաև այն հանգամանքն, որ հայերէն «քուրմ» «քահանայ» բառերը ծագում են արամայական լեզուից [15]). ինչպէս որ մեր քրիստոնեայ նախնիքն իւրեանց նոր կրօնական գաղափարները յոյներից ստանալով, ընդունել են նաև այդ գաղափարներն արտայայտող յունարէն բառերը. ինչպէս օրինակի համար. եկեղեցի, պատրիարք, կաթուղիկոս, սաղմոս, կիւրակէ, Հեթանոս, եպիսկոպոս, երէց և այլն [16])։

---

[15]) Տես. Frd. Müller: Sitzugsberichte etc. Wien, Հատ. 41 էջ 12.։ Նոյնպէս Schröderi, նոյնն էջ 46։

[16]) Տես. Schröderi, նոյնն էջ 47.

Մեր և նոյնպէս օտար մատենագիրներից յայտնի է, որ Հայերը վաճառականական յարաբերութիւններ ունէին փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ: Մծբին [17]), Եդեսիա [18]) և այլ վաճառաշահ քաղաքներն, որ մեր մատենագիրները հայոց քաղաքներ են անուանում, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ սկզբնական փիւնիկեցւոց գաղթականութիւններ, որ

[17]) Nisibis կամ Nisibe է հայոց Մծբին. „Nisibe, wille fort ancienne au midi de Mardin, appelée en arménien Մծբին, en syriaque Netsybyn, en arab Nesybyn, en arménien vulgaire Նսեպին. Cette Wille qui existait probablement avant l'invasion d'Alexandre en Asie, fut appelée par les Macédoniens Antische de Mygdonie". տես. S. Martin: Memoires sur l'Arménie հատ. I. էջ 161.

«Նիսիբ—Մծբին—քաղաքը գտանւում է այն ճանապարհի միջավայրում, որ Հարաւից Նինուէ է տանում և այս դիրքով նոյն իսկ ասորական հարստութեան ժամանակ մեծ վաճառականական նշանակութիւն պէտք է ունեցած լինի. այստեղ էր պարթևների տէրութիւնից և ասիական արևմուտքից բերուող վաճառականական ապրանքների գլխաւոր կենդրոնատեղին» տես. Prof. Movers: Die Phönizier, հատ. III. մասն 1. էջ 250:

[18]) „Հարաւից դէպի Հիւսիս գտանուող Հին և իւր սրբութիւններով նշանաւոր Հանդիստացած Եդեսա քաղաքում ևս Հանդիպում ենք փիւնիկեան աստուածապաշտութեան: Յուլիանոս պատմագիրն, որ այստեղ օգուտ է քաղել փիլոից—որն ինչպէս երևում է, երկար զբաղուել է փիւնիկեան Կաօնոսի ուղևորութիւններով—Եդեսայի աստուածներին անուանում է փիւնիկեան և Եդեսան կոչում է «Ուրան»ից Հելիոսին—ըստ տեղական աղբիւրների, սա համապատասխանում է Բէլին—ընծայուած վայր, այսինքն՝ դիւցաբանօրէն խօսելով՝ Բէլն իւր ուղևորութեանց միջոցին հիմնում է այս քաղաքը: Ա՛յս արևի աստուած Բէլն՝ իբրև նոյն տեղի պահապան աստուած, նոյնն է, որին յոյներն «Եդեսացի» են կոչում և իբրև Հերակլէս ցոյց տալիս: Մենք այստեղ տեսնում ենք բոլորովին փիւնիկեան կրօնի Հայեցողութիւն, որ քաղաքի աստուած Մելկարթի և դիւցաբանական արևի Հերոս Հերակլէսի Հետ պաշտում էր նաև արևի աստուած «Թաալսամին»-ին: Տես. Movers, նոյնը, հատ. III. մասն I. էջ 250:

յետոյ մեր նախնեաց ձեռքն անցան: Որ Մծբինը—Հիւսիսային Միջագետքի ամենանշանաւոր վաճառաշահ կենդրոններից մէկը—Փիւնիկեցւոց գաղթականութիւն է եղել, հաստատում են նաև Փիլոի Սանխօնիաթոն գրուածքից մնացած հատուածները: Փիլոն խօսում է այդ գրուածքի մէջ այն սիւների մասին, որոնք Մծբինում էին գտնւում և որոնցից նոյնպէս առել էր քաղաքն իւր անունը:

Այս հատուածը գտնում ենք Սեբէոսի Բիւզանդացու մօտ. սոյն Բիւզանդացին յիշում է նոյնպէս, որ Ուրանիուսն իւր մի աշխատութեան մէջ—արաբական աշխարհագրութեան—Նիսիբ անունը համարում է փիւնիկեցւոց լեզուից ծագած՝ նոյնպէս ի նկատի ունենալով իբրև փիւնիկեցիների գաղթականութիւն:

«Նիսիբ» փիւնիկեցւոց լեզուով նշանակում է «սիւներ» [19]). այս բառն յաճախ կարդացւում է փիւնիկեան արձանագրութեանց մէջ և ոչ այլ ինչ է, եթէ ոչ փիւնիկեցիների պաշտամանարատքին նշան. այդ նշանները՝ սիւները գտանուելով և Մծբնում, ակնյայտնի է, որ դոցա կառուցել են Փիւնիկեցիները: Ո՛չ միայն Եդեսա, Մծբին և այլ նշանաւոր քաղաքներ արդիւնք էին Փիւնիկեցիների քաղաքակրթութեան, այլ նաև վերջը պարսից մայրաքաղաք դարձող «Կտեսիփոնը» կամ Հայերէն «Տիգրոնը» փիւնիկեցիների վաճառականութեան գլխաւոր կենդրոններից մէկն էր [20]):

Եթէ մի ակնարկ ձգենք Եփրատի և Տիգրիսի շրջակայքն ապրող ժողովրդների վաճառականական զարգացման և

[19]) Տես. Movers, նոյնն, հատ. II. մասն 2 163:

[20]) «Ա՛յն ճանապարհի վերայ, որ Տիգրիսի ափով դէպի պարսից ծոցն է ձգւում, եղէկիէլ մարգարէն յիշում է իբր փիւնիկեան վաճառականութեան կենդրոն նաև «Կալնէհ» և «Եդէն» քաղաքները. Կալնէհն ասորական ամենահին քաղաքներից մէկն էր և վերջը նշանաւոր Հանդիստացաւ իբր Կտեսիփոն: Տես. Movers, նոյնն, հատ. III. մասն 1. էջ 251:

ծաղկման վերայ, կտեսնենք, որ վաճառականական մեծ յարաբերութեանց առաջին պայմանը՝ ժողովրդի կենդրոնացումը մեծ քաղաքների մէջ, այստեղ առաւել վաղ էր տեղի ունեցել քան այլ ուրեք։ Անդադար գաղթող ցեղերը, գետի հոսանքին հետևելով՝ արդէն սկզբնական ժամանակներից Եփրատ և Տիգրիս գետերի պտղաբեր հովիտներն ընտրել էին իբրեանց հանգստութեան տեղ, որ ամենայն կողմից յարմարուում էր նոցա հովուական կեանքի հանգամանքներին։ Եւ այդպիսով ահա այս սեմիտական և արիական աշխարհների սահմանագլխի վերայ ժողովուում են տարբեր ազգայնութեանց պատկանող ժողովուրդներ, որոնք նա մանաւանդ հին Բաբելոնում, արդէն սկզբնական ժամանակներում միմեանց մօտ, սակայն իրաքանչիւրն առանձին կերպիւ, զարգանում և յառաջադիմում էին։ Հասկանալի է, որ ժողովրդների այդ միատեղ հաւաքումը պէտք է նպաստէր արհեստների զարգացման. իսկ երկրի յարմար դիրքն իւր կողմից առիթ պէտք է տար արտաքին աշխարհի հետ յարաբերութեան մէջ մտնելու։

Հայաստանից, Պարսկաստանից և առհասարակ արևելեան Ասիայից եկող բոլոր վաճառականական ճանապարհները հանդիպում են միմեանց այս երկրում։ Այս ճանապարհների մի մասն իւր վերջնակէտը գտնում էր պարսից ծոցում, որ իւր կողմից կազմում էր նաև սկզբնակէտն այն հաղորդակցութեանց ուղիների, որոնք հարաւային Արաբիայից և արևելեան Աֆրիկայից դէպ երկրի ներսերն էին տանում Եփրատի և Տիգրիսի վերայով կամ դոցա ափերով։ Նոյնպէս Միջերկրական ծովից, Եգիպտոսից և Փոքր Ասիայից տարածուող հին պատերազմական և վաճառականական ճանապարհներն անցնում էին այս երկրի միջից։ Ահա այս հանգամանքների շնորհիւ Տիգրիս և Եփրատ գետերի մէջ ներփակուած և դոցա շրջակայ երկիրներն, ամենահին ժամանակներից մինչև նորագոյն դարերը, ասիական ժողովրդների և վաճառականութեան կենդրոնատեղին էին։

Այս հանգամանքներից ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ինչ նշանակութիւն պէտք է ունենար Միջագետքը փիւնիկեցիների նման մի աշխարհահռչակ վաճառականական ժողովրդի համար։ Մեծ քաղաքների արհեստներով պարապող բնակիչներն արտադրում էին բազմաթիւ և բազմատեսակ վաճառականական իրեր փիւնիկեցիների համար, որոնք այդպիսի լաւ ապրանք և միևնոյն ժամանակ արժան գնով չէին կարող ստանալ իբրեանց սեպհական արհեստանոցներից։

Միւս կողմից Եփրատի շրջակաների մեծ քաղաքները ժողովատեղի էին այն ապրանքների համար, որոնք մասամբ ցամաքային ճանապարհով, մասամբ ծովային ուղիով պարսից ծոցի վերայով միջին և արևելեան Ասիայից էին բերուում։

Թէև փիւնիկեցիները նաև Արաբիայի վերայով ուղղակի կամ անուղղակի յարաբերութեան մէջ էին Հնդկաստանի և արևելեան Ասիայի հետ, սակայն այնուամենայնիւ այդ ծովային ուղիով վաճառականութիւնն այնչափ հին չէր, որչափ դէպի Միջագետք տանող կարաւանի հաղորդակցութիւնը։ Միջին դարերում ապրող մի մատենագրի նկատողութիւնն այդ երկու վաճառականական ճանապարհների մասին կարող ենք նաև հին դարերին վերագրել. այդ մատենագրի ասելով [21]՝ այն ապրանքներն, որոնք թեթև քաշ ունէին, սակայն թանկագին էին, Հնդկաստանից և Չինաստանից բերուում էին ցամաքային ճանապարհով և Միջագետքի վերայով դէպի Միջերկրական ծովն. իսկ այն ապրանքներն, որ արժանագին և ծանր քաշ ունէին, բերուում էին ծովային ճանապարհով և Արաբիայի վերայով, վասն զի ցամաքային ճանապարհածախսն և վճարելիք մաքսերը բաւականին թանկացնում էին ապրանքը։ Ուստի և նոյն իսկ հնագոյն ժամանակներում ամենաթանկագին իրերն, ինչպէս մետաքս, ծանրագին գործուածքներ և

---

[21]) Տես. Movers, նոյնը, Հատ. III. Մասն 1. էջ 240։

այլն Հնդկաստանից և Չինաստանից բերւում էին Միջագետքի վերայով։ Բայի դորանից փիւնիկեցիք բերում էին իւրեանց հետ դեպի Միջագետք և միջին Ասիայ նոյնպէս եւրոպական ապրանքներ, որոնցից ասիացիների համար մեծ նշանակութիւն ուներ ծիրանին, իբր իշխանների և արքաների գործածական հանդերձ. եգիպտական ապրանքներն Ասիայ էին գալիս նոյնպէս փիւնիկեցիների միջնորդութեամբ։ Այսպիսով Եփրատի շրջակայ երկիրները կազմում էին արևելեան և արևմտեան վաճառականութեան կենդրոնատեղին և Նինուէի ու Բաբելօնի և վերջը Բաղդադի, Բասրայի ու Մոսուլի անուննները մինչև 16-րդ դարու մատենագիրների և ճանապարհորդների համար զարմանքի առարկայ էին։

Աւելի քան երկնքի աստղերը, բազմաթիւ քան մորեխների խմբերն էին օտար վաճառականներն, որ ապրում էին հին Ասորեստանի մայրաքաղաք Նինուէում, ասում է Նաւում մարգարէն [22]։

Արդ ի նկատի ունենալով այս բոլոր հանգամանքներն, ինքն ըստ ինքեան հասկանալի չէ, որ հին աշխարհի կենդրոն կազմող այդ Միջագետքն անմիջապես շրջափող Հայաստանը չէր կարող առանձնացած մնալ և պէտք է մասնակցէր իւր դրացիների շարժողութեանց։

Հայաստանի պէս մի բերրի և պտղաբեր երկիր չէր արտադրում արդեօք իւր հում և անմշակ նիւթերն իւր փարթամ կեանք վարող դրացի մեծ քաղաքներին և չէր ընդունում այնտեղից փարթամութեան բեկորներն իւր արքայազուն իշխանների և ազնուականների համար. այդ տեսակ

[22]) «Բազմեցուցեր զվաճառս քո իբրև զաստեղս երկնից. դիմեաց ջորեակ՝ և թռեաւ։ Խաղաց իբրև զգրուիճ և խառնիճաղանճ քո իբրև զմարախ մածեալ ցցանգով յաւուր ցրտոյ։ Ծագեցաւ արև. խաղաց և ծանեաւ տեղի իւր։ Վայ նոցա։ Տես. Աստուածաշունչ գիրք. մարգարէութիւն Նաւումայ. գլխ. գ. տուն 16—17. էջ 869։

անկարելի է թւում մեզ, որչափ որ այդ ժամանակամիջոցի հայոց զարգացման աստիճանը ստորադասէին։ Նոյն իսկ ենթադրելով, որ այն ժամանակի հայերն ընդունակ չէին իւրեանց դրացիների հետ վաճառականական անմիջական յարաբերութեանց մէջ մտնելու, մի՞թէ փիւնիկեցիք, որ Հընդկաստան և Չինաստան էին հասել, չէին գալիս Հայաստան՝ տեղական բերքերը գնելու և իւրեանց արհեստանոցների արտադրութիւններն այդտեղ վաճառելու։ Յիշենք օրինակի համար Հայաստանի բերքերից մեկը՝ գինին. յայտնի է, որ Բաբելոնի նման մի գեղխ և փարթամ կեանք վարող քաղաք որչափ մեծ քանակութեամբ գինի պէտք է գործ դներ, նամանաւանդ, որ իւրաքանչիւր օր որոշ քանակութեամբ գինի պէտք է դրուէր կուռքերի առաջ [23]։ Իսկ Բաբելոնում գինի չ'լինելով [24]), պարզ է, որ օտար երկրից պէտք է բերուէր և ահա Հայաստանը նոյն տնկած բոյսի զօրեղ հեղանիւթն արտադրելով՝ պէտք է փոխարէնն ընդունէր Բաբելոնից այնպիսի իրեր, որոնց ինքը չէր արտադրում։

Բաբերաղաբար մեր այս ասածները լոկ ենթադրութիւններ չեն և հին՝ թէ հայոց և թէ օտար մատենագիրները վկայում են, որ հայերը վաճառականութեան միջնորդութեամբ յարաբերութեան մէջ էին փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ։

[23]) «Գինու առևտուրն ևս նշանաւոր դիրք ուներ Փիւնիկեան և ասորական վաճառականութեան ասպարիզում. Բաբելոնում գինի չ'կար, թէև ահագին քանակութեամբ գինի էր գործածւում, վասն զի ամենայն օր կուռքերի առաջ դրւում էր որոշ քանակութեամբ կերակուր և գինի»։ տես. Movers. նոյնը, հատ 3 մասն ա. էջ 270։

[24]) «Ասորեստան երկրում շատ քիչ է անձրևւում... ծառեր չեն բուսնում, թուզ, որմի և ձիթենի չկայ, սակայն հացարդյս շատ». տես. Հերոդոտի գերման. թարգմանութիւն von dr. Ad. Schöll. գիրք Ա. գլխ. 193. էջ 168)։

Եւ օտար մատենագիրներից ո՛չ այլ ոք, եթէ ոչ նոյն իսկ աշխարհիս առաջին պատմաբանը, Հերոդոտն է, որ մանրամասն խօսում է այս յարաբերութեան եղանակի մասին: Հետեւեալ կերպիւ է նկարագրում Հերոդոտն այն նաւակների ձեւն, որոնք Եփրատի վերայով Հայաստանի բերքերը տանում էին Բաբելոն [25]:

«Ի Հայաստան, որ կայ ի վերայ ասորեստանեայց, յոտոց ուռենեաց զկոզս (նաւուն) գործեն մորթածեալ ի վերայ արտաքուստ պատին զայն ըստ օրինակի յատակի. ոչ զխեալս նաւուն և ոչ զառաջան սրածայրեալ ունելով, այլ վահանաձեւ բոլորակեան [26]: Զայսպիսի նաւ բեռնաւորեալ լի վաճառօք՝ մանաւանդ գինուով [27], թողուն վարել ի գետ անդր, երկուց ոմանց միայն ղեկավարելով թիակ ի ձեռին [28], «Մեծամեծք նաև մանունք գտանին ի նաւուց աստի, յորոց մեծամեծքն տանին նաև կշիռս հինգ հազար տաղանդոյ. այլ իւրաքանչիւրքն կրեն ի կենդանեաց էշս. մեծամեծքն առաւել բազմաթիւ. Նաւարկողք իբրև հասանին ի Բաբիլոն

[25]) Հերոդոտը պատմելով Կիւրոսի պատերազմներն Ասիայում և Բաբիլոնի նուաճումն՝ առիթ է գտնում նաև խօսելու ասորեստանցոց երկրի և սովորութեանց մասին. ահա այս վերջին հատուածի մէջ է խօսում այդ նաւակների մասին, որ հետեւեալ կերպիւ է սկսում. «Սակայն ինչ որ ինձ այդ ամբողջ երկրում ամենազարմանալին է թւում, ահա պատմեմ իսկոյն. դոցա նաւակներն, որ գետի հոսանքով Բաբիլոն են գալիս, կլոր են և շինուած են կաշուից». տես. Հերոդոտի գերմ. թարգմանութիւն. գիրք, Ա. գլխ. 194. (էջ 169—170):

[26]) Այստեղ պակասում է Հերոդոտի հետեւեալ նախադասութիւնը. «Ապա լցնում են ամբողջ նաւակը յարդով»:

[27]) «Ամաններով լի արմաւադինի — Palmenwein»· մենք կասկածում ենք որ այս գինին արմաւից պատրաստած գինի լինէր. վասն զի ողկոյզի բերքն առատ է Հայաստանի շատ մասերում:

[28]) «Եւ երբ մէկը թիակը ջրից հանում է, միւսը մտցնում է ջրի մէջ»:

և զբեռն դատարկեն, զկոզս նաւուն և զամենայն վաճառեն, այլ զմորթն լէշս բարձեալ՝ վարին ի Հայաստան. զի ընդդէմ գետոյն նաւարկել բնաւ չէ հնար սակս սրընթաց լինելոյ. և վասն այնորիկ ոչ ի փայտէ՝ այլ ի մորթոյ գործեն զնաւսն: Յորժամ այսպէս վարեալ իշոյ դառնան ի Հայաստան, զայլ նաւս կազմեն նովին օրինակաւ [29]»:

Որ մեր նախնիքն իւրեանց վաճառականական առաջին յարաբերութիւնները փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ սկսեցին, պարզ երեւում է նաև այն հանգամանքից, որ ըստ Ֆրդ. Միւլլերի, «քազաք», «մաքս» և այլն բառերը ծագում են արամայական լեզուից [30]: Նոյն իսկ «մետաքս» և «մաշկ» բառերի արամայական ծագումն ապացոյց պէտք է լինի, որ հայ վաճառականներն արամայեցիների միջնորդութեամբ ծանօթացան մետաքսի հետ:

Երկու տարբեր ազգերի անհատները միմեանց հետ ուներած վաճառականական հաղորդակցութեան սկզբներում, անծանօթ լինելով միմեանց լեզուին, չեն հասկանում միմեանց. այդ պատճառաւ և պէտք է լինում դիմել մի երրորդ անձի միջնորդութեան, որ տեղեակ է այդ երկու լեզուներին եւս. ահա այդ միջնորդ անձնաւորութիւնը կոչվում է հայերէն «թարգման» իսկ այն իրողութիւնն, որ թարգման բառը նոյնպէս ծագում է արամայականից [31], ապացոյց է, որ հայոց վաճառականական առաջին յարաբերութիւններն ասորա-բաբելացիների հետ պէտք է լինեն: Որ սկզբնական ժամանակներում հայերն ենթարկուել են սեմիտական ժողովրդների քաղաքակրթութեան, ապացոյց է նաև

[29]) Տես Հայր Ինճիճեան. Հնախօսութիւն etc հատ 1. էջ 217 և Հերոդոտ. գիրք Ա. գլխ. 194. (էջ 169—170):

[30]) Տես. Fid. Muller. sitzungsberichte etc. հատ. 41. (էջ 12—13). նոյնպէս և Schröderi, նոյն, էջ 46:

[31]) Տես Fd. Müller. նոյն էջ 12 նոյնպէս և Schröderi, էջ 46:

այն հանգամանքն, որ հայոց լեզուի մէջ գտնւում են բազմաթիւ սեմիտական բառեր. այդ բառերի թիւն այնքան շատ է, որ մի ժամանակ ընդհանրացած կարծիք էր, թէ հայոց լեզուն ծագում է սեմիտականից։ Հ. Ըսալդը խօսելով օտար լեզուների ունեցած ազդեցութեան մասին հայոց լեզուի վերայ՝ շարունակում է. «Հարաւից սեմիտական և այս դէպքում արամայական լեզուի, ազդեցութիւնը հայոց լեզուի վերայ անժխտելի է. այս սահմանի վերայ—այսինքն հարաւում—նոյն իսկ հնագոյն ժամանակներից սեմիտները և հայերը խառնուեցան իրար հետ, ինչպէս որ աւելի ուշ ժամանակներում Եգեսիոյ պատմութիւնը ցոյց է տալիս։ Այսպիսով շատ սեմիտական բառեր, արդէն վաղ ժամանակներում մտել են հայոց լեզուի մէջ և հայացել։ Սակայն նոյն իսկ սեմիտականին յատուկ հնչիւնները մտել են հայոց լեզուի մէջ և ամուր տեղ բռնել...» «Նոյն իսկ Արամ երկրի անունը հաւանականաբար նոյն ծագումն ունի, ինչ որ Արմէնեան. այնպէս որ արամացիները և հայերը—Արմենի էր—միայն երկու ժողովուրդների անուններն են, որոնք բոլորովին տարբեր ցեղից են. և որոնք միմեանց ետևից այստեղ բնակուեցան և վերջը նոյնպէս միմեանց հետ խառնուեցան [32])»։

Ապա խօսելով հիւսիսային սահմանակիցների մասին՝ ասում է հետևեալը. «...Սակայն մի այնպիսի զօրեղ ազդեցութիւն չունեցան այն ազգերն, ինչպէս որ սեմիտականն, այս ապացուցանում է նոյնպէս և հայոց լեզուն իր բառերի պաշարով, ինչպէս որ տեսնում ենք այդ պատմագէս [33])»։

Թէև հայոց լեզուն պատկանում է Հնդկա Եւրոպական ցեղին, սակայն համեմատելով այդ ցեղին պատկանող այլ լեզուների հետ, սակաւ ձայնաւորներ ունի. հայոց լեզուի մէջ

[32]) Տես. H. Ewald: Sprachwissenschaftliche Abhandlungen, տպուած է. Abhandlungen der königlichen Gesellschaft der Vissenschaften zu Gottingen հատոր 10. էջ 66.

[33]) տես. H. Ewald: նոյնն էջ 68.

յառաջ են գալիս այնպիսի բաղաձայնների բարդութիւններ, որ ոչ մի հնդկաեւրոպական լեզու չունի[34]), ինչպէս օրինակի համար բժիշկ, անբժշկելի, մկրտչի, քրթմնջել և այլն։ Այս իրողութիւնը նոյնպէս ապացոյց է՝ սեմիտական լեզուի, և այդպիսով քաղաքակրթութեան, ազդեցութեան տարածման սկզբնական Հայաստանում։

Ցայժմ մենք խօսեցինք այն երկու պատճառների մասին, որոնք առիթ պէտք է տային հայերին փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ շփուելու՝ կրօնի և վաճառականութեան։ Մեզ մնում է ի նկատի ունենալ մի այլ երրորդ պատճառ. այդ է քաղաքական դրութիւնից յառաջացած հանգամանքը. մեր նպատակից դուրս է այստեղ մանրամասն խօսել հայոց քաղաքական յարաբերութեան մասին ասորա-բաբելացիների հետ. որ մեր նախնեաց կռապաշտութեան ժամանակն այդ քաղաքական յարաբերութիւնը միշտ փոփոխութեան էր ենթարկւում՝ յայտնի է, ոչ թէ միայն մեր և օտար մատենագիրներից, այլ նաև ժամանակակից աղբիւրներից՝ այսինքն արձանագրութիւններից։ Այդ հանգամանքների փոփոխութիւնն այն էր, որ Հայաստանն երբեմն անկախ էր, երբեմն հպատակում էր Միջագետքին և երբեմն էլ իշխում Միջագետքի վերայ[35])։

Քաղաքական՝ թէ բարեկամական և թէ թշնամական յարաբերութիւնը պատճառ էր լինում նաև գաղթականու-

[34]) տես. Sitzungsberichte etc. հատ. 38. էջ 570.

[35]) Այս վերջինը տեղի ունեցաւ Տիգրան II-ի ժամանակ էլ, որ տիրեց Միջագետքը, Կապադովկեան, Ասորիքի և Փիւնիկիայի մի մասն. այս վկայում է նաև դարուս նշանաւոր քննադատ-պատմաբան Հանգուցեալ Լէօպօլդ Փ. Ռանքէն. «Տիգրան II-ը նուաճեց Ադիաբենը, Միջագետքը, Կապադովկիայի մեծ մասը. յետոյ դիմեց դէպի ասորական յառաջաւոր Ասիան. Անտիոքը, Փիւնիկիայի մեծագոյն մասը, պղծեմախը նորա ձեռքն անցան»։ Տես. Leop. von Ranke. Weltgeschichte, հատ. II. մասն 2. էջ 178.

թեանց. խաղաղութեան ժամանակ ասորաբաբելացիք գաղթում կամ վախչում էին Հայաստան և իբրև բարեկամ ընդունւում, իսկ պատերազմի ժամանակ բերւում էին իբրև գերի և ցրւում Հայաստանի նահանգներում։ Պատմաբաններից ոմանք նոյնպէս այն կարծիքն են յայտնել, որ Բաբելոնաբնակ Քաղդիացիները նախապատմական ժամանակներում, կամ աւելի ուշ, Հայաստանից են Բաբիլոն գաղթել[36]։ Իսկ այլ պատմաբանները ևս ընդհակառակը կարծում են, որ Հայերն են Բաբիլոնից գաղթել[37]։

Ասորեստանցոց Տիգլատպիլեզէր և Սարգոն արքաները տիրելով Ասորիքը և Հայաստանի մասերը՝ բնակիչներին մէկ տեղից միւս տեղ են փոխադրում՝ Հայաստանից-Ասորիք և Ասորիքից Հայաստան[38]։

---

[36]) Տես. Eb. Schrader. „Die Abstammung der Chaldäer und die Ursitze der Semiten“ տպուած է Zeitschrift d. d. morg. Gesell. հատ. 27. էջ 397.

[37]) «Նոյն իսկ Բաբելոնից, ամենահին ժամանակներում, մի մեծ գաղթականութիւն դուրս գնաց—գաղթեցին Հայերը, փիւնիկեցիները և այլն. տես. Carl Sax. Ueber die babylonische Urgeschichte etc. տպուած է Zeitschrift d. d. morg. Gesellschaft հատ. 22. էջ 67.

[38]) Տես. Ed. Mayer. Geschichte des Alterthums. հատ 1. էջ 462. Լագարդ ասում է, որ Փռիւգացւոց գաղթականութիւնը *) դէպի Հայաստան, տեղի է ունեցել 8-րդ դարում Քրիստոսից առաջ. տես. P. de Lagard. Gesammelte Abhandl. էջ 163։

---

*) Պատմահայրը Հերոդոտը խօսելով Քսերքսէսի զօրաց մասին և մի առ մի պատմելով դոցա ազգայնութեան և ընտանութեան մասին՝ հետևեալն է ասում Փռիւգացւոց և Հայոց մասին. «Փռիւգացիները միևնոյն զէնքերն ունէին, ինչ որ պապլագոնացիք, մի փոքր տարբերութեամբ։ Փռիւգացիք, ըստ մակեդոնական աւանդութեան, անուանւում էին Բրիգներ՝ երբ նոքա իբր եւրոպական ժողովուրդ, մակեդոնացիների հետ էին բնակւում. սակայն երբ Ասիայ գաղթեցին, երկրի հետ ի միասին փոխեցին

Այս չափով բաւականանում ենք։

Մեր նպատակն էր՝ ցոյց տալ այն նշանաւոր հանգամանքներն, որոնց միջնորդութեամբ Հայերն իւրեանց կրաւորութեան դարերում պէտք է բնականապէս հաղորդակցութիւն ունենային ասորա-բաբելացիների և փիւնիկեցիների հետ[39]։ Երբ այս հաղորդակցութեան գոյութիւնն ապացուցուեցաւ, այնուհետև հասկանալի է, որ Հայ ազգն—եթէ դա մի փոքր ընդունակ և դէպ յառաջադիմութիւն ձգտող մի ազգ էր, որ վկայում են թէ հին և թէ նոր ժամանակների օտար ազգութեանց պատկանող անձինք—չէր կարող չ'ենթարկուել այդ ժողովրդների քաղաքակրթութեան։ Ա'րդ, քաղաքակրթութեան արդիւնքներից մէկն էր և գիրն, ուստի և եթէ մեր վերն յառաջ բերած հանգամանքները տեղի են ունեցել, այն ժամանակ անկարելի էր, որ հայերը կամ ուղղակի դոցա գիրը չ'առնէին, կամ թէ նոցա հետեւողութեամբ եւ նմանութեամբ սեպհական գիր չ'կազմակերպէին։

Որ մեր նկարագրած հանգամանքները ճիշտ են և հաւերն ենթարկուեցան ասորա-բաբելացիների քաղաքակրթութեան, ակնյայտնի ապացոյց է այն սարզ իրողութիւնն, որ մեր նախնիքը հետևելով ասորա-բաբելացիներին, իւրեանց երկրի մէջ մոգերին սեպաձև գրի գործածութիւնն՝ սկզբում նոյն իսկ ասորա-բաբելական գրով ու լեզուով, ապա փոքր

նաև իւրեանց անունը՝ Փռիւգացիների։ Ապա Հայերն ևս զինուած էին ինչպէս Փռիւգացիք, վասն զի դոքա Փռիւգացիների սերունդներն են»։ Տես. Հերոդոտի պատմութեան գերմ. թարգմանութիւնն. von dr. Ad. Schöll, հատ. 7. գիրք 7. գլխ. 74. էջ 872.

[39]) Թէ Հայերն ո՛րչափ յարաբերութիւն են ունեցել սեմիտականների հետ, ակնյայտնի է նաև այն հանգամանքից, որ նոյն իսկ մարդաբանական հետազօտութիւնները ցոյց են տալիս սեմիտների խառնուիլն Հայոց հետ. տես Ելիսէեվի «Ճանապարհորդութիւն մարդաբանական նպատակով Փոքր Ասիայի միջով» «Արձագանք» շաբաթաթերթի 1887 թ. № 33, էջ 530։

ժամանակ անցնելուց յետոյ տեղական լեզուով և մասամբ փոփոխուած սեպագրով։ Այսպիսով թէ և Հայերն ասորաբաբելացիներից առան սեպագիրը, սակայն շուտով դարձրին իւրեանց ազգային սեպհականութիւն, տալով նորան ազգային առանձնայատկութիւն[40]։

Արդ ընական չէ, որ նոյն կերպիւ կազմակերպէին մեր նախնիքը նաև իւրեանց ազգային այբուբենն, այսինքն տառագիրը։ Այդ էր հանգամանքներից յառաջացած ընական ճանապարհն և այլ տեսակ ևս չէր կարող լինել[41]։ Այն հեղինակների կարծիքն, որ պնդում են, թէ Հայերը սուրբ Մեսրոպից առաջ գիր չ'ունէին, չէ համապատասխանում այս հանգամանքներին. այն ազգն, որ արդէն Քրիստոսից 7—8 դար առաջ իւր դրացիների նմանողութեամբ իւր համար առանձին ազգային գիր կազմակերպեց, մթթէ այնուհետև այնչափ յետագիմեց, որ պէտք չ'զգաց այլ ևս գրի գործածութեան և հետևելով իւր դրացիների քաղաքակրթութեան՝ իւր գիրն ևս նոցա նման չը կատարելագործեց՝ սեպագրից աւելի պարզ և հասարակ այբուբեն կազմելով։ Նոյն հանգամանքներին չէ համապատասխանում նաև այն կարծիքը — էմին — որ իբրև թէ Հայերը քրիստոնէութիւն ընդունելու ժամանակաշրջանում գործ էին ածում *քառագիր* նշանագրեր, այս ճանապարհը բոլորովին անբնական է. այն ազգն, որ արդէն իւրաքանչիւր *վանկի* — և մասամբ ևս տառի — համար առանձին գիր ունէը — սեպագիրը, — մթթէ յետ դառնալով պէտք է դիմէը գրի աւելի նախնական տեսակին, այսինքն

40) «Ուրարտին — Արարատեան աշխարհն — ասորեստանցոց հետ յարաբերութեան մէջ մտնելով՝ քաղաքակրթութեաւ և ընդօրինակից իւր Թշնամիների արուեստներն և մինչև անգամ գիրը». տե՛ս. Maspero. Geschichte der morgenl. Völker etc. էջ 395.

41) Այն հանգամանքն որ «աթուրթայ» — տառ — բառը ծագում է սեմիտականից, նոյնպէս ապացոյց է այս իրողութեան *)։

*) տե՛ս. Paul de Lagard. Arménische Studien. հատ. 1. էջ 166.

իւրաքանչիւր *բառ* արտայայտէր մի նշանով, քանի որ իւր դրացի ազգերն արդէն վաղուց այնչափ յառաջադիմել էին, որ մի նշանով ա՛չ թէ մի վանկ, այլ այժմ միայն մի հնչիւն էին արտայայտում։

Այս բոլորից յետոյ գալիս ենք այն եզրակացութեան, որ Հայերն անմիջապէս փիւնիկեցիներից, կամ թէ ասորաբաբելացիների միջնորդութեամբ, վերցնելով Փիւնիկեան քսան և երկու տառերից բաղկացած այբուբենը՝ մի քանի փոփոխութիւններով դարձրին իւրեանց ազգային գիրն, որ յետոյ գտնուեցաւ Դանիէլի մօտ և կատարելագործուեցաւ սուրբ Մեսրոպի միջնորդութեամբ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

ԹԷ Ո՛Ր ԹՈՒԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԻ ՀԵՑՈՑ «ԴՐԻ ԳԻՏՑ»-Ն



Այս խնդիրը լուծելու համար դիմենք դարձեալ մեր սովորական ընթացքին՝ այսինքն ամենից առաջ լառաջ բերենք մեր պատմադիրների վկայութիւնները այդ խնդրի մասին։

Մ. Խորենացին թէև ուղղակի չէ յիշում «Դրի գիւտի» թուականն, սակայն պատմութեան շարայարութենից պարզ երևում է, որ «Դանիէլեան» կոչուած այբուբենի գիւտը պատահում է Յունաց Սրկադ կայսեր ժամանակ, «. .Յայնմ ժամանակի հիւանդացեալ Սրկադ, և շարժմանց ահագնից և հրընկեցութիւն եղեալ ի Բիւզանդիոն. . . Վռամ հրամայեաց Վրամշապհոյ մեր թագաւորին իջանել ի միջադէտս». . [1]։

—Ահա այդտեղ լսում է Վռամշապուհ արքան Հայոց հին այբուբենի գոյութեան մասին։

---

1) Տես. Խորենացի, պատմութիւն Հայոց գիրք 3. գլխ. ԺԱ. էջ 367.

Ասպա մի այլ տեղ պատմելով՝ որ «Վախճանեալ Արկադայ, փոխանակ Թագաւորէ Նորին որդի, որ կոչեցաւ Թէոդոս Փոքր...» և այլն՝ աւելացնում է. «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս...» [2]։

Այսպէս ուրեմն ըստ Մ. Խորենացու «Դանիէլեան» և «Մեսրոպեան» տառերի գիւտը պէտք է տեղի ունեցած լինի 395 և 408 թուերի մէջ եղած ժամանակամիջոցում։

Կորիւն Սքանչելին պատմելով «Դանիէլեան» այբուբենի մասին՝ ասում է, թէ Վահրիճ այդ այբուբենն Հայաստան բերեց Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին [3]. իսկ մի փոքր յետոյ պատմելով Մեսրոպեան այբուբենի «գիւտն» ասում է. Մեսրոպ վերադարձաւ Նոր-քաղաք—Նախիջևան—Վռամշապուհի թագաւորութեան վեցերորդ տարին [4]։

Որ այս թուերն ճիշդ չեն, ինքն ըստ ինքեան հասկանալի է, վասն զի նոյն իսկ ինքն Կորիւն յայտնում է, որ սուրբ Մեսրոպը դեռ ևս երկու տարի աշխատեց «Դանիէլեան» գրերով և ապա թէ «գտաւ» նոր այբուբենն։—«Եւ իբրև ամն երկուս կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէը...»։

Սեբատիանոս Ասողիկ պատմագիրը կրկնում է Կորիւնի ասածն. «Եւ գտաք հանդիպեալ յերկրորդ ամին Արտաշրի արքային Պարսից զհինգերորդ ամն Վռամշապհոյ արքայի Հայոց, յորում Մաշտոցն երանելի... Դանիէլեան նշանագրօք զդպրութիւն ըստ Հայումս յօրինէր...։ Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդումն Նորին Վռամշապհոյ, որ է առաջին Վռամայ Կրման արքայի՝ վերստին աստուածային շնորհաց

2) Խորենացի, նոյն, գիրք 3. գլխ. ծգ. էջ 371։

3) *Կորիւն*, վարքագրութիւն սուրբ Մեսրոպայ էջ 10։

4) *Կորիւն*, նոյն. էջ 15։

տուեալ նշանագրօք՝ գնոյնս յեղանակեալ յօրինէր» [5]։

Վարդան վարդապետ պատմագիրը գրում է «ի հինգերորդ ամին սորա—Վռամշապհոյ—և յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ սուրբ Մեսրոպ յօրինէ դպրութիւն Հայերէն...» [6]։

«Կայսերաց» կոչուած ժամանակագրական և բաւականին հին ձեռագրի մէջ ասուած է. «ի Սոցա—Արկադեայ և Ոնորիոսի—տասներորդ ամի եղև սկիզբն Հայերէն քսան և հինգ գրոց... ի սորա աւուրսն էր սուրբ Սահակ Հայրապետն, յորոյ աւուրս գտաւ քսան և ինն գիրն Հայերէն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոյ, զոր ետ բերել Վռամշապուհ թագաւորն...» [7]։

Սամուէլ Անեցին Դանիէլեան նշանագրերի գիւտը նոյնպէս դնում է Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին—այլ ձեռագիրների մէջ նաև երկրորդ տարին—և ապա մի տարուց յետոյ Մեսրոպեան այբուբենի «գիւտն»։ [8])

Ղազար Փարպեցին բոլորովին այլ կերպ է վկայում. սորա ասելով Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին ոչ թէ Դանիէլեան նշանագիրները գտանուեցան, ինչպէս հաղորդում են Կորիւն և այլք, այլ այդ թուականին թողեց սուրբ Մեսրոպն իւր անասլատական կենցաղը և եկաւ սուրբ Սահակի մօտ. «Այլ յանապատս ի բազում տեղիս քարանձաւաց մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարուք, բազում և այլ սուրբ վարուք կրօնաւորօք և ազօթասէր եղբարբք, մինչև յամս հինգերորդ՝ արքային Հայոց Վռամշապ-

5) Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական էջ 74։

6) Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի էջ 49։

7) Հայր Զարբհանալեան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն» հատ. 1 էջ 43։

8) Հայր Միք. Ջամչեան, պատմութիւն Հայոց հատ. 1 էջ 763։

Հոյ եղբօր Խօսրովու [9])։ Եւ որովհետեւ այս տողին անմիջապէս հետեւում է. «Եւ զայս եթէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ, ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա, և զիւր Հայերէն նշանագրացն [10])» հատուածն, Հայր Զամչեանը կամենում է այս վկայութեամբ ուղղել Կորիւնի ասածն—թէ ի Ե. ամի Վռամշապհոյ եղեւ գիւտ Դանիէլեան նշանագրաց. և ի զ. ամի Վռամշապհոյ եկն Մեսրոպ ի Հայս հանդերձ Աստուածատուր գրովք—ասելով թէ Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին վերաբերում է սուրբ Մեսրոպի Սահակի մօտ գալու ժամանակին. իսկ տառերի գիւտին վերաբերեալ թուանշանը պէտք է լինի «ժզ»-16, որ արտագրողների շնորհիւ «ժ» մոռացուել և մնացել է միայն «զ»։ [11])

Այս ենթադրութիւնը Զամչեանը հաստատում է այն փաստով, որ Կորիւն Սքանչելին մի այլ վկայութեամբ ասում է. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք 45. և ի դպրութեննէն հայոց մինչև ցվախճան սրբոյն ամք 35».—[12]) այսինքն սուրբ Մեսրոպի *քարոզութեան օրից* մինչև տառերի գիւտն անցել էր *տաս* տարի ժամանակամիջոց։

Սակայն եթէ խնդիրը մի փոքր առաւել ուշադրութեամբ քննենք, կ'տեսնենք, որ Ղ. Փարպեցու վկայութիւնը բոլորովին չէ համապատասխանում Կորիւնի վերջին վկայութեան. Կորիւն ասում է, որ սուրբ Մեսրոպը գրերի գիւտից արդէն տաս տարի առաջ էր սկսել վարդապետել, այսինքն քրիստոնէութիւն քարոզել—հայոց արքունիքը թողնելուց յետոյ—իսկ Հայր Զամչեանը կամենում է այդ քարոզութեան առաջին և Վռամշապուհ արքայի թագաւորութեան հինգերորդ տա-

9) Ղ. *Փարպեցի* էջ 34։
10) Ղ. *Փարպեցի*, նոյն, էջ 35։
11) *Զամչեան*, նոյն, հատ. 1 էջ 763։
12) *Կորիւն*, նոյն, էջ 44 և *Զամչեան*, նոյն հատ. 1 էջ 764։

րին միացնել՝ հիմնուելով Ղ. Փարպեցու վկայութեան վերայ։ Մենք կարծում ենք, որ Հայր Զամչեանի այդ տեսութիւնը սխալ է և Փարպեցու այդ հատուածը բոլորովին չէ համապատասխանում Կորիւնի վերոյիշեալ վկայութեան։

Վասն զի Ղ. Փարպեցին ասում է, որ սուրբ Մեսրոպն եկաւ սուրբ Սահակի մօտ Վռամշապուհ արքայի թագաւորութեան հինգերորդ տարին. իսկ այդ տարին չի կարող նորա քարոզութեան առաջին տարին համարուել, որովհետեւ նոյն իսկ Կորիւնի վկայութեամբ սուրբ Մեսրոպը յառաջ քան սուրբ Սահակի մօտ գալն, երկար ժամանակ քարոզում էր Դաղիանում [13])։ Այս վկայում է Մ. Խորենացին առաւել պարզ կերպիւ մինչդեռ «Եւ երթեալ ի գաւառն Դաղիան բնակէ զմիաբնակեցութեան վարս ստացեալ» ասելուց անմիջապէս կցում է նորա քարոզութիւնն. «Եւ որ ի նմա ղօղեալ ազանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրսն Տրդատայ մինչև յայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեան Արշակունեաց, զայն երկարօ օգնականութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շամբիթ...» որ ասել է՝ թէ սուրբ Մեսրոպը նոյն իսկ այդ միաբնակեցութեան ժամանակ էս քարոզում էր. և ոչ միայն Դաղիանում է քարոզում, ինչպէս ասում է Կորիւն, այլ և. «...Եւ ոչինչ յայնոցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին, որ կոչէր Վաղինակ». և ապա թէ. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանգիպէր, զանխոս ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ։ Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի չանս պէս պէս փորձիւք տաժաներ...»։ [14]) Մ՚թէ կարելի

13) *Կորիւն*, նոյն, էջ 8։
14) *Մ. Խորենացի*, նոյն, գիրք—3, գլուխ Խ՚, էջ 356։

է այս բոլորը սուրբ Մեսրոպի քարոզութեան տարիներից դուրս ձգել և նորա սուրբ Սահակի մօտ գալը քարոզութեան սկզբնաւորութիւն ընդունել. կարծում ենք, որ ո՛չ. և այդ պատճառաւ իսկ Ղ. Փարպեցու վկայութիւնը չի կարող համապատասխանել Կորիւնի յառաջ բերած թուերին, թէև Հայր Զամչեանը ճգնում է այդ ապացուցանել: Նոյն իսկ Փարպեցու խօսքերից «ապա յանապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երևեր և հռչակաւոր» երևում է, որ սուրբ Մեսրոպը նոյն իսկ այդ անապատական կեանք վարելու ժամանակ պէտք է պարապէր քարոզութեամբ, եթէ ո՛չ թէ՛ չէպէս պէտք է «զարմանալի» և «հռչակաւոր» լինէր:

Կորիւն Սքանչելին սուրբ Մեսրոպի վարքագրութիւնը վերջացնում է նորա գործունէութեան տարիները թուելով: «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք խ և ե—45—և ի դպրութիւնէն հայոց մինչև ցվախճան սրբոյն ամք լե—35, որք համարին այսպէս. թագաւորեալ Դիմոնայ[15]) Պարսից արքայի—ամս զ.—6—և Յազկերտի՝ ամս իա—21:—Եւ յառաջնումն ամի երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ վախճանեցաւ երանելին: Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդ ամէ Կրմանայ արքայի՝ մինչև ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն հայոց, յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»[16]):

Համեմատելով մեր պատմագիրների վերն յառաջ բերած

15) *Պրօֆ. Վելտէ Կորիւնի գերմաներէն թարգմանութեան մէջ Դիմոն թարգմանում է իբրև Պարսից արքայի անուն—տես, նոյն, էջ 44—Իսկ Հայր Զամչեանը Դիմոն բառից յետոյ փակագծի մէջ դնում է «այսինքն Վռամ—Կրման ի Տիսբոն» տես. Զամչեան, նոյն, հատ. 1, էջ 764: Որովհետև պատմութեան մէջ Վռամ Դ. կամ Վռամ—Կրման—շահ կոչուած—Հայոց պատմագիրները կրճատելով ասում են Վռամ—Կրման—Պարսից արքան յայտնի չէ մի այդպիսի անունով, ուստի և Հայր Զամչեանի բացատրութիւնն աւելի իրաւացի ենք գտնում:*

16) *Կորիւն, նոյն, էջ 29. Զամչեան, նոյն հատ. 1, էջ 764:*

վկայութիւնները՝ տեսնելի «գիւտի» ժամանակի մասին, անկարելի է մի որ և է եզրակացութեան գալ, վասն զի բոլորն էլ շփոթում են տարեթուերի համեմատութիւնը Պարսից արքաների թագաւորութեան ժամանակի հետ և յաճախ միմեանց հակասում. այսպէս օրինակի համար Ասողիկ պատմագիրն ասում է. «յերկրորդ ամին Արտաշրի արքայի Պարսից, որ է հինգերորդ ամ Վռամշապհոյ»... Իսկ Վարդան վարդապետ պատմագիրն ասում է ի հինգերորդ ամին Վռամշապհոյ և յառաջին ամին Արտաշրի...: Կորիւն սքանչելին ասում է: «Եւ առնու համար ամաց սրբոց հաւատոց—այսինքն տաս տարի դրերի «գիւտից» առաջ—ի չորրորդումն ամէն Կրմանայ[17]) արքայի»... իսկ Ասողիկն «ի վեցերորդումն Նորին Վռամշապհոյ, որ է ամ առաջին Վռամ Կրման արքայի՝ վերստին աստուածատուր նշանագրօք զնոյն յեղանակեալ յօրինէր»... և այլն:

Եթէ մեր պատմագիրների այս ժամանակագրական վկայութիւնները թուերի փոխադրենք՝ կը ստանանք մի այնպիսի շփոթ, որից կարելի չէ մի բան դուրս բերել:

Ենթադրենք օրինակի համար, որ դրերի «գիւտն» տեղի ունեցաւ իսկապէս Հայոց Վռամշապուհ արքայի թագաւորու-

17) *Պարսից Վռամ Դ. արքան կոչւում է նաև Կրման-շահ, վասն զի սկզբում նա այդ նահանգի կառավարիչն էր. այս արքային են վերագրում նոյնպէս Կրմանշահ բաղաքի շինութիւնը: Ըստ Իւստի—Justi, geschichte des alten Persiens, էջ 193—Դէֆռնօերի դքսի ձեռքն է գտանւում այժմ այս արքայի կնիքն, որ կրում է նորա պատկերը հետևեալ գրութեամբ. «Վարահրան, արքայ Կըրմանի, որդի Մաղդեզանց աստուածային Շապուհի արքայից արքայի՝ Արեաց և Անարեաց երկնային ցեղից»: Այս Վռամ-Կրման-շահ արքային մատենագիրներից ոմանք անուանում են եղբայր Շապուհի և ոմանք որդի Շապուհի, որ խնդրին մօտիկ ծանօթ չեղողներին կարող է շփոթութիւն պատճառել. այդպէս կոչուելու պատճառն այն է, որ Կրման-շահի թէ՛ հայրն և թէ՛ եղբայրը թագաւորեցին և երկուսն էլ կոչւում էին Շապուհ:*

թեան հինգերորդ տարին և այդ տարին ընդունենք իբրև մի որոշ սկզբնակէտ. սակայն որ թուականն է համապատասխանում Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարուն. ահա այս է խնդիրն. այդ իմանալու համար մենք ոչ մի այլ միջոց չունենք, բացի Պարսից արքաների թագաւորութեանց ժամանակի համեմատութիւնը. տեսնենք այս համեմատութեան հետևանքները։ Ասողիկն ասում է, որ Արտաշիր պարսից արքայի թագաւորութեան երկրորդ տարին է Վռամշապուհ հայոց արքայի թագաւորութեան հինգերորդ տարին. ուրեմն Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին իմանալու համար պէտք է իմանալ՝ թէ պարսից Արտաշիր արքայի թագաւորութեան երկրորդ տարին որ թուականն է. ըստ նորագոյն հետազօտութեանց՝ պարսից Արտաշիր II. արքան թագաւորում է 379[18]) թուի 19 օգոստոսի[19]). ուրեմն 380 թ. օգոստոս ամսից յետոյ կլինի դորա թագաւորութեան երկրորդ տարին։ Այստեղից պէտք է եզրակացնել ուրեմն, որ Վռամշապուհ հայոց արքայի թագաւորութեան հինգերորդ տարին է Քրիստոսի թուականի 380—381. ուրեմն և ըստ Ասողիկ պատմագրի, ըստ Կորիւն Սքանչելու, Վարդան պատմագրի[20]) և այլն, այդ թուականին գտնուեցաւ «Դանիէլեան» այրուբենը։ Դուցէ մենք այս թուի դէմ ոչինչ չ'ասէինք, եթէ Ասողիկը դորանով բաւականանար. սակայն բանը նորանումն է, որ նա աւելացնում է և հետևեալ տողերն. «յետ որոյ

[18]) Ռիխտերը Արտաշիր Բ-ի թագաւորութեան տարիները դնում է 381—385 թ. տես. Richter, Historisch-kritischer Versuch über die Arsaciden-und Sassaniden-Dynastie etc. էջ 194.

[19]) T. Nöldeke: Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, աշխատութեան հետ կցուած սասանեան արքաների ժամանակագրական աղիւսակն։

[20]) Թէև Վարդան ասում է «յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ»—սակայն այդ մի տարուայ տարբերութիւնը թողբանի տեղ չ'դնենք։

դարձեալ ևս ի վեցերորդումն նորին Վռամշապհոյ, որ է առաջին Վռամայ Կրման արքայի՝ վերստին աստուածայինն շնորհայ տուեալ նշանագիրք, զնոյնս յեղանակեալ յօրիներ»։ Պարսից Վռամ Դ. և Կրման—շահ կոչուած արքան ըստ նորագոյն հետազօտութեանց թագաւորում է 388 թ.[21]) 16 օգոստոսի. ուրեմն և դորա թագաւորութեան առաջին տարին է 388—389։ Մ'թէթ զարմանալի չէ, որ հայոց Վռամշամպուհ արքայի թագաւորութեան հինգերորդ տարին է 380—381 թիւն, իսկ վեցերորդ տարին 388—389 թիւն։— Եթէ նոյն իսկ, ըստ Հայր Զամչեանի, փոխանակ վեցի, տասնուվեց դնենք, կրկին չի կարող յարմարուել, վասն զի 396—397 թիւը չէ համապատասխանում Վռամ—Կրման—շահի թագաւորութեան առաջին տարուն։—

Պրօֆ. Պատկանեանը—նաև պրօֆ. Իմինը—հայոց Վռամշապուհ արքայի թագաւորութեան տարիները հաշւում է 400—421, նոյնպէս և Պարսից Յազկերտ I արքայի թագաւորութեան տարիները 400—421[22])։

---

[21]) Սորա թագաւորութեան սկզբնաթուի մասին ևս կարծիքները տարբերւում են. այսպէս օրինակի համար պրօֆ. Պատկանեանի կարծիքով Վռամ—Կրման—շահ և յոյներից նոյնպէս Վարարանէս կոչուած արքան թագաւորում է 386—397 թ.—տես. Journal Asiatique, tome 7 (1866) էջ 158։—Ռիխտերի կարծիքով Վռամ Դ. թագաւորում է 389—400 թիւը. տես. Bichter նոյնն, էջ 200։ Բրօսէն ասում է. «Vahram IV, père d'Jezdedjerd, avait régné 397—408, ou (?) 389—400. տես. Brosset: Collection etc. հատ. 1. էջ 63. ծթ. 3.

Մալկոլմի կարծիքով Վռամ Դ. թագաւորեց 390—404 թ. տես. Malcolm: Geschichte von Persien etc. հատ. 1. էջ 90։ Սէն-Մարտէն ասում է. „... la première année royale de Bahram IV a du se compter du 18 mai 388 տես. Saint-Martin, Histoire du Bas—Empire etc. հատ. 5. էջ 182. ծան.

[22]) Տես. Պրօֆ. Պատկանեանի թարգմանութիւնն.—„Исторія Агванъ Мойсея Каланкатваци“, etc. յաւելուած II.

Եթէ մեր Վռամշապուհ և պարսից Յազկերտ Ա. արքաները մի և նոյն տարին են սկսում թագաւորել, ապա ուր մնացին մեր պատմագիրների ժամանակագրական համեմատութիւնները՝ Վռամշապուհի և Պարսից Սրտաշիր և Վռամկրմանշահ արքաների մէջ։ Պարսից Շապուհ Բ-ին յաջորդում է Սրտաշիր Բ. սորան յաջորդում է Շապուհ Գ. այս Շապուհին յաջորդում է Վռամ Գ. կամ կրմանշահ կոչուածն և ապա թէ Յազկերտ Ա։ Սրդ, եթէ Վռամշապուհ արքան Պարսից Յազկերտ Ա-ի հետ սկսեց թագաւորել, ապա ուր մնացին Մ. Խորենացու պատմածները. «Եւ Արտաշրի ընկեցեալ զնա—Խոսրով—ի տէրութիւնէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ եղբայր նորին, ոչ զՄեծն Սահակ և ոչ զոք ի նախարարացն կարգելոցն Խոսրովայ եթող, այլ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր»[23])... և այլն. «թուղթ Արտաշրի առ Վռամշապուհ. Մազդեզանց

մասի, էջ 326։ Պրօֆ. Պատկանեանը Յազկերտ Ա-ի թագաւորութեան տարիները մի այլ տեղ դնում է 397—417 (թէև գրուածք է 517, բայց ակնյայտնի է, որ տպագրական սխալ է). տես. Պատկանեանի „Опитъ Исторіи династ. Сасанидовъ“ etc. աշխատութեան ֆրանսերէն թարգմանութիւնը. E. Prudhomme. Essai d'une Histoire de la Dynastie des Sassanides etc. տպուած է Journal Asiatique. t. 7. էջ 159։

Պրօֆ. Էմինը նոյնպէս Վռամշապուհի թագաւորութեան տարիները հաշւում է 400—421 տես. Эминъ: Ист. Арм. М. Хоренскаго. էջ 331.

Իսկ Սէն-Մարտէնը Վռամշապուհի թագաւորութեան առաջին տարին համարում է 392 թ. «...Bahram-schapour, couronné l'an 392 de notre ére“ տես. Histoire d'Arménie par le patriarch Jean IV, traduit par M. Saint-Martin էջ 400 ծթ. (Notes de L'éditeur). նոյնպէս Sain-Martin: Mémoires historiques et géographique sur L'Armenie հատ. 1. էջ 413.

Լանգլուան նոյնպէս ասում է. „Vramschapouh régna de l'an 392 jusqu'à sa mort, en 414“ տես. V. Langlois: Collection etc. հատ. 2. էջ. 10. ծթ. 2.

23) Տես. Մ. Խորենացի, նոյնը. գիրք 3. գլխ. ծ. էջ 362

քաջ, Արտաշիր արքայից արքայ, առ եղբայր Վռամշապուհ թագաւոր Հայոց ողջոյն շատ...»[24]) մի այլ տեղ. «Բայց յորժամ եկն մեծն Սահակ և զամենայն պարգեւսըն Սրտաշրէ հաստատեաց, մեռաւ արքայն Պարսից Սրտաշիր, և փոխանակ նորա թագաւորեաց Վռամ, որ և Կրման կոչեցաւ ամս տասն[25]): Եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհս Հայոց և ընդ թագաւորին Վռամշապհոյ... Եւ Վռամշապուհ ուներ զաշխարհս մեր և ծառայէր երկոցունց թագաւորացն՝ տալով զհարկս, զմասինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ։ [26]) Դարձեալ թէ «... վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապհոյ մեր թագաւորին իջանել ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ զնոսա...»[27]) և այլն։

Այս բոլոր վկայութիւնները—մի կողմը թողնելով այլ պատմագրաց յիշածները—չենք կարող մերժել, ուստի և չենք կարող ընդունել, որ Վռամշապուհ արքան պարսից Յազկերտ I-ի ժամանակ միայն թագաւորեց—400—421 թ.։

Սակայն մեր պատմաբանների վկայութեանց մէջ և—որ արդէն յառաջ բերինք—մի այնպիսի հաստատուն սկզբնակէտ չենք գտնում, որից կարողանայինք գտնել մեր այբուբենի վերանորոգման տարեթիւն։ Ուստի և այս շփոթ տեղեկութեանց մէջ չը մոլորուելու համար, մենք մի այլ հաստատուն կէտ ի նկատի ունենալով, յառաջ ենք բերում մեր

---

24) Տես. Մ. Խորենացի, նոյնը. գիրք 3. գլխ. ծա. էջ 366.

25) Խորենացին բոլորովին չէ յիշում Շապուհ Գ-ին, որ յաջորդեց Արտաշիր երկրորդին և թագաւորեց ամբողջ հինգ տարի. ըստ Մալկոլմի 385—390.—տես. Malcolm, նոյնն, էջ 90 հատ. 1.—իսկ ըստ Նէօլդեկէի 383—388—տես. Nöldeke, նոյն տանկն.—իսկ Ռիխտէրը հաշւում է չորս տարի, 385—389.—տես. Richter, նոյնն, էջ 197.

26) Տես. Մ. Խորենացի. նոյնը, գիրք 3 գլխ. ծա. էջ 366։

27) Տես. Մ. Խորենացի. նոյնը, գիրք 3. գլխ. ծբ. էջ 368։

տեսութիւնն։ Այդ հաստատուն կէտը մենք ընդունում ենք մեր արդէն յառաջ բերած Կորիւն Սքանչելու վկայութիւնն. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք 45 և ի դպրութենէն հայոց մինչև ցվախճան սրբոյն ամք 35, որք... Եւ յառաջնումն ամի երկրորդ Ցազկերտի որդւոյ Վռամայ[28]) վախճանեցաւ երանելին—Մեսրոպ—։ Եւ առնու համար ամաց սրբոյ հաւատոց ի չորրորդ ամէ Վրմանայ արքայի՝ մինչև ցառաջին ամն երկրորդ Ցազկերտի[29]) որդւոյ Վռամայ...»։ Այս վկայութիւնը մեզ յայտնում է մի քանի պարզ իրողութիւններ. ա. որ ս. Մեսրոպն իբր եկեղեցական պաշտօնեայ, ծառայեց Հայաստանեայց ս. եկեղեցուն ամբողջ քառասուն և հինգ տարի, այսինքն այդչափ ժամանակամիջոց անցաւ նրա հայոց արքունիքը թողնելու և վախճանման թուականի մէջ. բ. ս. Մեսրոպի հայոց արքունիքը թողնելուց յետոյ անցել էր ամբողջ տաս տարի, երբ վերադանդնեցաւ հայոց այբուբենն. գ. հայոց այբուբենի վերանորոգուելուց յետոյ ս. Մեսրոպն ապրեց երեսուն և հինգ տարի. դ. ս. Մեսրոպը թողեց հայոց արքունիքը սպարսից Վռամ Դ. և Կրման—շահ կոչուող արքայի թագաւորութեան չորրորդ տարին և վերջապէս ե. ս. Մեսրոպը վախճանեցաւ սպարսից Ցազկերտ Բ. արքայի թագաւորութեան առաջին տարին։

Վերջին երկու կէտերը մօտաւորապէս ճշտում են ա. կէտն, վասն զի ըստ Նեօլդեկէի՝ սպարսից Վռամ Դ. և Կրման-շահ կոչուած արքան թագաւորում է 388 թ., ուրեմն եթէ

---

28) Վռամ V, որ կոչւում է նոյնպէս Վռամ—գոր—թագաւորեց 420—438. Տես. Silvestrede Sacy: Mémoires sur diverses antiquités de la Perse. էջ 331։

29) Ցազկերտ անունը սասանական դրամների վերայ գրուած է հետևեալ կերպիւ j. z. d. k. r. d. i. կամ yzdkrti—եզդկրդի կամ եզդկրտի. տես. Mordtmann: Ueber sassanidische Münzen. տպուած է. Zeitschrift d. d. morg. Gesell. etc. Հատ. 4. (1850).

այս թուին աւելացնենք Կորիւնի յիշած 4 տարին—կը լինի 392. այս թուին ուրեմն թողեց սուրբ Մեսրոպը հայոց արքունիքն. ըստ նոյն Նեօլդեկէի Ցազկերտ Բ. սպարսից արքան թագաւորեց 438 թ.[30]) և Կորիւնի ասելով սորա թագաւորութեան առաջին տարին—այս կարող է լինել թէ՝ 438 և թէ 439 թ.—վախճանեցաւ ս. Մեսրոպը. ուրեմն առաջին թիւը հանելով երկրորդից կ'ստանանք 46—47 տարի, որի տարբերութիւնը Կորիւնի հաշուած 45 տարուց՝ մեծ չէ։

Իրև մի հաստատուն սկզբնակէտ, ինչպէս արդէն ասացինք, ընդունում ենք Ցազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարին, վասն զի ինչպէս Կորիւն, նոյնպէս և Մ. Խորենացին—երկուսն էլ ժամանակակից—հաստատ ասում են, որ ս. Սահակը վախճանեցաւ Ցազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարին, իսկ ս. Մեսրոպը փոխուեցաւ վեց ամիս Պարթևի մահից յետոյ. նոյնը կրկնում է Ղազար Փարպեցին և այլք։

Մ. Խորենացին խօսելով ս. Սահակի մասին, ասում է, որ նա ապրեց. «մինչ *ցսկիզբն ամին երկրորդի Ցազկերտի* եղելոյ սպարսից թագաւորի, յելս ամսոյն Նաւասարդի[31]), յ-

---

30) Տես. Նեօլդեկէ. Tabari etc. նոյնն, էջ 435.

31) Նաւասարդ բառին Հայր Ղ. Ինճիճեանը հետևեալ բացատրութիւնն է տալիս. «Նաւասարդ=նաւաստ աւարտ. և ահա՛ ի հայկական բարբառս մեր գտանեմք զյիշատակ նորուն ի նոյն իսկ յանուն առաջին ամսեան տարւոյն, յորում երեց նոյ զձեղունն, կոչեցեալ նաւասարդ, համառօտեալ յանուանէս նաւաստ աւարտ. զի յայնժամ եղև համօրէն մարդկան և տապանակերպ նաւուն նաւաստութեան աւարտ». տես. Հայր Ղ. Ինճիճեան. Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. Հատ. 3. էջ 18։

Այս բացատրութիւնն այնչափ կամայական և անհիմն է լեզուագիտական տեսակէտից, որ ապացոյցի կարևորութիւն չունի. Պ. դը Լագարդն այդ բառը համեմատում է սանսկրիտ «նաւասարադ» բառի հետ, որ բակտրիական լեզուով ասւում է «նաւա-

ւուր իւրոյ ծննդեանն... Եւ զկնի վեց ամսոց անցելոյց, եբեքտասանն Մեհեկանի, և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ ի վաղարշապատ քաղաքի...[32])։

Կորիւն Սքանչելու վկայութիւնը հաստատում է, որ Խորենացու խօսքերը «մինչ ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի» պէտք է հասկանալ Յազկերտ երկրորդի թագաւորութեան *առաջին տարուայ սկիզբն* և ոչ թէ Յազկերտի *երկրորդ տարուայ սկիզբն, ինչպէս* որ շատերը բացատրել են։ Նոյնն է ասում և Հայր Բարսեղ Սարգսեանը՝ պրօֆ. Գուրճմիդի դէմ գրած մի յօդուածի մէջ—Բազմավէպի այդ թուահամարը չենք յիշում—նա համեմատել է Խորենացու պատմութեան եօթը ձեռագիրներն, որոնցից երկուսը չեն գրում «ցսկիզբն ամին երկրորդի», այլ «ցսկիզբ երկրորդ Յազկերտի պարսից եղելոյ թագաւորի», մանաւանդ որ «Երկրորդ» բառը գլխատառով է գրուած, որ աւելի Յազկերտին է վերաբերում, քան տարուն։

Ենայի Համալսարանի գրադարանում գտնուող Խորենացու Հայոց պատմութեան մի ձեռագիր անթուական օրինակի մէջ նոյնպէս ասուած է, «Մինչ ցսկիզբն երկրորդին ամի Յազկերտի պարսից եղելոյ թագաւորի [33])։ Մենք նոյնպէս համեմատել ենք Տփխիսում հրատարակուած Խորենացու պատմութիւնը՝ Լայպցիգի քաղաքային դրադարանի մէջ գտնուող Խորենացու պատմութեան մի ձեռագիր օրինակի հետ, սակայն այդ կէտը չենք նշանակել, երևի այն պատճառով, որ տարբերութիւն չի եղել։

սարիգա» իսկ նոր պարսկական լեզուով «նաուսաալ». տես. Paul de Lagard. Armenische Studien. *էջ* 180։

32) *տես. Մ. Խորենացի, նոյնը, դիրք* III. *գլխ.* ԿԲ. *էջ.* 406—407

33) *Տես. ձեռագրի* 180-*րդ թերթն. էջ առաջին, բ. սիւնեակ. տող* 6—8։

Թէև Ֆլօրիվալի հրատարակած Խորենացու մէջ էս գրուած է. «մինչ ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի». սակայն այդ հեղինակը ֆրանսերէն թարգմանութեան մէջ ասում է. „jusqu'au commencement de la Deuxiéme année de règne de Hazguerd [34])...“։ Պրօֆ. Էմինը Խորենացու պատմութեան ռուսերէն թարգմանութեան մէջ էս դրել է «մինչև Յազկերտի թագաւորութեան երկրորդ տարուայ սկիզբն» [35])։

Մովսէս Կաղանկատուացու ռուսերէն թարգմանութեան մէջ ասուած է. Յազկերտ երկրորդի առաջին տարին, Նաւասարդի վերջին մեռաւ սուրբ Սահակը և վեց ամսից յետոյ սուրբ Մեսրոպը [36])։

Ինչպէս արդէն ասացինք, Կորիւն Սքանչելու վկայութիւնը պարզապէս ցոյց է տալիս մեր բացատրութեան ճշտութիւնը [37])։

---

34) *Տես.* Vailland de Florival. Moise de Khoréne etc. *Հատ.* II. *էջ.* 189։

35) „До начала втораго года вацаренія царя парсискаго Язкерта“ *տես.* Эминъ, Ист. Арм. М. Х. etc. *էջ* 227։

36) Въ первый годъ втораго Газкерта въ концѣ Навасарда преставился св. Саакъ, и по прошествіи 6 Мѣсяцевъ... Месропъ... *տես. պրօֆ. Պատկանեան։* Истор. Агванъ etc. *նոյն, էջ.* 90։

37) *Եթէ նոյն իսկ ընդունենք, որ Մ. Խորենացին Յազկերտի թագաւորութեան երկրորդ տարուայ սկիզբն է ասում, դարձեալ ճիշտ կլինի մեր հաշիւը, վասն զի թէ Սէն-Մարտէն և թէ Նէօլդեկէ—* Tabari etc. *էջ* 403—*Հաստատ պնդում են—ծանրակըշիռ փաստերով,—որ Պարսից արքաներն իւրեանց գահը բարձրանալու անմիջապէս հետևող նոր տարին հաշուում էին իբր իւրեանց թագաւորութեան երկրորդ տարին.* 438 *թ. ըստ Նէօլդեկէի—տես* Tabari, *նոյնը, էջ* 436—*պարսից Նոր տարին ընկնում է Օգոստոսի* 4-*ին, ուրեմն եթէ Յազկերտը նոյն իսկ* 438 *թուի Յունիս ամսին բարձրանար արքայական գահը, նոյն թուի Օգոստոսի* 4-*ից յետոյ նա հաշուում է իբր իւր թագաւորութեան երկրորդ տարին—թէ և ընդամէնն մի ամիս է անցել։—Ա.Յակոբով*

Այս վկայութիւնքն արդէն ինքն ըստ ինքեան կ'լուծէին խնդիրն — ընդունելով Կորիւնի վկայութիւնն, որ սուրբ Մեսրոպը «Գիւտ»-էց յետոյ ապրեց 35 տարի — եթէ Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարին խկզբաննէ որոշ լինէը, սակայն դժբաղդաբար այդ թուականն երկար ժամանակ վիճաբանութեանց առարկայ է եղել: Գիտնականներից ոմանք ենթադրում են, որ պարսից Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարին է 438 թուականն — այս կարծիքի են պրօֆ. Պատկանեան[38]), պրօֆ. Խուբշմիդը և Մալկոլմ[39]) — միւսներն ընդունում են 439 թուականն — այս կարծիքի է նոյնպէս Հայր Ջամչեանը[40]) — այլք 440 թուականն — այս կարծիքի են անգլիացի Թաուլինսոն գիտնականն և Լանգլուան[41]). իսկ Ռիխտերը 442 թիւն է ընդունում[42]):

Մենք ընդունում ենք 438 թուականն իբրև ամենից հաւանականը, վասն զի գիտութեան այս ճիւղի — սասանական պատմութեան — ամենավերջին հետազօտութիւնները հաստատում են այդ և պարսից Յազկերտ երկրորդ արքայի թագաւորութեան առաջին տարին այդ թուականն ընդունում[43])»

պարզ է, որ 438 թուի Սեպտեմբեր ամիսն — «յետս նաւասարդի» — այդ պարսկական հաշուով կարող է արդէն Յազկերտի թագաւորութեան երկրորդ տարին համարուիլ:

38) Տես. journal Asiatique t. VII. էջ 163:

39) Տես. Malcolm: Geschichte von Persien etc. Հատ. I. էջ. 98:

40) Տես. Ջամչեան. նոյնը, հատ I. էջ 752.

41) Տես. V. Langlois: Collection etc. Հատ. II. էջ 14 ծթ. 2.

42) Տես. Richter, նոյնը, էջ 209:

43) Տես. Ferd. Iusti: Geschichte des alten Persiens, էջ 196 և Նէօլդեկէի մեր արդէն յիշած աշխատութիւնը: Այս վերջին աղբիւրին է դիմում միշտ՝ Սասանեան պատմութեան մասին խօսելիս, դարուս ամենանշանաւոր և յայտնի պատմագիրներից՝ Հանո-

Տեսնենք արդեօք Հայոց պատմութեան միջնորդութեամբ չէ՞ կարելի հաստատել այդ թուականը:

«Ոսկեղնիկ» Ղեւոնդ պատմելով Յազկերտ Բ-ի հալածանքները քրիստոնէից դէմ՝ շարունակում է. «Արդ իսկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ՝ դունդ գումարէր — Յազկերտ Բ — անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Թիւրաստական[44])». ահա այս ժամանակ է տեղի ունենում Ռուշանաց դէմ պատերազմը և «զբազմութիւն այրուձիոյն Հայոց՝ արգելումն «ի ներքոյ պահ դրբանն»[45]): Եւ ապա Ղեւոնդ յառաջ բերելով այն թղթի բովանդակութիւնն, որ Հայերն ուղարկեցին Թէոդոս կայսեր, շարունակում է. «Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն, և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ՝ զի մի եկեղեցիքն արևելեաց յափշտակեսցին յանօրէն հեթանոսացն, ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա և կարի չար խափանումն լինէը գործոյն օգնականութեան»[46]):

գուցեալ Լէոպոլդ Քօն Ռանքէն՝ իւր ընդհանուր պատմութեան բազմահատոր աշխատութեան մէջ: Սասանական պատմութիւնն այնչափ սերտ կապ ունի մեր պատմութեան հետ, որ առանց դորա չի կարելի որոշել մի որև է ժամանակագրական շրջան — հարկաւ միայն Սասանեան իշխանութեան ժամանակ — ուստի և յօդուածիս վերջը հրատարակում ենք Նէօլդեկէի «Սասանեանց ժամանակագրական ցուցակն», որ արդիւնք է համեմատական աշխատութեան և այժմ ընդհանուր հեղինակութիւն ունի Եւրոպայի պատմաբանների համար:

44) Տես. Ղեւոնդ — Տփխիսի հրատարակութիւն, յեղանակ երկրորդ, էջ 23:

45) Տես. Ղեւոնդ, նոյնը, էջ 24:

46) Տես. Ղեւոնդ, նոյնը, յեղանակ երրորդ, էջ 104:

Ղեւոնդի վկայութիւնն իբրև ժամանակակից պատմագրի, մեծ նշանակութիւն ունի, ուստի և նոյն իսկ Նէօլդեկէն ասում է, որ

Ա՛րդ, եթէ Ռուշանաց պատերազմից մինչև Հայոց թըղթի Բիւզանդիոն հասնելը նոյն իսկ մի տարի անցած լինէր, այն ժամանակ Թէոդոս Փոքրի մահուան տարին Յազկերտ Բ. պէտք է ամբողջ տասն և երկու—12—տարի պարսից թագաւոր եղած լինէր, վասն զի, ինչպէս որ տեսանք վերոյիշեալ վկայութիւնից՝ Եղիշէն ասում է. «Իսկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ—Յազկերտ Բ-ի»:

Յայտնի է որ Թէոդոս Բ. կայսրն—որին մեր պատմագիրները Թէոդոս Փոքր են անուանում՝ Թէոդոս Մեծից զանազանելու համար—վախճանեցաւ 450 թուին. եթէ 450 թուին Յազկերտ Բ. արդէն տասներկու տարի թագաւորած էր, ուրեմն նորա թագաւորութեան առաջին տարին պէտք է ընականապէս լինէր 450—12=438 թուականը:

Այժմ դիմենք մեր մի այլ պատմագրի վկայութեան:

Ղազար Փարպեցին Վարդանանց նահատակութիւնը դնում է Յազկերտ Բ-ի թագաւորութեան 13 տարին. «Ա՛րդ խաղացուցեալ զնոսա (Հայոց իշխաններին) զամենեսեան առաջի իւր յերկիրն պարսից՝ նենգաւորն Վասակ, յերեքտասաներորդում ամի Յազկերտի արքային պարսից...»[47])

Ա՛րդ, Վարդանանց նահատակութիւնն, այսինքն Հայոց խղճի և սրտի բռնաբարման դէմ պատերազմն, տեղի ունեցաւ Թէոդոս Բ. կայսեր մահուան յաջորդ տարին, 451 թուին: Եթէ այս թուից դուրս գանք տասերեք—13—տարի—տարբերութիւնը կարող է մի քանի ամիսների մէջ լինել—, կըտեսնենք որ ըստ Փարպեցու վկայութեան և՛ս Յազկերտ Բ. թագաւորեց 438 թուին:

Եղիշէի հեղինակութիւնը—Autorität—գերազանցում է միւս բոլոր պատմագիրների վկայութեանց. „...Denn der Zeitgenosse Elisäus—Եղիշէ,—dessen Autorität hier die aller Anderen weit überragt...“ տես. Նիօլղիկէ, նոյնը, էջ 426:

47) Տես. Ղ. Փարպեցի, նոյնը, էջ 223:

Այսպէս ուրեմն Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարեթիւն՝ 438, որ մենք ամենահաւանականը համարեցինք, համապատասխանում է ոչ միայն օտար պատմագիրների, այլ և հայոց մատենագիրների վկայութեանց:

Այս թուականից անմիջական կախումն ունի Մեծն Սահակ Պարթև կաթողիկոսի և Հայ երկրի ուսուցանողի—սուրբ Մեսրոպի—մահուան տարեթիւն. սակայն յառաջ քան վերոյիշեալ փաստերի հիման վերայ մեր եզրակացութիւնն անելու՝ յառաջ ենք բերում այն կարծիքներն, որ յայտնուել ենցայժմ սուրբ Սահակի և Մեսրոպի մահուան տարեթուի մասին: Այս կարծիքները հարկաւ տարբերւում են միմեանցից. ոմանք ընդունում են 439, ոմանք 442 և 443, իսկ մեծամասնութիւնը 440 և 441 թուականը: Յիշենք մի քանի հեղինակների անուններն, որոնք այդ մասին կարծիք են յայտնել:

Հայագէտ Դիւլօրիէն սուրբ Սահակի մահուան տարին հաշւում է 439 թուի սեպտեմբերի 4-ին[48]): այդ պատճառաւ և հայագէտ Բրօսէն ասում է. S. Sahac siége 400—440»:

«440 և 441» թուականը ճիշտ են համարում ա. Հայր Զամչեանը[49]), ը. պրօֆ. Էմինը[50]), գ. պրօֆ. Պատկանեանը[51]),

---

48) Տես. Dulaurier, Chronologie armèn. etc. էջ 203. Դըժբաղդաբար չ'կարողացանք Դիւլօրիէի այդ աշխատութիւնը ձեռք բերել, որպէս զի տեսնէինք թէ նա ինչ հիմանց վրայ է ընդունում 439 թիւն. վերոյիշեալ նկատողութիւնը մենք առնում ենք Brosset-ից. Collection d'Historiens Arméniens. հատ. II. էջ 378. ծթ. 1.

49) Տես. Զ ա մ չ ե ա ն, նոյնը, հատ. I. էջ 533:

50) Տես. Эминъ: Ист. Арм. М. X. etc. էջ 362.

51) Տես. Պատկանեան: Ист. Агванъ etc. յաւելուած II. մասի. էջ 326:

դ. Գր. Խալաթեանը[52]), Ե. Իւստին[53]),— որ սուրբ Սահակի մահուան տարեթիւը 440 թ. նշանակելով՝ սխալմամբ շարունակում է՝ թէ Մեսրոպը մէկ տարի կաթուղիկոսական տեղապահ էր—գ. Բրօսէն[54]), Է. Վլօրիվալը[55]), ը. Լանգլուան[56]) և այլք։

442 թիւն ընդունում է Դուիշմին իբրև սուրբ Սահակի մահուան տարին[57]), իսկ 443 թ. ընդունում է Սէն-Մարտէնը. «La mort de Sahac, arrivée en la 2 année (?!) d'-Jezdedjerd II, roi de Perse en l'an 443[58]):

Վերոյիշեալ հեղինակների այս տարբեր կարծիքներն յառաջանում են այն հանգամանքից, որ դոցանից իւրաքանչիւրն այլ թիւ է ընդունում Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարուայ համար և երկրորդ. համաբեր թէ մեծամասնութիւնը հաշւում է Յազկերտ Բ-ի թագաւորութեան երկրորդ տարին իբրև սուրբ Սահակի մահուան տարին։ Մենք արդէն ընդունեցինք—որոշ փաստերի հիմանց վերայ—որ սուրբ Սահակը վախճանուեցաւ Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին տարուայ սկզբին. և որ Յազկերտ Բ. թագաւորեց 438 թուին. այստեղից պէտք է եզրակացնենք ուրեմն, որ սուրբ Սահակը վախճանեցաւ 438 թուականին։

Մեր բոլոր պատմագիրներն որոշ ասում են, որ սուրբ

52) Տես. Գր. Խալաթեան. Ղազար Փարպեցի և գործք նորին. էջ 60։

53) Տես. Iusti. նոյնը, էջ 196։

54) Տես. Brosset: Collection etc. նոյնը, հատ. I. էջ 67 ծթ. b. c. նոյնպէս հատ. II. էջ 378 ծթ. 1։

55) Տես. Vailland de Florival: Möise de Khorène etc. յառաջաբան, էջ 8։

56) Տես. Langlois: Collection etc. նոյնը, հատ. II. էջ 9 ծթ. 2 և էջ 10 ծթ. 1։

57) Տես. Alf. von Gutschmid: Agathangelos. տպուած է Zeitschrift d. d. morg. Gesellschaft հատ. 31-ի մէջ. էջ 55։

58) Տես. Histoire du Ras-Empire, etc. հատ. 5 էջ 30 ծթ. 1։

Սահակը փոխեցաւ Նաւասարդ ամսի վերջին օրն. այդ ամիսն, որ մեր հին նախնեաց հաշուով տարուայ առաջին ամիսն էր, համապատասխանում է օգոստոս ամսին, ուրեմն և Նաւասարդի վերջին օրը պէտք է լինի սեպտեմբերի առաջին օրերին[59]։ Այս իրողութիւնը ճշտիւ համապատասխանում է այն հանգամանքին, որ Նեօլդեկէն Յազկերտ Բ-ի գահակալութեան ամսաթիւը նշանակում է 438 թ. օգոստոսի 4-ին. ուրեմն այդ արքայի թագաւորութեան նոյն իսկ երկրորդ ամսին վախճանուեցաւ սուրբ Սահակը. որ այս հաշիւը ճիշտ է, վկայում են պարզապէս մեր պատմագիրներն՝ ասելով «ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի»։

Մեր պատմագիրները նոյնպէս միաբերան վկայում են՝ որ Մեծն Պարթև կաթուղիկոսի մահից վեց ամիս յետոյ՝ Մեհեկանի 13-ին վախճանեցաւ հայ երկրի ուսուցիչ՝ սուրբ Մեսրոպը։

Մեհեկան ամիսը համապատասխանում է փետրուար ամին[60]. ուրեմն սուրբ Մեսրոպն իր մահկանացուն կնքեց

59) Վասն զի մեր նախնիքը, բացի այն 12 ամիսներից—Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց և Հրոտուաց—որ բաղկացած էին 30 օրից, ունէին նաև մի 13-րդ ամիս «աւելեաց» բաղկացած 5 կամ 6 օրից։ Մենք չենք մանում օրն որոշելու խնդրի մէջ. ընդհանրապէս ընդունուած է, որ Նաւասարդի վերջին օրը համապատասխանում է սեպտեմբերի 9-ին. սակայն Բրօսէն սխալ է համարում այդ հաշիւն ասելով, որ 440 թ. Նաւասարդի 1. ընկնում է օգոստոսի 8-ին, ուրեմն Նաւասարդի 30 պէտք է լինի սեպտեմբերի վեցը այս հաշիւն ի հարկէ չենք կարող ընդունել, վասն զի յարմարեցրած է 440 թ։ Տես. Brosset. Collection etc. նոյնը, հատ. I. էջ 67 ծթ. b. c.

60) Ը. Բօրէն կարծում է որ Մեհեկանը համապատասխանում է Յունուարի ամսին—երբեմն Նաւասարդը խառնելով Յունուարի հետ. տես. E. Boré: Elégie sur la prise de Constantinople հայերէնից թարգմանուած յօդուածի ծանօթութեան մէջ. տես. journal Asiatique t. 15 (1835) էջ 283։

439 թուի փետրուար ամսին[61]։

Այս թիւն որոշելով և Կորիւն Սքանչելու վկայութիւնն ընդունելով դժուար չէ այժմ գտնել մեր հին այբուբենի վերանորոգման և կատարելագործման թուականը. սակայն դեռ ևս տեսնենք՝ թէ ցայժմ ինչ կարծիքներ են յայտնուել այդ մասին։

Հայր Ջամչեանը «գրերի գիւտի» տարեթիւը դնում է 406—տես պատմութիւն հայոց. հատ. I. էջ 762—765։

Պրօֆ. Էմինը Խորենացու ռուսերէն թարգմանութեան մի ձանօթութեան մէջ—տես Эминъ, ист. Арм. М. X. etc. ծթ. 470. էջ 319—դնում է 406 թիւն. իսկ նոյն գրքի վերջը կցած հայկազանց և արշակունեաց ժամանակագրական ցուցակի մէջ դնում է 404 թ.—տես. Эминъ, նոյնն, էջ 331։ Այս երկու տարբեր թուերն էլ ոչ մի խօսքով բացատրուած կամ ապացուցուած չեն, ուստի և մեզ անհասկանալի եղաւ թէ՝ պրօֆ. Էմինն այդ թուերից ո՞րն է ճիշտ համարում։

Իւստին չ'գիտենք ինչ հաշուով «տառերի գիւտ»-ի թուականը համարում է 397 թիւն[62]։

Նոյմանն ընդունում է նոյնպէս 406 թիւն[63]։

---

61) Այս դէպքում էլս չենք որոշում օրուայ խնդիրն. առհասարակ ընդունուած է, որ Մեհեկանի 13 համապատասխանում է Փետրուարի 19-ին. իսկ Բրօսէն այդ սխալ համարելով՝ ասում է, որ այդ օրը համապատասխանում է Փետրուարի 16-ին—այս տեղ նոյնպէս հաշուելով 441 թուի համար. տես. Brosset. Collection etc. նոյնը, հատ. I. էջ 67 ծթ. b. c. La mort de saint Mesrob eut lieu le 19 fevrier 441. Le mois persan Mihragan consacré an dieu Mihr ou Mihra. տես. Langlois: Collection etc. նոյնը, հատ. II. էջ 173 ծթ. 2.

62) Տես. Iusti. նոյնը, էջ 196։

63) Տես. Neumann: Memoire sur la vie et les ouvrages de David, philosoph arménien etc. տես. nouveau journal Asiatique t. 3 (1823) էջ 54։

Բրօսէն, նկատելով որ Սամուէլ Անեցու յիշած թուականն՝ 418 ժամանակագրական սխալ է, աւելացնում է. անվիճելի է, որ «տառերի գիւտ»-ը տեղի ունեցաւ հինգերորդ դարու առաջին տարիներում՝ 406 կամ 408[64]) թ։ Մի այլ տեղ Բրօսէն քննադատելով Սամուէլ Անեցու միմեանցից տարբեր և միմեանց հակասող վկայութիւնները տառերի գիւտի թուականի մասին՝ ասում է. «ամենահմուտ քննադատներն 406 և 408 թուականն ընդունում են իբրև հայոց այբուբենի գիւտի թուականը...[65])։ Սակայն միևնոյն Ակադեմիկոս Բրօսէն Մխիթար Այրիվանեցու «պատմութիւն ժամանակագրական»-ի թարգմանութեան մէջ նկատում է, որ ընդհանուր կարծեաց համեմատ հայոց այբուբենը վերականգնեցաւ 404 թուին[66])։

Թէ ո՞ր թիւն է Բրօսէն ճիշտ համարում, նոյնպէս կարելի չէ իմանալ, վասն զի և դոցանից ոչ մեկը փաստերով չէ հաստատում և իւր որոշ կարծիքն յայտնում։

Ա՛իս բոլոր՝ թէ հայ և թէ օտար մատենագիրներն և և քննիչներն ընդունում են այդ թուերից մեկը կամ միւսն, ուստի և առանձին առանձին յիշելն այստեղ կարևոր չէ։

Տեսնենք այժմ թէ այդ թուերից ո՞րն է ճիշտն ըստ մեր սկզբնական տեսութեան և հաշուի։ Մի կողմից մենք ընդունում ենք Կորիւն Սքանչելու վկայութիւնն, որ սուրբ Մեսրոպը մեր նոր այբուբենը կազմակերպելուց յետոյ մինչև իւր մահն՝ ապրեց և գործեց երեսուն և հինգ (35)

---

64) Տես. Brosset: Deux Historiens Arméniens Kiracos de gantzac etc. Ouktanes D'ourha etc. էջ 13 ծթ. 4. տես. նոյնպէս Brosset Collection. etc. հատ. I. էջ 63. ծթ. 4։

65) Տես. Brosset: Samouel d'Ani, revue générale de sa chronologie. տպուած է Bulletin de l'académie imperiale des Sciences de St.-Petersbourg հատ. 18. (1873).

66) Տես. Brosset-ի թարգմանութիւնը, որ տպուած է Mémoires l'academie imperiale des science de St. Pétersbourg. VII. série, tome VIII. (1869) № 5. էջ 66։

տարի. իսկ միւս կողմից աշխատեցինք փաստերով ապացուցանել, որ սուրբ Մեսրոպն իւր երկրաւորը կնքեց 439 թ. պարզ է, որ մեսրոպեան այբուբենի կազմակերպութեան թիւն որոշելու համար պէտք է 439 թ. հանել 35 թիւն, որ և կստանանք 404։

Սուրբ Մեսրոպը հայոց այբուբենը կազմակերպեց Քրիստոսի 404 թուականին։

Այժմ տեսնենք՝ թէ արդեօք այլ վկայութիւններ եւս կան, որոնք հաստատէին մեր կարծիքն. ինչպէս արդէն տեսանք, Կորիւնն ասում է. «Եւ առնու համար ամաց սրբոյ հաւատոց ի չորրորդ ամէ Կրմանայ արքայի՝ մինչև ցառաջին ամըն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ. և *դպրութեան հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն*»։ Այս Յազկերտն իհարկէ Յազկերտ առաջինը կարող է լինել. արդ, եթէ ըստ Իւստի ընդունենք, որ պարսից Յազկերտ Ա. թագաւորեց 397 թ.[67]) կ'տեսնենք որ դորա թագաւորութեան ութերորդ տարին կլինի 397 և 7=404, որ ճշտիւ համապատասխանում է մեր հաշուին։

Թէև Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնը մեր ձեռքը չէ դժբաղդաբար, սակայն ըստ Բրօսէի[68]) այդ պատմութեանը վկայում է, որ Արկադ կամ Արկադիոսի բիւզանդական թագաւորութեան տասերորդ տարին տեղի ունեցաւ Հայկական դպրութեան սկիզբն՝ այսինքն մեսրոպեան այբուբենի կազմակերպութիւնը։ Յօդուածիս սկզբում յառաջ բերած «վեր-

---

67) Տես. Iusti, նոյնը, էջ 193. Նեօլդեկէն Յազկերտ I-ի թագաւորութեան սկիզբը դնում է 399 թ. ինչպէս արդէն տեսանք պրօֆ. Պատկանեանը եւս մի տեղ Յազկերտի թագաւորութեան առաջին տարին դնում է 397 թ. ուրեմն համաձայն Իւստի, կամ աւելի լաւ է ասել ընդհակառակն, վասն զի երկրորդի աշխատասիրութիւնն աւելի ուշ է լոյս տեսել։

68) Տես. Brosset, Bulletin etc. նոյնը, հատ. 18. նոյն յօդուածն։

ւերաց» կոչուած մի ձեռագիր եւս վկայում է, որ «տառերի գիւտ»-ը տեղի ունեցաւ Արկադիոս և Ոնորիոս կայսերաց թագաւորութեան տասերորդ տարին։ Ա'րդ, յայտնի է, որ այդ երկու կայսրները միատեղ թագաւորեցին 395 թուականին[69]). ուրեմն դոցա թագաւորութեան տասերորդ տարին կլինի 395 և 9=404[70])։

Այսպիսով այս երկու վկայութիւններն եւս հաստատում են մեր տեսութիւնն, այսինքն Մեսրոպեան այբուբենի կազմակերպութիւնը Քրիստոսի 404 թուականին։

Թէև այսչափ փաստերը բաւական են, սակայն յառաջ բերենք դարձեալ մի կողմնակի վկայութիւն, որ անուղղակի կերպիւ կրկին հաստատում է մեր տեսութիւնը։

Նոյմանը խօսելով Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի մասին՝ ի մէջի այլոց ասում է նաև հետևեալն։ «Ես կարծում եմ, որ այս աշխատութեան պատմական մասի ճշտութիւնն իբրև անժխտելի պէտք է ընդունել, որովհետև այդ նոյնպէս հաստատուած է Ծովսէփ կաթուղիկոսի մի նամակով, որ ուղղուած է Թէոդոս Փոքր կայսեր, և ինչպէս երևում է այդ նամակը

---

69) Թէոդոս մեծը վախճանուելով՝—ըստ իւր առաջուց որոշման—395 թուին Հռովմայեցւոց կայսրութիւնը բաժանուեցաւ երկու մասի. արևելեան բաժնի—կամ բիւզանդական կայսրութեան—կայսր դարձաւ Թէոդոսի անդրանիկ որդին՝ Արկադիոս. իսկ արևմտեան բաժնի—իսկական Հռովմէական կայսրութեան—կայսր դարձաւ կրտսեր որդին՝ Ոնորիոս. ահա այստեղից է յառաջանում այն հանգամանքը, որ երկուսն եւս միաժամանակ են տիրում—395 թուից սկսած։

70) 1699 թ. Ամստերդամ տպուած մի փոքրիկ գրքի մէջ—որ այժմ գտանում է Վենայի համալսարանի գրադարանում—ասուած է «... Գիրն Հայոց գտաւ յամի տեառն 422. վերնային շնորհօք և երկասիրութեամբ բազմերախտ Հարցն սրբոց Իսահակայ մերոյ Հայրապետին և Մեսրոպայ եռամեծի վարդապետին»։ Տես. Ոսկեայ դուռն դպրատան, վասն Նորեկ դեռակիրթ և խակավարժ մանկանց Հայկազունեանց և այլն։

պէտք է գրուած լինի 440 *Թուականի սկզբում*...։ [71])

Յայտնի իրողութիւն է, որ Յովսէփը Կաթողիկոսական գահը բարձրացաւ սբ. Մեսրոպի մահից յետոյ. արդ, եթէ 440 Թուականի սկզբում Յովսէփն արդէն կաթուղիկոս էր, ակնայայտնի է, որ սբ. Մեսրոպը պէտք է վախճաներ 439 Թուին. եթէ այբուբենի կազմակերպութիւնից յետոյ սբ. Մեսրոպն ապրեց դեռ ևս 35 տարի կ'նշանակէ, որ այդ կազմակերպութիւնը տեղի ունեցաւ 439 —35=404 Թուին։

Մեր հին պատմագիրների շատ վկայութիւններն եթէ առանձին-առանձին վերցնենք՝ չեն համապատասխանում մեր տեսութեան, տակայն այդպիսով չէ խախտւում այս տեսութիւնը, վասն զի այդ վկայութիւնները միմեանց հակասելով պարզապէս ապացուցանում են, որ ճիշտ չեն. մենք մի հաստատուն սկզբնակէտ ընդունելով Կորիւն Աքանչելու վկայութիւնն և սբ. Մեսրոպի մահուան տարեթուի որոշումն՝ աստիճանաբար և փաստերով յառաջ բերինք այս տեսութիւնը՝ հիմնուելով պատմական հետազօտութեանց ցայժմ տուած հետևանքների վերայ։

ՑՈՒՑԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՍԱՆԵԱՆ ԱՐՔԱՅԻՑ ԸՍՏ ՆԵՕԼԴԵԿԷԻ։ [72])

1	Արտաշիր Ա.	226 թ. 26 [73])	սեպտեմ.
2	Շապուհ Ա.	241 թ. 22	,,
3	Որմիզդ Ա.	272 թ. 14	,,
4	Վռամ-Բահրամ Ա.	273 թ. 14	,,

71) *Տես.* Neumann. Memoire sur la vie de David etc. *նոյնը, էջ* 51։

72) *Այս ցանկը նեօլդեկէն հրատարակել է* Tabari-*ի պատմութեան թարգմանութեան կից. տես.* Nöldeke: Tabari etc. *նոյնը, էջ* 435։

73) *Տարեթուերը ցոյց են տալիս պարսից արքայից թագաւորութեան առաջին նոր տարուայ սկզբնաւորութիւնն ըստ Հաշուի։*

5	Վռամ Բ.	276 թ. 13	,,
6 7	Վռամ-Շահնշահ Գ. Նարսեհ	293 թ. 9	,,
8	Որմիզդ Բ.	302 թ. 7	,,
9	Շապուհ Բ.	309 թ. 5	,,
10	Արտաշիր Բ.	379 թ. 19	Օգոստոսի
11	Շապուհ Գ.	383 թ. 18	,,
12	Վռամ-Կրման-Շահ Գ.	388 թ. 16	,,
13	Յազկերտ Ա.	399 թ. 14	,,
14	Վռամ-Գոր Ե.	420 թ. 8	,,
15	Յազկերտ Բ.	438 թ. 4	,,
16	Որմիզդ Գ.	457 թ. 30	Յունիսի
17	Պերոզ	457 թ. 30 (459 թ. 30 յուլ).	
18	Վաղաշ-Բալաշ	484 թ. 22	,,
19	Կաւադ Ա.	488 թ. 22	,,
	(Համասպ.	496 թ. 20	,,
20	Խոսրով Ա. Անուշիրվան	531 թ. 12	,,
21	Որմիզդ Դ.	578 թ. 30	Յունիսի
22	Խոսրով Բ.	590 թ. 27	,,
	(Վռամ Զ. Զոբին, Վշտամ-Բիստամ)		
23	Կաւադ Բ. շէրսէր	627 թ. 18	,,
24	Արտաշիր Գ.	628 թ. 17	,,
25	Շահար Վարազ-Շարբարազ.	629 թ. 17	,,
26	Բորան	630 թ. 17	,,
27	Որմիզդ Ե.	631 թ. 17	,,
28	Յազկերտ Գ.	632 թ. 16	,,

Բ.

ԹԷ Ո՞ՐՏԵՂ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ «ԳՐԻ ԳԻՒՏ»-Ը։



Այոց գրի իսկական գիւտի տեղն, այսինքն Հայոց Հին այբուբենի երևան գալու վայրն, ոչ ոք մեր պատմաբաններից չէ յիշում. Մ. Խորենացին պատմում է, որ երբ Վռամշապուհը միջադեպքումն էր. «...մատուցեալ առ արքայն քահանայի որումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր Հայկականաց լեզուաց առնել նշանագիրը, յորմարեալ ի Դանիէլէ եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձաւորէ...։ [1]) Բայց թէ որեղացի էին այդ քահանան և Եպիսկոպոսը, չէ ասում Խորենացին. ապա խօսելով Վահրիճի դեսպանութեան մասին՝ ասում է. «...առաքեաց... առ Հաբէլն այն։ Զոր առեալ, և երթեալ Նուաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիէլ է.. եկեալ եառն ցմեծն Սահակ և Մեսրոպ»։ [2]) Այս տողերից երևում է, որ Հաբէլն այլ տեղ էր բնակւում, Դանիէլն այլ, սակայն որտեղ — այդ չէ յիշւում։

Կորիւն Սքանչելին ասում է. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ Եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս ալփաբետաց Հայերէն լեզուին.., Եւ նա առաքէր զսմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց որոյ անունն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ Եպիսկոպոսի։ Իսկ Հաբէլին զայն լուեալ՝ փութանակի հասանէր առ Դանիէլն...» [3]) Նոյնպէս անորոշ է մնում թէ որտեղ էր Հաբէլը և որտեղ Դանիէլը։

Ղազար Փարպեցին մի փոքր աւելի պարզ է ասում «...ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս առ ումեմն Եպիսկոպոսի ի գետ միում... Վաղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ ոմն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց՝ հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երեց Հաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որև մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն Հայերէն կային. և երանելւոյն Հաբէլի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ և լուեալ զիրսն, փութանակի հասանէր առ սքանչելի Եպիսկոպոսն Դանիէլ...» [4])։

Այս վկայութիւնից այնչափ է միայն պարզւում խնդիրն, որ Դանիէլ Եպիսկոպոսը մի գիւղում է լինում. սակայն թէ ի՞նչպէս էր կոչւում այդ գիւղը դարձեալ մնում է անորոշ։

Այս տեղի անյայտ մնալու պատճառն այն է, որ մեր վերոյիշեալ մատենագիրները «գրի գիւտ» ասելով՝ ոչ թէ Հայոց Հին այբուբենի գիւտն են ուզում արտայայտել, այլ այդ այբուբենի կատարելագործուիլը Սբ. Մեսրոպի ձեռքով. ահա մեր այբուբենի այդ կատարելագործութեան տեղի մասին են խօսում մեր մատենագիրները՝ սակայն տարբեր կերպիւ։

Մ. Խորենացին սբ. Մեսրոպի Եգեսիայ [5]) գնալը պատ-

---

1) Տես. *Մ. Խորենացի*, նոյնը գիրք III. գլխ. ծբ. էջ 368։
2) Տես. *Խորենացի*, նոյնը, էջ 369։
3) Տես. Կորիւն. նոյնը, էջ։
4) Տես. Ղ. Փարպեցի նոյնը, էջ 37—38։
5) Տես. *Մ. Խորենացի*, նոյնը, գիրք III. գլխ. ծգ. էջ 370։

մելու.ց յետոյ՝ շարունակում է. «Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ. քանզի եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս... որ ի Սամոս էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրոպայ ... Եւ յարուցեալ յաղօթից, եստեղծ զնշանագիրս մեր՝ Հանդերձ Հռոփանոսիւ...[6]։

Ղ. Փարպեցին ոչինչ չէ յիշում այդ մասին, ի բաց առեալ այն հատուածն, որ բառացի առնուած է Խորենացուց և բովանդակում է վերոյիշեալ տողերը։

Կորիւն Սքանչելին բոլորովին անորոշ է թողնում այդ վայրը. Նորա ասելով՝ սբ. Մեսրոպը «դանիէլեան» այրուբենի անյաջողութիւնից յետոյ՝ իւր աշակերտներով հանդերձ գնում է ասորոց Եդեսիայ և Ամիդ[7]) քաղաքներն և պատուով ընդունելուց յետոյ իւր աշակերտներին բաժանում է երկու մասի, որոնցից մէկը պէտք է զբաղուէր յունարէնի, իսկ միւսն ասորերէնի ուսումնասիրութեամբ՝ իսկ ինքը գնում է *Սամոսատայ* քաղաքն և իւրեան նուիրում աղօթից։

Եւ այսպէս մինչ նա բազում ջանիւք իւր ժողովրդի համար ճգնում և աղօթում էր, Ամենաողորմած Աստուածը կատարում է նորա ցանկութիւնը և այդպիսով ստեղծուում են Հայոց տառերն. այս պատմելուց յետոյ Կորիւնն անմիջապէս շարունակում է, որ սբ. Մեսրոպը բաժանուեցաւ Եպիսկոպոսից պատուով ընդունուեցաւ և Հռոփանոսի օգնութեամբ ձեւակերպեց նոր տառերը[8])։ Այսպիսով Կորիւնը կրկին անգամ ուղարկում է սբ. Մեսրոպին Սամոսատայ, առանց լիշելու նորա այնտեղից դուրս գալն և ուր գնալն, որով և խնդիրն անլուծելի է մնում։

Վարդան պատմագիրը խոսելով «տառերի գիւտ»-ի մասին՝ շարունակում է. աջով իւրով դրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսիսի ի լեառն Սինայ և սմա ի լեառն Բալուայ որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիւք միշտ ի (Տաճկաց և Բրիստոնէից) բնակչաց տեղոյն»[9])։ «Ոսկեփորիկ»-ի մէջ — որ նոյն հեղինակի աշխատութիւնն է — գտնում ենք հետևեալ տողերն, «Աթաթ և Հենի, Դերջան և *Բալու, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն. այսոքիկ Աբշակունիք կոչին*»[10])։

Այսպէս ուրեմն «Սամոս»[11]) կղզին, ասորոց «Սամոսատայ»[12]) քաղաքն և «Բալուայ լեառն» հանդիսանում են մեր

---

[6]) *Նղեսեան է հայոց հին «Ուռհայ»-ն, գտանուում է Միջագետքում և այսօր ունի մօտ 40,000 բնակիչ. «Ուռհայ կամ ժողովրդական բառով Ուրֆայ քաղաքը, որ գտանուում է Աղձնեաց աշխարհում, կառուցել է Աբգար Թագաւորը...» տես.* Ed. Dulaurier: „Extrait de la chronique de Michel le Syrien" *տպուած է* journal Asiatique t. 7 (1848) *էջ 317 ծթ.*

[7]) *Ամիդ քաղաքն այսօր կոչւում է Դիարբէքիր, գտանուում է 38° ի տակ և 620 մետր բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից, շինուած է Տիգրիսի աջ ափին և ունի 10,000 բնակիչ։*

[8]) *Տես. Կորիւն, նոյնը, էջ 14—16։*

[9]) *Տես. Վարդան պատմագիր, նոյնը, էջ 50։*

[10]) *Տես. Վարդանայ վարդապետի աշխարհացոյց ամենայն աիեզերաց. (Ոսկիփորիկ). — Բազմավէպ Հանդիսարան Հատոր Ե. (1887) բ. պրակ. էջ 140։*

[11]) *Սամոսը փոքր Ասիայի եղերքը գտանուող նշանաւոր կըղզիներից մէկն է. ունի $8^1/_2$ քառակուսի մղոն տարածութիւն և բնակիչների թիւը վերջին տարիներում արագապէս բազմանում է — մինչև 1882 թ. տպուած աշխարհագրական ձեռնարկների մէջ — տես.* Guthés Lehrbuch der geographie *Հատ. I. էջ 574 — հաշուած է 38,000 բնակիչ, վերջին ժողովրդագրութիւնից — 1885 թ. — երևեցաւ, որ կղզին ունի 41,156 բնակիչ — 20,795 արական և 20,361 իգական սեռից։*

[12]) *Սամոսատ կամ Սամուսատա գտանուում էր Միջագետ-*

պատմագրաց վկայութեամբ այն վայրերն, ուր կատարուեցաւ աստուածային շնորհաց հրաշալիքը։ Սակայն սոցանից ոմն է ճիշտը. մի գործողութիւն երեք անգամ չէր կարող տեղի ունենալ։

Վարդան պատմագրի և Ոսկիփորիկի աւանդած «Բալուայ լեառն» և այնտեղ գտնուած «աստուածագիծ դրոշմով» վէմն, պարզ երևում է, որ միայն ժողովրդական առասպել է, վասն զի Մեսրոպ. «տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յայտնութեան տեսիլ. այլ ի սրտին զործարանի երևոյթացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ» [13]։

Ուրեմն նոյն իսկ այդ հրաշքը պատմող մատենագիրները մի իսկական քար չեն երևակայում։ Ինչպէս երևում է, այդ լերան վրայ գտնուելիս է եղել մի արձանագրուած վէմ, որև առիթ է տուել այդ առասպելական աւանդութեան։ [14])

Մնում են վիճելի «Սամոս» և «Սամոսատայ», որ գուցէ իւրեանց նմանութեան պատճառաւ շփոթում են մեր հին մատենագիրները միմեանց հետ. նոր մատենագիրներից ոմանք

քում եղեսիայից հիւսիս արևմուտք — Դրա տեղ այժմ Եփրատի աջ ափին, 37° ներքոյ գտնուում է Սամսատ. տես. պրօֆ. Կիպերտի Փոքր Ասիայի մեծ քարտէզը։

«Սամոսատիա, Սամոսատ, Շամուշատ, et· Շամշատ, capitale de la comagene, auprès de l'Euphrate et non loin de Marasch''. տես. Ed· Dulaurier: Extrait de la chronique dc Michel le syrien etc· նոյնը, էջ 352 ծթ։

13) Տես. *Մ. Խորենացի*, նոյնը, գիրք III· գլխ. ծգ. էջ 370.

14) Վարդան պատմագրի հրատարակիչ Վենետիկցիք ծանօթութեան մէջ գրում են հետևեալը. «Բալուայ գիւտ անձաւ և այլ թերևս ոչ անպատճառ, զի ոչ միայն աղօթարան և մատուռն սբ. Մեսրոպայ պատուի անդ ի գլուխ լերին՝ յորում Բերդն Բալուայ և յիշատակի անդստին ի ժդ (14) դարէ, այլ զի և յանձաւի անդ լերինն՝ ուր հեղինակս ասէ զաստուածագիծ վէմն, զըտաւ ի նորումս Բեւեռաքանդակ արձանագիր հին» տես. նոյնը, էջ 50 ծթ.

ընդունում են Սամոս, ոմանք Սամոսատայ. *Զամչեանը* [15]) պրօֆ. *Էմինը*, [16]) *Սէն-Մարտէնը* [17]), *Իւստին* [18]) և այլք ընդունում են «Սամոսատան». *Փրդ. Միլլէրը* [19]) և մասամբ. *Լանգլուան* [20]) և այլք ընդունում են Սամոս. Վերոյիշեալ մատենագիրները մէկը կամ միւսը հաւանական համարելով՝ բաւականանում են առանց մի որ և է կարծիք յայտնելու թէ ինչո՞ւ մէկը հաւանական է, իսկ միւսը ոչ։ Մի որ և է հաստատ կարծիք յայտնել հարկաւ կարելի չէ, վասն զի պակասում են դրա համար պատմական փաստեր. երկու ժամանակակից հեղինակներից մէկը «Սամոս» է ասում, միւսը «Սամոսատայ» ոմն է ճիշտը. մենք չենք կարծում, որ այդ տարբերութիւնը գոյութիւն ունենայ այդ հեղինակների իսկական ձեռագրների մէջ. տարբերութիւնը պէտք է յառաջացած լինի յետոյ՝ արտագրողների կողմից. սակայն ոմն է սկզբնականը, ճիշտը և որը փոփոխուած.

---

15) Տես. *Հայր Զամչեան*, նոյնը, հատ. I. էջ 761։

16) Տես. Эминъ: Ист. Арм. М. Х. etc. էջ 322. ծթ. 479.

17) Տես. Saint-Martin, Histoire du Ras-Empire etc. հատ. 5 էջ 322 ծթ. 3։

18) *Իւստին* ընդունելով Սամոսատան, սխալ կերպիւ շարունակում է beide Schriftsteller, Welche von dieser Erfindung (գրի) reden, Mose von Chorene und Koriun, schreiben Samos''. տես. Iusti, նոյնը, էջ 196. — *ինչպէս արդէն տեսանք Կորիւնն է միայն, որ Սամոսատ է ասում. Իւստին ինչպէս երևում է Փարպեցուն խառնել է Կորիւնի հետ։*

19) Փրդ. Միլլէրն պսելով՝ որ Հռուփանոսը Սամոս է առանձնանում, ծանօթութեան մէջ նկատում է, որ Կորիւնի ասած «քաղաքն Սամոսատացւոյ» ,,ist offenbar ein alter Fehler'' տես. F. Müller. Über den Ursprung der armenischen Schrift նոյնը, էջ 433։

20) Լանգլուան մէկ տեղ Սամոսատ է ասում տես. Langlois: Collection etc· նոյնը, հատ. II. էջ 8 ծթ. 1։ Իսկ դորա հակառակ յառաջաբանի մէջ ասում է. Սամոս տես. նոյնը, discours Préliminaire, էջ XV· ահա այս հակասութեան պատճառաւ ասացինք «մասամբ»։

աչքի առաջ ունենալով, որ արտագրելու ժամանակ աւելի հեշտ է բառերի վանկերը մոռանալ, քան թէ մի նոր վանկ աւելացնել—թէ և վերջինն էս անկարելի չէ—հաւանական է, որ սկզբնական բառը լինի «Սամոսատայ», որի վերջին երկու վանկերը բաց թողնելով մնացել է «Սամոս»։ Աչքի առաջ ունենալով նոյնպէս Սամոս կղզու հեռաւորութիւնը Հայաստանից և Սամոսատի մոտաւորութիւնը, և ապա այն հանգամանքը, որ Խորենացին կղզի բառը չէ յիշում, այլ ասում է «ի Սամոս դիմէ»,—աւելի հաւանական է ընդունել Սամոսատայ։ Այս հաւանականութիւնը մի փոքր ճշտութեան կը մօտենայ, եթէ ընդունենք Հայր Զամչեանի հետևեալ վկայութիւնը. «... Նա և զի և այն Հռուփանոս, որ եղև գործակից Մեսրոպայ ի Սամոսատիա, բնակեալ էր ի նմին քաղաքի, և եղև յետոյ եպիսկոպոս Սամոսատացւոց. որպէս է տեսանել ի գիրս արտաքին մատենագրաց»։ [21])

Սբ. Մեսրոպն իւր կատարելագործած այբուբենին վերջնական ձև տուեց այդ Հռուփանոսի օգնութեամբ. նոր աւելացած հնչիւնները հարկաւ միանգամից չէին ստեղծուի, այլ երկար ժամանակի մտածմանց և խորհրդածութեանց արդիւնք պէտք է լինէին իսկ տառերի ձևերը մի հմուտ գրագրի ձեռ-

---

21) Տես. *Հայր Զամչեան*, նոյնը, հատ. I. էջ 761։

22) Ենայի համալսարանի գրադարանում եղած *Խորենացու* ձեռագրի մէջ՝ մի տեղ ասուած է. «աշակերտ մի անուանեալ Հռուփոնոս տես. թերթ 164. էջ երկրորդ. բ. սիւնեակ տող 5. մի այլ տեղ «..։ Հանգերձ Ռուփանոսիւ»—տես. նոյնը. թերթ 165. էջ առաջին. ա. սիւնեակ 2 տող—սակայն աչքի առաջ ունենալ, վերոյիշեալ ձեռագրի մէջ անթիւ տառասխալներն, այդ անուան ճիշտ ձևը համարում ենք «Հռուփանոս» կամ «Հռուփոնոս»։

Կիրակոս Գանձակեցին Հռուփանոսին կոչում է Հրհօմանոս Սամոսացի և սբ. Մահակ Մեսրոպի աշակերտ համարում. այս սբ. խալ տեղեկութիւնը նեղութիւն է տալիս Ակադեմիկոս Բրօսէին իզուր տեղն այդ անունն որոնել Հայր Զամչեանի յիշած սբ. Մես-

քով—ինչպէս որ էր Հռուփանոսը պատմագիրների վկայութեամբ—կարող էին շուտով ձևակերպուիլ. ուստի և մեր այբուբենի վերջնական կազմակերպութիւն ասելով մենք հասկանում ենք տառերի ձևերի վերջնական ձևակերպութիւնն, որ տեղի ունեցաւ *Սամոսատայ* կամ Սամոսատ քաղաքում Հռուփանոս [22]) հմուտ գրագրի օժանդակութեամբ։

րոպի 27 աշակերտների թուի մէջ։ Տես. Brosset: Deux Historiens Arméniens etc. նոյնը, էջ 14 ծթ. 3։

ՀԸՑՈՑ ԳԻՐՔ ԵՒ ՊՐՈՖ. ՓՐԻՓ. ՄԻՒԼԼԵՐ

Յայտնի արևելագէտ և հայագէտ *Փրիդրիխ Միւլլերը* (պրօֆ. Վիէննայի Համալսարանի) մի փոքրիկ յօդուած է նուիրել հայոց նշանագրերի կնճռոտ խնդրի պարզուելուն, որ տպուած է «Zeitschrift für die kunde des Morgenlandes» Վիէննայում հրատարակուողի եռամսեայ թերթի մէջ (տես. 1888 թ. տետր 3, էջ 245—248):

Այս յօդուածն ամբողջովին թարգմանուած գտնելով Վիէննայի «Հանգէս ամսօրեայ» թերթում (տես. 1889 թ. թիւ 5 էջ 86—87), առանց մի որ և է քննադատական ծանօթութեան, հարկ ենք համարում հետևեալ քանի մի դիտողութիւնները անել:

Յարգելի գիտնականն այս առաջին անգամը չէ, որ զբաղւում է հայոց գրի խնդրով: Նա արդէն 1864 թուին մի ընդարձակ յօդուած է ներկայացրել Վիէննայի կայսերական գիտութեանց ճեմարանին «Հայոց գրի ծագման մասին» —Über den Ursprung der armênischen schrift (տես. Sitzungsberichte der kaiserlichen Akademie der Wissenschaften, Wien հատոր 48):

Այժմ համեմատելով այս երկու յօդուածները, կարծիքի փոփոխութիւն ենք գտնում. յարգելի ուսուցչապետը 64-ին գրած յօդուածում հայոց այբուբենի գիւտը վերագրում է ամբողջովին սուրբ Մեսրոպին՝ հիմնուելով Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու և Կորիւն Սքանչելու վկայութեանց վրայ և հետևեալ եզրակացութիւնն է անում. «Մեսրոպի աշխատութիւնը կայանում է նորանում, որ նա կարողացաւ *արամա-*

յական բաղաձայն գրերից մի այբուբեն կազմակերպել, որի մէջ թէ բաղաձայն եւ թէ ճայնաւոր հատասարապէս նշանագրուեցան յունաց տառերի օրինակին հետևելով»:

Բսան ու չորս տարի անցնելուց յետոյ միայն յարգելի գիտնականը համոզուել է, որ սուրբ Մեսրոպն ոչ թէ մի բոլորովին նոր այբուբեն կազմակերպեց, այլ արդէն գոյութիւն ունեցող հայոց այբուբենը կատարելագործեց, թէև նա այդ այբուբենի գիւտը վերագրում է սորի Դանիէլին:

Վերջին յօդուածից երևում է, որ կարծիքի այս փոփոխութեան առիթն եղել է Ստեփաննոս Ասողիկ պատմագրի հետևեալ վկայութիւնը. «...Ի սորա աւուրս էր սուրբ Հայրապետն Հայոց Սահակ, յորոյ աւուրս գալոյ Թիւն Հայոց լեզուի Իթ (29) գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորւոց կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպ երանելի տարօնեցի խնդրուածովք յԱստուծոյ առնու»: (Տես. Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական Ս. Պետերբուրգ. 1885 թ. էջ 139—140):

Այս վկայութիւնը, պրօֆ. Միւլլերի ասելով, «անակնկալ լոյս է ձգում հայոց գրի ծագման խնդրի վրայ», ուստի և ընդունելով 29 տառի գոյութիւնը, նա այս յօդուածի մէջ կամենում է ցոյց տալ, թէ սուրբ Մեսրոպի աւելացրած եօթը տառերը որոնք են: Եւ յառաջ քան իւր կարծիքը յայտնելու, պրօֆ. Միւլլերը յառաջ է բերում պրօֆ. դը-Լագարդի յայտնած միտքը (տես. Göttinger gelehrte Anzeigen, 1883 էջ 281). դը Լագարդն ենթադրում է, որ հայոց հին այբուբենի հիմքը կազմում են յունաց այբուբենի 23 ձևերը, որոնց վրայ աւելացել են չորս տառ խալտերէնից (հ, ձ, ճ, վ,) և երկու տառ ասորի այբուբենից (յ և ծ), իսկ ը, ժ, խ, ղ, չ, ը, ց, եօթը տառերի ծագումը տարակուսական է համարում:

Այս ենթադրութիւնն անհաւանական համարելով. պրօֆ. Միւլլերն այն կարծիքն է յայտնում, որ սուրբ Մեսրոպի գտած

եօթը տառերը մեր այբուբենի եօթը ձայնաւորներն են (այս կարծիքը վաղուց արդէն ընդունուած է շատերից և նոր բան չէ), հիմնուելով Մ. Խորենացու այն հատուածի վրայ, որ յառաջ է բերած եօթը ձայնաւոր տառերը ա, ե, է, ը, ի, ո, ու։

Վերոյիշեալից տեսնում ենք, որ պրօֆ. Միւլլերը կամենում է որոշել երկու բան. ա. որ սուրբ Մեսրոպը միայն եօթը տառ աւելացրեց և բ. որ այդ եօթը տառերը մեր ձայնաւորներն են։

Արդեօք համոզեցուցի՞չ են յարգելի գիտնականի յառաջ բերած ապացոյցները։

Ո՛չ։

Ա. Ի՞նչ հիման վրայ պէտք է ընդունենք Ասողիկ պատմագրի վկայութիւնն իբրև Հշտազոյն. քանի որ նա սուրբ Մեսրոպի ժամանակակից չէ, այլ տասներորդ դարու պատմագիր, քանի որ այլ վկայութիւններ տարբեր կերպիւ են որոշում հին այբուբենի տառերի քանակութիւնը, օրինակի համար.

1) Դաւիթ անյաղթին վերագրուած մի գեղեցիկ այլաբանական հատուածի մէջ ասւում է, որ հին այբուբենը բաղկացած էր 24 տառից. «Ձեռք ամենակալին ստեղծին զիս և բարձրեալն ի բարձանց ի Բարձունս ընծայեաց զիս»։

Զափ հասակի իմոյ երկից երկոտասան (24) այժմ եմ երից երկոտասան» (36) [1]։

2) Վարդան պատմիչը վկայում է, որ հայոց հին այբուբենը բաղկացած էր 22 տառից։

3) «Ոսկեփորիկ» կոչուած ձեռագրների մէջ նոյնպէս 22 է համարւում հին տառերի թիւը։

4) «Կայսերաց» կոչուած յունարէնից թարգմանած մի հին ձեռագրի մէջ ասուած է. «ի սոցա (Արկագիոսի և Ոնո-

1) *Այս հատուածն յառաջ է բերում պրօֆ. Էմինը Մ. Խորենացու ռուսերէն թարգմանութեան յաւելուածի մէջ մի ձեռագրից, (տես. էջ 359)։*

բիոսի) տասներորդ ամի եղև սկիզբն Հայերէն քան եւ հինգ զրոց»... և. այլն։

Բ. Պրօֆ. Միւլլերի գլխաւոր ապացոյցն այն է, որ Մովսէս Խորենացու հայոց պատմութեան մի կամ երկու ձեռագրերների մէջ յառաջ են բերուած մեր այբուբենի եօթը ձայնաւորները։

Արդեօք այդ եօթը տառերի շարայարութիւնը Մ. Խորենացու գրչի՞ն է պատկանում։

Կասկածում ենք.

Որովհետև. ա. եթէ այդպէս լինի, այն ժամանակ մեծ պատմաբանը պէտք է ամբողջովին ոչնչացնէ այն ամենն, ինչ որ ինքը պատմում է հայոց գրի գիւտի մասին. բ. այդ հատուածը պէտք է գտանուէր Խորենացու պատմութեան բոլոր ձեռագրների մէջ [2]. գ. նոյնը պէտք է լիշէին և նորա ժամանակակից պատմագիրները, Ղ. Փարպեցին և Կորիւն Սքանչելին, որոնք շատ տեղ բառացի նմանութեամբ կրկնում են Խորենացու մէջ գտանուած խօսքերը։

Ուրեմն որտեղից են ներմուծուել Խորենացու մի երկու ձեռագրների մէջ այդ տառերը։

Մեր համոզմամբ այդ պէտք է տեղի ունեցած լինի յետագայ ժամանակներում արտագրողների կողմից, և հաւանական է, որ Ասողիկ պատմագրի վկայութիւնն ազդեցութիւն է ունեցել այդ արարմունքի վրայ. արտագրողը տեղեակ է եղել Ասողիկի վկայութեանը և այդ հիման վրայ Խորենացու պատմութեան մէջ անկապ կերպիւ մտցրել եօթը ձայնաւոր տառերն, որ ամենևին չեն համապատասխանում գրի գիւտի մասին նորա պատմութեան ընթացքին։

2) *Խորենացու պատմութեան ոչ Լատիներէն թարգմանութիւնը (Վիտտենեանց եղբարց ձեռքով) և ոչ էլ Ֆրանսերէն թարգ. չեն պարունակում եօթը ձայնաւոր տառերը։ Լայպցիգի քաղաքային գրադարանում և Վենայի համալսարանի գրադարանում եղած և մեր տեսած ձեռագրների մէջ ևս չկան այդ տառերը։*

Գ. Սրգեօք մեր հին այբուբենի վրայ սուրբ Մեսրոպը *միմիայն* ձայնաւոր տառեր աւելացրե՞ց։

Ոչ մի փաստ չունինք այդ բանը հաստատ ու դրական կերպիւ ընդունելու, որովհետև մեր պատմաբանները պարզ կերպիւ ակնարկում են, որ հին այբուբենի մէջ, բացի ձայնաւոր տառերից, պակասում էին նաև *բաղաձայն* տառեր. օրինակի համար.

1) *Մ. Խորենացին* ասում է. «... տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել *զհեզենայ* բառից հայկականաց հազներդաբար...»։

2) Նոյնը բառացի կերպիւ գտնում ենք Ղ. *Փարպեցու* պատմութեան մէջ։

3) *Կորիւն Սքանչելին* ասում է. «...իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել *զսիւղոքայս* և *զկապս* հայերէն լեզուոյն...»։

4) *Կիրակոս Գանձակեցին* ասում է նոյնպէս. «... բայց հայեցեալ տեսին, զի ոչ էր բաւական (Դանիէլեան այբուբենը) *զամենայն սիղոքայս* ողջ ածել և *զշաղկապս* և *զբառս*...»

5) «*Ցայսմաւուրքի*» մէջ ասած է. «...վարժեալ նովաւ մանկունս տեսանէին զի ոչ բերեն ուղղակի *զհեզս* հայոց բարբառոյն...»։

Այս վկայութիւնները ի նկատի ունենալով, չի կարելի ասել. 1) որ մեր հին այբուբենի մէջ *միմիայն* ձայնաւորներն էին պակասում և նոյնպէս անկարելի է ընդել, որ 2) հին այբուբենի մէջ *ոչ մի* ձայնաւոր չկար։

Հայոց հին այբուբենը *թերակատար* էր թէ ձայնաւորների և թէ բաղաձայնների կողմից—այսչափն որոշ ու հաստատ է։

Գիտութեան անխոնջ մշակ և քաջ հայերէնագէտ ուսուցչապետ *Փրիդ. Միւլլերը* դարձեալ մի յօդուած է նուիրել հայոց այբուբենի ծագման խնդրին „Zur Geschichte der armenischen Schrift“ վերտառութեամբ։ Այս յօդուածը տպուած

է, „Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes“ հրատարակութեան մէջ—տես. Հատ. IV. փետր—4. էջ 284—288 ու արդէն հայերէն թարգմանութեամբ լոյս տեսած Վիեննայի Մխիթարեանց «Հանդէս Ամսօրեայի» մէջ—տես. 1891 թ. № 3, էջ 68—70։

Յարգելի գիտնականն այս ահա երրորդ անգամն է հրապարակ հանում իր ուսումնասիրութիւնը հայոց գրի առթիւ և ամեն անգամ տարբեր եզրակացութեանց գալիս. հաւանականօրէն պատճառն այն է, որ բազմաթիւ արևելեան լեզուների ուսումնասիրութեամբ զբաղուելով միջոց չունի հայոց գրին վերաբերեալ բոլոր աղբիւրներն ուսումնասիրելու միանգամից և մի ամփոփ տեսութիւն կազմելու. նա ուսումնասիրում է մեկ-մեկ աղբիւր և այդպիսով ուրոյն հետևանքի հասնում։

Մենք ընդդիմախօսեցինք յարգելի պրօֆ. պաշտպանած տեսութեան դէմ և այս ամառ ևս վիեննայում անձամբ նրա հետ երկար խօսեցինք նոյն նիւթի վերաբերութեամբ։ Մեր կարծիքն այն էր, որ Մ. Խորենացու մի, կամ մի քանի ձեռագրների մէջ եղած եօթը ձայնաւոր տառերը *ներմուծած* էինք համարում յետագայ ժամանակներում և ոչ իսկապէս Մ. Խորենացու գրչի ծնունդ. իսկ Ստեփաննոս Ասողիկի վկայութիւնն ևս հիմնուած այդ օտար գրչի արդիւնքի վրայ և սխալ։

Ֆրիդ. Միւլլերի այժմ հրատարակած յօդուածը հիմնուած է *Վարդան Բարձրբերդցի* պատմագրի վկայութեան ուսումնասիրութեան վրայ և այն եզրակացութեան է գալիս, որ սուրբ Մեսրոպը Դանիէլեան կոչուած այբուբենի վրայ աւելացրեց բացի եօթը ձայնաւորներից նաև եօթը բաղաձայն տառ. սակայն Խորենացու մի քանի օրինակների մէջ եղած և Ասողիկի սխալ վկայած եօթը ձայնաւոր տառերը դարձեալ շփոթում են յարգելի գիտնականին, ուստի նա ենթադրում է, որ սուրբ Մեսրոպն առաջին անգամ միայն *եօթը*

բաղածայն տառերն աւելացրեց Դանիէլեան այբուբենի վրայ և ապա թէ հօմը ձայնաւորները։

Այդ հիման վրայ նա ենթադրում է նոյնպէս, որ Առաղիկ պատմագիրը Մեսրոպի առաջին կատարելագործած այբուբենը վերագրում է Դանիէլին, ասելով որ նրա մօտ գտնուած այբուբենը քսան և իննը տառից էր բաղկացած։ Այժմ Միւլլերն այլևս չէ պնդում որ նախամեսրոպեան այբուբենը Դանիէլի գրերն է, այլ ենթադրում է, որ այդ այբուբենը առաջուց գոյութիւն ունէր և համարում է այդ «Քրիստոնէական առաջին դարերի պալմիրական գիրը, կամ գուցէ աւելի հին այբուբեն»։

Մենք համոզուած ենք, որ եթէ մեր յարգելի Հայերէնագէտը ժամանակ գտնէ աւելի խորը թափանցելու Հայոց այբուբենի ծագման մասին՝ մեր պատմագիրների տուած տեղեկութիւնները, այն եզրակացութեան կըգայ, որ Հայոց հին այբուբենը ծնունդ է նախաքրիստոնէական և կռապաշտական դարերի։ Ցրիդ. Միւլլերը սկզբից մինչև այժմ հաւատարիմ է մնացել այն սկզբունքին, որ Հայոց գիրը ծագում է սեմական այբուբենից և ոչ թէ յունարէնից, ինչպէս որ սխալմամբ կարծում են եւրոպացի Հայագէտ գիտնականներից շատերը։

ՀԱՅՐ Ր. ՍԱՐԳՍԵԱՆԸ և ՀԱՅՈՑ ԳԻՐԸ.

Վենետիկի Մխիթարեանց հրատարակած «Բազմավէպ» հանդիսի այս տարուայ առաջին համարը պարունակում է, ի միջի այլոց, նաև յայտնի գիտնական Հայր Բարսեղ Սարգսեանի երկու գիտնական նշանակութիւն ունեցող հետազօտութիւնները, որոնցից մէկն է «Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն» վերնագիրը կրող աշխատութեան «ներածութիւնը», իսկ երկրորդը «Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն եւ հայերէն նշանագրոց վրայ»։ Երկրորդ յօդուածով գիտնական Հայրը կամենում է յայտնել իւր տեսութիւնը Հայերէն տառադարձութեան խնդրի վերաբերութեամբ, որ արծարծուեցաւ «Արձագանք»-ի մէջ 85 թուին և մինչև այժմ զբաղեցնում է արևելեան և արևմտեան Հայոց բանասէրների միտքը։ Հայր Սարգսեանը ճշտիւ ըմբռնելով խնդրի էութիւնը, ասում է՝ «...Հայերէն տառերու ներքին զօրութիւնն կամ հնչումն ուղղապէս ճանաչելու համար՝ պէտք է գիտնալ նոցա ծագումն և գիւտի գաղտնիքը»...— Առաջ քան տառադարձութեան մասին խօսելը, համառօտ տեսութիւն է անում Հայոց այբուբենի մասին՝ պալէօգրաֆիական Հայեցակէտից։ Ահա սոյն տեսութեան վերաբերութեամբ կամենում ենք մի քանի խօսք ասել, առ այժմ ընդարձակ քննադատութիւնը թողնելով մօտիկ ապագային։

Գիտնական Հայրը Հայոց այբուբենի հրաշքով ստեղծուելը «թէպէտև կարելի, բայց ոչ յանկաւոր և պատմական» գտնելով, ուսումնասիրութեան խնդիր է դարձնում այն, որ «առեալ (սուրբ Մեսրոպ) ի միասին զպարսկերէն, զյունարէն

և զասորերէն այբուբենս, նորակերտել է մի այլ այբուբեն»։ Մի քանի խօսքով ընդդիմախօսելով դը-Լագարդ ու Միւլլէր Հայագէտ պրօֆ. յայտնած կարծիքների դէմ, գիտնական Հայրն ասում է՝ «Ես գտած եմ մի այլ յիշատակարան, որ գլխովին տարբեր իրողութիւններ կը յայտնէ, որ մինչեւ ցայսօր ծանօթ չէր ամենեցուն հրատարակութեամբ»... և ի զարմանս իմ, յառաջ է բերում այն արդէն վաղուց յայտնի հատուածը, որ գտանւում է «Վարդանագիրք» կամ «Ոսկեփորիկ» ձեռագիր հաւաքածուի մէջ։ Այս հատուածն արդէն 1867 թ. տպուած է Պարիզում հրատարակուող «Nouveau journal Asiatique»-ի (տես. tome IX. էջ 199—200) մէջ Հայերէն. իսկ դորա ֆրանսերէն թարգմանութիւնը տուել է Լանգլուան իւր աշխատութեան մէջ. (տես. L a n g l o i s: Collection des Historiens Anciens et. Modernes de L'Armenié. (Հատոր II. էջ 7—8)։ Դուցէ Վենետկում նոր ձեռք բերուած ձեռագիրը մի նորութիւն է, սակայն, ինչպէս ասացինք, այդ հատուածի բովանդակութիւնը մի նոր գիւտ չէ։

Հայերէն և յունարէն տառերի համեմատութիւնից առաջ գիտնական Հայրն ասում է. «...բաղդատութենէն առաջ հարկ կը համարեմ ծանուցանել, թէ յունարէն այբուբենից, բայ ի ծածուկ (arcana)կոչուած գրութենէն, 19 տեսակ գրութիւններ էս կան, զորս Մոնֆոկոն մէջ կը բերէ իւր հռչակաւոր երկասիրութեան մէջ...»։ Այս տողերով յարգելի գիտնականն ապացուցանում է, որ պալէօգրաֆիան իսկապէս չէ ուսումնասիրել, եթէ ոչ հարկ չէր համարի դիմել մի գիտնական աշխատութեան, որ գրուել է 18-րդ դարում, (Paleographia graeca. Parisüs M. DCC. VIII) քանի որ բացի այլ նոր գրուածքներից գոյութիւն ունի Կ ի ր խ օ ֆ ի նման մի յայտնի գիտնականի աշխատութիւնն այդ նիւթի մասին (A Kirchoff: „Studien zur Geschichte des griechischen Alphabets“ Berlin 1877 թ)։ Եթէ Հայր Սարգսեանը ծանօթ լինէր այս վերջին աշխատութեան հետ, նա կ'տեսնէր որ գո-

յութիւն ունին ոչ թէ 19 տեսակ գրութիւնները յունաց այբուբենի, այլ մօտ վաթսուն, որ գործ են գրուել զանազան ժամանակներում և տարբեր տեղերում։ Այնուհետև, համեմատելով Հայոց և յունաց այբուբենի տառերն առանձին առանձին (որ վաղուց արդէն արել է Գարդտհաուզէնը), Հայր Սարգսեանն այն եզրակացութեան է գալիս, որ մեր այբուբենի 21 տառը վերցրած է յունաց այբուբենից, իսկ մնացած տառերը ասորոց ու պարսից գրերից, սակայն ինքն էս նկատելով այս եզրակացութեան ոչ հիմնաւոր կերպիւ ապացուցուած լինելն, աւելացնում է... «Սուրբ Մեսրովբ ոչ միայն արիականէն փոխ առած տառերն, այլ նոյն իսկ յունարէն այբուբենէն առնուածները ձեւաւորած ժամանակ՝ փիւնիկեցւոց և մանաւանդ զանգկերէն այբուբենն էս ունեցած է իւր դիմաց, իբրև նախատիպ օրինակ...» (էջ 35)։ Արդ, եթէ սուրբ Մեսրոպն իւր ձեռքն ուներ փիւնիկեցւոց այբուբենն, այլ էս քիչ հարկ կար յունարէն այբուբենի տառերը վերցնելու, քանի որ յայտնի է, թէ յունաց այբուբենը անմիջապէս առնուած է փիւնիկեան այբուբենից։ Մի անճշտութիւն էս գտնում ենք Հայր Սարգսեանի գիտնական մեթոդի մէջ, որ հետևեալն է. Հայոց և յունաց այբուբենի տառերը համեմատելիս նա վերցնում է յունաց այբուբենի *զանազան տեսակները*, իսկ այդ տարբեր տեսակները գործ էին դրուում զանազան ժամանակներում և զանազան տեղեր։ Եթէ սուրբ Մեսրոպը Հայոց տառերը վերցներ յունաց այբուբենից, նա անպատճառ կ'օգտուէր իւր ժամանակ գործ դրուող յունաց այբուբենից, այսինքն այդ այբուբենի *մի տեսակից*, ուստի, թէև դիւրին, սակայն սխալ ճանապարհ է համեմատութեան համար յառաջ բերել այդ այբուբենի այն տեսակները, որոնք գուցէ յառաջացել են սուրբ Մեսրոպից շատ յետոյ։

Համեմատութեան ժամանակ պէտք է վերցնել Հայոց մեծ *երկաթագիր* այբուբենը, որ համարւում է ամենահին

տեսակը և կոչւում է Մեսրոպեան, և ոչ թէ բոլորագիրը։ Իբր ապացոյց, որ Հայը Սարգսեանի համեմատական եղանակը ճիշտ չէ, յառաջ բերենք այդտեղից միայն «այբի» համեմատութիւնը։ «Սրդ յունարէն՝ տպագրական ալփան երեք ուղղահայեաց գծերէ կազմուած է՝ մէկ հորիզոնական խարսխի վրայ և բերանը դէպի վեր. նոյնպէս և հայերէն այբը...»։ Միթէ յունարէն տպագրական ալփան, համեմատելով հայերէն բոլորագիր այբի հետ, կարելի է եզրակացնել, որ սուրբ Մեսրոպն այբի ձևը վերցրել է յունարէն ալփայի ձևից։ Չէ որ երկաթագիր (ուրեմն և ամենահին) այբն երեք ուղղահայեաց գիծ չունի, այլ երկու...։

Ե.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՎՐԱՑ ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՒՐՈՒԻՒՆԻ ՄԱՍԻՆ

Մ. Խորենացին և Կորիւն Աքանչելին—սոցա հետևելով նաև մեր յետագայ պատմիչները—միաձայն հաղորդում են, որ սուրբ Մեսրոպը հայոց այբուբենը կազմակերպելուց յետոյ ստեղծեց նոյնպէս Վրաց և Աղուանից տառերը։

Մ. Խորենացին պատմում է այդ հետևեալ կերպիւ. «Իսկ Մեսրոպ երթեալ յաշխարհն Վրաց, առնէ եւ նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհաւն, հանդերձ Ջաղայիւ ոմամբ Թարգմանաւ հնչէն եւ հայ լեզուի. ձեռնտու լինելոյ արքային նոցա Բակրոյ [1]), և եպիսկոպոսին Մովսէսի։ Եւ ընդ-

[1]) Վրաց պատմութիւնն այդ ժամանակամիջոցում մի Բակուր անունով արքայ չէ յիշում։ Բակուր անունը կրում է վաչէ արքայի յաջորդ և որդի Թագաւորն 213 թ. որ Արշակունեաց ցեղից էր։—Տես. Վախտանգ V. Թագաւորի «Վրաց պատմութիւն»ը, որ կիսով չափ Թարգմանել է Iulius Klaproth իւր „Reise in den Kaukasus und Georgien“ (Halle und Berlin 1814) գրքի geschichte von Georgien մասի մէջ, հատ. II. գլխ. 37. էջ 131.

րեալ մանկունս, և յերկուս բաժանեալ դասս, և վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորենացի, և զՄուշէ տարօնեցի։

Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսլազէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ գլուրգոպետութիւն նորա, եռաւն մանկունս ընտիրս։ Եւ կոչեալ զՀենիամին ոմն շնորհաւոր Թարգման, գոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. զորմէ ստեղծ նշանագիրս կոկորդախօս ազեազուր խժական խեցբեկազունին այնորիկ զարգարացուց լեզուին։ Եւ վերակացու թողեալ զաշակերտս իւր զՅովհաննէսն, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանն արքունի, ինքն դառնայ ի Հայս...»։—տես. Մ. Խորենացի, նոյն, գիրք III. գլխ. ծդ. էջ 372 – 373։

Կորիւնն ասում է «...Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ Քրիստոսի սիրելին—սուրբ Մեսրոպը—սկսեց զարձեալ

Կլապրոտը յիշում է մի երկրորդ նման անուն՝ Բաքար—(այլ ևս ոչ Վախտանգից, այլ ուրիշ աղբիւրներից առած), որ Թագաւորեց 342 թ. Սա Խոսրովնանց ցեղից և Միհրհան արքայի—որի ժամանակ Վրացիները Քրիստոնէութիւն ընդունեցին—որդին էր։ Տես. Klaproth, նոյնը, էջ 161. II.

Բաքարին յաջորդում է նորա որդի Բարզաբաար 379 թ. ապա յաջորդում են կարգաւ Տիրդատ 395 թ., Փարսման 405 թ., Միհրդատ II. որ պարսից Ուրարարի արքայից յաղթուելով, գերի է տարուում։ Տես. Klaproth, նոյնը, էջ 162—163։

Պարսից պատմութեան մէջ չենք ճանաչում մի արքայ, որ կրէր այդ անունը. իսկ այդ ժամանակամիջոցում պարսկաստանում Թագաւորում էր Շապհոհտ I. արքան։ Դորնը հաստատում է մեր ասածն, մինչդեռ նա ասելով՝ որ Միհրդատի ժամանակ պարսիկներն աւերում են Վրաստանն և Մցխեթայում մի Ատրուշան սառուցանում, փակագծի մէջ դնում է „Wohl unter Jesdegherd I.“ տես. „Versuch einer Erklärung von drei Münzen mit sasaniden-Gepräge,“ von B. Dorn. տպուած է Bulletin de l'acad. etc. հատ. I. №. (1844) էջ 36։

հոգալ բարբարոսական երկրների համար։ Նա կարգի բերեց վրաց լեզուի համար տառեր աստուածային շնորհիւ՝ յարմարեցնելով նոցա լեզուին և կանոնների ենթարկելով. ապա վերցնելով իւր յառաջագէմ աշակերտներից մի քանիսին, գնաց վրաց երկիրը նորա թագաւոր Բակուրի և եպիսկոպոս Մովսէսի մօտ և սկսեց ուսուցանել։ Նա գտաւ Ջաղայ անունով մէկին, որ հասկանում էր վրաց լեզուն և տեղեակ էր գրելու արուեստին.—տես. Կորիւն, նոյնը, էջ 15.—ապա պատմելով սուրբ Մեսրոպի Բիւզանդիոն գնալն և դառնալը շարունակում է. այս ժամանակ եկաւ նորա մօտ մի աղուանից քահանայ, Բենիամին անունով. Մեսրոպը դորանից տեղեկու-

Դարձեալ Բակուր անունով մի արքայ Թագաւորում է ըստ Dorn-ի վեցերորդ դարում (557—570 կամ 542—555)։

Սէն-Մարտէնն էս Մ. Խորենացու վկայութիւնը չկարողանալով համաձայնեցնել վրաց պատմութեան հետ՝ այն կարծիքն է յայտնում, որ Բակուրը կարող էր փոքր իշխաններից մէկը լինել։ Տես. Saint-Martin: Histoire du Bas-Empire etc: Հատ. V. էջ 324. ծթ. 1։

Ա. յայտնով թէ և Մ. Խորենացու «Բակուր»-ը չէ համապատասխանում վրաց պատմութեան աւանդութեան, սակայն դորա յաջորդ «Արձիլ»-ն է վրաց պատմութեան մէջ յայտնի «Արչիլ» արքան. Խորենացին խօսելով սբ. Մեսրոպի երկին քարոզութեան մասին՝ ասում է. «առ որով ժամանակաւ Արծիլ ոմն էր կացեալ Թագաւոր վրաց»։ Տես. Խորենացի, նոյնը, գիրք III. գլխ. Կ. էջ 388։

Կորիւնը նոյնպէս ասում է. «սբ. Մեսրոպն եկաւ այն կողմերն, երբ Արձիւղ=Արձիլ վրաց Թագաւոր էր.» —տես. Կորիւն, նոյնը, էջ 31։

Վրաց Արչիլ արքան ըստ կլապրոթի Թագաւորում է 413 թ.—տես. Klaproth նոյնը, Հատ. II. էջ 163.—ըստ Սէն-Մարտէնի նոյնպէս 413 թ.—տես. Histoire du Bas-Empire etc. Հատ. V. էջ 324—ըստ Դօրնի 410—474 կամ 397—421. տես. B. Dorn: Versuch einer Erklärung etc. նոյնը, էջ 36։ —Ըստ Բրօսէի 410—434—տես. Brosset. Deux Historiens Arméniens etc. նոյնը, էջ 15. ծթ. 3։

թիւն հարցրեց հայոց լեզուից շեղուող Աղուանից բառերի մասին, յետոյ վերցրեց այբուբենն եւ յորմարեցրեց աղուանից լեզուին... Ապա գնալով Աղուանից երկիրն՝ ուղղակի գնաց արքայ Արսավղենի և եպիսկոպոս Երեմիայի մօտ և բացատրեց նոցա թէ ինչու համար է եկել. Թագաւորն և եպիսկոպոսն իւրեանք ուսան գրել-կարդալու արուեստն և հրաման տուին ամենայն տեղ դպրոցներ բանալ և երիտասարդաց ուսուցանել գրել-կարդալ... և այլն —տես Կորիւն. նոյնը, էջ 18—19։

Ղ. Փարպեցին ոչինչ չի լիշում Վրաց և Աղուանից տառերի գիւտի մասին։

Վերոյիշեալ երկու պատմագիրներն, ինչպէս որ տարբեր տեղեկութիւններ են տալիս հայոց այբուբենի կազմակերպութեան տեղի մասին, միևնոյն տարբերութիւնը տեղի ունի նաև վրաց և աղուանից տառերի կամ աւելի լաւ է ասել՝ այբուբենի կազմակերպութեան վայրի վերաբերութեամբ։ Մէկ կողմից պատմում են, որ սուրբ Մեսրոպը Հայաստանում կարգի բերեց երկու այբուբեններն էս և ապա նոցա աշխարհը գնալով՝ ուղղակի գործադրեց, իսկ միւս կողմից վկայում են որ սուրբ Մեսրոպը գնալով Վրաց և Աղուանից աշխարհներն, այնտեղ է կազմակերպում այբուբենն և գործադրում։ Սակայն այս տարբեր վկայութիւնները այնչափ նշանակութիւն չունին, որչափ նոյն պատմագիրների այն ընդհանուր համաձայնութիւնը, որ սբ. Մեսրոպը Վրաց և Աղուանից այբուբենը կարգի բերելու համար կարօտ էր թարգմանների միջնորդութեան։ Այս վկայութիւնը նշանակութիւն ունի նորա համար, որ ուղղակի ապացուցանում է՝ թէ սբ. Մեսրոպը տեղեակ չէր վրաց և Աղուանից լեզուներին, թէև միւս կողմից երևում է, որ այդ լեզուները—նա մանաւանդ Աղուանից լեզուն—նմանութիւն պէտք է ունենային հայերէնի հետ, եթէ ոչ Կորիւնը չէր ասի թէ սբ. Մեսրոպը տեղեկութիւններ հարցրեց—Աղուանից Բենիամին քահանայից—հայերէնից շեղուող

բառերի մասին. այս խօսքերից պարզ երևում է, որ տարբերութիւնը մեծ չպէտք է լիներ [2]), թէ և Խորենացին այդ լեզուին շատ փաղաքշական ածականներ չէ տալիս, կոչելով նորան «կոկորդախօս, աղխազուր=կոշտ, խժական=քարքարոտական և խնցքեկազոյն=կոտրտուած»: Կորիւնը նոյնպէս ասում է. «Որով և անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ սչխարհն աղուանից մարգարէապէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն ուսանդելոյն Աստուծոյ ոչ իւիք անտեղեակք» [3]):

Մեր պատմագիրների այդ հաստատ վկայութիւնը, որ սբ. Մեսրոպը կազմակերպեց Վրաց և Աղուանից այբուբենն, ընդունուած է—չատ սակաւ բացառութեամբ—այն բոլոր Եւրոպական գիտնականներից, որոնք զբաղուել են այդ խնդրով. նոյն իսկ հանգուցեալ պրոֆ. Գաթշմիդի նման խիստ քննադատը ճիշտ է համարում այդ վկայութիւնը: [4]) Նոյն իսկ այն հանգամանքն, որ մինչև այժմ գտանուած չէ Աղուանից գիրն, առիթ չէ տուել այդ հաստատ վկայութեան մերժման:

Այժմեան Վրացիքն ունին երկու միմեանցից տարբեր այբուբեններ. 1 «խուցուրի» կոչուածն, որ գործ է դրուում եկեղեցական գրուածքների համար և 2 «մխեդրուլի», որ գործածական է հասարակ տպագրութեան մէջ. առաջինն, որ բաւականաչափ նմանութիւն ունի հայոց այբուբենի հետ՝ համարում է սբ. Մեսրոպի գտածը:

Պրօֆ. Փրդ. Միւլլերն ասում է. «..Վրաց և հայոց այբուբենի ստեղծողը միևնոյն անձն է, ուստի և հետևապէս երկուսի ծագումն եւս միևնոյն աղբիւրից է: Վրաց այբուբենը, թէ տառերի շարայարութեամբ և թէ ձևերով նման է հայոց այբուբենին. երկու այբուբենների մէջ էս հին տառերը կատարելապէս համապատասխանում են միմեանց՝ ա—ք և օ—ֆ: Այդտեղից սկսած յերևան եկող տարբերութիւնը կայանում է նորանում, որ հայոց լեզուին յատուկ տառերն, այսինքն նոր կազմակերպուածները, դասաւորուել են եզած տառերի միջավայրերում, այն ինչ վրաց լեզուին յատուկ տառերը կարգով շարուել են ֆ-ից յետոյ...» [5]) Ապա պրօֆ. Միւլլերը համեմատելով այդ երկու այբուբենների առանձին տառերը՝ հաստատում է իւր յայտնած կարծիքն, որ երկուսի ծագումն էս միևնոյն աղբիւրից է:

Բոլորովին հակառակ կարծիքի է Ֆաուլմանը: Սա պատմելով հայոց և վրաց տառերի դիւան ըստ մեր մատենագրութեան՝ շարունակում է. «պէտք է նկատել, որ չարաչար կ'սխալուէինք, եթէ այս պատմութեան հիման վերայ ընդունէինք հայոց և վրաց այբուբենների նմանութիւնը. թէև այդ երկու այբուբենի մէջ էս գտանուում են նման տառեր, սակայն դրանք՝ բոլորովին տարբեր նշանակութիւն ունին... Հայոց և վրաց տառերի դասաւորութիւնն այնպէս է կարգուած, որ առաւել հասկանալի կ'լիներ, եթէ մեզ ասէին, որ սբ. Մեսրոպն առաջ դասաւորեց վրաց այբուբենը՝ համեմատ արամայական այբուբենի և ապա կազմակերպեց հայոց այբուբենը:

---

2) «Եւ թէպէտ լեզու աղուանից ոչ էր ի բնէ այլ ի հայոց, բայց ամենևին փոփոխեալ էր և օտարացեալ, որպէս և ազգն գլխովին՝ խառնեալ ընդ ազանս լեկցոց. վասն որոյ պիտոյ էր զայլ գիր և յաղագս նոցա կարգել, և զայլ թարգմանութիւնս առնել»: Տես. Զամչեան, նոյնը, հատ. I. էջ 495:

3) Տես. Զամչեան, նոյնը, հատ. I. էջ 495:

4) Գաթշմիդը համեմատելով Կորիւնի վարքագրութիւնն Ագաթանգեղոսի հետ, խիզճի այլոց ասում է և հետևեալն. „Hier—Կորիւնի մօտ—Werden ausser Armenien nurnoch Jberien und Albanien genannt, von denen es sicher stehet, dass Mesrob sie mit eigenen schriftarten bedachte“. տես. Alf. V. Gutschmid: Agathangelos. Zeitschrift d. d. morgl. Gesellschaft“ 31 հատորի մէջ, տես. էջ 25:

5) Տես. Frd. Müller: Über den Ursprung der armenischen Schrift. նոյնը, էջ 434—435:

Տփխիսում կայացած «ընդհանուր հնագիտական ժողովի» նիստերից մեկում վրաց գիտնականները մերժում էին սբ. Մեսրոպին ընդունել իբր իւրեանց այբուբենի ստեղծող։

Յայտնի է, որ Վրաց *Վախտանգ պատմագիրը* վրաց այբուբենի կազմակերպութիւնը վերագրում է *Փարնավազ վրաց արքային*[6]), որ թագաւորեց երեք դար Քրիստոսից առաջ։ Ակադեմիկոս Բրոսէն, որ հիմնաւորապէս ուսումնասիրել է վրաց պատմութիւնն և բազմաթիւ աշխատութիւններ և հետազօտութիւններ ունի այդ մասին հրատարակած, ընդունում է թէ հայոց մատենագիրների և թէ Վախտանգ պատմագրի վկայութիւնն, ասելով՝ որ վրաց *խուցուրին* գտել է Մեսրոպը, իսկ *մխեդրուլին* Փարնավազը. «Վրաց Բակուր, կամ Վարազ-Բաքար, Վարզա-Բաքար, արքայի ժամանակ, որ թագաւորեց 379—393 թ.[7]) կազմակերպուեցաւ խուցուրին կամ քահանայական գիրն, որ մեծ նմանութիւն ունի հայոց այբուբենի հետ, և որ շատ կարելի է, գտաւ սբ. Մեսրոպը և մխեդրուլին, որ բոլորովին նման է պահլաւական տառերին։ Այս այբուբենի-մխեդրուլի-ներմուծումն վրաստանում ոչ անհաւանական աւանդութիւնը վերագրում է Փարնավազ արքային, Քրիստոսից 3 դար առաջ...»[8])։

Այսպիսով տեսնում ենք, որ թէ Լանգլուան և թէ Բրոսէն ընդունում են թէ հայոց պատմագիրների և թէ Վախ-

6) „... Vakhtang raconte dans ces Annales que cet alphabet—*խուցուրի*—fut donné aux Georgiens par le roi Pharnavaz— Brosset, Hist. de la Giorg. t. I. p. 43—*տես*. Langlois: Collection etc. *նոյնը*, *Հատ*. II. *էջ* 162. *ծթ*. 1։

7) *Մենք արդէն ասացինք, որ այս արքայի թագաւորութեան ժամանակ չէր կարող տեղի ունենալ վրաց այբուբենի կազմակերպութիւնը սբ. Մեսրոպի ձեռքով, վասն զի հայոց այբուբենը կազմակերպուեցաւ 404 թուին, ուրեմն դարանից առաջ չէր կարող տեղի ունենալ վրաց այբուբենի կազմակերպութիւնը։*

8) *Տես*. Brosset: Deux Historiens Arménien etc. *նոյնը*, *էջ* 15.

տանգի վկայութիւնները. տարբերութիւնը նրանումն է, որ Լանգլուան նոյն իսկ *խուցուրին* է համարում Վախտանգի լուսաւորչական այբուբենը, իսկ Բրոսէն երկու կողմին էս իրաւունք տալու համար *խուցուրին* վերագրում է սբ. Մեսրոպին, իսկ *մխեդրուլին* Փարնավազին։

Մենք թէ և չենք կարող մերժել թէ մեր պատմագիրների և թէ Վախտանգի վկայութիւներն, այնուամենայնիւ անընդունելի ենք համարում Բրոսէի կարծիքն. երկու ազգային այբուբեններն միմեանց մօտ գոյութիւն չէին կարող ունենալ. եթէ մխեդրուլին արդէն կար և այդպէս կատարեալ էր, այլ և այնչ հարկ կար նոր այբուբեն հնարելու։ Մխեդրուլին մենք համարում ենք աւելի ուշ ժամանակների ծրնունդ։ Թէ այդ երկու այբուբենների—հայոց և վրաց—համեմատութիւնը և թէ մեր և վրաց պատմագիրների վկայութիւնները ի նկատի ունենալով, մենք այն համոզման եկանք, որ վրացիք էս, ինչպէս մեր նախնիքը, ունէին մի սեմիտական ծագումն ունեցող և անկատար այբուբեն, որ հինգերորդ դարում այլ էս չէր համապատասխանում լիովին վրաց լեզուի պահանջներին։ Վրացիք տեսնելով որ սբ. Մեսրոպը իւր հանճարով՝ հայոց անկատար այբուբենը կատարելագործելով ազգային գիր դարձրեց, իւրեանք էս ցանկանում են իւրեանց անկատար այբուբենը կատարելագործել և հրաւիրում են սբ. Մեսրոպին, գալ Վրաստան և իւրեանց ցանկութիւնը կատարել։ Սբ. Մեսրոպը ներշնչուած Քրիստոնէական վարդապետութեան սիրոյ ոգուով գալիս է Վրաստան և բանիբուն և մի քանի լեզուների տեղեակ թարգմանների օժանդակութեամբ կատարելագործում է վրաց այբուբենն ըստ հայկական օրինակի և այդպիսով առիթ լինում թէ գրի և թէ սբ. գրքի տարածման Վրաց աշխարհում։

Սկա այս է մեր կարծիքով իրողութիւնը, որ համապատասխանում է թէ հայոց և թէ վրաց պատմագիրների վկայութեանց և չէ վիրաւորում թէ հայոց և թէ վրաց ազգային ինքնաճանաչութեան զգացումն։

Զ.

ԹԷ Ի՞ՆՉ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՎԸՐԵՑ ՄՈՒՐՐ ՄԵՍՐՈՊԸ

Դիմենք դարձեալ մեր երեք պատմագիր կենսագիրներին և տեսնենք թէ դոքա ի՞նչ են ասում այդ մասին։

Ըստ Կորիւն Սքանչելու սուրբ Մեսրոպն արդէն երիտասարդութեան ժամանակ յունարէն սովորելուց յետոյ գնաց Արշակունեաց նահանգը, որտեղ մեծ Հայաստանի թագաւորների նիստն էր և «կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Ա.ռաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն...»[1])

Մ. Խորենացին ասում է. «Մեսրոպ սնեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ յելից նորա յաշխարհէ՝ ի դրան արքունի կարգեալ քարտուղար...» և այլն[2])։

Ղ. Փարպեցին մեզնելով կորիւնի և Խորենացու պատմածները՝ ասում է հետևեալը. «ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զոյն, զինուորեալ ի դուռն հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն. վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոյն և զհրովարտակացն։ Եւ սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանաց... երթայ ի Վանս բազմութեան եղբարց»[3])։

Այս վկայութեանց հիման վերայ Հայր Ճամչեանը միայն այն եզրակացութեան է գալիս, որ «յորժամ փոխեցաւ յաշխարհէ Մեծն Ներսէս, եկաց Մեսրոպ ի դրան արքունի՝ ըստ

1) *Տես. Կորիւն նոյնը, էջ 6։*

2) *Տես. Մ. Խորենացի. նոյնը, գիրք III գլխ. խէ. էջ 355։*

3) *Տես. Ղ. Փարպեցի. նոյնը, էջ 33—34*

յորդորելոյ Հազարապետին Հայոց առաւանայ եւ եղեւ դիւանադպիր թագաւորացն Հայոց. զի էր ճարտար և քաջ տեղեակ բազում լեզուաց... և կացեալ անդ ամս իբր եօթն... փառաւորեցաւ յոյժ»[4])։

Նոյն եզրակացութեան են եկել թէ մեր Հին մատենագիրները և թէ նոր եւրոպական գիտնականները. անուանելով սուրբ Մեսրոպին միայն քարտուղար—սեկրետեր—կամ դիւանադպիր—արխիվիստ[5])։

Սակայն ինչպէս որ Կորիւնի և Փարպեցու ասածներից պարզ երևում է, նա պէտք է ծառայած լինէր նաև զինուորական շրջանում. եթէ ոչ մի քարտուղար, որի պաշտօնը պէտք է լինէր թագաւորի կարգադրութիւնները գրի առնել և զանազան օտարալեզու գրուածները թարգմանել, ինչ գործ ունէր զինուորների հետ, որ իւր անձը նոյա սիրելի դարձնէր, ինչպէս որ ասում է սորա վարքագիրը։ Պատմական այս փաստն աչքի առաջ ունենալով՝ կարելի է ասել, որ

4) *Տես. Հայր Ճամչեան, պատմութիւն Հայոց, նոյնը, հատ. I. գիրք բ. գլխ. ծգ. էջ 483։*

5) *Ա.յսպէս օրինակ պրօֆ. Պատկանեանն ասում է.* «Онъ былъ секретаремъ при дворѣ Аршака III». *տես.* Исторія Агванъ, Мойсея Каганкатваци *և այլն. նոյնը, յաւելուած. II. մասի, էջ 326. Սէն-Մարտէնը «քարտուղար» բառը թարգմանում է.* «était l'archiviste de la cour des rois». *տես.* Histoire d'Arménie par le patriarche gean VI. traduite par M. Saint-Martin. Paris 1841, *էջ 44։ Լանգլուան թարգմանում է.* «secrétaire-archiviste». *տես. Մ. Խորենացու ֆրանսերէն թարգմանութիւնը.* Langlois. Collection etc. *նոյնը հատ. II. էջ 158։*

Պրօֆ. Պատկանեանի «О составѣ армянскаго языка» *աշխատութիւն ֆրան. թարգմանութեան մէջ նոյնպէս ասուած է.* «Saint-Mesrob... fut trés-longtemps chargé de la direction des archives royales. *տես.* Recherches sur la formation de la Langue armenienne-Prud'homme, journal Asiatique t. XVI. (1870) *էջ 140։*

սուրբ Մեսրոպն արքունի քարտուղար լինելուց առաջ ծառայում էր զինուորական շրջանում, կամ թէ քարտուղարի պաշտօնը կապակցուած էր մի բարձր աստիճան ունեցող զինուորական պաշտօնի հետ։

Հայր Ջամչեանը սբ. Մեսրոպին կոչում է նաև «նօտար» Մեծն Ներսիսի. «.. Սա ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբ՝ աշակերտեցաւ Մեծին Ներսիսի Հայրապետի, և եղեւ նորա նօտար»[6]։ Սակայն մեր այս պատմագիրներից ոչ մէկը չէ յիշում, որ սուրբ Մեսրոպը Մեծն Ներսէս կաթուղիկոսի քարտուղար եղած լինի. այլ ամենեքեան անուանում են նորան «աշակերտ» Ներսիսի։

Ի նկատի ունենալով սուրբ Մեսրոպի ստացած կրթութիւնը, վարած պաշտօնները և իւր ժամանակակից հանգամանքները մեր մէջ ծագում է այն հարցը՝ թէ արդեօք սուրբ Մեսրոպը հասարակ ծագումից էր՝ թէ իշխանական շառաւիղ։

Պ. Գր. Խալաթեանցը խօսելով սուրբ Մեսրոպի մասին՝ ասում է հետևեալը. «Յաղագս մեծին Մեսրոպայ և կարծիս ինչ յայտնեալ են ոմանք ի սիրաբանից՝ եթէ ի Մամիկոնեան լեալ էր ի տոհմէ»[7]։

Երևում է, որ պ. Խալաթեանցն աչքի առաջ է ունեցել պրօֆ. Էմինի հետևեալ նկատողութիւնը. «Отца его—Месропа—звали Варданомъ. Судя по этому имени, носимому преимущественно людьми изъ рода Мамиконіяновъ, и по мѣсту его рожденія, можно полагать, что Месропъ также происходилъ изъ роду Мамиконіяновъ»։ Թէև պրօֆ. Էմինի յառաջ բերած պատճառաբանութիւնը բաւական չի կարող լինել՝ սուրբ Մեսրոպի *Մամիկոնեանց ցեղից* լինելը փաստաբանելու համար, վասն զի Հայեկայց գիւղի բնակիչ

6) Տես. Հ. Ջամչեան, նոյնը հատ. I. գիրք բ. գլխ. ժգ. էջ 483։

7) Տես. Գր. Խալաթեանց. Ղազար Փարպեցի և գործք նորին, գլխ. ա. էջ 4։

մի պարզ գիւղացի ևս կարող էր Վարդան կոչուել, սակայն այնուամենայնիւ մեզ ևս հաւանական է թւում, որ սուրբ Մեսրոպն *ազնուական ընտանիքից* լինէր։ Սոյն ենթադրութիւնն անում ենք ի նկատի ունենալով հետևեալ պատճառները. ա. դժուար թէ մի հասարակ ընտանիքի հայր իւր որդու կրթութիւնը յանձնէր ուղղակի եկեղեցւոյ պետի, կաթուղիկոսի ձեռքը, որ անմիջական յարաբերութեան մէջ էր երկրի քաղաքական պետի, արքայի հետ. բ. այն ժամանակ միայն ազնուականների զաւակներն էին այնպիսի բարձր կրթութիւն ստանում—մինչև որ սուրբ Մեսրոպն ուսուցանող հանդիսանալով՝ կրթութեան սահմաններն առաւել ընդարձակեց.—գ. արքայական պալատի պաշտօնեայք ևս ազնուականներից էին—նա մանաւանդ որ սուրբ Մեսրոպը բացի քարտուղար լինելուց, զինուորական բարձր պաշտօնեայ ևս էր։

Միակ և հիմնաւոր պատճառը թէ պրօֆ. Էմինի և թէ մեր ենթադրութեանց դէմ կարող է լինել այն, որ մեր պատմագիրները չեն յիշում բոլորովին սուրբ Մեսրոպի ազնուական ցեղից լինելը։ Սակայն չ'նայելով սրան, մի պատմական աւանդութիւն ևս ունենք յօգուտ մեր ենթադրութեանց. այդ աւանդութիւնը ծագում է օտար աղբիւրից. իսկ այդ աղբիւրը մի անծանօթ պատմութիւն է, որ կոչւում է «յայսերաց» և ասորերէն լեզուից հայերէնի թարգմանուած. այդտեղ գտնում ենք հետևեալ պարբերութիւնները. «...Մեսրոպ երանելի Տարօնացի ի Հացեաց գեղջէ յազատ տանէ...»։ Այս նախադասութիւնը պարզապէս վկայում է, որ սուրբ Մեսրոպը պէտք է ազնուական ցեղից լինէր։

Յայտնի է, որ սուրբ Մեսրոպն արքունի պալատը թողնելուց յետոյ վանական դառնալով՝ ընդունեց քարոզչի պաշտօնն և շրջում էր իւր աշակերտների հետ քրիստոնէական գաղափարներ սփռելու Հայաստանի զանազան նահանգներում, ուր ժողովուրդը դեռ ևս զրկուած էր այդ գաղափարների փրկարար ազդեցութիւնից։ Եւ ապա նոր այբուբենը կազմա-

կերպելուց յետոյ այդ պաշտօնի հետ միացնում է նաև ուսուցանողի պաշտօնը և իր ամբողջ երկրաւոր կենաց ընթացքում սուրբ Մեսրոպը հաւատարիմ մնալով իր սկզբնական գաղափարներին՝ մնում է հայ աշխարհի ուսուցանող և քարոզիչ քրիստոնէական վարդապետութեան։ Փառասիրութեան կամ բարձր պաշտօնի ձգտումն իսկապէս հեռի է մնում այդ յեղափոխիչ—վերանորոգիչ մեծ անձնաւորութեան պաշտած գաղափարներից։

Գուցէ զարմանալի թուայ, որ սուրբ Մեսրոպը 45 տարի շարունակ գործելով և իր հայրենեաց անչափ բարիքներ պատճառելով՝ մինչև իր կենաց վերջը մնում է միայն «մեծ վարդապետ»[8]) և մինչև անգամ եպիսկոպոսական աստիճանը չէ տրւում նորան, վասն զի մեր պատմագիրներից ոչ ոք այդ մասին տեղեկութիւն չէ տալիս. նոյն իսկ սուրբ Մեսրոպի վարդապետական կոչման տեղեկութիւնը տարբեր ձևով են պատմում Խորենացին և Կորիւնը։

Ըստ Կորիւնի սուրբ Մեսրոպն այդ կոչումը ստանում է Հայաստանում, երբ ուսուցանում է գտանուած հին հայոց գլերով, ուստի և հասկանալի է, որ այդ կոչման արժանացնում է նորան հայ եկեղեցու պետը՝ սուրբ Սահակ կաթուղիկոսը. իսկ Մ. Խորենացու ասելով՝ սուրբ Մեսրոպն այդ կո-

---

[8]) «Վարդապետ» բառը լեզուաբանական տեսակէտից տարբեր կերպիւ են բացատրել Եւրոպական գիտնականները. ոմանք այդ բառը ընդունել են իբրև բարդութիւն «վարդ» և «պետ» բառերի, ոմանք «վարժ» և «պետ» բառերի։ Պրօֆ. Էմինը Խորենացու ռուսերէն թարգմանութեան մի ծանօթութեան մէջ ասում է, որ այդ բառը ծագում է պարսկական և մեր ժողովրդական դարձած «վարպետ» բառից։ Բրօսէն ասում է, որ այդ բառը պէտք է լինի «վարժ»-«պետ» «chef, maitre des sciensce» տես. Brosset: deux Historiens Arméniens etc. նոյնը, էջ 102. ծթ. 2.

Հայագէտ Փրիդրիխ Միւլլերը նոյնպէս մերժելով «վարդ» և «պետ» բառերի բարդութիւնը՝ ենթադրում է, որ «վարդապետ» բառը յառաջ է եկել հին բակտրիական «varedha--Wachsthum, Förderung բառից։

չումը ստանում է Բիւզանդիոնում եղած ժամանակ՝ կայսեր և յունաց պատրիարքի կողմից։

Սակայն որովհետև Կորիւնն ևս լիշում է, որ սուրբ Մեսրոպը կայսեր կողմից ստացաւ «Ադումիա» կոչումը, հաւանական է, որ նա առաջ կաթուղիկոսից ստացաւ այդ կոչումը, իսկ ապա կայսեր կողմից իբրև մի տիտղոս և ոչ իբրև կոչումն[9])։ Ղ. Փարպեցին ոչինչ չէ լիշում այդ մասին։

Այն իրողութիւնը, որ նոյն իսկ սուրբ Մեսրոպի աշակերտներն եպիսկոպոսներ են ձեռնադրւում, իսկ ինքը մեծ ուսուցանողը չէ ընդունում այդ կոչումը, մեզ բոլորովին զարմանալի չէ թւում, այլ նաև բնական։ Եթէ ի նկատի ունենանք, որ եպիսկոպոսական կոչումը կապակցուած էր մի որևէ նահանգի կամ գաւառի վիճակային առաջնորդութեան հետ, հասկանալի կլինի, որ սուրբ Մեսրոպը չ՛պէտք է յօժարէր այդ կոչումն ընդունելու, վասն զի նորա գործունէութիւնը չէր կարող մի վիճակի մէջ սահմանափակուել. ուստի և պարզ վարդապետական աստիճանով նա առաւել դիւրութեամբ կարող էր շրջել ամբողջ Հայաստանում և իրագործել այն սուրբ գաղափարները, որոնց նուիրել էր իր ամբողջ էութիւնն ու կեանքը։ Իշխանական կամ եպիսկոպոսական փառահեղ գահոյքի վերայ նա չէր կարող իւրեան երջանիկ զգալ. նորա երջանկութիւնը կայանում էր աղգային-քրիստոնէական գաղափարների տարածման մէջ. նոյն իսկ հայ աշխարհի մեծ ուսուցանողի պաշտօնը չէ բաւականաց-

---

[9]) Ինչպէս որ այսօր գերմանական չորս ֆակուլտետների «դոկտոր»-ի աստիճանը ոչ թէ կոչումն, այլ միայն տիտղոս է։ Իսկ մեր այսօրուայ վարդապետական աստիճանը կոչումն է և ոչ տիտղոս, ինչպէս որ սխալմամբ կարծում են Եւրոպական գիտնականները. այս սխալը յառաջացել է երևի այն հանգամանքից, որ մեր Հայ-կաթոլիկ վարդապետներն իւրեանց «դոկտոր» են անուանում։ Այսպէս օրինակի համար Լազնլուան ասում է. «Le titre de vardapet signifie en arménien moderne „docteur en théologie“. Langlois, collection etc. նոյնը Հատ. II. էջ 11 ծթ. 6։

նում նորա վեհ սիրտը, նա դարձեալ շրջում է ժողովրդի մէջ և քարոզում։

Նոյն իսկ իւր վեցամսեայ կարճատև կաթուղիկոսական տեղապահութեան ժամանակ, սուրբ Մեսրոպը չէ դադարում շրջագայելուց և Աստուծոյ խօսքը քարոզելուց—ինչպէս որ վկայում է Կորիւն Սքանչելին—մինչև որ այդ երկրորդ «մահկանացու ծնեալ»-ն ևս իւր երկրաւորը կնքելով՝ «անմահ զիւրն լիշատակ եթող», «դերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք»։

Սուրբ Մեսրոպի կաթուղիկոսական տեղապահութեան մասին ևս շատ մութ կերպիւ են խօսում մեր պատմագիրները. Խորենացին ասում է. «Եւ զկնի վեց ամսոյ անցելոյ, յերեքտասանն մեհեկանի, և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ... իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտ Յովսէփ...»[10]։ Կորիւնը համարեա ոչինչ չէ յիշում այդ մասին։ Ղ. Փարպեցին պատմելով սուրբ Մեսրոպի մահը՝ շարունակում է. «Զորոյ զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս հայոց հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ[11])»։

Այդի առաջ ունենալով վեցամսեայ կարճ ժամանակամիջոցն և մեր պատմագրաց այս մութ տեղեկութիւնները պէտք է ենթադրել, որ սուրբ Մեսրոպը կառավարում էր կաթուղիկոսական գործերն իբրև տեղապահ, վասն զի նա ընտրուած կաթուղիկոս չէր դեռ ևս, որ անպատճառ կ'լինէր, եթէ այնպէս շուտով չմիանար իւր զուգակցի և Պարթև Սահակի հետ։

10) Տես. Մ. Խորենացի, գիրք, III. գլխ. կէ. էջ 408 – 409։

11) Տես. Ղ. Փարպեցի, նոյնը էջ 106։

Է.

ՀՂՈՒՈՑ ԸՍՐՈՒԻՐՆԻ ՑԵՍԸՆՆԵՐԸ

Մեր այժմեան տառագիր այբուբենն ամբողջապէս առած կոչւում է *Մեսրոպեան այբուբեն*, սակայն մեր այժմեան սովորական տառերի ձևերը սուրբ Մեսրոպի ձեւակերպած գրերը չեն։ Ժամանակի ընթացքում տառերն ևս ձեւակերպւում են և այդ ձևակերպութեան պատճառները տարբեր են լինում։

Տառերի գործածութեան ընդհանրանալն և տարածումը գլխաւոր պատճառներն են այբուբենների ձևակերպութեան։ Որչափ որ ընդհանրանում է տառերի գործածութիւնը, այնչափ ևս զգացւում է արագ գրելու պահանջը, որ և նոյնպէս պատճառ է լինում տառերի ձևակերպութեանց փոփոխութեան, վասն զի հին տառերից իւրաքանչիւրը գրւում է առանձին և երկար ժամանակ պահանջում. այն ինչ, եթէ միացած գրուէին, գործը բաւականին կը դիւրանար։

Միւս կողմից՝ ժամանակի հետ փոխւում է նաև ազգերի ճաշակը, որ և իւր կողմից կրկին առիթ է լինում տառերի ձևերի փոփոխման։ Գեղեցիկ գրելու ձգտումը—մանաւանդ վերջին դարերում՝ գեղեցիկ տպելու—զգացւում է ամենայն տեղ։

Նախամեսրոպեան այբուբենը—որ պարունակում էր հետևեալ 22 տառերը. ա բ գ դ ե վ զ խ թ յ կ լ մ ն ս ո պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք.—իւր սկզբնական դիրքով յայտնի չէ մեզ, ուստի և չգիտենք թէ ինչ ձևեր ունէին այդ այբուբենի տառերը. սակայն հաւանական է, որ դոքա մեծ տարբերութիւն չունէին Մեսրոպեան սկզբնական տառերի ձևերից։

Մեսրոպեան այբուբենը—որ բաղկացած էր 36 հետևեալ տառերից. ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք.—տասն և չորս


երկար դարերի ընթացքում ենթարկուել է զանազան ձևակերպութեանց։

ա. *Երկաթագիր*—այսպէս է կոչւում Մեսրոպեան այբուբենի սկզբնական ձևակերպութիւնը, որ գործածական էր մինչև իններորդ դարը բացառապէս—այս թէ և հաստատ կերպիւ չենք կարող պնդել, սակայն քանի որ այլ ձևեր ևս յայտնի չեն մեզ, պէտք է ընդունել։—Գրի այդ տեսակի «երկաթագիր» կոչուելու պատճառն է ըստ ոմանց, որ մեր նախնիքն երկաթի գրչով էին գրում մագաղաթի վերայ. ըստ այլոց՝ այն պատճառով, որ գրելու համար գործ էր դրւում *երկաթի ժանգից պատրաստած թանաք*։

բ. *Միջին երկաթագիր*—Հայր Ինճիճեանն անուանում է «միջակագիր»։—Իններորդ դարում գրելը մի փոքր դիւրացնելու համար, մեր նախնիքն երկաթագիր տառերը մի փոքր կարճացնում են, վերևի և ստորին գծերից մի փոքր կտրելով և ուղղելով. ահա այս մի փոքր ձևակերպուած այբուբենը գործ է դրւում մինչև տասերկու երորդ դարը. իսկ երկաթագիր տառերը գործ են դրւում իբրև սկզբնատառեր կամ գլխատառեր։

գ. *Բոլորագիր*—Տասներկու երորդ դարում այդ միջին երկաթագրերի տառերի ձևերն ևս կարճանալով հետզհետէ ընդունում են այն ձևը, որ այսօր առհասարակ գործածական է տպագրութեան մէջ և կոչւում է բոլորագիր։—12-րդ դարում աւելացան Մեսրոպեան այբուբենի վերայ երկու տառ. «օ» և «ֆ» և այդպիսով մեր այժմեան այբուբենն, որ կրկին Մեսրոպեան է կոչւում, բաղկացած է 38 տառից։—

դ. *Նօտրգիր*. Տասնևչորս ու տասնևհինգերորդ դարերում այս տառերն այլ ևս չեն բաւականացնում մեր նախնեաց և սրագ գրելու կարիքն առիթ է տալիս նոցա ձևակերպել նոր տեսակ տառեր և այդպիսով յառաջանում է մեր այսօրուայ հասարակ և պարզ՝ գրչագիր կամ նօտրգիր կոչուած տեսակը։



ՅԱՅԺՄ ԴՄԱՆՈՒԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՀԻՆ ՉԵՌԱԳԻՐԸ

Ա.Հա այս չորս գլխաւոր ձևակերպութեանց է ենթարկուել Մեսրոպեան այբուբենը՝ մի կողմը թողնելով այն բազմաթիւ ձևակերպութիւնները, որ տեղի են ունեցել վերջին ժամանակներում։ Միւս փոփոխութիւնները—ինչպէս օրինակ՝ «դրամագիր»,՝«կոնդակագիր», «փառագիր», որ նոյնպէս կոչւում է «ճնճղկագիր» կամ «ձագագիր», «փակագիր», «վարազագիր» և այլն իսկապէս այբուբենի ձևակերպութիւններ չեն, բացի փառագիր կոչուած տեսակից, որ այսօր անուանում ենք «ծաղկագիր»

Ըստ հնչիւնագիտութեան՝ մեր այբուբենի տառերը բաժանուած ենք գտնում հետևեալ կարգերի... Ի բաղաձայն տառիցն՝ ինն ասին խաժք յոյքք ստուարք եւ թաւք որք թաւ շնչով արտաբերին՝ և են։

գ թ խ չ ջ ռ ց փ ք։ Տասն և մեկն լերկնուրք՝ և բարակ։ լ ծ կ ճ մ ն շ պ ս տ ր։ Վեցն՝ միջակ։ բ գ դ ժ ձ ղ։ Զորքն նայք և կակուղք։ ղ մ ր ն։

Մեռաստանքն կիսաձայնք։ զ ժ խ ծ մ ն շ ռ ս ր ց։ կրկնակը են այսոքիկ. բ գ դ զ թ ժ խ ձ շ չ ջ ռ ց փ ք ֆ. ասին կրկնակք՝ զի իւրաքանչիւր կրկնակ գիր լերկուց բաղաձայնից զօրանայ։

Այս բաժանումն տառից պատկանի մանաւանդ բանաստեղծից՝ և երաժշտականաց։

Տառից մերոց այլքն ասին մարմնաձիրք. որք զբոլոր մարմինս ունին՝ ի մէջ խազին՝ և են այսոքիկ. ա ո ռ ս տ ւ ք։

Այլքն գլխաձիրք. բ գ դ զ ը լ ղ յ շ չ պ ջ ր ց։

Այլքն՝ վերջաձիրք. ե է ժ ծ ճ մ ն և։

Այլքն՝ միջաձիրք. թ ի խ կ հ ձ վ փ ֆ։

Այս կանոն վայելէ գրագրաց։

կարգ եւ դաս լծորդ տառից են ութ. փքսմ, խքգկ, թդտ, ցձծզս, չշժ, լղն, ջճ, ռր։

Բաւեսցի այսքան յաղագս տառից։ [1]։

---

1) Տես. *Ոսկեայ դուռն դպրատան։* Վասն նորին դեռա-

Պրօֆ. Շրեօդէրը հետևեալ կերպիւ է բաժանում մեր այբուբենի հնչիւնները.

«Ténues· պ կ տ ձ յ ց et ս ն ծ ւ մ։

Mediae· բ գ դ ժ հ ձ լ ճ վ ր։

Adspiratae· փ ք թ չ խ պ ց ջ ֆ ռ»։ Եւ դարձեալ.

«Dentales· ց ժ ծ ձ շ ճ ղ ջ ս յ։

Gutturales· խ ղ հ յ։

Libiales· բ մ պ վ փ ֆ ւ։

Linguales· դ թ լ ղ ն ռ տ ր։

Palatinae· գ կ ք [2])։

կիրթ և խակավարժ Մանկանց Հայկազունեաց։ Յօրինեալ երկաւսիրուԹեամբ ՄատԹէոսի՝ և Ղուկասու Տրուպ Դպրաց Վանանդեցւոց։ Տպիւք՝ և ծախիւք Եռամեծ բարեսիրաց Թոմայ Վանանդեցւոյ-ի լոյսածեալ։ Ի ՀայրապետուԹեան ամենից Հայոց Տեառն Նահապետի։ Ցամի Տեառն 1699։ ՅԱմստերդամ։

Այս հետաքրքիր փոքրիկ գիրքն, որ բաղկացած է 70 փոքրագիր երեսներից և կազմուած է ամուր կաշիով՝ գտանւում է Ենայի համալսարանի մատենադարանում և պարունակում է ի միջի այլոց և հետևեալ մասերը. «դուռն քերականուԹեան», «Հարց և պատասխանի բանասիրական», «Հարց և պատասխանի Ուսումնական ի մէջ Հայկայ՝ և Պօղոսի», «խորհած Թուոյ իմանալոյ այլ և այլ Օրինակ», գուշակուԹիւն խորհած աւուր շաբաԹուն, «նսեմաբանուԹիւնք», «տղայական ճարտարուԹիւնք», «բարք ոմանց կենդանեաց», «աժանագին բժշկական դեղորայք», Վասն «Հազի», «ճիճաւի» և այլն, «Երազացոյց» և այլն և այլն։ Հայոց մանկավարժուԹեան պատմուԹեան տեսակէտից շատ հետաքրքիր է այս գիրքը։

2) *Տես.* Ioachimi Schröderi Thesaurus linguae armenice etc. *էջ* 19—20։

Հայագէտ պրօֆ. Փրդ. Միւլլերը հայոց այբուբենի հնչիւնները հետևեալ ձևական կերպիւ է բաժանում [3])։

	Consonanten (Բաղաձայններ)								vocale (Հայնաւորներ)	
	Monmtane laute				Dauerlaute					
	nicht-aspir		aspirirte		spiranten		nosale laute			
	stum	tönend	stum	tönend	stum	tönend	tönend	tönend		
guttural	կ	գ	խ	—	ք	հ յ	—	ռ ղ	ա	բեխ
palatal	ճ	ծ	չ	—	ս	յ	—	լ	ի	
lingual	—	—	—	—	ջ	ժ	—	—		
ling.-dental	—	—	—	—	ց	ձ	—	ր		
dental	տ	դ	թ	—	շ	զ	ն	—		ո
labial	պ	բ	փ	—	ֆ	ւ վ	մ	—	ու	

Տասն և չորս տարի անցնելուց յետոյ պրօֆ. Միւլլերը փոփոխուԹեանց է ենԹարկում հնչիւնների այս բաժանումն և հետևեալ ձևը ներկայացնում»։

«կ գ խ ք հ յ ղ

«ճ – չ շ ղ ժ

«ծ ձ ց

«տ դ թ ս զ ր ւ լ ն

«պ բ փ վ ւ մ»։ [4])

---

3) *Տես.* Prof. F. Müller: Beiträge zur Lautlehre der armenischen Sprache. *պատուած է* Sitzungsberichte d. K. Ak. d. Wissenschaften. etc. *Հատ.* 41 (1863) *էջ* 4։

4) *Տես.* Prof. Müller: Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen. *տպուած է* Sitzungsberichte etc. *նոյնը, Հատ.* 84 (1877) *էջ* 212։

«Դիոնիսիոս Թրակացու» Հայերէն փոխադրութեան [5]) մէջ Հայոց լեզուի հնչիւնները հետևեալ կերպիւ են բաժանուած

Ձայնաւորներ։

ա ե է ը ի ո ու ով

է և ով երկար

ե ո, ը կարճ

ա ը ի կրկնաժամանակեայ (doppelzeitig) *բաղաձայններ։*

Ձերկ, նուրբ. պ կ տ ղ ն ծ չ մ ս բ։

Թաւ, թանձր, ստուար. փ ք խ թ լ ց ձ ռ։

Միջակ. բ գ դ ձ ղ ճ ժ։

Մի այլ տեսակէտով.

Կիսաձայնք. ղ ց ն ծ չ մ ս բ։

Կրկնակք. ղ լ խ չ ձ ջ ռ ց։

Նայք. ղ մ ն բ [6])։


Ստ. Պետերբուրգի կայսերական Հասարակական մատենադարանում գտնուող մի Հայերէն ձեռագիր քերականութեան մէջ—«*Սիմէօնի վարդապետի Ջուղացւոյ արարեալ քերականութիւն ըստ լեզուի մերում Հայկազանց*», որ գրել է Աստուածատուր վարդապետը *Ի Թուին ՌՃՂԲ*». տես. ձեռագիրը ընդ Համարաւ 641—կարդում ենք մեր այբուբենի Հնչիւնագիտութեան մասին հետևեալը. «Ինչ է որով ձևա-

---

5) Թէ յունարէն բնագիրն և թէ Հայերէն փոխադրութիւնը հրատարակուած է Mémoires de la société des antiquaires de France t. VI. (1824). Ա.Ջ։

6) Պրօֆ. Հիւբշմանի ասելով այս գրքի Հայերէն փոխադրողը սարկաւար է հետևում բնագրին և ձգտում է Հայերէն քերականութիւնն ըստ կարելոյն մօտեցնել յունարէնին։ Հիւբշմանը թէև մերժում է, որ այդ փոխադրութիւնը տեղի ունեցած լինի 5-րդ դարում, սակայն այնուամենայնիւ ընդունում է, որ այդ փոխադրութիւնը բաւական հին պէտք է լինի։ Տես. Hübschmann: Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen. տըպուած է Zeitschrift d. d. morg. Gesellschaft. Հատ. 30 էջ 60։

նայ ձայն յօդաւոր և նոյնս տառ կոչի, վասն զի ունի տարբերութիւն իմն և դասութիւն։ Եւ բաժանի յերկուս. ի ձայնաւորս և ի բաղաձայնս... Եւ ձայնաւորք են ութ... Եւ ձայնաւորացն երկարք են վեց՝ ա է ը ի օ ու և սուղք երեք՝ ե ո ւ իսկ անքմտարք են երկու՝ է և օ։ Եւ առաջադիր ձայնաւորք են չորք՝ ա ե ի ո և ստորադասք են չորք՝ ա ի ւ օ։ Եւ երկբարբառք են հինգ՝ ոյ ևս եօ իւն ոյ։ Իսկ այլքն ամենայն են բաղաձայնք, որք են թուով իբ. Եւ սոցա *թաւք* են իննն՝ փ խ ք թ ց ձ լ ջ ռ։ Եւ *ձերկք* մեռասան՝ պ մ կ տ ծ չ ս շ ն ճ բ։ Իսկ *միջակք* վեց՝ բ գ դ ձ ժ ղ։ Եւ *յօրդռւթիւնք* են ութ, յորոց շարակարգութեանց պարզաբար երևին թաւութիւն և ձերկութիւն և միջակութիւն սոցա։ Զի նախ *թաւք* դնին և ապա *միջակքն* և յետոյ *ձերկքն*։ Առաջին *յօրդք*՝ փ բ ց մ. *ձերկրորդ*՝ խ ք գ կ. *երրորդ*՝ թ դ տ *չորրորդ*՝ ց ծ չ ս *հինգերորդ*՝ ձ ժ շ *վեցերորդ*՝ լ ղ ն *եօթերորդ*՝ ջ ճ *ութերորդ*՝ ռ բ։ Եւ *անձայնք* են ի սոցանէ Հնգետասան՝ բ գ դ թ ժ կ ձ ճ չ պ ջ տ ց փ ք։ Եւ *անձայնք* ասին, զի յարաբերելն շունչն արգելանի։ Եւ *կիսաձայնք* ևս է Հնգետասան՝ ղ ժ լ խ հ ղ մ յ ն շ ռ ս վ բ։ Եւ *կրկնակք* են ութ՝ ղ լ խ չ շ ջ ռ ց և կրկնակք ասին, զի երկու բաղաձայնից ազդումն տան, Եւ *նայք* են չորք՝ ղ մ ն բ։ Տես. նոյն ձեռագրի «*Ցաղագս տառի*» Հատուածը. էջ 2—4։



ՑԱՆԿ

Բառաջաբան. . . . . էջ 5— 9
Գրականութիւն . . . . . էջ 10—14

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գլուխ Ա. Ընդհանուր տեսութիւն գրի զարգացման . — 17— 23
— Բ. Նշանացի խօսակցութիւն . . . . . — 24— 36
— Գ. Լեզու . . . . . — 37— 65
— Դ. Հայոց լեզու , ... — 66— 91
— Ե. Գիր . . . . . — 92—112
— Զ. Հնչիւնագիր . . . . . — 113—135
— Է. Տառագիր . . , ... — 136—146

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

— Ը. Ներմուծումն . . . . . — 149—163
— Թ. Կորիւն Սքանչելոյ պատմածը ,,գրի գիւտ''ի մասին . — 164—179
— Ժ. Մ. Խորենացւոյ պատմածը ,,գրի գիւտ''ի մասին. — 180—202
— ԺԱ. Ղազար Փարպեցւոյ պատմածը ,,գրի գիւտ''ի հանգամանքների մասին . — 203—215
— ԺԲ. Կորիւնի, Խորենացւոյ և Փարպեցւոյ միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը . — 216—23
— ԺԳ. Հայոց հին և ,,Դանիէլեան'' կոչուած գիրը. — 237—26
— ԺԴ. Թէ ինչ տառերից էր բաղկացած Հայոց հին այբուբենը . — 261—281
— ԺԵ. Եւրոպական գիտնականների կարծիքները Հայոց գրի մասին . — 282—301
— ԺԶ. Հայոց գրի ծագումը կամ թէ որտեղից են յառաջացել Հայոց հին տառերը . — 302—329

ՑԱՒԵԼՈՒԱԾ

Գլուխ Ա. Թէ ո՞ր թուին տեղի ունեցաւ Հայոց ,,գրի գիւտը'' — 333—359
— Բ. Թէ ո՞րտեղ տեղի ունեցաւ ,,գրի գիւտը'' . . — 360—367
— Գ. Հայոց գիրը և պրօֆ. Ֆրիդ. Միւլլէր . . . — 368—
— Դ. Հայր Բ. Սարգսեանը և Հայոց գիրը . . . — 3
— Ե. Մի քանի խօսք վրաց և Աղուանից այբուբենի մասին . — 3
— Զ. Թէ ինչ պաշտօններ վարեց սուրբ Մեսրոպը . — 386—392
— Է. Հայոց այբուբենի տեսակները . . . . . — 393—400

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.

Վաճառւում է Կենդրոնական գրավաճառանոցում։

25 MAY 2013

26427

ՀՀ Ազգային գրադարան
NL0465058